Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(1879–1917 թթ.)

Տպագրվում է
Երևանի պետական համալսարանի
խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ե Ն

Սույն գիրքը հեղինակի «Երևանի պատմությունը» աշխատության երրորդ և վերջին հատորն է։ Այն ընդգրկում է մոտ քառասուն տարվա մի ժամանակաշրջան՝ 1879—1917 թվականները։ Աշխատության երկրորդ գիրքը, որը հրատարակվել է 1959 թվականին, ժամանակագրական առումով ընդգրկում է մոտ 80 տարի՝ 1801—1879 թվականները, իսկ ավելի ստվարածավալ առաջին հատորը իր մեջ ամփոփելու է ավելի քան 2580 տարվա պատմություն, այն է՝ Երևանի հիմնադրման ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը։

Այս հատորը բաղկացած է երկու բաժնից։ Առաջին բաժինը ընդգրկում է 1879—1914 թվականները, իսկ երկրորդը՝ 1914—1917 թվականները՝ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։

Ըստ բաժինների տրված են՝ քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքը, կոմունալ պայմանները, վարչական ու քաղաքական կյանքը, բնակչության վիճակը, ազատագրական ու սոցիալական շարժումները և այլն։ Հարցերի մեծագույն մասը շարադրված է արխիվային նյութերի հիման վրա և լուսաբանվում է առաջին անգամ։

Գրքում առաջին անգամ հրապարակվում են բազմաթիվ նկարներ և քաղաքի մեծագիր հատակագիծն ու դրա հիման վրա կազմված մի սխեմա, որը դյուրացնում է շարադրված նյութի ըմբռնումը։

Գրքի վերջում տրված են տեղեկատու հավելվածներ՝ անվանացանկ, այս ու նախորդ հատորի համար օգտագործված գրակա-

նութ յան ցուցակը, քաղաքի պատմութ յան նոր շրջանի համառոտ ժամանակագրութ յունը, փողոցների ու նրբանցքների անվանացանկը և այլն։ Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականութ յան տեսութ յունը՝ ընդարձակ ներածութ յան հետ միասին, տրվելու է աշխատութ յան առաջին հատորում, որը հույս ունենք հրապարակի վրա դնել առաջիկայում՝ մինչև մեր մայրաքաղաքի 2750 տարին լրանալը։

10-ը հունիսի 1962 թ.
ԵՐԵՎԱՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1879—1914 ԹԹ.

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1863—1874 թթ. ռեֆորմները։ Համառոտ տեղեկություններ քաղաքային ինքնավարության մասին ռուսական իրականության մեջ։ 1870 թ. հունիսի 16-ի քաղաքային Կանոնադրությունը և նրա կիրառումը (1879 թ.) Երևանում։ Քաղաքային գործերի Երևանի հանձնգական ատյանը և նրա ֆունկցիաները։ Քաղաքային ինքնավարության գործունեության շրջանակներն ըստ 1870 թ. Կանոնադրության։ Քաղաքային ինքնավարական կամ հասարակական օրգանները։ Ընտրական սիստեմը և քաղաքային ընտրական ժողովները։ Քաղաքային դուման և նրա իրավունքները ու պարտականությունները։ Քաղաքային վարչությունը, նրա կազմն ու պարտականությունները։ Գործադիր հանձնաժողովները և ոչ ընտրովի պաշտոնյաները քաղաքային ինքնավարության սիստեմում։ 1892 թ. քաղաքային Կանոնադրության բնույթը։ Ընտրական իրավունքի կրճատումը և քաղաքային դումայի ու վարչության իրավունքների սահմանափակումը։ 1892 թ. Կանոնադրության վերափոխումը 1917 թ. Փետրվարյան ռևոլյուցիայից հետո։ Երևանի մասնակցությունը Պետական դումայի ընտրություններին։ Երևանում եղած պետական հիմնարկները։ Երևանի կայազորը։

1861 թ. գյուղացիական ռեֆորմին հաջորդեցին մի քանի այլ ռեֆորմներ՝ զեմստվոյական, քաղաքային, դատական և այլն։ Վերջիններս, որ կատարվեցին 1863—1874 թթ. ընթացքում, 1861 թվականի գյուղացիական ռեֆորմի անխուսափելի հետևանքն էին։ Ռևոլյուցիան շարժման ճնշման տակ կատարելով 1861 թ. ռեֆորմը, ցարական կառավարությունը հարկադրված էր նաև փոփոխություններ մտցնել կառավարման, դատական, ուսումնական գործի կազ-

մակերպման մեջ և այլ բնագավառներում։ Ցարական կառավարությունը չէր կարող «ապրել հին ձևով»։ Ռևոլյուցիոն շարժումը նրան հարկադրում էր դյուզացիական ռեֆորմի հետ միասին վերակառուցել և կառավարման ձևը որոշ օղակներում՝ հարմարեցնելով դրանք հասարակական նոր՝ բուրժուական հարաբերություններին, առանց, սակայն, մազաչափ անգամ վնասելու ինքնակալության հիմքերը։

Այդ ռեֆորմներից մեզ հետաքրքրում է քաղաքայինը, ըստ որի շատ քաղաքների հետ միասին Երևանը ևս ստացավ «ինքնավարության» իրավունք։

Ռուսական իրականության մեջ քաղաքային ինքնավարություն մացնելու առաջին փորձը կատարել է Պետրոս Առաջինը՝ 1699 և 1718—1724 ԹԹ. արձակած իր հրովարտակներով[1]. վերջինների շնորհիվ ստեղծվեցին քաղաքային վարչության դեր ունեցող մագիստրատներ[2], որոնք զրեթե սոսկ վարչա-դատական և ֆինանսական օրգաններ էին։ Դրանց հիմնական պարտականությունը պետական հարկերի ու տուրքերի նշանակումն ու հավաքումն էր։ Պետրոս Առաջինից հետո քաղաքային մագիստրատները վերացվեցին. դրանք նորից վերականգնվեցին Ելիզավետա Թագուհու օրոք։

Սակայն շուտով զգացվեց, որ Պետրոս Առաջինի ժամանակվա մագիստրատների սոսկ վերականգնումը չի կարող բավարարել նոր պայմաններին։ Եկատերինա 2-րդի օրոք զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի էր հասել քաղաքի տնտեսական կյանքը՝ արդյունաբերությունն ու առևտուրը, զգալի չափով մեծացել էին քաղաքների դերն ու նշանակությունը։ Ստեղծված այդ նոր պայմանները հարկադրեցին եկատերինային քաղաքի կառավարման բնագավառում կատարելու նոր, ավելի արմատական վերափոխություն։

1775 թ. ապրիլի 21-ին հրապարակվեց Եկատերինա 2-րդի հաստատած քաղաքային Կանոնադրությունը (Положение), ըստ որի քաղաքի ներքին վարչա-տնտեսական կյանքը կառավարելու համար ստեղծվեցին, այսպես կոչված, ընդհանուր և վեցձայնյային դումաներ։ Երկու դումաներն էլ ունեին խիստ դասային բնույթ։ Դրանք ընտրվում էին քաղաքի արտոնված, անշարժ գույքի կամ

1 Ռուս իրականության մեջ քաղաքային ինքնավարության պատմության մասին տե՛ս А. Д. Градовский, История местного управления в России, СПБ, 1868; И. Дитятин, Устройство и управление городов России, т. I, СПБ, 1875, т. II, Ярославль, 1877; Дм. Дм. Семенов, Городское самоуправление, СПБ, 1901; К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, СПБ և այլն։

2 Հին Հռոմում մագիստրատը պետական բարձր պաշտոն էր։

համապատասխան կրթական ցենզ ունեցող բնակիչների կողմից։ Վերջիններս ըստ Կանոնադրության բաժանված էին վեց դասերի՝ «իսկական քաղաքային քնակիչների», որոնք քաղաքային շրջագծի նկատմամբ ունեին անշարժ ունեցվածք, գիլդիական վաճառականների, որոնցից յուրաքանչյուրն ուներ, ըստ իր հայտարարության, համապատասխան քանակի կապիտալ, գեխային (համքարային) արհեստավորների, արտաքաղաքային և արտասահմանյան հարուստ վաճառականների՝ հյուրերի և «անվանի քաղաքացիների», որոնց պատկանում էին գիտական կոչում ունեցողները, նկարիչներն ու ար քիտեկտագետները, մեծ կապիտալ ունեցողները, հողատերերը և այլն, և պոսադականների՝ հին քաղաքացիների, որոնք միաժամանակ զբաղվում էին արհեստագործությամբ կամ ուրիշ աշխատանքով և չէին պատկանում քաղաքի հասարակության այլ դասերից որևէ մեկին։ Դասերից յուրաքանչյուրը, տարբեր հարաբերությամբ, իր ներկայացուցիչներն էր ընտրում ընդհանուր դումայի համար։ Ընդհանուր դուման էլ իր հերթին ընտրում էր, այսպես կոչված, վեցձայնյային դուման։ Վերջինս այդպես էր կոչվում պարզապես այն պատճառով, որ նա բաղկացած էր վեց ձայնավորից (քաղաքի բնակչության յուրաքանչյուր դասից մեկ ձայնավոր)՝ քաղաքագլխի գլխավորությամբ։ Արտաքնապես ընդհանուր դուման կարգադիր օրգան էր, իսկ վեցձայնյայինը՝ գործադիր։ Սակայն իրականում դրանք կատարում էին նույն գործերը, միայն այն տարբերությամբ, որ ընդհանուր դուման «հավաքվում էր ավելի բարդ և դժվար հարցերը քննարկելու համար, իսկ վեցձայնյային դուման տնօրինում էր ամենօրյա գործերը»[1]։

Ընդհանուր և վեցձայնյային դումաներից բացի, 1785 թ. քաղաքային Կանոնադրությամբ սահմանված էր նաև մի երրորդ օրգան, այսպես կոչված, քաղաքային ճասարակության ժողովը, որին իրավունք ունեին մասնակցելու քաղաքային բնակչության բոլոր դասերը, բայց իրականում ձայնի իրավունք ունեին միայն առաջին ու երկրորդ գիլդիայի վաճառականները։ Քաղաքային հասարակության ժողովի պարտականությունների մեջ էին մտնում՝ քաղաքագլխի, բուրգմիստրների, ռատմանների և այլ պաշտոնյաների ու ներկայացուցիչների ընտրությունները, քաղաքի կարիքների մասին նահանգապետին համապատասխան հիմնավորումներ ներկայացնելը, զանազան խնդիրներով նահանգապետի առած հարցումներին պատասխանելը և այլն[2]։

1 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 9—11։

2 Նույն տեղը, էջ 12։

Եկատերինյան քաղաքային Կանոնադրությունը սկզբում կիրառվում է երկու մայրաքաղաքներում՝ Մոսկվայում և Պետերբուրգում, իսկ հետագայում նաև մյուս քաղաքներում, ըստ որում վերջիններում՝ պարզեցված ձևով։

1785 թ. Կանոնադրությունը պահպանվում է մինչև 1870-ական թվականը, սակայն ժամանակի ընթացքում, երկրի քաղաքային կյանքում տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով Եկատերինյան քաղաքային Կանոնադրությունը ևս կրում է մի շարք փոփոխություններ։ Փոփոխության են ենթարկվում և՛ դումայի հիմնարկների ու նրան մասնակցող հասարակական խմբերի կազմը, և՛ դումայի պարտականությունները։ Փոփոխությունների ընդհանուր ուղղությունն այն էր, որ Եկատերինյան քաղաքային դումայից քայլ առ քայլ խլում էին նրա ֆունկցիաները։ Դործը նույնիսկ հասնում է նրան, որ XIX դարի 40-ական թվականներին Պետերբուրգի համար մշակվում է նոր կանոնադրություն, որը որոշ փոփոխություններով կիրառվում է նաև Մոսկվայում ու Օդեսայում [1]։ Սակայն այդ մասնակի երևույթ էր։

1785 թ. Կանոնադրությունը, ինչպես ասվեց, ընդհանուր գծերով պահպանվում է մինչև 1870 թվականի նոր, բուրժուական քաղաքային Կանոնադրությունը։

Ի՞նչ էր իրենից ներկայացնում 1870 թվականի քաղաքային Կանոնադրությունը և ե՞րբ ու ինչպե՞ս է կիրառվել Երևանում։

Ամենից առաջ պետք է նշել, որ 1870 թ. Կանոնադրությամբ սահմանված քաղաքային ինքնավարությունը համազոր էր գյուղական վայրերի համար դրանից առաջ մտցրած զեմստվոներին։ Ինքնակալական կառավարությունը և նրա բարձրաստիճան չինովնիկությունը ճիգ էին թափում զեմստվոների սահմանումը և քաղաքային դումաների ստեղծումը ներկայացնել իբրև արմատական քայլ գյուղի և քաղաքի կյանքում, իբրև, այսպես կոչված, տեղական լիակատար ինքնավարություն։ Սակայն իրականում «տեղական» համեմատաբար «դեմոկրատական» հիմնարկների՝ զեմստվոների, մունիցիպալ վարչությունների (ինչպես նաև քաղաքային դումաների) և այլոց գոյակցությունը միմիայն, բացառապես բացատրվում է նրանով, որ այդ տեղական հիմնարկներն ղրաղվում են բուրժուական պետության համար անվնաս «լվացարաններ տանգելով», ջրամատակարարմամբ, էլեկտրական տրամվայներով և այլ միջոցառումներով, որոնք անընդունակ էին խախտելու այն

1 *К. А. Пажитнов.* Городское и земское самоуправление, էջ 21—23։

բանի հիմքերը, ինչ որ կոչվում է «գույություն ունեցող հասարակարգ»[1]։

Թե՛ զեմստվոները և թե՛ քաղաքային դումաները բացառապես զբաղվում էին միայն նեղ վարչա-տնտեսական և կուլտուրական հարցերով։ Նրանք իրենց գործունեության մեջ լիովին ենթակա էին ցարական տեղական կառավարական օրգաններին և չինովնիկությանը։ Ավելին, ցարական կառավարությունը զեմստվո մտցնելուց հետո հետևյալ օրը սկսեց հետևողականորեն ճնշել և սահմանափակել նրան. «ամենակարող չինովնիկական կլիկը չէր կարող համակերպվել ընտրովի համադասային ներկայացուցչության հետ և սկսեց ամեն կերպ հալածել նրան» [2]։

Զեմստվոների և քաղաքային դումաների դերը շատ համեստ էր։ Նրանք քաղաքական պայքարի համար էական որևէ նշանակություն չունեին [3]։ Բայց և այնպես զեմստվոների «դերը՝ որպես օժանդակ գործոններից մեկի, ժխտել չի կարելի»,— գրում է Վ. Ի. Լենինը [4]։

Թեպետև զեմստվոն սահմանադրության սաղմ համարելը լոկ պատրանք է [5], բայց այն, ինչպես և քաղաքային ռեֆորմը, ձեռք էր բերված «հասարակական վրդովմունքի և ուսուցչուհո գրոհի» ալիքի շնորհիվ [6]։ Նույն ձևով էր ձեռք բերված նաև քաղաքային ռեֆորմը։ Ընդ որում կայսրության շատ մասերում՝ Աբխազիայի և Ատրպատականի նահանգներում, Լեհաստանում, Լիտվայում, Բելոռուսիայում, Մերձբալթյան երկրում, Սիբիրում, Ղազախստանում, Միջին Ասիայում և Կովկասում զեմստվոյական ռեֆորմը չէր կիրառվել, զեմստվոներ չէին ստեղծվել [7]։

Հայաստանում և Ադրբեջանում մեծ նահանջով ու կրճատումներով էր կիրառվել նաև գյուղացիական ռեֆորմը [8]։ Այստեղ, ինչպես արդարացիորեն նկատում է Պ. Ի. Լյաշչենկոն, «1869 թվին, երբ... անցան գյուղացիական ռեֆորմներին, փետրվարի 19-ի ռեֆորմի օրենսդրության ընդհանուր սկզբունքները, որոնք հարմարեցվում էին միանգամայն այլ տեղական պայմանների, առավել

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 10, Երևան, 1949, էջ 227։

2 Նույն տեղը, հ. 5, Երևան, 1948, էջ 53։

3 Նույն տեղը, էջ 91։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, էջ 100։

6 Նույն տեղը, էջ 50։

7 История СССР, т. II, Москва, 1954, էջ 464—467։

8 *Տե՛ս В. Ритуни,* Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947։

և այլանդակ ձևեր էին ընդունում»[1]։ Հայաստանում և Ադրբեջանում փաստորեն պահպանվեցին բեգերի ու աղալարների կալվածատիրական իրավունքները հողի և նրա վրա ապրող աշխատավոր գյուղացիության նկատմամբ։ Այդ է պատճառը, որ Անդրկովկասի սեփական գյուղացիության և հողային հարաբերությունների մասին պաշտոնական տեսություն կազմողը XIX դարի 80-ական թվականների Հայաստանի ու Ադրբեջանի հողային հարաբերությունները համարում է ոչ շատ հեռու պարսկական-խանական շրջանի հողային հարաբերություններից[2]։ Տեսության հեղինակի կատարած այդ համեմատությունը, անշուշտ, չափազանցություն է, բայց անառարկելի է, որ ռեֆորմի անցկացումից հետո էլ ճորատատիրական հողային հարաբերությունները մեզ մոտ իր շատ կողմերով պահպանվել էին ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը։

Քաղաքի կառավարումը փոփոխելու համար 1862 թ. մարտի 20-ին տրվում է բարձրագույն հրաման, որի մեջ նշվում է առանց հապաղելու ձեռնարկել միջոցառումներ՝ քաղաքային հասարակական ինքնավարությունը բարելավելու համար։ 1862 թվականին ներքին գործերի նախարարությունը քաղաքային ինքնավարության և տնտեսության համար ներկայացնում է երկու նախագիծ՝ համապատասխան բացատրականներով հանդերձ։ Քաղաքային այդ նոր Կանոնադրությունը մի քանի էքսպերտ հանձնաժողովների կողմից քննարկվելուց հետո, ներկայացվում է Ալեքսանդր 2-րդին ի հաստատություն, որը և կատարվում է 1870 թ. հունիսի 16-ին[3]։

Կանոնադրությունը հաստատվելուց հետո սկսեցին այն աստիճանաբար կիրառել կայսրության քաղաքներում։ 1874 թ. բավարարվում է Կովկասի փոխարքայի խնդիրքը՝ Անդրկովկասի քաղաքներում 1870 թ. հունիսի 16-ի Կանոնադրությունը կիրառելու մասին։ Այդ առթիվ Պետական խորհրդի միջնորդությունը ցարը հաստատում է 1874 թ. հոկտեմբերի 28-ին։

---

1 Գ. Ի. Լյաշչենկո. *ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն*, հ. 1, Երևան, 1949, էջ 559։

2 «Свод материалов для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», тт. 1—5, Тифлис, 1885—1888 гг., статья Кучаева, Поземельное устройство государственных крестьян, т. I, էջ 56—57 և 69։

3 Տե՛ս К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 24—25։

Ըստ դրա փոխարքայի հայեցողությանն է թողնվում տեղական պայմանների համաձայն Անդրկովկասի քաղաքներում Կանոնադրության կիրառման կարգի սահմանումը[1]։ Մշակված և հաստատված կանոնների համաձայն Կանոնադրությունը կիրառելու համար քաղաքներում ստեղծվում են 6 կամ 12 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողովներ։ Սրանք գործում էին նահանգապետների առաջ բացած և փոխարքայի հաստատած նախագահների ղեկավարությամբ[2]։ Հանձնաժողովներից բացի ստեղծվում է նաև քաղաքային գործերի նահանգական ատյան (по городским делам присутствие)։

1870 թ. Կանոնադրությունը Երևանում կիրառելու համար նահանգապետի հրամանով ստեղծվում է 12 հոգուց բաղկացած հանձնաժողով, որի 6 անդամները նշանակվում են հայերից, իսկ 6-ը՝ ադրբեջանցիներից։ Հանձնաժողովի նախագահ է նշանակվում Գեղամյանը, որը նույն հրամանագրով հետագայում դառնում է քաղաքագլուխ[3]։ Հրամանագրում ասված է, որ առանց հապաղելու պետք է նախապատրաստել ձայնավորների ընտրությունները, որ քաղաքային հիմնարկներին պետք է տալ Կանոնադրության 2-րդ հոդվածով նախատեսված ֆունկցիաները, որ քաղաքային նոր հիմնարկները բացվելուց հետո ոստիկանական վարչության հաշվապահի ու շուկայի վերակացուի պաշտոնները պետք է վերացնել, իսկ ճարտարապետի պաշտոնը տալ քաղաքային «ինքնավարությանը»[4]։

Նախապատրաստող հանձնաժողովից բացի, Կանոնադրությամբ և 1874 թ. հոկտեմբերի 28-ի բարձրագույն հրամանագրով հաստատված Պետական խորհրդի զրավոր կարծիքի համաձայն, Կովկասի փոխարքան անհրաժեշտ է համարում 1877 թ. մարտի 23-ին Երևանում ստեղծել քաղաքային համապատասխան հիմնարկներ։ Դրա հիման վրա կազմվում է Երևանի քաղաքային գործերի նահանգական ատյան՝ նահանգապետի նախագահությամբ և փոխնահանգապետի, նահանգական պետական ունեցվածքների կառավարչի, Երևանի օկրուգային դատարանի դատախազի և նախապատրաստող հանձնաժողովի նախագահի՝ քաղաքագլխի անդամակցությամբ[5]։ Քաղաքային գործերի նահանգական ատյանի ամբողջ

---

1 *С. Эсадзе*, Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907, էջ 72։

2 Տե՛ս «2-ое полное собрание законов», т. XLIX, отд. 2-ое, стат. 53996։

3 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 3, թ. 16։*

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, թ. 77։

ցամքը նշանակովի էր, նրա նախագահը նահանգներում լինում էր նահանգապետը, իսկ մարզերում՝ մարզի պետը։ Ատյանի անդամները նշանակվում էին վերը նշված պաշտոնյաները։

Նախապատրաստական աշխատանքներն ավարտվում են 1879 թվականին։ Նույն թվականի հոկտեմբերի 1-ին հանդիսավոր պայմաններում բացվում է ներքնային քաղաքային դուման[1] և Կանոնադրությամբ նախատեսված ընտրովի մյուս օրգանները[2]։

Քաղաքային Կանոնադրության կիրառումը և դումայի բացումը ցարական օրգանների ու բարձրաստիճան պաշտոնյաների կողմից քաղաքային բնակչությանը ներկայացվում են իբրև մեծ բարերարություն։ Հենց այդ նպատակն էր հետապնդում դումայի բացման առթիվ Երևանի նահանգապետի պաշտոնակատարի ու Կովկասի փոխարքայի միջև հեռագրերի փոխանակումը[3], տեղական օրգանների կողմից քաղաքում հանդիսավոր արարողություններ կազմակերպելը և այլն։

Անդրկովկասում, ինչպես ասվեց, զեմստվոներ չէին մտցվել, իսկ 1870 թ. քաղաքային Կանոնադրությունն առանց նրա դրույթների որևէ կրճատման կիրառվել է միայն չորս քաղաքում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և Քութաիսում։ Գորիում և Ախալցխայում Կանոնադրությունը կիրառվել է պարզեցված ձևով, իսկ մյուս բոլոր քաղաքներում քաղաքային տնտեսությունը և ներքին գործերի կառավարումը մնացել են ոստիկանական իշխանությունների տնօրինության տակ[4]։

Քաղաքային ռեֆորմը, ինչպես նշվեց, ուսլյուցիոն շարժման ճնշման տակ կատարված 1861 թ. գյուղացիական ռեֆորմի անխուսափելի արդյունքն էր։ Ռեֆորմ անցկացնողը նույն ցարական

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ցուցակ 1, գ. 3в, թ. 37։

2 Օգաթովսկին ըստ երևույթին նկատի ունենալով Կանոնադրությունը կիրառելու համար նախապատրաստող հանձնաժողովի կազմումը (1877 թ.) և քաղաքային գործերի նահանգական ատյանի ստեղծումը (դարձյալ 1877 թ.), գրում է, որ 1870 թ. Կանոնադրությամբ Երևանում «ինքնավարությունը» ուժի մեջ է մտել 1877 թվականից (տե՛ս Подъесаул Ив. Озаровский. Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. 1, Тифлис, 1890)։ Իսկ գրող Ստ. Կուրտիկյանը պարզապես չփոթել է Կանոնադրության երեվան գալու և այն Երևանում կիրառելու տարեթվերը։ Նա «Երևան» թերթի 1958 թ. ապրիլի 29-ի համարում (№ 84) գրում է. «1870 թվականին Երևանում բացվում է քաղաքային դուման, որը «բևկում» է մացնում քաղաքի «բարեկարգման» գործում»։

3 Հեռագրերի տեքստը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 3/в, թ. 37 և 38։

4 История СССР, т. 2, էջ 468։

կառավարությունն էր։ Հետևապես նա չէր կարող որևէ չափով խախտել ինքնակալական օրգանների ու աստիճանավորության համեմատությունը։ Քաղաքային ռեֆորմի էությունը կայանում էր նրանում, որ 1870 թ. Կանոնադրությամբ քաղաքի ինքնավարական օրգաններին էին հանձնվում քաղաքի տնտեսական ու կուլտուրական (այս էլ միայն տնտեսական առումով) կյանքը, վարչա-ֆինանսական մի շարք գործեր։ Դա շատ հարմար դիրք էր ցարական կառավարության համար։ Նախ՝ նա ռեֆորմը քաղաքային բնակչությանը ներկայացնում էր իբրև մեծ բարեփոխություն, երկրորդ՝ ներքին տնտեսական կյանքը ինքնավարությանը հանձնելով, որոշ չափով հովանավորում էր արդյունաբերության ու առևտրի զարգացմանը և երրորդ՝ պետական տեղական օրգանները ազատվում էին քաղաքի «մանր-մունր» հարցերով զբաղվելուց, քաղաքի բարեկարգման, լուսավորության, տրանսպորտի, դպրոցների և այլնի մասին հոգալուց, դրանց մասին հոգալու ամբողջ պարտականությունը դնելով քաղաքային ինքնավարության վրա։ Քաղաքի տնտեսական ու կուլտուրական կյանքի ետ մնալու, ներքին կյանքում եղած աննորմալ երևույթների պատճառը կառավարական օրգանները կարող էին համարել և համարում էին ինքնավարությունը։ Քաղաքային ինքնավարության վրա էին դրվել ո՛չ միայն անմիջականորեն նրա տնօրինության տակ գտնվող բնագավառների՝ լուսավորության, տրանսպորտի, դպրոցների, ջրի, սանիտարական աշխատանքների, բարեկարգման և այլնի ֆինանսավորումը, այլև այնպիսի պարտադիր ծախսեր, որոնք պետք է կատարվեին հաճապետական միջոցներից։ Վերջիններիս թվին էին պատկանում գանազան ռազմական նպատակով, բանտերի, ոստիկանության, ժանդարմերիայի, դատական օրգանների պահպանման վրա կատարվող ծախսերը, և այլն[1]։

Թեպետև քաղաքային ինքնավարության իրավասությունը ըստ Կանոնադրության սահմանափակված էր քաղաքի ներքին տնտեսական նեղ հարցերով և նրա գործունեության վրա հսկելը ամբողջապես գտնվում էր պետական օրգանների ու աստիճանավորության ձեռքում, այնուամենայնիվ, ինչպես զեմստվոների, այնպես էլ քաղաքային ինքնավարական օրգանների ֆունկցիաները քայլ առ քայլ սահմանափակվում էին[2]։ Ցարական կառավարությունը վախենում էր նույնիսկ իրեն համար անվտանգ տեղական այդ օրգան-

1 История СССР, т. 2, էջ 468։

2 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 5, էջ 53։

ներից։ Նա բոլոր միջոցներով քաղաքային ինքնավարություն ապահովում էր «օժանդակ հիմնարկի» շրջանակներում՝ կառավարական տեղական օրգանների ու բարձրաստիճան չինովնիկության միջոցով հսկելով նրա գործունեության վրա։ Երևանում քաղաքային դումայի բացման օրը նահանգապետի պաշտոնակատարի հասցեով տրված հեռագրի մեջ (1879 թ. հոկտեմբերի 1) Կովկասի փոխարքան՝ այդ առիթով շնորհավորելով քաղաքի բնակչությանը, միաժամանակ չի մոռանում զգուշացնել, որ նորընտիր դուման պետք է արդարացնի կառավարության վստահությունը և համապատասխանի նրա ապահովիքներին։ Ահա հեռագիրը հայերեն թարգմանությամբ.

«Շնորհավորում եմ Երևանի բնակիչներին քաղաքային դումայի բացման առիթով, ասելած ուա նոր հիմնարկին արդարացնել վստահությունը և համապատասխանել կառավարության սպասելիքներին»[1]։

Այժմ տեսնենք ըստ 1870 թ. Կանոնադրության ի՞նչ իրավունքներ ու գործունեության ինչպիսի՞ շրջանակներ ուներ քաղաքային ինքնավարությունը։

Կանոնադրության հենց առաջին կետում ասված է. «Քաղաքի տնտեսության և բարեկարգման հոգացողությունն ու տնօրինությունը վերապահվում են քաղաքային հասարակական վարչությանը, իսկ դրա օրինական կատարման վրա հսկելը վերապահվում է նահանգապետին...»[2]։ Քաղաքային ինքնավարության տնօրինությանն էին հանձնվում քաղաքի արտաքին բարեկարգումը ըստ հաստատված նախագծի (փողոցների, հրապարակների, սալահատակների, մայթերի, հասարակական այգիների, զբոսայգիների, ջրմուղների, կամուրջների կառուցումը և այլն), լուսավորության գործը, քաղաքի բնակչությանը սննդամթերքներով ապահովելը, շուկաների կառուցումը, առողջապահության գործը, հակահրդեհային միջոցառումների ձեռնարկումը, բնական աղետների դեմ պայքարելը, արդյունաբերության և առևտրի զարգացման նպաստելը, քաղաքային միջոցների հաշվին բարեգործական հիմնարկների ու հիվանդանոցների հիմնումը և ղեկավարումը, կուլտուր-լուսավորական հիմնարկների՝ թատրոնների, թանգարանների, գրադարանների կառուցումը, տեղական բնակչության զանազան կարիքների մասին կառավարական օրգաններին տեղեկություններ ու հիմնավորումներ ներկայացնելը, քաղաքի օգտին զանազան հարկեր ու տուրքեր նշանակելն ու հավաքելը և այլն, և այլն[1]։

Ըստ Կանոնադրության, քաղաքային ինքնավարությունը իրեն վերապահված իշխանության շրջանակներում գործում է ինքնուրույն, բայց նրա բոլոր որոշումներն ու կարգադրությունները ենթակա են կառավարական իշխանությունների հսկողությանը։ Քաղաքային ինքնավարական օրգանները իրավունք չունեին դուրս գալու իրենց վերապահված ֆունկցիաներից և գործերի շրջանակներից։ Օրենքը չափազանցնելու, իշխանության տեղական օրգանների առաջարկությունները չկատարելու և այլ դեպքերում քաղաքային ինքնավարական օրգանները, ըստ գոյություն ունեցող կարգի, կանչվում են պատասխանատվության[2]։ Քաղաքին վերապահվում է ունենալ հատուկ զինանշանով (герб) կնիք[3]։

Քաղաքային Կանոնադրությամբ սահմանված էին քաղաքային ինքնավարական կամ հասարակական հետևյալ օրգանները՝ քաղաքային ընտրական ժողովներ (ըստ ընտրողների կարգերի), քաղաքային դուման և քաղաքային վարչություն։

Քաղաքային ընտրական ժողովներ դումարվում էին միայն քաղաքային դուման ընտրելու համար, չորս տարին մեկ անգամ։ Ըստ 1870 թ. քաղաքային Կանոնադրության (հոդ. 17), քաղաքային դումայի ձայնավորների ընտրություններին ձայնի իրավունք ուներ և կարող էր ձայնավոր ընտրվել յուրաքանչյուր քաղաքացի, որը բավարարում էր հետևյալ պայմաններին. 1. ռուսահպատակ է, 2. ունի 25-ից ոչ պակաս տարիք և 3. քաղաքի սահմաններում անշարժ գույք, կամ վաճառականական վկայագրով պահում է առևտրական կամ արդյունաբերական ձեռնարկություն, կամ ունի հարկման ենթակա մանրածախ առևտուր, կամ վկայագիր առաջին կարգի գործակատարի և այլն, որոնք ևս իրենց այդ ղբաղմունքների համար հօգուտ քաղաքի տալիս էին հատուկ հարկ[4]։ Ընտրական իրավունք ունեին նաև այն բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, ընկերությունները, վանքերն ու եկեղեցիները, որոնք քաղա-

---

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ցուցակ 1/в, գ. 3, թ. 38։*

2 «Городовое положение» высочайше утвержденное 16 июня 1870 г., Тула, 1871, *էջ 1։*

1 «Городовое положение» высочайше утвержденное 16 июня 1870 г. Тула, 1871, *էջ 1—4։*

2 *Նույն տեղը, էջ 4—6։*

3 *Նույն տեղը, էջ 7։*

4 *Նույն տեղը էջ* 8: *Համմ.* «Хрестоматия по истории СССР», т. 3, составил С. С. *Дмитриев*, Москва, 1952, *էջ* 178:

գում ունեին անշարժ գույք կամ որևէ ձեռնարկում՝ առևտուր, արդյունաբերական գործունեություն և դրանց համար հարկ էին տալիս քաղաքին [1]: Հիմնարկ-ձեռնարկությունները, վանքերն ու եկեղեցիները, ընկերությունները քաղաքային դումայի ընտրություններին մասնակցում էին իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով: Սահմանված պայմաններին համաձայն, ընտրական իրավունք ունեցող կանայք ընտրություններին անմիջականորեն չէին կարող մասնակցել, նրանք ընտրություններին իրենց լիազորագրերով ուղարկում էին այլ մարդկանց՝ գլխավորապես բնակմաններին ու հարազատներին [2]: Ընտրություններին իրավունք չունեին մասնակցել նահանգապետը, քաղաքային գործերի նահանգական ատյանի անդամները՝ բացառությամբ քաղաքագլխի, նահանգական վարչության անդամները և տեղական ոստիկանության սահմանավորները, քանի դեռ գտնվում էին իրենց պաշտոնում, չնայած կարող էին բավարարել ընտրություններին մասնակցելու վերը նշված պայմաններին [3]: Յուրաքանչյուր քաղաքային քվեարկության ժամանակ կարող էր ունենալ մեկ կամ երկու ձայն: Քաղաքացին երկու ձայն ունենում էր այն դեպքում, երբ նա իր սեփական ձայնից բացի իրավունք էր ստացել քվեարկել և լիազորագրով, որը կարող էր արված լինել հիմնարկ-ձեռնարկություններին, ընկերությունների կամ այլոց կողմից:

Ինչպես տեսնում ենք, 1870 թ. քաղաքային Կանոնադրության ընտրական իրավունքի հիմքում դրված է ունեցվածքի ցենզը, կապիտալիզմի սրբագործած սկզբունքը: Բոլոր այն քաղաքացիները, որոնք չէին բավարարում վերը նշված պայմաններին, զրկված էին ընտրական իրավունքից: Այլ կերպ ասած, բանվորները, արհեստավորների մեծագույն մասը, դյուղից ժամանակավորապես քաղաք եկած այգեգործները, մանավորականության մեծ մասը զրկված էին դումայի ընտրություններին մասնակցելու իրավունքից, քաղաքի ներքին կյանքին մասնակցելուց: Նույն բախտն էր վիճակված և այն աղքատ քաղաքացիներին, որոնք ժամանակին չէին կարողացում մուծել քաղաքային հարկը, թեպետ և նրանք ունեին իրենց փոքրիկ սեփականությունը՝ սեփական հյուղը և փոքրիկ բանջարանոցը:

Մեր կատարած հաշիվները ցույց են տալիս, որ Երևանում ըստ

1 «Городовое полож. 1870 г.», էջ 8:
2 Նույն տեղը, էջ 12—13:
3 Նույն տեղը, էջ 14:

1870 թ. քաղաքային Կանոնադրության յուրաքանչյուր 100—150 հոգուց դումայի ձայնավորների ընտրություններին մասնակցում էր միայն մեկ հոգի՝ հաշված նաև եկեղեցական, արտադրական ու առևտրական հիմնարկներից լիազորված ընտրողներին: 80-ական թվականների վերջերին, երբ Երևանի բնակչության թիվը հասնում էր մոտ երկու տասնյակ հազարի, ըստ ցուցակների ընտրական իրավունք ունեին միայն մոտավորապես 1200—1700 հոգի [1], իսկ ընտրություններին մասնակցել են ավելի փոքր թվով ընտրողներ. հարյուրավոր մարդիկ քաղաքային հարկերը ժամանակին չկարողանալով տալ՝ զրկվում էին ընտրություններին մասնակցելուց:

Այդ բոլորը մի կերպ կարելի էր տանել և քաղաքային Կանոնադրությամբ սահմանված ընտրական սիստեմը համարել ոչ այնքան խիստ քաղաքի մանր սեփականատերերի համար, եթե ընտրություններին մասնակցողների բոլոր ձայները ունենային միևնույն արժեքը: Ճիշտ է, յուրաքանչյուր քաղաքացի ուներ մեկ ձայն (չհաշված լիազորագրով քվեարկողներին), բայց տարբեր խավերին պատկանող ընտրողների ձայներն ունեին տարբեր արժեք: Այսպես.

Յուրաքանչյուր քաղաքում ընտրություններն անցկացնելու համար, ըստ քաղաքային Կանոնադրության, ձայնի իրավունք ունեցողներից կազմակերպվում էին երեք ընտրական ժողովներ, որոնցից յուրաքանչյուրն ընտրում էր դումայի ձայնավորների մեկ երրորդական մասը: Ընտրողներին երեք կարգի բաժանելու համար նրանց ցուցակում գրում էին ըստ քաղաքային հարկի քանակի՝ սկսելով ամենամեծ հարկատուից՝ ավարտում էին ամենափոքրով: Ցուցակի սկզբից հաշված քաղաքային ամբողջ հարկերի մեկ երրորդ մասը վճարող ընտրողները կազմում էին առաջին կարգը, հաջորդ մեկ երրորդը վճարողները՝ երկրորդ կարգը, իսկ վերջին մեկ երրորդը վճարողները՝ երրորդ կարգը [2]: Առաջին կարգի մեջ մտնում էին շատ փոքր թվով ընտրողներ, նրանք մեծ սեփականատերեր էին և այդքան փոքր թվով տալիս էին քաղաքային հարկերի մեկ երրորդական մասը, երկրորդ կարգի մեջ մտնող ընտրողների թիվը ևս մեծ չէր, իսկ երրորդ կարգը բազմամարդ էր: Ըստ Կ. Ա. Պաժիտնովի հաշիվների, նշված Կանոնադրության համաձայն Պետերբուրգում առաջին կարգին պատկանող ընտրողների թիվը 275 էր, երկրորդ կարգին պատկանողներինը՝ 849, իսկ երրորդինը՝

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿԳԱ, ֆ. 117, ց. 157, թ. 18—24, 31—53, 136—164:
2 «Городовое полож. 1870 г.», էջ 15—16:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

16.355, յուրաքանչյուր կարգ քաղաքային դումայի համար ընտրում էր 84 ձայնավոր։ Առաջին կարգի յուրաքանչյուր երեք ընտրողին ընկնում էր մեկ ձայնավոր, երկրորդ կարգի յուրաքանչյուր 9 ընտրողին էր ընկնում մեկ ձայնավոր, իսկ երրորդում յուրաքանչյուր 195 ընտրողին էր ընկնում մեկ ձայնավոր [1]։ «Այլ կերպ ասած առաջին կարգի ընտրողի ձայնը վաբսունհինգ անգամ ավելի կշիռ ուներ, քան երրորդ կարգի ընտրողի ձայնը»— միանագամայն տեղին եզրակացնում է Կ. Ա. Պաժիտնովը [2]։ Նույն պատկերն էր նաև Մոսկվայում [3] և այլ քաղաքներում։

Այժմ տեսնենք կարգերի միջև եղած տարբերությունը ինչպիսի թաստությամբ էր արտահայտված Երևանում։ 1888 և 1889 թթ. ցուցակներով դումայի ընտրություններին մասնակցողները ըստ կարգերի բաշխված էին հետևյալ հարաբերությամբ. 1888 թ. մարտի 3-ի դրությամբ կազմված ցուցակի համաձայն առաջին կարգի մեջ մտնում էին ընդամենը 10 ընտրող, երկրորդ կարգի մեջ՝ 22 ընտրող, իսկ երրորդ կարգի մեջ՝ 267 ընտրող։ Ընդ որում, առաջին կարգի մեջ էին մտնում այն բոլոր ընտրողները, որոնցից յուրաքանչյուրի քաղաքային հարկը տատանվում էր 132 ռ. 9 կ. և 392 ռ. 16 կ. միջև, երկրորդ կարգի մեջ մտնող ընտրողների հարկը տատանվում էր 41 ռ. 25 կ. և 131 ռ. 8 կ. միջև, իսկ երրորդ կարգայիններինը՝ 20 կ.—37 ռ. 15 կ. միջև [4]։ Նույն թվականի օգոստոսի 20-ի դրությամբ կազմված ցուցակի համաձայն առաջին կարգի մեջ մտնում էին 26 ընտրողներ, որոնցից յուրաքանչյուրի քաղաքային հարկը տատանվում էր 130 ռ. և 440 ռ. 58 կ. միջև, երկրորդ կարգում ցուցակագրված էր 81 ընտրող, իսկ հարկը տատանվում էր 29 ռ. և 127 ռ. 50 կ. միջև, երրորդ կարգում՝ 893։ Վերջին կարգի մեջ մտնում էին այն բոլոր ընտրողները, որոնց հարկի չափը տատանվում էր մի քանի կոպեկից (5 կոպեկից) մինչև 28 ռ. 50 կ. միջև [5]։ Իսկ 1889 թ. փետրվարի 25-ին կազմված ցուցակով առաջին կարգի ընտրողների թիվը 36 է, երկրորդ կարգի ընտրողների թիվը՝ 126, երրորդինը՝ 1273։ Ինչպես տեսնում ենք, թվերը ցույն են։ Եթե ընդունենք, որ Երևանի քաղաքային դուման բաղկացած է 60 ձայնավորից և յուրաքանչյուր կարգ պետք է ընտրի 20 ձայնավոր, ապա դուրս կգա, որ, ըստ մեր վկայակոչած առաջին ցուցակի, առաջին կարգի յուրաքանչյուր ընտրողին ընկնում է երկու ձայնավոր, երկրորդ կարգի յուրաքանչյուր 1,1 ընտրողին՝ մոտ մեկ ձայնավոր, իսկ երրորդ կարգի յուրաքանչյուր մեկ ձայնավորին ընկնում է 13,35 ընտրող։ Երկրորդ ցուցակի համաձայն մեկ ձայնավորը համապատասխանում է՝ առաջին կարգում 1—3 ընտրողի, երկրորդ կարգում՝ 4 ընտրողի, իսկ երրորդ կարգում՝ 44,6 ընտրողի։ Իսկ ըստ երրորդ ցուցակի համապատասխան թվերն են. առաջին կարգում մեկ ձայնավորին ընկնում է 1,8 ընտրող, երկրորդ կարգում՝ 6,3 ընտրող, իսկ երրորդ կարգում՝ 63,3 ընտրող [1]։ Այսպիսով, ըստ առաջին ցուցակի առաջին կարգի յուրաքանչյուր ընտրողի ձայնը երրորդ կարգի ընտրողի ձայնի համեմատությամբ 27 անգամ ավելի կշիռ ուներ, երկրորդ ցուցակով առաջին կարգային ընտրողի ձայնի կշիռը երրորդ կարգայինի նկատմամբ՝ 34,3, իսկ երրորդ ցուցակով՝ մոտ 35,2։ Որքան մոտենում էր ընտրությունների օրը, այնքան այդ տարբերությունը մեծանում էր, որովհետև քաղաքի ցածր խավը մեծ ձգձգումով հաղիվ էր կարողանում փակել քաղաքային հարկը։

Այսպիսով, եթե ունեցվածքի ցենզը դրկում էր քաղաքի բնակչության մեծ մասին ընդհանրապես մասնակցելու քաղաքային դումայի ընտրություններին, ապա ըստ հարկերի քանակի (նույնն է, թե ըստ ունեցվածքի չափի կամ մեծության) ընտրական իրավունք ունեցողներին կարգերի բաժանելը քաղաքային դուման դարձնում էր հարուստ վաճառականների ու արդյունաբերողների օրգան, մի օրգան, որտեղ քաղաքի անշարժ գույք ունեցողների ցածր և, մասամբ, միջին խավի ներկայացուցիչները կազմում էին չնչին թիվ ու կշիռ։ Դուրս էր գալիս, որ քաղաքային ռեֆորմ անցկացնողների խոստումներն այն մասին, թե քաղաքներում 1870 թ. Կանոնադրությամբ ստեղծվում են ոչ դասային դումաներ, լոկ հայտարարություններ էին։ Իրականում այդ կանոնադրությամբ ստեղծված դումաներում գերիշխում էր միայն «առևտրա-արդյունաբերական դասակարգը»՝ բուրժուազիան, ինչպես տեղին նկատում է Դմ. Դմ. Սեմյոնովը [2]։

Հիմք ընդունելով Կանոնադրության համապատասխան հոդվածները՝ յուրաքանչյուր քաղաքում քաղաքային վարչությունը կազմում և դուման ու նահանգապետը հաստատում էին դումայական

[1] К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 31։
[2] Նույն տեղը։
[3] Տե՛ս Воспоминания Б. Н. Чичерина, Земство и Московская дума. Москва, 1935։
[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 157, թ. 18—21։
[5] Նույն տեղը, թ. 31—53։

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 157, թ. 136—164։
[2] Дм. Дм. Семенов, Городское самоуправление, СПБ, 1901, էջ 53։

ընտրությունների կանոնադրությունը։ ՀՍՍՌ ՊԿՊԱ 117-րդ ֆոնդում պահպանված են Երևանի քաղաքային դումայի ընտրությունների կանոնադրության և հրահանգչական ցուցումների մի շարք օրինակներ [1], որոնցում նշված են ընտրությունների ժամանակը, ընտրողների ցուցակների կազմելու կարգը և վերջնական ժամկետները, ձայնավորների առաջադրման, ձայնի իրավունքի վկայականներ ստանալու, քվեարկության կարգի, ձայները հաշվելու, ժողովների հրավիրման և այլ հարցերի վերաբերյալ։ Հիմնական կանոնները հետևյալներն էին. ընտրողների ցուցակները վերջնականապես կազմվում և հաստատվում էին ընտրություններից ոչ պակաս մեկ ամիս առաջ, ընտրողներին, բուն վերը նշված պայմանների, բաժանում էին երեք կարգի, խստիվ հետևելով, որպեսզի կարգերի բաժանումը կատարվի ճշտությամբ [2], ընտրությունների մասին հայտարարվում էր երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն, ձայնավորների թեկնածուները տրվում էին ընտրողների կողմից, յուրաքանչյուր ընտրող իրավունք ուներ առաջադրելու և իր թեկնածուին, ընտրական ժողովները կայանում էին ըստ կարգերի՝ տարբեր օրեր, որոնցում նախագահում և ղեկավարում էր քաղաքագլուխը, քվեարկությունը կատարվում էր գնդիկներով. ընտրված էին համարվում այն թեկնածուները, որոնք ստանում էին ընտրության մասնակցողների թվի կեսից ոչ պակաս ձայներ, ընտրողների յուրաքանչյուր կարգը ընտրում էր 14—20 ձայնավոր, նայած դումայի ձայնավորների ընդհանուր թվին, և 2—4 թեկնածու։ Ձայների բաժանման և այլ պատճառներով առաջին անգամ համապատասխան թվով ձայնավորներ չընտրվելու դեպքում դումարվում էին ընտրական լրացուցիչ ժողովներ՝ պակասող ձայնավորներ ընտրելու համար [3]։ Ընտրությունների արդյունքները հաստատում էր քաղաքային գործերի հատկանգական վարչությունը [4]։ Ժողովն օրինական էր համարվում, երբ ներկա ընտրողների թիվը գերազանցում է ընտրվելիք ձայնավորների թվին [5]։

Քաղաքային դուման քաղաքային ինքնավարական օրգանների մեջ կարգադիր օրգան էր։ Ըստ քաղաքային Կանոնադրության (ն

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 388, թ. 10—15, գ. 157, թ. 5, 233, գ. 877, թ. 194, ֆ. 92, գ. 301, ցուցակ 1, թ. 6 և այլուր։

2 Նույն տեղը, գ. 3, թ. 54։

3 Մանրամասն տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 388, թ. 10—15 և «Городовое положение 1870 г.», էջ 15—22։

4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 388 թ. 497։

5 «Городовое положение 1870 г.», էջ 21։

1870 թվականի և 1892 թվականի Կանոնադրություններով) այն ընտրվում էր չորս տարին մեկ անգամ՝ վերը նշված ընտրական ժողովների կողմից։ Դումայի անդամները կոչվում էին «ձայնավորներ»։ Քաղաքային դումայի ձայնավորների թիվը ըստ 1870 թ. Կանոնադրության կախված էր քաղաքի ընտրողների թվից։ Կանոնադրությամբ նախատեսվում էին հետևյալ նորմաները։ Այն քաղաքներում, որտեղ ընտրական իրավունք ունեցող բնակիչների թիվը չէր անցնում 300-ից, քաղաքային դուման պետք է բաղկացած լիներ 30 ձայնավորից, իսկ այն քաղաքներում, որտեղ ընտրական իրավունք ունեցողները 300-ից ավելի էին, ապա դրանից ավել յուրաքանչյուր 150 ընտրողի համար ավելացվում էր վեց ձայնավոր, մինչև որ դումայի կազմը հասներ 72 ձայնավորի [1]։ Դա առավելագույն թիվ էր բոլոր քաղաքների համար, բացառությամբ մայրաքաղաքների [2]։ Այնպես որ ավյալ քաղաքի քաղաքային դումայի ձայնավորների թիվը փոփոխության էր ենթարկվում ըստ ձայնի իրավունք ունեցողների թվի։ Երևանում 1870 թ. Կանոնադրությամբ դումայի ձայնավորների թիվը սովորաբար տատանվում էր 50—67-ի միջև՝ հաշված և թեկնածուները, իսկ 1892 թ. Կանոնադրության կիրառումից հետո, չնայած այդ ժամանակներում քաղաքի բնակչության թվի մեծ աճին, դումայի ձայնավորների թիվը համեմատական չափով բավական նվազում է [3]։ Այդ նոր Կանոնադրությամբ նախկինում ձայն ունեցող բնակչության զգալի մասը դրկվում է դրանից։

Չնայած Կանոնադրությամբ յուրաքանչյուր ընտրող իրավունք ուներ և ընտրվելու ձայնավոր, բայց, ինչպես ցույց են տալիս արխիվային նյութերը, ձայնավորների մեծագույն մասը ընտրվում էր բարձր խավի ներկայացուցիչներից՝ վաճառականությունից և անձնական ու ժառանգական ազնվականությունից։ Այսպես, օրինակ՝ 1894 թվականին ընտրված Երևանի քաղաքային դումայի 24 ձայնավորներից 10-ը անձնական և ժառանգական ազնվականներ էին, 8-ը՝ վաճառական, 2-ը՝ ավագ սպայությանը պատկանողներ, իսկ

1 «Городовое положение 1870 г.», էջ 22։

2 Բոլորովին այլ կարգ ունեին մայրաքաղաքների՝ Պետերբուրգի և Մոսկվայի քաղաքային դումաները։ Դրանցից առաջինը ուներ 250 ձայնավոր, իսկ երկրորդը՝ 180։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 346, թ. 8—21, գ. 1756, թ. 1, 56, 76, «Эриванские объявления» (Քերթիկ), 1911 թ., № 34. «Эриванские губернские ведомости» (Քերթիկ), 1907 թ., №№ 14, 69, 74 և այլն։

միայն 4-ը՝ ցածր խավից[1]։ Այդ նույն դումայի կազմում էին ընտրվել անձնական աղնվական Մ. Մ. Բունիաթյանը, որն ուներ 7 խանութ (կրպակ), երկու բաժնից բաղկացած մեծ տուն, երկու իջևանատուն, երկրորդ գիլդիայի վաճառական Գ. Ս. Ամիրյանը, որն ուներ երեք տուն, երկու այգի, վեց խանութ (կրպակ), իջևանատուն, Ա. Մ. Եղիազարյանը, որն ուներ չորս տուն, բաղնիք, այգի, և ուրիշներ[2]։ Հասարակության մյուս խմբերից ընտրված ձայնավորները նույնպես ունեորներ էին։ Դրանցից մեկը Թ. Լ. Խուդաբաշյանն էր, որն իր եղբոր հետ միասին ուներ երեք տուն, մեկ մեծ այգի, երկու խանութ և մեկ ջրաղաց[3]։ Մի խոսքով Երևանի քաղաքային դուման անշարժ մեծ գույք ունեցողների, հարուստ վաճառականների ու արդյունաբերողների և հարուստ քաղաքացիների դուման էր, թեպետ Կանոնադրության համաձայն[4] դուման իր ներկայացնում էր ամբողջ քաղաքային հասարակությունը։

Դումայի պարտականությունները, որն ինչպես ասացինք, սահմանափակված էր վարչա-ֆինանսական և տնտեսական նեղ հարցերի շրջանակներում, բազմազան էին։ Նրա ֆունկցիաների մեջ էին մտնում պաշտոնական անձանց ու քաղաքային վարչության ընտրությունը (փակ քվեարկությամբ), քաղաքային ինքնավարական օրգանների պաշտոնյաների ու աշխատակիցների աշխատավարձի նշանակումը, քաղաքային հարկերի ու տուրքերի նշանակումը, քաղաքի անունից փոխառությունների ու այլ պարտավորությունների մասին եղած առաջարկներին ընթացք տալը, հօգուտ քաղաքի կարիքների զոհողությունների ընդունումը, քաղաքային ծախսերի ու նկամուտների նախահաշիվների հաստատումը, կատարողական օրգանի՝ քաղաքային վարչության գործունեության ղեկավարումը, քաղաքային ունեցվածքների անօրինության, բարեգործական ընկերությունների ու այլ հասարակական ընկերությունների աշխատանքների վերաբերյալ կանոնների հաստատումը, քաղաքի բարեկարգման ու հատակագծի փոփոխման համար կանոնների մշակումը, քաղաքի կարիքների մասին կառավարական բարձրագույն օրգաններին համապատասխան միջնորդություններ ներկայացնելը և այլն[5]։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ց. 346, թ. 8—21։
2 Նույն տեղը, էջ 9—13։
3 Նույն տեղը, թ. 8—21։
4 «Городовое положение 1870 г.», էջ 23:
5 Նույն տեղը, էջ 23—25։

Քաղաքային դումայի նիստերին նախագահում էր քաղաքագլուխը, բացառությամբ այն նիստերի, որոնցում քննարկվում էր քաղաքային վարչության տարեկան հաշվետվությունը։ Նա միաժամանակ համարվում էր քաղաքային վարչության նախագահը։ Դումայի նիստերը դումարվում էին կամ քաղաքագլխի հայեցողությամբ, կամ նահանգապետի պահանջով և կամ ձայնավորների ցանկությամբ, պայմանով, եթե վերջիններիս թիվը կազմում է ոչ պակաս, քան դումայի բոլոր ձայնավորների մեկ հինգերորդ մասը[1]։ Դումայի նիստերը օրինական էին համարվում, երբ նրանցում մասնակցում էին բոլոր ձայնավորների առնվազն մեկ երրորդը, իսկ հարցերը լծվում էին ձայների պարզ մեծամասնությամբ։ Սակայն կային մի քանի հարցեր, որոնց քննարկման համար պահանջվում էր, որ նիստին մասնակցեն առնվազն բոլոր ձայնավորների կեսը, իսկ որոշումը ընդունվում էր միայն այն ժամանակ, երբ նրա օգտին քվեարկում էին ներկա լինողների երկու երրորդը։ Այդ հարցերի թվին էին պատկանում քաղաքային գույքի վաճառքը կամ հօգուտ քաղաքի նոր գույք գնելը, պաշտոնյաների հեռացումը ու նրանց դատի տալը և այլն[2]։ Դումայի որոշումները հաստատում էին քաղաքային գործերի նահանգական ատյանը և նահանգապետը, իսկ որոշ հարցերի գծով պահանջվում էր նույնիսկ ներքին գործերի մինիստրության և անգամ Պետական խորհրդի հաստատումը։

Քաղաքային դումայում հարցերը լուծվում էին ոչ օպերատիվ։ Երևանի քաղաքային դումայի գործունեությունից հայտնի են այնպիսի հարցեր, որոնք իրենց լուծումը ստացել են միայն բազմաթիվ տարիների ընթացքում (խմելու ջրի, ձիաքարշի, էլեկտրական լուսավորության հարցը և այլն), իսկ կային այնպիսի հարցեր (օրինակ, Երևանը երկաթուղային փակուղուց դուրս բերելը), որոնք ընդհանրապես մնացին առանց լուծվելու։ Դումայի ձայնավորներին հավաքում էին մեծ դժվարությամբ, հաճախ հարկադրված էին լինում նիստերը հետաձգել ձայնավորների բացակայության պատճառով։ Քաղաքային միջոցների սակավության, դումայի գործերին պետական օրգանների տեղի անտեղի միջամտելու, դումայի ներսում գոյություն ունեցող հարատև պայքարի և մի քանի այլ պատճառներով դուման վեր էր ածվել ձևական օրգանի, մանավանդ 1892 թ. քաղաքային Կանոնադրության կիրառումից հետո, որի մասին խոսք կլինի առաջիկայում։

1 «Городовое положение 1870 г.», էջ 25։
2 Նույն տեղը, էջ 26—27։

Դումայի նիստերին սովորական էին թայֆայական կռիվները։ Ձայնավորներից շատերը իրենց նեղ անձնական շահերից ելնելով՝ բաժանվում էին փոքր խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ամեն կերպ ձգտում էր հարցերը լուծել իր օգտին։ Թայֆայական կռիվները առանձնապես բորբոքվում էին ընտրությունների ժամանակ [1]։ Սակայն սխալ կլիներ կարծել, թե քաղաքային դումայի ներսում մղվող պայքարը միայն թայֆայական բնույթ ուներ։ Այստեղ իրար հետ բախվում էին նաև կուսակցական, սկզբունքային հողի վրա, մի պայքար, որ մղվում էր հասարակության տարբեր խավերին պատկանող ներկայացուցիչների՝ ձայնավորների միջև, հատկապես քաղաքի բարեկարգման, ջրամատակարարման և սրանց հարցերը քննարկելիս։ Դումայական ֆրակցիաների պայքարը սրատեսությամբ էր բոլոր հարցերում։ Այդ պայքարը, որն արտացոլում էր հասարակության տարբեր շերտերի հակասությունները, ուներ իր դրական կողմը։ Սակայն պատահում էին դեպքեր, երբ դումայի նիստը վեր էր ածվում ազմուկ-աղաղակի վայրի, երբ ձայնավորները իրար հասցնելով անձնական վիրավորանքներ՝ թղթում հեռանում էին նիստից։ Ներդումայական պայքարը սկսեց ավելի սուր բնույթ ստանալ 80—90-ական թվականներից, քաղաքին խմելու ջրով ապահովելու հարցի շարժառիթով [2]։

Հայտնի է, որ մյուս քաղաքների դումաների պես Երևանի դուման էլ լինելով բուրժուական՝ գերազանցապես զբաղվում էր միայն քաղաքի կենտրոնական մասով, այն մասով, որտեղ հիմնականում ապրում էին խոշոր վաճառականները, ձեռնարկատերերը, մեծ ունեցվածքներ ունեցողները։ Իր տեղում կտեսանենք, թե ինչպես քաղաքի ծայրամասային թաղերի՝ հատկապես նորքի բնակիչները զրկված էին դումայի ու քաղաքային վարչության գործունեությունից՝ իրենց թաղամասը միանդամայն աչքաթող անելու համար։ Պայքարն էլ ավելի էր սրվում ձայնավորների, քաղաքային վարչության անդամների ու քաղաքագլխի ընտրությունների ժամանակ։ Հազվադյուտ չէին այն դեպքերը, երբ անսկզբունք պայքարի հետևանքով չէին կարողանում դումայի կազմը ընտրել լրիվ՝ չնայած լրացուցիչ ընտրություններին։ Այսպես, օրինակ՝ 1902 թ. քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ 60 ձայնավորի և 12 թեկնածուի փոխարեն ընդամենը 31 ձայնավոր [3] էր ընտրվել, այսինքն՝ սահմանված թվի կեսից էլ պակաս։ Նույնպիսի պատկեր են ներկայացնում և այլ տարիներին տեղի ունեցած դումայական, ինչպես և քաղաքային վարչության անդամների ու քաղաքագլխի ընտրությունները [1]։

Քաղաքային վարչությունը հաղարային իրավասության գլխավոր գործադիր օրգանն էր։ Երևանի քաղաքային վարչությունը բաղկացած էր քաղաքագլխից, որը վարչության նախագահն էր, և երկու անդամներից։ Դրանք բոլորը, ինչպես և քաղաքի քարտուղարը (կամ դումայի քարտուղարը) ընտրվում էին դումայի կողմից չորս տարին մեկ անգամ։ Ամեն երկու տարին մեկ անգամ վարչության անդամների կեսը հերթով դուրս էր գալիս վարչությունից և փոխարինվում նոր ընտրվածներով, որոնք կարող էին նույն մարդիկ լինել [2]։ Քաղաքագլուխ, վարչության անդամներ և քաղաքային բարեուղղար ընտրելիս ունեցվածքի հետ միասին մեծ տեղ էր տրվում նաև բնակածուների գրագիտության աստիճանին։ Երևանի քաղաքագլուխներից շատերը՝ բժ. Լևոն Տիգրանյանը, իրավաբան Հովհ. Ղ. Մելիք-Աղամալյանը և ուրիշներ, եղել են ժամանակի զարգացած և բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ։ Քաղաքագլուխը հաստատվում էր ներքին գործերի մինիստրության կողմից։ Քաղաքային վարչությունը ղեկավարվում էր գոյություն ունեցող պետական օրենքներով ու կարգադրություններով, ինչպես նաև դումայի ներքին՝ օրենքի ուժ ստացած որոշումներով [3]։ Վարչության հիմնական պարտականությունը քաղաքային տնտեսության և ներքին կյանքի կառավարումն էր։ Քաղաքային վարչությունը եթե գտնում էր, որ դումայի կարգադրությունը անօրինական է, հակասում է գոյություն ունեցող պետական օրենքներին, ապա գործը հանձնվում էր նահանգապետին՝ քաղաքային գործերի նահանգական տեղեկանում այդ մասին համապատասխան որոշում կայացնելու համար [4]։ Այնպես որ դումայի նման քաղաքային վարչությունն էլ ենթակա էր պետական օրգանների հսկողությանը։

Քաղաքային վարչության յուրաքանչյուր անդամ ուներ իր որոշակի ֆունկցիաները։ Քաղաքագլխի հիմնական պարտականությունն էր հսկել վարչության և նրան ենթակա հիմնարկների ու պաշտոնյաների գործունեության վրա [5], ղեկավարել վարչության ու դումայի նիստերը, նախապատրաստել լուծում պահանջող հարցեր և

1 «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1895, № 12, էջ 1673—1675։

2 Տե՛ս «Նոր մամուլ» (լրագիր), Երևան, 1913, № 18, «Մուրճ» (ամսագիր), 1902, № 10, էջ 187—188։

3 «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1902, № 10, էջ 188։

1 «Մուրճ» (ամսագիր), 1895, № 12, էջ 173—174։

2 «Городовое положение 1870 г.», էջ 28 և 36։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 4։

4 «Городовое положение 1870 г.», էջ 29 և 33—34։

5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 4։

այլն։ Վարչությունն ուներ իր գրասենյակը։ Նրա երկու անդամներից մեկը, որը համարվում էր քաղաքագլխի տեղակալը և վերջինիս բացակայության ժամանակ փոխարինում էր նրան, վարում էր վարչության գրասենյակային ներքին գործերը, իսկ վարչության մյուս անդամը ղեկավարում էր արտագրասենյակային գործերը՝ քաղաքի տնտեսության բոլոր ճյուղերը։ Քաղաքային վարչություններում, բացի քաղաքագլխի և վարչության անդամների առօրյա կարգադրություններից, հարցերը լուծվում էին նիստով, ձայների մեծամասնության սկզբունքով, բայց քաղաքագլուխը առարկություն ունենալու դեպքում վարչության մյուս երկու անդամները չէին կարող որոշում ընդունել։ Այդպիսի դեպքերում դիմում էին դումայի կամ պետական օրգանների միջամտությանը։

Քաղաքի քարտուղարը, որպես դումայի քարտուղար, պատրաստում էր դումայի զեկուցումները, վարում էր դումայի գործերը, կազմում նրա հաշվետվությունները։ Նա միաժամանակ ղեկավարում էր քաղաքային վարչության գրասենյակային գործերը։ Քարտուղարին էին ենթարկվում գրանցիչը (регистратор), դռնապահը, պահակը, թղթատարները [1]։ Նշվածներից բացի, քաղաքային վարչության աշխատակիցներ էին համարվում գործավարները, որոնք զբաղվում էին հարկերով ու տուրքերով, հաշվապահն ու դանձապահը, քաղաքի ճարտարապետը, հողաչափը և բժիշկը, որոնց պարտականությունների մասին խոսք կլինի հետագայում՝ քաղաքի տնտեսական և ներքին կյանքին անդրադառնալիս։ Քաղաքային վարչության ապարատը և նրան ենթակա ծառայողներն ու դանապան աշխատակիցները՝ սկսած քաղաքագլխից և վերջացրած սեպագրե բանվորներով, կազմում էին մի պատկառելի բանակ, բաղկացած մոտ 60 հոգուց։ 1904—1910 ԹԹ. դրանց թիվը մոտ 55 էր, որոնց տարեկան աշխատավարձը, արխիվային տվյալների համաձայն, կազմում էր 26 340 ռ. [2], որը շատ ծանր էր նստում սուղ միջոցներ ունեցող Երևանի վրա։

Քաղաքային ինքնավարությանը ենթակա, բայց ոչ ընտրովի պաշտոնյանները՝ բժիշկներ, ինժեներներ և այլն, պատկանում էին «երրորդ տարրին» (XX դարի սկզբներից այդպես էր կոչվում տարբեր խավերին պատկանող ինտելիգենցիան), ի տարբերություն ընտրովի պաշտոնյանների՝ «երկրորդ տարրի» և պետական օրգանների աստիճանավորների՝ «առաջին տարրի»։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 4—5։

2 Նույն տեղը, գ. 530, թ. 163—165։

Քաղաքագլուխը, դումայի ձայնավորները, քաղաքային վարչության անդամները և քաղաքային ինքնավարության մյուս պաշտոնյաները երդում էին տալիս ազնվորեն ծառայելու համար։ Իրենց պարտականությունների կատարման և հանդիսավոր արարողությունների պահերին քաղաքային ինքնավարության ծառայողները կրում էին հատուկ նշաններ, իսկ քաղաքագլխին դրանից բացի տրվում էր նաև համազգեստ [1]։

Քաղաքային վարչության տնօրինության տակ էին գտնվում, այսպես կոչված, առևտրական ոստիկանությունը (торговая полиция) և գործադիր հանձնաժողովները։ Դրանցից թե՛ առաջինը և թե՛ երկրորդները գործում էին դումայի կողմից հաստատված հատուկ հրահանգների հիման վրա։ Առևտրական ոստիկանության ապարատը բաղկացած էր առևտրա-տնտեսական ավագ վերակացուից, բաժանմունքային առևտրա-տնտեսական վերակացուներից և նրանց օգնականներից, շուկայի վերակացուներից, հարկահավաքներից ու այլ ծառայողներից [2]։

Առևտրական ոստիկանությունն ուներ երկու հիմնական պարտականություն՝ հարկերի հավաքումը և առևտրի վրա հսկողությունը, որոնց կատարման կարգը մանրամասնությամբ շարադրված էր հատուկ հրահանգի մեջ [3]։

Գործադիր հանձնաժողովներ առաջադրում էր վարչությունը և հաստատման ենթարկվում դումայի կողմից։ Այդ հանձնաժողովները կարող էին լինել մշտական կամ ժամանակավոր։ Դրանք նույնպես գործում էին դումայի մշակած հրահանգով։ Երևանում առաբեր ժամանակներում կազմվել էին քաղաքի սանիտարական վիճակին հետևող, ջրմուղի կառուցման և շահագործման գործով զբաղվող և մի շարք այլ հանձնաժողովներ։

Քաղաքի ինքնավարական օրգանների վրա անմիջականորեն հսկում էր նահանգապետը և նրա նախագահությամբ գործող քաղաքային գործերի նահանգական ատյանը, որի կազմի և ֆունկցիաների մասին խոսք եղավ վերևում։

1870 թվականի քաղաքային Կանոնադրությունը գործողության մեջ է մնում մինչև 1892 թվականը։ Ալեքսանդր 3-րդի գահակալությամբ սկսված ռեակցիան իր արտացոլումն է գտնում երկրի ներ-

1 «Городовое положение 1870 г.», էջ 36։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 802, թ. 6։

3 Երևանի առևտրական ոստիկանության կանոնադրությունը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 802, թ. 6—9։

րին կյանքի շատ բնագավառների, այդ թվում և տեղական ինքնավարությունների՝ զեմստվոների ու քաղաքային ինքնավարության վրա։ Զեմստվոներին վերաբերող «ռեֆորմը» կատարվում է 1890 թվականին։ Ռեֆորմի անմիջական ձեռնարկողը 1882 թ. մայիսի 30-ին ներքին գործերի մինիստր նշանակված Դ. Ա. Տոլստոյն էր։ Այդ «ռեֆորմով» ցարական ներքին գործերի մինիստրը փաստորեն բովանդակազրկում էր զեմստվոները, առանց համարձակվելու դրանց վերացման հարցը դնել։ Ահա թե ինչպիսի ճշդրտությամբ է բնութագրում այդ «ռեֆորմը» Վ. Ի. Լենինը.

«Իր միտքը— էապես վերացնել զեմստվոն— նա (Դ. Ա. Տոլստոյը— Բ. Հ.) բացահայտորեն չարտահայտեց իր նախագծում։ Ինքնավարության սկզբունքների ճիշտ զարգացման պատրվակի տակ նա ցանկանում էր թողնել նրա արտաքին ձևը՝ զրկելով նրան ներքին ամեն մի բովանդակությունից»։ Պետական խորհրդում «աղվեսի պոչի» այս իմաստուն պետական քաղաքականությունը դեռ լրացվեց ու զարգացվեց, և ի վերջո 1890 թ. զեմստվային կանոնադրությունը «նոր կիսամիջոց հանդիսացավ զեմստվային հիմնարկների պատմության մեջ։ Այն չվերացրեց զեմստվոն, բայց դիմազրկեց ու գունազրկեց նրան. չոչնչացրեց նաև համադասային սկզբունքը, բայց դասային գունավորում տվեց. զեմստվային հիմնարկներից իշխանության իրական օրգաններ չպատրաստեց... բայց մեծացրեց նահանգապետների խնամակալությունը նրանց վրա... ուժեղացրեց նահանգապետական բողոքարկման իրավունքը»։ «1890 թ. հուլիսի 12-ի կանոնադրությունը, նրա կազմողի մտադրությամբ, մի քայլ էր զեմստվային հիմնարկները վերացնելու ճանապարհին, բայց ոչ երբեք զեմստվային ինքնավարության արմատական բարեփոխություն»[1]։

1892 թ. նույն բախտին է արժանանում նաև քաղաքային ինքնավարությունը։ Կառավարության կարգադրությամբ 1870 թվականի Կանոնադրության «վերափոխման» աշխատանքները սկսվում են 80-ական թվականների վերջերին[2]։ Զեմստվայական «ռեֆորմի» նման այստեղ էլ հիմնական փոփոխությունները նախատեսվում էին կատարել ընտրական իրավունքի առավել կրճատման, քաղաքային ինքնավարական օրգանների իրավունքների ու ֆունկցիաների նեղացման և այդ օրգանների վրա պետության հսկողությունը

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 69—70։

2 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 33—34։

ավելի ուժեղացնելու ուղղությամբ։ 1870 և 1892 թթ. Կանոնադրությունների տարբերությունները էլ հենց արտահայտվեցին այդ բնագավառներում։ Նոր Կանոնադրությունը նախապատրաստելու համար տեղերում ստեղծված հանձնաժողովները, չնայած դրանց մեծ մասի ռեակցիոն կազմին, հայտնում են այն կարծիքը, որ անհրաժեշտ է ձայնի իրավունք տալ նաև քաղաքի այն բնակիչներին, որոնք ապրում են վարձված բնակարաններում, իսկ դրանք հիմնականում մտավորականներ էին։ Ներքին գործերի մինիստրի միջամտությամբ կատեգորիկ կերպով մերժվում է այդ առաջարկը։ Ներքին գործերի մինիստրը «իր փորձված աչքերով» դրանում տեսնում էր «քայքայիչ միտումներ», համոզելով կառավարությանը, որ բնակարան վարձողների մուտքը քաղաքային դումա վնասակար է, որ դրանով իրը քաղաքային ինքնավարական հիմնարկների գործունեությունը կդնա կեղծ ու վտանգավոր ուղղությամբ[1]։ Մերժվում են նաև կրթական ցենզի մասին եղած բոլոր առաջարկները, նախ այն պատճառով, որ կրթական ցենզով ձայնի իրավունք տալու դեպքում դարձյալ մտավորականությունը մուտք կգործեր դումա և քաղաքային մյուս հիմնարկներ, իսկ երկրորդ՝ ունեցվածքի ցենզով ձայնի իրավունք ունեցողների մեծագույն մասը կրնկներ անհարմար դրության մեջ, քանի որ չուներ կրթական որևէ ցենզ[2], բայց հենց դրանք էին անհրաժեշտ ցարական կառավարությանը, դրանք էին հիմնականում խոշոր կապիտալի ներկայացուցիչները, ցարիզմի հուսալի հենարանները։ Ավելին, ունեցվածքի ցենզով ընտրական իրավունք ունեցողների համար նույնիսկ տարրական դպրոցներ ավարտելը պարտադիր համարելու դեպքում, ինչպես նկատում է Կ. Ա. Պաժիտնովը, ընտրողների թիվն այնքան կնվազեր, որ չէր լրացնի քաղաքային դումաների ձայնավորների կազմը[3], իսկ դա նույնպես ձեռնտու չէր ցարական կառավարությանը, որովհետև վերջինս այդ վերափոխությունը ձգտում էր ժողովրդին ներկայացնել իբրև «բարեփոխություն»։ Մեծապես սահմանափակվեցին նաև համապատասխան ունեցվածքի տեր կանանց ընտրական իրավունքները։ Սրանք 1870 թ. Կանոնադրությամբ ընտրությանը մասնակցում էին իրենց կողմից երաշխավորվածների կամ իրենց խնամակալների (եթե անչափահաս են) միջոցով։ Սակայն 1892 թ. Կանոնադրությամբ երաշխավորելու պայմանները խստացվեցին, որի

1 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 34։

2 Նույն տեղը, էջ 37։

3 Նույն տեղը։

պատճառով էլ կանայք հաճախ երաշխավորության համար չէին դանում նույն կանոնադրությամբ նախատեսված համապատասխան բարեկամներ ու հարազատներ և զրկվում էին ընտրություններին մասնակցելուց [1]։

Այդ բոլորը դեռ ոչինչ, կարելի էր մի կերպ տանելի համարել, եթե ունեցվածքի ցենզը մնար նույնը՝ նախկինը։ Ցարական կառավարությունը գտնելով, որ 1870 թ. Կանոնադրությամբ «անչափ լայն են բացված դումայական ընտրությունների դռները», նոր կանոնադրությունով սահմանում է ունեցվածքի ավելի խիստ ցենզ։ Ըստ նոր Կանոնադրության, ընտրություններին իրավունք ունեին մասնակցել՝ 1) ռուսահպատակ այն բոլոր քաղաքացիները, ինչպես և բարեգործական, գիտական, ուսումնական և պետական հաստատությունները, որոնք քաղաքի սահմաններում սեփականատիրական կամ ցմահ տիրապետելու իրավունքով ունեն քաղաքային հարկման ենթակա անշարժ գույք հետևյալ արժողությամբ (ըստ հարկման ենթարկելու դնահատումների). Մոսկվայում և Պետերբուրգում ոչ պակաս 3000 ռուբլուց, 100 հազարից ավել բնակչություն ունեցող քաղաքներում և Օդեսայում՝ 1500 ռուբլուց ոչ պակաս, նահանգական, մարզային, ինչպես և գավառական համեմատաբար մեծ քաղաքներում՝ ոչ պակաս 1000 ռուբլուց, իսկ մյուս փոքր քաղաքներում՝ ոչ պակաս 300 ռուբլուց [2]։ 2) Ռուսահպատակ այն բոլոր անձիք և ձեռնարկություններն ու ընկերությունները, որոնք քաղաքի սահմաններում ոչ պակաս, քան մեկ տարի ունեն քաղաքային հարկման ենթակա հետևյալ կարգի ձեռնարկություններ. ա) Մոսկվայում՝ առաջին կարգի առևտրական (առաջին գիլդայի), առաջին, երկրորդ կամ երրորդ կարգի արդյունաբերական և ավելի քան 500 ռ. հարկ վճարող շոգենավային ձեռնարկություններ. բ) մյուս քաղաքներում՝ առաջին կամ երկրորդ կարգի առևտրական, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ կարգի արդյունաբերական և ոչ պակաս քան 50 ռուբլի քաղաքային հարկ վճարող շոգենավային հիմնարկություններ [3]։

1892 թ. Կանոնադրությամբ փաստորեն ընտրական իրավունք է տրվում միայն խոշոր բուրժուազիային։ Այժմ արդեն ոչ միայն բանվոր դասակարգը, մանավորականությունը և արհեստավորներն

1 Дм. Дм. Семенов, Городское самоуправление, էջ 104—105:

2 «Городовое положение 1892 года», էջ 24: Հմմտ ՀՍՍՌ ԿՊԿԱ, ֆ. 117, գ. 877, թ. 194:

3 Տե՛ս ՀՍՍՌ, ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 877, թ. 194։

էին զրկվում քաղաքային դումայի ընտրություններից, այլև բուրժուազիայի լայն խավերն ու տնատերերը։ Եվ իզուր չէ, որ 1892 թ. Կանոնադրությունը խիստ քննադատության են ենթարկել նաև նահապետական շրջանի հեղինակները՝ Դմ. Դմ. Սեմյոնովը, Կ. Ա. Պաժիտնովը, Ն. Նիկոլաձեն, «Մուրճի» խմբագիր Ա. Արապետյանը և շատ ուրիշներ։ Դմ. Դմ. Սեմյոնովը՝ խոսելով 1892 թ. Կանոնադրության մասին, գրում է, որ այնտեղ «քաղաքային ընտրական իրավունքը» հասցվել է նվազագույնի [1], Կ. Ա. Պաժիտնովը այդ Կանոնադրությամբ հաստատված կարգը համարում է կապիտալի օլիգարխիա [2], իսկ Ն. Նիկոլաձեն և Ա. Արապետյանը նոր Կանոնադրության համաձայն ընտրված դումաները կոչում են «պլուտոկրատիայի» օրգաններ [3]։

Եթե մինչև 1892 թ. Կանոնադրության կիրառումը Պետերբուրգում կային ավելի քան 21 հազ. ընտրողներ, ապա այն կիրառումից հետո ընդամենը մնում է 8 հազար ընտրող, Մոսկվայում ավելի քան 20 հազարից իջնում է 7 հազարի, Կիևում՝ 4157-ից 2710-ի, Խարկովում՝ 6890-ից 2291-ի և այլն։ 1897 մարդահամարով պարզվում է, որ Մոսկվայում նոր Կանոնադրության կիրառումից հետո ընտրություններին մասնակցում է քաղաքի բնակչության միայն 0,7 տոկոսը, Պետերբուրգում՝ 0,6 տոկոսը, Մինսկում՝ 0,3 տոկոսը, Բելոստոկում՝ 0,2 տոկոսը և այլն [4]։

1892 թ. Կանոնադրությամբ կրճատվում է նաև քաղաքային դումաների ձայնավորների թիվը։ Սահմանված էր հետևյալ կարգը. այն քաղաքներում, որոնց ընտրողների թիվը 100-ից ավել չէր, դուման պետք է ունենար մինչև 20 ձայնավոր, իսկ 100-ից ավելի ընտրողներ ունեցող քաղաքներում յուրաքանչյուր 100 ընտրողին ավելացվում էր 3 ձայնավոր, մինչև որ ձայնավորների թիվը կհասնի երկու մայրաքաղաքներում՝ 160 հոգու, 100 հազարից ավելի բնակչություն ունեցող նահանգական քաղաքներում՝ 80 ձայնավորի, նահանգական ու մարզային մյուս քաղաքներում՝ 60-ի, իսկ այլ քաղաքներում՝ 40-ի։ Դրա հետևանքով Պետերբուրգի քաղաքային դումայի ձայնավորների թիվը, որ մինչև 1892 թ. ռեֆորմը 252 էր,

1 Дм. Дм. Семенов, Городское самоуправление, էջ 100:

2 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 37:

3 «Кавказ» (թերթ), Тифлис, 1899, №№ 18 և 19. «Մուրճ» (ամսագիր), 1899, № 1, էջ 113—114:

4 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 35—36:

իջնում է 160-ի, Մոսկվայինը 180-ից իջնում է 160-ի, Ռոստովինը 72-ից՝ 50-ի և այլն [1]։

1892 թ. Կանոնադրության պայմանների համաձայն՝ իրեն 100 հազարից պակաս բնակչություն ունեցող նահանգական քաղաք Երևանում ձայնի իրավունք ունեին ռուսահպատակ այն քաղաքացիները, ինչպես նաև բարեգործական և ուսումնական հիմնարկները (գիտական հիմնարկներ Երևանում չկային), որոնք քաղաքի սահմաններում սեփականատիրական իրավունքով կամ ցմահ ունեին 1000 ռուբլուց ոչ պակաս գնահատված անշարժ գույք, ռուսահպատակ այն քաղաքացիները, ձեռնարկություններն ու ընկերությունները, որոնք քաղաքի սահմաններում ունեին առաջին կամ երկրորդ գիլդայի (կարգի) առևտրական, առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ կամ հինգերորդ կարգի արդյունաբերական ձեռնարկություններ։ Դժվար չէ եղրակացնել, թե այդ պայմանները ինչքան ծանր պետք է նստեին Երևանի պես քաղաքի վրա, մի քաղաք, որի սեփականատեր բնակչության մեծագույն մասի կապիտալների մեծությունը տասնյակ ռուբլիներից դենը չէր անցնում, մի քաղաք, որի բնակչության հոծ զանգվածները արհեստավորներ, մանրավաճառականներ, օրավարձով ապրող գյուղացիներ ու բանվորներ էին։ Եվ իրոք, 1892 թվականի Կանոնադրությունը անցկացնելուց տասը տարի անց, 1902 թվականին, երբ Երևանն ուներ մոտ 30 000 բնակիչ և մի քանի տասնյակի հասնող զանազան ձեռնարկություններ ու ընկերություններ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին պատկառելի գումարների հասնող անշարժ գույք ու կապիտալ, ընտրության իրավունք ունեին ընդամենը 1030 մարդ [2], իսկ 1870 թ. Կանոնադրությամբ, ինչպես տեսանք, ընտրական իրավունք ունեին 1200—1700 հոգի։ 1030-ը 1902 թվականին կազմում էր քաղաքի բնակչության միայն մոտ 3,3 տոկոսը։

Դրանք էին օրենքով ձայնի իրավունք ունեցողները։ Սակայն իրականում ընտրություններին մասնակցում էին ավելի փոքր թվով ընտրողներ, որովհետև դրանցից շատերը քաղաքային տուրքը ժամանակին չվճարելու և այլ պատճառով նույնպես զրկված էին ընտրություններից։ Նույն թվականի հաշիվներով 1030-ից քաղաքային տուրքեր չվճարելու պատճառով ձայնից զրկվել էին 280 հոգի, չհաշված միասնական անշարժ գույք ունենալու, քաղաքից բացակայելու և այլ պատճառով ընտրություններից բացակայողներին,

1 К. А. Пажитнов, Городское и земское самоуправление, էջ 36—38։
2 «Մուրճ» (ամսագիր), 1902, № 10, էջ 185։

որոնք ևս կազմում էին բավականին մեծ թիվ։ 1902 թ. ընտրություններին առաջին անգամ մասնակցում է 340 ընտրող [1] (բնակչության մոտ 1,2 տոկոսը, այլ կերպ՝ ընտրական իրավունք ունեցողների 33 տոկոսը), իսկ լրացուցիչ ընտրության ժամանակ միայն՝ 300 ընտրող (բնակչության 1 տոկոսը, ընտրության իրավունք ունեցողների 29,1 տոկոսը)։

1892 թ. Կանոնադրության համաձայն Երևանը պատկանում էր նահանգական այն քաղաքների թվին, որոնց դումայի ձայնավորների կազմը սահմանված էր 60 հոգի, այսինքն՝ գրեթե այնքան, որքան նա ուներ 80-ական թվականներին, երբ քաղաքի բնակիչների թիվը անհամեմատ փոքր էր։

Իրականում հաճախ ընտրվում էր միայն 30—40 ձայնավոր։ Ընտրության մասնակիցների միջև մղվող քայֆայական պայքարի և այլ պատճառներով հնարավոր չէր լինում լրացնել նախատեսված թվով ձայնավորներ։

Նոր Կանոնադրությամբ միանգամայն էական փոփոխություններ են տեղի ունենում նաև քաղաքային ինքնավարության օրգանների, պաշտոնյաների ու ձայնավորների հաստատման կարգի, իրավունքների ու պարտականությունների մեջ, չնայած առաջվա նման դուման մնում էր իբրև կարգադիր, իսկ քաղաքային վարչությունը՝ գործադիր օրգան։ Այդ փոփոխությունները հիմնականում հանգում էին նրան, որ քաղաքային վարչությունը դումայից ավելի է անկախանում, քաղաքագլուխը իրավունք է ստանում դումայական օրակարգից հանել իր ցանկացած հարցը, մեծանում են նրա իրավունքները, ձայնավորները զրկվում են դումայի արտակարգ նիստեր հրավիրելու առաջարկի իրավունքից, դուման զրկվում է վարչության անդամներին դատի տալու իր նախկին իրավունքից, այդ իրավունքը տրվում է քաղաքային գործերի նահանգական ատյանին, քաղաքային ինքնավարության ընտրովի պաշտոնյանները՝ քաղաքագլուխը, քաղաքային վարչության անդամները և մյուս պաշտոնյանները հավասարեցվում են պետական աստիճանավորներին, նրանք ենթարկվում են պետական-կարգապահական ընդհանուր օրենքներին և դիտվում իբրև պետական պաշտոնյաներ։ Դրանով իսկ նահանգապետն ու քաղաքային գործերի նահանգական ատյանը լիիրավ են դառնում նրանց նկատմամբ, ընդհուպ մինչև նրանց պաշտոններից հեռացնելն ու դատի տալը՝ այդ իրավունքից

1 «Մուրճ» (ամսագիր), 1902, № 10, էջ 185—186։

զրկելով դումային[1]։ Բավական նեղացվում ու անորոշ են դարձվում քաղաքային ինքնավարության իրավունքները նաև քաղաքի ներքին տնտեսական, կոմունալ ու կուլտուրական կյանքի բնագավառներում։ Քաղաքային դումայի ոչ մի որոշում չէր կարող կատարվել առանց նահանգական վարչության համապատասխան սանկցիայի. մեծապես ավելանում է նահանգապետի ու ներքին գործերի մինիստրության հաստատումանը ենթակա գործերի թիվը։ Այժմ արդեն ոչ թե դուման ինքը, այլ նահանգապետն է որոշում, թե ինչ անհետաձգելի հարցերով պետք է զբաղվի դուման։ Այլ կերպ ասած, նահանգապետը ոչ միայն հետևում էր, որպեսզի քաղաքային ինքնավարությունը գործի օրենքի սահմաններում, այլև իրավունք ուներ դադարեցնել դումայի այն որոշումների կատարումը, որոնք նրա կարծիքով «չէին համապատասխանում ընդհանուր համապետական» կարիքներին կամ «խախտում են տեղական բնակչության շահերը»[2]։

Կ. Ա. Պաժիտնովը՝ խոսելով 1892 թ. քաղաքային Կանոնադրությամբ քաղաքի ներքին կյանքում դումայի ու քաղաքային վարչության իրավունքների նեղացման մասին, գրում է. «... ամենամեծ չարիքը կայանում է նրանում, որ նշված գործերի շրջանակներում քաղաքային ինքնավարությունը զրկված է ինքնուրույնությունից։ Կարելի է ասել, որ 1892 թ. ռեֆորմից հետո մեզ մոտ ընդհանրապես ինքնավարություն չմնաց բառիս բոլորի կողմից ընդունված իմաստով»[3]։ Այստեղ որևէ չափազանցություն չկա։ 1892 թ. ռեֆորմից հետո իրոք որ քաղաքային ինքնավարության միայն անունն էր մնացել, իրականում նա լիովին ենթարկված էր ցարական կառավարության օրգաններին ու պաշտոնյաներին, նա նույնիսկ ամենաանհանգամանալի հարցերը լուծելիս մի քայլ չէր կարող անել առանց վերջիններիս համապատասխան սանկցիայի։

Աշխատության երկրորդ բաժնում քաղաքի կառավարման և ինքնավարության հարցերին նորից չանդրադառնալու համար այստեղ մի քանի խոսքով արձանագրենք այն փոփոխությունները, որոնք տեղի ունեցան քաղաքի ներքին վարչական կյանքում 1892 թ. մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանում։

---

1 *К. А. Пажитнов*, Городское и земское самоуправление, էջ 38 և 41—42։ Համմա. ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 14, գ. 1282, թ. 2։

2 *К. А. Пажитнов*, Городское и земское самоуправление, էջ 39—41։

3 Նույն տեղը, էջ 40։

XIX դարի 90-ական թվականներին արդյունաբերության ու առևտրի զարգացումը պատճառ դարձավ քաղաքային կյանքի աճմանը, երկրի կյանքում քաղաքների դերի մեծացմանը։ Նույն դարի վերջին Ռուսաստանը թևակոխում է իմպերիալիզմի շրջանը և կանգնում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի փաստի առաջ։ Քաղաքային կյանքի աճն ու քաղաքի նշանակության մեծացումը և ռևոլյուցիոն շարժումները ցարական կառավարությանը հարկադրում են վերացնել 1892 թ. քաղաքային Կանոնադրության որոշ թերություններ։ 1903 թ. կատարվեց նրա մասնակի փոփոխումը։ Բայց այդ փոփոխված Կանոնադրությունը կիրառվեց միայն Պետերբուրգում[1]։ Կայսրության մյուս բոլոր քաղաքներում, որոնց թվում և Երևանում, ուժի մեջ մնաց 1892 թ. Կանոնադրությունը։

Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ժամանակավոր կառավարությունը հարկադրված է լինում վերակառուցելու քաղաքային ինքնավարությունը։ Հաստատված կարգի համաձայն քաղաքային ընտրություններին իրավունք ունեին մասնակցել բոլոր քաղաքացիները անկախ սեռից, կրոնից և ազգությունից։ Յուրաքանչյուր քաղաքացի ուներ մեկ ձայն, քվեարկությունը պիտի կատարվեր ուղղակի և գաղտնի։ Ի տարբերություն 1892 թ. Կանոնադրության, որով քաղաքային ինքնավարությունը ենթարկված էր քաղաքային դործերի նահանգական ատյանին, նոր կարգի համաձայն քաղաքային ինքնավարության գործերի օրինականությանը պետք է հետևեր օկրուգային դատարանը, որին կից այդ նպատակի համար բացվել էր հատուկ, վարչական բաժին։ Նույնպիսի բաժին էր բացվել նաև Երևանի օկրուգային դատարանին կից։ Քաղաքային ինքնավարության անօրինական գործունեության դեմ եղած բոլոր բողոքները պետք է ընդուներ այդ բաժինը[2]։

Ցարական ռեակցիոն Կանոնադրության նկատմամբ 1917 թ. Փետրվարյան ռևոլյուցիայի շնորհիվ հաստատված այդ կարգը անշուշտ մի աստիճան բարձր էր։ Սակայն պետք է նկատի ունենալ երկու հանգամանք, առաջին՝ այն, որ ժամանակավոր կառավարությունը, ինչպես մյուս բնագավառներում, այնպես էլ քաղաքային ինքնավարության դծով չիրականացրեց իր տված խոստումները. քաղաքային ինքնավարության համար հաստատված նոր կարգը փաստորեն մնաց թղթի երեսին, և երկրորդ, մեր կարծիքով ամենից

---

1 Տե՛ս *К. А. Пажитнов*, Городское и земское самоуправление, էջ 44—48։

2 ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 14, գ. 1282, թ. 2։

գլխավորը այն է, որ 1917 թ. Փետրվարյան ռևոլյուցիային հաջորդող ամիսները ռևոլյուցիոն պոռթկումների ամիսներ էին, օրացուցային առումով փոքր, բայց պատմական առումով մեծ ժամանակաշրջան, որի ընթացքում օրավուր նախապատրաստվում էր սոցիալիստական ռևոլյուցիան։ Հետևապես ժամանակավոր կառավարության այդ «զոհողությունը» քաղաքի ինքնավարությունը վերակազմելու ուղղությամբ ըստ էության միայն բուրժուական նեղ ռեֆորմի բնույթ ուներ և չէր կարող ռևոլյուցիոն տվյալ ժամանակաշրջանի համար դիտվել որպես առաջադիմական, էական քայլ։ Ժամանակավոր կառավարությունը այդ և նման մյուս միջումները անում էր ռևոլյուցիայի ճնշման տակ և այն էլ լոկ այն բանի համար, որպեսզի ժողովրդական զանգվածներին հեռացնի ռևոլյուցիայից։

Երևանն իբրև ռուսական կայսրության քաղաքներից մեկը մյուս քաղաքների ու նահանգների հետ միասին մասնակցում էր Պետական դումաների ընտրություններին։ Հայտնի է, որ ցարական օրենքներով Պետական դումայի ընտրությունների համար սահմանված էին ամենահակադեմոկրատական կարգերը։ Վ. Ի. Լենինի բնութագրմամբ 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության պարտության հետևանքով Պետական դուման դարձավ սևհարյուրակային-օկտյաբրիստական։ Նա գրում է. «1905 թ. ռևոլյուցիոն պայքարը առանձնապես սրվեց այն պատճառով, թե ով և ինչպես կգումարի համառուսաստանյան առաջին ներկայացուցչական հիմնարկը (Պետական դուման— Թ. Հ.)։ Դեկտեմբերյան պարտությունը այս հարցը վճռեց հօգուտ հին միապետության, իսկ այդպիսի պայմաններում այլ կոնստիտուցիա չէր էլ կարող լինել, բացի սևհարյուրակային-օկտյաբրիստականից» [1]։

Դումայական ընտրությունների համար ընտրական իրավունք ունեցողները բաժանվում էին երկու կուրիայի՝ ռուսական և ընդհանուր, որոնք ունեին տարբեր իրավունքներ։ Ընտրական իրավունքի համար պահանջվում էր կրթական, գույքային և նատակեցության ցենզ։ Ընտրություններն անուղղակի էին՝ երկաստիճան։ Իսկ այդ բոլորը ցույց են տալիս, թե ինչքան ռեակցիոն կազմ ու բնույթ են ունեցել ցարական Պետական դումաները։

Պետական դումայի ընտրությունները երկաստիճան էին. նախ ընտրողները ըստ կուրիաների ընտրում էին նահանգական ընտրողներ (выборщики), իսկ վերջիններս էլ նահանգական ընտրող-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, Երևան, 1950, էջ 416։

ների ժողովում ընտրում էին դումայի անդամներ։ Երևան քաղաքը նահանգական ընտրական ժողովի համար սովորաբար ընտրում էր երեք ընտրող՝ մեկը ռուսական կուրիայի գծով, իսկ երկուսը՝ ընդհանուր [1]։ 1907 թ. Պետական դումայում ընտրված 442 անդամներից միայն 10-ն էր ընտրված Կովկասյան փոխարքայությունից։ Վերջիններից 2-ը ընտրված էին Երևանի, Ելիզավետապոլի ու Բաքվի նահանգներից՝ միասին վերցրած [2]։

Երևանում Պետական դումայի ընտրությունների ժամանակ առանձնահատուկ ուժգնությամբ էր հանդես գալիս կուսակցական պայքարը։ Դաշնակցությունը «կազմելով պոլիցիա-կղերա-բուրժուական բլոկ և ի չարը գործադրելով բնակչության ազգային զգացմունքները՝ սոցիալ-դեմոկրատների դեմ բոլոր միջոցներով կռվում էր իր առաջ քաշած թեկնածուները Պետական դումայի ընտրություններին անցկացնելու համար [3]։

Նախորդ ժամանակաշրջանի նման Երևանում էին գտնվում Երևանի նահանգական ու գավառական, ոստիկանական ու պետական վարչությունները, օկրուգային դատարանը, հարկերի արտունական պալատը (բացված 1898 թ.), որը զբաղվում էր պետական հարկերով և որի տնօրինության տակ էր գտնվում հարկերի գծով նաև Կարսի մարզն ու Ելիզավետապոլի նահանգը, պետական ունեցվածքի վարչությունը, որի տնօրինության տակ էր գտնվում նաև Կարսի մարզը, ֆինանսական գանձատան հիմնարկներ՝ «Պետական բանկի Երևանի բաժանմունքը» (բացված 1885 թ.), «Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքը», «Ադովա-Դոնյան բանկի բաժանմունքը» և այլն [4]։

Թեպետև քաղաքի բերդը լիկվիդացիայի էր ենթարկվել, սակայն Երևանը մնում էր իբրև կարևոր ստրատեգիական կետ ռուս-թուրքական սահմանամերձ շրջանում։ Այս առումով նա, ճիշտ է, չէր կարող հավասարվել Ալեքսանդրոպոլին, Կարսին կամ Բաթումիին, բայց պետք է նկատի ունենալ, որ Երևանը սահմանամերձ էր նաև Պարսկաստանին։ Հաշվի առնելով այդ, Երևանում և նրանից ոչ հեռու գտնվող Քանաքեռ գյուղում տեղադրված էր տարբեր տեսակի զորամասերից բաղկացած մի բազմամարդ կայազոր, որը

1 Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 592, թ. 10, գ. 618, թ. 89, «Эриванские объявления» (листок), 1912, № 66:

2 «Эриванские губернские ведомости», 1907, № 56:

3 «Ծիր» (լրագիր), Բաքու, 1907, № 2։

4 Տե՛ս ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆ. 33, ցուցակ 14, գ. 1282, թ. 1—44, ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 6 և այլուր։

ավելի ուժեղացվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին։ Երևանի կայազորի կազմում էին գտնվում հրաձգային, հրետանային, կազակական և սահմանապահ զորքեր [1]։ Տարբեր ժամանակներում քաղաքում են տեղադրված եղել դիվիզիայի կամ բրիգադային շտաբները։ Վարչական առումով Անդրկովկասում և Երևանի նահանգում մեզ հետաքրքրող շրջանում էական որևէ փոփոխություն չի կատարվել։ Երևանի նահանգի սահմաններն ու գավառաբաժանումը, նրա ներքին վարչակարգը [2] անփոփոխ մնացին մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան։

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1879—1914 թթ. ընթացքում, որը ցարական տիրապետության ժամանակաշրջանի տնտեսական զարգացման բոլոր տեսակետից փոքր ժամանակաշրջան է, Երևան քաղաքի տնտեսական կյանքում, այնուամենայնիվ, տեղի են ունենում էական փոփոխություններ։ Քաղաքի տնտեսության բոլոր ճյուղերը՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսական ճյուղերը և առևտուրը այդ շրջանում բավական առաջադիմում են։ Սակայն այդ զարգացումը սոսկ մեխանիկական ան չէր։ Քաղաքի տնտեսական կյանքում հին ճյուղերի մեխանիկական աճի հետ միասին տեղի են ունենում նոր երևույթներ, որոնք կապված էին կապիտալիզմի զարգացման հետ, առաջանում են կապիտալիստական, համեմատաբար խոշոր արդյունաբերության մի շարք օբյեկտներ, ռուսական և մասամբ արտասահմանյան գործարանային էժան ապրանքների մրցակցությանը չդիմանալով՝ քաղաքում անկում են ապրում կամ իսպառ վերանում մի շարք արհեստներ, ռուսական կապիտալը ներ է հոսում քաղաքի արդյունաբերության մեջ, ավելանում է գյուղատնտեսական որոշ մթերքների՝ հատկապես խաղողի արտադրությունը, կապված դրա գործարանային վերամշակման և դինու-կոնյակի-օղու արտադրության ավելացման հետ, բավական բարձրանում է բերքատվությունը, ավելանում է քաղաքի այգեպերերի շահագրգռվածությունը՝ մրգի ավելի մեծ

1 *Տե՛ս* ЦГИА Грузинской ССР, Ф. 415, д. 113, л. 6. «Памятная книжка Эриванской губернии на 1903 г.», отд. 1, էջ 139, на 1908 г., отд. 2, էջ 31, на 1910 г., отд. 2, էջ 31 և այլ տեղերում։

2 *Երևանի նահանգի վարչակարգի մասին, տե՛ս* Թ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան, 1959, էջ 383—395։ Համմ.* «Свод законов Российской империи», Москва, 1910, кн. 1, т. II, էջ 393—410։

բերք ստանալու համար, որովհետև քաղաքում հիմք են դրվում մրգի պահածոների արտադրությանը և շիր պատրաստելու ավելի կատարելագործված եղանակին։ Կապիտալիստական խոշոր արդյունաբերության հետ միասին ձևավորվում է բանվոր դասակարգը, որը ռուսական պրոլետարիատի օրինակով իր պայքարի դրոշն է բարձրացնում ցարական-կապիտալիստական ստրկությունից ազատագրվելու համար։ Միանգամայն շոշափելի փոփոխություններ է կրում քաղաքի ներքին և արտաքին առևտուրը։ Երկաթուղու կառուցման հետևանքով մեծանում է ապրանքաշրջանառությունը, զգալի փոփոխություններ է կրում առևտրի ապրանքների կազմը, արմատավորվում են առևտրի կազմակերպման եվրոպական և ռուսական ձևերը՝ շուկայից դուրս, փողոցներում բացվում են մեծ ու այն ժամանակվա համար օրինակելի մասնագիտացված և ընդլայնված խանութներ։ Քաղաքում առաջանում են ֆինանսական հիմնարկներ և կոոպերատիվ ընկերություններ, փորձեր են կատարվում արտադրական ուսուցում կազմակերպելու։ Նյութական արտադրության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը պատճառ էին դառնում սոցիալական փոփոխությունների։

Քաղաքի տնտեսական կյանքը նախասովետական շրջանում իր զարգացման բարձրագույն կետին է հասնում 1913 թ., առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Այդ ժամանակ Երևանն ուներ կապիտալիստական մի քանի համեմատաբար խոշոր ձեռնարկություններ, տնայնագործական տիպի մի քանի տասնյակ ձեռնարկություններ, բավական զարգացած առևտուր ու այգեգործություն։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը քաղաքի տնտեսական կյանքում սկսում է կարևոր դեր խաղալ։ Ուստի մեր ուշադրության սույն գլուխը սկսում ենք դրա բնութագրմամբ, իբրև նոր, ավելի զարգացող ճյուղ, որի հետ են հիմնականում կապված հասարակական կյանքի նոր երևույթները։

Ա) ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքի արդյունաբերության բնույթը մինչև XIX դարի 80-ական թվականները։ Կապիտալիստական խոշոր արդյունաբերության ծագման նախադրյալները Երևանում. հումքային բազան, էներգիայի աղբյուրները, կապիտալների վիճակը և ֆինանսական ու արտադրական ընկերությունները, պետական-ֆինանսական օր-

գաններ, ռուսական կապիտալի ներհոսքը և նրա նշանակությունը, երկաթուղին, գյուղացիության բայբայումը և բանվորական կադրերի առաջացումը: Կապիտալիստական մեքենայացված ձեռնարկությունների երևան գալը: Կոնյակի արտադրությունը: Օղու, սպիրտի, գինու և խաղողագործական այլ մթերքների արտադրությունը: Տեր-Ավետիքյանների թուջակաղապարման-մեխանիկական գործարանը: Կաշվի վերամշակման գործարաններ: Բամբակազտիչ ձեռնարկություններ: Բրնձազտիչ գործարաններ, ալրաղացներ, ձիթեաև: Գարեջրի և հանքային ջրերի ու օշարակի գործարաններ: Պահածոյի գործարաններ: Մխախոտի ու կաուչուկային դրոշմակների «ֆաբրիկա»-ներ: Գաջի և կրի «գործարաններ», ապարաններ, ներկատներ: Մեծ ու փոքր բոլոր գործարանների և դրանց բանվորների բիվն ու արտադրանքի բանակը: Արդյունաբերական մի բանի խոշոր ձեռնարկությունների վիճակը 1913 թ.: Երևանի արդյունաբերության տեսակարար կշիռը Երևանի նահանգի մյուս բաղաքների և ամբողջ նահանգի արդյունաբերության մեջ: Ֆաբրիկային ավագ տեսուչը և նրա պարտականությունները: Բանվորների վարձար պայմաններ: Համմարությունների նշանակության նվազումը: Մի շարք արհեստների վերացումը: Նոր արհեստներ: Արհեստագործական ցածր տիպի դպրոց բաց անելու փորձերը: Արհեստների տեսակները, արհեստավորների ու արհեստանոցների բիվը, արհեստավորական արտադրանքների ծավալը:

Երևանի արդյունաբերությունը լայն իմաստով մինչև XIX դարի 80-ական թվականների վերջերն ու 90-ական թվականների սկզբները արտահայտված էր արհեստագործությամբ, տնայնագործությամբ, կապիտալիստական հասարակ կոոպերացիայով և մասամբ մանուֆակտուրային ոչ մեծ ձեռնարկություններով: Կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը, որին հատուկ էր մեքենաների ու ժամանակակից էներգիայի գործադրումը, բացակայում էր: Արդյունաբերության բնագավառում Երևանը 80-ական թվականները դիմավորում է որպես արհեստագործական, տնայնագործական և մանուֆակտուրային քաղաք: Սակայն 80-ական թվականների վերջերից և 90-ական թվականներից Երևանում մեկը մյուսի հետևից երևան են գալիս ժամանակակից կապիտալիստական խոշոր և գգալի չափով մեքենայացված ձեռնարկություններ: Մինչ այդ երևանում (և ամբողջ Երևանյան նահանգում) կապիտալիստական խոշոր արդյունաբերության համար չկային անհրաժեշտ նախադրյալներ: Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում անցկացնելուց հետո

(1870 թ.) տեղի ունեցած սոցիալական փոփոխությունները, սպրանքաշրջանառության ծավալումը, ճանապարհաշինարարությունը (հատկապես երկաթուղու կառուցումը), կապիտալի կուտակումը, ռուսական կապիտալի ներհոսքը, տեղում եղած հումքային ռեսուրսների աճը և այլ պատճառներ հիմք են դառնում քաղաքում կապիտալիստական խոշոր արդյունաբերության առաջացման համար: Նոր առաջացող կապիտալիստական խոշոր արդյունաբերության բնույթը, չափերը և զարգացման ուղղությունը հասկանալու համար անհրաժեշտ է փաստական նյութի հիման վրա վեր հանել այն բոլոր նախադրյալները (հումքային ռեսուրսները, էներգետիկ բազան, կապիտալի կուտակումը, ռուսական կապիտալի ներհոսքը, երկաթուղու կառուցումը, ազատ բանվորական ուժի առաջացման հարցը և այլն), առանց որոնց առկայության այդ տիպի արդյունաբերության առաջացումը Երևանում (և ընդհանրապես) երևակայել անգամ չի կարելի:

Հայտնի է, որ կապիտալիստական խոշոր արդյունաբերության ծագման ու զարգացման համար կարևոր նախադրյալներից մեկը համապատասխան հումքի առկայությունն է: Կապիտալիստական խոշոր արդյունաբերության առաջին հայրենիքում՝ Անգլիայում, օրինակ, այդ տիպի արդյունաբերության զարգացման համար սկզբնական շրջանում բացառիկ նշանակություն են ունեցել բուրդը, ապա երկաթահանքերն ու քարածուխը, որոնք այնքան իրար մոտիկ են գտնվում: Երևանում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում խոշոր արդյունաբերության համար իրրև հումք կարող էին ծառայել՝ խաղողը, բամբակը, կաշին և զանազան շինանյութեր: Առաջին հայացքից թվում է, թե նշված էժան հումքի հիման վրա XIX դարի վերջերից Երևանում պետք է առաջանային գինու-կոնյակի-օղու, տեքստիլ, կաշեգործական խոշոր գործարաններ ու շինանյութերի արդյունաբերական արտադրություն: Սակայն իրականում Երևանում նշված հումքային խոշոր արդյունաբերություն ստեղծվեց միայն խաղողի վերամշակման գծով: Բամբակի վերամշակումը սահմանափակվում էր միայն բամբակամաքրման ձեռնարկություններով, իսկ կաշվի մշակման ու շինանյութերի արտադրությունը ընդհուպ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը փաստորեն մնաց տնայնագործական մակարդակի վրա: Դրա պատճառները հետևյալներն էին: Ցարական մետրոպոլիայի արդյունաբերության շահերի տեսակետից ձեռնտու չէր պետության ծայրամասային կիսագաղութներում, որոնց թվում և Հայաստանում, խոշոր արդյունաբերության զարգացումը, մանավանդ այն հումքերի գծով (կաշի, բամբակ և

այլն), որոնք հեշտությամբ կարելի էր տեղափոխել երկար տարածությունների վրա և, ի տարբերություն շատ հանքատեսակների՝ երկաթի, պղնձի, քարածխի և այլն, մեծ զանգվածներ չեն ներկայացնում։ Ուստի Հայաստանը պետության ծայրամասային այլ նահանգների նման դիտվում էր իբրև ցարական կենտրոնի արդյունաբերության համար հումքի (գլխավորապես բամբակի) բազա և պատրաստի ապրանքների վաճառահանման շուկա։ Բամբակը Հայաստանում վերամշակելու փոխարեն այն միայն մաքրվում էր և մեծ կապոցների ձևով տարվում կենտրոնի արդյունաբերական շրջանները։ Իսկ շինանյութերի գծով խոշոր արդյունաբերության ստեղծման կարիքը մասամբ չէր զգացվում, որովհետև անչափ փոքր էր Հայաստանում շինարարության ծավալը, մասամբ էլ շինանյութերը մեծ զանգվածներ են կազմում և այն ժամանակվա պայմաններում երկար տարածության վրա դրանց փոխադրումը ձեռնտու չէր։ Կապիտալիստական խոշոր արդյունաբերության համար, այսպիսով, միակ հիմնական հումքը մնում էին խաղողը և մասամբ մրգերը։ Ցարական մետրոպոլիան չուներ ոգելից խմիչքների բավարար արտադրություն, խաղողը երկար տարածությունների վրա հնարավոր չէր փոխադրել, իսկ կոնյակը, գինին և օղին, որոնք համեմատաբար փոքր զանգվածներ էին կազմում և ենթակա չէին փչացման, կարելի էր տեղափոխել ցանկացած շրջանը։

Երևանի արդյունաբերությունը կարող էր խաղող կամ նախնական հումք ստանալ ամբողջ Արարատյան դաշտից՝ էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և մասամբ Շարուր-Դարալագյազի գավառներից։ 80-ական թվականների վերջերից սկսած նշված գավառներում խաղողի բերքը յուրաքանչյուր տարի երկու միլիոն փթից անցնում էր։ Արխիվային տվյալների համաձայն, նշված գավառներում, բացառությամբ Շարուր-Դարալագյազի Շարուրի շրջանից, խաղողագործությամբ էին զբաղվում 16.969 տնտեսություններ, իսկ այգիների ընդհանուր տարածությունը 10.539 դեսյատին էր։ Խաղողագործությամբ հիմնականում զբաղվում էին միջակ գյուղացիները [1]։

Խաղողագործությունը նախասովետական շրջանում իր զարգացման գագաթնակետին է հասնում առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին։ Արարատյան դաշտի այգեգործական շրջանները 1910—1914 թթ. խաղողի բերք են տացել հետևյալ քանակությամբ [2].

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 2։

2 Նույն տեղը։

Թվականներ	Խաղողի տարեկան բերքի քանակը փթերով	Մեկ դեսյատինից ստացված բերքի քանակը փթերով	Ծանոթություն
1910	2.300.000	220	Դրանց մեջ է մտնում և Երևան քաղաքի խաղողի այգիներից ստացված բերքը, որի մասին կխոսվի քաղաքի գյուղատնտեսական ճյուղերը բնութագրելիս
1911	3.500.000	332	
1912	2.300.000	220	
1913	3.700.000	350	
1914	2.400.000	228	

Ինչպես տեսնում ենք, խաղողի բերքի քանակը բավական անկայուն է եղել։ Նշված տարիներին այն տատանվել է 2.300.000-ից մինչև 3.700.000 փթի միջև։ Սակայն բոլոր դեպքերում էլ նրա բերքը լիովին կարող էր բավարարել բավական խոշոր ծավալ ունեցող արդյունաբերության կարիքները, մանավանդ, որ խաղողի գները նույն տարիներին և դրանից առաջ շատ բարձր չեն եղել։ Եղած տվյալների համաձայն 1910—1914 թթ. Ղամարլուի (Արտաշատի) շրջանում խաղողի փութը վաճառվել է 50—80 կ., Աշտարակում և Վաղարշապատում (էջմիածին)՝ 70—90 կ., իսկ Երևանում՝ 80 կ.—1 ռ. 20 կոպեկ [1]։ Վերամշակող խոշոր արդյունաբերության առկայությունը պատճառ էր դառնում խաղողագործության բնագավառում ապրանքայնության ավելացմանը և այգեգործության զարգացմանն ընդհանրապես։ Խոշոր արդյունաբերության համար մյուս մրգերը՝ բալ, խնձոր, սալոր և այլն, շատ քիչ դեր էին խաղում։ Այնուամենայնիվ դրանց բազայի վրա, ինչպես կտեսնենք իր տեղում, ստեղծվեց պահածոյի և չրի արտադրություն։

Տեղական արդյունաբերության կարիքները հարկադրեցին Երևանում ստեղծելու արդյունաբերական համեմատաբար և այնպիսի խոշոր օբյեկտ, որը տեղում չուներ իր հումքային բազան, հումք էր ստանում այլ տեղերից։ Դա միակ մեխանիկական ոչ մեծ գործարանն էր, որը բավարարում էր գինու-կոնյակի-օղու արտադրությանը և տեղական այլ կարիքներ։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության համար պակաս նշանակություն չունեն էներգիայի աղբյուրները։ Երևանի նահանգն ու նրա կենտրոն Երևան քաղաքը զուրկ են այնպիսի վառելիքներից, ինչպիսիք են նավթը, քարածուխը, տորֆը։ Նրա անտառ-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 2։

ներն աննշան են։ Էներգիայի միակ աղբյուրն այս լեռնային և համեմատաբար ջրառատ երկրում գետերն ու գետակներն են։ Երևանի արդյունաբերության համար հույժ կարևոր նշանակություն կարող էր ունենալ Սևանա լիճը՝ ջրի իր դարավոր պաշարներով։ Քաղցրահամ ջրեր և բարձր դիրք ունենալու շնորհիվ Սևանա լիճը XIX դարի առաջին կեսին արդեն գրավում է մասնագետների ուշադրությունը։ Տակավին 1847 թ. մի նախագիծ է ներկայացվում Սևանա լճի ջրերը ոռոգման նպատակներով օգտագործելու համար։ Նույն դարի 80-ական թվականների վերջերին ներկայացվում է երկրորդ նախագիծը, դարձյալ Արարատյան դաշտի մի մասի «ղռերը» Սևանա լճի ջրերով ոռոգելու համար։ 90-ական թվականներին ինտենսիվ կերպով ուսումնասիրվում է Սևանա լճի ռեժիմը, նրա դարավոր պաշարները ոռոգման համար օգտագործելու նպատակով [1]։ Ս. Ե. Մանասարյանը 1909 թ. առաջին անգամ առաջարկում է ոռոգման հետ միասին Սևանա լճի ջրերը օգտագործել իբրև էլեկտրաէներգիայի աղբյուր։ Սակայն Ս. Մանասարյանի նախագիծը և նրանից հետո հանդես եկած մյուս նախագծերն ու առաջարկները Սևանա լճի մակերևույթի կրճատման միջոցով՝ գոլորշիացման նվազման հաշվին առաջացած ջրերը էներգիայի և ոռոգման նպատակներով օգտագործելու մասին, ոչ միայն մնում են անիրականանալի, այլև դիտվում են իբրև պետական ամենածանր հանցագործություն՝ ուղղված բնության դեմ։

Երևան քաղաքի համար, այսպիսով, էներգիայի տեղական միակ աղբյուրը մնում էր Զանգու (Հրազդան) գետը։ Զանգուի ջրերը քիչ չափով էին օգտագործվում էլեկտրաէներգիայի համար։ Գետի վրա կառուցվել էին ընդամենը երեք փոքրիկ հիդրոէլեկտրակայաններ՝ «Ամպեր» ընկերության կայանը, կառուցված 1907 թվականին [2] (մոտ 200 կվ հզորությամբ), «Շուստով և որդիներ» ընկերության հիդրոկայանը, որի հզորությունը ընդամենը մոտ 60 կվ էր [3] և կաշվի գործարանատեր Հաջի Իբրահիմ-օղլու փոքրիկ հիդրոկայանը [4], որը ըստ երևույթին գոյություն է ունեցել շատ կարճ ժամանակ։ Դրանցից առաջինի էներգիան լիովին սպառվում էր քաղաքի լուսա-

1 Այդ ուսումնասիրությունների արդյունքները տե՛ս Е. С. Марков, Озеро Гокча (1911 г.):

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189 с/506, գ. 87, թ. 2։

3 Նույն տեղը, գ. 87, թ. 2, ֆ. 163, գ. 1, թ. 61—62։ Համմ. Г. Алахвердян, Состояние промышленности в дореволюционной Армении. (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1953, № 8, էջ 27)։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 134, գ. 203, թ. 13։

վորության վրա, երկրորդը էլեկտրաէներգիա էր տալիս նշված ընկերության գինու-կոնյակի գործարանին, իսկ երրորդը՝ Հաջի Իբրահիմ-օղլու փոքրիկ կաշեգործարանին։ Ջրաղացներում և որոշ գործարաններում շարժիչ ուժը մնում էր ջուրը։ Մի քանի ձեռնարկություններում, որտեղ օգտագործվում էր շոգին, վառելիք էր ծառայում նավթը, որը բերվում էր Բաքվից։

Էներգիայի համար Գետառի ջրերը ամենևին չէին օգտագործվում։ Դրանք չէին էլ կարող օգտագործվել նախ՝ այն պատճառով, որ Գետառը շատ սակավաջուր էր, իսկ երկրորդ՝ հաճախակի լինում էին սելավներ, որոնք խափանում էին նրանից հանված նույնիսկ սովորական առուները։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության ամենակարևոր նախադրյալներից մեկը մեծ գումարների հասնող կապիտալների առկայությունն է։ Առանց մեծագումար կապիտալի մխանգամայն անհնար է մեծ մասշտաբի արտադրության կազմակերպումը։ Այդպիսի կապիտալներ ուրիշ երկրներում, օրինակ՝ Անգլիայում, կուտակվել են գաղութների անողոք կողոպտման, վաճառականական գործարքների, տեղական բնակչության սեփականազրկման, վաշխառուական անողոք շահագործման, տեղական արդյունաբերության բերած շահույթի կուտակման և այլ եղանակներով։ Երևան քաղաքի համար կապիտալի նախասկզբնական կուտակման առաջին աղբյուրը՝ գաղութների թալանը, բացառված էր, որովհետև քաղաքը ինքն էր գտնվում գաղութային երկրում։ Երևանի համար մեծ մասշտաբի չէին նաև կապիտալի կուտակման մյուս աղբյուրները։ Ուստի չափազանցություն է միանգամայն հետևը Երևանում հրատարակվող «Կոչան» թերթի թղթակիցներից մեկի այն հայտարարությունը, թե Երևանում նույնիսկ 1912 թվականին համապատասխան գումարի կապիտալներ չկային կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու համար [1]։ Այլ կերպ ասած, խոշոր արդյունաբերություն ստեղծելու համար Երևանում եղած կապիտալները շատ համեստ էին։ Համեմատաբար մեծ գումարի հասնող կապիտալներ ունեին քաղաքի հարուստ վաճառականները՝ Խուդաբաշյանը, Ամիրյանը, Աֆրիկյանը և ուրիշներ, որոնցից, սակայն, շատերը վաճառականական գործարքները գերադասում էին արդյունաբերական գործունեությունից։ Այնուամենայնիվ, տեղական կապիտալի ներկայացուցիչներից առաջինը հարուստ վաճառականներից էին, որ փորձեցին իրենց կապիտալների

1 «Կոչան» (լրագիր), Երևան, 1912, № 18։

մի մասը ներգնել գինու-կոնյակի-օղու արտադրության մեջ (Ա. Ֆրիկյան, Գյոզալյան և ուրիշներ)։

Համեմատաբար խոշոր ձեռնարկումներ կատարելու համար XIX դարի վերջերից և XX դարի սկզբներից Երևանում կազմակերպվում են մի քանի փայատիրական ընկերություններ, որոնցից մի քանիսը ֆինանսական-վարկատու ընկերություններ էին, իսկ մյուսները՝ արտադրական։ Ֆինանսական-վարկատու ընկերություններից էին՝ «Մանր վարկի արհեստավորական ընկերությունը», որը կազմակերպված էր Ս. Տեր-Մարտիրոսյանի նախաձեռնությամբ 1904 թ. վերջերին[1], «Երևանի վաճառականների փոխադարձ օգնության ընկերությունը», որը կազմակերպվել էր 1912 թվականին Գ. Ամիրյանի, Գ. Անտոնյանի և Իս. Տեր-Իսահակյանի նախաձեռնությամբ[2]։ Դրանք իրենց գործունեությունը սկսելով միանգամայն փոքր թվով փայատերերի մասնակցությամբ և աննշան գումարներով, կարճ ժամանակամիջոցում ծավալվեցին և դարձան բավական մեծ կապիտալների տեր։ Այսպես, «Մանր վարկի արհեստավորական ընկերությունը» իր գոյության սկզբում ուներ ընդամենը 21 փայատեր՝ 520 ռ. դրամագլխով, իսկ մի քանի տարի անց նրա փայատեր-անդամների թիվը հասնում է ավելի քան 700-ի՝ 50000 ռուբլու դրամագլխով[3]։ Նույն ձևով արագ աճում են նաև վաճառականների ընկերության կապիտալները։ Առաջինի համեմատությամբ վերջինիս կապիտալներն ավելի մեծագումար էին։

Ավելի բազմաթիվ էին արտադրական-փայատիրական ընկերությունները, որոնք, ինչպես և նշվածները, ունեին իրենց հատուկ կանոնադրությունները։ Արտադրական-փայատիրական ընկերությունները Երևանում կազմակերպվում են XX դարի առաջին տասնամյակի վերջերից և երկրորդ տասնամյակի սկզբներից։ Այդ տիպի առաջին ընկերությունը, որը կոչվում էր «Կոնյակի գործարանական ընկերություն», կազմակերպվեց Երևանի ու Ղամարլուի (Արտաշատ) վաճառականների կողմից Ղամարլուում։ Ընկերության նպատակը Ղամարլուում կոնյակի արտադրության կազմակերպումն էր։ Նույն տիպի ընկերություններ էին «Ջրանցքի ընկերությունը», որը կառուցեց Երևանի ջրմուղը, Համազասպ Խուդաբաշյանի նախաձեռնությամբ կազմակերպված՝ «Կաթնարդյունաբերական ընկերությունը», «Գինեգործական ընկերությունը», «Պահածոների արտադրության ընկերությունը»[1] և այլն։

Արտադրական-փայատիրական ընկերությունները՝ իրենց ձեռքի տակ ունենալով համեմատաբար ավելի մեծ կապիտալներ՝ կարող էին ծավալել ավելի լայն թափի արտադրական գործունեություն։ Սակայն իրականում փայատիրական ընկերություններից և ոչ մեկը Երևանում արդյունաբերական որևէ ձեռնարկություն չի հիմնել։ Փայատիրական ընկերություններում ընդհանրապես տեր ու տնօրեն էին հարուստ ու անվանի փայատերերը, որոնք սովորաբար լինում էին հենց նույն ընկերությունների կազմակերպիչները։ Ընկերության միջոցները փաստորեն գտնվում էին շատ բաժին ունեցող հարուստ փայատերերի ձեռքին։ Այնուամենայնիվ, նշված ընկերությունների գործունեությունը Երևանի տնտեսական ու կոմունալ կյանքում ղզալի էր։

Արտադրական-բաժնետիրական ընկերությունների մեջ նշանակալից դեր էր խաղում «Գինեգործական ընկերությունը», որը իր մեջ էր միավորում «Գինեգործական» և «Պահածոների արտադրության»՝ փաստորեն իրրև իրարից անկախ ընկերություններ։ Ընկերության գործունեությունը սկսվել է 1912 թ. առաջին ամիսներից։ Ըստ կանոնադրության, ընկերության նպատակն է եղել մշակել այգեգործական ամբողջ բերքը՝ խաղողը և մրգերը։ Պահածոների արտադրության գծով յուրաքանչյուր բաժին (փայ) սահմանված էր 100 ռ., իսկ գինեգործության գծով՝ 250 ռ.։ Ընկերության անդամները այգեգործական նպատակներով կարող էին ընկերության դրամարկղից վերցնել համապատասխան գումար՝ վճարելով սահմանված տոկոսը[2]։

«Գինեգործական ընկերության» և մի քանի արտադրական այլ ընկերությունների կազմակերպիչը, ինչպես նշվեց, եղել է Համազասպ Խուդաբաշյանը, որն իր կրթությունն ստացել էր Փարիզում, Պաստյորի ինստիտուտում և որպես հմուտ քիմիկոս-գինեգործ դեռևս XIX դարի 90-ական թվականների սկզբներին հանդես էր եկել մի շարք լուրջ հետազոտություններով։ Նրա այդ հետազոտությունները ուշադրության էին արժանացել գինիներով հայտնի Ֆրանսիայի քիմիկոսների կողմից[3]։

---

1 Տե՛ս «Эриванские объявления» (листок), Ереван, 1912, № 9:
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, 1909, № 22։

1 Տե՛ս «Կոոպ», 1911, № 11 և «Эриванск. объявл.», 1912, № 9։
2 «Կոոպ» (լրագիր), 1911, № 5, էջ 5—6, «Эриванск. объявл.», 1912, №№ 1 և 2։
3 Նույն տեղը։

XX դարի սկզբներին Երևանում գոյություն ունեին նաև պետական-ֆինանսական զանազան հիմնարկություններ։ Ըստ եղած տվյալների, նույն դարի առաջին տասնամյակների վերջերին Երևանում կար բանկային չորս բաժանմունք՝ «Պետական բանկի», «Թիֆլիսի առևտրական բանկի», «Ազովա-Դոնյան բանկի» և «Վոլգա-Կամայի բանկի» բաժանմունքները [1], որոնք իրենց տրամադրության տակ ունեին մեծ գումարների հասնող դրամ։

Պետական-ֆինանսական օրգանների գոյությունը, անշուշտ, կարող էր նպաստել արտադրության զարգացմանը, թեպետև դրանց ազդեցությունը այն ժամանակվա Երևանի պայմաններում անմիջականորեն չէր արտահայտվում։

Հարուստ վաճառականներից, ֆինանսական ու արտադրական ընկերություններից և պետական-ֆինանսական օրգաններից բացի մեծ միջոցներ ուներ նաև քաղաքային ինքնավարությունը։ Սակայն վերջինիս միջոցները նրա վարչական, կոմունալ և այլ կարգի ծախսերի նկատմամբ այնքան փոքր էին, որ քաղաքը մշտապես պարտքերի մեջ էր, էլ ուր մնաց, թե նա կարող էր որևէ արտադրություն կազմակերպել։ Ավելին, քաղաքի արտադրական ձեռնարկությունները, ինչպես հետո կտեսնենք, կապալով տրվում էին անհատ ձեռնարկուներին։

Դժվար չէ եզրակացնել, որ XIX դարի վերջերին ժամանակակից խոշոր արդյունաբերություն կազմակերպելու համար Երևանում համապատասխան կապիտալներ քիչ կային։ Եղած կապիտալների մեծ մասն էլ, ինչպես ասվեց, գործադրվում էր առաջին հերթին առևտրի և ոչ թե արտադրության բնագավառում։ Դրա համար անհրաժեշտ էր մասնաճիրական կապիտալի ներհոսք այլ տեղերից։

Անդրկովկասի մի քանի քաղաքներում՝ հատկապես Բաքվում և Թիֆլիսում արտադրության մեջ և առևտրի բնագավառում մեծ կապիտալներ ունեին հայ կապիտալիստներն ու վաճառականները։ Հայ կապիտալիստներն այդ քաղաքներում հաջողությամբ մրցում էին ռուսական և օտարերկրյա խոշոր կապիտալի ներկայացուցիչների հետ։ Թվում է, թե XIX դարի վերջերին, երբ Երևանը երկաթուղով արդեն կապվում էր Անդրկովկասի մյուս քաղաքների և Ռուսաստանի կենտրոնական շրջանների հետ, երբ Երևանում առկա էր տեղական էժան հումք և բանվորական ուժ, հայ կապիտալիստներն

1 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 6, «Эриванск. объявл.», 1909 г., № 58։

իրենց կապիտալի մի մասը կուղղեին այստեղ և տեղում կկազմակերպեին գինու-կոնյակի-օղու գործարանային արտադրություն։ Սակայն նրանք ավանդաբար կապված էին այդ քաղաքների հետ, գինու-կոնյակի-օղու արտադրության գծով չունեին փորձ և չէին ուզում «վտանգի տակ դնել» իրենց կապիտալները։

Երևանում խոշոր գործարանային տիպի գինու-կոնյակի-օղու արտադրությունը կապված է առաջին հերթին ռուս խոշոր կապիտալիստ Շուստովի անվան հետ։ Վերջինս ռուսական կայսրության մի շարք քաղաքներում՝ Վարշավայում, Սամարղանդում, Քիշինյովում և այլ քաղաքներում ուներ գինու և սպիրտի մի շարք խոշոր գործարաններ։ Իրրև մեծ փորձ ու հմտություն ունեցող կապիտալիստ՝ Շուստովի համար չէր կարող աննկատ մնալ Երևանում գինու, կոնյակի և սպիրտի կապիտալիստական արտադրություն կազմակերպելու բարենպաստ պայմանները՝ բարձր շաքարայնություն ունեցող խաղողի և էժան ու հմուտ բանվորական ուժի առկայությունը, երկաթուղու կառուցումը և այլն։ Շուստովը իր կապիտալների մի մասը ներդրեց Երևանում՝ գնելով (1899 թ.) ու մի քանի անգամ ընդարձակելով գինու-կոնյակի այն գործարանը, որը դեռ 80-ական թվականներին կառուցել էր Թայիրյանը։ XX դարի առաջին տասնամյակի վերջերին Երևանյան նահանգի կոնյակի, գինու ու մաքուր սպիրտի արտադրության ավելի քան 50 տոկոսը կենտրոնացված էր Շուստովի ձեռքին [1]։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության ծագման համար կարևոր նախադրյալներից մեկը Երևանում եղել է երկաթուղին։ Երկաթուղու կառուցման հետևանքով Երևանը կապվում է Անդրկովկասի և Ռուսաստանի քաղաքների հետ։ Գյուղատնտեսության փակվածության քայքայման և սեփականազրկված զանգվածների առաջացման (զանգվածներ, որոնք պատրաստ էին ամենանվաստացուցիչ պայմաններով վարձվել արդյունաբերության մեջ), ապրանքաշրջանառության լայնացման և բեռների ծավալի մեծացման, կապիտալների մի տեղից դեպի մյուսը փոխադրելու բնագավառում արտակարգ մեծ էր երկաթուղու նշանակությունը։ Վ. Ի. Լենինը խոսելով ռեֆորմից հետո քայքայվող գյուղացիներից բանվորական կադրերի առաջացման պրոցեսի մասին՝ առանձնահատուկ նշանակություն է տալիս երկաթուղային ցանցին, ապրանքների փոխադրմանը և արտաքին առևտրի զարգացմանը, որոնք եղել են

1 О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, էջ 212—213։

նշված պրոցեսը պայմանավորող կարևորագույն նախադրյալներից մեկը [1]։ Երկաթուղիների կառուցմամբ ռուսական կապիտալիզմի կողմից Կովկասը (որի թվում և Երևանի նահանգն ու նրա կենտրոն Երևան քաղաքը) «ներգրավվում» էր «համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ», համահարթվում էին «հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները» [2]։

Ինչպես հայտնի է, 90-ական թվականներին արդյունաբերության արագ զարգացումը Ռուսաստանում առաջին հերթին կապված էր երկաթուղիների կառուցման հետ։ Նույնը կարելի է ասել Երևանի համար, բայց ավելի նեղ ու սահմանափակ հասկացողությամբ. երկաթուղու կառուցման շնորհիվ Երևանում սկսվեց տեղական հումքերից մեկի՝ խաղողի գործարանային մշակումը։ Երկաթուղին, մի կողմից, խթան հանդիսացավ ռուսական կապիտալի թափանցմանը քաղաքի տնտեսական կյանքի մեջ, իսկ, մյուս կողմից՝ լայն հեռանկարներ բացեց գինեգործական արտադրանքների վաճառահանման համար։ Երևանի համար երկաթուղու նշանակությունը լավ ըմբռնում էին և՛ շատ ժամանակակիցներ, և՛ քաղաքային դուման, որը երկաթգծի ու երկաթուղային կայարանի համար քաղաքի սահմաններում սիրով համապատասխան տերիտորիաներ տրամադրելուց բացի՝ 1898 թ. միջնորդում է նահանգապետի ու կովկասյան իշխանությունների առջև երկաթուղու մայրուղին Երևանով անցկացնելու մասին [3], թեպետև նրա այդ միջնորդությունը մնում է անհետևանք, իսկ Երևանը՝ փակուղու մեջ։ Քաղաքային դումայի որոշման հիման վրա գրված նահանգապետի երկու պահանջագրերում ուղղակի ասվում է, որ «Երևան քաղաքը տարանցիկ ճանապարհից դուրս թողնելը կվիժեցնի նրա առևտրական նշանակությունը և հարված կհասցնի բնակչության կողմից սկսվող արդյունաբերական գործունեությանը» [4]։ Նահանգապետի գրության մեջ, այնուհետև, վկայակոչված են տնտեսական, վարչական, ինչպես և քաղաքական այն շարժառիթները, որոնք ուղղակի թելադրում են երկաթուղու մայրուղին Երևանով անցկացնելու [5], մի քաղաք, որը տարանցիկ կարևոր դիրք էր գրավում ռուսական պետության պարսկական և թուրքական սահմանամերձ շրջաններում։ Փակուղու մեջ

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 15, Երևան, 1950, էջ 129—159։
2 Նույն տեղը, հ. 3, էջ 770—771։
3 Տե՛ս ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆ. 53, ցուցակ 14, գ. 1282, թ. 1—44։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը։

մնալը իրոք որ Երևանի տնտեսական կյանքին մեծ հարված էր հասցնում, այդ մանավանդ արտահայտվում էր առևտրի բնագավառում։ Մեծ բեռների հիմնական մասը անցնում էր Երևանի մոտով, առանց այնտեղ մտնելու։ Եվ իզուր չէ, որ Վրաց. ՍՍՌ ՊԿՊ արխիվում պահվող Երևանի նահանգի մասին վիճակագրական մի ամփոփագրում, որը վերաբերում է 1912 թ. սկզբներին, դույները մի փոքր խտացնելով նշվում է, թե չնայած Երևանի նահանգը Պարսկաստանի ու Թուրքիայի հետ ունի 345,3 վերստ սահման, բայց նրա կենտրոնի՝ Երևան քաղաքի երկաթուղային կայարանը ուղևորների ու բեռների շարժման համար լուրջ նշանակություն չունի [1]։

Փակուղի լինելուց բացի, Երևանի երկաթուղու նշանակությունը բավական իջնում էր նաև այն բանի շնորհիվ, որ քաղաքը շատ հարմար ու անհամեմատ կարճ ճաճուղով Երևան—Աղստաֆա ուղղությամբ կապված էր Թիֆլիս—Բաքու մայրուղու հետ։ Ապրանքների մի զգալի մասը, մանավանդ բամբակը, ինչպես կնշվի առևտրի մասին խոսելիս, երկաթուղու կառուցումից հետո էլ դեռևս շարունակում էր արտահանվել այդ ճաճուղով։

Չնայած այդ բոլորին, երկաթուղին Երևանի տնտեսական կյանքում խաղում էր արտակարգ մեծ դեր։ Երկաթուղու շնորհիվ նա կարող էր ռուսական և արտասահմանյան շուկաներ դուրս բերել իր գինեգործական արտադրանքները, որ այնքան դժվար էր սայլերի ու գրաստների միջոցով փոխադրելը։ Իզուր չէ, որ մինչև երկաթուղու կառուցումը Երևանում և Երևանի նահանգում արտադրված խմիչքները մնում էին նահանգի սահմաններում։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության ամենակարևոր նախադրյալներից մեկը սեփականազրկված բնակչության զանգվածների առկայությունն է, որը պատրաստ է իր բանվորական ուժը վաճառել։ Գյուղացիության մի մասի սեփականազրկումը տեղի է ունենում գյուղում կապիտալիստական հարաբերությունների ծագման ու ծավալման շնորհիվ։ Այդ պրոցեսի հետևանքով գյուղական բնակչության մի մասը մշտապես պատրաստ է անցնել քաղաքային կամ մանուֆակտուրային պրոլետարիատի շարքերը [2]։

Ռուսաստանում այդպիսի պայմաններ ստեղծվել են գյուղացիական ռեֆորմից հետո, երբ «գյուղացիական Ռուսաստանին փոխարինելու էր գալիս արդյունաբերական Ռուսաստանը»,— ինչպես գրում է Վ. Ի. Լենինը։ Ընդ որում, Վ. Ի. Լենինը այդ պրոցեսի ամե-

1 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 3—4։
2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 749—767։

նակարևոր դրդապատճառներից է համարում երկաթուղին, ապրանքաշրջանառության ծավալումը և արտաքին առևտրի զարգացումը։ Նույն երկաթուղին պատճառ էր դառնում նաև բնակչության տեղաշարժի համար, հատկապես այն բնակչության, որը գյուղում սեփականազրկվել էր և հարկադրված էր մի կտոր հացի համար դնալ քաղաք։

XIX դարի 90-ական թվականների սկզբներին նույնանման պրոցես է սկսվում նաև Երևանի նահանգում։ Միայն այստեղ, իբրև ցարական պետության հետամնաց ու երկաթուղիներով աղքատ ծայրամաս, այդ պրոցեսը չուներ այն ուժգնությունն ու խորությունը, ինչ որ նա ուներ պետության կենտրոնական նահանգներում։ 1893 թ. տվյալներով Երևանի նահանգից տարբեր տեղեր վարձու աշխատանքի էին գնացել 656 մարդ, 1912 թ. Երևանի նահանգի գյուղերից տարավայր վարձու աշխատանքի էին գնացել 37.003 հոգի, որոնցից 14.547-ը՝ նահանգի ներսում, 20.368-ը՝ նահանգից դուրս, իսկ 2.118-ը՝ արտասահման, 1913 թ. տարավայր վարձու աշխատանքի էին գնացել 48.742 հոգի, որոնցից 17.446-ը՝ նահանգի սահմաններում, 29.149-ը՝ նահանգից դուրս, իսկ 2.137 հոգի՝ արտասահման [1]։ Ինչպես տեսնում ենք, 1893 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմը ընկած կարճ ժամանակամիջոցում՝ ընդամենը 20 տարվա ընթացքում Երևանի նահանգում գյուղացիների հողազրկումն ու դեպի քաղաքներ կատարվող աշխատուժի հոսքը ավելացել էր մոտ 77 անգամ, չհաշված ժամանակավոր արտագնացներին, որոնք ևս կազմում էին մեծ թիվ։ Ընդ որում, վարձու աշխատանքի գնացող գյուղացիների մեծ մասը դիմում էր դեպի Բաքու և Թիֆլիս, իսկ մյուս, համեմատաբար փոքր մասը, մնում էր նահանգի սահմաններում, որտեղ հիմնական կենտրոնավայրը Երևանն էր։ Երևանի արդյունաբերությունն իր բնույթով և ծավալով այնպիսին էր, որ հնարավորություն չուներ գեթ նվազագույն չափով կլանել նահանգի պրոլետարականացող գյուղացիությանը։ Նրանում եղած գինու-կոնյակի արդյունաբերությունը և տեղական հումքի մշակման մյուս ձեռնարկությունները աշխատատար ճյուղեր չէին, դրանցում զբաղվող բանվորների թիվը, ինչպես կտեսնենք համապատասխան տեղում, շատ փոքր էր։ Այս էր այն հիմնական պատճառը, որ Երևանում ավելի, քան Բաքվում ու Թիֆլիսում, անգործներ շատ կային, իսկ բանվորների աշխատավարձը նվազագույն չափի էր։ «Կոլոս» թերթի թղթակիցներից մեկը, խոսելով Երևանի տնտեսության մասին՝ գրում է, որ 1912 թվականին այստեղ մեծ թիվ էին կազմում անգործները [1]։

1 Տե՛ս «Экономический вестник Армении», № 2, 1923, էջ 23։

Դրանք էին հիմնականում այն նախապայմանները, որոնց շնորհիվ Երևանում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին առաջացան խոշոր արդյունաբերության մի քանի ճյուղեր։ Երևանում կապիտալիստական խոշոր արդյունաբերության մեջ ներգրավված ձեռնարկությունները, ինչպես ասվեց, առաջացան գինու-կոնյակի-օղու արդյունաբերության մեջ՝ մասամբ նույն բնագավառի նախկին մանուֆակտուրային ձեռնարկությունների բազայի վրա, մասամբ էլ իբրև միանգամայն նոր ձեռնարկություններ։ 1887 թ. հունիսի 15-ին հրատարակված մի օրենքի համաձայն այդ ժամանակներում եղած գինեգործական ու օղի արտադրող գործարանները բաժանվում էին երկու խմբի՝ կատարելագործվածների և ոչ կատարելագործվածների։ Առաջին խմբի մեջ էին մտնում այն գործարանները, որոնք թորման կաթսայից ու սառնարանից բացի ունեին նաև սպիրտի մեխանիկական ջոկիչ հարմարանքներ [2]։ 1886 թվականին, այսինքն՝ նշված օրենքի հրապարակումից մի տարի առաջ Երևանում կատարելագործված որևէ գործարան գոյություն չուներ։ Այդ թվականի Երևանի նահանգի արդյունաբերության մասին ամփոփագիր կազմողը գրում է, որ նահանգում կատարելագործված գործարաններ չկան, որ եղած գործարանների արտադրողականությունը շատ ցածր է և բավարարում է միայն տեղական բնակչության կարիքները, որ արդյունաբերական առումով նահանգի ևս մնալը բացատրվում է պետության կենտրոնական շրջաններից հեռու ու կտրված լինելով և այլն [3]։ Այնուհետև նա նշում է այն գործարանների տեսակներն ու ընդհանուր թվերը, որոնք փակվել են 1886 թվականին [4]։

Առաջին կատարելագործված գործարանը Երևանում հիմնվում է 1887 թ. Ն. Լ. Թայիրյանի կողմից։ Այդ գործարանն ուներ գինու, կոնյակի և օղու արտադրություն։ Սկզբնական շրջանում նա ուներ կոնյակի թորման երկու սարքավորում։ 1899 թ. «Ն. Լ. Շուստով և որդիներ» ընկերությունը գնում է Թայիրյանի գործարանը [5]։ Թայիրյանի գործարանի հիմնադրումից մի քանի տարի անց՝ 1893 թ.

1 «Կոլոս» (լրագիր), 1912, № 18։

2 Տե՛ս О. Е. Туманян, Экономическое развитие Армении. ч. I, էջ 189—190։

3 «Обзор Эриванской губернии за 1886 год», էջ 16։

4 Նույն տեղը։

5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 10։

Երևանում հիմնվում են կոնյակի երկու այլ գործարաններ ևս՝ Աֆրիկյանի և Գյոզալյանի գործարանները, իսկ 1894 թ.՝ Սարաջյանի (Սարաջև) գործարանը։



«Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի գործարանը (ՀՍՍՌ պետական պատմական թանգարան)։

Նշված գործարաններում օգտագործվում էին զանազան սարքավորումներ՝ մեխանիկական թորիչ ապարատներ, պոմպեր, խցանահան մեքենաներ, մամլակներ։ Թորումը կատարվում էր կրակով, իսկ իբրև էներգիա օգտագործվում էին շոգին և էլեկտրականությունը, վերջինս միայն Շուստովի գործարանում, որը, ինչպես ասացինք, 1907 թվականից ուներ իր փոքրիկ հիդրոէլեկտրակայանը։ Բացի անմիջական հումքի՝ խաղողի վերամշակումից, կատարելագործված այդ գործարանները մեծ քանակությամբ կիսաֆաբրիկատներ (տնայնագործական եղանակով ստացված անմաքուր ու տհաճ համ ունեցող օղի) էին ստանում ոչ կատարելագործված օղու գործարաններից։ Վերջիններս՝ ակցիզային հարկի մասին 1887 թ. հունիսի 15-ին հրապարակված օրենքով, ազատ էին մի շարք սահմանափակումներից և կարող էին անարգել կերպով հումք մատակարարել մեքենայացված գործարաններին, որոնք, այդ կիսաֆաբրիկատը վերազտելով, ստանում էին գործարանային մաքուր սպիրտ ու օղի։ Մաքուր օղու պահանջը 90-ական թվականներին հսկայական չափով ավելացել էր։

Գինու-կոնյակի խոշոր գործարանները կենտրոնացրել էին մեծ գումարների հասնող կապիտալներ՝ հիմնական և շրջանառու։ Դրանցից միայն Շուստովի գործարանի կապիտալների մասին է մեզ հասել արխիվային համեմատաբար ամբողջական ու շատ թե քիչ վստահելի տվյալներ։ Ըստ քաղաքային ինքնավարության գնահատող հանձնաժողովի 1912 թվականի հունվարին կատարած գնահատումների, Շուստովի գործարանի հիմնական կապիտալի՝ նկուղների, բնակելի տների, թորող գործարանների, պահեստների, հանրակացարանների, տակառանոցի, ապարատների և այլ հարմարանքների տարեկան նկամուտը կազմում էր 40.200 ռուբլի[1], իսկ քանի որ նկամուտը հաշվում էին կապիտալի արժեքի 10 տոկոսի չափով, ապա Շուստովի գործարանի հիմնական կապիտալը 1912 թ. մոտավորապես կազմել է 402.000 ռուբլի։ Անդրկովկասի վիճակագրական վարչության տվյալներով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին երկրի կապիտալիստական ձեռնարկություններում հիմնական և շրջանառու կապիտալները կազմում էին՝ առաջինը ամբողջ կապիտալի մոտ 61,5 տոկոսը, իսկ երկրորդը՝ 38,5 տոկոսը։ Եթե այդ հարաբերությունն ընդունելու լինենք նաև Շուստովի գործարանի համար, ապա դուրս կգա, որ 1912 թ. նրա ամբողջ կապիտալը կազմում էր մոտավորապես 653.500 ռուբ.։

Մյուս գործարանների կապիտալների քանակը անհամեմատ ավելի փոքր էր։ Դրանց բոլորի կապիտալների քանակը միասին վերցրած Շուստովի գործարանի կապիտալներից կարող էին միայն մի փոքր ավելի լինել։

Նշված գործարանները արտադրում էին կոնյակ, գինիներ, սպիրտ, օղի, դոշար և այլ ապրանքներ։ Սակայն հիմնական արտադրանքները կազմում էին առաջին չորսը։

Կոնյակի արտադրությունը Երևանում սկսվում է 1890 թվականից, Թայիրյանի նորակառույց կոնյակի գործարանում, վերջինիս գինու գործարանը շարք մտնելուց (1887 թ.) մի քանի տարի անց։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1619, թ. 9 և 18—19։

Քաղաքի կոնյակի մյուս գործարանները շարք են մտնում 1893—1894 թթ. ընթացքում։ Ընդամենը հինգ տարվա ընթացքում կոնյակի արտադրությունը Երևանում (այդ ժամանակ ամբողջ Երևանյան նահանգի կոնյակի արդյունաբերությունը կենտրոնացած էր միայն Երևանում, իսկ մի փոքր ուշ կոնյակի գործարաններ են կառուցվում նաև Ղամարլուում և Աշտարակում, որոնք, սակայն, ունեին ցածր արտադրողականություն) ավելանում է ավելի քան 22 անգամ՝ 34.848 ասպիճանից հասնելով 767.996 ասպիճանի։ Ըստ առանձին գործարանների այդ թվականներին արտադրված կոնյակի քանակը հետևյալ պատկերն էր ներկայացնում [1],


Աղյուսակ 2

Գործարաններ	Արտադրանքի քանակը ասպիճաններով				
	1890 թ.	1891 թ.	1892 թ.	1893 թ.	1894 թ.
Ներսես Թայիրյանի գործարան	34 848	126.408	278.149	220 339	324.463
Կարապետ Աֆրիկյանի գործարան	—	—	—	115.749	84.811
Գևորգ Գյոզալյանի և Ենոք Մկրտչյանի գործարան	—	—	—	31.977	202 283
Դավիթ Սարաջյանի գործարան	—	—	—	—	156.439
Ընդամենը	34.848	126.408	278.149	368 065	767.998

Կոնյակի արտադրության ծավալը և որակը գնալով մեծանում և բարելավվում էր։ Այս բնագավառում էական փոփոխություններ են տեղի ունենում 1899 թվականից սկսած, երբ Թայիրյանի գործարանը անցնում է Շուստովին։ Վերջինս սկսում է ավելի լայն մասշտաբի գործունեություն։ Թայիրյանի նախկին գործարանը լայնացնելուց, հնարավորին չափով կատարելագործելուց հետո՝ Շուստովը 1907 թ. կառուցում է կոնյակի մի նոր, ավելի խոշոր ու մեքենայացված գործարան, մեկ օղեզտիչ գործարան և մի փոքրիկ հիդրոէլեկտրակայան Ջանգու (Հրազդան) գետի վրա։ «Շուստով և որդիներ» ընկերությունը գործարաններին կից ստեղծեց անհրաժեշտ օժանդակ բոլոր հարմարություններ՝ նկուղներ, պահեստներ, տակառի գործարան, սպասարկման կետեր, բնակելի շենքեր և այլն,

[1] «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. 6, Тифлис, 1896.

որոնք ամբողջացնում էին կոնյակի և մյուս խմիչքների արտադրության պրոցեսները։ Նրա կառուցած կոնյակի նոր գործարանը արտադրության հզորությամբ նախկինին գերազանցում էր մոտ 12 անգամ [1]։ Շուստովի ձեռնարկությունները՝ Աֆրիկյանի, Սարաջյանի և Գյոզալյանի գործարաններում՝ 1900 թվականին։ Այդ չորս գործարանների կոնյակի արտադրանքը




«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի գինի մղող «Ջնյց» տիպի պոմպ (ՀՍՍՌ պետական պատմական թանգարան)։

իանին արդեն կազմում էր 1.283.398 ասպիճան, այսինքն՝ 1894 թվականի նկատմամբ մեծացել էր ավելի քան 1,7 անգամ։ XX դարի սկզբներին դրանց վրա ավելացավ և մի նոր գործարան՝ Համբարձում Սողոմոնյանի գործարանը, որն իր արտադրությամբ զիջում էր միայն Շուստովի ու Սարաջյանի գործարաններին։ Այսպիսով, XX դարի սկզբներից Երևանում արդեն գոյություն ունեին

[1] Տե՛ս О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. 1, էջ 194: М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, էջ 428:

կոնյակի հինգ գործարաններ[1]։ Նույն ժամանակում դրանք բոլորը միասին տալիս էին ամբողջ Երևանյան նահանգում արտադրվող կոնյակի մեծագույն մասը, իսկ մնացած փոքր մասը արտադրում էին Ղամարլուի (Արտաշատ) ձեռնարկատերերի կազմակերպած «Արաքս» ու «Վատահութիւն ընկերութիւն» («На вере») ընկերությունների գործարաններն ու Աշտարակի կոնյակի գործարանը։ Մինչև 1914 թվականը նահանգում արտադրվող ամբողջ կոնյակի



«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի խցանակալ ձեռքի մեքենա (ՀՍՍՌ պետական պատմական թանգարան)։

մոտ 50 տոկոսը սովորաբար տալիս էր միայն «Շուստով և որդիներ» ընկերության Երևանի կոնյակի գործարանը։ Այսպես, 1913 թ. Երևանի նահանգում արտադրված 7.248.000 աստիճան[1] կոնյակի սպիրտի 3.262.000 աստիճանը տվել էր միայն Շուստովի գործարանը[2]։

Երևանի նահանգում՝ ավելի ճիշտ Երևան քաղաքում և Ղամարլուի ու Աշտարակի նշված փոքր գործարաններում 1910—1914 թթ. յուրաքանչյուր տարի արտադրվել է 6.070.000 աստիճան կոնյակի սպիրտ։ Ըստ առանձին տարիների կոնյակի սպիրտի արտադրությունն այդ թվականներին արտահայտված էր հետևյալ թվերով[3]։

Աղյուսակ 3

Թվականներ	Կոնյակի սպիրտի քանակը աստիճաններով
1910	4.167.000
1911	6.799.000
1912	5 390 000
1913	7.248 000
1914	6.820.000
Ընդամենը	30.434.000

Ինչպես տեսնում ենք, բացառությամբ 1912 թվականի, կոնյակի սպիրտի արտադրությունը միշտ ավելացել է, 1910 թ. նկատմամբ 1913—1914 թթ. ամենից ավելի քան 1,8 անգամ։ 1912 թ. կոնյակ համեմատաբար քիչ է արտադրվել խաղողի բերքի պակասության պատճառով։ Կոնյակի արտադրությունն իր առավելագույն մակարդակին է հասել 1913 թ., բայց դրանից քիչ է ետ մնացել և 1914 թ. արտադրությունը, թեպետև այդ տարին եղել է ուժեղ ցրտահարության և խաղողի բերքի մեծ մասը փչացել է։

Ըստ մեր ձեռքի տակ եղած արխիվային տվյալների, Երևան քաղաքի կոնյակի հինգ գործարանները 1914 թվականին կոնյակի սպիրտ են արտադրել հետևյալ քանակությամբ[4] (աղյուսակ 4)։

Այսպիսով 1914 թ. ամբողջ նահանգում արտադրված 6.820.000 աստիճան կոնյակի սպիրտի 4.026.588 աստիճանը տվել էին Երևանի կոնյակի նշված գործարանները։ Էլ ավելի մեծ թվով էր արտահայտված Երևանի կոնյակի գործարանների արտադրանքը 1913 թ. ցուցանիշներում։

1 ЦГИА Грузинской ССР, ф. 370, д. 1039, թ. 1—2։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 3։
2 Նույն տեղը, ֆ. 163, գ. 1, թ. 25—26։
3 Նույն տեղը, ֆ. 168, գ. 173, թ. 3։
4 Նույն տեղը, ֆ. 124, գ. 34, թ. 8—9։

Աղյուսակ 4

Գործարաններ	Արտադրված կոնյակի սպիրտը արտահայտված աստիճաններով	Ծանոթություն
«Ն. Լ. Շուստով և որդիներ» ընկ. գործարան	2 748.448	
Դ. Զ. Սարաջյանի գործարան	1.099.541	
Կարապետ Աֆրիկյանի գործարան	43.731	
Գյոզալյան եղբայրների գործարան	46 667	
Համբարձում Սողոմոնյանի գործարան	88 208	
Ընդամենը	4.026.588	


Կոնյակի պահանջը մեծ էր։ Արտադրանքը իրացվում էր մեծ արագությամբ և դյուրին։ Կոնյակի արտադրության ընդարձակման շնորհիվ Ղամարլուի շրջանում և այլ վայրերում մեծ արագությամբ ծավալվում էր և գինեգործությունը։ Տեղում պատրաստված այդ գինին, որ առաջ օգտագործվում էր հում սպիրտ ստանալու համար, այժմ ծառայում է իբրև հումք կոնյակի սպիրտի համար [1]։

Երևանի կոնյակը մեծ համբավ ուներ ռուսական և արտասահմանյան շուկաներում։ Նրա հաճելի համը, դուրեկան գույնը, բարձր սպիրտայնությունը, բարձրաճաշակ պիտակները, հարմարավետ շշերը, արտադրանքի բազմազանությունը, այդ բոլորը հուսալի ռեկլամներ էին հայկական կոնյակի համար։ Շուստովն իր ռեկլամներով հայկական կոնյակը դուրս բերեց համաշխարհային շուկա, որտեղ այն ձեռք բերեց մեծ հռչակ։

Օղու և սպիրտի արտադրությունը կոնյակի արտադրության նկատմամբ ուներ շատ առանձնահատկություններ։ Դրանց համար հումք էին ծառայում գինի պատրաստելու ժամանակ ստացված խաղողի թափթփուկները, գինու նստվածքները, իսկ որոշ դեպքերում նաև ինքը՝ գինին։ Եթե կոնյակի արտադրությունը սահմանափակվում էր գոյություն ունեցող 6—7 խոշոր ու մեքենայացված գործարաններով, ապա օղի կարող էին թթել տասնյակների հասնող տնայնագործական կամ մանուֆակտուրային տիպի մանր ձեռնարկություններում։ Վերջիններում արտադրված օղին, ինչպես ասվեց, ուներ անախորժ ու ավելորդ համեր և շուկայում համարվում էր

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 3։

անորակ։ Այդպիսի օղին սովորաբար վաճառվում էր մեքենայացված գործարաններին, որոնք այն օգտագործում էին իբրև հումք՝ մաքուր օղի և սպիրտ ստանալու համար։



«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի հայտնի զանգը (Երևանի պատմության թանգարան)։

Օղու և սպիրտի արտադրության բնագավառում խոշոր ու մեքենայացված առաջին ձեռնարկությունը Երևանում հիմնադրվում է 1885 թվականին՝ Թալիրյանի կողմից։ Այդ գործարանը, սակայն, վերջնականապես շահագործման է հանձնվում 1887 թ.։ Գործարանը իր գոյության առաջին երեք տարիներին՝ 1887—1889 թթ. արտադրում էր օղի, սպիրտ և գինիներ, 1890 թվականից սկսեց կոնյակ արտադրել նորակառույց կոնյակի գործարանը։ 1893—1894 թթ. Երևանում կառուցվում են ևս երեք խոշոր գործարաններ՝ Աֆրիկյանի, Գյոզալյանի և Սարաջյանի կողմից, որոնք, ինչպես տեսանք, արտադրում էին նաև կոնյակ։ XX դարի սկզբներին կառուցված Համբարձում Սողոմոնյանի գործարանը ևս կոնյակի հետ միասին արտադրում էր օղի ու սպիրտ։ Այսպիսով XX դարի սկզբներին Երևանում արդեն կար օղու և սպիրտի խոշոր ու մեքենայացված 5 գործարան։

Մյուս մանր գործարանները Երևան քաղաքում մեծ թիվ էին կազմում։ Այսպես, օրինակ, 1890 թվականին օղու մանր գործարանների թիվը 30 էր[1], իսկ 1912 թ.՝ 12[2]։ Առանց մանր գործարանների խոշոր գործարանները արտադրում էին այնքան օղի ու սպիրտ, ինչքան որ կոնյակ էին արտադրում։

Երևանի նահանգում 90-ական թվականների երկրորդ կեսից սկսած օղու և սպիրտի արտադրության մեջ խոշոր ու մեքենայացված գործարանների բաժինը անշեղորեն մեծանում էր, ընդհանուր արտադրության մեջ 1893 թ. ունեցած 5,1 տոկոսից 1912 թվականին հասնելով 60,3 տոկոսի։

Դրա աստիճանական փոփոխությունը տեղի է ունեցել հետևյալ հարաբերությամբ[3]։

Աղյուսակ 5

Թվականներ	Սպիրտի արտադրությունը (հազ. դեկալիտրով)	Այդ թվում խոշոր գործարաններում		Տեսակարար կշիռը արտադրության մեջ՝ տոկոսներով	Ցուրաքանչյուր գործարանի միջին հաշվով արտադրությունը (հազ. ասպիճան.)
		գործարանների թիվը	արտադրության քանակը (հազ. ասպիճան.)		
1893	8.547	3	418	5,1	137
1902	3.804	3	845	22,8	281,66
1904	9.215	8	3.226	35	403,3
1906	6.850	8	2.402	35,1	300
1908	10.060	13	5.156	37	400
1910	9.851	11	4.569	46	415,4
1912	10.488	16	6.337	60,3	422

Աղյուսակից պարզ կերպով երևում է, որ Երևանի նահանգում 1893—1912 թթ. ընթացքում սպիրտի արտադրության մեջ խոշոր գործարանների տեսակարար կշռի մեծացման հետ միասին ավելացել էր և դրանց թիվը՝ 3-ից (1893 թվականին) հասնելով մինչև 16-ի (1912 թվականին), ինչպես և արտադրողականությունը, միջին հաշվով յուրաքանչյուր գործարանի տարեկան արտադրությունը 137 հազար ասպիճանից (1893 թ.) հասնելով 422 հազար ասպիճանի (1912 թ.)։

Փաստերը ցույց են տալիս, որ Երևան քաղաքում եղած օղու խոշոր գործարանները, որոնք 90-ական թվականներին 4 էին, իսկ XX դարի սկզբներից՝ 5, ունեին ավելի բարձր արտադրողականություն։ Բավական է ասել, որ միայն Շուստովի ընկերության գործարանը 1913 թվականին արտադրել է 1.644 հազար ասպիճան սպիրտ և հում օղի[1]։ Քաղաքի հինգ խոշոր գործարանների սպիրտի ընդհանուր արտադրանքը հասնում էր մի քանի միլիոն ասպիճանի։ Այդ նույն 1913 թվականին կոնյակի և սպիրտի արտադրությունը Երևանի նահանգում հասնում էր նախասովետական ժամանակների իր առավելագույն բարձր կետին։ Այդ թվականին Երևանյան նահանգում արտադրվել էր 16.606 հազար ասպիճան սպիրտ և 7.248 հազար ասպիճան կոնյակ։ Այնպես որ Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին սպիրտի և կոնյակի արտադրությամբ Անդրկովկասում անմրցակից կերպով գրավում էր առաջին տեղը։ Այսպես, 1912 թ. ամբողջ Անդրկովկասում արտադրված 29.991 հազար ասպիճան սպիրտից 10.488 հազարը տվել էր Երևանի նահանգը, իսկ Անդրկովկասում արտադրված կոնյակի 7.747 հազար ասպիճանից Երևանի նահանգին բաժին էր ընկնում 5.390 հազար ասպիճան։ 1913 թ. տվյալները հօգուտ Երևանի նահանգի ավելի ցցուն են։ Այդ թվականին Անդրկովկասում արտադրված 43.586 հազար ասպիճան սպիրտից և 9.986 հազար ասպիճան կոնյակից Երևանի նահանգին բաժին էր ընկնում 16.606 հազար ասպիճան սպիրտ և 7.248 հազար ասպիճան կոնյակ[2]։ Այլ կերպ ասած, 1913 թ. Անդրկովկասում արտադրված սպիրտի 38,1 տոկոսը և կոնյակի 72,6 տոկոսը տալիս էր Երևանի նահանգը։

Արտադրվում էր երկու տեսակի սպիրտ՝ այսպես կոչված, հում սպիրտ և մաքուր կամ թորած սպիրտ (ректификованный спирт)։ Առաջին տեսակի արտադրությունն ավելի մասսայական էր ու մեծաքանակ։ Ըստ արխիվային տվյալների, Երևանի նահանգի գավառներում, բացառությամբ Նախիջևանի և Սուրմալուի գավառների, 1910—1914 թվականներին հում սպիրտի արտադրությունը արտահայտված էր հետևյալ թվերով. 1910 թ.՝ 5.800.000 ասպիճան,

1 ЦГИА Грузинской ССР, ф. 370, д. 459, թ. 38—39:


2 Նույն տեղը, գ. 1039, թ. 1—2։

3 Տվյալները վերցված են՝ 1893 թվականինը «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе»-ից, Тифлис, 1896, էջ 112, իսկ 1902—1912 թթ.՝ «Обзор отраслей промышленности в Закавказском крае»-ից, Тифлис, 1907, էջ 170—171, 1912, էջ 191 և 193։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 25—26։

2 Տե՛ս «Обзор отраслей промышленности в Закавказском крае», 1912, էջ 193 և 1914, էջ 216։

1911 թ.՝ 8.400.000, 1912 թ.՝ 5.100.000, 1913 թ.՝ 9.400.000, 1914 թ.՝ 4.000.000 ասդիճան [1]։



Սարաջյանի կոնյակի գործարանի արտաքին տեսքը (ՀՍՍՌ պետական պատմական թանգարան)։

Առանձնահատուկ նշանակություն ուներ թորած սպիրտի արտադրությունը։ Երևանի նահանգում եղած գոլիշ չորս գործարաններից երկուսը գտնվում էին Երևանում, վերջիններիս թվին էր պատկանում և Շուստովի գոլիշ գործարանը, որն ամենախոշորն ու ամենակատարելագործվածն էր ամբողջ Անդրկովկասում։ Թորած կամ դուսած սպիրտը օգտագործվում էր թունդ և քաղցր գինիներին ավելի բարձր սպիրտայնություն տալու համար՝ և՛ տեղում, և՛ Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում ու Ռուսաստանում, դեպի ուր առաքվում էին այդ գինիները [2]։ Թորած սպիրտի մյուս փոքր մասը տեղում օգտագործվում էր իբրև օղի։ Գոլիշ գործարանների արտադրողականությունը դրամով արտահայտված 90-ական թվականներին հասնում էր ավելի քան 84 հազար ռուբլու [1], հետագայում, մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակն ընկած ժամանակամիջոցում դրանց արտադրողականությունը մեծանում է մի քանի անգամ։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 3։

2 Նույն տեղը։

Երևանի նահանգի և հատկապես նրա կենտրոն Երևան քաղաքի տնտեսության մեջ ամենակարևոր տեղերից մեկը գրավում էր գինու արտադրությունը։ Գինու արտադրությունը Հայաստանում հնադույն պատմություն ունի, սակայն նրա գործարանային արտադրությունը սկսվում է միայն 1887 թվականից, երբ կառուցվում է Թամիրյանի գինու-օղու գործարանը։ Երևանի նահանգի գինու մեծարժեք հատկությունները՝ բարձր շաքարայնությունն ու հաճելի համը չէր կարող իր վրա չգրավել գինի արտադրող մեծ ձեռնարկատերերի ուշադրությունը։ Այդ պատճառով էլ Երևան քաղաքում գոյություն ունեցող Շուստովի, Աֆրիկյանի և մյուսների գործարանները առանձնահատուկ ուշադրություն են դարձնում քաղցր և թունդ որակյալ գինիների՝ պորտվեյնի, մադերայի, խերեսի, մուսկաթի և այլ գինիների արտադրության վրա [2]։ Դրանց արտադրությունն ուներ այնպիսի պրոցեսներ, որոնք կարող էին կատարվել միայն կատարելագործված գործարաններում։ Այդ գինիները արտադրվում էին գինու նախնական հումքը վերամշակելով և թորած սպիրտով դրանց սպիրտայնությունը բարձրացնելու միջոցով։

Սակայն գինու արտադրությունը չէր սահմանափակվում միայն քաղցր ու թունդ գինիների արտադրությամբ։ Երևանի նահանգում և նրա կենտրոն Երևան քաղաքում արտադրվում էին ավելի քան երկու տասնյակ տեսակի գինիներ՝ «Մադերա», «Պորտվեյն», «Մուսկաթ», «Խերես», «Կագոր», «Երևանի սպիտակ», «Սպիտակ սեղանի», «Փարաքար», «Դավալու կարմիր», «Դավալու սպիտակ», «№ 35 սեղանի», «Դալմա», «Օշական», «Մսխալի», «Կախեթի» և այլն [3]։

90-ական թվականներից սկսած գինեգործությամբ հետաքրքրվում են ոչ միայն առանձին ձեռնարկություններ, այլ նաև գյուղական տեղական օրգանները։ Այդ թվականներին Երևանի նահանգապետ Շալիկովը Կովկասյան կայսերական գյուղատնտեսական ընկերությանը խնդրում է Երևանում գինեգործական գպրոց բաց անելու մասին, որպեսզի դրանով նպաստի գինեգործության զարգացմանը նահանգում և նրա կենտրոնում։

1895—1900 թվականների ընթացքում Երևանի նահանգում գի-

1 «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, էջ 185։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 2։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 67/199, գ. 182, թ. 6—7, ֆ. 168, գ. 173, թ. 14

նու արտադրությունը կրկնապատկվում է։ Հետագա տարիներին խաղողի բերքի բարձրացման հետ զուգընթաց ավելանում է և գինու արտադրությունը։ Ամբողջ Երևանյան նահանգում եթե 1895 թվականին արտադրվել է 588.000 դույլ գինի, ապա 1900 թ. արտադրվել է 1.180.000 դույլ[1]։ 1910—1914 թթ. յուրաքանչյուր տարի Երևանյան նահանգում, առանց Նախիջևանի ու Սուրմալուի գավառների և Շարուր-Դարալագյազի գավառի մի մասի, արտադրվել է 400.000—800.000 դույլ գինի[2]։ Դրա ավելի քան 30 տոկոսը արտադրվում էր միայն Երևանում։ Ինչպես կոնյակի ու սպիրտի, այնպես էլ գինու արտադրության մեջ Երևանում առաջին տեղը գրավում էր «Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի-սպիրտի գործարանը։ 1913 թ. նրա գինու արտադրանքը հասնում էր 200.000 դույլի[3], որի մեծագույն մասը ընտիր՝ ցաղցր և թունդ գինիներ էին։

90-ական թվականներից սկսած, երբ Երևան քաղաքում սկսված էր կոնյակի, օղու և գինու գործարանային արտադրություն, նրա խմիչքները վաճառքի էին հանվում Անդրկովկասի ու Ռուսաստանի շատ քաղաքներում, իսկ կոնյակը արտահանվում էր նաև եվրոպական երկրներ։ Նահանգի սահմաններից դուրս էր ուղարկվում այստեղ արտադրված կոնյակի, օղու (սպիրտի) և գինիների 80—82 տոկոսը[4]։

Խմիչքի գործարանները ննջակա էին акцիզային հարկադրրման։ Երևանի խոշոր գործարաններից յուրաքանչյուրում կար акцիզային օկրուգի հատուկ հսկիչ, որը հաշվի առնելով արտադրանքի քանակը՝ նշանակում էր акцիզային համապատասխան հարկ։ Խոշոր ու կատարելագործված գործարանների նկատմամբ մանր և ոչ կատարելագործվածները՝ այսպես կոչված, «այգեպիրական» գործարանները акцիզային հարկի առումով 1887 թ. օրենքով ունեին մի շարք արտոնություններ։

Ոգելից խմիչքներից բացի, խաղողի վերամշակումից ստանում էին նաև մի քանի այլ մթերքներ, որոնց մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ուներ դոշաբը։ 1913 թ. Շուստովի ընկերության Երևանի գործարանն արտադրել է 7050 դույլ դոշաբ[5]։ Մոտ այդքան դոշաբ

1 «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. 7, էջ 78։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 14։

3 Նույն տեղը, ֆ. 163, գ. 1, թ. 25—26։

4 Նույն տեղը, ֆ. 168, գ. 173, թ. 3 և 14։

5 Նույն տեղը, ֆ. 163, գ. 1, թ. 25—26։

էլ արտադրում էին մյուս խոշոր գործարանները բոլորը միասին վերցրած։

Նախասովետական շրջանի Երևանի խոշորագույն գործարանի՝ «Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի-օղու գործարանի համախառն արտադրանքը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին կազմում էր 635.549 ռուբլի[1]։ Այդ տարում նա արտադրել է 3.262.000 աստիճան կոնյակի սպիրտ, 1.292.000 աստիճան սպիրտ, 352.000 աստիճան հում օղի, 100.000 դույլ գինի և 7.050 դույլ դոշաբ։ Գործարանի բանվորների թիվը 80 էր[2]։

Այդպիսին էր ընդհանուր գծերով Երևանի 1880—1914 թթ. արդյունաբերության կարևոր ճյուղի՝ խմիչքների արտադրության բնույթն ու ծավալը։

Արդյունաբերական մյուս բոլոր ձեռնարկությունները՝ մեխանիկական, կաշվի, բրնձազտիչ, բամբակազտիչ, դարեջրի և հանքային ջրի գործարանները, ապարաններն ու ձիթհանները տնայնագործական տիպի կամ մանր մանուֆակտուրային ձեռնարկություններ էին, որոնցում արտադրում էին տեղական կարիքների համար զանազան ապրանքներ և, չնչին բացառությամբ, մշակում էին տեղական էժան հումքը։ Նշված գործարաններից մի քանիսը՝ ապարանների մեծ մասը, մեխանիկական գործարանը, դարեջրի ու բամբակազտիչ և այլ գործարաններ նախորդ ժամանակաշրջանում գոյություն չունեին, իսկ մյուս մասը՝ կաշվի, բրնձազտիչ գործարանները և այլն, որոնք գոյություն ունեին նախորդ շրջանից՝ 1879—1914 թթ. ընթացքում կրում են զգալի փոփոխություններ։

Այժմ մի քանի խոսք դրանցից մի քանիսի մասին։

Առաջին հերթին ուշադրության արժանի է Տեր-Ավետիքյան եղբայրների թուջակազապարման-մեխանիկական գործարանը։ Այս գործարանը, որ սովետական ժամանակաշրջանում հիմնովին վերափոխվեց և դարձվեց ժամանակակից մեքենաշինական գործարան (այժմյան Ֆ. Ձերժինսկու անվան գործարանը) որպես երվանդ Տեր-Ավետիքյանին պատկանող մի արհեստանոց գոյություն ունի 1891 թվականից[3]։ Արհեստանոցը սպասարկում էր քաղաքի գինեգործական գործարաններին և բավարարում քաղաքացիների՝ մետաղյա իրերի պահանջները։ Գինու-կոնյակի-օղու արտադրության ընդլայնման հետ միասին պահանջ է առաջանում մեխանիկական

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 25—26։

2 Նույն տեղը։

3 «Սովետական Հայաստան» (լրագիր), Երևան, 1956, հունվարի 14։

մասնագիտացված գործարանի. Ռուսաստանում դիներգործական սարքեր չէին արտադրվում, որպեսզի այնտեղից բերվեին։ Ահա այդ բազայի վրա Տեր-Ավետիքյան եղբայրները ընդարձակում և կատարելագործում են իրենց արհեստանոցը։ 1905 թ. աշնանից այն արդեն կոչվում է Տեր-Ավետիքյան եղբայրների թուջակազապարման-մեխանիկական գործարան[1]։ Սակայն գրա հիմնադրման իսկական տարեթիվը պետք է համարել ոչ թե 1905, այլ 1907 թվականը, երբ գործարանը ռեկլամում էր իր գոյության ու զանազան իրեր պատրաստելու պատրաստակամության մասին[2]։ Գործարանն ուներ կազապարման (литейный), մեքենաշինական, կաթսայագործական (кательный) և դարբնա-փականագործական ցեխեր[3]։ Տարբեր բնույթի այդ ցեխերի գոյությունը անառարկելիորեն ցույց է տալիս, որ Ավետիքյան եղբայրների գործարանում աշխատում էին տարբեր մասնագետ-արհեստավորներ, որ այնտեղ գոյություն ուներ աշխատանքի խիստ բաժանում, որը հատուկ է մանուֆակտուրային և ավելի բարձր կարգի ձեռնարկություններին։ Աշխատանքի բաժանման խորությունը ավելի ցցուն է դառնում, երբ ծանոթանում ենք գործարանի թողարկած ապրանքներին։ Ըստ պաշտոնական հայտարարության, գործարանը պղնձից և թուջից կազապարում էր մեքենայի մասեր, առամնավոր անիվներ, սարքեր, ոլորապտույտ ու ուղիղ աստիճաններ, ցանկապատեր, խաչեր, պատրաստում էր շոգեշարժ աղացներ և ջրաղացներ, պոմպեր, զանազան մեխանիզմներ, խաղողաճզմիչ և բամբակաճզմիչ մամլակներ, շոգեկաթսաներ, օդի թորող հարմարանքներ, ջրամբարներ, երկաթյա տակառներ, գրասմասերի համար մահճակալներ և այլն, և այլն[4]։ Գործարանի արտադրության ծավալի մասին մինչև 1913 թվականը տվյալներ չեն պահպանվել։ 1913 թ. գործարանն ուներ 50 բանվոր[5], իսկ համախառն արտադրանքը կազմում էր 50.000 ռուբլի[6]։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 9—10։


2 Գործարանի հիմնադրման և նրա կողմից զանազան ապրանքներ պատրաստելու պատվերներ ընդունելու մասին առաջին հայտարարությունը լույս է տեսել 1907 թ. «Эриванские губернские ведомости» թերթիկում, № 1։

3 Տե՛ս նույն տեղը։

4 Նույն տեղը։

5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 9—10։ Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ մի գործում (ֆ. 415, գ. 113, թ. 5) եղած տվյալներով Ավետիքյան եղբայրների գործարանը 1912 թ. ունեցել է ընդամենը 11 բանվոր։

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 9—10։



Երկաթե սալ արտադրված Տեր-Ավետիքյան եղբայրների գործարանում (Երևանի պատմության թանգարան)։

Ավետիքյանների գործարանից բացի քաղաքում եղել է և մի ուրիշ փոքր ձեռնարկություն, որը նույնպես կոչվել է մեխանիկական գործարան, սակայն նա ըստ էության հասարակ արհեստանոց էր։ Ըստ տվյալների, վերջինս 1912 թ. ունեցել է ընդամենը հինգ բանվոր[1]։

1801—1879 թթ. պատմությունն ուսումնասիրելիս, մենք տեսանք, որ Երևանում այդ ժամանակներում գոյություն ունեին կաշվի տնայնագործական տիպի 25—29 մանր ձեռնարկություններ, որոնց տարեկան արտադրանքի քանակը 60-ական թվականներին հասնում էր ընդամենը 11.200 ռուբլու[2]։ Հետագայում, 90-ական թվականներից, կաշվի վերամշակման քաղաքի այդ փոքրիկ ձեռնարկությունները աստիճանաբար կլանվում են հենց նույն տիպի մի քանի

1 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, թ. 5։

2 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879), էջ 433։

ձեռնարկությունների կողմից, որոնք աստիճանաբար դառնում են համեմատաբար խոշոր, բայց ձեռքի աշխատանքի վրա հիմնված ձեռնարկություններ։ Վերջիններում աշխատանքի մասնագիտական բաժանման շնորհիվ արտադրողականությունը առաջինների նկատմամբ բավական բարձր էր։ Դրանք մանուֆակտուրային ոչ մեծ ձեռնարկություններ էին։ XIX դարի վերջերից և XX դարի սկզբներից Երևանում հիշատակվում են այդպիսի երկու գործարաններ, որոնցից մեկը պատկանում էր ոմն Գաբրիելյանին, իսկ մյուսը՝ Սարգսյանին [1]։ Մեզ հետաքրքրող ժամանակներում դրանց մեծության, բնույթի և արտադրանքի չափի մասին չկան համապատասխան տվյալներ։ Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ մի գործից հայտնի է միայն, որ 1912 թ. Երևանում եղել են կաշվի 20 ձեռնարկություններ, որոնցից վերը նշված երկուսը ունեցել են 12-ական բանվոր, 7-ը՝ 6-ական բանվոր, իսկ մյուս 11-ը՝ 5-ական բանվոր [2]։ Սակայն այդ բացը մասնակիորեն վերանում է Սովետական Հայաստանի վերականգնման շրջանի վերջերին վերաբերող համեմատաբար ստույգ տեղեկությունների առկայությամբ։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո մյուս ձեռնարկությունների հետ միասին պետականացվեցին նաև Գաբրիելյանի (1921 թ.) և Սարգսյանի (1920 թ.) կաշվի գործարանները, դրանցից առաջինը վերաապրաքավորվելով կոչվեց Կաշվի № 1 գործարան, իսկ երկրորդը՝ Կաշվի № 2 գործարան։ Կաշվի № 1 գործարան 1923/24 թթ. ունեցել է 80 բանվոր, իսկ համախառն արտադրանքը կազմել է 183.163 ռուբլի։ Այդ նույն թվականին գործարանը վերամշակել է 53.872 հատ մանր և 1305/1308 հատ յուֆտ կաշի։ Երկրորդ գործարանը առաջինից ավելի փոքր էր։ 1923/24 թթ. նրա բանվորների թիվը 25 էր, համախառն արտադրանքը՝ 150.448 ռուբլի, իսկ վերամշակել էր 4536 հատ խոշոր և 491 հատ յուֆտ կաշի [3]։

Արխիվային նյութերից երևում է, որ XX դարի սկզբներին Երևանում փորձեր են կատարվել մի նոր, հավանաբար ավելի խոշոր ու կատարելագործված գործարան կառուցելու։ Ապագա գործարանատերերը՝ Ազարյանն ու Նավասարդյանը 1904 թ. քաղաքային վարչությանն են ներկայացնում Ջանգուլի ափին կառուցվելիք իրենց այդ նոր գործարանի նախագիծը՝ բացատրական տեքստի հետ միասին [4], սակայն, ըստ երևույթին, նրանց նախագիծը չի իրագործվել։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 39—40, 41—42, 65—66, 67—68։
2 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 5։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 39—40, 41—42, 65—66, 67—68։
4 Տե՛ս ՀԿՊ կկ պետարխիվ, ֆ. 33, ցուցակ 14, գ. 1252, թ. 1—44։

XIX դարի 60-ական թվականներից Երևանի նահանգը աստիճանաբար դառնում է Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերությանը բամբակի հումք մատակարարող կարևոր բազաներից մեկը։ Բամբակի մշակությունը նահանգում հատկապես լայն չափեր է ընդունում 80-ական թվականներից։ Բամբակը հեռավոր վայրեր ուղարկելու համար պահանջվում էր այն մաքրել և կապել հատուկ ձևով։ Այդ հողի վրա Երևանի նահանգում աստիճանաբար առաջանում են բամբակազտիչ շատ ձեռնարկություններ։ XX դարի սկզբներին դրանց թիվը հասնում է մի քանի հարյուրի։ Այդ գործարանների մի մասն աշխատում էր կերոսինի շարժիչով, մի մասը՝ շոգիով, մի մասը՝ ջրի էներգիայով, իսկ մնացած մեծ մասը՝ ձիու ուժով։ Դրանց արտադրողականությունը նույնպես տարբեր էր։ Բամբակազտիչ գործարանների 20 տոկոսը յուրաքանչյուրը օրական կարող էր մաքրել 500 փութ և ավելի բամբակ, իսկ մնացած 80 տոկոսը՝ 100—200 փութ։

Նահանգի ամենամեծ բամբակազտիչ գործարանը գտնվում էր նրա կենտրոն Երևանում, ուր հավաքվում էր հարևան ու հեռավոր շրջաններ ուղարկվող բամբակի մեծագույն մասը։ Այդ գործարանը օրական կարող էր մաքրել ավելի քան 1000 փութ բամբակ։ Դա հիմնադրել էր թուրքահայ մի վաճառական, ոմն Սեյլան-օղլի [1], բայց հետագայում ենթարկվել էր զգալի փոփոխությունների։ Այդ նույն վաճառականը առաջիններից մեկն էր, որ նպաստեց Երևանի նահանգում ամերիկյան տեսակի բամբակենու տարածմանը [2]։ Ըստ երևույթին, այդ գործարանը գտնվում էր ոչ թե բուն քաղաքում, այլ նրա ծայրամասում, և դրանով պետք է բացատրել այն, որ 1912 թ. վերաբերող Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ մի գործում, որտեղ թվարկված են Երևան քաղաքի բոլոր մեծ ու փոքր գործարանները, բամբակազտիչ գործարանի գոյության մասին ոչինչ չի ասվում [3]։ Քաղաքի ծայրամասում կային բամբակազտիչ և այլ, ավելի փոքր ձեռնարկություններ։

Բամբակազտիչ գործարանները ունեին աշխատանքի երկու հիմնական պրոցեսներ։ Դրանք մաքրում էին բամբակը և ապա մաքրած արտադրանքը հատուկ մամլակներով ճնշում էին ու պատրաստում միաչափ ծանրություն ունեցող հակեր, որոնք հարմար էին տեղափոխման համար։

1 Հ. Ս. Ֆիրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 709։
2 Նույն տեղը։
3 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 5։

Արխիվային նյութերից երևում է, որ Երևանի հայտնի վաճառականներ ու ձեռնարկատերեր Ս. և Տ. Աֆրիկյանները 1911 թ. դիմել են Երևանի նահանգապետին բամբակամաքրող գործարան կառուցելու թույլտվություն ստանալու համար։ Երևանի նահանգապետը «համապատասխան վճիռ կայացնելու համար հատուկ գրությամբ պահանջում է դումայի կարծիքը, իսկ վերջինս տալիս է իր համաձայնությունը՝ պայմանով, որ ձեռնարկատերերը պահպանեն կառուցվելիք գործարանի շրջակայքում ապրող բնակչության առողջապահական, ինչպես և հակահրդեհային կանոնները։ Ձեռնարկատերերի կողմից ներկայացված էին գործարանի և նրա ներքին սարքավորումների նախագծերը [1]։

Բամբակը խաղողից հետո տեղական այն երկրորդ հումքն էր, որ էր վրա սևեռեց ռուսական, ինչպես նաև օտարերկրյա վաճառական-կապիտալիստների ուշադրությունը։ Առևտրի մասին խոսելիս կտեսնենք, որ տեղացի վաճառականների հետ միասին Երևանի բամբակի տեսակավորման, մաքրման, հակեր կապելու և զանազան շուկաներում վաճառելու համար 80—90-ական թվականներից Երևան քաղաքում իրենց գործունեությունն են ծավալում օտարերկրյա վաճառականները, որոնք բամբակի գնման և տեսակավորման գործի մեջ Երևանում առաջին անգամ կիրառում են մեքենաներ ու զանազան սարքեր։ Դրանք Երևանում ունեին բամբակաղտիշմամլող մի քանի համեմատաբար խոշոր և կատարելագործված ձեռնարկություններ [2]։

80—90-ական թվականներին Երևանում կային 6—7 բրնձի դինգեր, կամ բրնձաղտիշ գործարաններ, ինչպես ընդունված էր կոչել այն ժամանակներում։ XX դարի առաջին տասնամյակում քաղաքում արդեն հիշատակվում են այդպիսի 10—11 գործարաններ [3], որոնք բոլորը միասին ունեցել են 50 բանվոր։ Դրանց մեջ համեմատաբար խոշոր և կատարելագործված էին երկուսը, որոնցից մեկը պատկանում էր Ավետյանին, իսկ մյուսը՝ Հ. Ն. Աթաբեգյանին։ Ավետյանի բրնձի մաքրման գործարանը կամ բրնձամաքրիչ ջրաղացը (դինգը) հիմնվել էր 1892 թ.։ 1913 թ. գործարանն ուներ 10 բանվոր, այդքան էր նրա բանվորների թիվը նաև հետագա տարիներում։ Գործարանն ամբողջովին աշխատում էր պատվիրատուների չալթուկի բաղայի վրա։ 1913 թ. նա արտադրել է 1311,5 տոննա մաքուր բրինձ։ Այդ թվականին նրա համախառն արտադրանքը

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 94, գ. 11206, թ. 11։

2 Տե՛ս «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1896, № 3—4, էջ 443—451։

3 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 5։

կազմել է 192.000 ռուբլի [1]։ Գործարանն աշխատում էր ջրի էներգիայով։ Հ. Ն. Աթաբեգյանի գործարանն ավելի կատարելագործված էր։ Այդ գործարանը շարք էր մտել XX դարի սկզբներին և աշխատում էր շոգու ուժով [2], այդ պատճառով էլ գտնվում էր ոչ թե գետափին, այլ քաղաքի կենտրոնում, այժմյան 26 կոմիսարների անվան կուլտուրայի ու հանգստի պարկի մոտ։ Տներում վաճառելու համար գործարանը փքանոց տոպրակներով բաց էր թողնում մեծ քանակությամբ բրինձ [3]։

Իրենց բնույթով դինգերին նման էին ալրաղացները։ Երևանի հարևանում կային բազմաթիվ ջրաղացներ, որոնք իրենց կառուցվածքով շատ քիչ էին իրարից տարբերվում։ 80-ական թվականների սկզբներին Երևանում կար 7 ջրաղաց [4], իսկ 1912 թվականին հիշատակվում է 8 ալրաղաց [5], որոնցից մեկը պատկանում էր Կ. Գ. Սիլչենկոյին։ Վերջինս էլեկտրաաղաց էր, ուներ օժանդակ հարմարություններ, հացահատիկի և ալյուրի պահպանման երկաթյա ամբարներ [6]։

Երևանի սննդի արդյունաբերության կարևոր օբյեկտներից մեկը քնջութի ձեթհանն էր։ Այս «գործարանը», որ գտնվում էր քաղաքի կենտրոնում՝ Դայիրման փողոցի (այժմ՝ Պարոնյան) վրա, շարք էր մտել 1911 թ. հունվարի մեկից և պատկանում էր Ս. Բ. Այվազյանին ու Տ. Ն. Սարգսյանին։ Ըստ հայտարարության գործարանը ընտիր ձեթից ու քուսպից բացի արտադրում էր նաև բոված քնջութ։ Ձեթը վաճառվել է և՛ մեծ ամաններով, և՛ 1/4, 1/2 ու 1 ֆունտանոց շշերով։ Ձեթի փութը վաճառվել է 11 ռ., ֆունտը 30 կ., իսկ շշերով՝ 1/4 ֆունտ՝ 10 կ., 1/2 ֆ.՝ 20 կ., 1 ֆ.՝ 38 կ., բոված քնջութի ֆունտը՝ 20 կ., իսկ քուսպի փութը՝ 60 կ. [7]։ Գործարանը աշխատել է լծկան գոմեշներով։ 1912 թ. գործարանն ունեցել է 10 բանվոր [8]։ Այվազյանի և Սարգսյանի գործարանը արխիվային նյութերում կոչվում է «կուլտուրական ձեթհան» [9]։

Երևանում 1881 թվականից հիշատակվում է գարեջրի երկու

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 23—24։

2 «Կռան» (լրագիր), 1911, № 6։

3 Նույն տեղը։

4 С. Зелинский. Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племени Кавказа», вып. 1, էջ 36)։

5 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 5։


6 «Эриванские объявления», 1913, № 32։

7 Նույն տեղը, 1911, № 6։

8 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 5։

9 ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33 ցուցակ 14, գ. 1282, թ. 1—44։

գործարանի գոյության մասին [1], բայց դրանցից գործել է միայն մեկը։ Ուրեմն գարեջրի գործարաններն էլ էին պատկանում այն ձեռնարկությունների թվին, որոնք նորություն էին քաղաքի տնտեսական կյանքում՝ նախորդ շրջանում դրանք չկային։ Շուտով ընդմիջումներով այդ մասը ձեռնարկությունների վրա ավելանում է ևս մեկը՝ Ավետյանի գարեջրի գործարանը, և քաղաքի գարեջրի գործարանների թիվը 1890-ական թվականներին հասնում է 3-ի [2], բայց դրանցից գարձյալ գործում էր միայն մեկը, այս անգամ արդեն Ավետյանի գործարանը։ Այդ պատճառով էլ XX դարի սկզբներից քաղաքում արդեն հիշատակվում է ոչ թե 3, այլ մեկ գործարան՝ Ավետյանի գործարանը, որը անխափան արտադրանք էր տալիս 1892 թվականից սկսած [3]։ 1913 թ. գործարանն ուներ ընդամենը 8



«Եղիազարյան և ընկ.» մրգի պահածոների գործարանը (ՀՍՍՌ պետական պատմական թանգարան)։

բանվոր, արտադրել է 12.000 դույլ գարեջուր, իսկ տարեկան համախառն արտադրանքը կազմել է 14.500 ռուբլի [4]։ Դրա արտադրանքը մի քանի անգամ շահել է մրցանակ և արժանացել մեդալների։

1 Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 370, д. 148, թ. 106։
2 Տե՛ս նույն տեղը, д. 459, թ. 38—39։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 29—30։
4 Նույն տեղը։

XIX դարի 90-ական թվականներից քաղաքում երևան է գալիս Խաչիկ Գիլանյանցի արհեստական հանքային ջրերի և օշարակի առաջին ձեռնարկությունը՝ «գործարանը», որը սկսում է արտադրանք տալ 1892 թվականից։ Ըստ հայտարարության «գործարանը», որ կոչվում էր «օրինակելի», թողարկում էր զալյբուրգյան, կարլսբադի (Կարլովի-Վարի), Վիշիի և արհեստական հանքային այլ ջրեր, զանազան մրգաջրեր, օշարակ [1]։ Երկրորդ գործարանը, որ գոյություն ուներ XX դարի սկզբներից, պատկանում է Սարգիս Տեր-Մարտիրոսյանին։ Ի տարբերություն Գիլանյանցի գործարանի, որը թողարկում էր նաև հանքային-բուժիչ ջրեր, Տեր-Մարտիրոսյանի գործարանը, ինչպես պարզ կերպով երևում է նրա հայտարարություններից, թողարկում էր միայն մրգաջրեր և օշարակ [2]։ XX դարի առաջին տասնամյակի վերջերին և երկրորդի սկզբներին քաղաքում գոյություն ուներ այդ կարգի և երրորդ «գործարանը»։ Իրականում դրանք շատ մանր ձեռնարկություններ էին։ Յուրաքանչյուրն ուներ մի քանի բանվոր և արտադրության շատ սահմանափակ ծավալ։ Ըստ արխիվային նյութերի, 1912 թ. Երևանի նշված երեք գործարաններից յուրաքանչյուրն ունեցել է ընդամենը 4 բանվոր, երեքը միասին՝ 12 բանվոր [3]։

Արդյունաբերական մշակման համար Երևան քաղաքը մեծ քանակությամբ միրգ ուներ, որի մի մասը ստացվում էր քաղաքի այգիներից, իսկ մյուս մեծ մասը քաղաքի շուկաս էր բերվում շրջակայքի մրգաշատ վայրերից։ Սկզբնական շրջանում՝ 1894 թ. քաղաքում հիմնադրվում է մի ձեռնարկություն, որը զբաղվում էր մրգերի չորացմամբ, զանազան չրեր և չամիչ պատրաստելով։ Այդ ձեռնարկությունը, որ սովորաբար կոչվել է միրգ չորացնող գործարան, աշխատել է ընդմիջումներով։ Հավանաբար նա գործել է երկու կամ երեք տարի, այն էլ միայն մրգերի հասունացման շրջանում [4]։ Մրգի քանկության և, մինչև երկաթուղու կառուցումը, տեղափոխման մեծ դժվարությունները հնարավորություն չէին ընձեռնում այդ տիպի մշտական և մեծածավալ արտադրություն կազմակերպելու։ Դրությունը փոխվում է XX դարի սկզբներից, երբ Երևանը երկաթուղով կապվում է Թիֆլիսի ու Ռուսաստանի քաղաքների հետ, երբ այգեգործության զարգացման հետևանքով ամռանն ու աշնանը քաղաքի շուկա էին բերվում ավելի մեծ քանակությամբ զանազան

1 Տե՛ս «Эриванские объявления», 1912, №№ 31, 93 և այլուր։
2 Նույն տեղը, 1903, № 19։
3 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, թ. 5։
4 Տե՛ս «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, էջ 185—186։

մրգեր։ Այդպիսի պայմաններում միանգամայն տրամաբանական է, որ մրգի գործարանային մշակումը պետք է դառնար և իրոք դարձավ ուշադրության առարկա։ Այդպիսի նպաստավոր պայմաններում էսանյանը 1911 թվականին Երևանում հիմնում է մրգի պահածոյի մի գործարան, որը պահածոներից բացի արտադրում էր և այլ մթերքներ։ Ըստ արխիվային տվյալների, գործարանը 1913 թ. ուներ 60 բանվոր (մեծ մասը սեզոնային)։ Այդ թվականին գործարանը



Դիպլոմ տրված Գ. Ահարոնյանի մրգի պահածոների գործարանին 1905 թվականի Փարիզի ցուցահանդեսից (Երևանի պատմության թանգարան)։

թողարկել է 213,1 տոննա մրգի պահածոներ, 196,7 տոննա ծիրանի բանդակ (пюре), *10.000 բանկա թթու դրած վարունգ*[1]։ *Դրանցից բացի գործարանն արտադրում էր նաև թիթեղյա բանկաներ, տոմատի մածուկ և այլն։ Գործարանի համախառն արտադրանքը 1913 թ. կազմել է 99.000 ռուբլի*[2]։

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, գ. 1, թ. 35—36։*

2 *Նույն տեղը։*

Սակայն էսանյանի մրգի պահածոների գործարանը քաղաքի այդ տիպի միակ ձեռնարկությունը չէր։ XX դարի սկզբից այստեղ մրգի պահածոների մեկական փոքրիկ ձեռնարկություններ ունեին «Եղիազարյան և ընկ.» առևտրական տունը և Գ. Ահարոնյանը։ Վերջինս իր արտադրած բարձրորակ դեղձի կոմպոտների համար 1905 թ. Փարիզի ցուցահանդեսից ստացել էր հատուկ դիպլոմ։

Մեզ հետաքրքրող ժամանակներում Երևանում հիշատակվում է Գևորգյան եղբայրների ծխախոտի «ֆաբրիկան», որը հիմնադրվել է 80-ական թվականների սկզբներին[1], կաուչուկային դրոշմակների «ֆաբրիկան», որի մասին խոսվում է 90-ական թվականների վերջերից[2], Պ. Մ. Նախշիքեարյանցի «առաջնակարգ փուռը՝ հիմնված 1912 թ. մարտին, որը հացից բացի պատրաստում էր նաև զանազան խմորեղեններ»[3], և այլ մանր-մունր ձեռնարկություններ։ Դրանց մասին չեն պահպանվել անհրաժեշտ տեղեկություններ։ Մեզ հայտնի չէ, թե դրանք արտադրության ինչպիսի բնույթ ու ծավալ են ունեցել, ինչպիսին է եղել դրանց կատարելագործվածության աստիճանը, որքան է եղել բանվորների թիվը և այլն։ Սակայն անկասկած է, որ դրանք բոլորը, առանց բացառության, փոքր ձեռնարկություններ էին։ Հենց այդ է պատճառը, որ առանձին ուշադրության չէին արժանացել պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանների կողմից։

Մյուս ձեռնարկություններից ուշադրության արժանի են աղյուսի, գաջի և կրի մի քանի «գործարանները»։ 1912 թ. հիշատակվում են կրի երեք «գործարաններ», որոնք այդ նույն թվականին ունեցել են ընդամենը 15 բանվոր[4]։ Դրանց մեծության, բնույթի և արտադրանքի ծավալի մասին չեն պահպանվել համապատասխան տվյալներ։ Դրանք պատկանում էին քաղաքային ինքնավարությանը և պարբերաբար կապալով էին տրվում անհատ ձեռնարկատերերի՝ շահագործման ենթարկելու համար։ Քաղաքային ինքնավարությանն էին պատկանում նաև քարհանքերը, որոնք թվով մի քանիսն էին։

70-ական թվականներից քաղաքում կազմակերպվում է տպարանական գործ։ Մեկը մյուսի հետևից քաղաքում հիմնվում են 5 տպարաններ։ Դրանք փոքր ձեռնարկություններ էին շատ սահմանափակ հնարավորություններով։ Տպարաններին կանդրադառնանք քաղաքի կուլտուրան բնութագրելիս։ Քաղաքում կային նաև ներ-

1 «Обзор Эриванской губернии за 1886 год», էջ 22։

2 Նույն տեղը, за 1898 год, էջ 8։

3 «Эриванские объявления», *1912, № 22 և 23։*

4 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, *թ. 5։*

№ կ/կ	Ձեռնարկության տեսակը	1880/81 թ.[1]			1886 թ.[2]			1887 թ.[3]		
		գործող	անգործ	փակված	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը
1	Կաշվի գործարաններ	—	—	—	10	30	2500	10	10	250
2	Ներկատներ	—	—	—	5	6	260	5	5	500
3	Բրուտագործական և ապյուսի գործարաններ	5	—	—	11	51	1520	6	12	1120
4	Գաջի գործարաններ	7	—	—	—	—	—	5	5	400
5	Ալրաղացներ	14	—	—	—	—	—	11	—	—
6	Ճարպահալարաններ և մոմի գործարաններ	—	—	—	8	9	700	8	8	700
7	Օճառի գործարաններ		—	—	1	4	200	1	2	200
8	Գինեգործարաններ և օղեթորման գործարաններ	9	—	—	4	16	2000	63	400	680090
19	Մխահատ ֆաբրիկա	1	—	—	—	—	—	—	5	—
10	Հանքային ջրերի գործարաններ	2	—	—	—	—	—	1	—	150
11	Սառնարաններ	23	—	—	—	—	—	—	—	—
12	Բրնձի գինգեր (բրնձազտիչ գործարաններ)	6	—	—	—	—	—	—	—	—
13	Տպարաններ	3	—	—	—	—	—	—	—	—
14	Քարհանքեր	19	—	—	—	—	—	—	—	—
15	Գարեջրի գործարաններ		—	—	—	—	—	1	2	1600
16	Տահաագործարաններ (ձևոքի)	—	—	—	—	—	—	3	—	—
17	Կրի գործարաններ	—	—	—	—	—	—	5	—	—
18	Մեխանիկական (փականագործական) գործարաններ	—	—	—	—	—	—	1	—	—
19	Աղազագործական գործարաններ	—	—	—	—	—	—	10	—	—
20	Սպիրտագործ և կոնյակի գործարաններ	—	—	—	—	—	—	—	—	—
21	Ջիթհաններ	—	—	—	—	—	—	—	—	—
	Ընդամենը	89	—	—	39	116	7180	130	449	74279

1 *С. Зелинский*, Город Эривань. («Сборник материалв для описания местн. и племен Кавказа», вып. 1, *էջ 38*).

2 «Обзор Эриванской губернии за 1886 год», таблица 2.

3 *ՏԿՎ ՀՍՍՌ ՊԿՊԱ ֆ. 125, ց. 25, թ. 58—59* և «Обзор Эриванской губернии за 1887 год», таблица 2:

4 «Обзор Эриванской губернии за 1896 год», таблица 2.

5 «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отдел 2, *էջ 80*:

6 «Обзор Эриванской губернии за 1906 год», таблица 4 *կամ* «Памятная книжка Эриванской губернии на 1908 год», отд. 3, табл. 4:

1896 թ.[4]			1902 թ.[5]			1906 թ.[6]			1908 թ.[7]			1912 թ.[8]		
գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը	գործող	աշխատող	տարեկան արտադրանքի գումարը
18	65	6700	18	36	4650	20	150	10560	20	160	40900	20	121	—
10	18	710	6	12	660	5	10	550	5	10	500	—	—	—
8	48	3135	6	27	2450	5	12	1800	4	25	4000	—	—	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
9	27	5700	6	12	12000	6	38	3500	4	18	11000	8	20	—
2	4	400	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
2	5	600	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
61	127	22200	12	41	12500	8	30	45000	7	30	40000	12	50	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
3	11	2790	2	9	2580	3	35	9850	2	16	6600	3	12	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
8	32	11760	8	50	4800	—	—	—	8	54	10000	11	50	—
—	—	—	3	15	11500	—	—	—	—	—	—	—	—	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
2	8	8170	2	11	11520	1	10	4000	1	4	3000	1	10	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
4	18	3220	6	25	5 00	6	30	5000	3	15	3600	3	15	—
—	—	—	1	11	8000	1	15	9000	1	15	10000	2	16	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
2	40	96000	2	30	414000	2	28	400000	6	135	595000	6	146[9]	—
—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	10	—
129	403	161385	72	279	489660	57	358	489200	61	482	724600	67	450	—

7 «Памятная книжка Эриванской губернии на 1910 г.» (Ведомость о числе фабрик и заводов Эриванск. губ. за 1908 год).

8 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, *թ. 5*:

9 *Թևպետև կոնյակի գործարանները շարք էին մտել 90-ական թվականներից, սակայն այս աղյուսակի համար մեր օգտագործած աղբյուրներում դրանք սովորաբար հիշատակվում են սպիրտագործ գործարանների հետ միասին, վերջինիս անվան տակ:*

կատներ, որոնք նույնպես աղբյուրներում դասված են «գործարաններ» մեջ և գոյություն ունեին նախորդ ժամանակներից։

Սրանք էին Երևանի մեզ հետաքրքրող ժամանակների արդյունաբերական մեծ ու փոքր ձեռնարկությունները։

Քաղաքի 1880—1914 թթ. արդյունաբերության առաջընթաց շարժման մասին վիճակագրական առումով ուղղակի ու ամբողջական գաղափար կազմելու և Երևանի նահանգի մյուս քաղաքների ու ամբողջ նահանգի արդյունաբերության նկատմամբ նրա ծավալը ուղղակի ընկալելու համար մասնագետի և ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում նախորդ էջերի աղյուսակը (№ 6), որի տվյալները վերցված են տարբեր ժամանակների ու տարբեր բնույթի, բայց մեծ մասամբ պաշտոնական, հաղորդումներից։

Աղյուսակից կարելի է անել շատ հետևություններ ու եզրակացություններ։ Առաջին. աղյուսակում թվարկված ձեռնարկությունների կազմից և ըստ թվականների արված դրանց ցուցանիշներից մասնագետի համար սկզբից ևեթ նկատելի է ցարական պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրների աղաղակող հակասություններն ու պակասավոր լինելը։ Այսպես, պարբերական մամուլից, ականատես քաղաքացիների վկայություններից և ուրիշ կարդի շատ աղբյուրներից հայտնի է, որ Երևանը մեզ հետաքրքրող ժամանակներում միշտ էլ ունեցել է իր մի քանի գաջի փոքրիկ գործարանները, քարհանքերը, բրնձի դինգերը (բրնձապատիչ գործարանները), տպարանները, ատաղձագործական արհեստանոցները (ատաղձագործական գործարանները), ձիթհանները և այլն։ Սակայն ոչ բոլոր թվականներին է, որ դրանց մասին նշվել ու տվյալներ են տրվել աղբյուրներում։ Ինչպես տեսնում ենք, գաջի գործարանի մասին տվյալները իսպառ բացակայում են 1886, 1896, 1902, 1906, 1908 և 1912 թթ. համար վկայակոչված աղբյուրներում, իսկ 1880—81 թ. համար վկայակոչված աղբյուրում միայն տրված է դրանց ընդհանուր թիվը (7)։ Նույն կարգի պակասություններ ունեն նաև նշված մյուս ձեռնարկությունների մասին եղած տվյալները, իսկ կոնյակի գործարանների մասին այդ, այսպես կոչված, ամփոփիչ աղբյուրները մինչև 1912 թ. լռում են, դրանց փոխարեն հիշատակելով միայն սպիրտազտիչ գործարանները։ Մինչդեռ այլ կարգի աղբյուրներում, հատկապես ակցիզային հարկի գծով եղած ամփոփագրերում դրանք հիշատակված և բնութագրված են իրենց ցուցանիշներով։ Դա, ինչպես և ընդհանրապես ակցիզային հարկի ենթակա ձեռնարկությունների մասին եղած տվյալների սխալական լինելը, զրկում է մեզ ճշգրիտ իմանալու նշված ժամանակաշրջանի

Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, արտադրանքի քանակը, բանվորների թիվը և այլ ցուցանիշներ։ Այլ կերպ ասած, մեր բերած թվերը խիստ մոտավոր են։ Աղբյուրներում չեն տրված նաև քաղաքի հիդրոէլեկտրակայանների ցուցանիշները։

Երկրորդ. աղյուսակից պարզ երևում է, որ արդյունաբերության որոշ ճյուղեր՝ ճարպահալարաններ, մոմի գործարաններ, օճառի գործարաններ և այլն, ռուսական կապիտալիստական մեքենայացված արդյունաբերության զարգացման և երկաթուղային կապի հաստատման շնորհիվ XX դարի սկզբներից կորցնում են իրենց նշանակությունը և նույնիսկ դադարում գոյություն ունենալուց։

Երրորդ. քաղաքի արդյունաբերության մեջ երևան են եկել նոր, համեմատաբար խոշոր գործարաններ՝ սպիրտազտիչ (նաև կոնյակի), մեխանիկական, գինեգործական։ Ընդ որում այդ երևույթը հիմնականում սկսվում է 90-ական թվականներից։

Չորրորդ. քաղաքի արդյունաբերության արտադրանքի ավելի քան 90 տոկոսը տալիս է սննդահամի արդյունաբերությունը՝ գինու, օղու, կոնյակի, արհեստական հանքային ջրերի, գարեջրի, բրնձապատիչ և այլ գործարաններ։

Սննդարդյունաբերության տեսակարար կշիռը մեծանում է 80-ական թվականների վերջերից, իսկ XX դարի սկզբներին հասնում առավելագույն չափի՝ 1908 թ. տալով քաղաքի արդյունաբերության տարեկան 724.600 ռ. համախառն արտադրանքի 665.600 ռուբլու արտադրանքը՝ կազմելով ամբողջ համախառն արտադրանքի ավելի քան 91,8 տոկոսը։

Հինգերորդ. արդյունաբերական ձեռնարկությունների թիվը տրված է մեծ տարաբերություններով։ Ըստ աղյուսակի, 1880/81 թթ. դրանց ընդհանուր թիվը 89 էր, 1886 թ.՝ 39, 1887 թ.՝ 130, 1896 թ.՝ 129, 1902 թ.՝ 72, 1906 թ.՝ 57, 1908 թ.՝ 61, իսկ 1912 թ.՝ 67։ Եթե 1887 թ. ամեն մի գործարանի տարեկան միջին արտադրանքը կազմում էր 571 ռ. 30 կ. (130 գործարան, 74.279 ռ. արտադրանք), ապա 1908 թ. յուրաքանչյուր գործարանի տարեկան միջին արտադրանքը կազմում էր 11.714 ռ. 58 կ. (61 գործարան, 724.600 ռ. արտադրանք), այսինքն՝ միջին հաշվով գործարանները խոշորացել էին ավելի քան 20 անգամ։ Այդ երևույթը մեծ մասամբ կապված էր սպիրտազտիչ (և կոնյակի) և գինու կատարելագործված ու խոշոր գործարանների երևան գալու հետ։ Նույնպիսի, բայց համեմատաբար փոքր հարաբերակցությամբ, երևույթ է նկատվում նաև յուրաքանչյուր գործարանին ընկնող բանվորների թվի աճման մեջ։ Ըստ աղյուսակի, 1887 թ. եղած 130 ձեռնարկություններում աշ-

հատում էին 449 բանվոր, այսինքն՝ յուրաքանչյուր ձեռնարկությանը միջին հաշվով ընկնում էր մոտ 3,45 բանվոր, իսկ 1908 թ. քաղաքի 61 արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էր 482 բանվոր, որ միջին հաշվով յուրաքանչյուր ձեռնարկությանն ընկնում էր մոտ 8 բանվոր: Այլ կերպ ասած, քաղաքի գործարանները իրենց բանվորների թվով 1887—1908 թթ. ընթացքում միջին հաշվով մեծացել էին ավելի քան երկու անգամ: Բայց այդ պայմաններում էլ դրանք մեծ մասամբ մնում էին իբրև փոքր ձեռնարկություններ: Նշված թվականներին բանվորների թվի մեծացման համեմատությամբ քաղաքի արդյունաբերության համախառն արտադրանքի աճի ավելի մեծ տեմպերը ցուցանիշ են այն բանի, որ Երևանի արդյունաբերությունը մեքենայացվում էր, բարձրանում էր արտադրողականությունը: Եվ իրոք, նույն աղյուսակի թվերը ցույց են տալիս, որ եթե 1887 թ. մեկ բանվորին ընկնող համախառն արտադրանքը միջին հաշվով կազմում էր 158,7 ռուբլի, ապա 1908 թ. հասնում է ավելի քան 1503 ռուբլու, այսինքն՝ բանվորի արտադրողականությունը մեծացել էր ավելի քան 9 անգամ: Համախառն արտադրանքի ծավալը հատկապես մեծանում է 1907 թ. հետո, երբ շարք է մտնում «Շուստով և որդիներ» ընկերության նոր, խոշոր ու մեքենայացված կոնյակի գործարանը: Այդ անմիջապես աչքի է ընկնում, երբ նայում ենք աղյուսակին:

Վեցերորդ. մեծ է առաջընթացը նաև ընդհանուր համախառն արտադրանքի բնագավառում: Ըստ աղյուսակի, 22 տարվա ընթացքում քաղաքի արդյունաբերության համախառն արտադրանքը 74.279 ռուբլուց (1887 թ.) հասել է 724.600 ռուբլու (1908 թ.) այսինքն՝ ավելացել է մոտ 10 անգամ, եթե նկատի չունենանք դրամի արժեքների տարբերությունները: Այդ նույն ժամանակամիջոցում քաղաքի յուրաքանչյուր բնակչին ընկնող արդյունաբերական արտադրանքի քանակը ավելացել էր հինգ անգամ, եթե նկատի ունենանք, որ 80-ական թվականների երկրորդ կեսին քաղաքը միջին թվով ուներ 15.000 բնակիչ, իսկ XX դարի սկզբներին՝ 30.000: Այսինքն՝ եթե 1887 թ. քաղաքի յուրաքանչյուր բնակչին ընկնում էր միջին հաշվով 5 ռուբլու արդյունաբերական արտադրանք, ապա 1908 թ. հասնում է 24 ռ. 15 կոպեկի: Ինչպես տեսնում ենք, այդ երկու թվերն էլ անչափ փոքր են: Անգամ եթե դրանք ավելացնենք ևս մեկ երրորդի չափով, նկատի ունենալով բացթողումները, որի մասին ասվեց վերևում, այնուամենայնիվ, թվերը կմնան շատ փոքր. 1887 թ. քաղաքի բնակիչների մեկ շնչին

ընկնող արդյունաբերական արտադրանքը կկազմի 7—8 ռուբլի, իսկ 1908 թ.՝ 32—33 ռուբլի:

Ինչպես ասվեց, նախասովետական շրջանի Երևանի արդյունաբերությունն իր զարգացման առավելագույն կետին է հասնում 1913 թ.՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: Այդ թվականին քաղաքում առկա էին սովորական արհեստներից, կապիտալիստական հասարակ կոոպերացիայից ու մանուֆակտուրային ձեռնարկություններից մինչև ժամանակակից կապիտալիստական գործարանները: Քաղաքի 1913 թ. արդյունաբերության բնորոշ կողմը պետք է համարել հենց այն, որ նրա համախառն արտադրանքի ճնշող մասը տալիս էին խոշոր, համեմատաբար մեքենայացված ու կատարելագործված գործարանները: Ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի աղյուսակ, որն իր մեջ ամփոփում է այդ թվականի քաղաքի համեմատաբար խոշոր մի քանի ձեռնարկությունների ցուցանիշները:

Աղյուսակ 7

№№ p/կ	Ձեռնարկության անունը և տեսակը	Հիմնադրման թվականը	Բանվորների քանակը	Համախառն արտադրանքը հազար ռուբլով	Ծանոթություն
1	«Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի-օղու գործարան	1887/99	80	635.549	Հիմնադրվել է Թադեյանի կողմից 1887 թ., իսկ 1899 թ. անցել Շուստովին
2	Ավետյանի ըրնձազտիչ գործարան	1892	10	192.000	
3	Լոանյանի պահածոյի գործարան	1911	60	99.000	Բանվորների մեծ մասը սեզոնային էր
4	Տեր-Ավետիքյան եղբայրների ջուղակազապատման-մեխանիկական գործարան	1891/1905	50	50.000	Գոյություն ուներ որպես արհեստանոց 1891 թվականից, 1905 թ. վերափոխվեց գործարանի
5	Ավետյանի գաբեջրի գործարան	1892	8	14.500	
	Ընդամենը		208	991.049[1]	

Ինչպես տեսնում ենք, աղյուսակում նշված բոլոր գործարան-

1 Աղյուսակի տվյալները վերցված են ՀՍՍՌ ՊԿՊԱ 163 ֆոնդի 1-ին գործից (թթ. 9—10, 23—24, 25—26, 29—30, 35—36):

նները, բացառությամբ Շուստովի գործարանի, հիմնադրվել են 90-ական թվականներից սկսած։ 1913 թ. դրանցից յուրաքանչյուրին ընկնում էր միջին հաշվով 41,6 բանվոր և տարեկան 198.209 ռ. 80 կ. համախառն արտադրանք։ Մեր կատարած հաշվումներով, այդ նույն թվականին Երևանի արդյունաբերական մեծ ու փոքր բոլոր ձեռնարկություններն ունեին մոտ 800 բանվոր, իսկ համախառն արտադրանքը կազմել է մոտ 3 միլիոն ռ.։ Այդ ամբողջ արտադրանքի մեջ կապիտալիստական՝ համեմատաբար խոշոր ձեռնարկություններին բաժին էր ընկնում մոտ 80—90 տոկոսը, մինչդեռ դրանցում զբաղված բանվորները կազմում էին քաղաքի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների միայն 40—45 տոկոսը։

Երևանը համանուն նահանգի արդյունաբերական ամենախոշոր կենտրոնն էր։ 1891 թ. տվյալներով Երևան քաղաքը տալիս էր Երևանի նահանգի բոլոր հինգ քաղաքների (Երևան, Ալեքսանդրոպոլ, Նոր Բայազետ, Նախիջևան, Օրդուբադ) արդյունաբերական արտադրության ավելի քան 50 տոկոսը, հետագայում հարաբերությունը փոխվում է դարձյալ հօգուտ Երևանի։ 1906 թ. Երևանը ավելի քան 13 անգամ ավելի արդյունաբերական արտադրանք էր տալիս, քան Ալեքսանդրոպոլ և Նոր Բայազետ քաղաքների արդյունաբերական արտադրանքը միասին վերցրած։ Ահա համապատասխան տվյալները.

Աղյուսակ 8

№ № կ/կ	Քաղաքների անվանումը	1891 թ.[1]				1906 թ.[2]			
		Գործարանների թիվը	Բանվորների թիվը	Արտադրանքի ընդհանուր գումարը հազար ռուբլով	Մեկ գործարանին ընկնող միջին տարեկան արտադրանքը հազար ռուբլով	Գործարանների թիվը	Բանվորների թիվը	Արտադրանքի ընդհանուր գումարը հազար ռուբլով	Մեկ գործարանին ընկնող միջին տարեկան արտադրանքը հազար ռուբլով
1	Երևան . . .	142	676	82.31	579,6	76	429	1.153,9	15 182,9
2	Ալեքսանդրոպոլ	34	131	37,25	1095,6	13	90	87,5	6730,7
3	Նոր Բայազետ . .	21	39	11,3	538,1	5	20	1,5	500,0
4	Նախիջևան . . .	28	55	10,005	357,0	—	—	—	—
5	Օրդուբադ	17	116	25.13	1478,2	—	—	—	—
	Ընդամենը . .	242	1017	165.990	686,2	94	539	1242.9	—

Աղյուսակից անմիջապես երևում է, որ Երևանում ձեռնարկությունների խոշորացումը կատարվել է շատ արագ և մեծ չափերով։

1 *Տվյալները առ՛ս* «Кавказский календарь на 1893 год», *էջ 47։*

2 *Աղյուսակի այդ բաժինը կազմված է ըստ* «Памятная книжка Эриванской губернии на 1908 год»-*ի տվյալների* (отд. *4, էջ 24, աղյուսակ 16*)։

Ակնհայտ է, որ 1891 թ. նրա յուրաքանչյուր գործարանին միջին հաշվով ընկնում էր 579,6 ռուբլու տարեկան արտադրանք, ապա 1906 թ. այն հասնում է 15.182,9 ռուբլու։ Այդ նույն ժամանակում Ալեքսանդրոպոլի յուրաքանչյուր գործարանի միջին արտադրանքը կազմում էր 1891 թ. 1095,6 ռուբլի, 1906 թ.՝ 6730,7 ռուբլի, իսկ Նոր Բայազետինը 1891 թ.՝ 538,1 ռ., 1906 թ.՝ 500,0 ռուբլի։ Այլ կերպ ասած, ըստ բերված տվյալների 15 տարվա ընթացքում Երևանի արդյունաբերական ձեռնարկությունները արտադրանքի քանակով հաշված խոշորացել էին ավելի քան 26 անգամ, Ալեքսանդրոպոլինը միայն՝ 6,15 անգամ, իսկ Նոր Բայազետի ձեռնարկությունները նույնիսկ փոքրացել էին։ Հետագա տարիներին կատարելագործված գործարանների՝ Շուստովի կոնյակի նոր գործարանի, էսանյանի պահածոյի գործարանի և այլ գործարանների կառուցմամբ հարաբերությունը հօգուտ Երևանի ավելի է մեծանում։ 1891 թ. Օրդուբադի ձեռնարկությունների համեմատաբար մեծ արտադրանքը բացատրվում է ոչ թե նրանց խոշոր կամ կատարելագործված լինելով, այլ նրանով, որ դրանք գերազանցապես նախնական մշակման էին ենթարկում բնական մեծաքանակ, որի արժեքը շատ բարձր էր։

Երևանը մինչև XX դարի սկզբները տալիս էր ամբողջ Երևանի նահանգի արդյունաբերական արտադրանքի մոտ 10 տոկոսը, իսկ 1905/6 թթ. սկսած նրա տեսակարար կշիռը նահանգի մասշտաբով բավական արագ բարձրանում է՝ 1906 թ. հասնելով մոտ 33 տոկոսի [1], իսկ 1913 թ.՝ ավելի քան 50 տոկոսի։

Երևանի նահանգն իր արդյունաբերությամբ ետ էր մնում Բաքվից, Թիֆլիսի և այլ նահանգներից։ Սակայն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրա արդյունաբերությունն այնքան էր առաջադիմել, որ չէր կարող չգրավել համապատասխան մինիստրության ուշադրությունը։ «Երևանի հայտարարություններ» ԳԵրթիկի 1913 թ. համարներից մեկում, մի անստորագիր հոդվածում ասված է, որ նկատի ունենալով Երևանի նահանգի և Կարսի մարզի արդյունաբերության զգալի զարգացումը և դրա հետագա հեռանկարները, առևտրի ու արդյունաբերության մինիստրությունը նահանգի և մարզի արդյունաբերությունը կառավարելու ու կառա-

1 *Սույն աշխատության 6-րդ աղյուսակի տվյալները համեմատել* «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.»-*ի* (отд. 2, *էջ* 93), «Обзор Эриванской губернии за 1897 год»-*ի* (*էջ 9*), *նույնի 1898 թ.* (*էջ* 8), «Кавказский календарь»-*ի* (*1896 թ. էջ 185—186, 1909 թ., բաժին 4, էջ 503 և 505*) *տվյալների հետ։*

վարության հսկողությանը ենթարկելու համար նշանակում է հատուկ պաշտոնյա՝ ֆաբրիկային ավագ տեսուչ, որի նստավայրը նշանակվում Երևան քաղաքը [1]։ Ըստ հոդվածագրի հաղորդման, տեսուչ նշանակված ուսելցի ինժեներ-տեխնոլոգ Ա. Ա. Գուլյաևը պարտավոր էր հետևել, որպեսզի ձեռնարկությունները ղեկավարվեն գոյություն ունեցող օրենքներով։ Նա, ըստ հայտարարության, միջնորդի դեր էր կատարելու ձեռնարկատերերի ու բանվորների միջև և այլն [2]։ Իրականում ֆաբրիկային ավագ տեսուչը նշանակված էր պետության և նրա հենարանի՝ բուրժուազիայի շահերը պաշտպանելու նպատակով, որովհետև նրա գործունեությունից ամենևին չի երևում, որ նա որևէ չափով շահագրգռված է եղել բանվորների շահերի պաշտպանությամբ։ Ֆաբրիկային տեսուչը ուներ իր ստորադրյալները և անհրաժեշտության դեպքում դիմում էր ոստիկանական վարչության օգնությանը։ Նրա ստորագրությամբ 1914 թ. գարնանը շրջաբերականի կարգով հրապարակվում է «Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման և բացման համար թույլատվություն ստանալու կարգը» [3] վերնագիրը կրող հրահանգը, որի պայմանները պարտադիր էին բոլորի համար։

Այժմ տեսնենք ինչպիսին էր մասնագետ և ոչ մասնագետ՝ սևագործ բանվորների դրությունը։ Ըստ գործող օրենքի, ցարական պետության մեջ արտադրության աշխատողները և զանազան ծառայողները բաժանված էին 10 կարգերի, որոնք իրենց հերթին մասնատված էին ենթակարգերի։ Այնպես որ այդ բնագավառում գոյություն ուներ մեծ քաոս։ Սևագործ բանվորները, արհեստավորները, այգեգործները, դռնապանները, հավաքարարները, կառապանները և այլն, մտնում էին առաջին երեք կարգերի մեջ, այսինքն՝ գտնվում էին ամենացածր աստիճանի վրա [4]։ Հասկանալի է, որ ինչքան ցածր էր աշխատողի կարգը, այնքան նրա իրավունքները սահմանափակ էին, իսկ աշխատավարձը՝ ցածր։ Երևան քաղաքում, մանավանդ XX դարի սկզբներից, երբ գյուղը սկսեց բայքայվել և սեփականազրկված գյուղացիները թափվեցին քաղաքները, այդ թվում և Երևան, առաջացավ զգալի թվով մշտական անգործություն։ Երևանի արդյունաբերությունը փոքր ծավալի պատճառով հնարավորություն չուներ լիովին իր մեջ ընդգրկել գյուղից եկող աշխատավորական զանգվածներին, նույնիսկ առաջին հա-

1 «Эриванские объявления», 1913, № 89։

2 Նույն տեղը։

3 Հրահանգի տեքստը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 781, թ. 11։

4 Տե՛ս նույն տեղը, ֆ. 195 с/512, գ. 809, թ. 25—32։

մաշխարհային պատերազմին նախորդած տարիներին, երբ նրա արդյունաբերությունը զարգանում և ծավալվում էր անհամեմատ ավելի մեծ մասշտաբներով։ Ըստ «Կռան» թերթի թղթակիցներից մեկի հաղորդման՝ 1912 թ. Երևանում կային մեծ թվով գործազուրկներ [1], որոնք գտնվում էին անմխիթար պայմաններում։ Աշխատանքային օրը գրեթե չէր սահմանափակված որոշակի ժամերով։ Սովորաբար աշխատանքային օրը, մանավանդ սեզոնային աշխատանք պահանջող ձեռնարկություններում՝ պահածոյի գործարան, գինու գործարան, այգեկութ և այլն, տևում էր շատ երկար՝ 12—14 ժամ։ Այնպես որ աշխատանքային օրվա տևողության մասին գոյություն ունեցող օրենքը մնում էր իբրև ձևականություն, ինչպես ձևական էին ցարական շատ ու շատ օրենքներ։

Աշխատավարձը ցարական տիրապետության շրջանում անսահման ցածր էր։ Այն շատ ցածր էր մանավանդ մինչև 90-ական թվականների երկրորդ կեսը։ Ռևոլյուցիոն հուժկու շարժումներից հարկադրված՝ ցարական կառավարությունը 1897 թվականին հատուկ օրենք է հրապարակում բանվորական օրվա կրճատման մասին [2]։ Այդ օրենքը կիրառվում է նաև Անդրկովկասի ձեռնարկություններում։ Սակայն օրենքի կիրառումը էական որևէ փոփոխություն չի մտցնում բանվորների կյանքում։ XX դարի սկզբներից ծավալված ռևոլյուցիոն շարժումները, որոնք հանգեցրին 1905 թ. բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիային, ցույց էին տալիս, որ ռուսական պետության բանվորների տնտեսական վիճակը գտնվում էր ծայրահեղ ցածր մակարդակի վրա։

Երևանի գործարաններում տիրում էր հակասանիտարական դրություն, բանվորներից շատերը՝ հատկապես ամռանը տառապում էին համաճարակ հիվանդություններով՝ դողէրոցքով, տիֆով, հարբուխով և այլն։

Ժամանակի ընթացքում, կախված պայմանների ու աշխատանքային օրվա փոփոխություններից, փոփոխության է ենթարկվել նաև աշխատավարձի չափը։ Երևանում տարբեր մասնագիտության տեր աշխատավորների, ինչպես և սևագործ բանվորների աշխատավարձի չափի մասին շուկայի վերակացվի ու քաղաքային վարչության քարտուղարի ստորագրությամբ հրապարակվել են տեղեկագրեր։

1 «Կռան» (լրագիր), 1912, № 18։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 51։

№ № p/կ	Մասնագիտության անվանումը	Աշխատավարձի չափը 80-ական թվականներ[1] ռ.	կ.	90-ական թվականներ[2] ռ.	կ.	1900 թ.[3] ռ.	կ.	1910 թ.[4] ռ.	կ.	1913 թ.[5] ռ.	կ.
1	Քարտաշ	2	50	1	80	1	50	1	60	2	—
2	Հյուսն	2	—	1	50	1	60	1	80	2	—
3	Արմնագործ	2	—	1	50	1	50	2	—	2	—
4	Դարբին	1	50	1	50	2	—	1	80	1	80
5	Ներկարար (маляр)	1	50	2	—	1	—	2	—	2	—
6	Մրճահար	1	—	—	80	1	20	—	—	1	20
7	Պղնձագործ	2	—	1	—	2	—	2	20	1	50
8	Բանվոր	—	30	—	45	—	40	1	—	—	70
9	Բանվոր ձիու սայլի հետ միասին	1	50	3	—	1	40	1	40	2	—
10	Փականագործ	2	50	2	—	2	—	2	30	2	50
11	Ասպակագործ	1	50	1	50	1	50	1	40	1	80
12	Ատաղձագործ	2	50	2	—	2	—	2	40	2	50
13	Ջառաս	2	50	—	—	2	—	—	—	2	—
14	Ծեփագործ	2	—	1	80	1	50	1	80	2	—
15	Վառարանագործ	3	—	2	—	3	50	3	—	—	—
16	Ջակառագործ	2	—	—	—	2	—	2	40	—	—
17	Աղյուսագործ	2	—	1	—	—	—	1	20	1	50
18	Կագմարար	—	—	3	—	—	—	—	—	—	—
19	Պայթեցնող (запальщик)	—	—	1	—	1	20	1	50	1	50
20	Հորատիչ	—	—	—	80	—	—	1	50	—	—
21	Հողափոր	—	—	—	80	—	70	1	—	—	90
22	Սղոցագործ	—	—	—	—	1	40	1	50	—	—
23	Ջոգիչ	—	—	—	—	—	—	1	50	—	—
24	Գաստառող	—	—	—	—	—	—	2	—	—	—

Մեզ հետաքրքրող տարիներին ուժի մեջ էր մնացել ազատ արհեստավորների և բանվորների աշխատավարձի վերաբերյալ 1869 թ. բարձրագույն հրամանը։ Ճիշտ է, այդ հրամանը որոշ փոփոխության է ենթարկվել XX դարի սկզբներին, սակայն այդ փոփոխությունը էական չէր, մանավանդ որ նշված կարգի աշխատողների աշխատավարձը իրականում փոփոխվում էր ոչ թե հրամանագրերի, այլ ռեալ պայմանների փոփոխման հիման վրա։ Օրենքով սահ-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 149, թ. 6։
2 Նույն տեղը, գ. 227, թ. 7։
3 Նույն տեղը, գ. 458, թ. 10։
4 Նույն տեղը, գ. 948, թ. 29։
5 Նույն տեղը, գ. 773, թ. 15—16։

մանված այդ ցածր դրույքներն անգամ կյանքում բոլորովին չէին կիրառվում, յուրաքանչյուր փոքր կամ մեծ ձեռնարկություն ու ձեռնարկատեր ուներ աշխատավարձի իր չափերը, որոնք որոշվում էին միանգամայն կամայական կարգով։ Աշխատավարձը փոփոխության էր ենթարկվում ո՛չ միայն տարիների, այլ նույնիսկ տարվա տարբեր եղանակների ընթացքում։ Հենց այդ է պատճառը, որ ինչպես մյուս քաղաքների, այնպես էլ Երևանի քաղաքային վարչությունը շուկայի վերակացուի և վարչության քարտուղարի միջոցով պարբերաբար հրապարակում էր տարբեր աշխատանքների համար աշխատավարձի գոյություն ունեցող դրույքները։

1880-ական թվականներից մինչև 1913 թ. Երևանում արհեստավորների ու բանվորների աշխատավարձի չափը և շարժումը հետևյալ պատկերն էր ներկայացնում (տե՛ս աղյուսակ 9)։

Ռեալ աշխատավարձի ցածր մակարդակը որոշակի կդառնա, երբ առևտրի բաժնում կտրվեն արդյունաբերական լայն սպառման առարկաների և գյուղատնտեսական մթերքների գները։ Սակայն չի կարելի անտարբեր անցնել մեր կազմած աղյուսակի կողքով։ Երանից երևում է, որ ամենացածր աշխատավարձը տանում էին սեագործ բանվորները, որոնք աղբյուրներում հիշատակված են բանվոր, հողափոր, հորատիչ, մրճահար և այլ անվանումներով։ Նրանց աշխատավարձը աղյուսակի ընդգրկած 30 տարվա շրջանում տատանվել է 30 կոպեկից (սեագործի նվազագույն աշխատավարձը) մինչև մեկ ռուբլի 20 կոպեկի (մրճահարի առավելագույն բարձր աշխատավարձը) սահմաններում։ Ցածր է եղել և արհեստավորների աշխատավարձը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ նրանց մեծագույն մասի համար (քարտաշներ, հյուսներ, որմնադիրներ, ներկարարներ, ապակեգործներ, վառարանագործներ) սովորաբար աշխատանքային օրը սկսվում էր վաղ առավոտյան և տևում մինչև մութն ընկնելը։ Էլ չենք խոսում այն մասին, որ օրավարձով աշխատողը Երևանում միշտ էլ ենթակա էր անգործ ու անօթևան թափառելու սոսկալի վտանգին, մանավանդ ձմռանը, երբ դադարում էին շինարարական ու այգեգործական աշխատանքները։

1879—1914 թթ. Երևանի արհեստագործության մեջ տեղի ունեցած փոփոխություններից ուշադրության արժանի են՝ համքարությունների նշանակության նվազումն ու, գրեթե, վերացումը, մի շարք արհեստների վերացումը, համքարության վերացման պատճառով արհեստագործության մակարդակի գգալի իջեցումը, տեղական նոր պայմանների հիմքի վրա նոր արհեստների ծագու-

ն՛ը, ցածր տիպի մասնավոր ու ընկերովի արհեստագործական դպրոցներ բաց անելու փորձերը և այլն։

1867 թ. սկսած, երբ Թիֆլիսի արհեստավորական արտադրության մեջ կիրառվում է նոր կանոնադրություն (ըստ որի յուրաքանչյուր քաղաքացու իրավունք էր արվում թուլլտվության վկայական վերցնելով զբաղվել ցանկացած արհեստով), համքարությունները աստիճանաբար կորցնում են իրենց նախկին նշանակությունը։ Սակայն քանի որ նոր հրապարակված կանոնադրությունը (1867 թ.) իր դրույթներով Անդրկովկասի համքարությունների արտադրական սովորույթներից (ադաթից) էական շատ քիչ տարբերություն ուներ, ուստի նրա կիրառումը (որի համար խնդրել, բայց մերժում էին ստացել Երևանի հասարակության ներկայացուցիչները)[1] զգալի որևէ փոփոխություն չէր կարող մտցնել նախկին դրության մեջ։ Անդրկովկասի քաղաքներում, այդ թվում և Երևանում ընդհուպ մինչև XX դարի սկիզբները, համքարությունները շարունակվում էին գոյություն ունենալ և կարևոր դեր խաղալ արհեստագործական արտադրության ու արտադրված ապրանքի վաճառման բնագավառում[2]։

Այդ ժամանակամիջոցում Երևանի համքարությունների կազմը ենթարկվում է զգալի փոփոխության։ Ռուսական զարգացող արդյունաբերության և կենտրոնական նահանգների հետ ավելի սերտ կապեր ստեղծվելու հետևանքով, Երևանի մի շարք արհեստագործություններ և համքարություններ ապրում են անկում ու նույնիսկ դադարում գոյություն ունենալուց՝ ներկարարություն, ջուլհակություն, մանածագործություն և այլն[3]։ Սակայն համքարությունների վերացման համար Երևանում պայմաններ են ստեղծվում միայն XX դարի սկզբներից, երբ քաղաքը ստանում է երկաթուղային կապ և, մասնավորապես, երբ Երևան են գալիս համքարությունների ամենազոր ախոյանները՝ կապիտալիստական համեմատաբար խոշոր ու մեքենայացված ձեռնարկությունները։ Ռուսաստանից ստացվող էժան ու բարձրորակ ապրանքները և տեղի գործարանների՝ թուջակազապարման-մեխանիկական գործարանի, գինու-կոնյակի-օղու գործարանների և կապիտալիստական այլ ձեռնարկությունների արտադրանքը մահացու հարված են հասցնում քաղաքի արհեստավորությանն ու նրա համքարային կազմակերպությանը։ XX դարի սկզբներից սկզբնաղբյուրները դրեթե դադարում են Երևանի համքարությունների մասին տեղեկություններ հաղորդելուց, որովհետև դրանք իբրև արտադրական միավորներ արդեն դադարել էին գոյություն ունենալուց։ Այդ աղբյուրներում երբեմն հանդիպում ենք այս կամ այն արհեստագործության գծով պետավոր վարպետի (ուստաբաշու) ընտրության մասին համառոտ հաղորդագրություններ, որոնցից պարզ կերպով երևում է, որ համքարությունն արդեն վեր է ածվել սոսկ վարչա-ֆինանսական միավորի, իսկ նրա գլխավոր վարպետի ֆունկցիաները սահմանափակվում են միայն հարկային գործերով։ Հակառակ վերացվող արտադրական սովորույթներին ու կանոններին, համքարությունների կենցաղային որոշ սովորույթներ իրենց գոյությունը պահպանում են մինչև սովետական կարգերի հաստատումը։

Համքարությունների վերացումը Երևանում XX դարի սկզբներից ուներ դրական մեծ նշանակություն, փաստորեն դրանով վերացվում էր կապիտալիզմի և ապրանք-դրամական հարաբերությունների զարգացման գլխավոր արգելակներից մեկը։ Եթե մի ժամանակ իբրև աշխատանքի կազմակերպման ձև համքարությունները խաղացել են դրական մեծ դեր, XIX դարի վերջերին դրանց գոյությունը գեթևս անհրաժեշտ էր[1] ու ոչնչով չէր խանգարում տիրող տնտեսական դրությանը, ապա XX դարի սկզբներից դրանք աստիճանաբար դարձան արգելակ զարգացող արդյունաբերության համար և դատապարտվեցին մահվան։

Սակայն չմեղանչելու համար պետք է ասել, որ համքարությունների վերացումը XX դարի սկզբների Երևանի արհեստագործության վրա թողեց բացասական ազդեցություն. արհեստաններից շատերի որակը ընկավ, ընկավ և արհեստավորների բարեխղճությունն ու կարգապահությունը։ Երևանում հրատարակվող «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1910, 1911, 1912 և 1913 թվականների բազմաթիվ համարներում շատ նյութեր են տպագրվել այն մասին, որ արհեստավորները անորակ են կատարում պատվերները, որ նրանք պատվերների կատարումը անլափ ձգձգում են, զբաղվում են խաբեբայությամբ, սակարկություններով և այլն։ Մասամբ հենց այդ էր պատճառը, որ ժամանակակիցներից ոմանք առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարի-

1 Ք. Ե. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 424—425։
2 Նույն տեղը, էջ 430։
3 С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. 2, էջ 358։

1 С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. 2, էջ 358։

ների Երևանի արհեստագործությունը դիտում են իբրև անկում ապրող տնտեսական ճյուղերից մեկը[1]։

Երևանում արդյունաբերությունը, ինչպես ասվեց, թույլ էր զարգացած, եղած արդյունաբերություններն էլ շատ բնագավառներ չէր ընդգրկում, Ռուսաստանից բերվող ապրանքները ևս չէին բավարարում բնակչության տնտեսական-կենցաղային բոլոր պահանջները։ Կային այնպիսի պահանջմունքներ, որոնց բավարարություն կարող էին տալ միայն տեղական արհեստները՝ քարտաշությունը, որմնադրությունը, պղնձագործությունը, բրուտագործությունը, փականագործությունը, լուսանկարչությունը, դերձակությունը և այլն, և այլն։ Այդպիսի արհեստների գոյությունը կենցաղային-տնտեսական անհրաժեշտություն էր։ Այդ է պատճառը, որ առանձին մարդկանց, ընկերությունների և հիմնարկների կողմից հարց է հարուցվում քաղաքում արհեստավորական ցածր տիպի դպրոց հիմնելու մասին։ Քաղաքում նման դպրոց հիմնելու հարցը առաջ է քաշվել դեռևս 1896 թվականին։ Երևանի քաղաքային դուման այդ թվականի հուլիսի 10-ի իր նիստում որոշում է ընդունում նոր բացվելիք դպրոցի շենքի համար անվճար տրամադրել համապատասխան տեղ և կարծիք հայտնում, որ ցանկալի է այդ դպրոցը լինի փականագործական ու ատաղձագործական[2]։ Հետագայում այդ հարցի առթիվ գրագրություններ են կատարվում նահանգապետի ու քաղաքագլխի միջև[3], բայց գործը մնում է անփոփոխ, իսկ դպրոցի բացումը՝ միայն բարի ցանկություն։ 1900 թվականից սկսած մի քանի տարի շարունակ արհեստավորական դպրոցի մասին խոսք չի լինում։ Քաղաքագլխի, նահանգապետի, Կովկասի ուսումնական օկրուգի և քաղաքային դումայի միջև այդ հարցի առթիվ գրագրությունները վերսկսվում են 1909 թվականից և շարունակվում մինչև 1914 թվականի սկզբները։ Այդ տարիներին հարց է առաջ քաշվում որպեսզի արհեստավորական դպրոցը բացի փականագործական ու ատաղձագործական բաժիններից ունենա նաև գյուղատնտեսական բաժին։ Քաղաքը համապատասխան միջոցներ չունենալու, իսկ Կովկասյան ուսումնական օկրուգն էլ այդպիսին չտրամադրելու հետևանքով, դպրոցի գործը տարեցտարի հետաձգվում է։ Քաղաքային վարչությունը ենթադրում է հնարավորին չափով դպրոցի

1 Տե՛ս «Կոչան» (լրագիր), 1912, № 18։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 451, թ. 7։
3 Նույն տեղը, նաև թ. 9։

գումման համար համապատասխան միջոցներ տրամադրել սկսած 1914 թվականից[1]։

Հակառակ դրան, հաջող և արագ է լուծվում կանանց համար արհեստավորական դպրոց ունենալու հարցը։ Օգտակար գիտելիքներ տարածող ընկերությունը բժիշկ Բուդաղյանի անմիջական մասնակցությամբ 1909 թ. քաղաքում բացում է մի արհեստանոց, որտեղ կանայք սովորում են տեղական ուժերից զանազան սեղաններ, աթոռներ, զամբյուղներ և այլ իրեր պատրաստել[2]։ Շուտով զգացվում է, որ դրանով նույնիսկ նվազագույն չափով չի լուծվում քաղաքի կանանց շրջանում արհեստագործության և տնայնագործության տարածման հարցը։ Եվ ահա Գայանյան օրիորդաց դպրոցի հոգաբարձությունը նախաձեռնում է կանանց համար մի երկրորդ արհեստանոց կառուցելու գործը։ Արհեստանոցի շենքի կառուցումը սկսվում է նույն 1909 թվականին Դոկտորի (այժմ Բումանյան) փողոցի վրա։ Շենքը կառուցվում է ճարտարապետ Կ. Հովհաննիսյանի նախագծով, իսկ շինարարությունը ղեկավարում են Գ. Ամիրյանը և Գ. ու Հ. Եղիազարյանները[3]։ Շենքի կառուցման համար պահանջվող դումարի մի մասը տրամադրում է Աֆրիկյանը[4]։ Շենքը երկհարկանի էր, շարված Երևանի սրբատաշ տուֆով։ Արհեստանոց-դպրոցը, ինչպես կարելի է կոչել այդ նոր հիմնարկը, ցածր խավի զավակներին ձրիաբար սովորեցնում էր գրագիտություն, կանոնավոր կար ու ձև, ջուլհակություն, գորգ ու կարպետներ գործել և այլն[5]։ Մի խոսքով, դպրոցը արհեստավորական-տնայնագործական տիպի էր։ Հետագայում այդ դպրոցը սովորաբար կոչվել է Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերության կար ու ձևի արհեստանոց, որը յուրաքանչյուր տարի ընդունել է աշակերտուհիներ՝ սահմանափակ թվով։ 1911—1913 թթ. դպրոցի կառավարիչը եղել է տիկին Վ. Ա. Բունիլովսկայան[6]։ Նույն թվականներին գոյություն է ունեցել կանանց նման մի այլ դպրոց՝ «Ձեռարվեստական-տնայնագործական արհեստավորական դպրոցը», որը գտնվում էր Նահանգական ու Բազարի փողոցների անկյունում։ Այս դպրոցում սովորում ու զանազան իրեր էին պատրաստում սավարաթղթից[7]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 763, թ. 3։
2 «Эриванские объявления», 1909, № 20.
3 Նույն տեղը, 1910, № 8.
4 Նույն տեղը, №№ 12 և 45։
5 Նույն տեղը, № 8։
6 Նույն տեղը, 1912, № 83 և այլուր։
7 Նույն տեղը, № 93։

Մեզ հետաքրքրող շրջանում, մանավանդ XX դարի սկզբներից քաղաքում հանդես են գալիս նորաձևության հետ կապված մի քանի արհեստանոցներ՝ կարի, կոշկակարական և այլն [1]։ Քաղաքի կյանքում միանգամայն նորություն էր նաև էլեկտրատեխնիկայի, հեռախոսի, օպտիկայի և այլ բնագավառների հետ կապված արհեստանոցների երևան գալը։ Առանձնապես հայտնի էր Վ. Միխայլովի էլեկտրամեխանիկայի և օպտիկայի արհեստանոցը, որն ուներ մի շարք արհեստավորներ ու այլ կարգի աշխատողներ։ Նրա արհեստանոցը, ըստ հայտարարության, պատրաստում և վերանորոգում էր հեռախոսագծեր, հեռախոսային ապարատներ, էլեկտրազանգեր, կարգավորում էր էլեկտրաշարժիչներ, դինամոմեքենաներ, էլեկտրական զանազան ապարատներ, գրամոֆոններ, գեոդեզիական և գծագրական գործիքներ ու սարքեր, լուսանկարչական ապարատներ, կարի մեքենաներ, հեծանիվներ և այլն, և այլն [2]։ Նույպիսի համեմատաբար մեծ արհեստանոց էր և Արշակ Բաղրամյանի կոշկակարանոցը [3]։ Երևանի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների մի մասը առաջացել էր հենց այս տիպի արհեստանոցներից, որոնք կլանելով նույնատիպ մյուս փոքր արհեստանոցները և որոշ չափով կատարելագործելով իրենց աշխատանքային պրոցեսները, վեր են ածվել համեմատաբար խոշոր կապիտալիստական ձեռնարկությունների։ Նույն ձևով էր առաջացել, օրինակ, Տեր-Ավետիքյան եղբայրների թուջակաղապարման-մեխանիկական գործարանը, որի մասին խոսվեց վերևում։

Արհեստավորների և արհեստանոցների թվի մեծ տատանումներ 1880—1913 թթ. ընթացքում չի նկատվում։ Այդ ավելի քան 30 տարվա ընթացքում պակասում են հին արհեստների գծով եղած արհեստավորների ու արհեստանոցների թիվը, սակայն առաջանում են և նոր արհեստներ, որոնք լրացնում են պակասը։ 1886 թ. տվյալներով քաղաքում արտադրական արհեստների գծով զբաղված էր 711 մարդ, որոնցից 341-ը վարպետներ էին, 132-ը՝ բանվորներ, իսկ 238-ը՝ աշակերտներ [4], առանց մի շարք արհեստների՝ քարտաշության, որմնադրության, հյուսնության և այլն։ 1906 թվականի տվյալներով Երևանում և՛ արտադրական, և՛ ոչ արտադրական բնույթի բոլոր արհեստանոցները միասին վերցրած ունեին 1681 արհեստավորներ (վարպետներ, բանվորներ և աշակերտներ), իսկ

1 «Эриванские объявления», 1912, №№ 66, 96 և այլուր։
2 Նույն տեղը, 1903, № 22։
3 Նույն տեղը, 1912, № 96։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, գ. 25, թ. 37։

արհեստանոցների թիվը հասնում էր 616-ի [1]։ Այլ կերպ ասած, յուրաքանչյուր արհեստանոցին ընկնում էր մոտ 2,73 վարպետ, բանվոր և աշակերտ։ Դրանից հետո քաղաքի արհեստավորների ու արհեստանոցների թվի խիստ փոփոխություններ տեղի չեն ունենում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երևանը դարձյալ ուներ մի քանի տասնյակ հասնող արհեստներ՝ 500—600 արհեստանոցներով և 1500—1600 արհեստավորներով (վարպետներ, բանվորներ և աշակերտներ)։ Ամենից տարածված արհեստները դերձակությունը, կոշկարարությունը և մաշկակարությունն էին։



Բրուտագործական արհեստանոց (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Երևանը նահանգի արհեստագործության ամենախոշոր կենտրոնն էր։ 1906 թ. տվյալներով Երևանի նահանգի երեք քաղաքների (առանց Նախիջևանի և Օրդուբադի)՝ Երևանի, Ալեքսանդրոպոլի և Նոր Բայազետի արհեստանոցներն ու նրանցում աշխատող արհեստավորները (վարպետները, բանվորները և աշակերտները միասին վերցրած) արտահայտված էին հետևյալ թվերով [2].

1 «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.», отд. 4, էջ 24, աղյուսակ 16։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 24, աղյուսակ 16։

Աղյուսակ 10

№ № է/կ	Քաղաքներ	Արհեստանոցների թիվը	Արհեստավորների թիվը	Մանրթուքյուն
1	Երևան	616	1.681	
2	Ալեքսանդրոպոլ	91	236	
3	Նոր Բայազետ	60	150	
	Ընդամենը	767	2067	



Նմուշներ երևանցիների ձեռագործական աշխատանքներից (Երևանի պատմության թանգարան)։

Աղյուսակի տվյալների համաձայն Երևանի արհեստանոցների ու արհեստավորների թիվը ավելի քան չորս անգամ մեծ էր Ալեքսանդրոպոլի և Նոր Բայազետի արհեստանոցների և արհեստավորների ընդհանուր թվից։

Արխիվային պաշտոնական և ոչ պաշտոնական նյութերում արհեստագործության մասին տվյալներ հաղորդելիս արհեստների թվարկումից բացի սովորաբար դրանք բաժանում էին նաև ըստ խմբերի։ Երևանի արհեստները սովորաբար բաժանվում էին հետևյալ խմբերի՝ սննդամթերքներ պատրաստողների (հացթուխներ, բուլկեղործներ, մսագործներ, հրուշակեղեն պատրաստողներ), հագուստեղեն պատրաստողների (դերձակներ, կոշկակարներ, գլխարկ նարոցներ, նորաձևության վարպետներ), տնային տնտեսության մեջ գործածվող առարկաներ պատրաստողների (վառարանագործներ, ատաղձագործներ, պղնձագործներ, փականագործներ, բրուտագործներ, դարբիններ և այլն) և այնպիսի զբաղմունքների տեր մարդկանց (կառապաններ, ձիաբուժներ և այլն), որոնց իսկական իմաստով արհեստավորներ չենք կարող հաշվել, բացառությամբ ժամագործների։ Վերջիններս պետք է դասվեն երրորդ խմբի մեջ։

Աղյուսակ 11

№ № է/կ	Արհեստի անունը	Արհեստանոցների թիվը	Արտադրանքի ընդհանուր քանակը ռուբլիներով	Մեկ արհեստանոցին ընկնող արտադրանքի քանակը ռուբլիներով
1	Մաշկակարություն	70	24 000	342 ռ. 86 կ.
2	Դերձակություն	69	21 000	304 ռ. —
3	Կոշկակարություն	43	21.000	488 ռ. 37 կ.
4	Արծաթագործություն	26	12 000	461 » 54 »
5	Կաշեգործություն	22	11 700	531 » 81 »
6	Հյուսնություն	66	11.600	175 » 75 »
7	Գրքագործություն	41	10 000	243 » 90 »
8	Թիթեղագործություն	38	8 000	210 » 53 »
9	Փականագործություն	9	8.000	888 » 88 »
10	Դարբնություն	27	6 000	222 » 22 »
11	Թամբագործություն	18	6 000	333 » 33 »
12	Բրուտագործություն	13	5 010	385 » 38 »
13	Զինագործություն	19	5 000	263 » 16 »
14	Ժամագործություն	12	5.000	416 » 66 »
15	Ատաղձագործություն	14	4.000	285 » 71 »
	Ընդամենը՝	487	158.310	

Մեկ արհեստանոցին ընկնող արտադրանքի քանակի մասին

կարող է գաղափար տալ բերված աղյուսակը (№ 11), որի տվյալները վերաբերում են 1900 թ. վերջերին և 1901 թ. սկզբներին [1]։

Աղյուսակից նախ անմիջապես երևում է, որ այնտեղ տեղ են գտել միայն գլխավոր, արտադրական այն արհեստները, որոնք քաղաքի կյանքում խաղում էին ղգալի դեր։ Այնուհետև, մեջ բերված արհեստավորական ձեռնարկությունները իրենց արտադրանքի մասշտաբներով մեծ չէին։ Արտադրանքի ընդհանուր քանակով և արհեստանոցների թվով առաջնակարգ էին՝ մաշկակարությունը (70 արհեստանոց, 24.000 ռ. համախառն արտադրանքով), դերձակությունը (69 արհեստանոց, 21.000 ռ. արտադրությամբ) կոշկակարությունը (43 արհեստանոց, 21.000 ռ. արտադրությամբ) և այլն։ Յուրաքանչյուր մեկ արհեստանոցին ընկնող արտադրանքի ծավալով համեմատաբար առաջնակարգ էին՝ փականագործությունը (որի մեկ արհեստանոցին տարեկան ընկնում էր 888 ռ. 88 կ. արտադրանք), կաշեգործությունը (յուրաքանչյուր արհեստանոցը 531 ռ. 81 կ. միջին տարեկան արտադրանքով) և այլն։ Նշված բոլոր 15 տեսակի արհեստները միասին վերցրած 1901 թ. ավելի քիչ արտադրանք էին տվել, քան միայն Շուստովի կոնյակի գործարանը առանձին վերցրած։

Բ) ԱՌԵՎՏՈՒՐԸ

Երկաթուղու կառուցումը և նրա նշանակությունը: Անեղլս ճանապարհները: Արտաքին և տարանցիկ առևտուրը. արտաքին առևտրի ապրանքները, փոխադրական բնկերությունները, արտաքին առևտրի ծավալը, բամբակի արտահանումը, տարանցիկ առևտրի ապրանքների բնույթն ու ծավալը: Ներքին առևտրի առաջընթացի պատճառները և նորը ներքին առևտրի ասպարեզում: Առևտրական ածերն ու բնկերությունները: Առևտրի ապրանքները: Առևտրի տեղաբաշխումն ըստ բաղարի առանձին մասերի: Բուն բաղարի խանութները, առևտուրը շուկա-հրապարակներում: Գյուղատնտեսական մթերքների կիրակնօրյա վաճառքի կազմակերպումը: Պանդոկային ձեռնարկությունները և դրանց բնույթը: Ապրանքների գները: Անագործ բանվորների ռնալ աշխատավարձի չափը: Շուկայում կատարվող խարդախությունները: Ձափ ու կշիռների բազմազանությունը: Գործակատարությունը:

1 Աղյուսակը կազմված է ըստ ՀՍՍՌ ՊԿՊԱ-ի 117 ֆոնդի 451 գործի 9, 27 և 28 թերթիկներում գրանցված տվյալների։

Անդրկովկասում երկաթուղային շինարարությունը սկսվում է XIX դարի երկրորդ կեսից։ Հայտնի է, որ ցարական կառավարությունը Անդրկովկասում երկաթուղիների շինարարությունը սկսեց ոչ թե այստեղի տնտեսությունն առաջ խթանելու շահերից ելնելով, այլ ռազմա-ստրատեգիական նպատակներով և տարանցիկ առևտրին զարկ տալու համար։ Սակայն չի կարելի միանգամայն ժխտել տնտեսական աղդակները. բնական և գյուղատնտեսական հումքերով հարուստ Անդրկովկասը XIX դարի երկրորդ կեսի՝ զարգացող ռուսական կապիտալիզմի համար չէր կարող հետաքրքրություն չներկայացնել, նրա նավթը, գունավոր մետաղների հանքավայրերը, բամբակը և այլ հումքերը մեծ խթան կարող էին դառնալ ռուսական կապիտալիզմի զարգացման համար, առաջիններս իբրև օբյեկտ տեղում կապիտալ ներդրման, իսկ վերջինը իբրև հումք կենտրոնի տեքստիլ արդյունաբերության համար։

Ժամանակակից պարբերական մամուլը և առանձին հեղինակներ Անդրկովկասի երկաթուղիների շինարարության մասին արձագանքել են մեծ ոգևորությամբ։ Թերթերի, ամսագրերի էջերում և այլ կարգի հրատարակություններում առանձնապես ընդգծվել են երկաթուղիների կառուցման ռազմա-ստրատեգիական, տրանզիտային և ներպետական-տնտեսական նշանակությունը [1]։

Անդրկովկասի երկաթուղային շինարարության պլանը հաստատվում է 1861 թ.։ 1865 թ. սկսվում և 1872 թ. շահագործման է հանձնվում Անդրկովկասի առաջին՝ Փոթի—Թիֆլիս երկաթգիծը։ 1883 թ. ավարտվում է Թիֆլիս—Բաքու երկաթուղու շինարարությունը, որից հետո կառուցվում են նույն այդ մայրուղուց սկսվող և դեպի երկրի տարբեր մասերը ձգվող ճյուղերը՝ Թիֆլիս—Թելավ, Խաշուրի—Բորժոմի, Շորապանի— Ձիաթուրի, Բաքու — Սուրախանի— Սաբունչի և այլն։ Սակայն ամենից կարևոր ճյուղը Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Երևան—Ջուլֆա գիծն է, կամ Հայաստանի գիծը, որը կարելի է համարձակ կերպով համարել այն ժամանակվա Անդրկովկասի համար երկրորդ մայրուղի։ Հենց այդ գիծն է, որ Երևանի քաղաքի համար ուներ և ունի կենսական նշանակություն։

Հայաստանի երկաթուղու կառուցման համար առաջին նախագծերը երևան են գալիս 70-ական թվականների վերջերից, Կարսի

1 Տե՛ս «Кавказ» (газета), 1912, №№ 78, 167 և այլուր, «Сборник свед. о Кавказе», т. 3, Тифлис, 1872, «Վաճառական» (լրագիր), 1866, № 31, «Район Тифлисско—Карсско—Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», Тифлис, 1897 և այլն։

մարզը Ռուսաստանին միացնելուց հետո, ռազմական մինիստրի պահանջով։ Սկզբնական այդ նախագծերը վերաբերում էին դեռևս միայն Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս գծին։ Ճանապարհի ուղղության հետազոտումը և գործնական նախագծերի կազմումը սկսվեցին միայն 1893 թ.։ 1894 թվականին տեղում կատարված հետազոտությունների արդյունքը լինում է այն, որ Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս երկաթուղու համար առաջադրվում են մի քանի ուղղություններ, դրանցից, սակայն, հաստատվում է Բորչալուի վրայով և Դեբեդ ու Փամբակ գետերի հովտով դեպի Ալեքսանդրապոլ ուղղությունը [1]։

Ըստ իրերի դրության, կառուցվելիք Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս գիծը համարվում է հիմնական գիծ, բայց հենց դրա հաստատման ժամանակ (1895 թ.), արդեն նշվում է, որ անհրաժեշտ է Թիֆլիս—Կարս գծի ավարտումից հետո անմիջապես սկսել Ալեքսանդրոպոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղու շինարարությունը։

1895 թ. սկսվում է Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարությունը և այն վերջնականապես շահագործման է հանձնվում 1899 թ. դեկտեմբերի 1-ին [2]։ Այդ երկաթուղու կառուցմամբ հաց առաստ Շիրակն ու հարուստ Կարսի շրջանը կապվում են Թիֆլիսի հետ։ Սակայն դեռևս առանց երկաթուղային կապի է մնում Արևելյան Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտն ու Երևան քաղաքը։

Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու ուղղության ուսումնասիրումը և համապատասխան նախագծերի կազմումը ավարտվել էին դեռևս 1894 թ.՝ Թիֆլիս—Կարս երկաթուղու ուղղության հետազոտության հետ միասին [3]։ Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ 135-րդ ֆոնդում պահպանված են Թիֆլիս—Երևան երկաթգծի հետ կապված բազմաքիվ գծագրեր՝ իրենց համապատասխան բացատրագրերով, որոնք վերաբերում են այդ երկաթուղու առանձին հատվածներին, շինարարական տեղամասերին, նախագծվող առանձին կառույցներին (կամուրջներ, կայանների շենքեր, հսկման կետեր և այլն, և այլն)։

Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթգծի ամբողջական նախագիծը հաստատման է ներկայացվում 1898 թ. [4]։ Պարզվում է, որ ըստ նախագծի երկաթգիծը Ալեքսանդրոպոլից Սարդարապատի (Հոկտեմբերյան) և Ուլուխանլուի (Մասիս) վրայով ուղիղ դիմելու է դե-

1 «Кавказ», 1895, № 198, «Район Тифлисско—Карсско—Эриванской жел. дороги в экономич. и коммерч. отношениях», էջ 187—189։

2 «Памятная книжка Эриванской губернии на 1903 год», отд. 5, էջ 45։

3 «Кавказский календарь на 1896 год», отд. 5, էջ 187։

4 «Обзор Эриванской губернии за 1898 год», էջ 17։

պի ոստ-պարսկական սահմանագլխին գտնվող Ջուլֆա՝ շրջանցելով Երևան քաղաքը, որը Ուլուխանլուից գտնվում էր մոտ 13 վերստ հեռավորության վրա։ Այդ անշուշտ մեծ հարված էր Երևանի համար։ Քաղաքային օրգանները չէին կարող անտարբեր անցնել այդ՝ քաղաքի տնտեսական կյանքի համար հույժ կարևորություն ունեցող հարցի կողքով, ուստի առանց հապաղելու նույն 1898 թ. հունիսի վերջերին կայացրած իր արտակարգ նիստում քաղաքային դուման քաղաքային վարչության միջոցով հարց է հարուցում համապատասխան օրգանների առջև՝ Ալեքսանդրոպոլ—Ջուլֆա երկաթուղին Երևանով անցկացնելու մասին, գործի ընթացքին հետևելու համար ընտրելով վեց հոգուց բաղկացած մի հանձնաժողով։ Քաղաքային դումայի պահանջը նույնությամբ չի կատարվում, Երևանը նախագծով թողնվում է փակուղում, հիմնական գիծը դարձյալ անց են կացնում Ուլուխանլուով, մի առանձին ճյուղով քաղաքը միացնելով վերջինիս հետ։ Այդ է պատճառը, որ «Մուրճ» ամսագրում, խոսելով Երևանի քաղաքային դումայի 1899—1901 թթ. գործունեության մասին, արձանագրվում է, որ այդ շրջանում լուծում չեն ստացել երկու հարց, որոնցից մեկը համարվում է Երևանը հարսկաստան տանող երկաթուղու համար գլխավոր կայարան դարձնելու հարցը, նշելով, որ Երևանը մնացել է փակուղու մեջ [1]։

Երևանի քաղաքային դուման՝ գիտակցելով քաղաքի տնտեսության համար երկաթուղու ունենալիք մեծ ու վերափոխիչ դերը, իր հնարավորության սահմաններում օգնել, օժանդակել է դրա շինարարությանը։ Արխիվային նյութերը ցույց են տալիս, որ Ալեքսանդրոպոլից մինչև Ուլուխանլու և Ուլուխանլուից մինչև Երևան երկաթուղին անցկացնելու, ինչպես և կայարանների ու այլ օժանդակ կառույցների և պետքերի համար զբաղեցվելու էր մինչև 820 դեսյատին հողային տարածություն [2]։ Այդ հողային տարածությունների մի զգալի մասը բաժին էր ընկնում Երևանի գավառին և Երևան քաղաքին։ Երկաթուղու՝ Երևանի քաղաքային գծի ներսում ձգվող հատվածի, քաղաքային կայարանի և այլ օժանդակ շենքերի համար համապատասխան հողային տարածություն տրամադրվում է քաղաքապատկան հողերի հաշվին։

Թիֆլիս—Կարս երկաթուղու կառուցման վարչության հաղորդագրության համաձայն, 1899 թ. այդ գծով, որը Երևանի նահանգի տերիտորիայով անցնում էր 88 վերստ երկարությամբ, բացվում է

1 «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1902, № 6, էջ 196։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 135, գ. 309, թ. 11։

կանոնավոր երթևեկություն[1]։ Նույն թվականին Ալեքսանդրոպոլ—Երևան գծից կառուցվել էր միայն 6 վերստ՝ սկսած Ալեքսանդրոպոլից մինչև այն կետը, որտեղից Երևանի գիծը պետք է ուղղվեր դեպի հարավ-արևելք՝ անջատվելով Կարսի գծից[2]։ Հաջորդ տարում Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու կառուցման վարչությունը հաղորդում է, որ 1901 թ. հունվարի մեկի դրությամբ կատարված էին հետևյալ աշխատանքները. ա) ավարտված են հիմնական գծի և կայարանային գծերի հողային բոլոր աշխատանքների 60 տոկոսը, բ) Ալեքսանդրոպոլից սկսած ռելսեր են դրված 35 վերստի վրա, գ) պատրաստված են 100 վերստի համար պահանջվող շպալները (200.000 հատ), դ) պատրաստված է բուրից ու ձյունից պաշտպանվելու հարմարանքի մի մասը, ե) գծի ամբողջ երկարության $^2/_3$ մասում դրված է հեռագրագիծը և կատարված է ջրամատակարարման համար պահանջվող խողովակների դրման աշխատանքների 65 տոկոսը[3]։ Հաջորդ՝ 1902 թ. հունվարի 1-ին արդեն լրիվ պատրաստ է եղել երկաթուղու գծածիրը (трасса), բացառությամբ 35-րդ վերստի, որտեղ կառուցված է եղել ժամանակավոր անցումային ճանապարհ, լիովին ավարտված էին քարի թափվածքը, կամուրջները, ռելսերի դցումը, հեռագրագիծը, իսկ ճանապարհային ու կայարանային կառույցները պետք է ավարտվեին 1902 թ. գարնանը։ Ընդհանրապես նախատեսվել էր ամբողջ գիծը՝ Ալեքսանդրոպոլից մինչև Երևան, որ ունի 146 վերստ (150 կմ) երկարություն, ավարտել 1902 թ. գարնանը[4]։

Մեր օրերի պատմա-տնտեսագիտական որոշ աշխատություններում մի փոքր անճիշտ է տրված այդ գծի վերջնական ավարտման տարեթիվը։ Այսպես, Ա. Օհանյանի մոտ գրված է, թե այդ երկաթգիծը ավարտվել է 1901 թվականին[5], իսկ Հովհ. Թումանյանը նշում է, որ իբր Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու Ուլուխանլու—Երևան հատվածը կառուցվել է միայն 1908 թվականին[6]։ Մինչդեռ նշված երկաթուղու շինարարությունը լիովին ավարտվել է 1902 թ. գարնան վերջերին, իսկ կանոնավոր երթևեկությունը սկսվել

ՀՍՍՌ ՊԿՊԱ, գ. 14, թ. 19, գ. 27, թ. 28—30։

3 «Обзор Эриванской губернии за 1899 год», էջ 16։

1 Նույն տեղը, за 1900 год, էջ 17։

4 Նույն տեղը, за 1899 год, էջ 21—22։

5 Ա. Օհանյան, Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 30, Երևան, 1950, էջ 257)։

6 О. Е. Туманян, Экономич. развитие Армении, ч. I, էջ 260։

է նույն թվականի վերջերին՝ 1902 թ. դեկտեմբերի 5-ից[1], ինչպես միանգամայն իրավացիորեն նկատում է նաև Ա. Օհանյանը, որի կատարած հաշիվներով Սադախլու կայարանից մինչև Երևան երկաթգծի վրա ծախսվել էր մոտ 24 մլն ոսկի ռուբլի, այդ թվում Ալեքսանդրոպոլ—Երևան հատվածի վրա մոտ 12 մլն ռուբլի[2]։

Երկաթուղին հսկայական նշանակություն ուներ Արարատյան արդավանդ դաշտի և Երևան քաղաքի համար։ Այդ քաջ գիտակցում էին նաև ժամանակակիցները։ Նոր երկաթուղին ողջունում էին ե՛ւ Երևանի քաղաքացիները, և՛ հայկական պարբերական մամուլը, և՛ առանձին հեղինակներ։ Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» լրագիրը մեծ կարևորություն տալով Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու կառուցմանը և հետագայում երկրի կյանքում դրա կատարելիք մեծ դերին՝ մի քանի խղճահարություններով և առաջնորդող հոդվածով ընդգծում և պրոպագանդում է նորակառույց երկաթուղու վերափոխիչ մեծ նշանակությունը[3]։ Թերթերի էջերում կոչ է արվում գյուղատնտեսությունը բարձրացնելու, ոռոգման սիստեմներ ստեղծելու, արդյունաբերությունը, արհեստագործությունը և առևտուրը զարգացնելու, խոշոր արտադրություն կազմակերպելու համար, կոչ է արվում երկրի տնտեսական հնարավորությունները ուսումնասիրելու և դրանք կապիտալիզմի շահերին ծառայեցնելու համար։ «Մշակ»-ի առաջնորդող հոդվածում կարդում ենք. «Եթե մի Բաղդատի երկաթուղի այնքան կարող էր հետաքրքրություն հարուցել ոչ միայն Եվրոպայում, այլև մեզանում, իրավացի կլիներ սպասել, որ մեր երկրի մի նշանավոր մասով անցնող և մեր երկիրը Պարսկաստանի հետ կապող երկաթուղին կատարելապես արժանանար մեր տնտեսագետների առանձին ուշադրության»[4]։

Երկաթուղու նշանակությունը առանձնապես մեծ էր Երևան քաղաքի համար։ Մենք տեսանք, թե երկաթուղին ինչքան մեծ դեր խաղաց արդյունաբերության զարգացման, խոշոր արդյունաբերության առաջացման մեջ։ Սակայն, ինչպես կտեսնենք, է՛լ ավելի մեծ էր նրա դերը քաղաքի արտաքին և ներքին առևտրի բնագավառում։ Երկաթուղու կառուցումից հետո, մանավանդ երբ այն շարունակվեց մինչև պարսկական սահմանագլուխ՝ մինչև Ջուլֆա, Երևանի

---


1 «Մշակ», 1902, № 273, դեկտեմբերի 11։

2 Ա. Օհանյան, Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 30, էջ 257)։

3 «Մշակ», 1902, №№ 261, 273։

4 «Մշակ», 1902, № 261, 26 նոյեմբերի։

առանցիկ նշանակությունը հսկայական չափով մեծացավ, թեպետև փակուղու մեջ լինելով՝ դեպի Պարսկաստան գնացող բեռների մի մասն առանց քաղաք մտնելու ուղղակի անցնում էր Ալեքսանդրով։ Երկաթուղին փոփոխություններ մտցնելով քաղաքի տնտեսական կյանքում՝ նպաստեց նրա հասարակության սոցիալական կառուցվածքի և հասարակական հարաբերությունների փոփոխմանը։



«Երևան» երկաթուղային կայարանը (1905 թ.)
(ՀՍՍՌ հեղափոխության պետական թանգարան)

Երկաթուղու բացումը Երևանում կատարվում է 1902 թ. դեկտեմբերի 5-ին, հանդիսավոր պայմաններում։ Երկաթուղու հետ մեծ հույսեր էին կապում գլխավորապես խոշոր կապիտալի ներկայացուցիչները, ձեռնարկատերերն ու խոշոր վաճառականները։ Երկաթուղին առաջադիմական մեծ դեր է խաղացել քաղաքի կյանքում ընդհանրապես։ Դրա հետ միաժամանակ չպետք է մոռանալ, որ երկաթուղին պատճառ է դարձել լայն սպառման առարկաների ու աննդամթերքների գների բարձրացմանը այն աստիճան, որ դրանից շատերը անմատչելի կամ, համենայն դեպս, քիչ մատչելի է դարձել աշխատավորական լայն զանգվածների համար։ Կ. Մարքսը, բարձր գնահատելով երկաթուղիների առաջադիմական նշանակությունը, միաժամանակ գրում է, թե նույն երկաթուղիների պատճառով «կառավարությունների կողմից երկաթուղիների համար վերցրված նոր պարտքի բեռը ուժեղացնում էր ճարակների պրեսի ճնշումը մասսաների վրա», որ երկաթուղիների պատճառով «տեղական արտադրության պրոդուկտները հնարավորություն ստացան դառնալու կապիտալիստական ոսկի, այդ պրոդուկտներից շատերը, որոնք առաջ վաճառահանման բացակայության պատճառով էժան էին,

ինչպես, օրինակ՝ մրգերը, գինին, ձուկը, որսը և այլն, զգալիորեն անմատչելի դարձան մասսաների համար իրենց բանկուրյան շնորհիվ և, այդպիսով, ժողովուրդն այլևս չէր կարող սպառել դրանք»[1]։ Այդ ընդհանրացումը լիովին վերաբերում է նաև գերազանցապես հումք արտադրող Երևանի նահանգին ու նրա կենտրոնին, որտեղ, ինչպես քիչ հետո կտեսնենք, իրոք որ շատ աննդամթերքների գներ երկաթուղու պատճառով զգալի չափով բարձրացան, դրանով իսկ իջեցնելով քաղաքի աշխատավորության կենսամակարդակը։

Անդրկովկասյան երկաթուղու հարավային կամ Հայաստանի մայրուղու վերջին հատվածը՝ Երևան—Ջուլֆան, կառուցվում է Ալեքսանդրապոլ—Երևան դծից անմիջապես հետո։ Այդ գծի շինարարությունը ավարտվում է 1906 թվականին, և դրանով սկսվում է երթևեկություն, թեպետև բավական ժամանակ դեռ չէր կանոնավորվել։ Ջուլֆան հետագայում (1916 թ.) միացվում է Թավրիզի հետ։ Հարավային գծի Ջուլֆա—Թավրիզ հատվածը Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայից հետո առանց փոխհատուցման ամբողջովին հանձնվեց Պարսկաստանին։

Երևան քաղաքի համար, այսպիսով, երկաթուղին դարձավ հաղորդակցության գլխավոր զարկերակը։ Սակայն դրա կողքին քաղաքի տնտեսական կյանքում շարունակում էին կարևոր դեր խաղալ նաև քաղաքում հանդուցվող պետական խճուղիները և տեղական ճանապարհները, որոնց մասին բավականաչափ ասված է սույն աշխատության նախորդ գրքում։

Այժմ միայն մի քանի խոսք այդ ճանապարհների վիճակի ու նշանակության մասին 1880—1914 թվականների դրությամբ։

Երևանից դուրս եկող և Երևան մտնող անուն ճանապարհները իրենց կազմով մնացին նույնը, ինչ գոյություն ուներ նախորդ շրջանում, բացառությամբ Երևան — Էջմիածին—Մարթարա—Իգդիր ճանապարհի, որը ենթարկվեց հիմնական վերակառուցման և դարձվեց պետական առաջին կարգի խճուղի։ Այս խճուղու կառուցումը սկսվում է XIX դարի 80-ական թվականներից, բայց այն կատարվում է մեծ ձգձգումներով։ Երևան—Իգդիր ճանապարհը ռազմաստրատեգիական առումով առաջնակարգ ճանապարհ էր, այդ էր պատճառը, որ հաղորդակցության ճանապարհների մինիստրին ուղղված Կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի 1893 թ. միջնորդության մեջ խոսվում է նաև այս ճանապարհի վերակառուց-

1 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 27, Москва, 1935, էջ 33։

ման ու բարեկարգման մասին [1]։ Ճանապարհի բարեկարգումն ու խճապատումը, սակայն, ձգձգվում էր։ Միայն մոտալուտ պատերազմի վտանգը հարկադրեց ցարական օրգաններին անհապաղ զբաղվել նաև Երևան—Իգդիր ճանապարհի բարեկարգման հարցով։ Եվ ահա 1911 թ. դեկտեմբերի 17-ին կազմվում է մի հանձնաժողով՝ համապատասխան մասնագետ-ինժեներների մասնակցությամբ, որը տեղում ուսումնասիրելով ճանապարհի վիճակը [2], պազմում է համապատասխան ակտ։ Ակտի հիման վրա Կովկասի հաղորդակցության ճանապարհների օկրուգի պետը Կովկասի ռազմական օկրուգի շտաբին հաղորդում է, որ ինքը անձամբ եղել է Երևան—Իգդիր ճանապարհում, և վաղուց գոյություն ունեցող այդ ճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում։ Այնուհետև նա հաղորդում է, որ այդ ճանապարհը անհապաղ պետք է բարեկարգվի ու խճապատվի՝ նկատի ունենալով ռազմական առումով նրա հույժ կարևորությունը և տնտեսական առումով մեծ օգտակարությունը [3]։ Ռազմական օրգանների ուշադրությանն արժանացած այդ խճուղու կառուցումը ավարտվում է 1913 թվականին։

Քաղաքի անռելս մյուս ճանապարհների բարեկարգման ուղղությամբ արմատական ոչինչ չի կատարվում, եթե նկատի չունենանք առօրյա հսկողությունն ու վերանորոգումները, որոնք զգալի որևէ փոփոխություն չէին մտցնում դրանց վիճակի մեջ։

Ինչպես նախորդ շրջանում, այնպես էլ 1880—1917 թթ. Երևանի անռելս ճանապարհների մեջ ամենաառաջնակարգը և մեծ նշանակություն ունեցողը մնում էր Երևան—Ազստաֆա պետական խճուղին։ Այս ճանապարհի նշանակությունը առանձնահատուկ էր մանավանդ մինչև երկաթուղու կառուցումը։ 1893 թվականի տվյալներով Երևանից դեպի Ազստաֆա էին փոխադրվել 771.800 փութ կանեփան բեռներ, իսկ Ազստաֆայից դեպի Երևան՝ 626.800 փութ [4]։ Այդ նույն թվականին դեպի Ազստաֆա և հակառակ ուղղությամբ երթևեկել են մոտ 9000 ֆուրգոններ, մոտ 4400 սայլեր, ավելի քան 8200 ուղտեր և տրանսպորտային այլ միջոցներ [5]։

1 «Экономический вестник Армении», 1925, № 4 (12), էջ 67—73։

2 Այդ հանձնաժողովի գրավոր եզրակացությունը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 135, գ. 385, թ. 21—24։

3 Նույն տեղը, թ. 37։

4 Տե՛ս С. Заваров, Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899, էջ 383։

5 Նույն տեղը։

Երկաթուղու կառուցումով մեծ հարված հասցվեց Երևան—Ազստաֆա խճուղուն։ 1902 թվականից բեռների մեծ մասը սկսեցին փոխադրել երկաթուղով։ Ա. Օհանյանի կատարած հաշվումներով այդ խճուղու ուղղությամբ երթևեկող ֆուրգոնչիների, ուղտապանների, սայլապանների և բեռների փոխադրմամբ մյուս զբաղվողների եկամուտները տարեկան մեկ միլիոն ռուբլուց իջան 100.000 ռուբլու [1]։ Նրանցից շատերը տեղափոխվեցին այլ ճանապարհների, հատկապես՝ Ջուլֆա—Թավրիզ տարանցիկ ճանապարհի վրա։

Իբրև փոխադրական միջոցներ նախորդ ժամանակների նման առաջնակարգ նշանակություն ունեին ֆուրգոնները, սայլերը և ուղտերը։ Տեղական փոխադրություններում կարևոր դեր էին խաղում ձիերը, էշերը, ջորիները և գոմեշները։

80-ական թվականների սկզբներին Երևան քաղաքից դեպի տարբեր տեղեր տարվող բեռների յուրաքանչյուր փութը 100 վերստ փոխադրելու համար միջին հաշվով պահանջվում էր 25 կ. փոխադրավարձ [2]։ Այլ կերպ ասած, մեկ փութը մեկ վերստ փոխադրելու վարձը մեկ քառորդ կոպեկ էր։

Հետագայում, 90-ական թվականներին և XX դարի սկզբներին փոխադրավարձը բավական բարձրանում է, չնայած երկաթուղու կառուցման շնորհիվ բեռնաշրջանառությունը Երևան—Ազստաֆա ուղղությամբ և մի քանի ճանապարհներով մեծապես նվազում է։ Ըստ Զալարոպի բերած տվյալների Երևանից դուրս եկող անռելս ճանապարհներում փոխադրավարձը հասնում էր հետևյալ չափերի [3]։

Աղյուսակ 12

№ № կ/կ	Ճանապարհների ուղղությունները	Ճանապարհի բնդհանուր երկարությունը վերստներով	Մինչև ճանապարհի վերջնակետը 1 փութ տեղափոխելու վարձը
1	Երևան—Ջուլֆա	189	20—40 կ.
2	Երևան—Ազստաֆա	176	15—45 կ.
3	Երևան—Իգդիր	56	10—15 կ.

Ինչպես տեսնում ենք, փոխադրավարձը բավական բարձր էր։ Դրա չափը պայմանավորված էր ոչ միայն տվյալ ժամանակաշրջա-

1 Ա. Օհանյան, Անռելս տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 43, էջ 39)։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1085, թ. 8։

3 Տվյալները տե՛ս «Район Тифлисско—Карсско—Эриванск. жел. дороги», էջ 767։

ջանի տրանսպորտային միջոցների կատարելիության աստիճանից, այլև ճանապարհների վիճակից ու նույնիսկ տարվա եղանակից։

Երկաթուղու կառուցումը և անռելս ճանապարհների, հատկապես Երևան—Ազստաֆա, Երևան—Ջուլֆա և Երևան—Իգդիր խճուղիների բարեկարգումը մեծ խթան հանդիսացան քաղաքի առևտրի, առանձնապես նրա արտաքին ու տարանցիկ առևտրի զարգացման համար։ Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Երևան—Ջուլֆա երկաթուղին Երևանը դարձրեց Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կատարվող տարանցիկ առևտրի կարևորագույն կետերից մեկը, թերևս ամենակարևոր կետը այդ առևտրում։

Քաղաքի արտաքին առևտուրը մեզ հետաքրքրող շրջանում ծավալվում է մեծ թափով։ Ավելանում է բեռնաշրջանառությունը, ճոխանում է արտահանվող ու ներմուծվող ապրանքների կազմը, երևան են գալիս վաճառականական և վաճառականական-արդյունաբերական ընկերություններ, որոնք զարկ են տալիս քաղաքի արտաքին առևտրին, բեռների փոխադրման մեջ սկսում են մեծ դեր խաղալ հատուկ այդ նպատակի համար կազմված ընկերությունները։

Նախորդ ժամանակաշրջանի նման այս ժամանակաշրջանի Երևանի արտաքին առևտուրը ևս պետք է բաժանել երկու հատվածի՝ նեղ իմաստով արտաքին առևտրի և տարանցիկ առևտրի, թեպետև մի քաղաքի մասշտաբով դրանք իրարից խիստ սահմանազատելը կապված են ոչ փոքր դժվարությունների հետ։ Երևան քաղաքի արտաքին առևտուրը մենք համարում ենք առևտրի այն հատվածը, որը կատարվում էր, մի կողմից, Երևանի նահանգի և նրա կենտրոն Երևան քաղաքի, իսկ, մյուս կողմից՝ ռուսական պետության տարբեր մասերի և օտար պետությունների միջև։ Իր ծավալով արտաքին առևտուրը զիջում էր տարանցիկ առևտրին, որը հիմնականում կատարվում էր Երևանի վրայով Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև։

Երևան քաղաքն ու Երևանի նահանգն իրենց արտաքին առևտուրը հիմնականում կատարում էին ռուսական կայսրության մյուս, հատկապես կենտրոնական նահանգների հետ։ Ցարական կառավարությունը բոլոր միջոցներով ձգտում էր, որպեսզի ինչպես Երևանի նահանգը, այնպես էլ սահմանային մյուս շրջանները իրենց անհրաժեշտ ապրանքները պատվիրեն ոչ թե արտասահմանում, այլ ստանան պետության կենտրոնական մասերից։ Պետության ներքին գործերի մինիստրության 1901 թ. հուլիսի 25-ի՝ Երևանի նահանգապետին ուղղված պաշտոնական գրությունով հանձնարարվում և պահանջվում է Երևանի նահանգին և նրա քաղաքներին անհրաժեշտ

ապրանքները պարտադիր կերպով ստանալ Ռուսաստանից, օտար երկրներում պատվիրել միայն այն ապրանքները, որոնք Ռուսաստանում չեն արտադրվում [1]։ Այլ կերպ ասած, խրախուսվում էր ներպետական առևտուրը և դրանով իսկ նպաստավոր պայմաններ էր ստեղծվում հայրենական արդյունաբերության զարգացման համար։

Երևանի նահանգի առևտրական մեծ հանգույցի՝ Երևան քաղաքի և Ռուսաստանի միջև առևտրի զարգացման ֆոնի վրա Երևան քաղաքում 90-ական թվականների սկզբներից գործում էին փոխադրական երկու ընկերություններ՝ «Նադեժդա»-ն և «Ռուսական ընկերություն»-ը։ Մեր ձեռքի տակ եղած ոչ լրիվ տվյալների համաձայն երկաթուղու կառուցումից 8—9 տարի առաջ միայն մեկ տարվա ընթացքում (1893 թ.) Երևան—Ազստաֆա խճուղով «Նադեժդա»-ն ուղարկել է 215.942 և ընդունել 103.280 փութ զանազան ապրանքներ։ Նույն թվականին «Ռուսական ընկերություն»-ը առաքել է 285.000 և ստացել 90.000 փութ [2]։ Երևան քաղաքից դրանք ուղարկում էին՝ բամբակ, մրգեղեն, դինի, սպիրտ (և կոնյակ), Ռուսաստանից ստանալով արդյունաբերական ապրանքներ (գործվածքներ, երկաթեղեն, շաքար և այլն) և հացահատիկներ [3]։ Հետագայում, երկաթուղու կառուցումից հետո, Ռուսաստանի տարբեր մասերից ստացվող ապրանքների տեսակներն ավելանում են։ XX դարի սկզբներից Երևանում ստացվող ապրանքների կազմում բացի նշվածներից արդեն ամենուրեք հիշատակվում են շամիչը, շինափայտը, նավթը, անտրացիտը և այլն [4]։

Մինչև երկաթուղու կառուցումը, Ռուսաստանի հետ կատարվող առևտուրը՝ փոխադրման դժվարությունների հետ կապված ուներ համեմատաբար սահմանափակ ծավալ, եթե նկատի չունենանք Երևանից դեպի Ռուսաստան ուղարկվող բամբակը, որի արտահանումը 80-ական թվականներից սկսած ընդունում է մեծ ծավալ՝ գրեթե ամբողջ բերքը արտահանվում էր։ Ոչ լրիվ հաշվումներով, 1890-ական թվականների սկզբներից Երևանից և Ալեքսանդրոպոլից դեպի Անդրկովկասի զանազան քաղաքներ ու Ռուսաստան են ուղարկվել և ստացվել շուրջ 2.500.000 փութ զանազան ապրանքներ, որոնց $^3/_5$ մասը բաժին էր ընկնում Երևանի նահանգին՝ առանց

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 486, թ. 8։

2 Տե՛ս «Район Тифлисско—Карсско—Эриванской железн. дороги в экономич. и коммерч. отношен.», էջ 39։

3 Նույն տեղը։

4 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1912 г», էջ 89—107։

Ալեքսանդրոպոլի գավառի, իսկ մյուս $^2/_5$ մասը՝ Կարսի մարզին և Ալեքսանդրոպոլի գավառին[1]։ Ստացվող ապրանքների մի մասը մնում էր երկրի ներսում, իսկ մյուս մասը՝ մոտ 150.000 փութը, իբրև տարանցիկ առևտրի ապրանքներ, Երևանի նահանգի և Կարսի մարզի վրայով արտահանվում էր դեպի Պարսկաստան ու Թուրքիա։ Ս. Զավարովի տվյալներով 90-ական թվականներին Երևանից ու Ալեքսանդրոպոլից դեպի պետության այլ մասերն արտահանում և ներմուծում էին հետևյալ տեսակի ու քանակի ապրանքներ[2].

Աղյուսակ 13

№ № ը/կ	Ներմուծում		№ № ը/կ	Արտահանում	
	ապրանքների տեսակները	հազար փթերով		ապրանքների տեսակները	հազար փթերով
1	Հացահատիկներ (ցորեն, գարի, տարեկան, բրինձ) և ցորենի ալյուր	265	1	Բամբակ	480
2	Կերոսին	220	2	Հացահատիկներ (ցորեն, գարի, տարեկան) և ալյուր	363
3	Մանուֆակտուրա	210	3	Մրգեղեն և բանջարեղեն	200
4	Արդուզարդ, նպարեղեն, դեղորայք	150	4	Աղ	80
5	Շաքար և շաքարավազ	100	5	Օդի և այլ խմիչքներ	40
6	Երկաթեղեն	65	6	Մետաքս, յուղ և ծխախոտ	26
7	Անտառանյութ	35	7	Կաշի և մորթի	25
8	Նավթ	25	8	Մանուֆակտուրա	15
9	Գինիներ	25	9	Գինիներ	15
10	Օդի և այլ խմիչքներ	10	10	Երկաթեղեն	10
11	Փայտե շինվածքներ	10	11	Բուրդ	10
12	Շինանյութեր (գնմենտ և ասֆալտ)	10	12	Զանազան պատահական ապրանքներ	50
13	Կաշի և մորթի	2			
14	Զանազան պատահական ապրանքներ	50			
	Ընդամենը	1177		Ընդամենը	1314

Ինչպես տեսնում ենք, արտահանվող ու ներմուծվող ապրանքների կազմը բազմազան է, իսկ քանակը՝ բավական մեծ։ Ապրանքների կազմին նայելով՝ կարելի է մոտավոր ճշտությամբ ասել, թե դրանցից որոնք են կազմել Երևանի արտահանման ու ներմուծման ապրանքները, իսկ որոնք՝ Ալեքսանդրոպոլի։ Ներմուծվող ապրանքներից հացահատիկները (թերևս միայն բացառությամբ բրնձի) և

1 Տե՛ս С. Завaров, Опыт исслед. сельского хозяйства хлебородного района Эриванск. губ. и Карсск. обл., էջ 382։

2 Նույն տեղը։

կաշին ու մորթեղենը բաժին էին ընկնում Երևանին, օղին, գինիները և մյուս խմիչքները՝ Ալեքսանդրոպոլին, իսկ կերոսինը, մանուֆակտուրան, արդուզարդը, շաքարը, նավթը, երկաթեղենը, փայտե շինվածքները և այլ ապրանքներ՝ ներ էին մուծվում և՛ Երևան, և՛ Ալեքսանդրոպոլ։ Արտահանվող ապրանքներից Երևանի բաժինը հիմնականում բաղկացած էր բամբակից, մրգեղենից և բանջարեղենից, ձուից, գինուց և այլ խմիչքներից, մետաքսից, մանուֆակտուրայից և այլ ապրանքներից, իսկ Ալեքսանդրոպոլի բաժինը՝ գերազանցապես հացահատիկներից և աղից։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ Ռուսաստանից Երևան, մասամբ նաև Ալեքսանդրոպոլ, բերված ապրանքների, մանուֆակտուրայի, դեղորայքի, շաքարեղենի և այլ ապրանքների մի մասը արտահանվում էր դեպի Պարսկաստան ու Թուրքիա, իսկ վերջիններից ներմուծված որոշ ապրանքների (մետաքս, մրգեղեն, կաշվեղեն և այլն) մի մասը նույն քաղաքների վրայով արտահանվում էր դեպի Թիֆլիս ու Ռուսաստանի զանազան քաղաքներ։ Այլ կերպ ասած, ներմուծման և արտահանման ապրանքների մի մասը վերաբերում է Ռուսաստանի և Պարսկաստանի ու Թուրքիայի միջև կատարվող տարանցիկ առևտրին։

Երևան և Ալեքսանդրոպոլ ներմուծված բոլոր ապրանքների, քաշով արտահայտված, մոտ 90 տոկոսը կազմում էին հացահատիկները, կերոսինը, մանուֆակտուրան, արդուզարդն ու նպարեղենը և շաքարը։ Նույն քաղաքներից արտահանվող ապրանքների ընդհանուր քանակի ավելի քան 79,3 տոկոսը կազմում էին միայն բամբակը, մրգեղենն ու բանջարեղենը և հացահատիկները։ Իսկ դրանցից առաջինները արտահանվում էին միայն Երևանից։ Երևան քաղաքի համար առանձնահատուկ նշանակություն ուներ բամբակի արտահանումը, որի վրա անհրաժեշտ է մի փոքր ավելի հանգամանորեն կանգ առնել։

Երևանի նահանգը իր բամբակագործությամբ դեռևս 60-ական թվականներից դարձել էր ռուսական տեքստիլ արդյունաբերության զարգացման հումքային հուսալի բազաներից մեկը։ 80—90-ական թվականներին Երևանի նահանգում բամբակագործությունը հասնում է մեծ հաջողությունների. ավելանում են բամբակի պլանտացիաները և բերքատվությունը, իսկ դրանց շնորհիվ ավելանում է նաև բամբակի արտահանման քանակը։ Ըստ մեզ հասած ոչ պաշտոնական տվյալների, Երևանի նահանգի բամբակի ամբողջ բերքը

փթերով արտահայտված բամբակենու առանձին տարիների հետևյալ պատկերն է ներկայացնում [1].

Աղյուսակ 14

1880	1881	1882	1883	1884	1885	1886	1887	1888	1889	1890	1898	1899	1902
81.084	42.828	74.183	93.262	98.920	14.960	157.024	326.084	333.370	508.764	506.380	430.000	320.000	481.000

Աղյուսակը ցույց է տալիս, որ Երևանի նահանգում 80-ական թվականների սկզբներից բամբակի մշակությունը գնալով ծավալվում է։ 1880 թ. համեմատությամբ 1902 թ. հավաքված բամբակի ընդհանուր բերքը ավելանում է ավելի քան 5 անգամ, իսկ առանձին տարիներում (1889 և 1890 թթ.) 1880 թ. նկատմամբ բերքը մեծ էր ավելի քան 6,2 անգամ։ Բերքի մեծությունը կախված է եղել սեզոնի բարենպաստությունից։ XX դարի առաջին տասնամյակում բամբակագործության զարգացումը շարունակվում է, բայց 1899—1902 թթ. նկատմամբ առանձին մեծ բեկում չի նկատվում։ Այնպես որ, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երևանի նահանգի բամբակի ընդհանուր բերքի քանակը 1899—1902 թթ. ստացված բերքի նկատմամբ մեծ տարբերություններ չուներ, իսկ պատերազմի ընթացքում բամբակագործությունն անկում է։

Բամբակի գինը կախված է եղել դրա տեսակից, բերքից, Մոսկվայում, Յարոսլավլում, Իվանովոյում և այլ քաղաքների շուկաներում ունեցած գներից ու այլ պայմաններից։ Երևանի շուկայում՝ կապված նշված մի շարք այլ պայմանների հետ՝ բամբակի գինը միշտ տատանվել է բավական մեծ տարբերություններով։

1887—1902 թթ. Երևանի շուկայում առաջին կարգի բամբակի միջին գներն ըստ տեսակների տատանվում էին հետևյալ թվերի սահմաններում (աղյուսակ 15)[2]։ Նույն տեսակների երկրորդ կարգի բամբակի փութը առաջին կարգից էժան էր 50 կոպեկով, իսկ երրորդ կարգը երկրորդից՝ դարձյալ էժան էր 50 կոպեկով [3]։

1 Աղյուսակի 1880—1889 թթ. տվյալները վերցված են «Эриванский сборник»-ից (вып. 1, Эривань, 1892, էջ 93), 1890 թվականինը՝ «Памятная книжка. «Эриванской губернии на 1892 год»-ից, 1898—1899 թթ.՝ «Մուրճ» ամսագրից (1907, № 7, էջ 238), իսկ 1902 թ.՝ «Памятная книжка Эриванской губернии на 1904 год»-ից (отд. 2, էջ 76, աղյուսակ 17)։

2 1887 և 1900 թթ. վերաբերող տվյալները վերցված են «Эриванский сборник»-ից (вып. 1, 1892, էջ 104), իսկ 1902 թվականինը՝ «Памятная книжка Эриванской губернии на 1904 г»-ից (отд. 2, էջ 76, աղյուսակ 17)։

3 «Эриванский сборник», вып. 1, էջ 104։

Մ ե կ փ թ ի գ ի ն ը

1887 թ.			1890 թ.			1902 թ.		
ամերիկյան տեսակի	տեզական տեսակի	միջին	ամերիկյան տեսակի	տեզական տեսակի	միջին	ամերիկյան տեսակի	տեզական տեսակի	միջին
11 ռ.—12 ռ. 50 կ.	9 ռ.—11 ռ.	10 ռ.—11 ռ. 75 կ.	6 ռ. 60 կ.—8 ռ.	4 ռ. 80 կ.— 6 ռ. 20 կ.	5 ռ. 70 կ.— 7 ռ. 10 կ.	9 ռ. 50 կ.— 11 ռ. 50 կ.	8 ռ. 30 կ.—10 ռ.	8 ռ. 90 կ.— 10 ռ. 75 կ.

Երևանի նահանգի գրեթե ամբողջ բամբակը վաճառվում էր Երևանի շուկայում։ Մինչև 1886 թ. բամբակի առևտուրը ամբողջապես գտնվում էր տեղացի՝ երևանցի և, գլխավորապես, ագուլեցի վաճառականների ձեռքին [1]։ «Ամբողջ նահանգի բերքը, մինչև այդ ժամանակ բերվում էր Երևանի հրապարակը և այդտեղ էլ վաճառվում էր օրվա մազանդով (գնով— Բ. Հ.)..., որը կախված է Մոսկվայում եղած գնից» [2]։ Ականատես թղթակիցը հաղորդում է, որ վաճառականներն ու նրանց միջնորդները, օգտվելով գյուղացու աղքատ դրությունից, նրան նախօրոք որոշ գումար էին տալիս և այդ կերպ հարկադրում, որ բերքի ժամանակ գյուղացին իր ստացած բամբակը կես գնով ամբողջովին վաճառի իրենց [3]։ Իրենց վաշխառուական այդ գործարքներով ագուլեցի և երևանցի վաճառականները ստանում էին հսկայական շահույթներ։ Գնված բամբակն այնուհետև առանց տեսակավորելու, ձեռքի սեղմիչներով՝ 8—9 փթանոց մեծածավալ հակերով կապում և ուղարկում էին դեպի Մոսկվա և պետության զանազան այլ քաղաքներ [4]։

Այդ առևտրի ընթացքում տեղացի վաճառականները ոչ միայն խարդախությամբ խաբում էին բամբակագործ գյուղացիներին, այլև ֆաբրիկանտներին։ Նրանք ֆաբրիկանտներին խաբում էին ամերիկյան տեսակի բամբակին տեղական տեսակի բամբակ խառնելով, բամբակի հակերը խոնավացնելու, հակերի մեջ զանազան անպի-

1 «Մուրճ» (ամսագիր), 1896, № 3—4, էջ 443։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 443—444։

4 Նույն տեղը, էջ 444—445։

ատանի իրեր գնելու միջոցով։ Խաբեությունը հասնում է այն աստիճանի, որ մոսկվացի մի շարք ֆաբրիկանտներ և առաջին գիլդիայի վաճառական Շչերբակովը 1885 թ. հատուկ խնդրանք են ներկայացնում Երևանի նահանգապետին՝ Մ. Յա. Շալիկովին, որպեսզի վերջինս իր միջամտությամբ վերջ տա վաճառականների խարդախություններին [1]։

Այդ խնդրանքին ուղեկցում էր հայտնի ֆաբրիկանտ Տ. Ս. Մորոզովի նամակը, որի մեջ խոսվում է Երևանի շուկայում միջնորդների կողմից բամբակի վաճառքի ժամանակ թերաքաշելու և գյուղացիներին խաբելու մասին [2]։

1886 թվականից սկսած Երևանի բամբակի առևտուրն իր հիմնական մասով անցնում է Մոսկվային, Լոձի և այլ քաղաքների վաճառականական-արդյունաբերական ընկերությունների ձեռքը։

Նահանգապետի միջնորդությունը անկարող եղավ բամբակի վաճառքը կանոնավորել։ Հարցի լուծման լավագույն միջոցը համարվեց այն, որ կենտրոնի ֆաբրիկանտները սկսեցին բամբակի գնման իրենց գրասենյակները առեղծել Երևանում և գործակալների միջոցով բամբակը անմիջականորեն գնել գյուղացիներից։ 1886 թ. աշնանը Երևանում օտար ֆիրմաներից առաջինը սկսեց բամբակ գնել Մոսկվայի հայտնի ֆիրմայի՝ Կարպինկինի ներկայացուցիչը, հաջորդ տարում՝ 1887 թ. դրա վրա ավելանում են երկու նոր ֆիրմաներ՝ մեկը Մոսկվայի Վլադիմիր Ալեքսեևի ֆիրման, իսկ մյուսը՝ Լոձից՝ Պոզնանսկու առևտրա-արդյունաբերական ֆիրման։ Հետագա տարիներին դրանց թիվը հասավ 5-ի՝ հաշված և Թիֆլիսի վաճառական Չիխաչյանի առևտրական տունը [3]։ Օտար ֆիրմաների երևան գալով՝ Երևանում բամբակի առևտուրը մտնում է նոր փուլի մեջ։ Դրանք գավառական մի քանի կենտրոններում բացում են իրենց ներկայացուցչությունները, ուրիշ տեղեր ուղարկում են շրջիկ գործակալներ։ Հենց առաջին օրերից օտար ֆիրմաները Երևանում սկսում են բամբակը տեսակավորել, շատ տեղերում դրանք մաքրել սերմերից, հակեր կապելու համար կիրառել ձիաշարժ և շոգեշարժ սեղմիչներ, որոնք աշխատում էին մեծ արագությամբ և դրանցից յուրաքանչյուրը կարող էր կապել հարյուրից ավելի 13 փթանոց և ավելի ծանր հակեր։ Նրանք գյուղացիներին հաճախ կանխավճար էին տալիս՝ բերքի ժամանակ համապատասխան գներով բամբակ գնելու

1 «Эриванск. сборник», вып. 1, էջ 100։

2 Նույն տեղը, էջ 101։

3 Տե՛ս «Մուրճ», 1896, № 3—4, էջ 445—449։ Համմ. «Эриванск. сборник», вып. I, էջ 92։

համար [1]։ Նշված ֆիրմաների մեջ ամենից շատ բամբակ գնում էր Լոձի Պոզնանսկու առևտրական տունը, սակայն բամբակի գնման գործը ավելի հիմնավոր ու օրինակելի էր կազմակերպում Կարպինկինի՝ «Մեծ Յարոսլավլյան մանուֆակտուրայի ընկերությունը»։ Վերջինս ընկերությունների մեջ միակն էր, որ Երևանում ուներ իր սեփական տունը, պահեստները, սեղմիչների սրահը, ձիերի գոմը, աշխատակիցների հանրակացարանը և այլ հարմարանքներ [2]։ Այդ տունը իր գրասենյակներն ուներ նաև Անդրկասպյան մարզում և Թուրքեստանում։ Երևանի նահանգում, Երևանից բացի, նա մասնաճյուղ ուներ նաև Շարուր-Դարալագյազի գավառի Ենգիջա գյուղում [3]։ «Մեծ Յարոսլավլյան մանուֆակտուրա» ընկերությունը գնված բամբակը մաքրում էր սերմերից, տեսակավորում, հիդրավլիկ սեղմիչներով հակավորում, ապա նոր ուղարկում Մոսկվա։ Նա միակն էր, որ ուներ հիդրավլիկ սեղմիչ, որը շարժման մեջ էր դրվում չորս ձիերի օգնությամբ։ Սեզոնի ընթացքում նրա ձեռնարկություններում բանվորներն աշխատում էին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 10-ը, իսկ որոշ դեպքերում՝ աշխատանքը անընդհատ էր՝ երկու հերթափոխությամբ։ Օրական սովորաբար պատրաստում էին 75 հակ՝ մոտ 900 փութ ընդհանուր ծանրությամբ [4]։

Բոլոր ֆիրմաների գրասենյակները գտնվում էին Ջանգուի (Հրազդան) ափին։ Տեղական վաճառականները իրենց համեմատաբար փոքր կապիտալներով և գործի պրիմիտիվ դրվածքով անկարող եղան մրցել օտար վաճառականական տների հետ և աստիճանաբար սկսեցին կորցնել իրենց դիրքերը։

Կապված հակերը Մոսկվա և այլ քաղաքներ ուղարկելու համար հանձնվում էին վերը նշված փոխադրական երկու ընկերություններին՝ «Ռուսական ընկերությանը» և «Նադեժդային»։ Մեծ Յարոսլավլյան (Կարպինկինի) մանուֆակտուրայի, Պոզնանսկու և Չիխաչյանի (Թիֆլիսից) տները բամբակը գնում էին իրենց սեփական ֆաբրիկաների համար, իսկ Ալեքսեևի տունը՝ սպեկուլյատիվ նպատակներով՝ Մոսկվայում վերավաճառելու համար։ Գնված բամբակի մի փոքր մասը գնում էր մինչև Թիֆլիս, իսկ մյուս մեծ մասը՝ դեպի Փոթի, Օդեսա, Լեհաստան կամ Աղստաֆա

1 «Մուրճ», 1896, № 3—4, էջ 446—448։

2 «Эриванск. сборник», вып. I, էջ 101—102:

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, էջ, 101—103։

կայարանից ուղարկվում էր դեպի Բաքու, իսկ այստեղից՝ Կասպից ծովի և Վոլգայի վրայով դեպի հյուսիս։ Ինչպես ասվեց, ամենից շատ բամբակ գնում էր Պոդոլնանկու առևտրական տունը։ 1886 թ. նա գնել էր 117 հազ. փութ բամբակ, 1889 թ.՝ 100 հազ. փութ, երկրորդ տեղը գրավում էր Կարպինկինի Մեծ Յարոսլավլյան ընկերությունը, որը 1886 թ. գնել է 99 հազ. փութ, 1887 թ.՝ 95 հազ. փութ, 1888 թ.՝ 33 հազ., իսկ 1889 թ.՝ 40 հազ. փութ։ Ալեքսեևի առևտրական տունը տարեկան միջին հաշվով գնում էր 35 հազ., իսկ Զիբթախյանինը՝ 25 հազ. փութ [1]։

Ոչ պաշտոնական տվյալներով, 1890—1891 թթ. ձմեռվա սեզոնում օտար և տեղացի առանձին վաճառականներն ու առևտրա-արդյունաբերական ընկերությունները Երևանում բամբակ էին գնել հետևյալ քանակությամբ [2]։

Աղյուսակ 16

№ № կ/կ	Ընկերությունների և առանձին վաճառականների անունները	Գնված բամբակի քանակը հակերով	Ծանոթություն
1	Պոդնանսկի	16.000	Ցուրաքանչյուր հակը մոտ 8 փութ էր։ Այնպես որ ամբողջը միասին կազմում էր մոտավորապես 352.000 փութ։
2	Կարպինկին	7 000	
3	Ալեքսեև	5 000	
4	Զիբթախյան	3 000	
5	Գիժբեզով	1 500	
6	Գևորգյան եղբայրներ . . .	3 000	
7	Դավլաթյանց և ընկ.	2 000	
8	Աֆրիկյան (Երևանցի)	1.500	
9	Բեգլարյան և ընկ.	1 000	
10	Այդումանյան եղբայրներ . . .	1.000	
11	Բարխուդարյանց, Մանվելյանց, Ջանիբեկյանց (Երևանից) և ուրիշներ	3000	
	Ընդամենը	44.000	

Առևտրական տների միջնորդներն ու գործակալները գործում էին և՛ Երևանում, և՛ գյուղերում։ Դրանցից յուրաքանչյուրն ուներ 3—6 միջնորդներ, որոնք անմիջապես զբաղվում էին բամբակի գնմամբ [3]։ Միջնորդներից շատերը տեղացի նախկին բամբակ գնողներն էին, որոնք առևտրա-արդյունաբերական տների մրցակցությանը չդիմանալով՝ անցան նրանց մոտ աշխատանքի իբրև սոսկ միջնորդներ։

Գումարով արտահայտված XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին Երևանից տարեկան միջին հաշվով արտահանվում էր երկու—երեք միլիոն ռուբլու բամբակ։

Բամբակի բերքատվությունը բարձրացնելու և հիվանդությունների՝ հատկապես «չոռ» կոչված հիվանդության, դեմ պայքարի մեթոդներ մշակելու համար 1897—1898 թթ.[1] Երևան քաղաքում հիմնվում է մի ոչ մեծ փորձադաշտ, որի ղեկավարությունը հանձնվում է ագրոնոմ Կանդուրյանին [2]։ Վերջինս սեփական ջանքերով և տեղերում ունեցած իր օգնականների միջոցով բավական հաջող պայքար է մղում «չոռ» հիվանդության դեմ, որը երևան էր գալիս մասնավորապես չորային տարիներին։

Քաղաքում կատարվող բամբակի առևտուրը, առևտրի մյուս ճյուղերի նման ենթակա էր քաղաքային ինքնավարության հսկողությանը և հարկադրվում էր վերջինիս կողմից։ XX դարի սկզբներին քաղաք բերվող բամբակի յուրաքանչյուր հակից կամ կապոցից օգուտ քաղաքի վերցվում էր 7 կոպեկ։ Քաղաքային դուման բամբակի առևտրից ստացվող այդ հարկի հավաքումը կապալով տալիս էր այս կամ այն անհատի [3]։ Կապալառուն, ըստ եղած դրության, իրավունք չուներ խախտելու քաղաքային ինքնավարության սահմանած սակագինը, բայց դա հաճախ ձևականության էր վերածվում. իրականում կապալառուն ավելի շատ էր վերցնում, քան սահմանված էր։

Ահա այդպիսին էին Երևանից արտահանվող գլխավոր առարկայի՝ բամբակի առևտրի բնույթը, ծավալը և կազմակերպման ձևերը։

Ապրանքաշրջանառությունը և՛ իր ծավալով, և՛ ապրանքների կազմի բազմազանությամբ նախասովետական ժամանակների համար առավելագույնի է հասնում առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին՝ 1912—1913 թթ.։ Արխիվներում

1 «Эриванск. сборник», вып. 1, էջ 103—104։

2 Տվյալները տե՛ս «Մուրճ» (ամսագիր), 1896, № 3—4, էջ 450։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 241, թ. 2, 4 և այլուր։

1 Առաջին անգամ Երևանում բամբակի փորձադաշտ էր ստեղծվել 1888 թ.՝ նախկին սարդարի այգում, ագրոնոմ Տարանտինովի գլխավորությամբ։ Այդ փորձադաշտը հիմնվել էր պետության հաշվին և ենթարկվում էր պետական գույքերի մինիստրությանը։ Փորձադաշտում բամբակի լավ բերք էր ստացվում, սակայն պրակտիկորեն նա չէր կարողանում բամբակացան շրջաններին որևէ օգուտ տալ («Эриванский сборник», вып. 1, էջ 92—93)։

2 «Մուրճ» (ամսագիր), 1907, № 7, էջ 237—238։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1535, թ. 10, գ. 1563, թ. 19 և 24, գ. 1589. թ. 45 և 53։

պահպանված են վիճակագրական բազմաթիվ տեղեկություններ Երևանի վրայով և Երևանի հետ կատարվող առևտրի՝ ներմուծվող և արտահանվող ապրանքների վերաբերյալ։ Ըստ այդ փաստաթղթերի, Երևանի վրայով ներմուծվող և արտահանվող ապրանքներն ունեին հետևյալ կազմը.

բամբակյա գործվածքներ, օճառ, տախտակ, մեքենաներ (առանց գյուղատնտեսական մեքենաների), թուղթ, ապակյա, բյուրեղապակյա և հախճապակյա իրեր, ցորենի ալյուր, մանուֆակտուրա, մետաղյա իրեր, բանջարեղեն, աղ, խոշոր եղջերավոր անասուններ, աղյուս, հողագործական մեքենաներ, շաքար, թեյ, ձեթ, սպիրտ, ապակի, գարի և տարեկան, ցորեն, փայտ, անասնակեր, կովի յուղ, ցեմենտ, պողպատ, հանքային ջրեր, ձուկ, անմշակ մշերքներ և կաշիներ, մրգեր, բամբակ, բուրդ և այլն [1]։ Ներմուծվող և արտահանվող ապրանքների մի մասը բաժին էր բնկնում Երևան քաղաքին, իսկ մյուս մասը իր բնույթով տարանցիկ առևտուր էր, որ կատարվում էր Երևանի վրայով։ Փոխադրումների մի մասը կատարվում էր Երևան—Աղստաֆա խճուղով, իսկ մյուս, մեծագույն մասը՝ երկաթուղով։ Միայն 1912 թ. Երևանը երկաթուղու միջոցով ստացել և ուղարկել է 4.361.514 փութ զանազան ապրանքներ, որից 3.263.369 փութը ստացել է, իսկ 1.098.105 փութը՝ ուղարկել [2]։ Ավելի լրիվ տվյալներով երկաթուղով Երևանը 1907, 1908, 1909, 1910 և 1911 թվականներին փթերով արտահայտված ստացել և ուղարկել է հետևյալ քանակի ապրանքներ [3]։

Աղյուսակ 17

1907		1908		1909		1910		1911	
ստացել է	ուղարկել է	ստացել է	ուղարկել է	ստացել է	ուղարկել է	ստացել է	ուղարկել է	ստացել է	ուղարկել է
3394830	1153331	3120296	909021	2986775	934899	3116700	891616	4132125	1242376

Երևանի վրայով էր կատարվում ռուս-պարսկական առևտրի մեծագույն մասը, իսկ Ռուսաստանը Պարսկաստանի հետ ուներ, իրոք

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, ցուցակ 8, գ. 1, ԹԹ. 108—121, 122, 133—134, 126—152, 153, 154, 155, 156, 158, 159, 160, 162—167։

2 «Памятная книжка Эриванской губернии на 1912 год», էջ 89—107։

3 «Кавказский календарь на 1914 г.», отд. статистический, էջ 203։

որ, մեծ առևտուր։ Ռուսական կառավարությունը ամեն կերպ օգնում, օժանդակում էր Պարսկաստանի հետ կատարվող առևտրի լայնացմանը։ Այդ նպատակով նա դարձել էր Պարսկաստանի անմրցակից գնորդը և մատակարարը։ Այսպես, ըստ 1913—1914 ԹԹ. տվյալների, Ռուսաստանը Պարսկաստանին տալիս էր վերջինիս կողմից ներմուծվող նավթի 93 տոկոսը, շաքարի 73 տոկոսը, աղի 100 տոկոսը, ալյուրի 94 տոկոսը, բամբակե գործվածքեղենի մոտ կեսը, ապակեղենի ավելի քան 95 տոկոսը, լուցկու մոտ 75 տոկոսը, օճառի 72 տոկոսը, շինափայտի 90 տոկոսը, երկաթեղենի 96 տոկոսը, թղթի 80 տոկոսը և այլն [1]։ Նույն թվականներին Ռուսաստանը Պարսկաստանի շուկայից էր գնում վերջինիս կողմից արտահանվող բրնձի 90 տոկոսը, մրգեղենի ավելի քան 95 տոկոսը, բամբակի 95 տոկոսը, բրդի 70 տոկոսը, կաշվի ավելի քան 81 տոկոսը, խոշոր եղջերավոր անասունների 95 տոկոսը և այլն [2]։ Երևանի վրայով կատարվող տարանցիկ առևտրի մասին մանրամասն տվյալներ կան նաև այլ աղբյուրներում, որոնցում նշված են և՛ առևտրի ապրանքները, և՛ դրանց ծավալը։ Այդ աղբյուրների մեջ բոլորից ստույգ թվերը տրված են մաքսատների գրանցման մատյաններում [3], եթե բացառելու լինենք մաքսանենգության ճանապարհով կատարված գործարքները։

Նախորդ ժամանակների համեմատությամբ 1879—1914 ԹԹ. Երևանի ներքին առևտուրը հսկայական առաջընթաց է կատարում և՛ իր ծավալով, և՛ բնույթով։ Երկաթուղու կառուցման, կապիտալիստական ձեռնարկությունների Երևան գալու, գյուղում արդյունաբերության համար որոշ հումքերի արտադրության ավելացման, քաղաքի բնակչության թվի հսկայական աճի, Երևանում տեղադրված մեծաթիվ կայազորի և նահանգական, գավառական ու քաղաքային վարչության մեծաթիվ բյուրոկրատիայի առկայության շնորհիվ քաղաքի ներքին առևտուրը զարգանում է հաջողությամբ։ Ներքին առևտրի մեջ տեղի ունեցած փոփոխություններից կարելի է նշել հետևյալները. ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների, այս շրջանում ներքին առևտուրը բացառապես մանրածախ չէր, կատարվում էր և մեծածախ առևտուր, գլխավորապես այն ապրանքների գծով, որոնք հումք էին ծառայում տեղի կամ այլ քա-


1 Տե՛ս Всесоюзная торговая палата, «Таможенная политика стран Востока», Москва, էջ 34։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս «Закавказье», статико-экономической сборник, 1952, էջ 448—449։

դաքների արդյունաբերության համար (գինու հումք, հում ապրան, բամբակ և այլն), ճոխանում է ապրանքների կազմը, հսկայական չափով մեծանում է վաճառականական կապիտալի կենտրոնացումը, հանդես են գալիս մի շարք խոշոր ու անվանի վաճառականական անուններ ու ընկերություններ, որոնք իրենց տրամադրության տակ կենտրոնացրել էին մեծ կապիտալներ, զգալի փոփոխություն է կրում առևտրի կազմակերպման ձևը. կառուցվում են ունիվերսալ ու այն ժամանակվա համեմատությամբ մեծ և օրինակելի խանութներ, առևտրի զգալի մասը շուկայից տեղափոխվում է բուն քաղաք՝ նրա կենտրոնական փողոցների նոր շենքերի առաջին հարկերում բացվող խանութները, առաջանում են միանգամայն նոր տիպի մասնագիտացված խանութներ (երկաթեղենի, կրկնակոշիկների և գոշկեղենի, գրենական պիտույքների, ծաղկի և այլն, և այլն), առևտրի ղեկավարումն ու հսկողությունը անցնում է քաղաքային ինքնավարության, որը որոշ հոգ է տանում քաղաքի առևտրի հրապարակներն ու շուկաները բարեկարգելու, դրանցում կարգ ու կանոն հաստատելու և ապրանքների գները կանոնավորելու ուղղությամբ, կազմակերպվում են կիրակնօրյա շուկաներ, բաց են անում առևտրական մասնավոր տարրական դպրոցներ, գործակատարությունը ձևավորվում է իբրև քաղաքի հասարակության խմբերից մեկը, որը պայքարում է իր իրավունքների համար: Միանգամայն տրամաբանական է, որ ներքին առևտրի այդ փոփոխություններն իրենց հերթին ազդել են քաղաքի հասարակական կյանքի վրա ընդհանրապես: Արտաքին ու մանավանդ տարանցիկ առևտրի համեմատությամբ ներքին առևտուրը, ինչպես հայտնի է, հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի վրա ազդում է ավելի մեծ չափերով և ակտիվորեն: Ուստի հարկ է, որ ավելի մոտիկից ծանոթանանք Երևանի ներքին առևտրին, հարցերի՝ վերը կատարված թվարկությունից որոշ չափով տարբերվող հաջորդականությամբ:

Արտաքին և ներքին առևտրի զարգացման շնորհիվ Երևան քաղաքում բարձրանում են հին առևտրական տները, առաջանում են նաև նորերը: Ավելի խոշոր առևտրական տներից մի քանիսը՝ Աֆրիկյաններ, Գյոզալյաններ, Ամիրյաններ, Հարությունյաններ, Խուդաբաշյաններ և ուրիշներ, իրենց կապիտալների մի մասը առևտրի բնագավառից տեղափոխում են արդյունաբերության մեջ և դառնում միաժամանակ արդյունաբերական ձեռնարկատերեր: Ի տարբերություն նախորդ ժամանակների, երբ քաղաքի առևտրականները ըստ իրենց առևտրի բնույթի և կապիտալների քանակի բաժանված էին վեց խմբի (բազազներ, աթթարներ, ալաֆներ և այլն),



ЗАЯВЛЕНИЕ

Դիմում երկրորդ կարգի (գիլդայի) վաճառականի վկայական ստանալու համար (ՀՍՍՌ ՊԿՊԱ)

հետաքրքրող շրջանում նրանք բաժանվում էին գիլդաների, և Երևանի առևտուրն էլ, պետության մյուս մասերի ու քաղաքների առևտրի նման, ենթարկվում էր համապետական մասշտաբով գործող օրենքին։

Առևտրա-արդյունաբերողներին և մյուս քաղաքացիներին գիլդաների բաժանելը ռուսական իրականության մեջ առաջին անգամ կատարվել է Պետրոս I-ի օրոք։ Եկատերինա 2-րդի ժամանակ այդ կարգի մեջ կատարվում են որոշ փոփոխություններ, բայց ընդհանուր հիմունքները մնում են ուժի մեջ։ Վաճառականի կամ առևտրա-արդյունաբերողի գիլդան որոշվում էր նրա կողմից հայտարարված կապիտալի քանակին համապատասխան։ Ըստ Եկատերինա 2-րդի հրապարակած 1785 թ. քաղաքային կանոնադրության, առաջին գիլդային էին պատկանում բոլոր այն վաճառականները, որոնցից յուրաքանչյուրի կապիտալը 10 հազար ռուբլուց ավելի էր, երկրորդ գիլդային՝ 5.000—10.000 ռ. կապիտալ ունեցողները, իսկ երրորդ գիլդային՝ 1000—5000 ռ. ունեցողները։ Եկատերինա երկրորդի սահմանած այդ կարգը գրեթե անփոփոխ մնաց մինչև 1863 թ. նոր առևտրական կանոնադրությունը, որը 70-ական թվականներից կիրառված էր նաև Երևանի կյանքում։ Ըստ 1863 թ. այդ կանոնադրության, երրորդ գիլդան վերացվեց, սակայն դեռ բավական ժամանակ առևտրական արտոնագրեր ստանալու, առևտրից վերցվող հարկերը վարչականորեն կանոնավորելու և այլ աշխատանքների համար վաճառականների այդ խումբը ևս շարունակեց գոյություն ունենալ։ Գիլդաներն ընդհանրապես արտոնված խմբեր էին, և ինչքան որ բարձր էր վաճառականի կարգը, այնքան նա, իբրև խոշոր վաճառական, ուներ ավելի մեծաշնորհումներ ու արտոնություններ։ Գիլդաները ֆեոդալիզմի ժամանակաշրջանի կատեգորիաներ էին, հետևապես կապիտալիզմի զարգացմամբ դրանք աստիճանաբար պետք է կորցնեին իրենց նշանակությունը և վերանային ասպարեզից։ Եվ հիրավի՝ կապիտալիզմի զարգացմամբ ֆեոդալական դասային մյուս խմբավորումների հետ վերացան նաև գիլդաները։ 1899 թվականից գիլդական տեղեկանքները վերցնում էին միայն կամավոր կերպով, այն էլ այնպիսի վաճառականներ, որոնք շահագրգռված էին վաճառականական դասային իրավունքներ ձեռք բերելու։ Այլ կերպ ասած, XIX դարի վերջերին գիլդաներն արդեն կորցրել էին իրենց նախկին նշանակությունը։

XIX դարի վերջին քաղաքում Երևանի վաճառականների թիվը հասնում էր ավելի քան 500-ի։ Ըստ արխիվային տվյալների, 1886 թ. Երևանում առևտրական տեղեկանքներ էին վերցրել 531

վաճառականներ, որոնցից 3-ը առաջին գիլդայի, 110-ը՝ երկրորդ գիլդայի, իսկ 418-ը՝ երրորդ [1]։ Հետագա տարիներին վաճառականների ընդհանուր թիվը գրեթե նույնն է մնում, բայց երրորդ գիլդայի հաշվին ավելանում է երկրորդ և առաջին գիլդայի վաճառականների թիվը։ Վերը նշված առևտրական տներից բացի, արխիվներում և պարբերական մամուլում զանազան առիթներով հիշատակվում են քաղաքի առևտրական այլ բազմաթիվ տներ և առանձին վաճառականներ. դրանցից են՝ Ա. Գ. Գուլամիրյանը [2], որն ուներ ապակեղենի և գրքի խանութներ [3], Հ. Գ. Բոշնաղյանը, որը XX դարի սկզբներից քաղաքում ուներ մանուֆակտուրային մեծ խանութ և



Վկայական առևտրական ձեռնարկություն պահելու համար (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

պրազվում էր մեծածախ ու մանրածախ առևտրով [4], նախիջևանյան

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, թ. 38։

2 Գուլամիրյանների առևտրական տունը գոյություն ուներ 1835 թվականից (ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 19, թ. 38)։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, թ. 43։

վաճառական Ի. Բ. Ջանփոլադյանը, որը Երևանում հսկայական ունեցվածքի տեր էր և ուներ մեծածախ առևտուր, Բ. Ե. Եղիազարյանը, Ա. Գ. Տեր-Զաքարյանը, Մ. Մինքայելյանցը, Ն. Սիմոնյանցը, Ս. Ք. Հախնազարյանցը, Գ. Ն. Աբյանցը, Ա. Ա. Ներսիսյանցը, Մ. Նալբանդյանը, Խաչատրյան եղբայրները, Ս. Անտոնյանը, Ա. Գալըստյանը, Փ. Հ. Եղիգարյանը, որը ծագումով Մեծ Ղարաքիլիսա գյուղից էր և Ա. Ի. Օհանյանի հետ միասին 1903 թ. Երևանում բաց էր արել «Արարատ» ընկերությունը՝ մտադրություն ունենալով կոնյակի գործարան հիմնելու, Ա. Տեր-Մարտիրոսյանը և շատ ուրիշներ [1]։


Երևանի վաճառականները իրենց շահերը պաշտպանելու, իրար փոխադարձ օգնություն ցույց տալու, վաճառականական հողի վրա ծագած վեճերը լուծելու, պետական, հասարակական և մասնավոր հաստատությունների հետ փոխհարաբերությունները տնօրինելու, վաճառականության համար օգտակար հիմնարկություններ (վաճառականական դպրոց, ժողովարան, գրադարան-ընթերցարան, բանկ, ապահովագրական ընկերություն և այլն) հիմնելու և մի շարք այլ կարիքների համար դեռևս 1908 թ. մտադրվում են քաղաքում կազմակերպել «Երևանի վաճառականների փոխադարձ օգնության ընկերություն»։ Նույն այդ թվականին կազմվում է ապագա ընկերության կանոնադրությունը, որը ընդգրկում էր վերը նշված բոլոր բնագավառները։ Ըստ կանոնադրության, ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր էր տարեկան վճարել 12 ռուբլի՝ երկու նվագով։ Ընկերությունը կազմակերպվում է 1912 թ. սկզբներին, երբ 1908 թ. կազմած այդ կանոնադրությունն ընդունվում է քաղաքային վաճառականների ընդհանուր ժողովի կողմից [2]։

Վաճառականների վերնախավը (որը միաժամանակ և արդյունաբերական ձեռնարկատեր էր) իր ձեռքում կենտրոնացրել էր բավական մեծ գումարների հասնող կապիտալներ։ Մենք տեսանք, որ առևտրա-արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչները՝ Աֆրիկյանները, Գյոզալյանները և մյուսները ունեին հարյուր հազարների հասնող կապիտալներ։ Բավական մեծ էին նաև այն վաճառականների կապիտալները, որոնք զբաղվում էին միայն առևտրով։ Այսպես, օրինակ՝ «Ս. Հախնազարյանց, Գ. Աբյանց, Ա. Ներսիսյանց» առևտրական ընկերության հիմնական կապիտալը կազմում էր 90.000 ռուբլի [1]։ Ի. Ջանփոլադյանի տարեկան եկամուտը կազմում էր 12.000 ռուբլի (իսկ եկամուտը կազմում էր ունեցվածքի արժեքի մոտ 20 տոկոսը), Ա. Օհանյանի և Փ. Եղիգարյանի 1903 թ. կազմած առևտրական «Արարատ» ընկերության նախնական կապիտալը հասնում էր 40.000 ռուբլու և այլն։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 467, թ. 39, գ. 546, թ. 1—2, գ. 586, թ. 4—5, գ. 1353, թ. 5, գ. 1621, թ. 12, ֆ. 50, գ. 19, թ. 108, «Эриванск. объявления», 1911, № 93, 1912, № 10, «Առողջապահական թերթ» (ամսագիր), Երևան, 1882, № 2—3, էջ 89 և այլուր։

2 «Կոչան» (լրագիր), 1912, № 12։

Ներքին առևտրի ապրանքների ասորտիմենտը նախորդ ժամանակների համեմատությամբ 1879—1914 թթ. մեծապես ճոխանում է։ Քաղաքի խանութներում և շուկաներում երևան են գալիս արդյունաբերական նորանոր ապրանքներ՝ հնձանիվներ, էլեկտրական սարքեր, հեռախոսային ապարատներ, գրամոֆոններ, ձայնապնակներ, կոնյակի սպիրտ, կոնյակ, զտած սպիրտ, զանազան մեքենաներ (նույնիսկ ավտոմեքենա) ու սարքեր, որոնք օգտագործվում էին արդյունաբերական ձեռնարկություններում, շարժիչներ և բազմաթիվ այլ ապրանքներ։



Քաղաքի գլխավոր շուկա-հրապարակը
(ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Ներքին առևտրի ապրանքները հիմնականում կարելի է բաժանել հինգ խմբի՝ արդյունաբերական ու արհեստավորական ապրանք-

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 542, թ. 1—3, գ. 546, թ. 1—2, գ. 1353, թ. 5, գ. 1621, թ. 12։

ների, արդյունաբերական հումքերի, սննդամթերքների, շինանյութերի և կուլտ-կենցաղային ապրանքների։ Առաջին խմբի ապրանքներից կարևոր էին՝ մանուֆակտուրան, կոշկեղենը և զանազան գործիքներ, երկրորդ խմբից՝ բամբակը, խաղողը և կաշին, որոնցից առաջինն ու երրորդը տեղում հավաքելով ուղարկում էին դեպի այլ քաղաքներ, երրորդ խմբի մեջ՝ հացահատիկներն ու հացը, բանջարեղենը, միսը, յուղը և այլն, իսկ չորրորդ ու հինգերորդ խմբերի ապրանքները ընդհանրապես դեռևս քաղաքի առևտրի մեջ մեծ դեր չէին խաղում։

Էական փոփոխություններ է կրում քաղաքի առևտրի տեղաբաշխումըըստ նրա տարբեր մասերի։ Եթե նախորդ շրջանում, հատկապես մինչև 60—70-ական թվականները, ամբողջ առևտուրը գրեթե կենտրոնացած էր միայն շուկա-հրապարակներում, որոնց մասին այնքան մանրամասնությամբ խոսեցինք նախորդ գրքում, ապա 1879—1914 թթ. քաղաքի առևտուրն իր զգալի մասով տեղափոխվում է բուն քաղաք, որի կենտրոնական փողոցներում կառուցվում են այն ժամանակվա առումով ընդարձակ, լուսավոր, հարմարավետ ու օրինակելի խանութներ։ Դրանք հիմնականում արտադրական ապրանքների խանութներ էին. այստեղ վաճառվող ապրանքների մասին բավական լայն ռեկլամ էր արվում տեղի պարբերական մամուլում։ Մեզ հետաքրքրող շրջանում Երևանում արտադրական ապրանքների զանազան կարգի խանութներից հայտնի էին՝ Ա. Ս. Գուլանյանցի ապակեղենի, հախճապակու, բյուրեղապակու և արդուզարդի ապրանքների խանութը, Ա. Դ. Հարությունյանի ունիվերսալ խանութը, Միքայելյանների «Մոդերն» կոչված մանուֆակտուրային և արդուզարդի խանութը, Գ. Ա. Տեր-Օհանյանի արդուզարդի խանութը, Ե. Ս. Խանղադյանի՝ Սաքսոնական կոչված խանութը, որն ուներ մետաքսեղենի, բրդյա գործվածքների, բամբակյա գործվածքների և կանանց պատրաստի հագուստեղենի բաժիններ, Ա. Սարգսյանցի «Եվրոպական» կոչված խանութը, որտեղ վաճառվում էին կանացի և երեխաների պատրաստի հագուստներ, «Փոքրիկ Մոսկվա» («Маленькая Москва») կոչված մանուֆակտուրային խանութը, որը 1912 թ. ենթարկվել է լիկվիդացիայի, Քոչարյանի՝ «Նոր Բայազետ» խանութը, որտեղ վաճառվում էին կանացի շորի կտորներ, Բոշնաղյանի մանուֆակտուրային խանութը և այլն[1]։ Արտադրական ապրանքների, հատկապես շինանյութերի, մետաղյա զանազան

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 19, թ. 38 և 43, «Эриванские объявления», 1911, №№ 69 և 70, 1912, №№ 10, 22, 24, 37, 41, 96, 97, 98։

իրերի և ներկանյութերի մի քանի փոքրիկ խանութներ կային նաև շուկայում։ Դրանց մեջ հատկապես հիշատակվում է Հ. Խաչատրյանի մետաղյա իրերի և ներկանյութերի խանութը[1]։ Սննդամթերքների խանութներից հայտնի էին Մերանգուլյանների հրուշակեղենի «Պրոգրես» կոչված խանութը (Աստաֆյան փողոցի վրա), նույնատիպ մի քանի այլ խանութներ, որոնց թիվը 1902 թ. հասնում էր 15-ի։ Դրանցից յուրաքանչյուրը տարեկան ուներ 600—4500 ռուբլի շրջանառություն, հացի խանութներ և այլն[2]։

Քաղաքի համար կարևոր նշանակություն է ունեցել սպանդանոցը, որը կառուցվել է քաղաքի ինքնավարության միջոցներով XX դարի սկզբներին։ Այստեղ մեկ տարվա ընթացքում մորթվում էր մոտ 60.000 մանր և խոշոր անասուն[3]։

Կային գինու մի քանի մեծ պահեստներ, որոնք միաժամանակ առևտրական կետեր էին։ Այսպես, օրինակ՝ Ա. Այվազյանի և Սարգսյանի «Արագած» կոչված գինու պահեստը (Նոր նկեղեցու, այժմ Սովետների փողոցի վրա), որտեղ գինիներից բացի վաճառվում էր նաև քնջութի ձեթ[4]։ Մյուս կարգի խանութներից հայտնի էին «Ն. Սիմոնյան և ընկ.» առևտրական տան գրավաճառանոցը, որը կոչվում էր «Երեխաների բարեկամ», Պ. Հովհաննիսյանի գրքի երկու խանութները, որոնցից մեկը գտնվում էր Աստաֆյան փողոցի վրա, իսկ մյուսը՝ քաղաքային բուլվարի դիմաց, «Ֆլորա» կոչված ծաղկի խանութը[5] և այլն։

Քաղաքային վարչությունը իրավունք չուներ խառնվելու առևտրականների ներքին գործերին։ Քաղաքի խանութների նկատմամբ նրա հսկողությունը սահմանափակվում էր միայն մի քանի պարտադիր կանոնների հրապարակմամբ և դրանց կիրառմամբ։ Այդ կանոնները միայն վերաբերում էին յուրաքանչյուր խանութի առջևի մասում և բոլոր խանութների գրաված շարքերում պատշաճ սանիտարական վիճակի պահպանմանը[6]։

Քաղաքային ինքնավարության միջամտությունը ավելի զգալի

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 459, թթ. 147, 149, 150, 151։

2 Տե՛ս «Эриванские объявления», 1912, № 25, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 508, թ. 14։

3 «Памятная книжка Эриванск. губернии на 1908 год», отд. 4, էջ 7։

4 «Эриванские объявления», 1915, № 11։

5 «Առողջապահական թերթ» (ամսագիր), 1882, №№ 2 և 3, էջ 89, ՀՆՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 459, թթ. 165, 166, 167, 169, «Эриванские объявления», 1912, № 31։

6 Այդպիսի պարտադիր կանոններից մեկը տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117 գ. 58, թ. 10։

էր քաղաքի շուկա-հրապարակներում և դրանցում եղած առևտրական շարքերում։ Դեռևս 1893 թ. վերաբերող իր մի գրության մեջ նահանգապետը քաղաքագլխից պահանջում է, որպեսզի միջոցներ մշակի շուկաններում եղած կրպակների ու խանութների դասավորությունը կարգի բերելու՝ դրանք շարքերով դասավորելու համար, հարկ եղած դեպքում ընդհանուր շարքերը խանգարող կրպակներն ու խանութները ևնթարկելով վերակառուցման կամ տեղափոխման[1]։ Առևտրի շարքերը ծածկված էին տանիքով, որը թիֆեղապատել են 1893 թ.՝ նահանգական ինժեներ Միրզոյանի նախագծով[2]։ Քաղաքի շուկա-հրապարակներում մշտապես առևտուր կատարելու համար անհրաժեշտ էր քաղաքային վարչության հատուկ թույլտվություններ։ Ըստ գոյության ունեցող կարգի, 1880-ական թվականներին շուկա-հրապարակներում մանրածախ առևտրով զբաղվելու համար համապատասխան տեղում հատկացվում էր 6×6 արշին մեծությամբ անկյուն, որի համար առևտրականը տարեկան 40 ռ. պետք է մուծեր քաղաքային վարչության գանձարանը և պահպաներ նրա հետ կնքված պայմանագրի կանոնները[3]։ Շուկայում գիշերային հսկողության և պահակության կարգը մնացել էր հին ձևով։ Օրվա առևտրի ժամն ավարտվելուց հետո շուկան հանձնվում էր գիշերային պահակներին՝ հասաններին, որոնք, սակայն, ի վիճակի չէին կանխելու այնքան շատ կրկնվող գողություններն ու հրդեհները։ Երևանի նահանգապետը 1905 թ. հունվարին թվագրված իր պաշտոնական գրության մեջ քաղաքագլխին հիշեցնում է, որ գիշերային հսկողությունը շատ թույլ է ու անպիտանի, անհրաժեշտ է այն կարգի բերել՝ անձևնահաս հասաններին նոր պահակներով փոխարինելու և այլ միջոցներով։ Մյուս բոլոր կողմերով շուկան 1880—1914 թթ. ընթացքում որևէ փոփոխություն չի կրել։ Առաջվա նման շուկան ուներ իր վերակացուն, առաջվա պես հսկման ևնթակա էին գյուղից բերվող մթերքները, «Ղանթարում» ապրանք կշռելը, շուկայի հրապարակում բեռներ, սայլեր և անասուններ կանգնեցնելը։ Փոփոխության չէր ևնթարկվել նաև առևտրից վերցվող հարկի սիստեմը[4]։ Այստեղ փոփոխությունը կայանում էր միայն նրանում, որ եթե նախկինում առևտրի թույլտվությունը ստանում էին քաղաքային ոստիկանական

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 316, թ. 7։

2 Նույն տեղը, թ. 20 և 21։

3 Նույն տեղը, գ. 1069, թթ. 99, 100, 101, 102 և այլն։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 297, թ. 1, 3—5, 28, 111, գ. 299, թ. 10, գ. 861, թ. 45, գ. 1093, թ. 31—32, գ. 1094, թթ. 4, 5, 6, 7, 18, 19. «Կոանե» (լրագիր), 1912, № 8, «Эриванские объявления», 1909, № 22։

վարչությունից, ապա այժմ այն պետք է ստանային քաղաքային վարչությունից՝ հատուկ վկայականի ձևով[1]։



Մրգավաճառների շարք շուկայում (ՀՍՍՌ Գետո-ֆոնո-կինո արխիվ)։

1870 թ. քաղաքային Կանոնադրության կիրառումից մի քանի տարի անց քաղաքային վարչությունը հարց է հարուցում Երևանում՝ 1883 թ. սկսած ամեն տարվա հոկտեմբերի մեկից՝ բանջարեղենի, մրգեղենի, հացահատիկների և գյուղատնտեսական այլ մթերքների հոսն պահին քաղաքում կազմակերպելու առնվազն[2]։ Սակայն նրա միջնորդությունը մնում է անհետևանք, Երևան քաղաքում մինչև վերջ էլ առևտրաճաշարներ չեն կազմակերպվում։ Քաղաքում սննդամթերքների վաճառքը խթանելու և քաղաքացիներին գյուղատնտեսական մթերքներով բավարարելու համար մոտ երկու տասնյակ տարի դրանից հետո, երբ քաղաքի բնակչության թիվը հասնում էր մոտ 30 հազարի, որոնցից շատերը չունեին իրենց այգին կամ բանջարանոցը, քաղաքային վարչությունը նորից է հարց հարուցում վերը նշված ապրանքների վաճառքը որևէ ձևով արտոնելու վերաբեր-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 565, թ. 15—16, գ. 586, թ. 10, «Обзор Эриванской губернии за 1899 год», էջ 8 և այլուր։

2 Նույն տեղը, գ. 98, թ. 3—5։

յալ։ Նա դրա լավագույն ձևը համարում է կիրակնօրյա շուկաներ կազմակերպելը և իր առաջարկած այդ ձևը հիմնավորում է մի քանի փաստարկումներով։ 1901 թ. փետրվարի վերջերին քաղաքային դործերի նահանգական վարչությունը քննարկում և ընդունում է որոշում Երևանում կիրակնօրյա շուկա կազմակերպելու և այդ օրերին գյուղատնտեսական մթերքներով կատարվող առևտուրը հարկից ազատելու մասին։ Շուտով որոշում է ընդունվում էշով բերված մրգերի, բանջարեղենի, խոտի բեռներից շուկայում կանգառի համար սահմանված բոլոր կարգի հարկերից ազատելու մասին[1], որը բավական խթանում է այդ ապրանքներով կատարվող առևտուրը։

Քաղաքի ներքին առևտրի մեջ իրենց յուրահատուկ տեղն ունեին պանդոկները, թեյարանները, ճաշարանները, ռեստորանները, հյուրանոցները և այլն, որոնք հավաքական անունով կոչվում էին պանդոկային (трактирный) հիմնարկներ։ Դրանք առևտրի այն հիմնարկներն էին, որոնք վաճառում էին սպիրտային կամ ոչ սպիրտային խմիչքներ։ Քաղաքի մեծության համեմատությամբ դրանց թիվը բավական մեծ էր։ Պահպանելով սկզբնաղբյուրների գործածած դասակարգումն ու տերմինաբանությունը՝ Երևանի խմիչքներն վաճառող հիմնարկների տեսակների ու թվի վերաբերյալ ըստ առանձին տարիների կարելի է մասնագետի և ընթերցողի ուշադրությանը հանձնել հետևյալ աղյուսակը (տե՛ս աղյուսակ 18)։

Տվյալների պակասավորության պատճառով թերի է և մեր կազմած աղյուսակը. նրանում տեղ են գտել միայն այն ձեռնարկությունները, որոնք տվյալ ժամանակում քաղաքային վարչությունից ունեին համապատասխան թույլտվություն, իսկ նույնատիպ մյուս շատ հիմնարկներ դուրս են մնացել հաշվառումից և տեղ չեն գտել մեր օգտագործած նյութերի մեջ։ Պակասավոր են նաև հիշատակված ձեռնարկությունների մասին եղած տվյալները։ Փաստորեն բացառյալ 1906 թ. վերաբերող տվյալների, մյուս թվականների տակ խմիչք վաճառող հիմնարկների տարեկան շրջանառության ծավալը չի արվում։ Այնուամենայնիվ, աղյուսակը, ինչպես և այն լրացնող մի քանի տվյալներ, թույլ են տալիս անելու որոշ եզրակացություններ։ Այսպես, աղյուսակից նախ և առաջ երևում է, որ թույլտվություն ունեցող զանազան տեսակի խմիչք ու ուտելիք վաճառող հիմնարկների ընդհանուր թիվը 25 տարվա ընթացքում էական փոփոխություն չի կրել։ Սակայն զգալի փոփոխություններ էր կրել դրանց բնույթն ու կազմը. ժամանակի ընթացքում քաղաքում երե-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 324, թ. 11—12։

№ № կ/կ	Ձեռնարկության տեսակը	1881[1]		1902[2]		1903[3]		1904[4]		1906[5]	
		ընդ. թիվը	տարեկան շրջանառ. ռ.-ով	ընդ. թիվը	տարեկան շրջանառ. ռ.-ով	ընդ. թիվը	տարեկան շրջանառ. ռ.-ով	ընդ. թիվը	տարեկան շրջանառ. ռ.-ով	ընդ. թիվը	տարեկան շրջանառ. ռ.-ով
1	Ակումբներ, հյուրանոցներ և հասուշակարաններ	6	—	—	—	—	—	—	—	1	—
2	Սրճարաններ	24	—	—	—	1	—	—	—	1	—
3	Խորովածարաններ	10	—	—	—	—	—	—	—	—	—
4	Ճաշարաններ	31	—	—	—	—	—	—	—	—	—
5	Թեյարաններ	14	—	56	—	5	—	66	—	29	48 900
6	Քացցը ջրեր և այլ ոչ ոգելից խմիչքներ վաճառողներ	10	—	—	—	—	—	—	—	8	10 900
7	Միկիտաններ	—	—	18	—	3	—	23	—	10	20.000
8	Բուֆետներ	—	—	3	—	—	—	3	—	5	16.500
9	Ռեստորաններ	—	—	4	—	3	—	2	—	—	—
10	Գինեհաններ	—	—	7	—	2	—	15	—	18	18.000
11	Գարեջրատներ	—	—	2	—	1	—	1	—	1	3000
12	Հյուրանոցներ	—	—	—	—	3	—	14	—	13	51.100
13	Ճաշակրպակներ	—	—	—	—	3	—	27	—	13	13.700
14	Քաբաբանատներ	—	—	—	—	1	—	18	—	7	16.600
15	Գինու մառաններ	—	—	—	—	—	—	3	—	3	3 800
16	Երշիկարաններ	—	—	—	—	—	—	1	—	2	3.200
17	Հրուշակարաններ	—	—	—	—	—	—	13	—	5	20.600
18	Կահավորված սենյակներ	—	—	—	—	—	—	1	—	—	—
19	Կաթի խանութներ	—	—	—	—	—	—	5	—	1	—
	Ընդամենը	94	—	90	—	21	—	192	—	114	226.300

վան են նկել ժամանակակից ձեռնարկություններ՝ հյուրանոցներ, գարեջրատներ, երշիկարաններ, կաթի խանութներ և այլն, որոնք կապված էին քաղաքի տնտեսական կյանքի ընդհանուր զարգացման հետ։ Երկրորդ, աղյուսակի 1906 թ. տվյալները ցույց են տալիս, որ պանդոկային կոչված այդ ձեռնարկությունները մանր էին, տարեկան միջին հաշվով մոտ 2000 ռ. շրջանառությամբ։ Դրանց մեջ միայն համեմատաբար մեծ շրջանառություն ունեին բուֆետներն ու

[1] Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 908, թ. 6—8։
[2] Նույն տեղը, գ. 508, թ. 5—13։
[3] Նույն տեղը, թ. 111։
[4] Նույն տեղը, գ. 565, թ. 15։
[5] Նույն տեղը, գ. 586, թ. 20—22։

հրուշակարանները, որոնցից առաջինի յուրաքանչյուր ձեռնարկության տարեկան շրջանառությունը մոտավորապես կազմում էր 3300 ռուբլի, իսկ երկրորդի յուրաքանչյուր ձեռնարկության շրջանառությունը՝ ավելի քան 4000 ռուբլի։ Բուֆետներին դրեթե հավասար (3000 ռ.) շրջանառություն ուներ և քաղաքի միակ գարեջրատունը։ Աղյուսակում ձեռնարկությունների տարեկան շրջանառության ծավալը շատ քիչ է տարբերվում մեր ձեռքի տակ եղած 1902 թ. վերաբերող տվյալներից։ Ըստ արխիվային նյութերի, 1902 թ. քաղաքի երեք բուֆետներից յուրաքանչյուրն ունեցել է 4000 ռ. շրջանառություն, ռեստորաններից յուրաքանչյուրի տարեկան շրջանառությունը տատանվել է 1000—1800 ռ. միջև[1], յոթ գինետներից յուրաքանչյուրինը՝ 800—1400 ռուբլու միջև, 18 միկիտաններից յուրաքանչյուրը՝ 900—3200 ռ., իսկ երկու գարեջրատները միասին ունեցել են 4700 ռ. տարեկան շրջանառություն[2]։ Նույնպիսի պատկեր էին ներկայացնում նաև պանդոկային մյուս ձեռնարկությունների շրջանառությունները[3]։

Յուրաքանչյուր տարի պանդոկային ձեռնարկությունների տերերը պարտավոր էին հատուկ թույլտվություն ստանալ այդ տիպի ձեռնարկություն պահելու համար[4]։ Պանդոկային հիմնարկների պետական հարկերը 90-ական թվականներից սկսած կազմում էին դրանց մաքուր եկամտի 8 տոկոսը[5], իսկ մաքուր եկամուտը կազմում էր կապիտալի 15—20 տոկոսը։ Ընդ որում, հյուրանոցների, բուֆետների, պանդոկների, ռեստորանների, հրուշակարանների, թեյարանների, կաթի խանութների և երշիկարանների մաքուր եկամուտը համարում էին 20 տոկոս, իսկ գինետներինը, քարավանատներինը և ճաշակրպակներինը՝ 15 տոկոս[6]։

Պանդոկային որոշ ձեռնարկություններ չնայած իրենց անշուք ու բզուկային վիճակին, ունեին ամպագոռգոռ անուններ և հայտնի էին ամբողջ քաղաքում։ Երևանցիներից ո՞ւմ հայտնի չէին Ա. Գալստյանի «Արփաչայ» պանդոկը, որը հետագայում անցավ Ս. Արազյա-

1 Ամենամեծ ռեստորանը պատկանում էր Ալեքսան Բեգլարյանին։ 1902 թ. դրա շրջանառությունը կազմել է 1800 ռուբլի (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 177, գ. 508, թ. 10)։

2 Նույն տեղը, թ. 5—13։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, գ. 565, ԹԹ. 33, 34, 36—39, գ. 586, թ. 26—27, 37—44, գ. 605, թ. 23—25 և այլուր։

5 Նույն տեղը, գ. 565, թ. 16։

6 Նույն տեղը, թ. 15—16։

նին, Աստաֆյան փողոցի վրա գտնվող «Վագոն» պանդոկը, Մ. Հովհաննիսյանի «Զանգու» պանդոկը, «Մուշտաիդ» կոչված ջրի, կաթի, սուրճի և թեյի «խանութը», «Բեռլինյան երշիկարանը» (բացված 1912 թ.), «Աննոնա» կոչված ճաշարանը (բուլվարի դիմաց), Խաչատրյան եղբայրներին պատկանող «Դալմա» դինետունը, Սիսակ Անտոնյանի «Սասուն» ռեստորանը, Մկրտիչ Նալբանդյանի «Ֆրանսիա» հյուրանոցը և այլ ձեռնարկություններ[1]։



Գյոլ-ջամիի թեյարանի ինքնաեռը
(Երևանի պատմության թանգարան)։

Ոգելից խմիչքների պանդոկային ձեռնարկություններից «Ար-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 586, թ. 45, ֆ. 133, ցուցակ 1, գ. 1072, «Эриванские объявления», 1912, №№ 10, 26, 77, 80, 1914, № 30, 1915, № 13 և ուրիշ տեղերում։

փաչայը», «Պալերմոն», «Բեռլինը» և ուրիշներ փաստորեն վեր էին ածվել անառականոցների։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի թղթակիցներից մեկը «Մանկավարժ» ստորագրությամբ՝ անվերնագիր հոդվածում գրում է, որ «Նոր նկեղեցու փողոցը (այժմ Սովետների փողոց — Ք. Հ.) դարձել է զանազան տեսակի «Արփաչայ»-ների, «Պալերմո»-ների, «Բեռլին»-ների և այլոց բուն», որտեղ մարդիկ զբաղվում են արբեցողությամբ և անբարոյականությամբ։ Քաղաքի «լոթիները» զուռնայի ու դուդուկի նվագակցությամբ ամբողջ գիշերներ էին անցկացնում այդտեղ, խանգարելով քաղաքացիների հանգիստը և իզուր չէր, որ, ինչպես թղթակիցն է ասում, «Արփաչայը» սովորաբար կոչվել է նաև «Լուսաբաց»[1]։ Անկարգությունները հասնում են այն աստիճանի, որ քաղաքային ոստիկանական վարչությունը հարկադրված է լինում քաղաքի կենտրոնական մասից հեռացնել[2] այդ յուրատեսակ պանդոկ-անառականոցները, ինչպես կարելի է կոչել դրանք։ Սակայն դրանով, անշուշտ, որևէ չափով չեն նվազում անկարգություններն ու ստորացուցիչ գործողությունները։

Ապրանքների գների վերաբերյալ պահպանվել են մեծ թվով տվյալներ։ Դրանք հիմնականում վերաբերում են լայն սպառման ապրանքներին և շուկայում վաճառվող գյուղատնտեսական մթերքներին։ Ժամանակի ընթացքում ապրանքների գների կրած փոփոխությունները ցույց է տալիս հետևյալ աղյուսակը, որը կազմում ենք արխիվային նյութերի հիման վրա (տե՛ս աղյուսակ 19)։

Ինչպես տեսնում ենք, ամենօրյա գործածական ապրանքների գները 1886—1913 թթ. ընթացքում մեծ չափով ավելանում են։ Այսպես, ոչխարի մսի ֆունտը այդ ժամանակամիջոցում 4 կոպեկից բարձրանում է 14 կոպեկի, հացի ֆունտը՝ $^1/_2$—$2^1/_2$ կոպեկից՝ 4—5 կոպեկի, կովի յուղի ֆունտը՝ 28 կոպեկից՝ 50 կոպեկի, ձուը՝ 10—18 կոպեկից՝ 27 կոպեկի, աղի փութը՝ 30 կոպեկից՝ 60 կոպեկի, ցորենի փութը՝ 54 կոպեկից՝ 1 ռ. 35 կոպեկի, ցորենի ալյուրի փութը՝ 64 կոպեկից՝ 1 ռ. 54 կոպեկի, գինու դույլը՝ 75 կոպեկից՝ մինչև 2 ռ. 35 կոպեկի և այլն։ Միջին հաշվով այդ 30 տարվա ընթացքում լայն սպառման առարկաների գները բարձրացել էին երկու—երկուսուկես անգամ, մինչդեռ բանվորի աշխատավարձի բարձրացում կատարվել էր աննշան չափերով։ Արդյունաբերության մասին խոսելիս տեսանք, որ սևագործ բանվորի աշխատավարձը

1 «Эриванские объявления», *1913, № 61*։

2 Նույն տեղը։

№ ը/կ	Ապրանքների տեսակները	Քանակը	1886[1] ռ.[7]	1886[1] կ.	1891[2] ռ.	1891[2] կ.	1900[3] ռ.	1900[3] կ.	1901[4] ռ.	1901[4] կ.	1909[5] ռ.	1909[5] կ.	1913[6] ռ.	1913[6] .
1	Միս. ոչխարի	1 ֆ.	—	4	—	7	—	—	—	10	—	—	—	14
	այծի	1 ֆ.	—	3,5	—	5	—	—	—	5	—	—	—	—
	տավարի	1 ֆ.	—	—	—	6	—	—	—	8	—	—	—	13
2	Հաց. տեղական ռուսական 1-ին տեսակի	1 ֆ.	—	1,5	—	2	—	—	—	3	—	—	—	4
		1 ֆ.	—	2,5	—	3	—	—	—	4	—	—	—	5
3	Յուղ. կովի	1 ֆ.	—	28	—	28	—	—	—	45	—	40	—	50
	քնջութի	1 ֆ.	—	18	—	18	—	—	—	22	—	—	—	27
	կտավատի	1 ֆ.	—	10	—	—	—	—	—	22	—	—	—	27
4	Օճառ տեղական	1 ֆ.	—	10—15	—	—	—	—	—	—	—	12	—	14
5	Ձկ	1 փ.	—	30	—	—	—	—	—	45	—	—	—	60
6	Յորեն	1 փ.	—	54	—	75	—	—	—	93	—	—	1	35
7	Գարի	1 փ.	—	32	—	45	—	—	—	—	—	—	—	—
8	Ցորենի ալյուր	1 փ.	—	64	—	80	—	—	1	—	1	79	1	54
9	Օղի	1 դուլ	4	20	5	50	—	—	5	50	5	50	5	50
10	Երևանի գինի	1 դուլ	—	75	1	75	—	—	—	—	1	80	2	35
11	Պանիր	1 ֆ.	—	7,5	—	14	—	—	—	—	—	—	—	20
12	Կադամբ	1 փ.	—	—	—	—	—	—	—	—	—	50	—	50
13	Կարտոֆիլ	1 փ.	1	—	—	80	—	—	1	—	—	60	—	70
14	Գամիդոր	1 փ.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	50
15	Մեղր	1 ֆ.	—	—	—	32	—	—	—	—	—	45	—	45
16	Շաքար	»	—	—	—	16	—	—	—	—	—	17	—	17
17	Ձու	10 հ.	—	—	—	12	—	—	—	—	—	25	—	25
18	Հավ	1 հ.	—	—	—	—	—	—		—	—	45	—	50
19	Կաթ	1 դ.	—	—	—	—	—	—	—	—	1	60	1	80
20	Ավազ	1 խ. ա.	—	—	15	—	18	—	—	—	—	—	20	—
21	Գինգա	1 փ.	—	—	8	—	5	—	—	—	—	—	6	—
22	Երկաթե մեխեր	1 փ.	—	—	7	25	—	—	—	—	—	—	—	—
23	Ասֆալտ	1 փ.	—	—	1	75	1	20	—	—	—	—	—	70
24	Գերաններ	1 գծ. սաժ	5	12	2	54	6	52	—	—	—	—	2	—
25	Գաջ	1 փ.	—	20	—	—	—	—	—	—	—	—	—	17
26	Ջամասկա	1 փ.	12	—	8	—	2	60	—	—	—	—	4	—
27	Բելիյա	1 փ.	20	80	15 20	—	8	20	—	—	—	—	6	50
28	Վառած կիր	1 խ. ա.	110	—	96	—	90	—	—	—	—	—	—	85
29	Աղյուս	1000 հ.	25	—	23	—	22	—	—	—	—	—	22	—

1 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. *117*, գ. *121*, թ. *10—14*, գ. *149*, թ. *2—4*։

2 Նույն տեղը, գ. *227*, թ. *2—7*։

3 Նույն տեղը, գ. *458*, թ. *5—20*։

4 Նույն տեղը, գ. *484*, թ. *13—43 և 65*։

5 Նույն տեղը, գ. *676*, թ. *3—6*։

6 Նույն տեղը, գ. *773*, թ. *10—14*, գ. *774*, թ. *3—5*։ Համմ. ЦГИА Грузинской ССР, ф. *415*, д. *113*, л. *11—12*։

7 *1886 և 1891 թթ. աննդամթերքների գները բերված են ըստ քաղաքային վարչության հաստատած սակագների, իսկ մյուսները՝ բոլորը շուկայում գոյություն ունեցող գներն են*։

80—90-ական թվականներին 30—45 կոպեկ էր, իսկ 1913 թ.՝ 60—70 կ.։ Արխիվային որոշ նյութերի համաձայն ոչ արդյունաբերական, օրավարձով աշխատող սեզոնային բանվորները դրանից էլ պակաս են ստացել։ Քաղաքային վարչության տվյալներով վերջիններս 1901 թ. օրական ստացել են 60 կոպեկ [1], իսկ 1909 թ. դրանց աշխատավարձը փոխանակ բարձրանալու, իջել է 50 կոպեկի [2], իսկ քաղաքի շրջակայքի այգիներում աշխատող բանվորները, որոնք մեծ մասամբ գալիս էին Էջմիածնի և Նոր Բայազետի գավառներից, 1907 թ. օրական ստանում էին 30 կոպեկ աշխատավարձ [3]։ Բանվորի տնտեսական ցածր մակարդակը ակնառու է դառնում, երբ փորձում ենք իրար մոտ դնել նրա աշխատավարձն ու լայն սպառման առարկաների գներն արտահայտող թվերը։ Այսպես, 1886 թ. օրական 12—15 ժամ աշխատող սեզոնային բանվորի մեկ օրվա աշխատավարձով (30—45 կոպեկ) կարելի էր գնել $4^1/_2$—$6^1/_2$ կգ հաց, կամ 1—$1^1/_2$ ֆունտ կովի յուղ։ Ավելի ցածր էր 1913 թ. աշխատավարձը։ Այդ թվականի սեզոնային բանվորի մեկ օրվա աշխատավարձով կարելի էր գնել 1,2 ֆունտ յուղ, կամ 4—$4^1/_2$ կոր տեղական օճառ, կամ 4—5 կգ հաց, կամ $3^1/_2$—4 ֆունտ շաքար, կամ 3—$3^1/_2$ լիտր կաթ և այլն։ Սակայն քաղաքում վաճառվող ապրանքների մեջ անհամեմատներն ամենաէժաններն էին։ Բանվորի, արհեստավորի և քաղաքի մյուս աշխատավորական խմբերի ռեալ աշխատավարձի չնչինությունը ավելի է աչքի զարնում, երբ այն արտահայտում ենք արդյունաբերական ապրանքներով՝ մանուֆակտուրայով, կենցաղային ու տնային տնտեսության մեջ գործածվող իրերով, կոշկեղենով և այլն, որոնք նույնպես լայն սպառման ապրանքների թվին են պատկանում։ Իսկ տնային կին կամ աղամարդ ծառայողների աշխատավարձը նույնիսկ 1913 թվականին չնչին կոպեկներ էին (ամսական 12—15 ռուբլի), չնայած նրանք օրական աշխատում էին ավելի քան 15 ժամ [4]։

Շուկայում և նրա կրպակներում վաճառվող ապրանքների գները ըստ տարվա սեզոնների նշանակվում էին քաղաքային վարչության և պարենավորման հանձնաժողովի միացյալ նիստում ու հաստատվում էին նահանգապետի կողմից։ Սակայն սահմանված սակագները առևտրի ժամանակ սովորաբար խախտվում էին այս կամ այն չափով։ Սովորաբար շուկայի իրական գները սահմանված սակագներից բարձր էին լինում։ «Կոանն» Թիրթի համարներից մեկում ականատես Թղթակիցը, խոսելով քաղաքի շուկայում հացի ու մսի սակագների խախտման մասին, գրում է. «Վաճառվում է հացը սակագնից ավել գնով, միսը՝ առավել ևս։ Երբ պահանջում ես սակագին, նա ձեզ պատասխան անգամ չի տա, ուված պատասխանն էլ այն է, որ այդպես է, կուզես՝ առ, չէ՝ թող գնա» [1]։ Թղթակցի դժգոհությունը միանգամայն տեղին է։ Բերենք նրա այդ դժգոհությունն արտահայտող բազմաթիվ փաստերից միայն մեկը։ 1901 թ. երկրորդ կեսի համար քաղաքային վարչությունը ոչխարի մսի (առաջին և երկրորդ տեսակի) մեկ ֆունտի համար սակագին էր սահմանել 8 կոպեկ [2], մինչդեռ այն վաճառվում էր 10 կոպեկով (տե՛ս աղյուսակը), իսկ հացի ֆունտը (տեղական և ռուսական) սահմանված էր 2 կոպեկ [3], բայց վաճառվում էր 3—4 կոպեկով (տե՛ս աղյուսակը)։ Հացի սակագների խախտումներն այնքան արտառոց էին, որ քաղաքագլուխը 1895 թ. հարկադրված է լինում այդ մասին զեկուցելու նահանգապետին և նրանից համապատասխան միջոցառումներ հայցելու հացավաճառների կամայականությունները կանխելու համար [4]։ Նույնպիսի տարբերություններ կային նաև մյուս ապրանքների համար սահմանված սակագների և շուկայի իրական գների միջև։ Մասսայական և ամենօրյա ապրանքների գների այդպիսի խախտումները հսկայական չափով իջնցնում էին աշխատավորության կենսամակարդակը։

Ըստ մոտավոր հաշիվների, 80-ական թվականների սկզբներին Երևանի շուկայում տարեկան վաճառվում էր ավելի քան 50.000 չետվերտ (մոտ 352 հազար փութ) ցորեն, իսկ XX դարի սկզբներին դրա քանակը ավելի քան կրկնապատկվում է։ Նույնպիսի մեծ ծավալ ուներ նաև գինու, հացի, մրգեղենի և այլ ապրանքների առևտուրը։ Իսկ դրանից դժվար չէ պատկերացնել, թե սակագների խախտումներից ինչքան շատ էին տուժում աշխատավորները։ Փաստորեն սակագինը միայն ձևականություն էր, եթե նկատի ունենանք, որ դրա կամայական խախտումները ուղեկցում էին նաև առևտրականների

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 484, թ. 43։
2 Նույն տեղը, գ. 676, թ. 6։
3 ЦГИА СССР в Москве ф. ДП, 4д-во, 1907, д. 87, ч. 2, л. 5։
4 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, л. 12։

1 «Կոանն», 1912, № 11։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 170, թ. 10։ Մի այլ փաստաթղթի համաձայն 1901 թ. առաջին կեսի համար մսի սակագին էր սահմանվել ֆունտը 7 կոպեկ (տե՛ս նույն տեղը, ֆ. 117, գ. 484, թ. 1)։
3 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 78։
4 Նույն տեղը, ֆ. 94, գ. 5101, թ. 2—3։

կատարած ամենօրյա խարդախությունները, որոնց մասին այնքան շատ փաստեր են արձանագրված մեր պարբերական մամուլի էջերում։ Մասավաճառները ո՛չ միայն կամայական կերպով խախտում էին սահմանված գները, այլև երկրորդ կարգի միսը սովորաբար ծախում էին առաջին կարգի տեղ, իսկ այծի ու գոմեշի միսը՝ ոչխարի ու տավարի մսի անվան տակ [1]։ Քաղաքի բնակչության համար պակաս պատուհաս չէին նաև հացավաճառները։ Նրանք հաճախ վաճառքի էին հանում դառնացած ալյուրից, անպետք խառնուրդներով «համեմված» անորակ ու խմոր հաց։ Հացավաճառները երբեմն միացած ի չիք էին դարձնում հաստատված սակագինը և հացը վաճառում իրենց ցանկացած գներով [2], ժողովրդից քամելով հսկայական շահույթներ։ Այդ բոլորի հետևանքով Երևանում, որը մի ժամանակ Անդրկովկասում և նրա սահմաններից դուրս հայտնի էր գյուղատնտեսական մթերքների էժանությամբ, որոշ ապրանքների գներ նույնիսկ գերազանցում էին Թիֆլիսի շուկայում եղած գներից [3]։

Խարդախություն կատարողները միայն առևտրականները չէին։ Կշեռքի վերակացուն (զանթարչին), սպեկուլյանտները (այաղչիները), միջնորդները, կապալառու-հարկահավաքը և շուկայի այլ «գործիչներ»,—բոլորը պատուհաս էին դարձել և՛ գյուղացի-մթերավաճառի և՛ քաղաքացի-գնորդի համար։ Պարբերական մամուլում արտատոց փաստեր են բերվում այն մասին, որ զանթարչին մթերքները կշռելիս խարում է գյուղացիներին, այաղչիները՝ իրական գներից 1,5 անգամ պակաս վճարելով, խարդախորեն խաբում են նույն գյուղացիներին և, քաղաք բերվող մթերքները հավաքելով իրենց ձեռքում՝ դրանք վաճառում էն կրկնակի գներով։ Դրանցից ետ չէին մնում միջնորդներն ու հարկահավաքները [4]։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի թղթակիցներից մեկը ահա թե ինչպես է բնութագրում հարկահավաքներին ու սպեկուլյանտ-այաղչիներին. «Խարջ հավաքող մաշադիները, որոնք ամբողջ օրը... գամփռների պես գցել են բազար, հախից ու նհախից առնում են ու առնում՝ առանց այլևայլության։ Մեկ քուրդ կամ թուրք և կամ հայ եթե շա-

1 «Կռանն», 1912, № 11։

2 Տե՛ս «Պսակ» (լրագիր), 1880, № 6, «Эриванские объявления», 1909, № 40, «Մուրճ» (ամսագիր), 1902, № 6, էջ 195—196, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 736, թ. 11 և այլուր։

3 «Эриванские объявления», 1909, № 39։

4 Տե՛ս նույն տեղը, 1909, №№ 22 և 24, «Կռանն», 1911, № 7 և 1912, № 8։

յակով իր համար մեկ փալաս է բերում, կամ իր անասունի համար խոտ ու դարման, փոքրիկ խուրջինով մի որևէ բան, կամ մի աղլուխ սիբեխ, մեկ հավ— դարձյալ խեղդելով ու ծեծելով ստանում են իրենց իբր հասանելի խարջը, իսկ հակառակողներին ու բողոքողներին՝ անպատկառ կերպով պատասխանում են՝ «դու, որ էշի բեռը ինքդ ես վեր առել, դրա համար էլ պետք ա վճարես իշի բեռի խարջը»» [1]։ «Բաս այաղչիները — դրանք աստվածներից ուղարկված պատիժներ են մարդկանց համար,—գրում է թղթակիցը։—Առավոտվանից մինչև իրիկուն սոված գայլերի նման վխտում են բազարներում։ Ո՞վ կհամարձակվի մեկ բան առնել իր տան համար քաղաք մտնող հայից, թուրքից կամ քուրդից այդ վամպիրների ձեռքից. իսկ ինչ են հանում սրանք խեղճ գյուղացի-մթերքներ բերող ծախողների գլուխը՝ ասում֊ած հեռացնի.— ինչ գին որ խոսան՝ կնաք պիտի վճարեն, ինչ քաշ որ լինի՝ կնսը պիտի դուրս բերեն։ Իրանք էլ հետո ծախում են մեղ կնսը ջուր, կնսը ղիբլի» [2]։

Ներքին առևտրի նորմալ ընթացքին խանգարում էր նաև չափ ու կշիռների անորոշությունը։ Ինչպես ռուսական չափ ու կշիռները վաղուց արդեն պաշտոնապես մոցված էին առևտրի կենցաղի մեջ, բայց դրանց զուգահեռ շարունակում էին գործածության մեջ մնալ և հին՝ պարսկական շրջանի միավորները՝ խալվարը, բաթմանը և այլն, որոնք, ինչպես տեսանք այս աշխատության նախորդ գրքում, շատ հեռու էին ճշգրիտ լինելուց։ Նույնիսկ քաղաքային վարչությունը իր հաշվետվություններում, զեկուցագրերում և պաշտոնական գրություններում հաճախ գործածում էր պարսկական շրջանից մնացած միավորները [3]։ Չնայած ֆինանսների մինիստրության չափերի ու կշիռների գլխավոր պալատի կարգադրությամբ քաղաքի շուկայում և խանութներում պարբերաբար ստուգվում ու դրոշմանշվում էին կշռաքարերն ու չափի միավորները, սակայն հազվադեպ չէր կեղծ կշռաքարերի և այլ միավորների մշտական գործածությունը։

Չափերի ու կշիռների միակերպության մասին Պետական խորհրդի որոշումը Երևան քաղաքում կիրառվում է 1900 թ. հունվարի 1-ից [4], բայց դրանով էլ չի վերանում չափ ու կշիռների բազմազանությունն ու անորոշությունը։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի թղթակիցներից մեկը գրում է, որ 1913 թ. քաղաքի շուկայում

1 «Эриванские объявления», 1909, № 22։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 511, թ. 93։

4 Նույն տեղը, գ. 476, թ. 2—3։

գոյություն ունեցող կշռաքարերից «շատերը անպետք են և ուղիղ չեն կշռում», որ քաղաքային վարչության կազմից անպետք կշռաքարերը ոչնչացնելուց և «կանոնավորների վրա» «քաղաքային վարչության կնիքը» դնելուց հետո էլ շուտով շուկայում նորից երևան են գալիս կեղծ «կշռաքարերն ու քարերը», «հրապարակի վրա գտնված կշռաքարերից շատերն արդեն կեղծ են ու անպետք»[1]։

Առևտրի զարգացմամբ Երևան քաղաքում աստիճանաբար մեծանում է գործակատարության թիվը։ Եթե 1886 թ., այսպես կոչված, առաջին և երկրորդ կարգի գործակատարների թիվը ընդամենը 102 էր[2], ապա XX դարի սկզբներին այն հասնում է մի քանի հարյուրի։ Գործակատարների թվի ավելացման հետ միասին փոփոխության է ենթարկվում և նրանց հասարակական դիրքը։ XX դարի սկզբներից Երևանի գործակատարներն արդեն կազմում էին հասարակական մի առանձին խումբ, որն ուներ իր ուրույն դիրքն ու շահերը[3]։

Գործակատարություն ասելով լայն իմաստով հասկացվել է վաճառատներում ծառայողներն ընդհանրապես։ Սակայն իրականում գործակատարությունը մի համասեռ զանգված չէր, նրա մեջ միավորվում էին իսկական գործակատարները, որոնք սովորաբար բաժանվում էին տարբեր դիրք ու իրավունքներ ունեցող երկու կարգի, և աշակերտները։ Թե՛ աշակերտները և թե՛ իսկական գործակատարները պատկանում էին հասարակության շահագործվող խմբին։ Աշակերտները սովորաբար վարձատրություն չէին ստանում։ Նրանք, լավագույն դեպքում, գործակատարի աստիճանի կարող էին հասնել 2—3 տարի տիրոջ խանութում և տանը առավոտից մինչև երեկո չարքաշ աշխատանքներ կատարելուց հետո։ Նա այդ ժամանակամիջոցում ավելի շատ տնային ծառայի պարտականություններ էր կատարում, քան խանութում առևտուր սովորում։ Խանութում նույնպես ամենածանր աշխատանքները կատարում էին աշակերտները։ Աշակերտները միանգամայն իրավազուրկ էին, չնչին սխալանքի համար տիրոջ կողմից ենթարկվում էին խիստ պատիժների ու ծեծի[4]։ Սահմանված ժամանակը լրանալուց հետո, աշակերտը արդեն համարվում էր գործակատար, սակայն չնչին աշխատավարձով։ Սկզբնական շրջանում նա ամսական ստանում էր 5 ռուբլի,

1 «Эриванские объявления», *1913, № 65*։
2 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, գ. 25, թ. 38*։
3 «*Խոսք*» (լրագիր), Երևան, *1914, № 5*։
4 *Նույն տեղը, № 8*։

2—3 տարուց հետո նրա ամսական աշխատավարձը հազիվ հասնում էր 10—15 ռուբլու[1]։ Այդ էր «գործակատարների կադրեր պատրաստելու» գրեթե միակ եղանակը նախասովետական Երևանում։ Քաղաքում չկար որևէ առևտրական դպրոց, եթե նկատի չունենանք ոմն Ա. Յ. Ալիևի առևտրական մասնավոր «դպրոցը»[2], որը գործել է 1911—1914 թթ.՝ մի քանի տասնյակ մանուկների տալով առևտրական տարրական կրթություն։

Նախանձելի չէր նաև իսկական գործակատարների դրությունը։ Ճիշտ է, պետականորեն սահմանված էին աշխատանքի ու հանգստի որոշակի ժամեր, որ հրապարակված էր 1906 թ. (Երևանում այդ օրենքը սկսեցին գործադրել միայն 1913 թ. դեկտեմբերի 1-ից)[3], սակայն վաճառականները երբեք էլ հաշվի չէին նստում գոյություն ունեցող պետական կարգ ու կանոնի հետ[4], նրանք օրվա մեջ գործակատարներին հին ձևով աշխատեցնում էին 14—15 ժամ, զրկելով նրանց ամենատարրական պայմաններից։ Գործակատարն էլ, երբեմն աշակերտի նման, պարտավոր էր նվաստացուցիչ ծառ աշխատանքներ կատարել տիրոջ տանը[5], այգում կամ բանջարանոցում։ Գործակատարների ամսական աշխատավարձը 1900—1913 թթ. 15—16 ռուբլուց չէր անցնում։

դ) ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Հողատիրության ձևերը և դրանց առանձնահատկությունները. մասնավոր հողատիրությունը, եկեղեցապատկան-վաճխապատկան հողերը և բաղաքապատկան ու պետական հողային տարածությունները։ Քաղաքապատկան ու պետական հողերից օգտվելու կարգը. դրանց կապալով տալը և վաճառքը։ Քաղաքապատկան հողերի յուրացումը անհատ բաղաքացիների կողմից։ Քաղաքապատկան հողերից ավազ, քար և կավ ձեռք բերելու իրավունքը։ Ոռոգման ցանցը։ Քաղաքի գյուղատնտեսական հյուղերի ընդհանուր վիճակը։ Այգեգործությունն ու բանջարաբուծությունը։ Հացահատիկային տնտեսությունը։ Անասնապահությունը։

1 «*Խոսք*» (լրագիր), Երևան, *1914, № 8*։
2 «Эриванские объявления», *1914, № 61*։
3 «*Խոսք*», *1913, № 1, 1914, № 14*։
4 *Նույն տեղը*։
5 *Նույն տեղը, 1914, № 5*։

1880—1914 թթ. ընթացքում Երևան քաղաքի հողային ընդհանուր ֆոնդերը իրենց մեծությամբ, նախորդ ժամանակների համեմատությամբ, էական փոփոխությունների չեն ենթարկվել։ Նույնն էին մնացել նաև հողատիրության ձևերը, իսկ ավելի վաղ շրջանում, ինչպես ասվել է աշխատության նախորդ գրքում, քաղաքում գոյություն ունեին հողատիրության երեք ձևեր՝ մասնավոր, պետական և եկեղեցապատկան-վանքապատկան։

Մասնատիրական հողային տարածությունները պետական և, մասնավորապես, քաղաքապատկան հողերի հաշվին այս շրջանում շարունակում էին ընդարձակվել։ Քաղաքապատկան հողատիրության ձևի մասին խոսելիս կտեսնենք, որ քաղաքային ինքնավարությունը այս կամ այն կառուցումը կատարելու համար հարկադրված էր պարբերաբար օտարացման ենթարկել քաղաքապատկան այգիները, բանջարանոցները և ընտիր հողային այլ տարածություններ։ Այնպես որ նախորդ ժամանակաշրջանի նման 1880—1914 թթ. ևս քաղաքի մասնատիրական հողատիրության բնորոշ կողմերից մեկը կազմում էր նրա արագ ընդարձակումը։

Այգի, բանջարանոց, տնատեղ կամ այլ կարգի հողային տարածություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացի (իսկ այդպիսի քաղաքացիներ Երևանում շատ կային) իրավունք ուներ դրանք վաճառել, գրավ դնել, կտակել կամ նվիրել անհատ մարդկանց կամ հիմնարկներին։

Հողի առ ու վաճառքի և կտակման մասին բազմաթիվ փաստաթղթեր են պահպանված արխիվներում և պարբերական մամուլում [1]։ Այդ փաստաթղթերից պարզ երևում է, որ քաղաքացին իրավունք ուներ ցանկացած ձևով տնօրինելու իր տրամադրության տակ եղած հողային տարածությունը։ Հողի առ ու վաճառք կատարվել է բոլոր տարիներում։ Սակայն նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 90-ական թվականներից սկսած, երբ քաղաքի բնակչության թիվը խոշոր արդյունաբերության ծագման ու զարգացման շնորհիվ սկսում է մեծանալ, հողի առ ու վաճառքն ավելի մասսայական բնույթ է ստանում։ Յուրաքանչյուր նոր քաղաքացի ուժերը ներածին չափով ձգտում է ունենալ իր փոքրիկ բանջարանոցը կամ այգին և սեփական տունը։ Սակայն նորաբնակ քաղաքացիներից շատ շատերը ի վիճակի չէին հող գնելու, նրանք

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 77, գ. 28, թ. 2—4, գ. 112, թ. 2—3, գ. 114, թ. 2—3, գ. 205, թ. 6, գ. 420, թ. 4—6, «Эриванские объявления», 1912—1913 թթ. համարներում և այլ տեղերում։

սեփականազուրկ էին և ապրում էին կամ չնչին արժեք ներկայացնող խրճիթներում և կամ գործարանների հանրակացարաններում, եթե աշխատում էին վերջիններում իբրև բանվորներ։ Քաղաքում կային գյուղից եկած հսկայական թվով շատ աղքատ քաղաքացիներ, որոնք մուրացկանությունից բացի այլ ապրուստի միջոցներ չունեին։ Դրանցից մեկն էր Վաղարշապատից Երևանում վերաբնակված ոմն Մարիամ Հովսեփյանը, որը մի կտոր հացի համար 1898 թ. ամենայն Հայոց կաթողիկոսին է ուղարկել հետևյալ խընդրագիրը.

«Վեհափառ հայրապետին ամենայն Հայոց տյառն տյառն Մկրտչի
Երևան քաղաքի բնակչուհի՝
այրի Մարիամ Հովսեփյանից
Խնդիր և աղերս.

Վաղարշապատի բնակչուհի եմ, այրիացած, ապրում եմ քաղաքումս (Երևանում—Թ. Հ.), քանիցս անգամ խնդրամատույց եմ եղել Լուսավորչական Սինոդին, վարելահող եմ խնդրել, բայց խնդիրս անկատար է մնացել։ Ունեմ 27 տարեկան անդամալույծ աղջիկ, որի անկատար է մնացել։ Ունեմ 27 տարեկան անդամալույծ աղջիկ, որի պահպանության համար մինչև այժմ մուրացկանություն եմ արել, և այսուհետև ծերությունս արգելք է լինում մուրացկանություն անել և օրական ապրուստ հասցնել անդամալույծ աղջկանս ու ինձ։

Այս առթիվ աղերսանքով համբուրում եմ Ձեր սուրբ գարշապարը և աղաչում եմ ողորմացեք աղքատիս ու անդամալույծ աղջկանս, գրամական ողորմություն շնորհեցեք, որ կարողանամ պահպանել։ Նաև Հայոց հայրիկ՝ աղաչում եմ հրամայեցեք որ ինձ հարկն է վարելու հող տալ ինձ, որով հնար լինի ինձ ապրել ու ապրեցնել։

Ձեր որդի Մարիամ և անդամալույծ Վարդուհի Հովսեփյաններ։
19 փետրվարի, 1898 թ. Երևան» [1]։

Այրիացած Մարիամի նման հողազուրկ և ծայր աղքատներ Երևանում շատ կային։ Աղերսագրերը չէին կարող փրկել և չփրկեցին նրանց մուրացկանի անպատվաբեր վիճակից։ Քաղաքի նորաբնակներից շատերը մնում էին առանց հողի ու աշխատանքի, որովհետև հող ձեռք բերելու գրեթե միակ միջոցը դրամով գնելն էր, իսկ քաղաք եկող սեփականազրկված գյուղացիները զուրկ էին այդ միջոցից։

1 ՀՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ֆ. կաթողիկոսական ֆիվան, թղթապանակ 236ժա, վավերագիր 266։

Քաղաքում 80—90-ական թվականներին և հետագա տարինե-րին լայն գործունեություն էր ծավալել վաշխառուական կապիտալը։ Երամի կարիք զգացող և աղքատացող քաղաքացիները հարկադրված էին իրենց տունը, այգին, բանջարանոցը, արհեստանոցը կամ կըր-պակը գրավ դնելով՝ վաշխառուից ստանալ չնչին գումարներ [1]։ Վաշխառուն սովորաբար գրամը տրամադրում էր առանց վերադիր տոկոսի [2], համոզված լինելով, որ գրավ դրված ունեցվածքը բերել-լու է պատկառելի եկամուտներ կամ պարտապանը սահմանված ժամկետում անկարող է լինելու վերադարձնել նրան տրամադըր-ված գրամը և գրավ դրված ունեցվածքը անցնելու է իրեն՝ իբրև «օրինական» սեփականություն։ Վաշխառուի ճանկն էին ընկնում հատկապես ցածր խավերի ներկայացուցիչները։

Հողի առ ու վաճառքը, գրավ դնելը, կտակելը և հողային մյուս գործարքները կատարվում էին նոտարի միջոցով, կողմերի և երկու-երեք վկաների ներկայությամբ։ Գործարքների ակտերում և նոտա-րական մատյաններում նշվում էին հողի կամ այլ ունեցվածքի չա-փը, սահմանները, արժեքը, սեփականատիրության ձևը, գործարքի պայմանները և այլն, որոնք հաստատվում էին նոտարական կնիքով և կողմերի ու վկաների ստորագրություններով։

Պետական օրգանները, ելնելով գոյություն ունեցող օրենքնե-րից՝ մի շարք դեպքերում (հարկերը չտալու, ոռոգման սիստեմից օգտվելու կանոնները կատարյալ կերպով ոտնահարելու և այլն) իրավունք ունեին կալանք դնել քաղաքացիների անշարժ ունեցված-քի, այդ թվում և հողային տարածությունների վրա։ Այդպիսի կա-լանքների մասին մի շարք փաստաթղթեր են պահպանվել։ Դրանցից միայն մեկի համաձայն 1885 թ. կալանքի տակ էին վերցվել առա-ջին քաղաքամասում ապրող չորս քաղաքացիների հետևյալ ունեց-վածքը՝ 2 կրպակ, 3 տուն իրենց բակերով և երեք այգի [3]։

Քաղաքի հողատերերի մեծագույն մասը կազմում էին մանր հողատերերը. խոշոր հողատերերը սակավաթիվ էին։ Վերջիններս սովորաբար քաղաքից բացի հողանդուկներ ունեին նաև գյուղա-կան վայրերում։ Խոշոր հողատերերը կազմում էին քաղաքի կալվա-ծատիրությունը, որի մեջ մտնողները սովորաբար հին ազնվական ընտանիքներն էին՝ Գեղամյանները և մյուսները, որոնց մասին ասված է նախորդ գրքում։ Կալվածատերերն ունեին արտոնյալ վիճակ, նրանք օգտվում էին այդ դասակարգի համար ցարական կառավար-ության տված բոլոր առավելություններից։ Երևանի կալվածատի-րությունն իր ընտրած հավատարմատարների միջոցով մասնակ-ցում էր Կովկասի կալվածատիրական ժողովներին, որոնք հրավիր-վում էին կալվածատերերի շահերը պաշտպանելու նպատակներով [1]։

Հողատիրության երկրորդ ձևը, որը նման էր մասնատիրակա-նին, վանքապատկան-եկեղեցապատկան հողատիրությունն էր։ Հողատիրության մի ձև, որ քաղաքում առաջացել էր հին ժամանակ-ներից և հետագայում ենթարկվել փոփոխությունների։ Որոշ հողա-յին տարածություններ ունեին և մզկիթները, սակայն դրանց ու-նեցած հողատնդակները վանքապատկանների և եկեղեցապատկան-ների համեմատությամբ չնչին էին, դրանք գերազանցապես փոքրիկ հողակտորներ էին և դանվում էին մզկիթներին կից՝ դրանց համար ծառայելով իբրև հովատուն ճեմարաններ։ Վանքերն ու եկեղեցիները, բացի դրանց բակում եղած փոքրիկ պարտեզներից ու ծաղկանոց-ներից, հողային տնտեսություն չէին վարում։ Նրանց պատկանող այգիներն ու մյուս հողային տարածությունները, քաղաքապատկան հողերի նման, կապալով տրվում էին անհատ մարդկանց։ Կապալի ժամկետը սովորաբար լինում էր մեկ տարի։ Ուստի յուրաքանչյուր տարի վերահաստատվում կամ նորոգվում էին կապալի պայմաննե-րը, նախօրոք պարբերական մամուլում անելով համապատասխան հայտարարություն։ Կապալով տալը նույնպես հաստատվում էր նո-տարական օրգանների կողմից, համապատասխան պայմանների գրանցումներով։

Վիճակագրական բնույթի նյութերում քաղաքի վանքապատկան և եկեղեցապատկան հողերի հետ միասին տրվում են նաև վանքերի ու եկեղեցիների սեփական մյուս անշարժ ունեցվածքները՝ ջրաղաց-ները, շենքերը, կրպակները, բակերը, ինչպես նաև առեղեն գու-մարները։ Եկեղեցիների և վանքերի՝ քաղաքում գտնվող ունեց-վածքների պատկերն ամբողջական ներկայացնելու համար մենք ևս հետևում ենք սկզբնաղբյուրների այդ ավանդությանը և դրանց տվյալների հիման վրա մասնագետների ուշադրությունն հրավիրում հետևյալ աղյուսակի վրա [2]։

---

1 Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 77, գ. 43, թ. 4—5, գ. 45, թ. 4 և նույն ֆոնդի այլ գործերը։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, գ. 66, թ. 1։

1 Օրինակ՝ այդպիսի մի ժողով է գումարվել Թիֆլիսում 1882 թ. մարտին, որտեղ Երևանի կալվածատիրության կողմից որպես ներկայացուցիչ մասնակցել է Վ. Գեղամյանցը («Պատկ», 1882, № 2)։

2 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 101, ցուցակ 1, գ. 50, թ. 25, ֆ. 47 գ. 254, թ. 1 և 4—6, գ. 261, թ. 1 և 2,

Վանքի, եկեղեցու կամ այլ հիշատակության անվանումը	1898 թ. (ըստ նահանգական վարչության ավյալների) ունեցվածքի տեսակն ու քանակը	արժեքը ռ.-ով	եկամտաբերությունը ռ.-ով	1901 թ. (ըստ էջմիածնի հոգևոր խորհրդի ավյալների) ունեցվածքի տեսակն ու քանակը	արժեքը ռ.-ով	եկամտաբերությունը ռ.-ով
1	2	3	4	5	6	7
Էջմիածնի վանք	ա) Մեկ խաղողամրգատու այգի	—	172	ա) Երկու այգի .	—	748
	բ) Մեկ խաղողամրգատու այգի .	—	576	բ) Մեկ ջրաղաց	—	1000
	դ) Մեկ ջրաղաց 5 քարով . . .	—	800	գ) 9 կրպակ . .	—	425
	գ) Մեկ ջրաղաց 4 քարով . . .	—	200			
	ե) 9 կրպակ . .	—	422			
	զ) Եպիսկոպոսական կոնսիստորիայի մեկ շենք .	400	—			
	է) Եպիսկոպոսի և հոգևոր կոնսիստորայի մեկ շենք իր բակով .	10000	—			
	ը) Հոգևոր սեմինարիայի շենքն իր բակով . . .	8000	—			
Սևանի վանք .	ա) Մեկ տուն իր բակով . . .	—	50	ա) Երկու տուն	—	—
Թորվիրապի վանք . . .	ա) Մեկ խաղողի այգի 2 դեսյատին տարածությամբ	1500	100	բ) 4 կրպակ . .	—	—
Երևանի հոգևոր սեմինարիա .	ա) Մեկ ժամատուն	—	120	—	—	—
	բ) Մեկ ջրաղաց 3 քարով . . .	—	250	ա) Մեկ այգի բ) Մեկ ջրաղաց գ) Մեկ կրպակ	—	430
Գեղարդ և Գողթ եկեղեցի .	ա) Մեկ տուն իր բակով, որտեղ տեղավորված է Գեյանեի ուսումնարանը .	600	—	ա) Երկու այգի	3552	1316
	բ) Երկու խաղողամրգատու այգի .	—	120			
Կաթողիկե եկեղեցի . . .	ա) Մեկ խաղողամրգատու այգի .	—	50	ա) Մեկ այգի	960	837
	բ) Մեկ տուն . . .	2500	—			
	գ) 5 կրպակ . .	—	160			
	դ) Փոքրիկ այգի .	—	15			
	ե) Մեկ տուն . . .	—	—			
Ծուքս Հովհաննեսի եկեղեցի	զ) Առձեռն գրամ .	2000	—			
	ա) Մեկ խաղողամրգատու այգի .	—	45	ա) Մեկ այգի	5383	392
	բ) Առձեռն գրամ .	5000	—			

1	2	3	4	5	6	7
Զորավոր եկեղեցի . . .	ա) Մեկ կրպակ . .	—	80			
	բ) Մուտքի իրավունք էջմիածնի դամառում . . .	—	50			
	գ) Մեկ տուն . .	600	—			
	դ) Մեկ տուն . .	—	—			
Սբ. Սարգիս եկեղեցի . .	ե) Առձեռն գրամ .	4000	—			
	ա) Մեկ խաղողամրգատու այգի .	—	120	ա) Մեկ այգի .	2657	1095
	բ) Մեկ տուն իր բակով	—	300			
	գ) Մեկ տուն, որտեղ տեղավորված է նաև մոմ ծախելու մեկ կրպակ	1000	—			
Նորք Թադամասի եկեղեցի . .	դ) Առձեռն գումար	1800	—			
	ա) Մեկ տուն իր բակով . . .	1500	—	ա) Մեկ տուն .	6958	337
	բ) Մեկ տուն իր բակով . .	400	—			
	գ) Առձեռն գումար	8000	—			
Ընդամենը . .	Այգի 9 Տուն 14 Ջրաղաց 3 Կրպակ 15	47300	3630	Այգի 7 Տուն 2 Ջրաղաց 2 Կրպակ 14	19510	6586

Աղյուսակում բերված տվյալները լրիվ չեն և չեն կարող արտահայտել իրական դրությունը: Կային վանքապատկան այլ շատ ունեցվածքներ՝ տներ, կրպակներ, այգիներ և այլն, որոնք նյութերի պակասության պատճառով տեղ չեն գտել նշված աղյուսակում: Օրինակ՝ հայտնի է, որ Գեղարդա վանքը նույնպես այգի ուներ Երևանում (Աստաֆյան փողոցի վրա)[1], բայց այդ մասին ոչ մի նշում չի կատարված մեր օգտագործած փաստաթղթի մեջ: Ավելի պակասավոր են ունեցվածքների արժեքին, եկամտաբերությանը և առձեռն գումարներին վերաբերող թվերը: Այնուամենայնիվ, աղյուսակը մոտավոր գաղափար կարող է տալ եկեղեցապատկան-վանքապատկան ունեցվածքների մասին XIX դարի վերջերի և XX դարի սկզբների երևանում:

Ինչպես ասվեց, պետական հողերը երկու կարգի էին՝ բուն պետական և բաղաքապատկան: Դրանցից առաջինը գնալով նվազել

1 *Տե՛ս* «Эриванские объявления», *1913, № 24.*

էր։ 80-ական թվականներին բուն պետական հողատնդակներից մընացել էր միայն վաղեմի սարդարի Դայմալի այդին, պետական մնացած բոլոր հողատարածությունները 1870 թվականի քաղաքային Կանոնադրությունը կիրառելուց հետո աստիճանաբար անցել էին քաղաքային ինքնավարության տնօրինության։

Քաղաքային հողերը զանազանակերպ էին։ Դրանք բաղկացած էին հացահատիկային դաշտերից, արոտավայրերից, այդիներից ու բանջարանոցներից, հրապարակներից, տնատեղերից, շուկա-հրապարակներից և այլն, և այլն։ Քաղաքում քաղաքապատկան հողերը ցրված էին քաղաքային շրջագծի մեջ մտնող տերիտորիայով մեկ՝ և՛ բուն քաղաքում, և՛ դրանից դուրս՝ արվարձաններում։ Հացահատիկային դաշտերը տարածված էին Նորքի հողամասերում և բուն քաղաքի հարավային կողմում՝ Թոխմախան-դյուլի շրջանում։ Հացահատիկների համար օգտագործվող ամբողջ հողային տարածությունը ըստ 1870 թ. կազմած հատակագծի (որի հեղինակը այն ժամանակվա քաղաքային տեխնիկ Վոիտկոն էր) կազմում էր 1193 դես. 200 քառ. սաժեն և բաժանված էր 110 հանդամասերի[1]։ Ավելի ընդարձակ տարածություն էին գրավում ձմեռային արոտատեղիները։ Դրանք գտնվում էին քաղաքի հարավ-արևելյան կողմում՝ Ջրվեժ, Շենգավիթ և Նորագավիթ գյուղերի միջև[2]։ Բավական ընդարձակ արոտավայրեր կային նաև բուն քաղաքի և Քանաքեռ գյուղի միջև[3], այնտեղ, որտեղ այժմ կառուցված են Կիրպա և Արաբկիր բաղամասերը։ Ավելի ցրված էին այդիների ու բանջարանոցների համար օգտագործվող հողերը։ Արխիվային նյութերից և քաղաքի պահպանված հատակագծերից երևում է, որ քաղաքապատկան այդիներն ու բանջարանոցները հիմնականում գտնվում էին Զանգու գետի երկու ափերին, լիկվիդացիայի ենթարկված բերդի մերձակայքում, Նորագեղում, Շահարում, Կոնդում և Դեմիրբուլաղում։ Միայն Յոնջալը կոչված տեղում (այժմյան կաշվի գործարանի մոտակայքում) տարածված էր քաղաքապատկան մոտ 50 դեսյատին հողատարածություն, իսկ Նորագեղի քաղաքապատկան այդիների տարածությունը XIX դարի վերջերին 64 դեսյատինից ավելի էր[4] (70-ական թվականների վերջերին դրանք մոտ 70-դեսյատին էին)[5]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1366, թ. 85։
2 Նույն տեղը, գ. 1367, թ. 74։
3 Նույն տեղը, գ. 924, թ. 4։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը, ֆ. 191 c/508, գ. 638, թ. 55։

90-ական թվականների վերջերին քաղաքապատկան բոլոր կարգի հողային տարածությունները կազմում էին մի քանի հազար դեսյատին։ Այդ բոլոր հողերի նկատմամբ քաղաքային ինքնավարությունը քաղաքային Կանոնադրության համաձայն և պետական օրգանների սանկցիայով լիակատար իրավունք ուներ օտարացնելու, կապալով տալու կամ ազատորեն օգտագործելու այս կամ այն նպատակներով։

Քաղաքային հողաշափի կողմից պարբերաբար կազմվում էր քաղաքապատկան հողերի հատակագիծը[1], իսկ այդ հողերը զավթումներից պաշտպանելու պարտականությունները դրված էին քաղաքային ոստիկանական վարչության ու առևտրա-տնտեսական ոստիկանության պահապանների վրա[2]։ Այդ գործում կարևոր դեր էին խաղում նաև քաղաքամասերի պետերը, որոնք պարտավոր էին իրենց ենթակա քաղաքամասում հսկել, որպեսզի «օրինական» կարգը «ճշգրիտ» պահպանվի։

Մենք նախորդ գրքում բավական մանրամասնությամբ խոսել ենք քաղաքապատկան հողերի կապալով տալու և վաճառքի մասին, ուստի ավելորդ ու անցանկալի կրկնություններից խուսափելու համար թողնենք դրանց ընդհանուր կանոնները և կանգ առնենք միայն այն կոնկրետ փաստերի վրա, որոնք անմիջականորեն վերաբերում են 1880—1914 թթ. ընթացքում կատարված այդ տիպի գործարքներին։

Քաղաքապատկան հողերը կապալով էին տրվում տարբեր ժամկետներով՝ սկսած մեկ տարուց մինչև 7—8 տարի և ավելի ժամանակով։ Տարբեր կարգի հողային տարածությունների կապալագինը տարբեր էր, կապալադինը փոփոխության էր ենթարկվում նաև ժամանակի ընթացքում։ Կապալով տալու մասին սովորաբար հայտարարվում էր մամուլում, և գործարքի պայմանները որոշվում էր աճուրդի միջոցով։ Ճիշտ է, քաղաքային վարչությունն ու դուման ունեին իրենց նախնական պայմանները, բայց դրանք կարող էին փոփոխության ենթարկվել աճուրդի ընթացքում։ Աճուրդի արդյունքների մասին զեկուցվում էր դումային, որն իր հատուկ նիստով ընդունում էր համապատասխան որոշում, այն ի հաստատություն ուղարկելով քաղաքային գործերի նահանգական ատյանին։ Պայմանները ընդունվելուց հետո երկու կողմերի միջև կնքվում էր հատուկ պայմանագիր, որի մեջ նշվում էին կապալի ժամկետը, կապալա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 6։
2 Նույն տեղը, գ. 802, թ. 9։

վարձը, հողային տարածության չափը, բնույթը, սահմանները, պահպանելու և օգտագործելու պայմանները և այլն։ Արխիվային նյութերից երևում է, որ կապալով տալու ժամանակ կողմերի միջև սովորաբար լինում էին երկարատև սակարկություններ։ Քիչ չէին նաև այն դեպքերը, երբ կապալի պայմաններն ընդունելուց և որոշ ժամանակ հողից օգտվելուց հետո, կապալառուն անընդունելի էր հայտարարում իր ընդունած պայմանները և դիմում էր ներկայացնում կնքված պայմանագիրը չեղյալ համարելու համար։ Այդ հողի վրա կապալառուների և քաղաքային վարչության միջև ծագում էին վեճեր, որոնք պետական ու դատական օրգանների կողմից սովորաբար լուծվում էին մեծ քաշքշուկով [1]։ Սակարկությունների ժամանակ սովորաբար գործը վերջանում էր հօգուտ կապալառուի, որը հողի տերը չէր և ձգձգումներից ոչինչ չէր կորցնում։ Սակայն չպետք է ենթադրել, որ տուժող կողմը միշտ քաղաքային ինքնավարությունն էր։ Վերջինս ամենայն խստությամբ էր վերաբերում հատկապես նորքեցի գյուղացիների նկատմամբ։ Նորքեցիները Նորքը քաղաքին միացնելու ժամանակ կորցրել էին Աբուհայաթի և Նորքի առուներով ոռոգվող 761 դեսյատին հողերի նկատմամբ իրենց իրավունքները և դարձել էին դրանց սոսկ վարձակալողները։ Սկզբնական շրջանում «քաղաքի հայրերը» մխիթարում էին նորքեցիներին, թե նշված հողերից օգտվելու համար իրենք սահմանել են չափավոր վարձ՝ ընդամենը 200 ռուբլի։ Բայց այդ երկար չի տևում, հողի նկատմամբ նորքեցիների վաղեմության ժամկետը լրանալուց հետո քաղաքային ինքնավարությունն արդեն տիրապետողի դիրք է ընդունում և իրեն իրավունք է վերապահում քաղաքին անցած այդ հողերը կապալով հանձնել դանադան մարդկանց [2]։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի թղթակիցը գրում է, որ «Շատ կարճ միջոցում Նորքի հողերի կապալը գնալով ավելի թանկանում է և անմատչելի դառնում հողագործ դասակարգին։ Վաշխառու կապալառուները, կեղեքելով, անանկացնում և աղքատության դուռն են հասցնում հողագործ նորքեցուն» [3]։ 1914 թ. Նորքի հողերից 291 դեսյատին առանձնացնելով՝ 1850 ռուբլի կապալագնով հանձնվել էր նորքեցիներին օգտագործելու։ Դա շատ խիստ պայման էր և փաստորեն անմատչելի աղքատության դուռը հասած հողագործ

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 799, թթ. 70—72, 76—77, 117, 123, գ. 1108, թթ. 31, 32, գ. 1325, թ. 92, գ. 1329, թ. 39—40, «Эриванские объявления», 1914, №№ 28, 46 և այլ տեղերում։

2 «Эриванские объявления», 1914, № 46։

3 Նույն տեղը։

նորքեցու համար։ Թղթակիցը հույս է հայտնում, որ քաղաքային դուման «կվերացնի իր այդ վճիռը և կազատի նորքեցիներին» աղքատությունից [1]։ Սակայն թղթակիցը շատ լավատես է։ Քաղաքային վարչությունը Նորքի հողերից օգտվելու ծանր պայմանները թողնում է ուժի մեջ։ Հողագործ նորքեցին, որի գոյության հիմնական միջոցներից մեկը երկրագործությունն էր, հարկադրված էր ամենաստորացուցիչ պայմաններով ընկնել վաշխառու-կապալառուի ճանկը և դառնալ նրա ղոհը։ Բայց միայն նորքեցին չէր դրանց ղոհը։ Քաղաքի արվարձաններում քաղաքապատկան հողերը ևս մեծ մասամբ կապալով էին վերցնում վաշխառուները և դրանք ծանր պայմաններով մշակման տալիս արվարձանների երկրագործ բնակիչներին։

Քաղաքն ինքը սեփական տնտեսություն չէր վարում, քաղաքապատկան ամբողջ հողը տրվում էր վարձակալման։ Ըստ 1898 թ. տվյալների վարձակալման էին տրված քաղաքապատկան հետևյալ հողային տարածությունները [2]։

Աղյուսակ 21

№ № կ/կ	Հողային տարածության բնույթն ու տեղը	Մեծությունը: դեսյատին	Մեծությունը: քառ. սաժեն	Բերած եկամուտը ռ.-ով
1	110 հողակտորների բաժանված՝ «Շահար» և «Զոլմաքչի» կոչված վարելահողերը	1193	200	14 500
2	«Ճոնջալըզ» կոչված 12 հողակտորներ	49	1060	1.955
3	Մեկ հողակտոր	1	900	195
4	Զորս կտոր բանջարանոցային հողեր	2	615	100
5	Երեք հողակտոր	2	1137	260
6	Երկու հանդամաս արոտավայրեր՝ Նովոդ գյուղի կողմերում և Ջրվեժ, Շենգավիթ ու Նորագավիթ գյուղերի միջև	—	—	115
7	15 հողակտոր Նորագեղում	64	22	600
8	Շարժական կրպակների համար արամադրված հողեր	—	—	3323
9	Անասունների, սայլերի և բեռների կանգառների համար հատկացված հողեր	—	—	7200
	Ընդամենը	1312	534	28.248

1 «Эриванские объявления», 1914, № 46։

2 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 924, թ. 4, գ. 1366, թ. 1 և 85, գ. 1367, թ. 74։

Այսպիսով, կապալով տրված միայն վարելահողերը, բանջարանոցային հողերն ու այգիները կազմում էին 1312,25 դեսյատին, կամ մոտ 1432,5 հեկտար, որը մյուս հողերի՝ արոտավայրերի, շարժական կրպակների զրաված տարածությունների, անասունների, սայլերի ու բեռների կանգառի համար հատկացված հողերի հետ միասին քաղաքին տարեկան բերում էր 28.248 ռ. եկամուտ։

Վաճառքի հետևանքով հետագա տարիներին քաղաքապատկան հողերի տարածությունը նվազում է։ Այսպես, օրինակ՝ աղյուսակում նշված 1193 դես. 200 քառ. սաժեն՝ 110 հողակտորների բաժանված վարելահողերից 1906 թ. քաղաքին մնացել էր 1142 դես. 489 քառ. սաժեն, իսկ «Յոնջալըղ» կոչված 49 դես. 1060 քառ. սաժեններից՝ 36 դեսյատին [1]։ 1914 թ. ավյալներով՝ նույն պատճառով վարելահողերը նվազելով հասել էին 1121 դեսյատինի [2]։ 80-ական թվականների սկզբներին Նորագեղի տեղամասում եղած քաղաքապատկան այգիները 20 միավոր էին և կազմում էին 69 դես. 1081 քառ. սաժ.[3], իսկ աղյուսակի համաձայն, որի տվյալները, ինչպես ասացինք, վերաբերում են 1898 թվականին, դրանք 15 հատ էին և ունեին 64 դես. 22 քառ. սաժեն տարածություն։ Վաճառքի հետևանքով նույն կերպ նվազում էին նաև քաղաքապատկան մյուս հողային տարածությունները։

Սակայն քաղաքային հողերի տարածության նվազման պատճառը միայն վաճառքը չէր։ Քաղաքային ինքնավարության թույլ հսկողության և կապալառուների անհոգ ու նեղ՝ անձնական շահեր հետապնդող վերաբերմունքի հետևանքով հաճախ շարքից դուրս էին գալիս և անպատուղ տարածությունների էին վերածվում վարելահողեր, այգիներ և բանջարանոցային հողեր։ Ի դեպ պետք է նշել, որ կապալով տալը ընդհանրապես վնասում էր քաղաքապատկան հողերին, իջեցնում էր նրանց եկամտաբերությունը։ Տարածության համեմատությամբ քաղաքի՝ իր հողերից ստացած եկամուտները շատ համեստ էին։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի բղխակիցներից մեկի վկայությամբ, 1913—1914 թթ. քաղաքի հարևան գյուղերում հողի մեկ դեսյատինի բերած տարեկան եկամուտը հաշվում էին 48—114 ռուբլի, մինչդեռ Երևանի քաղաքապատկան 1121 դեսյատին վարելահողերի բերած տարեկան եկամուտը նույնիսկ չէր հասնում 15.000 ռուբլու [4], այսինքն՝ նրա եկամտաբերությունը մոտ 3,6—10,8 անգամ փոքր էր հարևան գյուղերի նույնատիպ հողերի եկամտաբերությունից։

Քաղաքապատկան հողերի վաճառքը կատարվում էր այս կամ այն ձեռնարկման համար անհրաժեշտ միջոցներ ստեղծելու նպատակներով։ Այսպես, օրինակ՝ 1906 թ. քաղաքային ինքնավարությունը քաղաքի տարբեր մասերում տարբեր բնույթի վեց հողակտորներ է վաճառում, որպեսզի դրանցից ստացված միջոցներով կառուցի քաղաքային հիվանդանոց [1]։ Մի քանի այլ կարիքներից ելնելով՝ քաղաքային ինքնավարությունը 1909 թ. վաճառքի է հանում բավական մեծ տարածությամբ մի շարք հողատեղակներ [2]։ Այդ թվականին քաղաքապատկան հողերի վաճառքն այնքան շատ էր, որ նույնիսկ հարց է հարուցվում, որպեսզի քաղաքային վարչությանը իրավունք տրվի անմիջականորեն տնօրինելու հողի օտարացման հարցը, այսինքն՝ այդ հարցում նրա ֆունկցիաները հավասարեցվեն պետական օրգանների ֆունկցիաներին։ Հողի վաճառք կատարվել է նաև 1912 թվականին [3]։

Հողի վաճառքը կատարվում էր աճուրդով, որի մասին նախօրոք հայտարարվում էր մամուլում։ Գնահատումը կատարվում էր հատուկ գնահատող հանձնաժողովի կողմից, որը գործում էր մշտապես։ Հանձնաժողովը տարբեր կարգի հողերի համար նշանակում էր տարբեր գներ։ 1890—1912 թթ. սովորաբար մեկ քառ. սաժ. քաղաքապատկան հողը գնահատվել է 60 կոպեկից մինչև 15 ռուբլու սահմաններում [4]։ Կային այնպիսի հողեր, որոնց մեկ քառ. սաժ. 1912 թ. գնահատվում էր 10 կոպեկից մինչև 1 ռուբլի։ Հողի գինը որոշելիս նկատի էին ունենում նրա տեղը, ոռոգման պայմանները, արդյավանդությունը, բնույթը (այգի, վարելահող և այլն)[5]։ 1904—1910 թթ. քաղաքային ինքնավարությունը վաճառել է բազմաթիվ հողակտորներ, որոնք արձանագրված են քաղաքային վարչության 1903—1910 թթ. գործունեության տուդող հանձնաժողովի կողմից [6]։

Չնայած հատուկ հսկողության և գոյություն ունեցող կարգին, քաղաքապատկան հողերը հաճախ զավթվում էին այս կամ այն

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1591, թ. 1։
2 «Эриванские объявления», 1914, № 28։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 191/508, գ. 638, թ. 55։
4 «Эриванские объявления», 1914, № 28։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1498, թ. 1։
2 Նույն տեղը, գ. 1568, թթ. 1, 2, 3, 11։
3 Տե՛ս նույն տեղը, գ. 1498, թ. 157 և այլուր։
4 Տե՛ս նույն տեղը, գ. 1498, թ. 1, գ. 1568, թ. 1—3, 11, գ. 530, թ. 119—134, ֆ. 92, գ. 478, թթ. 322, 323, 325, 327 և այլն։
5 Նույն տեղը, ֆ. 92, գ. 478, թ. 293։
6 Նույն տեղը, գ. 530, թ. 119—134։

անհատի կողմից։ Մամուլում հրապարակված տվյալների համաձայն միայն 1899—1901 թթ. ընթացքում մասնավոր անհատների՝ քաղաքապատական հողերի գրավման առթիվ քաղաքային վարչության կողմից հարուցվել է 116 հայց, որոնց մի զգալի մասը՝ դրամական։ 1902 թ. այդ հայցերից մի քանիսը հասել էին նույնիսկ սենատ, իսկ մյուս մեծ մասը գտնվում էր դատական զանազան օրգաններում կամ արդեն վերջնականապես լուծված էր[1]։ 1904—1910 թթ. ընթացքում արձանագրված են քաղաքապատական հողերի զավթման ավելի մեծ թվով դեպքեր։ Այդ թվականների քաղաքային վարչության գործունեությունն ստուգող հանձնաժողովն իր հաշվետվության մեջ գրում է, որ չնայած մինչև քաղաքի վերջնական պլանավորումը դադարեցված էր Դեմիրբուլաղ քաղաքամասում քաղաքապատական հողերի օտարացումը՝ վաճառքը, այնուամենայնիվ, քաղաքացիներն այդտեղ ապօրինաբար յուրացրել էին մի քանի տասնյակի հասնող հողակտորներ, որոնք օգտագործել էին տներ կառուցելու, բանջարանոցների, պարտեզների և բակերի համար[2]։ Չնայած մեծ ճիգերին, քաղաքային վարչությանը չի հաջողվում բոլոր հողակտորները ետ ստանալ։

Պատահում էին նաև դեպքեր, երբ որևէ մեկը օրինական կարգով գնում էր քաղաքապատական հողակտոր, բայց որոշ ժամանակ օգտագործելուց հետո, զանազան պատրվակներով, այն նորից վերադարձնում էր քաղաքային ինքնավարությանը, պահանջելով այդ հողի համար քաղաքային գանձարանը մուծած իր գումարները։ Այդպիսի դեպքեր հաճախ էին պատահում մանավանդ վարձակալական գործարքների ժամանակ։

Քաղաքային հողերի վաճառքի ժամանակ յուրացումներ էին կատարվում նաև քաղաքային ինքնավարության պաշտոնյաների կողմից։ Մամուլի հաղորդագրության համաձայն, օրինակ՝ 1909 թ. «Մլեր» կոչված գերեզմանատունը ծախված տեղերի գումարների մի զգալի մասը յուրացրել էր քաղաքային տեխնիկ Մհերաբյանը։ Այդ հարցը նույնիսկ դառնում է դումայի քննարկման նյութ, բայց մնում է առանց հետևանքի[3]։

Հողային տարածությունների հետ միասին քաղաքի իրավասության տակ էին գտնվում և այդ հողերում եղած ավազի, կավի և քարի պաշարները։ Քաղաքապատական հողերից այդ շինանյութե-

1 «Մուրճ» (ամսագիր), 1902, № 6, էջ 195—196։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 530, թ. 119—134։
3 «Эриванские объявления», 1909, № 69։

րի հանույթի իրավունքը տրվում էր կապալով այս կամ այն անձնավորությանը։ 1908 թ. քաղաքապատական հողերից ավազ հայթայթելու իրավունքի համար սահմանված էր 600 ռ. կապալադին, իսկ շինարարական քարի համար՝ 500 ռուբլի, հաջորդ տարում դրանց կապալավարձը բավական իջնում է[1]։ Քիչ չէին պատահում դեպքեր, երբ քաղաքացիները, շրջանցելով կապալառուին, առանց սահմանված հարկը տալու, քար, ավազ և կավ էին բերում շինարարական աշխատանքների համար։ Նկատվելու դեպքում այդ քաղաքացիները ենթարկվում էին դատական պատասխանատվության։ 1900 թ. հունիսի 22-ին վերաբերող Երևանի քաղաքային դատարանի կատարողական թերթիկներից մեկում կարդում ենք, օրինակ, որ նույն քաղաքացի ումն Իբրահիմ Նուր Ալիօղլին քաղաքապատական հողերից ինքնագլուխ կերպով ավազ տանելու համար ճանաչված է հանցավոր և ենթարկված է համապատասխան տույժի։ Նման դեպքերը եղակի չէին։

Քաղաքի գյուղատնտեսական ճյուղերի վիճակը մեծապես կախված էր ոռոգման պայմաններից։ Երևանի արհեստական ոռոգման պայմանների և ցանցի մասին բավական մանրամասնությամբ արդեն խոսված է աշխատության նախորդ գրքում։ Հետևապես անհրաժեշտ է այստեղ խոսել միայն այն նորությունների ու դեպքերի մասին, որոնք կատարվել են 1879—1914 թվականներին։

Ինչպես նշվել է նախորդ գրքում, 1890 թ. հաստատվում է ոռոգման սիստեմի մասին նոր կանոնադրություն, ըստ որի 1891 թ. Անդրկովկասը, ելնելով ոռոգման պայմաններից, բաժանվում է ջրային վեց տեղամասերի։ Դրանցից երկրորդն իր մեջ ընդգրկում էր Երևանի նահանգը, Կարսի մարզը՝ առանց դեպի Կուր հոսող գետերի ավազանների, և Զանգեզուրի գավառ՝ Հագարի գետի ավազանի հետ միասին։ Ջրային տեղամասերը բաժանված էին շրջանների՝ մահալների (կամ օկրուգ)։ Երկրորդ տեղամասը, բացի նրա մեջ մտնող Կարսի մարզի և Զանգեզուրի գավառի, բաժանված էր 15 մահալների՝ Մաղրա (այժմ Բասարգեչար), Նոր Բայազետ, Զանգիբասար, Կրրխ-բուլաղ, Գառնիբասար, Վեդիբասար, Շարուր-Դարալագյազ, Խոկ (Նախիջևան քաղաքից հյուսիս-արևմուտք, Արաքսի ձախ կողմում), Նախիջևան, Ալինջաչայ (համանուն գետի հովիտը), Դաստա, Սուրմալու, Փարչեն (Սուրմալուից արևմուտք, Արաքսի աջ կողմում), Սարդարաբադ և Ապարան[2]։ Երեք տարի

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1564, թթ. 47, 62, 74, գ. 1565, թթ. 43, 74 և այլն։
2 ЦГИА Грузинской ССР, ф. 365, д. 3 л.л. 41—52, 122—127։

դրանից անց՝ 1893 թ. կազմվում է նաև 16-րդ շրջանը՝ Ալեքսանդրոպոլի մահալը [1]։

Կանոնադրության համաձայն (կանոնադրությունը հաստատված էր 1890 թ. դեկտեմբերի 3-ին) Անդրկովկասի ոռոգման համար այս կամ այն չափով նշանակություն ունեցող բոլոր ջրերը դասվում էին արքունի ունեցվածքների մինիստրության անօրինության տակ և դրանք առանձին շրջանների (մահալների) էին բաժանվել նույն մինիստրության ու Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչապետի համաձայնությամբ [2]։ Անդրկովկասի ոռոգման ջրերի կառավարչությունը նույն կանոնադրությամբ հանձնված էր ջրերի տեսչին, որն իր տրամադրության տակ ուներ իրավախորհրդատու և հատուկ գրասենյակ [3]։ Յուրաքանչյուր ջրային տեղամաս ուներ իր ջրաբաշխ-ինժեները, որը ենթարկվում էր Անդրկովկասի ջրերի տեսչին։

Ջրաբաշխ-ինժեների պարտականությունների մեջ մտնում էին ջրից օգտվելու իրավունքները որոշող շրջանային ատյաններում նախագահելը, ջրի շրջանային աստիճանավորների վրա հսկելը, ջրբանցքների, ամբարտակների և ոռոգողական այլ կառուցվածքների հատակագծեր կազմելը, ջրերի և դրանցով ոռոգվող հողային տարածությունների քանակների որոշումը, նոր ջրերի և ոռոգման ենթակա նոր հողերի ի հայտ բերումը, հեղեղների դեմ պայքարելը. Հարիճների չորացման մասին հոգ տանելը, ոռոգման գծով եղած նախագծերի իրագործման մասին մտածելը և այլն, և այլն [4]։

Երևանի նահանգից, Կարսի մարզից և Զանգեզուրի գավառից բաղկացած երկրորդ ջրային տեղամասը Անդրկովկասի ամենաընդարձակ և ամենակարևոր տեղամասերից մեկն էր։ Հետևապես համեմատաբար մեծ էին և նրա ջրաբաշխ-ինժեների պարտականությունները։

Ջրային շրջաններում ոռոգման ջրերի ամբողջ կառավարչությունը հանձնված էր ջրերից օգտվողների կողմից ընտրված ներկայացուցիչների խորհրդին, շրջանի (մահալի) ջրաբաշխին (միրաբ) առուների վերակացուներին (ջվարներ) և ջրպետներին (ջրային ավագ)։ Այդ բոլոր պաշտոնյաները ընտրովի էին, բայց հաստատվում էին պետական վերադաս պաշտոնյաների կողմից. ներկայացուցիչներն ու շրջանի ջրաբաշխը (միրաբ) հաստատում էր նահանգապետը, իսկ առուների վերակացուները (ջվարներ) ու ջրպետները (ջրային ավագներ) հաստատվում էին գավառապետի կողմից [1]։ Ջրի շրջանային ներկայացուցիչների խորհուրդը և շրջանի ջրաբաշխը (միրաբ) ընտրվում էին երեք տարի ժամանակով՝ ջրից օգտվողների կողմից։ Շրջանի ներկայացուցչական խորհրդի մեջ յուրաքանչյուր ենթաշրջանից ընտրվում էր մեկ ներկայացուցիչ։ Իսկ առուների վերակացուներն (ջվար) ու ջրպետները (ջրի ավագ) ընտրվում էին մեկ տարի ժամանակով [2]։ Այդ պաշտոնատար անձանց պարտականությունները նախորդ շրջանի համեմատությամբ որևէ էական փոփոխություններ չէին կրել։ Դրանք մնացել էին գրեթե նույնը։

Ըստ կանոնադրության, ջրային շրջանի պաշտոնատար անձինք իրենց պարտականությունները անկանոն կատարելու համար տուգանվում էին 1—50 ռուբլի։ Ջրից օգտվում էին ըստ մատյանների ցուցակների, իսկ օգտվելու կարգը որոշում էր ջրից օգտվողների ընդհանուր ժողովը։ Ջրի քանակը, ջրելու հաճախականությունը, յուրաքանչյուր հողատիրոջ հասնող ջրաժինը, այդ բոլորը նույնպես որոշվում էին ջրից օգտվողների ընդհանուր ժողովներում։ Ոռոգման գծով կատարված բոլոր ծախսերին մասնակցում էին դրանից օգտվողները՝ ըստ իրենց ստացած ջրի քանակի [3]։

Ահա այդպիսին էր ընդհանուր գծերով 1890 թ. հաստատված կանոնադրությունը։

Առաջվա պես Երևան քաղաքը կազմում էր մի առանձին շրջան, որն ուներ իր ջրաբաշխը (միրաբը), իսկ յուրաքանչյուր առու՝ Դալմա, Մամբինի, Արուհայաթի, Կրբխուլաղի և այլն, ուներ իր ջրպետը կամ ավագը և ներկայացուցիչների կամ վեքիլների խորհուրդը։ Բակերի բանջարանոցների և մրգատու այգիների համար ջրի ավազը պարտավոր էր ջուր բաց թողնել 15 օրը մեկ անգամ, խաղողի այգիների ոռոգման համար՝ 20 օրը մեկ անգամ, իսկ խմելու համար՝ ամեն օր։ Ավազը վարձատրվում էր յուրաքանչյուր կես դեսյատին տարածության համար 50 կոպեկ։ Ներկայացուցիչները (վեքիլները) պարտավոր էին ջրի ավագին տալ կնքված հատուկ մատյան, որտեղ գրանցվում էին այգիներն ու այգետերերը, և յուրաքանչյուր անգամ այգին ջրելիս ավազը այգետիրոջից վերցնում էր տարրագրություն, որ նրա այգին իրոք ջրված է։ Ավազը պարտավոր էր հսկել կարգի ճշգրիտ պահպանմանը։

1 ЦГИА Грузинской ССР, ф. 365, д. 3, թ. 110։
2 Նույն տեղը, գ. 1, թ. 1։
3 Նույն տեղը, թ. 2։
4 Նույն տեղը։

1 ЦГИА Грузинской ССР, ф. 365, գ. 1, թ. 2—3։
2 Նույն տեղը, թ. 3—4։
3 Նույն տեղը, թ. 3—5։

Նոր կանոնադրության համաձայն Երևանում պարբերաբար կատարվում էին ջրբաշխի (միրաբ), ջրպետների (ավագներ) և վերքիլների ընտրությունները։ Արխիվներում բազմաթիվ փաստաթղթեր են պահպանված Երևան քաղաքի ջրբաշխի, քաղաքային առուների ջրպետների և ներկայացուցիչների ընտրությունների ու նրանց պարտականությունների ու իրավունքների մասին [1]։ Իսկ այդ նյութերը ցույց են տալիս, որ նոր կանոնադրության մեջ և քաղաքի մասշտաբով ոռոգման ցանցի մասին հրապարակված կանոնադրություններում պահպանվել ու իրավական ուժ էին ստացել նախորդ շրջանի շատ տրադիցիաներ։

Ոռոգման առուներից օգտվելու համար հրապարակվում էին պարտադիր կանոններ [2] և հետևում էին, որպեսզի չխախտվեն այդ կանոնները։ Ըստ այդ կանոնների, ոչ ոք իրավունք չուներ առանց հերթի օգտվելու այս կամ այն աովից, իսկ հերթականությունն ու ջրելու հաճախականությունը սահմանված էին ըստ առանձին առուների [3]։ Ոչ ոք իրավունք չուներ կամայականորեն Զանգվից կամ Գետառից և կամ ջրի այլ աղբյուրներից առուներ անցկացնել։ Նոր առու հանելու համար, անկախ նրա մեծությունից, պետք է թույլտվություն վերցվեր ջրբաշխ-ինժեներից [4], իսկ ջրի օգտագործման գծով կար հատուկ իրավաբան-կոնսուլ, որը հսկում էր օրենքների ու կանոնների ճիշտ կիրառմանը [5]։

Ջրից օգտվելու կանոնների խախտման դեմ տարբեր ժամանակներում մի քանի պարտադիր որոշումներ են արձակել Երևանի նահանգապետները։ Իր խստությամբ դրանցից առանձնապես նշելի է նահանգապետի տեղապահության 1906 թ. ապրիլի 12-ին հրապարակված պարտադիր որոշումը, որով ոռոգող առուներից անօրինական կարգով օգտվողներին, այդ առուները փչացնողներին, ջրբաշխներին, ջրպետներին և ոռոգման ջրերի վրա հսկող այլ պաշտոնյաներին ահաբեկելու համար սահմանվում էր մինչև երեք հազար ռուբլի տուգանք կամ մինչև երեք ամիս բանտարկություն։ Որոշման մեջ նախազգուշացվում էր, որ հանցավորներին չգտնելու դեպքում, նշված տույժը կդրվի այն հողատերերի կամ կապալառուների վրա, որոնց անդակների սահմաններում կատարվել է անօրինականությունը [1]։

Գոյություն ունեցող կարգ ու կանոնները, սակայն, անզոր էին վերացնելու ոռոգման ջրի համար սովորական դարձած վեճերն ու կռիվները, որոնք գալիս էին նախորդ ժամանակներից և գարձել էին մի տեսակ կենցաղային սովորություն։ Այդպիսի անախորժություններ տեղի էին ունենում նույնիսկ այնպիսի դեպքերում, երբ հերթականությունն ու կարգը չէր խախտվում կամ երբ ոռոգման ջրի պակաս չէր զգացվում։ Վեճերը երբեմն հասնում էին արյունահեղության և մարդասպանության։ 1880 թ. հունիսի 3-ին Երևանի բնակիչ ոմն Ավետիս (Բաբուշ) Գևորգյանը այդ հողի վրա առաջացած կռվի ժամանակ կտրում է իր համաքաղաքացի Առաքել Հովհաննիսյանի ականջը [2], իսկ նույն ամսի 6-ին քաղաքի բնակիչ Հովհաննես Խաչատրյանը, գարձյալ այգին ջրելու համար ծագած կռվում, փորձում է ատրճանակ արձակել իր համաքաղաքացի Զաքար Մկրտչյանի վրա։ Սպանությունը կանխվում է միայն ներկա գտնվողների եռանդուն միջնորդությամբ [3]։ Կռիվներն ավելի հաճախակի էին դառնում հուլիս-օգոստոս ամիսներին։

Կարգը խախտողները միայն քաղաքացիները չէին։ Ավելի մեծ չափով ապօրինություններ էին անում ոռոգման գծով եղած պաշտոնյանները՝ ջրբաշխ-ինժեները, ջրբաշխը (միրաբ), ջրպետները և ուրիշներ։ Արխիվային նյութերում հաճախ ենք հանդիպում այդ պաշտոնյաների դեմ ուղղված մասսայական դիմումների ու բողոքների, որոնց ճնշման տակ հաճախ հարկադրված էին լինում դրանց հեռացնել իրենց պաշտոններից [4]։

Մեզ հետաքրքրող շրջանում քաղաքի ոռոգման ջրի պաշարներն ու աղբյուրները մնացել են նախկինները՝ Զանգուն, Գետառը և տարբեր թաղերում եղած աղբյուրները։ Դրանց մեջ, անշուշտ, ջրի հիմնական աղբյուրը առաջվա պես մնում էր Զանգուն, և իզուր չէր, որ ժողովուրդը՝ արքունական հարկերը նկատի ունենալով, ստեղծել էր փոխաբերական իմաստ ունեցող հետևյալ դարձվածքը. «Երևանի Զանգուն բերում էր տարեկան մեկ փութ ոսկի. իսկ էջմիածնի գետը (Քասախը) բերում էր մի փութ արծաթ» [5]։

Նույնն էին մնացել և մեծ առուները՝ Դալման, Աբուհայաթը,

1 Այդ բոլորի մասին տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 38, թ. 2, դ. 307, թ. 4, 6, գ. 551, թ. 57,, գ. 597, թթ. 61, 65, 68, 72, 74, 79, գ. 821, թ. 10—14, ֆ. 134, գ. 381, թթ. 21, 23, 25, գ. 203, թ. 22, գ. 320, թ. 15 և այլուր։

2 Նույն տեղը, ֆ. 117, գ. 71, թ. 7—8։

3 Նույն տեղը, ֆ. 134, գ. 320, թթ. 15, 16, 17 և այլն։

4 Նույն տեղը, գ. 72, թթ. 67—68, 76, գ. 203, թ. 8։

5 Նույն տեղը, գ. 51, 72 և այլն։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 58, թ. 16—17։

2 «Պատկ» (լրագիր), 1880, № 16։

3 Նույն տեղը, № 17։

4 Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 134, գ. 203, թ. 23։

5 Տե՛ս Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, էջ 708։

Մամրին, Նորագեղը, եթե չհաշվենք այդ մայր առուներից նոր հանված մի քանի տասնյակի հասնող փոքր առուները, որոնք մայր առուներից ջուր էին տանում դեպի այգիներ, բանջարանոցներ և դաշտեր։ 1882 թ. դրությամբ միայն Գետառից հանված էին 8 մեծ ու փոքր առուներ՝ Գյոզալ-առու, Ջաման-առու, Քուրդ-առու, Ջրաղացի-առու, Ներքին Դեմիրբուլաղի-առու, Փեշիք-առու և այլն, որոնց բոլորի համար տարեկան տրվում էր 362 ռուբլի ջրահարկ [1]։ 90-ական թվականներին Դալմայից նույնպես հանված էին 8 առուներ՝ Սարթիր-առու, Ջորի-գյոլ-առու, Մելիքենց-առու, Հախնազարի-առու, Մելիք-Աղամալյանի-առու, Մուղդսի Հովհաննիսյանի-առու և այլն [2]։ Երկրորդական առուների ցանց ունեին նաև մյուս հիմնական առուները [3]։

Ջրի քանակը առաջվա պես որոշվում էր «բաշ»-ով և «բահ»-ով։ Դրանք իբրև միավորներ տարբեր առուներում ունեին տարբեր քանակություն։ Գետառի սիստեմում օրվա մեջ 180 հազար դույլ ջուր տվող առուն համարվում էր 0,53 բահ կամ 1,06 «բաշ» հզորություն ունեցող առու [4]։ Ջանդուի սիստեմում դրանք արտահայտված էին մի փոքր ավելի մեծ թվերով։

Երևանի ոռոգման առուները մինչև 1883 թ. պատկանում էին պետությանը։ Այդ թվականի մարտի 30-ին կառավարական սենատի հատուկ հրամանագրով դրանք հանձնվում են քաղաքային ինքնավարության տնօրինությանը։ Երևանի նահանգապետը, քաղաքագլխին հասցեագրած նույն թվականի հուլիսի 24-ի իր գրության մեջ վկայակոչելով սենատի հրամանագիրը՝ նրան հանձնարարում է կառավարական հրամանագիրը կատարելու համար անել համապատասխան կարգադրություններ [5]։ Դրանից հետո ոռոգման հիմնական առուների վերանորոգման, դրանք կարգին վիճակում պահելու, վերահսկելու և այլ պարտականությունները ընկան քաղաքային ինքնավարության վրա, իսկ հիմնական առուներից հանված երկրորդական ճյուղերի մասին հոգում էին իրենք՝ հողատերերը։

Քաղաքի տնտեսական կյանքում գյուղատնտեսական ճյուղերը 1880—1914 թթ. շարունակում էին կարևոր դեր խաղալ։ Դրանց համախառն արտադրանքը բավական ավելանում է, չնայած խոշոր

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 71, թ. 9—11։
2 Նույն տեղը, գ. 441, թ. 63—69։
3 Տե՛ս նույն տեղը, գ. 307, թ. 195—202, 203—204 և այլ տեղերում։
4 Նույն տեղը, գ. 352, թ. 33։
5 Նույն տեղը, գ. 89, թ. 59։

արդյունաբերության ծագման և զարգացման հետևանքով իջնում է գյուղատնտեսական ճյուղերի տեսակարար կշիռը քաղաքի ամբողջ տնտեսության մեջ։ Առաջվա նման գյուղատնտեսական ճյուղերն ըստ իրենց արտադրանքի քանակի ունեին հետևյալ հաջորդականությունը՝ այգեգործություն ու բանջարաբուծություն, երկրագործություն, անասնապահություն։ Ընդ որում մեզ հետաքրքրող շրջանում դրանցից համեմատաբար մեծ զարգացում ունեին այգեգործությունն ու բանջարաբուծությունը, իսկ դա զգալի չափով հետևանք էր գինու և կոնյակի արդյունաբերության զարգացման և քաղաքի բնակչության թվի աճի։

Գյուղատնտեսական ճյուղերի՝ առանձնապես այգեգործության ու բանջարաբուծության համար կարևոր նշանակություն է ունեցել նախկին սարդարի այգում բացված փորձնական ագարակ-տնկարանը, որը գործում էր 1899 թվականից։ Այգու վարիչ, ագրոնոմ Պ. Գ. Կանդուրալովի հաղորդած տեղեկությունների համաձայն, այդ այգին փորձնական տնկարանի էր վերածվել երկրագործության ու պետական ունեցվածքների մինիստրի՝ Կովկասի լիազորի հանձնարարությամբ [1]։ 1908 թ. դրությամբ այգու մշակված տարածությունը կազմում էր 7 դես. 1183 քառ. սաժեն, որից 2 դես. 178 քառ. սաժենը զբաղվում էր եվրոպական ու տեղական մրգատու տեսակների մայրական այգին, 1 դես. 1050 քառ. սաժենը՝ պտղատու և դեկորատիվ բույսերի փորձակայանը, 2 դես. 770 քառ. սաժ.՝ խաղողի այգին, 200 քառ. սաժ.՝ բանջարանոցը, 390 քառ. սաժ.՝ ամերիկյան վազերի փորձակայանը, 150 քառ. սաժ.՝ փորձնական-ցուցադրական տեղամասը (որտեղ ցուցադրված էին գյուղատնտեսական զանազան արտադրանքներ), 445 քառ. սաժ.՝ ծաղկանոցը և այլն [2]։ Տնկարանում կային բազմատեսակ մրգատու ծառեր ու թփեր (մոտ 800 տեսակի), խաղողի վազեր (միայն երևանյան տեսակների թիվը հասնում էր 30-ի), մի քանի տասնյակ տեսակի ծաղիկներ, Գերմանիայից բերված լավագույն բանջարատեսակները [3]։ Ագրոնոմ Կանդուրալովը գրում է, որ տնկարանը ստեղծված էր տեղական բնակչությանը մրգաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության, ծաղկաբուծության և մեղվաբուծության լավագույն եղանակներ սովորեցնելու համար։ Տնկարանում ցուցադրվում էին այդեգործության համար օգտագործվող ամենակարևոր գործիքները, սար-

1 Տե՛ս «Памятная книжка Эриванск. губ. на 1910 г.», էջ 328։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, էջ 328—329։

քերը և հիվանդությունների դեմ գործածվող բուժիչ նյութերը։ Ընկարան-փոթաձագարակը, ինչպես կարելի է այն կոչել, բնակիչներին ու գյուղական ուսումնարաններին ձրիաբար կամ չափավոր գներով բաց էր թողնում զանազան տնկիներ ու սերմեր, բնակչությանը մատակարարում էր այգեգործության համար անհրաժեշտ գործիքներ, սարքեր և նյութեր, զբաղվում էր տեղական լավագույն մրգատեսակների (հատկապես դեղձի ու ծիրանի) օրինակելի մշակման և դրանք նահանգում տարածելու խնդրով, գյուղատնտեսական-երկրագործական մի քանի արտադրանքների փորձնական մշակմամբ, այգետներին սովորեցնում էր խաղողի վազը ճիշտ էտելու ձևերը, այգեգործական վնասատուների դեմ պայքարելու եղանակները և այլն, և այլն [1]։

1907 թվականից տնկարանին կից բացված էր այգեգործական բանվորների դպրոց՝ հինգ մարդու համար, որտեղ գործնական եղանակով սովորեցնում էին այգեգործություն։ Այդ դպրոցն ավարտած բանվոր-աշակերտները, որոնք թվով ընդամենը մի քանի հոգի էին, մանելով կյանք՝ իրենց փորձով օգնում էին այգեգործական լավագույն եղանակների տարածմանը [2]։

Սակայն չպետք է չափազանցնել այգի-տնկարանի դերն ու նշանակությունը։ Պետության կողմից տնկարանին բաց թողնվող չնչին միջոցները, համապատասխան գյուղատնտեսական կրթված կադրերի բացակայությունը, մանր այգետերերի աղքատիկ վիճակը և գյուղատնտեսական տեխնիկայի ընդհանուր ցածր մակարդակը չէին կարող լավ հեռանկար բաց անել նահանգի ու նրա կենտրոնի այգեգործության ու գյուղատնտեսական մյուս ճյուղերի զարգացման համար։ Ճիշտ է, փորձնական ագարակ-տնկարանը գյուղատնտեսական բոլոր ճյուղերի մասին կազմակերպում էր դասախոսություններ և գյուղական վայրերում ուներ իր մի քանի ներկայացուցիչները, որոնք, ինչպես և այդում նշած կոնսուլտանտները, գործում էին տնկարանի ագրոնոմի ղեկավարությամբ ու ցուցումներով, բայց դրանք ևս չէին կարող զգալի փոփոխություններ մտցնել գյուղատնտեսության մեջ։

Ժամանակակիցները գյուղատնտեսության, հատկապես այգեգործության բարձրացման կարևորագույն միջոցներից էին համարում Երևանում գինեգործական ու գյուղատնտեսության դպրոց-

1 Տե՛ս «Памятная книжка эриванск. губернии на 1910», էջ 329—330։

2 Նույն տեղը, էջ 330—332, համմ. «Մուրճ» (ամսագիր), 1902, № 1, էջ 180—181։

ների հիմնումը, Թիֆլիսի հայ գյուղատնտեսական ընկերության Երևանի բաժանմունքի ստեղծումը, արտասահմանյան ընտիր ծառատեսակների ներմուծումը, գինեգործական կայանի կազմակերպումը և այլն։

Գինեգործական ուսումնարան հիմնելու հարցը առաջ էր քաշել դեռևս 1890 թ. այն ժամանակվա նահանգապետ Շալիկովը։ Նա գտնում էր, որ միայն մշտական ու կանոնավոր ուսումնարանը կարող է ժողովրդի մեջ տարածել գինեգործության նորագույն ու լավագույն եղանակները։ Նրա կարծիքով դպրոցը երեք նպատակ պետք է ունենա՝ ա) աշակերտներին սովորեցնել լավ գինի պատրաստել, բ) հոգ տանել հողագործության զարգացման համար և գ) սովորեցնել գինու համար լավագույն տեսակի խաղողներ ընտրել։ Ենթադրվում էր, որ դպրոցի միջոցները պետք է հայթայթվեին տեղական և պետական գումարներից [1]։ Ենթադրվող այդ ուսումնարանը պետք է բացվեր նախկին սարդարի այգում։ Ուսումնարանի բացման մասին 1890 թ. սեպտեմբերի 18-ին հատուկ հանձնաժողովում զեկուցումով հանդես է գալիս Ա. Վերմիշյանը, որը գինեգործական ուսումնարանի փոխարեն հարց է հարուցում հիմնել գինեգործական կայան։ Վերջինս, ըստ նրա, պետք է ունենար մառան, նկուղ [2], սեփական այգի և պետք է սովորեցներ գինիներ պատրաստել։ Վերմիշյանի կարծիքը պաշտպանում են ժամանակակիցներից շատերը։ Ընկերությունը կազմում է հատուկ հանձնաժողով՝ նահանգապետ Շալիկովի Երևանում գինեգործական ուսումնարան հիմնելու մասին արած առաջարկին պատասխանելու համար [3]։ Սակայն չիրագործվեցին թե՛ նահանգապետի և թե՛ նրա մյուս ժամանակակիցների մտահղացումները։

900-ական թվականների սկզբներից առանձին հեղինակների և ապա պաշտոնական շրջանների կողմից բավական երկար ժամանակ, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը արծարծվում է Երևանում ցածր տիպի գյուղատնտեսական-տեխնիկական ուսումնարան հիմնելու հարցը։ Ուսումնարանը պետք է ունենար բուն գյուղատնտեսական և գյուղատնտեսական մթերքների վե-

1 Տե՛ս «Արձագանք» (լրագիր), 1892, № 42։

2 Մինչև 90-ական թվականների սկզբները Երևանում գինիների եվրոպական տիպի հատուկ նկուղ ուներ միայն Կ. Աֆրիկյանը, որի գինիները ամենաընտիրներն էին և մեծ քանակությամբ վաճառվում էին Օդեսա նավահանգստային քաղաքում։

3 «Արձագանք», 1892, № 42։

բամշակման՝ տեխնոլոգիական բաժիններ [1]։ Սակայն այդ պլանները ևս մնում են անկատար։ Իսկ Թիֆլիսի գյուղատնտեսական ընկերության Երևանի բաժանմունքը բացվում է միայն 1914 թ. մայիսի վերջին [2], և վրա հասնող համաշխարհային պատերազմի պատճառով հնարավորություն չի ունենում նույնիսկ զգացնել տալ իր գոյությունը։

Այգեգործության զարգացմանը նպաստում էին առանձին անհատներ, մանավանդ մի քանի առևտրականներ, որոնք, իրենց շահերից ելնելով, վաճառքի համար արտասահմանից բերել էին տալիս հազարավոր զանազան տնկիներ։ XX դարի սկզբներին Երևանում այդ գործով հիմնականում զբաղվում էր ոմն առևտրական Հակոբ Այդինյանը, որը բավական լայն ռեկլամի էր ենթարկում իր ստացած մատղաշ ծառատեսակները [3]։

Այդինների մշակման բնագավառում նախորդ ժամանակների համեմատությամբ էական նորություններ չեն մտցվում։ Այդինների մշակման գործիքները նույնպես մնում են նույնը։ Մեծ այգեներ առանձին անհատների կողմից կատարվող այգեգործության կատարելագործման փորձերը ունեին չնչին մասշտաբներ ու նշանակություն [4] և որևէ չափով չէին ազդում ընդհանուր դրության վրա։ Սակայն այգեգործությունը հացահատիկների մշակությունից ուներ բավական մեծ առավելություններ, հատկապես եկամտաբերության տեսակետից։ Այդ էր այն հիմնական պատճառը, որի հետևանքով քաղաքի այգեգործությունը մնում էր իրեև գյուղատնտեսական ճյուղերից ամենաառաջնակարգը։ Բացի դրանից, քաղաքում գինուսղու-կոնյակի խոշոր արդյունաբերության զարգացման շնորհիվ, Նահանդի գյուղական վայրերի խաղողագործությունը զարգանալու հետ միասին բավական առաջադիմում է և քաղաքի այգեգործության այդ ճյուղը։

Այգեգործության զարգացումը խրախուսելու համար Նիկոլայ 1-ին ցարի կարգադրությամբ 1837 թ. վերացվում են Երևանի այգիներից վերցվող ակցիզային հարկերը [5]։ Բայց ըստ երևույթին հետագայում շրջանցում են այդ կարգադրությունը և առաջվա նման շա-

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 692, թ. 3, «Մուրճ», 1902, № 1 և այլ տեղերում։

2 «Эриванские объявления», 1914, № 45։

3 Նրա ռեկլամներից մեկը տե՛ս «Эриванск. объявления» թերթիկի 1905 թ. 64-րդ համարում։

4 «Кавказский календарь на 1893 г.», էջ 43։

5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 113, թ. 2։

րունակում են յուրաքանչյուր մեկ աստիճանից 5 կոպ. ակցիզի գանձումը։ 1884 թ. քաղաքային դումայի ձայնավորների մի խումբ դիմում է դումային և, վկայակոչելով ցարի այդ կարգադրությունը, պահանջում է հարց հարուցել համապատասխան օրգանների առաջ քաղաքում թորվող օղուց վերցվող ակցիզային հարկը վերացնելու մասին [1]։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, քաղաքում կատարելագործված օղեթորիչ գործարանները Երևան գալուց հետո (90-ական թվականների վերջերից), անալյագործական եղանակով օղի ծախող «գործարանները» ազատվում են ակցիզային հարկից, նրանց արտադրանքը փաստորեն հումք է դառնում առաջինների համար, որոնք արդեն, ինչպես ասվել է իր տեղում, ենթակա էին ակցիզային հարկի։ Միանգամայն տրամաբանական է, որ իրերի այդպիսի դրությունը նույնպես նպաստում էր քաղաքի այգեգործության զարգացմանը։

Պետք է հիշել, որ, ինչպես անտեսության մյուս ճյուղերի, այնպես էլ այգեգործության վիճակը կախված էր հասարակական ու հողային հարաբերություններից, մշակման եղանակներից և երկրի ու քաղաքի ընդհանուր զարգացման մակարդակից։ Սակայն այս կամ այն տարվա բերքատվությունն ու եկամտաբերությունը մեծապես կախված էին նաև եղանակից։ Ասված է, այգեգործությունը երկրագործական այն ճյուղերից է, որոնց գոյությունը մեզ մոտ պայմանավորված է արհեստական ոռոգմամբ, բայց միայն դրանով չի վերջանում գործը։ Այգեգործության համար կարևոր նշանակություն ունեին նաև ջերմային պայմանները։

Արարատյան դաշտի և Երևան քաղաքի համար մեծ վտանգ էին ներկայացնում գարնանային ցրտահարությունները և աշնանային աննպաստ երկարատև անձրևները, որոնք փչացնում էին արդեն հասունացած խաղողի բերքը։ Վաղ գարնանային ցրտահարությունները բավական հաճախ էին լինում։ 1879—1914 թթ. քաղաքում և Արարատյան դաշտում արձանագրված է մոտ 10 ցրտահարություն։ Այդիներին առանձնապես մեծ վնասներ են հասցրել 1894 և 1914 թթ. ցրտահարությունները [2]։ Երևանի նահանգում 1894 թ. խաղողի բերքը 1893 թ. համեմատությամբ պակաս է եղել 24,1 տոկոսով, իսկ 1914 թ. ապրիլի ցրտահարությունը, ինչպես արձանագրում է նրա վնասները հաշվող հատուկ հանձնաժողովը, պատճառ է դարձել

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 113, թ. 4։

2 Տե՛ս «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, էջ 181, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, ցուցակ 1, գ. 5040, թ. 11—12։

ավելի մեծ վնասների [1]։ Երևանի և նրա շրջակայքի դյուղերի, այգիների կրած վնասները պարզելու համար կազմված է եղել մի այլ հանձնաժողով՝ հարկերի տեսուչ Նոյկենի նախագահությամբ։ Այս հանձնաժողովի տվյալներով 1914 թ. ապրիլյան ցրտահարության հետևանքով Երևան քաղաքում և նրա շրջակայքի դյուղերում դիտված այգիներում խաղողի բերքը փչացել էր հետևյալ չափերով [2]։

Աղյուսակ 22

№ № ը/կ	Բնակավայրի անուները	Դիտված այգիների քիվը	100%	95—99%	90%	80—85%	65—70%	50%	10%	0%
1	Երևան քաղաքում									
	ա) Թալմա	53	31	13	—	3	2	—	—	4
	բ) Նորագեղ	25	18	5	2	—	—	—	—	—
	գ) Նորք	17	17	—	—	—	—	—	—	—
	դ) Քեչակուս	9	9	—	—	—	—	—	—	—
	ե) Շահար	7	5	2	—	—	—	—	—	—
2	Քանաքեռ գյուղում	9	9	—	—	—	—	—	—	—
3	Թաղաքենդ »	12	6	1	—	—	—	1	—	4
4	Ն. Շենգավիթ »	6	—	3	—	2	—	1	—	—
5	Վ. Շենգավիթ	8	8	—	—	—	—	—	—	—
6	Նորագավիթ	12	1	5	1	2	—	—	1	2
7	Փարաքար	12	—	8	4	—	—	—	—	—
	Ընդամենը	170	104	37	7	7	2	2	1	10

Աղյուսակի թվերը ցցուն են և ավելորդ մեկնաբանությունների կարիք չեն զգում։ Միայն պետք է նշել, որ բոլորովին չափազանցված չէ հանձնաժողովի այն եզրակացությունը, թե ցրտահարության հետևանքով նշված «այգիներում ամբողջ բերքը փչացել է» [3]։

Պակաս չափով չէին վնասվել նաև մրգատու այգիները։ Ըստ նույն հանձնաժողովի եզրակացության, Թալմայում փչացել էր մրգատու այգիների բերքի 20—30 տոկոսը, Նորագեղի նոր այգիներում՝ 50%-ը, իսկ հին այգիներում՝ 90%-ը, Նորքում՝ 100 տոկոսը, Շահարում՝ 50 տոկոսը, Քանաքեռ գյուղում՝ 100 տոկոսը և այլն [4]։

Անկայուն բերքատվության մյուս պատճառը հիվանդություններն էին, որոնց մասին ասված է նախորդ գրքում։

1 Տե՛ս «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, էջ 181, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, ցուցակ 1, գ. 5040, թ. 11—12։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, ցուցակ 1, գ. 5040, թ. 11։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, թ. 12։

XIX դարի 80—90-ական թվականներին Երևանում այգիների քիվը հասնում էր 700-ի, դրանից մի փոքր ավելի էր այգիների քիվը 1913 թ. [1]։ XIX դարի վերջին քառորդում, ընդհուպ մինչև 90-ական թվականների վերջերը, քաղաքի խաղողի այգիների տարածությունը գրեթե չի մեծանում, մնում է նախկինը և կազմում է մոտ 1200 դեսյատին [2]։ XX դարի սկզբներից դրությունը փոխվում է։ Բուն քաղաքի առանձին թաղամասերում յուրացվող նոր հողերի հաշվին զգալի չափով ավելանում է խաղողի այգիների տարածությունը՝ 1913 թ. հասնելով մոտ 1348 դեսյատինի, որը կազմում էր ամբողջ Երևանի նահանգի խաղողի այգիների գրեթե 13 տոկոսը, իսկ Երևանի նահանգի խաղողի այգիների տարածությունը կազմում էր մոտ 9939 դեսյատին [3]։

Խաղողի այգիների բերքատվությունը նախորդ ժամանակների համեմատությամբ զգալի փոփոխություններ չէր կրել։ Դրանց բերքի քանակի մասին սկզբնաղբյուրներում և արխիվային փաստաթղթերում հիշատակվում են հակասական թվեր։ Միջին հաշվով Երևան քաղաքում խաղողի այգիների բերքը 90-ական թվականներին կազմել է մեկ դեսյատինից 300—400 փութ, իսկ XX դարի սկզբներին բարձրանում է մինչև 350—450 փութի [4]։ Քաղաքի այգիների մեջ, ինչպես նշում է ագրոնոմ Ի. Զ. Անդրոնիկովը, Թալման ամենացածր բերքատվություն ունեցողներից մեկն էր։ 1890-ական թվականների սկզբներին այստեղ մեկ դեսյատին խաղողի այգուն միջին հաշվով ընկնում էր 10 խալվար (300 փութ) բերք, իսկ դրանից ավելի բերք հազվադեպ էր պատահում։ Նորագեղի այգիների բերքատվությունն ավելի բարձր էր [5]։ Այնպես որ քաղաքի տարբեր մասերում գտնվող այգիների բերքատվությունը տարբեր էր։ Այդպիսի տարբերություններ նկատվում են նաև քաղաքապատկան ու մասնավոր այգիների միջև։ Կապալառուների անհոգի վերաբերմունքի պատճառով քաղաքապատկան այգիների բերքը սովորաբար մասնավոր այգիների բերքից ցածր էր լինում։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 113, թ. 36, ֆ. 124, գ. 36, թ. 56։

2 Թ. Ս. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 502։

3 «Кавказский календарь на 1914 г.», отд. статистич., էջ 133։

4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 113, թ. 63, ֆ. 124, գ. 23, թ. 6—7, գ. 36, թ. 56, «Кавказск. календарь на 1893 г.», էջ 42—43, на 1896 г., отд. 5, էջ 181, на 1909 г., отд. 4, էջ 527, «Памятная книжка Эриванск. губернии на 1904 г.», отд. 2, էջ 74, «Обзор Эриванской губернии за 1906 г.», էջ 6, «Մուրճ» (ամսագիր), 1907, № 7, էջ 235 և այլ տեղերում։

5 Տե՛ս «Сборник сведений по виноградарству и виноделию из Кавказе», вып. 6, Тифлис, 1894, էջ 76։

Խաղողի այգիների եկամտաբերությունը ցածր էր, իսկ բոլոր աշխատանքները վարձով կատարելու դեպքում ծախսը գերազանցում էր եկամտին: Ըստ արխիվային նյութերի, 90-ական թվականների սկզբներին Երևանի նահանգում միջին հաշվով յուրաքանչյուր դեսյատին այգին մշակելը, բերքը հավաքելն ու փոխադրելը և նրանից վերցվող քաղաքային հարկերն ու միրաբին տրվող վարձը կազմում էին մոտ 118 ռուբլի: Ստացված բերքը ամբողջությամբ օղի դարձնելու համար պահանջվում էր ևս 92 ռուբլի (վառարանի, բանվորների, վառելիքի, կաթսայի, վերանորգման համար կատարված ծախսերը և ակցիզային հարկը միասին վերցրած): Այսպիսով, մեկ դեսյատին այգին մշակելու և ստացված բերքը օղու վերածելու համար պահանջվում էր մոտավորապես 210 ռուբլի, մինչդեռ մեկ դեսյատինից ստացված ամբողջ օղին (որ կազմում էր մոտ 48 դույլ կամ 2160 աստիճան) վաճառելու դեպքում ստացվում էր մոտ 173 ռուբլի, այսինքն՝ ծախսերը եկամուտներին գերազանցում էին մոտ 37 ռուբլով [1]: Այդ պակասորդը այգեպետերը լրացնում էին այգում եղած մրգատու ծառերի բերքը, խոտն ու յոնջան վաճառելով: Բացի դրանից, այգեպետերը մասնագետներ ու բանվորներ վարձելու փոխարեն այգու բոլոր աշխատանքները կատարում էին իրենք [2], դրանով իսկ իրենց համար ստեղծելով եկամտի նվազագույն միջոց: 1911 թ. հաշիվներով մեկ դեսյատին այգին մշակելու համար ընդամենը պահանջվում էր մոտ 112 ռուբլի [3]:

Դրությունը աչնշով չէր փոխվում, եթե այգուց ստացված խաղողը վաճառվեր առանց վերամշակման: Այսպես, 90-ական թվականներին Երևանում խաղողի փութը վաճառվում էր միջին հաշվով մոտ 68 կոպեկով [4], իսկ մեկ դեսյատինի բերքը կազմում էր 300—350 փութ, այսինքն՝ յուրաքանչյուր դեսյատինի եկամուտը կազմում էր 204—238 ռուբլի: Սակայն պետք է նկատի ունենալ, որ միշտ չէր հաջողվում խաղողը ժամանակին և նշված գներով վաճառել, չհաշված տեղափոխման և վաճառքի հանելու հետ կապված մյուս դրժվարություններն ու ծախսերը:

Խաղողի այգիներում եղած բազմաթիվ մրգատու ծառերից զատ, կային նաև «մաքուր» մրգատու այգիներ: Դրանց տարածությունը հասնում էր 1250 դեսյատինի: Նախորդ շրջանի համեմատությամբ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 113, թ. 63:

2 Նույն տեղը:

3 «Обзор Эриванск. губернии на 1912 год», էջ 7:

4 Տե՛ս «Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. 6, էջ 77:

1879—1914 թթ. մրգատու այգիների տարածությունը բավական ընդարձակվել էր: Այս շրջանում մրգատու նոր այգիներ էին դցվել Նորագեղի խոպան հողերում: Այդ նոր այգիները մի ընդհանուր հավաքական անունով կոչվում էին «Խամեր»-ի այգիներ [1]: Մրգատու այգիների բերքատվությունը ընդհանուր ու մոտավոր հաշիվներով հավասար էր խաղողի այգիների բերքատվությանը, բայց առաջինները ավելի քիչ աշխատանք էին պահանջում և ավելի եկամտաբեր էին, քան երկրորդները:

Մեզ հետաքրքրող շրջանում քաղաքի մրգատու այգիների ծառային կազմը ենթարկվում է զգալի փոփոխության: Տեղական ընտիր ծառատեսակների՝ դեղձենու, ծիրանենու, բալենու, սալորենու և այլ մրգատու ծառերի հետ միասին այս շրջանում Երևանի այգիներում հաջողությամբ բերք էին տալիս ներմուծված եվրոպական ծառատեսակները:

Մրգատու այգիների մեծագույն մասը տներին կից էր, կամ ուղղակի դրանց բակերում և զուգորդված էր կանաչեղենի մարգերով, փոքր բանջարանոցներով և բնական ու արհեստական խոտհարքներով:

Երևանի նահանգում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին եղած 580 դեսյատին բանջարանոցների [2] մոտ 15—20 տոկոսը գտնվում էր Երևան քաղաքում: Քաղաքում տներին կից եղած մանր բանջարանոցներից բացի Յոնջալըղ կոչված վայրում, Դալմայի կողմերում և այլ մասերում կային համեմատաբար ավելի մեծ տարածություններ գրավող բանջարանոցներ, որտեղ մշակում էին պոմիդոր, կաղամբ, վարունգ, լոբաբույսեր, կանաչի և այլն:

Մրգատու և խաղողի այգիների մեջ զարձյալ ամենանշանավորը նախկին սարդարի այգին էր: Այս այգին պարապատած էր և բաժանված էր 6 ուղղանկյուն քառանկյունների, որոնք իրարից բաժանված էին բավական լայն ծառուղիներով: 80—90-ական թվականներին և հետագա տարիներում պետությանը պատկանող այդ այգին գտնվում էր անշուք ու անխնամ վիճակում: Կապալառուները մտածելով միայն իրենց անձնական եկամուտների մասին, այգին շահագործման էին ենթարկում գիշատչորեն, կտրատում էին ծառերը, անմշակ էին թողնում այգու ծայրերին նեղ շերտերով ձգվող «ղռերը», ժամանակին փխրացում ու քաղհանում չէին կատարում,

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, ցուցակ 1, գ. 5040, թ. 12:

2 «Кавказский календарь на 1914 г.», отд. статистич., էջ 133:

էր կատարում էին անխնամ [1], չնայած ըստ պայմանագրի նրանք պարտավոր էին այգին պահել կարգին վիճակում և թույլ չտալ անօրինականություններ [2]։ Ինչպես ասվեց, այդ այգին խառը տիպի էր։ Նրա 1 դես. 600 քառ. սաժ. գրավում էր խաղողի այգին, 1 դես. 2100 քառ. սաժ.՝ մրգատու ծառերը, 3 դես. 600 քառ. սաժ.՝ ծառապատ տարածությունը, իսկ 5 դես. 600 քառ. սաժ.՝ բանջարանոցները, ճանապարհները և ծաղկանոցները [3]։ Գրաված տարածության, դիրքի և ոռոգման պայմանների համեմատությամբ այգուն տված եկամուտները չնչին էին, մինչդեռ ըստ ականատես մասնագետի հաշիվների, լավագույն ձևով մշակելու դեպքում այն տարեկան կարող էր տալ մինչև 10.000 ռուբլու մաքուր եկամուտ [4]։ Էլ չենք խոսում այն մասին, որ նա կարող էր ավելի մեծ դեր խաղալ իբրև փորձադաշտ։

Այգիների մշակումը կատարում էին կամ իրենք այգեպետերը կամ վարձու բանվորները։ Սովորաբար այգիներն իրենց ուժերով էին մշակում մանր այգեպետերը, իսկ կապալով վերցրած և մեծ այգիները, որոնք կարող էին լինել պետական ու քաղաքապատկան կամ մասնատիրական, մշակում էին վարձու բանվորները։ Մոսկվայի պետական պատմական կենտրոնական արխիվում պահպանված մի փաստաթղթից երևում է, որ XX դարի սկզբներին Երևանի այգիները մեծ մասամբ մշակում էին էջմիածնի ու Նոր Բայազետի գավառներից ժամանակավոր վաստակի եկած բանվորները [5]։ Նրանք բավական բազմաթիվ էին և ստանում էին չնչին օրավարձ՝ 30—45 կոպեկ [6]։

Երևանի տնտեսության մեջ այգեգործությունից և բանջարաբուծությունից հետո ըստ նշանակության նախորդ շրջանի նման գալիս էր հացահատիկների մշակությունը։ Այդ բնագավառում մշակման գործիքների ու մեթոդների գծով նախորդ ժամանակների համեմատությամբ 1879—1913 թթ. որևէ փոփոխություն չի կատարվում։

Քաղաքի հացահատիկային տնտեսության մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ցանքատարածության չափերի, մշակվող հացահատիկների կազմի, բերքատվության, մեկ միավոր ցանքատարածության վրա կատարվող ծախսերի և մի քանի այլ հարցերի վրա։

Քաղաքի հողային ֆոնդերի և հողային հարաբերությունների մասին խոսելիս տեսանք, որ նրա վարելահողերը 80-ական թվականներից ի վեր կազմում էին ավելի քան 1193 դեսյատին [1]։ Այդքան վարելահողերից 80-ական թվականներին յուրաքանչյուր տարի ցանվում էր մոտավորապես 300 դեսյատին [2]։ Հետագայում, կանոնավոր եռադաշտային ցանքաշրջանառության կիրառման շնորհիվ քաղաքի հացահատիկային ցանքատարածությունը մեծանում է 33,3 տոկոսով՝ 1902—1906 թթ. հասնելով 400 դեսյատինի [3]։ Սակայն բոլոր տարիներին միևնույն չափով ցանքեր չէին կատարվում։ Օրինակ՝ 1908 թ. քաղաքում ցանվել է ընդամենը 35 դեսյատին հողատարածություն [4], որը կազմում էր 1901—1906 թթ. ցանքսի ընդամենը 8,75 տոկոսը։ Եթե նահանգի մասշտաբով Երևան քաղաքի այգիների գրաված տարածությունը բավական մեծ տեսակարար կշիռ ուներ, ապա նրա ցանքատարածությունները չնչին տոկոս էին կազմում [5]։ Հացահատիկներից ցանում էին՝ ցորեն, գարի և բրինձ։ Ամբողջ ցանքսի 70—80 տոկոսը կազմում էր ցորենը, երկրորդ տեղը իր տարածությամբ գրավում էր գարու ցանքը, իսկ երրորդը՝ բրինձը։ Երևանի հացահատիկային տնտեսության առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նրա բոլոր ցանքերը կատարվում էին բացառապես ջրովի հողերում։ Սակայն մեծ չէր բերքը։

Երևանի նահանգը բերքատվության տեսակետից սովորաբար բաժանվում էր չորս խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում էր միայն Սուրմալուի գավառը, որտեղ 90-ական թվականներին բերքատվությունը հասնում էր մեկին 7—8, երկրորդ խմբի մեջ էին մտնում՝ Շարուր-Դարալագյազի, էջմիածնի և Երևանի գավառները, որոնցում բավարար չափի բերքը կազմում էր մեկին 4։ Սակայն բրինձը չէր մտնում այդ նորմաների մեջ, նրա բերքը շատ բարձր էր։ Այդ

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 4143, թթ. 160—174, 150, «Պատկ», 1880, № 20։

2 Նույն տեղը, թ. 37—38։

3 Նույն տեղը, թ. 161։

4 Նույն տեղը, թ. 165։

5 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4д-во, 1907, д. 87, ч. 2, л. 5.

6 Նույն տեղը։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1085, թ. 8։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 2, таблица 15, на 1908, отд. 3, табл. 1.

4 «Памятная книжка Эриванской губернии на 1910 г.», «Ведомость о хлебопашестве за 1908 год».

5 Երևանի վերաբերյալ տվյալները համեմատել «Кавказск. календарь на 1914 г.» (отд. статистический, стр. 133)՝ ամբողջ նահանգին վերաբերող տվյալների հետ։

պատճառով էլ երբ մյուս հացահատիկների հետ հաշվում ենք նաև բրինձը, ապա 90-ական թվականների համար Երևանի գավառի (որտեղ բրնձի ցանքսերը բավական տարածություն էին գրավում) միջին բարձր բերքը կազմում է մեկին 8,8։ Երրորդ խումբը կազմում էին Ալեքսանդրոպոլի և Նախիջևանի գավառները՝ մեկին 3,1 բերքատվությամբ, իսկ չորրորդ տեղը՝ Նոր Բայազետի գավառը, որի բերքատվությունը հազիվ էր հասնում մեկին երկուսի [1]։ Երևան քաղաքի հացահատիկների միջին բերքը բարձր էր Երևանի գավառի միջին բերքից, մանավանդ այն տարիներին, երբ բրնձի ցանքսերը համեմատաբար մեծ էին լինում։ Հացահատիկների բերքատվությունն ընդհանրապես տալիս էր մեծ տատանումներ՝ կապված տարվա եղանակների ու այլ պայմանների հետ։ Այդ գրեթե հավասար չափով վերաբերում է նաև Երևան քաղաքին, թեպետև, ինչպես ասվեց, նրա հացահատիկային ցանքերը կատարվում էին միայն ջրովի տարածություններում։

Մեր ձեռքի տակ եղած տվյալների հիման վրա Երևան քաղաքի հացահատիկային ցանքերի տարբեր թվականներին ունեցած բերքատվության համար կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակը։

Աղյուսակ 23

1902 թ. [2]						1906 թ. [3]						1908 թ. [4]					
ցանված սերմը փթերով			ստացված բերքը փթերով			ցանված սերմը փթերով			ստացված բերքը փթերով			ցանված սերմը փթերով			ստացված բերքը փթերով		
աշնանացան	գարի	բրինձ	գարի	գարի	բրինձ	գարի	գարի	բրինձ	գարի	գարի	բրինձ	գարի	գարի	բրինձ	գարի	գարի	բրինձ
8500	500	200	21 000	3000	2600	3000	400	—	12 000	2000	—	200	20	—	1000	120	—

Ինչպես տեսնում ենք, 1902 թվականին ցորենի բերքը կազմել է մեկին 2,47, գարու բերքը՝ մեկին 6, իսկ բրնձինը՝ մեկին 13,

1 Տե՛ս «Обзор Эриванск. губернии за 1897 год», էջ 3։

2 «Памятная книжка Эриванск. губ. на 1904 г.», отд. 2, табл. 15:

3 Նույն տեղը, 1908 թ., բաժին 3, աղյուսակ 1։

4 Նույն տեղը, 1910 թ., «Ведомость о хлебопашестве за 1908 год».

1906 թ.՝ ցորենի բերքը՝ մեկին չորս, իսկ գարունը՝ մեկին 5, 1908 թ.՝ ցորենի բերքը՝ մեկին 5, իսկ գարու բերքը՝ մեկին 6։ Դրանցից գրեթե աչնշով չէր տարբերվում նաև նախապատերազմյան տարիների բերքատվությունը։ Ըստ պաշտոնական տվյալների, Երևան քաղաքում 1911 թ. ցորենի և գարու բերքը կազմել է մեկին 5, 1912 թ.՝ ցորենի բերքը եղել է մեկին 4,3, գարունը՝ մեկին 4,5, իսկ 1913 թ. և՛ ցորենի, և՛ գարու բերքը դարձյալ կազմել է մեկին 5 [1]։ Լինում էին տարիներ, երբ բոլոր հացահատիկների՝ աշնան ցորենի, գարու և բրնձի բերքը միասին հաշված հասնում էր մեկին 7, մեկին՝ 8 [2], սակայն դրանք բացառիկ տարիներ էին և չէին կարող ճիշտ պատկերացում տալ երկար ժամանակների միջին բերքի մասին։ Ցածր բերքատվության և համեմատաբար փոքր ցանքատարածությունների պատճառով քաղաքում ստացված ամբողջ բերքն էլ արտահայտվել է փոքր թվերով։ Քաղաքի ցորենի, գարու և բրնձի բերքը միասին վերցրած նույնիսկ ռեկորդային տարիներին չի անցել 30 հազար փթից։ Այլ կերպ ասած, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քաղաքի հացահատիկային տնտեսությունից ստացված բերքը այնքան աննշան էր, որ յուրաքանչյուր շնչին նույնիսկ մեկ փութ չէր ընկնում։

Նահանգի մյուս քաղաքների համեմատությամբ Երևանի հացահատիկային ցանքսերի բերքատվությունը զգալի չափով բարձր էր։ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարում՝ 1913 թ. Երևանի նահանգի քաղաքներում ցանված մեկ փութ սերմից բերք էր ստացվել հետևյալ քանակությամբ (դարձյալ արտահայտված փթերով) [3]։

Աղյուսակ 24

№№ ը/կ	Քաղաքներ	Աշնանացան ցորեն	Գարնանացան ցորեն	Աշնանացան գարի	Գարնանացան գարի
1	Երևան	5	—	5	—
2	Ալեքսանդրոպոլ .	1,6	1,3	—	1,2
3	Նոր Բայազետ . .	3,1	2.0	—	2,0
4	Նախիջևան . . .	3·0	4,0	—	—
5	Օրդուբադ . .	3,0		—	—

1 Տե՛ս «Обзор Эриванск. губ. за 1911 и 1912 гг., էջ 4, ЦГИА СССР в Ленинграде, ф. оч. 633, д. 15, թ. 12։

2 ՀՍՀՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1085, թ. 8։

3 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1284, оп. 663, д. 15, թ. 12.

Բանջարաբուծությունը, բամբակագործությունը և հացահատիկների մշակությունը պահանջում էին բավական աշխատանք ու միջոցներ։ Պաշտոնական տվյալներով, 1906 թ. ոռոգվող յուրաքանչյուր դեսյատին հացահատիկային ցանքսը կամ բանջարանոցը մշակելու համար պահանջվում էին հետևյալ գումարները [1]։

Աղյուսակ 25

№ № p/կ	Մշակության տեսակը	Մշակման ծախսերը		Սերմացու			Ընդամենը մեկ դեսյատինի վրա ծախսվում էր	
		ռ.	կ.	քանակը փթերով	արժեքը ռ.	արժեքը կ.	ռ.	կ.
1	Աշնանացան ցորեն	38	—	12	12	—	50	—
2	Գարնանացան ցորեն	38	—	12	12	—	50	—
3	Գարի	23	50	12	9	60	33	10
4	Բրինձ	70	—	10	22	—	92	—
5	Բամբակ	113	—	10	5	—	118	—
6	Կարտոֆիլ և բանջարեղեն	47	—	—	8	—	55	—

Աղյուսակում արտահայտված թվերը համեմատելով բերքատվության վերաբերյալ բերված թվերի հետ՝ կարելի է ասել, որ Երևանի նահանգում XX դարի սկզբներին միջին թվով յուրաքանչյուր դեսյատին աշնանացան և գարնանացան ցորենի մաքուր եկամուտը (մշակման ծախսերն ու սերմացուի արժեքը դուրս եկած) կազմում էր մոտ 10 ռուբլի (մեկ դեսյատինի բերքը հաշվելով մեկին հինգ հարաբերությամբ), գարու մեկ դեսյատին ցանքսի մաքուր եկամուտը՝ 13 ռուբլուց մի փոքր ավելի, բրնձինը՝ 28 ռ. (բերքը հաշվելով մեկին 10 հարաբերությամբ) և այլն։ Հաշվումները ցույց են տալիս, որ նույնպիսի պատկեր են ներկայացնում նաև Երևան քաղաքի հացահատիկային ու բանջարաբուծական ճյուղերին վերաբերող համապատասխան թվերը։

Քաղաքային վարելահողերի մեծ մասը մշակում էին նորքեցիները։ Այդ հողերը նախկինում պատկանում էին Նորքի գյուղացիներին և քաղաքին էին անցել, ինչպես ասվել է իր տեղում, Նորքը քաղաքին միացնելու ժամանակվանից։ Քաղաքային դումայի որոշման համաձայն այդ հողերից օգտվելու համար նորքեցիները պարտավոր էին ստացված բերքի մոտ մեկ քառորդը (0,23 մասը) տալ քաղաքային ինքնավարությանը։ Այդ, ըստ երևույթին, ծանր էր նստում նորքեցիների վրա։ Վերջիններս 1882 թ. վերջերին հատուկ դիմումով պահանջում են քաղաքային դումայից, որպեսզի քաղաքային ինքնավարությանը տրվող բերքի բաժինը 0,23-ից իջեցվի 0,16-ի։ Սակայն քաղաքային դուման անհետևանք է թողնում նորքեցիների խնդիրքը և քաղաքային հողերի մշակման հոգսը, մինչև նոր առուների անցկացումը, հանձնարարում է քաղաքային վարչության անօրինությանը [1]։ Հետագայում քաղաքապատկան հողերը սկսեցին տալ կապալով [2] և դրանով իսկ ավելի վատացավ նորքեցիների դրությունը։ Եթե նախկինում քաղաքային ինքնավարության սահմանած պայմանները նորքեցիների համար ծանր էին, որովհետև ոռոգման ջրի պակասի պատճառով բերքը չափազանց ցածր ու անկայուն էր, ապա այժմ նորքեցին ընկավ վաշխառու-կապալառուի ճանկը, որը նրան հասցնում էր ծայր աղքատության դուռը։



Գյուղատնտեսությամբ զբաղվող երևանցի մի խումբ կանայք և տղամարդիկ (ՀՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Գյուղատնտեսական զբաղմունքների երրորդ ճյուղը, որ շարունակում էր զգալի դեր խաղալ քաղաքի տնտեսական կյանքում, ա-

1 «Обзор Эриванской губернии за 1906 г.», Ведомость 2.

1 «Պսակ», 1882, № 27։

2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 799, թ. 69 և այլուր։

նասնապահությունն էր, որի համար նախորդ ժամանակների նման կերային բազա էին ծառայում այգեգործական ու բանջարաբուծական մշակույթների մնացորդները, այգիներում և դրանցից դուրս եղած խոտհարքները, քաղաքի շրջակայքի արոտավայրերը, իսկ մանր եղջերավոր անասունները, բացի այդ, ամռանը օգտվում էին ալպյան գոտու արոտավայրերից, ուր դրանց տանում էին հունիս-օգոստոս ամիսներին։ Անասունների մեջ իրենց գլխաքանակով առաջին տեղը զրավում էին քաշող անասունները՝ ձիերը, ջորիները, էշերը, եզները և ուղտերը միասին վերցրած, իսկ երկրորդ տեղը՝ մթերատու անասունները՝ կովերը, ոչխարներն ու այծերը և խոզերը։ Անասունները բացառապես պահպանում էին մասնավոր մարդկանց և հիմնականում կենտրոնացած էին քաղաքի արվարձաններում։ Տարբեր թվականներին քաղաքի անասունների գլխաքանակը արտահայտվել է հետևյալ թվերով, որոնք վերցված են արխիվային և հրապարակված պաշտոնական հաղորդումներից։

Աղյուսակ 26

№ կ/կ	Անասունների տեսակը	Գլխաքանակ						
		1880 թ.[1]	1887 թ.[2]	1891 թ.[3]	1904 թ.[4]	1906 թ.[5]	1908 թ.[6]	1911 թ.[7]
1	Ձիեր	400	549	540	964	910	982	950
2	Էշեր	350	775	721	2192	2600	2510	2400
3	Ջորիներ	200	35	43	55	86	59	120
4	Եզներ, կովեր և գոմեշներ	250	990	692	732	960	870	990
5	Ուղտեր	85	43	44	20	20	15	50
6	Ոչխարներ	—	596	1428	1100	1200	1266	2100
7	Այծեր	—	103	120	250	300	228	400
8	Խոզեր	—	18	36	205	200	115	230
	Ընդամենը	1283	3109	3624	5518	6276	6045	7240

1 *С. Зелинский*, Город Эривань («Сборник материалов для описания местн. и племен Кавказа», вып. I, էջ 33)։

2 ՀՍՍՌ ԿԿՊԱ, ֆ. 125, գ. 25, թ. 7։

3 «Кавказский календарь на 1894 г.», отд. 5, էջ 240։

4 «Обзор Эриванск. губ. за 1904 г.», Ведомость № 3։

5 Նույն տեղը, за 1906 год, Ведомость № 3; Համմ. «Памятная книжка Эриванск. губ. на 1908 г.», отд. 3, табл. 3։

6 «Памятная книжка Эриванск. губ. на 1910 г.», Ведомость о состоянии скот. в Эрив. губ. за 1908 г.

7 «Кавказский календарь на 1913 год.», отд. 4, էջ 281։

1880 թ. վերաբերող տվյալները պակասավոր են, որովհետև այդ թվի տակ չի տրված ոչխարների, այծերի և խոզերի գլխաքանակը, իսկ մնացած թվերի տակ տրված են բոլոր անասունների գլխաքանակը։ Աղյուսակից դժվար չէ եզրակացնել, որ 1887—1911 թթ. ընթացքում քաղաքի բոլոր անասունների գլխաքանակը ավելացել է ավելի քան երկու անգամ՝ 1887 թ. եղած 3109-ից 1911 թ. հասնելով 7240-ի։ Այդ այնքան չնչին առաջադիմություն է (մանավանդ եթե նկատի ունենանք նաև քաղաքի բնակչության աճը), որ կարելի է նույնիսկ չարձանագրել։ Տարբեր անասունների աճը կատարվել է տարբեր տեմպերով։ Համեմատաբար մեծ աճ են ունեցել խոզերը, էշերը, ոչխարները, իսկ ուղտերի գլխաքանակը գրեթե մնացել է նույնը։

1912—1913 թթ. 1911 թվականի նկատմամբ Երևանի անասնապահության բնագավառում շոշափելի որևէ տեղաշարժ չի նկատվում, իսկ ինչպես թվերն են ցույց տալիս 1911 թ. քաղաքի յուրաքանչյուր 4,15 մարդուն բնկնում էր միայն մեկ անասուն, եթե քաղաքի բնակչության թիվը ընդունենք մոտավորապես 30.000։

Անասնապահության գծով Երևան քաղաքի տվյալների համեմատությունը նահանգի մյուս քաղաքների տվյալների հետ ի նպաստ նրան չի խոսում։ 1891 թ. դրությամբ Երևանի նահանգի քաղաքների անասունների գլխաքանակը արտահայտված է հետևյալ թվերով[1].

Աղյուսակ 27

№ կ/կ	Քաղաքներ	Ձիեր	Էշեր	Ջորիներ	Եզներ և կովեր	Գոմեշներ	Ոչխարներ	Այծեր	Խոզեր	Ուղտեր
1	Երևան	540	721	43	663	29	1428	120	36	44
2	Ալեքսանդրապոլ	300	320	—	1000	100	3800	2300	155	—
3	Նախիջևան	120	250	50	300	200	3000	3500	—	—
4	Նոր Բայազետ	312	406	7	6632	300	6700	1375	—	—
5	Օրդուբադ	30	120	20	150	240	200	100	—	—
	Ընդամենը	1302	1817	120	8745	869	15128	7395	191	44

Իսկ այդ թվերը ցույց են տալիս, որ մեկ շնչին բնկնող անասունների քանակով (բոլոր տեսակի անասունները միասին վերցրած) Երևանը նահանգում գրավում էր վերջին տեղը։

Մեզ հետաքրքրող շրջանում քաղաքում մեղվաբուծությունը գրեթե դադարել էր գոյություն ունենալուց։ Ըստ 1910 թ. տվյալնե-

1 «Кавказский календарь на 1894 г.», отд. 5, էջ 240։

բի՝ Երևանում ընդամենը կար մեղվի 36 ընտանիք (որից 6-ը փեթակ, իսկ 30-ը արկղ)։ Նույն թվականին այդ բոլոր ընտանիքներից ստացվել էր ընդամենը 18 փութ մեղր[1]։ Իսկ շերամապահություն ամենևին չկար։

3. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1879—1914 թթ. քաղաքի բնակչության վիճակի և նրա հասարակական կյանքի մեջ տեղի են ունենում մեծ փոփոխություններ. մոտ երեք անգամ ավելանում է բնակչության թիվը, դրալի փոփոխություն է կրում նրա ազգային կազմը, հարկային սիստեմը, քաղաքում աստիճանաբար ձևավորվում են բուրժուազիան ու բանվոր դասակարգը, 80-ական թվականների սկզբներին քաղաքի մատակարարության շրջանում աճում են հակացարական տրամադրությունները, իսկ 90-ական թվականների վերջերից՝ ձևավորված բանվոր դասակարգը ռուսական պրոլետարիատի օրինակով իր պայքարի դրոշն է բարձրացնում հանուն իր պայմանների լավացման ու ցարական կարգերի դեմ ընդհանրապես, դասակարգային պայքարի ֆոնի վրա և ռուսական իրականության ազդեցության շնորհիվ քաղաքում կազմավորվում է բոլշևիկյան կազմակերպություն, որը մինչև վերջ հավատարիմ է մնում մարքսիզմ-լենինիզմի ուսմունքին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշին, զինավարնելով աշխատավոր ժողովրդի պայքարը հանուն իր ազատագրման։ Նույն այդ պայքարի տարիներին առաջացան նաև հասարակության այլ դասակարգերի՝ մանր և խոշոր բուրժուազիայի կուսակցությունները՝ հնչակյան, դաշնակցական, ինչպես և սոցիալ-ֆիքսները, որոնցից մանավանդ վերջին երկուսը իրենց նեղ ազգայնական քաղաքականությամբ չլատում էին աշխատավոր ժողովրդի պայքարի ուժերը, նրան մղելով դեպի նացիոնալիզմ։ Սակայն հեղափոխական շարժման դեմ պայքարող ուժերի առաջնության դափնին գոնվում էր իրադրության տիրոջ՝ ցարական ռեակցիոն կառավարության ձեռքին, որը ռուսական առաջին հեղափոխությունից տագնապահար «փրկության» հույսը տեսնում էր պատերազմի և հրեական ու հայ-թաթարական (ադրբեջանական) ջարդեր կազմակերպելու մեջ։ Երևանը Անդրկովկասի այն քաղաքներից մեկն էր, որը մեծապես տուժեց ցարական կառավարության այդ ժողովրդասպան քաղաքականությունից։

Ահա այն հիմնական հարցերը, որոնք պետք է փորձենք փաս-

1 «Обзор Эриванской губернии за 1910 год», *էջ 10։*

տական նյութի հիման վրա քննարկել «Բնակչությունը և հասարակական կյանքը» վերնագրի տակ քննարկել բնակչության վիճակը, ազատագրական շարժումները 80-ական թվականներին և հեղափոխական շարժումները։

Ա) ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Բնակչության թիվը, աճը, շարժումը, կյանքի միջին տարիքը, ազգագրական ու անատոդ սովորությունները, ընտանիքների բազմանդամությունը, գրագիտության աստիճանը, ազգային ու դասակարգային կազմը։ Հարկերը. հարկերի տեսակները, հարկադրման կարգը, հարկերի ծանրությունը, բաղաքային գնահատման տուրքը, բնակարանային հարկը և մյուս հարկերն ու տուրքերը, հարկերի հավաքման կարգը։

Քաղաքի բնակչության մասին խոսելիս կարծում ենք, որ նախ և առաջ ուշադրության պետք է արժանանա նրա աճը։ Մեզ հետաքրքրող շրջանի՝ Երևանի բնակչության թվի վերաբերյալ կան բազմաթիվ տվյալներ, որոնց մեջ սակայն ամենից վստահելին և ամբողջականը 1897 թ. առաջին մարդահամարի տվյալներն են։ Վերջիններս ավելի ամբողջական են և համակողմանի։ Պաշտոնական և կիսապաշտոնական նյութերի հիման վրա Երևանի բնակչության թվի աճը կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 28

1880 թ.[1]	*1886 թ.*[2]	*1897 թ.*[3]	*1906 թ.*[4]	*1910 թ.*[5]	*1912 թ.*[6]
12 449	14.738	29 006	30.670	32.369	36.836

1 «Кавказский календарь на 1885 г.», отд. 3, *էջ 218։*

2 *Նույն տեղը*, на 1896, отд. 5, *էջ 56—57։*

3 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1288, д. 81, *թ. 57—58. Համմ.* «Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 год», LXXI, Эриванск. губ., 1905, *էջ 1։*

4 «Кавказский календарь на 1909 г.», отд. *4, էջ 394։ Նույնի 1908 թ. համարում նշվում է, որ 1906 թ. քաղաքի բնակչության թիվը եղել է ոչ թե 30.670 այլ՝ 28.910* (отд. *4, էջ 2—3)։*

5 «Кавказский календарь на 1912 г.», отд. *4, էջ 243։ Նույն տարվա համարի 230 էջում քաղաքի բնակչության թիվը արված է 29.271, որը կասկածելի է։*

6 ЦГИА Грузинской ССР, ф. 415, дело 113, *թ.* 2; «Кавказский календарь»-*ի 1913 թ. համարի տվյալներով Երևանը 1911 թ. իրր ունեցել է 20.078 բնակիչ, որը հավանաբար վրիպակ է, կամ որևէ թյուրիմացության արդյունք։*

Ինչպես տեսնում ենք, քաղաքի բնակչությունը 1880—1912 ԹԹ. ընթացքում գրեթե եռապատկվում է՝ 12.449-ից հասնելով 36.836-ի, այն դեպքում, երբ նախորդ 50-ամյակի ընթացքում նրա բնակչության թիվը համարյա որևէ աճ չէր տվել։

80—90-ական թվականներին Երևանի բնակչության աճի տեմպերը զգալի չափով ետ են մնացել Բաքվի բնակչության աճից։ 1865 թ. Բաքվի բնակչությունը ընդամենը կազմում էր 14.715 մարդ, իսկ առաջին մարդահամարի ժամանակ հասնում է 112 հազարի, այսինքն՝ աճում է մոտ 8 անգամ։ Նույն ժամանակներում Թիֆլիսի բնակչությունը 67,7 հազարից հասնում է 160,6 հազարի, աճելով մոտ 2,4 անգամ։ Իսկ Երևանի բնակչությունը այդ նույն ժամանակաշրջանում 14.070-ից հասնում է 29.006-ի, այսինքն՝ մոտավորապես հազիվ կրկնապատկվում է։ Հետագա տարիներում Անդրկովկասի քաղաքների մեջ Երևանն իր բնակչության աճով միայն ետ էր մնում Բաքվից, իսկ 1914—1916 ԹԹ. մեխանիկական մեծ աճի շնորհիվ նրա բնակչության թվի մեծացման թափը անցնում է նաև Բաքվից։ Անդրկովկասի քաղաքների բնակչության 1886—1926 ԹԹ. ընթացքում ունեցած համեմատական աճի մասին լավ գաղափար է տալիս Զ. Կորկոտյանի կազմած մի աղյուսակը, որից բերում ենք մեզ անհրաժեշտ մասերը՝ դրանք հնթարկելով որոշ փոփոխությունների։ Աղյուսակից օգտվողը պետք է նկատի ունենա, որ նշված քաղաքների 1886, 1897 և 1914 թվականներին բնակչության թիվը ընդունվել է 100 տոկոս, որի համեմատությամբ 1926 թվականի համար դրանց բնակչության թիվը դարձյալ տոկոսներով արտահայտված ներկայացնում է հետևյալ պատկերը [1].

Աղյուսակ 29

№ № ը/կ	Քաղաքներ	Բնակչության աճը արտահայտված տոկոսներով					
		1886—1926 ԹԹ.		1897—1926 ԹԹ.		1914—1923 ԹԹ.	
		1886 թ.	1926 թ.	1897 թ.	1923 թ.	1914 թ.	1926 թ.
1	Բաքու	100	401	100	310	100	140
2	Թիֆլիս	100	375	100	184	100	85
3	Ալեքսանդրոպոլ	100	175	100	138	100	82
4	Բութիա	100	213	100	148	100	83
5	Ելիզավետպոլ	100	283	100	171	100	102
6	Բաքում	100	327	100	170	100	126
7	Երևան	100	439	100	223	100	220

1 Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, էջ 38։

Աղյուսակից պարզ երևում է, որ Երևանի բնակչության աճը Անդրկովկասի մյուս վեց քաղաքների համեմատությամբ 1886—1926, 1897—1926 և 1914—1926 ԹԹ. բացառությամբ Բաքվի՝ 1897—1926 ԹԹ. աճի, եղել է բոլորից բարձր։ Դա, ինչպես ասվեց, հետևանք էր մեխանիկական այն աճի, որը տեղի ունեցավ ի հաշիվ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանից Երևանյան նահանգում և նրա կենտրոն Երևան քաղաքում ապաստանող բազմաթիվ փախստականների։ Քաղաքի բնակչության բնական աճը արտահայտված էր ավելի փոքր թվերով, նրա տնտեսական կյանքի զարգացման համեստ թափին համապատասխան։

Երևանի նահանգի քաղաքների մեջ Երևանը իր բնակչության թվով մինչև XX դարի սկզբները զբավում էր երկրորդ տեղը, առաջին տեղը զիջելով արհեստավորական Ալեքսանդրոպոլին։ 90-ական թվականներին Երևանի նահանգի հինգ քաղաքների բնակչության բանակն արտահայտվում է հետևյալ թվերով.

Աղյուսակ 30

№ № ը/կ	Քաղաքներ	1892 թ.[1]			1897 թ.[2]		
		արական	էգական	ընդամենը	արական	էգական	ընդամենը
1	Երևան	7479	6818	14297	17328	11678	29006
2	Ալեքսանդրոպոլ	13274	12716	25990	19049	11567	30616
3	Նախիջևան	3530	2991	6521	4666	4124	8790
4	Օրդուբադ	2246	1732	3978	2458	2153	4611
5	Նոր Բայազետ	4279	3923	8202	4570	4116	8486
	Ընդամենը	30808	28180	58988	47871	33638	81509

Ինչպես ցույց են տալիս թվերը, ընդամենը հինգ տարվա ընթացքում՝ 1892—1897 ԹԹ. Երևանի բնակչության թիվը աճել է ավելի քան կրկնակի չափով՝ 14.297-ից հասնելով 29.006-ի։ Ճիշտ է, 1892 թ. Երևանի բնակչության թիվը ըստ երևույթին ստույգ չէ, որովհետև դեռևս 1886 թ. հասնում էր 14.738-ի (տե՛ս աղյուսակ 28), բայց այդ իրականից անշուշտ քիչ էր տարբերվում և չէր կարող զգալի շեղումների պատճառ դառնալ։

Երկրորդ կարևոր մոմենտը, որ իսկույն աչքի է զարնում, այդ այն է, որ առաջներում բավական արագ աճ ունեցող Ալեքսանդրոպոլի բնակչության թիվը նույն հինգ տարվա ընթացքում ավելա-

1 «Кавказский календарь на 1893 г.», էջ 54։

2 «Первая всеобщая перепись населения Российск. имп.», LXXI, էջ 1։

նում է միայն մոտ 20 տոկոսով։ Հետագա տարիներին Ալեքսանդրապոլի բնակչության աճը ավելի է դանդաղում։ Մեր կարծիքով դա հետևանք էր ցարական Ռուսաստանի խոշոր ու մեքենայացված արդյունաբերության ու երկաթուղային տրանսպորտի զարգացման, որի հետևանքով արհեստները աստիճանաբար կորցրին իրենց նախկին նշանակությունը, իսկ, ինչպես գիտենք, Ալեքսանդրապոլը արհեստավորական քաղաք էր։ Հետևապես արհեստների անկմամբ իջնում են և նրա զարգացման տեմպերն ու բնակչության աճը։ Ալեքսանդրապոլում խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ չառաջացան, դրա համար նա չուներ հումքային բազա, ինչպիսին ուներ Երևանը։

Երևանի բնակչության աճի համար կարևոր էր նաև նրա նահանգական կենտրոն լինելը, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ բազմաթիվ արևմտահայերի համար ապաստարան դառնալը։

Երևանում և Երևանի նահանգի մյուս քաղաքներում ու գավառներում արական բնակչության թիվը իգականից միշտ մեծ էր։ Այդ տարբերության առավելագույնը երբեմն հասնում էր ընդհանուր թվի մոտ 25 տոկոսին։

Քաղաքային բնակչությունը ամբողջ նահանգում ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների չէր հասնում նույնիսկ 12 տոկոսի [1]։

Մարդահամարի և պաշտոնական այլ տվյալները ցույց են տալիս, որ Երևանի բնակչության թվի ավելացումը ավելի մեծ չափերով կապված էր ոչ թե բնական, այլ արհեստական աճի հետ։ Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, քաղաքի 29.006 բնակիչներից Նրևան քաղաքում և Երևանի գավառում ծնվածները կազմում էին ընդամենը 16.673, իսկ մնացած 12.373-ը եկել էին այլ տեղերից։ Ընդ որում, նրանցից 6878 հոգի եկել էին Երևանի նահանգի մյուս գավառներից, 3512 հոգի այլ նահանգներից, իսկ 1943 հոգին՝ այլ պետություններից [2]։ XX դարի սկզբներին այլ պետություններից եկած բնակիչների թիվը ավելի է մեծանում։ Այսպես, օրինակ՝ ըստ պաշտոնական տվյալների 1902 թ. Թուրքիայից Երևան եկած փախստականների թիվը կազմում էր 3896 հոգի [3]։ Հետագա տարի-

1 Ըստ այդ մարդահամարի տվյալների, ամբողջ նահանգի բնակչության թիվը 804.757 էր (տե՛ս «Первая всеобщ. перепись населения Российск. имп.», LXXI, էջ 8—9)։

2 «Первая всеобщая перепись насел. Российск. имп.», LXXI, էջ 2 և 24։

3 «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 2, էջ 6։

ներին հայ բնակչության ներհոսքը Արևմտյան Հայաստանից երևան շարունակվում էր՝ իր առավելագույն թվին հասնելով առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում։

Բնակչության բնական աճի չնչին լինելը իսկույն ակնհայտ է դառնում, երբ հայացք ենք գցում տարբեր թվականներին վերաբերող քաղաքի բնակչության շարժման տվյալներին։ Այդ տվյալների հիման վրա կարելի է կազմել քաղաքի շարժումը ցույց տվող հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 31

1886 թ. [1]				1893 թ. [2]				1906 թ. [3]				1908 թ. [4]			
ամուսնու-թյուններ	ծնվածներ	մահացածներ	ներհոսք	ամուսնու-թյուններ	ծնվածներ	մահացածներ	ներհոսք	ամուսնու-թյուններ	ծնվածներ	մահացածներ	ներհոսք	ամուսնու-թյուններ	ծնվածներ	մահացածներ	ներհոսք
110	507	326	181	172	590	501	89	232	1178	747	431	179	1169	1026	143

Աղյուսակի թվերը ցույց են տալիս, որ Երևանում երեխաների մահացությունը շատ բարձր է եղել. 1886 թ. այն կազմել է 64,3 տոկոս, 1896 թ.՝ 84,7 տոկոս, 1906 թ.՝ 64,8 տոկոս, իսկ 1910 թ.՝ 87,8 տոկոս։ Բնական աճը կազմել է 1886 թ.՝ 1,24 (բնակչության ընդհանուր թիվը 14.738 էր), 1906 թ.՝ 1,07 տոկոս (բնակչությունը 30.670 էր), իսկ 1910 թ.՝ 0,44 տոկոս (բնակչության ընդ. թիվը 32.369)։

Միանգամայն պարզ է, որ Երևանի բնակչության ընդհանուր աճը տեղի էր ունենում գերազանցապես մեխանիկական աճի շնորհիվ, որովհետև նրա բնական աճը, ինչպես տեսնում ենք, չնչին ու անկայուն էր։ Այդպիսի հաշիվներ կատարելով բոլոր տարիների համար՝ տեսնում ենք, որ համաճարակ հիվանդությունների պատճառով Երևանի բնակչությունը բնական աճ գրեթե չէր տալիս, իսկ տարիներ էին լինում, երբ նույն պատճառով քաղաքի բնակչության թիվը նույնիսկ զգալի չափով նվազում էր։

Բնակչության մահացությունն ու ցածր աճը որոշ տարբերություններով բնորոշ էր ո՛չ միայն Երևանի, այլ նաև Երևանի նա-

1 «Обзор Эриванской губернии за 1886 год», աղյուսակ 3։

2 Նույն տեղը, за 1896 год, աղյուսակ 3։

3 Նույն տեղը, за 1906 год, աղյուսակ 7։

4 «Памятная книжка Эриванской губернии на 1910 г.», Ведомость о движен. народонаселения Эриванск. губернии за 1908 год.

հանգի մյուս քաղաքների համար։ Այդ բանում համոզվելու համար վկայակոչենք 1906 թ. վերաբերող համապատասխան թվերը [1]։

Աղյուսակ 32

№ № կ/կ	Քաղաքներ	Ամուսնու-թյուններ	Ծնվածներ	Մահացածներ	Կենդանի մնացածներ	Ծանոթություն
1	Երևան	232	1178	747	431	Համեմատական հեռավորության նախկին Օրդուբադում մահացությունը չատ մեծ է եղել
2	Ալեքսանդրապոլ .	385	1251	843	408	
3	Նոր Բայազետ . .	92	410	239	171	
4	Նախիջևան . .	150	348	411	(—63)	
5	Օրդուբադ	24	61	60	1	
	Ընդամենը	883	3248	2300	948	

Ինչպես տեսնում ենք, 1906 թ. Երևանի նահանգի մյուս երեք քաղաքների համեմատությամբ Երևանի բնակչության բնական աճը զգալի չափով մեծ է և այդ տեսակետից նահանգի քաղաքների մեջ զբաղում է երկրորդ տեղը, առաջին տեղը զիջելով Նոր Բայազետին, որի բնակչության ընդհանուր թիվը նույնիսկ չէր հասնում Երևանի բնակչության թվի մեկ երրորդ մասին։ Ամենափոքր բնական աճը, բնդհանրապես, տալիս էին Նախիջևանն ու Օրդուբադը։

1897 թ. մարդահամարի տվյալներով Երևան քաղաքի բնակչությունը ըստ տարիքի արտահայտվում է հետևյալ թվերով [2] (տե՛ս աղյուսակ 33)։

Աղյուսակից դժվար չէ եզրակացնել, թե ինչքան փոքր է եղել երևանցու միջին տարիքը։ Բնակչության ավելի քան 88,7 տոկոսը կազմում էին 1—49 տարեկանները, իսկ 80-ից ավելի տարիք ունեցողների ընդհանուր թիվը նույնիսկ չէր հասնում 100-ի։

Ընդհանրապես երևանի բուն բնակիչների մեջ երկարակյացներ չէին լինում։ Քաղաքային բժիշկ Լ. Տիգրանյանը, որն իր պաշտոնավարության ընթացքում մոտիկից ծանոթացել էր երևանցիների կյանքի ու կենցաղի պայմաններին, գրում է, թե Երևանի 100 տարեկանները (որի տակ նա նկատի ունի ընդհանրապես երկարակյացներին) գրանք մեծ մասամբ եկովի են, բերել են իրենց հետ առողջ կազմվածք» [1]։ Բնակչության բնական աճի դանդաղ լինելը և կյանքի կարճատևությունն ու երևանցու վատառողջ օրգանիզմի գլխավոր պատճառը համարելով վատառողջ ջուրը, օդը, փոշին ու վատ պայմանները՝ դրա հետ միաժամանակ գիտակ բժիշկը տալիս է հին երևանցու արտաքին կազմվածքի և առողջական վիճակի իրական ու պատկերավոր նկարագրությունը։ Նա գրում է. «Երևանցին բարձրավանդակի բնակիչ է, բայց նա կարճահասակ է, ոսկորները բարակ են, կազմվածքը թույլ է, մարմնի թուլությունից նրա մեջքը փոքր ինչ կուզիկ է, իսկ փորը, հետևաբար, դուրս ընկած, երեսի ջույնը դեղնավուն, դեմքը ժանգոտ, քայլերը դանդաղ, ոչ մի արագաշարժություն չենք տեսնում նրանում, նա միշտ ամմբալով է ման գալիս, որովհետև ոտները փոքր ինչ ծալված են...։ Այս բոլոր մարմնավոր ու հոգեկան պակասությունները առաջացել են Երևանի մարդակործան օդից և ջրից և առհասարակ առողջապահական վատ պայմաններից, որոնց մեջ ապրում է երևանցին ծնընդյան օրից... և ժառանգություն է տալիս իր սերնդին իր թույլ և հիվանդոտ կազմվածքի ուժը» [2]։

Աղյուսակ 33

№№ կ/կ	Տարիքը	թիվը		
		արական	իգական	ընդամենը
1	Մեկ տարեկանից փոքր երեխաներ	386	343	729
2	1—9 տարեկան	3073	3028	6101
3	10—19 »	3475	2352	5827
4	20—29 »	5035	2155	7190
5	30—39 »	2430	1691	4121
6	40—49 »	1530	979	2509
7	50—59 »	853	641	1494
8	60—69 »	388	343	731
9	70—79 »	115	104	219
10	80—89 »	29	29	58
11	90—99 »	7	8	15
12	100—109 »	2	4	6
13	110 տ. և ավելին	—	—	—
14	Անհայտ տարիքի	5	1	6
	Ընդամենը	17328	11678	29006

Ի դեպ պետք է նշել, որ Երևանը մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել ազգագրական առումով։ Նրա բնակիչների մեծա-


1 «Памятная книжка Эриванской губернии на 1908 год», отд. 3, աղյուսակ 7։

2 «Первая всеобщая перепись населения Россейск. имп.», LXXI, էջ 6—7։

1 «Առողջապահական թերթ» (ամսագիր), Երևան, 1881, № 2, էջ 62։

2 Նույն տեղը։

գույն մասը եկել էր տարբեր տեղերից և ուներ տարբեր սովորություններ ու արտաքին կառուցվածք, բնավորության տարբեր գծեր։ Մինչև սովետական կարգերի հաստատումը Երևանում ազգագրական այդ հատկանիշները միևնույն ազգին պատկանող հայերի մեջ շարունակվում էին գոյություն ունենալ։ Նախասովետական շրջանի Երևանն իր մշակութային և տնտեսական ցածր մակարդակով չէր կարող համահարթել Հայաստանի ամենատարբեր շրջաններից եկող բնակիչների ազգագրական առանձնահատկությունները։ Այնուամենայնիվ, Երևանի բնիկ բնակչության սովորույթներն ու սովորությունները, ճաշերը, հագուստի ձևն ու ծեսերը իշխող էին ամբողջ քաղաքում։



Հարուստ երևանցու բնակարանի ներքին տեսքը (մակետ)
(Երևանի պատմության թանգարան)։

Համապետական տոներից բացի, հին երևանցիները կատարում էին Նոր տարվա, Բրագալույցի, մկրտության, հիշատակ մեռելոց, աերընդառաջի, Վարդանանց, բարիկենդանի, զատկի, համբարձման և կրոնական այլ տոներ։ Քաղաքի այլ ազգի բնակիչներն էլ ունեին իրենց տոները։

Առանձնապես հետաքրքիր նյութեր կան նշանդրեքի, հարսանիքի, մկրտության և թաղման ծեսերի վերաբերյալ, որոնց ուսումնասիրությունը կարող է օգնել հին Երևանի ընդհանուր բնութագրի ամբողջացմանը։



Երևանցի հայ ամուսիններ (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Երևանի բնակիչների մեջ եղել են և վատ սովորություններ՝ հարսանիքների ու քեֆերի ժամանակ աղմուկ աղաղակն ու ծեծը, «սաղ» կոչված խորտկարաններում գինարբուքը և զուռնայի կամ

դուդուկի նվագակցության տակ ղոչիների «քեֆ» անելն ու գզվռտոց սարքելը, որի մասին նշվեց իր տեղում, անպակաս էին քաղաքում և խանգարում էին քաղաքացիների անդորրը: Մեծ չարիք էր նաև ղեղեխաղը. «Պսակ» թերթի ասելով՝ 80-ական թվականների սկզբներին ղեղեխաղը մեծ տարածում ուներ քաղաքում: «Ղեղեխաղը մեղանում հսկայական քայլերով է առաջ գնում,— կարդում ենք «Պսակում»,—քաղաքային կլուբը չէ բավականացնում շատերի անհաղ պահանջներին, մանավանդ դրագիր թաթոսներին, որոնք ունեն իրենց առանձին ժողովարանները: Ամսի 20-ին ռոճիկներն առնելուն պես, ժողովվում են իրենց, այսպես ասած, «Թաթոսների կլուբը» և խաղում են մինչև լույս, այնտեղ թողնելով իրենց քունը, փողը և առողջությունը» [1]: Հետագա տարիներում ղեղեխաղը ավելի է տարածվում և շատերի անանկության, աղքատության ու դժբախտության պատճառ դառնում:

Երևանի ընտանիքները մեծ մասամբ բազմաշունչ էին: 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն ընտանիքների թիվը Երևանում եղել է 4838, այսինքն՝ միջին հաշվով քաղաքի յուրաքանչյուր ընտանիքին ընկել է 6 շունչ (29006:4839) [2]: Այդ այնքան մեծ թիվ է, որ առաջին պահին սովորաբար անհավատալի է թվում: Սակայն այդ միայն առաջին հայացքից է այդպիսի տպավորություն թողնում: Անշուշտ ցարական առաջին մարդահամարը (և նրա մյուս մարդահամարներն ընդհանրապես) ունի շատ անճշտություններ և չենք կարող դրա դատը վերցնել մեզ վրա, բայց մի բան պարզ է, որ XIX դարի 40-ական թվականներից, երբ հարկային միավոր ճանաչվեց ընտանիքը՝ տունը կամ ծուխը, Երևանի ընտանիքները, հարկի ծանրությունը համեմատաբար մեղմացնելու ձգտումով, ավելի հաղվադեպ էին բաժանվում ու մասնատվում նոր ընտանիքների [3]: Ծխահարկի սիստեմը, ինչպես կտեսնենք քիչ հետո, շարունակվում է մինչև 90-ական թվականները, իսկ դրա հետ շարունակվում է և քաղաքի ընտանիքների՝ ավելի խոշորանալու պրոցեսը: Եվ, իրոք, եթե միջին հաշվով քաղաքի յուրաքանչյուր ընտանիքին կամ ծխին 1829/32 թթ. ընկնում էր 4,17 շունչ, 1879/80 թթ. 4,32 շունչ [4], ապա, ինչպես ասվեց, 1897 թ. մեկ ընտանիքին ընկնում էր 6 շունչ: Մարդահամարի տվյալներով քաղաքի ընտանիքները ըստ շնչերի թվի հետևյալ պատկերն էին ներկայացնում [1].

Աղյուսակ 34

Բոլոր ընտանիքների թիվը	Ամբողջ շնչերի թիվը	Ընտանիքների թիվը ըստ շնչերի						
		2 շնչից	3 շնչից	4 շնչից	5 շնչից	6—10 շնչից	11 և ավելի շնչից	ընդամենը
4838	29006	460	825	844	733	1429	129	4423

Աղյուսակը պարզ է և մեկնությունների կարիք չունի: Միայն պետք է ասել, որ 90-ական թվականներից, երբ ծխահարկը նոր օրենքի հիման վրա փոխարինվում է ունեցվածքային հարկով, ինչպես և կապիտալիզմի զարգացման շնորհիվ, քաղաքի ընտանիքների բազմանդամությունն աստիճանաբար վերանում է: Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին Երևանի յուրաքանչյուր ընտանիքին միջին հաշվով նույնիսկ 5 շունչ չէր ընկնում:

Բնակչության մեծագույն մասը անգրագետ էր: 1897 թ. մարդահամարի տվյալներով քաղաքի 29006 բնակիչներից գրագետ էին միայն 8500 հոգի [2] կամ 29,3 տոկոսը: Ընդ որում դրանցից գրագետ կանայք կազմում էին 1966, իսկ տղամարդիկ՝ 6604 հոգի [3]: Կողմնակի ակնարկներից երևում է, որ գրագետ համարված բնակչության մի մասը հազիվ գրաճանաչ էր: Դրությունն ավելի էր վատանում նրանով, որ պաշտոնական լեզուն ռուսերենն էր, իսկ բնակչության մեծագույն մասը չէր տիրապետում դրան: Այնուամենայնիվ, Երևանի բնակչության գրագիտության տոկոսը բավական բարձր էր և՛ Երևանի նահանգի, և՛ գավառների, և՛ մյուս քաղաքների բնակչության գրագիտությունից [4]: Քաղաքի 8500 գրագետ բնակիչներից 5571-ը ադնվականներ, հոգևորականներ, վաճառականներ, պատվավոր քաղաքացիներ էին [5]:

Մեզ հետաքրքրող շրջանում Երևանի բնակչության ազգային կազմը ենթարկվում է որոշ փոփոխության: Նախորդ շրջանում քաղաքում բնակվող հայերից, ռուսներից, աղրբեջանցիներից և փոքր

1 «Պսակ», 1882, № 1:

2 Տվյալները տե՛ս «Первая всеобщ. перепись насел. Российск. имп.», LXXI, էջ 4—5:

3 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 530—531:

4 Նույն տեղը:

2 «Первая всеобщ. перепись насел. Российск. имп.», LXXI, էջ 4—5:

1 Նույն տեղը, էջ 11:

3 Նույն տեղը:

4 Նույն տեղը, էջ 8—9 և 11:

5 Նույն տեղը, էջ 32—37:



Ազգային տարազով երևանցի հայուհիներ (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Թվով վրացիներից բացի, քաղաքի բնակչության ազգային կազմը համալրվում է այլ ազգությունների՝ ուկրաինացիների, բելոռուսների, լեհերի, գերմանացիների, լիտովցիների և այլոց ոչ մեծ թիվ կազմող ներկայացուցիչներով։ Նախորդ շրջանի համեմատությամբ մեծանում է հայերի և մասամբ ռուսների տեսակարար կշիռը։ Ըստ պաշտոնական տվյալների, 1880, 1886 և 1897 թվականներին Երևանի բնակչության ազգային կազմը արտահայտված էր հետևյալ թվերով.

Հ/հ	Ազգություններ	1880 թ.[1]	1886 թ.[2]	1897 թ.[3]
1	Հայեր	5975	7142	12 523
2	Ադրբեջանցիներ (և այլ մահմեդականներ)	6293	7228	12 516
3	Ռուսներ	155	313	3 207
4	Լեհեր	—	14	190
5	Գերմանացիներ	—	—	64
6	Հրեաներ	—	16	175
7	Վրացիներ	26	—	—
8	Այլք	—	25	331
	Ընդամենը	12.449	14.738	29 006

Ինչպես տեսնում ենք, քաղաքի բնակչության մեջ ամենամեծ թիվը կազմում էին հայերը։ Երկրորդ տեղը գրավում էին ադրբեջանցիները, բայց դրանք իրականում ավելի փոքրաթիվ էին, քան ցույց է տրված աղյուսակում։ Պկրնազրյուրների մեջ ադրբեջանցիները, թուրքերը և պարսիկները սովորաբար տրված են «մահմեդականներ» կամ «թաթարներ և այլ մահմեդականներ» անունով, դրա տակ հասկանալով այդ երեք ժողովուրդներին։ Այնպես որ իրականում հայերի տեսակարար կշիռը ավելի մեծ էր, քան կարելի է դատել աղյուսակից։ Սակայն Երևանը Ալեքսանդրոպոլի և մանավանդ Նոր Բայազետի հետ համեմատած ուներ ավելի տարազանգված բնակչություն։ Ըստ 1907 թ. տվյալների, այդ երեք քաղաքների բնակչության ազգային կազմը տոկոսներով արտահայտված հետևյալ պատկերն էր ներկայացնում[4].

Քաղաքներ	Հայեր	Ադրբեջանցիներ և այլ մահմեդականներ	Ռուսներ	Լեհեր	Հրեաներ	Այլք
Երևան	45	44,0	9 0	1,0	0,5	0,5
Ալեքսանդրոպոլ	95,5	2.7	0 2	—	—	1,6
Նոր Բայազետ	100	—	—	—	—	—

1 «Кавказский календарь на 1885 г.», отд. 3, *էջ 218։*

2 *Նույն տեղը*, на *1896* год, отд. *5*, *էջ 56—57։*

3 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1288, опись 25, д. 81, *թ. 57—58։*

4 «Памятная книжка Эриванск. губ. на 1908 г.», отд. 4, *էջ 8—9։*



Եքեղ հագուստով երևանցի հայուհի
(ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Հետագա տարիներին, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Երևանի բնակչության մեջ հայերի տեսակարար կշիռը ավելի է մեծանում։ Ռուս բնակչության թվի ավելացուցը 90-ական թվականների վերջերին և XX դարի սկզբներին բացատրվում է գլխավորապես երկաթուղու շինարարությամբ։ Պաշտոնական և ոչ պաշտոնական աղբյուրներից երևում է, որ Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղու կառուցման վրա աշխատում էին բազմաթիվ ռուս բանվորներ և արհեստավորներ։ Սակայն Երևան—Ջուլֆա գծի ավարտումից հետո ռուսների տեսակարար կշիռը քաղաքում բավական նվազում է։ Այսպես, եթե առաջին մարդահամարի ժամանակ ռուսները կազմում էին քաղաքի բնակչության 11,1 տոկոսը, ապա 1907 թ. նրանք, ինչպես նշված է աղյուսակում, կազմում էին 9 տոկոս։

Էական փոփոխություններ է կրում քաղաքի բնակչության դասակարգային կազմը։ Կապիտալիզմի զարգացման հետևանքով քայքայված գյուղացիների ու արհեստավորների հաշվին քաղաքում կազմավորվում է մի նոր դասակարգ, բանվոր դասակարգը, որը, ճիշտ է, բազմամարդ չէր, բայց ինչպես կտեսնենք իր տեղում, իբրև նոր ու զարգացող դասակարգ, հասարակական կյանքում խաղում էր առաջնակարգ դեր։ Սակայն ցարական պաշտոնական վիճակագրությունը ոչ մի տեղ նշում չի կատարում բանվորների ինքնուրույն դասակարգի և դրանց թվի վերաբերյալ։ Ցարական վիճակագրության թերությունն այդ հարցում չէր սահմանափակվում դրանով։ Ինչպես գավառների, այնպես էլ քաղաքների հասարակության խմբերը նշելիս ցարական վիճակագրությունը իներցիայի ուժով նախկինի նման, մի կողմից, շարունակում է թվարկել հասարակության առանձին դասերը, առանց դրանք դասակարգերի մեջ խմբավորելու, իսկ, մյուս կողմից, հասարակության միանգամայն տարբեր դասակարգերին պատկանող խմբերը միացնելով իրար հետ իբրև մի դաս։ Դրա հետևանքով, օրինակ՝ քաղաքային դասին նույն վիճակագրությունը վերագրել է միանգամայն տարբեր դիրք ու դրություն ունեցող հասարակական խմբեր՝ ժառանգական պատվավոր քաղաքացիներ, վաճառականներ, արհեստավորներ, առևտրականներ և այլք[1]։ Ինչպիսի մանվածապատություն էլ ունենա այդ վիճակագրությունը, այնուամենայնիվ, դժվար չէ դրա նյութերի հիման վրա հասարակության դասակարգային կազմի մասին ճիշտ եզրակացության հանգել։ 1886 և 1897 թվականների տվյալներով Երևանի բնակչության սոցիալական կազմը արտահայտված էր հետևյալ թվերով.

1 Տե՛ս ЦГИА СССР в Ленинграде, ф. 1288, опись 52, д. 81, թ. 57—58։

1886 թ.[1]							1897 թ.[2]					
ազնվական-ներ			հոգևորականներ	քաղաքային դաս			վաճառականներ և պատվավոր քաղաքացիներ	հոգևորականներ	վաճառականներ	արհեստավորներ, ռազմատուրքով և առանց դրա	մշտական բնակիչներ	ընդամենը
Յատկապես	անձնական	ընդհանուր թվով		արհեստավորներ, ռազմատուրքով և առանց դրա	վաճառականներ	ընդհանուր թվով						
98	532	590	46	222	334	12553	2170	334	185	14927	8094	2122	1174

Աղյուսակից դժվար չէ տեսնել, որ շահագործողները կազմում էին քաղաքի բնակչության բացարձակ մեծամասնությունը և որ թե՛ շահագործողները և թե՛ շահագործվողները ըստ սոցիալական դրության իրենց հերթին մասնատված էին մի քանի ավելի մանր խմբերի։

Աշխատավոր բնակչության դրության մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսել աշխատավարձի ու ապրանքների գների առնչությամբ։ Սակայն այդ հարցն ամբողջական ձևով անհնար է պատկերացնել, առանց գոյություն ունեցող հարկային սիստեմի ուսումնասիրման։

Երևանում կիրառվող հարկային սիստեմը լիովին համապատասխանում էր պետության մյուս քաղաքներում գործող սիստեմին և այն ըստ էության նախորդ ժամանակաշրջանից ոչնչով չէր տարբերվում։ Առաջվա նման հարկերը բազմապիսի էին և բաժանվում էին երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի հարկերի։ Գոյություն ունեին պետական հարկեր, երկրային կամ գավառական հարկեր (земский собор), հարկերը հավաքելու համար սահմանված տուրքեր, քաղաքային հարկեր, զանազան տուրքեր, բնակարանային հարկ, ռազմական հարկ, հարկադիր դարձած՝ համայնական աշխատանքներ և անուղղակի բազմապիսի դանձումներ արհեստով, առևտրով, արդյունաբերությամբ զբաղվելու համար[3]։

Այժմ տեսնենք հարկադրման ինչպիսի կարգ գոյություն ուներ, ինչպիսին էին հարկերի ծանրությունը, հարկերի հավաքման կարգը։

Նախորդ շրջանի ծխահարկային սիստեմը իր գոյությունը պահպանում է մինչև XIX դարի 90-ական թվականները։ Ժամանակի ընթացքում պետական այդ հարկի չափը ենթարկվել է փոփոխությունների, բայց հարկադրման կարգն ու օրյեկտը մնում էին նույնը։ 1893 թ. դեկտեմբերի 27-ին հրապարակվում է մի նոր օրենք[1], որով Անդրկովկասում նախկին ծխահարկը փոխարինվում է, այսպես կոչված, անշարժ ունեցվածքից վերցվող պետական հարկով։ Քաղաքների անշարժ գույքը հաշվի առնելու և գնահատելու համար ստեղծվում են հատուկ հանձնաժողովներ։ Հարկի չափն ըստ այդ օրենքի սահմանվում էր անշարժ գույքի եկամտի 10 տոկոսի չափով, իսկ անշարժ գույքի եկամտաբերությունը սովորաբար հաշվում էին նրա արժեքի 20 տոկոսի չափով։ 1893 թ. օրենքը Անդրկովկասի քաղաքներում սկսեցին կիրառել 1894 թվականից։ Դրա համաձայն 1894—1896 թթ. յուրաքանչյուր տարվա համար Անդրկովկասի քաղաքները բոլոր միասին պետք է տային 185.502 ռ. 25 կ. անշարժ գույքի հարկ[2]։ Ընդ որում, այդ գումարից միայն Թիֆլիսի բաժինը կազմում էր 68.529 ռ. 52 կ.[3], իսկ Երևանի նահանգի քաղաքների անշարժ գույքի հարկը նույն թվականների յուրաքանչյուր տարվա համար կազմում էր՝ Երևան քաղաքինը 5.987 ռ. 43 կ., Ալեքսանդրոպոլինը՝ 5.084 ռ. 28 կ., Օրդուբադինը՝ 52 ռ. 40 կ., Նախիջևանինը՝ 108 ռ. 65 կ. և Նոր Բայազետինը՝ 44 ռ. 90 կ.[4]։ Այսպիսով, Երևանի նահանգի հինգ քաղաքների անշարժ գույքի հարկը կազմում էր 11.277 ռ. 66 կ., որից 11.071 ռ. 71 կոպեկը տալիս էին միայն Երևանն ու Ալեքսանդրոպոլը։ Հետագա տարիներին քաղաքի տնտեսական կյանքի զարգացմանը ուղեկցվեցին անշարժ գույքը գնահատող հանձնաժողովի նոր ստուգումները և դրանց հիման վրա բարձրացավ նաև քաղաքի անշարժ գույքի հարկի քանակը։ Հատուկ գնահատող հանձնաժողովի տվյալներով, 1904 թ. քաղաքում հարկման ենթակա անշարժ գույքը կազմում էր 7.898.004 ռ.։ Բացի դրանից կար և 41.084 ռ. անշարժ այլ մանր ունեցվածքներ, որոնք օրենքով ենթա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, գ. 25, թ. 33։

2 «Первая всеобщ. перепись насел. Российск. имп.», LXXI, էջ 2։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 592, թ. 117—130, գ. 928, թ. 4, «Обзор Эриванск. губ. за 1896 г.», էջ 14—15 և այլուր։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 915, թ. 6։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, գ. 933, թ. 5։

կա չէին հարկման։ Հարկման ենթակա գույքի յուրաքանչյուր 100 ռուբլուն գալիս էր 19,89 կոպ., իսկ հարկը հավաքելու ծախսերը հոգալու տուրքը հարկադրվող անշարժ գույքի յուրաքանչյուր 1.000 ռ. ընկնում էր 15,9 կոպեկ [1]։ 1893 թ. օրենքը ուժի մեջ է մնում մինչև 1912 թվականը, երբ սկսեցին կիրառել անշարժ գույքի հարկի մասին 1910 թ. հրապարակված նոր օրենքը։

Հարկային այդ օրենքը ցարը հաստատում է 1910 թ. հունիսի 6-ին և հրապարակվում է հաջորդ ամսվա 3-ին՝ համապատասխան կանոնադրության հետ միասին։ Ըստ այդ օրենքի՝ անշարժ գույքի պետական հարկի ենթակա էին քաղաքային գծի ներսում և դրանից դուրս, բայց քաղաքապատկան, բոլոր ունեցվածքները՝ բոլոր կարգի հողերը, բնակելի տներն իրենց բակերով ու մյուս շինվածքներով հանդերձ, ֆաբրիկաներն ու գործարանները, արհեստանոցներն ու խանութները, թատրոնները, բաղնիքները և ընդհանրապես բոլոր կարգի կառուցվածքները, շինարարության համար տրամադրված, բայց դեռևս չօգտագործված հողաբաժինները, անմշակ հողերը, բանջարանոցները, այգիները, ջերմոցները և այլն, և այլն [2]։

Հարկադրման ենթակա էին ամեն կարգի անշարժ ունեցվածքները՝ և՛ պետականները, և՛ քաղաքապատկանները, և՛ հողևորական հիմնարկներին պատկանողները, և՛ հիմնարկներին ու ընկերություններին պատկանողները, և՛ մասնատիրականները։ Անշարժ գույքի պետական հարկից ազատվում էին՝ պետության հաշվին պահվող այն ունեցվածքները, որոնք նրան օգուտ չէին բերում, քաղաքներին, հիմնարկներին, բարեգործական և լուսավորչական ընկերություններին պատկանող այն ունեցվածքները, որոնք կապալով չէին տրված և այդ միջոցով եկամուտ չէին բերում, բարեգործական ընկերություններին ու ուսումնական հաստատություններին ձրիաբար օգտագործելու տրված ունեցվածքները, թագավորի և թագուհու անձնական ունեցվածքները, թագավորական տան անդամների պալատները, որոշ պետական հիմնարկներ՝ դրասենյակներ, արխիվներ, երկաթուղիներին հանձնված պետական հողերը և այլն [3]։ Հարկադրման համար հիմք էր ծառայում միջին եկամտաբերությունը, որը տարբեր կարգի ունեցվածքների համար որոշվում էր տարբեր եղանակով, հինգ տարին մեկ անգամ անցկացնելով վերագնահատումներ։ Օրենքով անշարժ ունեցվածքներից վերցվող հարկը սահմանված էր դրանց մաքուր եկամտի վեց տոկոսի չափով [1]։ Մշտապես գործող գնահատող հանձնաժողովի և քաղաքային հարկային վարչության աշխատանքը թեթևացնելու համար կանոնադրության 25-րդ հոդվածով սահմանված էր հատուկ կարգ, ըստ որի անշարժ ունեցվածքի տերերը ոչ ուշ, քան տվյալ հարկային տարվա հունվարի 1-ը պետք է լրացնեին և հանձնաժողովին ուղարկեին հատուկ անկետաներ, դրանցում նշելով իրենց ունեցվածքի կազմի մեջ մտնող կառուցվածքներն ու հողաբաժինները, վարձով տրվող շենքերը, անվարձ ուրիշներին տրված կամ իրենց կողմից զբաղեցրած շենքերը, մի քանի տարվա վարձի չափը, հողաբաժինների վարձակալման գինը և այլն [2]։ Գույքատիրոջ կողմից այդ տեղեկությունները ստանալուց հետո քաղաքային հարկային վարչությունը ստուգումների միջոցով դրանց մեջ կատարում էր համապատասխան ճշտումներ և վերջնականապես որոշում տվյալ ժամանակամիջոցի յուրաքանչյուր տարվա հարկի չափը, որի մասին գույքատիրոջը տեղյակ էին պահում հատուկ ծանուցագրի միջոցով [3]։

Պետք է նշել, որ թե՛ 1893 թ. և թե՛ 1910 թ. հարկային օրենքները ելնում էին երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացումից, հարաբերություններ, որոնց հիմքում ընկած են գույքն ու անհատականությունը։ Ցարական կառավարության համար պարզ էր, որ 90-ական թվականներին Անդրկովկասում ըստ ունեցվածքի հարկադրումը պետական գանձարանին ավելի մեծ միջոցներ կտա, քան նախկին ծխային հարկն էր տալիս, իսկ 1910 թ. օրենքը փաստորեն 1893 թ. օրենքի խստացված ձևն էր, որով հարկման ենթակա օբյեկտների ցանկն ավելի մեծացավ և ավելացավ նաև հարկի չափը, որովհետև վերջինս սահմանվում էր, ինչպես ասվեց, ըստ ունեցվածքներից ստացվող եկամուտների, իսկ այդ եկամուտները գնալով ավելանում էին։

Երևան քաղաքի անշարժ գույքի պետական հարկը 1894 թ. կազմում էր 5987 ռ. 43 կ. [4], 1897 թ.՝ 14.230 ռ. [5], 1911 թ.՝ 20526 ռ., իսկ 1912 թ.՝ 1910 թ. օրենքը կիրառելուց հետո, միանգամից բարձրանում է 37.292 ռուբլու, այսինքն՝ նախորդ տարվա նկատմամբ ավելանում է ավելի քան 85 տոկոսով [6]։ Անշարժ ու-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 933, թ. 5։
2 Նույն տեղը, ֆ. 92, գ. 447, թ. 1։
3 Նույն տեղը, թ. 1—3։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 447, թ. 3—5։
2 Նույն տեղը, թ. 4—5։
3 Նույն տեղը, թ. 5—6։
4 Նույն տեղը, ֆ. 117, գ. 915, թ. 6։
5 Նույն տեղը, գ. 923, թ. 2։
6 Նույն տեղը, գ. 948, թ. 9—10։

նեցվածքի վրա դրվող հարկի չափով էլ գանձվում էր երկրային կամ գավառական կոչված հարկը, հետևապես առաջինի բարձրացման հետևանքով ավտոմատ կերպով բարձրանում էր և վերջինը, միշտ հավասարվելով նրան։ Հետևապես երկու անվան տակ գանձվող այդ հարկերը կազմել են 1894 թ.՝ 11.974 ռ. 86 կ., 1897 թ.՝ 28.460 ռ., 1911 թ.՝ 41.052 ռ., իսկ 1912 թ.՝ 74.584 ռ.։ Դրանցից բացի, գանձումներ էին կատարում պետական հարկը նշանակելու և հավաքելու համար։ Ըստ 1893 թ. օրենքի վերջինս գանձվում էր ունեցվածքի արժեքի յուրաքանչյուր 1000 ռուբլու համար 16 կոպեկ [1], որը նույնպես կազմում էր պատկառելի գումար՝ երկու-երեք հազար ռուբլի։

1910 թ. հարկային օրենքը իր խստությամբ տեղիք է տալիս զժգոհությունների և զանազան առաջարկների ու պահանջների. կրեմենչուգի քաղաքագլուխը Երևանի քաղաքագլխին հասցեագրած իր գրության մեջ դրան կցելով քաղաքային դումայի համապատասխան որոշումը, նշում է, որ 1910 թ. հունիսի 6-ի օրենքի կիրառմամբ իրենց մոտ պետական հարկերն ավելանում են երկուերեք անգամ, և խնդրում է նրան, որ հարմար գտնելու դեպքում Երևանի քաղաքային դումայի անունից հարց հարուցվի օրենսդրական կարգով պետական հարկերի մի մասը քաղաքների տնօրինության տակ թողնելու մասին [2]։

Երևանի քաղաքային դումայի մի քանի ձայնավորներ դումայի միջոցով խնդրում են նահանգապետին, որպեսզի վերջինս միջնորդի Կովկասի փոխարքայի առաջ անշարժ գույքից վերցվող պետական հարկը 6-ից իջեցնելու մինչև 3—4 տոկոսի։ Այդ հիման վրա համապատասխան որոշում է կայացնում քաղաքային գործերի նահանգական վարչությունը, սակայն Երևանի հարկերի կառավարիչը, որին եղրակացության համար նահանգապետի կողմից ուղարկված էր այդ որոշումը, համարում է չհիմնավորված և անժամանակ, գտնելով, որ 1910 թ. հարկային օրենքով իբր հարկագրույքը չի ավելացել և իբր հարկի ընդհանուր գումարը նախորդ տարիների համեմատությամբ ավելացել է միայն սոսկ այն բանի հետևանքով, որ նախկինում հարկադրման ենթակա շատ օբյեկտներ ազատ էին հարկերից, իսկ մյուս օբյեկտներն էլ հարկադրված էին իրական դրությունից ցածր նորմաներով [3]։

1 ՀՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 933, թ. 9, գ. 938, թ. 5 և այլն։
2 Նույն տեղը, գ. 948, թ. 5։
3 Նույն տեղը, թ. 8—10։

Այնուամենայնիվ, Կովկասի մի քանի քաղաքային վարչություններ փոխարքայության իշխանությունների առաջ հարց են հարուցում 1910 թ. սահմանված անշարժ ունեցվածքի պետական հարկը իջեցնել մինչև չորս, երեք և, նույնիսկ 2 տոկոսի։ Սակայն, որևէ արդյունք չի ստացվում։ Փոխարքայի պաշտոնակատար գեներալ Շատիլովը ի պատասխան այդ հարցումների, նահանգապետներին, գինվորական նահանգապետներին, Բաքվի քաղաքագլխին, հատուկ մարդերի ու օկրուգների պետերին և հարկերի կովկասյան վարչության կառավարչին ուղղած 1912 թ. հունիսի 12-ի իր պաշտոնական գրության մեջ ճշտում է ապացուցել, որ 1910 թ. օրենքով պետական հարկերը որևէ չափով չեն ծանրացել և դրանց թեթևացման մասին առաջարկներն ու խնդրանքները համարում է անժամանակ [1]։ Օրենքը ուժի մեջ է մտնում անփոփոխ։

Հարկերի ծանրության պատճառով դրանք երբեք ժամանակին չէին հավաքվում։ Մեր ձեռքի տակ եղած տվյալների համաձայն Երևանում տարեցտարի աճում էին հարկերից մնացած պարտքերը։ Ըստ այդ տվյալների, քաղաքում պետական հարկերից մնացած պարտքերը հետևյալ պատկերն էին ներկայացնում.

Աղյուսակ 38

Հ/հ	Պարտքերի տեսակը	1/1 1897 թ.[2] ռ.	կ.	16/10 1903[3] ռ.	կ.	16/10 1904[4] ռ.	կ.	1908[5] ռ.	կ.
1	Անշարժ ունեցվածքի պետական հարկից	7666	30	11003	99	12825	76	15162	32
2	Երկրային կամ գավառական հարկից			11003	99	12825	76	12627	18
3	Թագմական հարկից							2279	31
4	Զանազան գանձումներից							248879	67
	Ընդամենը	7666	30	22007	98	25651	52	278948	48

1 ՀՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 948, թ. 12—13։
2 «Обзор Эриванск. губернии за 1896 год», էջ 11։
3 ՀՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1435, թ. 49—50։
4 Նույն տեղը, գ. 933, թ. 16, 1907 թ. վերաբերող նույն կարգի պարտքերի մասին տե՛ս նույն տեղը, ֆ. 94, գ. 7020, թ. 1։
5 «Памятная книжка Эриванск. губ. на 1910 г», Ведомость о распределении недоимок по городам и уездам Эриванск. губ. за 1908 год.

Ճիշտ է, վկայակոչված ոչ բոլոր թվականների տակ են տրված բոլոր հարկերից մնացած պարտքերը, սակայն աղյուսակի մեջ տեղ գտած տվյալներն, այնուամենայնիվ, ցույց են տալիս, որ գնալով ժամանակի ընթացքում մեծանում են հարկերից մնացած պարտքերը։ Այդ պարտքերը առանձնապես մեծ չափերի են հասնում 1912 թվականից, երբ կիրառվում է 1910 թվականի հարկային օրենքը, իսկ համաշխարհային պատերազմի տարիներին դրանք հասնում են սոսկալիգույն չափերի։

Պետական ուղղակի հարկերից ոչ պակաս ծանր էր նաև քաղաքային հարկը կամ գնահատման տուրքը, որը գանձվում էր քաղաքի անշարժ այն բոլոր ունեցվածքներից, որոնք ենթակա էին պետական հարկադրման։ Քաղաքային այդ հարկը կազմում էր անշարժ գույքի մաքուր եկամտի 10 տոկոսը, կամ գույքի ամբողջ գնի 1 տոկոսը։ Ինչպես պետական հարկերի, այնպես էլ քաղաքային գնահատման հարկի չափերը որոշելու համար մի քանի տարվա պարբերականությամբ հատուկ հանձնաժողովի միջոցով կատարում էին անշարժ գույքերի գնահատումներ։ Քաղաքային գնահատման հարկը նույնպես ծանր էր նստում քաղաքացիների վրա։ Ըստ 1870 և 1892 թթ. քաղաքային կանոնադրությունների [1], քաղաքի ինքնավարությանը իրավունք էր տրվում քաղաքի անշարժ ունեցվածքներից (բացառությամբ պետական ունեցվածքային հարկից ազատվող ունեցվածքների) գնահատման հարկ գանձել ոչ ավելի, քան դրանց մաքուր եկամտի 10 տոկոսի չափով։ Երևանում այդ հարկը նշանակված էր հենց դրա թույլատրելի առավելագույն չափով [2]։ Ըստ երևույթին այլ քաղաքներում քաղաքային գնահատման հարկը հազվադեպ էր հասնում 10 տոկոսի։ Ուսոի միանգամայն տեղին է «Խոսք» լրագրում Մ. Ենգիբարյանի այն բողոքը, թե «Ռուսաստանի քաղաքների մեջ Երևանը գուցե առաջինը լինի իր հարկերի ծանրությամբ, որովհետև նա անշարժ կայքերի համար տուրք է վճարում քաղաքային վարչության 10 տոկոս. օրենքը դրանից բարձր տոկոս չունի նշանակած. մինչդեռ ուրիշ քաղաքներ տալիս են 2—3 կամ քիչ ավելի տոկոս և ոչ 10 տոկոս։ Չնայած տված հարկերի այդքան ծանրության, նա միշտ ունի իր քաղաքային ծախսով պահվող հիվանդանոցը, որի այցելուների 70 տոկոսը լինում է նահանգի ժողովուրդը» [3]։ Քաղաքի

1 Տե՛ս «Городовое положение 1870 года», էջ 47—48, հոդ. 129։
2 Նույն տեղը, էջ 48, հոդ. 130։
3 «Խոսք», 1914, № 15։

գնահատման հարկի ծանրությունը նույնիսկ զգում էին քաղաքային դումայի շատ ձայնավորներ, որոնցից մի խումբ 1911 թ. նոյեմբերի 16-ին դիմում են քաղաքային վարչությանը՝ խնդրելով, որ այդ հարկը իջեցվի մինչև 7 տոկոսի։ Նույն թվականի փետրվարի 7-ին քաղաքային գնահատման հարկադրույքի իջեցման խնդրով դիմում են մի խումբ քաղաքացիներ, որոնք հարմար են համարում քաղաքի կենտրոնական մասերը և ընդհանրապես որոշ օբյեկտներ շարունակել հարկադրել 10 տոկոսի չափով, իսկ մնացած ունեցվածքներից վերցվող գնահատման հարկը իջեցնել 6 տոկոսի, գտնելով, որ այդպիսի պայմաններում ևս քաղաքը կստանա բավական քանակությամբ միջոցներ։ Հարցը 1912 թ. հունվարին վերջնականապես քննարկվում է քաղաքային գործերի նահանգական ատյանում, որը իր որոշմամբ հանձնարարում է քաղաքագլխին այդ հարցը նորից ուսումնասիրել և նոր հիմնավորմամբ նորից ներկայացնել նահանգական վարչությանը [1]։ Իրականում դրանով էլ սահմանափակվում է հարցը, և քաղաքի գնահատման հարկը մնում է նախկինը՝ 10 տոկոսանոցը, իսկ դա կազմում էր բավական մեծ գումար։ Այսպես, օրինակ՝ 1912 թ. քաղաքային գնահատման հարկը կազմում էր 75.802 ռ. 50 կ. [2]։

Բավական մեծ գումար էր կազմում պետական բնակարանային հարկը։ Ըստ «Կոլոկոլ» թերթի հաղորդման, Կովկասի քաղաքները, որոնց թվում և Երևանը, պարտավոր էին տեղի զորքերին արամադրել տարելու տեղ։ Ըստ օրենքի Երևան քաղաքը պարտավոր էր ռազմական շտաբին և երկու վաշտ զինվորների ձրիաբար արամադրել Գամազատասխան բնակարաններ ու հանրակացարաններ։ Այդ նպատակի համար առանձնացված հանձնաժողովը նայում էր տների հարմարություններին և դրանց համար առաջարկում համապատասխան վարձ, ելնելով գոյություն ունեցող օրենքներից [3]։ Համաձայն օրենքի, բնակարանային հարկը նշանակվում էր ըստ քաղաքի կարգի։ XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբներին Ռուսաստանի բոլոր քաղաքները բաժանված էին հինգ կարգերի՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և այլն։ Կովկասյան քաղաքների մեջ առաջին կարգի քաղաք չկար։ Այստեղ երկրորդ կարգի մեջ մտնում էին Բաքուն, Թիֆլիսը և Բաթումը։ Երևանը, Վլադիկավկազը, Ելիզավետապոլը և մի քանի այլ քաղաքներ մտնում էին

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1612, թ. 11 և 12։
2 Նույն տեղը, թ. 12։
3 «Կոլոկոլ», 1912, № 17։

երրորդ կարգի մեջ, Ալեքսանդրոպոլը չորրորդ կարգի էր, իսկ Նոր Բայազետը չուներ ոչ մի կարգ[1]։ Երրորդ կարգի քաղաքների համար պետական բնակարանային հարկ էր սահմանված հետևյալ չափերով[2].

Աղյուսակ 39

Բնակարանների վարձակինը	հարկի դրույքը		Բնակարանների վարձակինը	հարկի դրույքը		Բնակարանների վարձակինը	հարկի դրույքը	
	ռ.	կ.		ռ.	կ.		ռ.	կ.
150 -180 ռ.	2	—	700— 800 ռ.	23	—	1600—1700 ռ.	89	—
180 - 240 »	4	—	800 900 »	28	—	1700—1800 »	100	—
240 — 00 »	5		900 1000 »	34	—	1800—2000 »	111	—
300 360 »	7	—	1000 -1100 »	39	-	2000 2 00 »	128	—
360 — 420 »	9	—	1100—1200 »	46	—	2200 2400 »	152	
420 480 »	11	—	1200 - 1300 »	52	—	2400—2600 »	181	—
480 —540 »	14	—	1300 - 1400 »	61	--	2600 2800 »	215	—
540—600 »	16		1400 1500 »	70	-	2800 - 3000 »	255	—
600—700 »	19	—	1500 - 1600 »	79	—	3000 ռուբլուց բարձր .	բնակ. գնի 10%	

Բնակարանային հարկը իրրև պետական հարկ վճարում էին քաղաքացիները, այն բաժանելով իրար մեջ։ XX դարի առաջին տասնամյակում զորքը մեծ մասամբ քաղաքից դուրս գտնվելու շնորհիվ Երևանը մի քանի տարի շարունակ ազատվում էր բնակարանային հարկը տալուց, բայց շուտով նա հարկադրված է լինում կատարել իր պարտականությունները[3]։ Այդ հարկը կարող էր լինել և նատուրալ ձևով (երբ քաղաքը ուղղակի տրամադրում էր բնակարաններ), և դրամական, երբ բնակարանների վարձր արվում էր դրամական հարկի ձևով։ Բնակարանային հարկի մի մասը մուծում էր քաղաքային ինքնավարությունը։ XX դարի սկզբներին քաղաքային դուման այդ նպատակի համար ծախսերի նախահաշվի մեջ տարեկան նախատեսում էր 6000 ռուբլի[4]։ Ինչպես երևում է, ոստիկանական և զինվորական աստիճանավորներին բնակարաններով բավարարելու համար մեծ միջոցներ էին ծախսվում և 80-ական թվականներին, երբ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Երևանի կայազորը տակավին մնում էր շատ բազմամարդ։ Ըստ արխիվային փաստաթղթերի,

1 «Кавказский календарь на 1909 г.», отд. 5, էջ 717։
2 Նույն տեղը, էջ 716—717։
3 «Կոչնակ», 1912, № 17։
4 Նույն տեղը։

միայն 1884 թ. ընթացքում Երևանում ոստիկանական և զինվորական աստիճանավորներին իրրև նատուրալ հարկ ձրի տրամադրված բնակարաններից բացի, քաղաքային միջոցներից ծախսվել էր 6032 ռ. 50 կ., Ալեքսանդրոպոլում՝ 11.833 ռ. 39 կ., Նոր Բայազետում՝ 1016 ռ., Նախիջևանում՝ 576 ռ., իսկ Օրդուբադում՝ 986 ռ. [1]։

Առաջվա նման երկար, շատ երկար ցանկ էին կազմում մյուս հարկերն ու գանձումները, որոնք հիմնականում տրվում էին քաղաքին և այդ պատճառով էլ հարմար ենք համարում դրանք նշել քաղաքի ներքին կյանքը ներկայացնելիս՝ քաղաքի եկամուտների մասին խոսելիս։

Պետական և քաղաքային գնահատման հարկերը հավաքում էին հատուկ կանոնների համաձայն, որոնցից առաջինները մշակված էին պետական օրգանների, իսկ վերջինը քաղաքային դումայի կողմից՝ հենվելով քաղաքային կանոնադրության համապատասխան դրույթներից։ Մինչև 1870 թ. քաղաքային կանոնադրության կիրառումը, ինչպես տեսանք, հարկերի ու տուրքերի հավաքման պարտականությունները ընկած էր քաղաքային ոստիկանության վարչության վրա, իսկ հարկերի բաշխումն ըստ հարկատուների կատարվում էր ընտրովի բաշխիչների կողմից[2]։ Քաղաքային կանոնադրությունը կիրառելուց հետո այդ գործի ամբողջ պատասխանատվությունն ու պարտականությունները անցան քաղաքագլխին[3], որը անհրաժեշտության դեպքում դիմում էր ոստիկանական վարչության օգնությանը։

Տվյալ տարվա հարկերը ըստ կանոնադրության պետք է մարվեին հոկտեմբերի 1-ին։ Այդ ժամկետում չմուծված դումարները համարվում էին պարտք և հետաձգված յուրաքանչյուր ամսվա համար տուգանք էր գալիս պարտք մնացած դումարի 1 տոկոսի չափով։ Ժամկետից վեց ամիս անց պարտքը և տուգանքը չմուծելու դեպքում դրանք գանձվում էին ոստիկանության միջոցով։ Վերջինս իրավունք ուներ պետական ու քաղաքային հարկերը բռնագանձել բնդհուպ մինչև պարտք ունեցողի գույքի կալանքն ու վաճառքը (պարտքի չափով, առանց իրավունք ունենալու մի քանի անհրաժեշտ իրերը վաճառելու)[4]։ Այդ դեպքում պարտք ունեցողին մի-

1 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1284, опись 223, д. 116, թ. 28—29։
2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 1, թ. 61։
3 Նույն տեղը, թ. 61—62։
4 Տե՛ս նույն տեղը, գ. 447, թ. 1—7, ֆ. 117, գ. 928, թ. 4, գ. 908, թ. 101, «Эриванские объявления», 1907, № 29, 1912, № 53, «Городовое положение 1870 года», էջ 48—50 և այլուր։

այն թույլատրվում էր ընտրություն կատարել, թե իր իրերից ու ունեցվածքներից որն է կամավոր տրամադրում վաճառքի հանելու համար։

Բ) ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի հայ ազատագրական շարժման բնույթը։ «Պսակ» թերթը հայ ազատագրական շարժման պրոպագանդիստ։ «Հայաստեր» և «Ազգասեր» խմբակը և դրա պայքարը ցարական ռուսականացման քաղաքականության ու սուլթանական բռնապետության դեմ։ Հայկական դպրոցների մասին Ալեքսանդր Երորդի՝ արձակած հրամանը և հակացարական տրամադրությունների ուժեղացումը։

XIX դարը բազմադարյան պատմություն ունեցող հայ ժողովրդի ազատագրական շարժումների մի նոր ժամանակաշրջան էր, մի այնպիսի ժամանակաշրջան, երբ արյունահեղ պայքարով Օսմանյան և Ավստրիական կայսրություններից անկախանում և ազգային պետություններ էին հիմնում մի շարք ժողովուրդներ, երբ բորբոքվում էր ազատագրական պայքարը Անգլիայի, Ֆրանսիայի և կապիտալիստական մյուս պետությունների գաղութներում։

XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումներին ակտիվ մասնակցություն է ունեցել հայ պարբերական մամուլը՝ «Հյուսիսափայլը», «Մշակը», «Արծվի Վասպուրական»-ը, «Մեղուն» և այլն։ Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Հ. Սվաճյանը, Մ. Մամուրյանը, Գր. Արծրունին, Ռ. Պատկանյանը, Րաֆֆին և ուրիշներ իրենց կոչերով, հոդվածներով ու ստեղծագործություններով լայն կերպով պրոպագանդում էին սուլթանական բռնապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարը։ Մի շարք քաղաքների՝ Մոսկվայի, Պետերբուրգի, Դորպատի, Թիֆլիսի և այլ տեղերի հայ ուսանողությունն ու մտավորականության մյուս ներկայացուցիչները մտահոգվում էին դարիս կարևորագույն հարցերով և իրենց մասնակցությունը ցույց տալիս այդ շարժմանը [1]։

[1] *XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժումների մասին մանրամասը տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, Աղետ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, դիրք առաջին, 1955, դիրք երկրորդ, 1956, Վ. Ս. Պաւոսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958 և այլն։*

Այդ ընդհանուր շարժումից ղեթ չէր մնում նաև Արևելյան Հայաստանի հիմնական կենտրոնը՝ Երևանը։ Այստեղ 80-ական թվականների հենց սկզբից լույս էր տեսնում «Պսակ» թերթը։ Գիմնազիայում, ուսուցչական սեմինարիայում, Գայանյան օրիորդաց ուսումնարանում և այլ դպրոցներում կային հայ մտավորականության այնպիսի ներկայացուցիչներ, որոնց համար սրբազան էին հայոց լեզուն, հայ կուլտուրան և իրենց արևմտյան արյունակիցների ազատագրումը։ Նրանք գործելով հայ միջավայրում՝ ավելի լավ էին տեսնում ցարական կառավարության ռուսականացման և դաղութային ռեակցիոն քաղաքականության հետևանքները։ Այդ պատճառով էլ հենց սկզբից պետք է ասել, որ 80-ական թվականների սկզբներին Երևանի մտավորականության շրջանում առաջացած շարժումը և՛ հակատուրքանական էր, և՛ հակացարական։ Ճիշտ է, շարժման մասնակիցները միաբերան չէին, ընդամենը մոտ 40 հոգի, բայց դրանց գործունեությունն էլ հերիք էր, որ ցարական պահնորդական բաժինը և դատախազական ու վարչական օրգանները երկար ժամանակ կատարեն ննջեցություններով լի հետաքննություններ ու շարժման մասնակիցներին վարչական կարգով աքսորեն հարազատ քաղաքից։

Երևանում ազատագրական շարժման առաջին պրոպագանդիստի դերում հանդես է եկել «Պսակ» թերթը, որի հրատարակիչն ու խմբագիրը ազատագրական շարժման ակտիվ մասնակից Վասակ Պապաջանյանն էր։ «Պսակը», ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Ներսիսյանը, հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում է ոչ թե «եվրոպական պետությունների կամ միջազգային դիվանագիտության» անամիջ խոստումների, այլ հենց իր՝ ժողովրդի ուժերի հետ, նրա գործունեության հետ [1]։ «Պսակի» և նրա հրատարակիչ-խմբագրի՝ հայ-ազատագրական պայքարի մասին ունեցած տեսակետները առանց որևէ քողի արտահայտված են թերթի 1883 թ. 7-րդ և 9-րդ համարների խմբագրական հոդվածներում, որոնք փաստորեն ազատագրական պայքարի կոչեր էին։ Առաջին հոդվածում, որը կրում է «Մերին պիտի չլսենք» վերնագիրը, ասված է.

«Եթե մեր ժողովրդի սրտի մեջ խոսում է արդեն իր հայրենիքի ձայնը, եթե նա վերջապես ինքն իրեն հայ է ճանաչում ոչ թե ւնունով, այլ հոգով ու մարմնով, պետք է ամենայն ուշադրությամբ, պետք է խորաքննին կերպով իր մտածության առարկան

1 Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., էջ 251—252։*

շինի ներկա վիճակը, պետք է գիտենա օգուտ քաղել պղտորված ջրից», իսկ մի փոքր անց հոդվածագիրը նույն ոգով շարունակում է. «...Եշմարիտ հայը պետք է ցանկանա, պետք է միշտ պատրաստակամ և քաջասիրտ լինի նվիրելու, զոհելու իր համոզմունքը, իր ինչքը, իր բոլոր ունեցածը, նաև իր կյանքը իր ազգի բարեկեցության, պատվին, անդորրության ու երջանկության, եթե վերջապես մենք զատարկ խոսքերով չենք մեզ խաբում, պետք է բազկատարած դիմենք միմյանց ձեռք մեկնելու... և պետք է միախորհուրդ, միասիրտ, միակամ լինենք բախտի այս մրրիկը մեղնից վանելու, քշելու, հալածելու համար» [1]։

Դժվար չէ տեսնել, որ հայրենասեր մտավորականը ճիշտ էր հասկացել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայերի ազատագրության հարցի շուրջը միջազգային դիվանագիտության բարձրացրած աղմուկի սնամեջ լինելը և այն մյակ ելքի, համաժողովրդական պայքարի անհրաժեշտությունը, որն իրոք կարող էր հասցնել հաղթանակի, պայմանով, եթե ժողովուրդն իրեն ամբողջությամբ նվիրի այդ սուրբ գործին, իր համոզմունքները, գույքը, կյանքը չխնայի դրան զոհաբերելու։ Թերթը ժողովրդին կոչ է անում ոչ թե դիմել եվրոպական երկրների ողորմածությանը, լալագին խնդրանքների անպատվաբեր քայլին, այլ՝ ակտիվ ազատագրական պայքարի, ազատությունը զենքով նվաճելու ռեալ ու փառավոր միջոցին։ Նա արևմտահայերի ազատագրությունը համարում է ոչ միայն արևմտահայերի, այլ ամբողջ հայ ժողովրդի անհետաձգելի ու սրբազան գործը։

Թերթի կարծիքով ժողովրդին համախմբելու և նրա ուժերը թուրքական բռնակալության դեմ ուղղելու, ռուսական օգնություն ստանալու և ազատագրական պայքարի հաղթանակի երաշխիքներից գլխավորը այն է, որ էջմիածինը դառնա ամենայն հայոց կաթողիկոսության այնպիսի կենտրոն, որին ենթարկվեն Արևմտյան Հայաստանի մյուս՝ Սսի և Ախթամարի կաթողիկոսությունները։ Թերթի 1883 թ. 9-րդ համարում կարդում ենք [2].

«Առաջին և ամենագլխավոր խնդիրը... այն է՝ պետք է ամեն ճիգ թափել, անդուլ աքնել կազմել մեծ ժողով. կաթողիկոսի գահը նստեցնել այնպիսին, որին հաջողվի գեթ էջմիածնից հայերի կենտրոնը տարածելու իրավունքը, հայերի պետը լինել, որ այսպիսով մի հզոր կապ կազմենք, որ և կապի տեղը լինի աթոռատեղին, որ միջոց ունենանք, որ անհաղթ ռուսի շնորհիվ ձեռք բերենք ցանկալին, որ ամպի պես մի օր թնդանք Թուրքիայում մեր թշնամիների գլխին կյանքի, գույքի մեր ցանկալին ձեռք բերելու։ Թե չէ քանի որ էջմիածինը անունով է կաթ., քանի էջմիածնի արդի աթոռատեղին դրած է ողջ ազգին չիշխող պայմանում, հայը որ անլուր կապանքում, ստրուկի վիճակի մեջ են Թուրքիայում, թե հետատես չլինենն բնավ չէ կարելի մի քայլ առաջ դնալ։ Եթե էջմիածնի աթոռը չդորացնենք, եթե այդ դժվար լինի, պետք է ուղչակի աշխատել մեջտեղից բառնալ Սսի, Ախթամարի կաթողիկոսությունները և այսպիսով նախամեծար էջմիածինը միմիայն ամենայն հայոց կաթ. հրապարակել» [1]։

Թուրքիայի սիրաշահության տակ գտնված Արևմտյան Հայաստանում բնակչությանը համախմբելու, երկրի տարբեր շրջաններն իրար հետ կապելու գործում իրոք որ զգալի դեր կարող էր խաղալ էջմիածնի ամենայն հայոց կաթողիկոսությունը, եթե վերջինիս հոգևոր իշխանությունը տարածվեր Սսի և Ախթամարի կաթողիկոսությունների վրա։ Ընդ որում, այդ խնդրի իրականացման ճանապարհին Սսի ու Ախթամարի կաթողիկոսությունների դիմադրության դեպքում, հոդվածագիրն առաջարկում է ամեն կերպ ձգտել դրանք վերացնել իրրև էջմիածնի հակակշիռ ուժերի։

Նշվածներով չէին վերջանում ազատագրական պայքարի մասին «Պատկի» արած պրոպագանդան։ Նրա էջերում ամենատարբեր ձևերով գովերգվել է ազատագրական պայքարի գաղափարը։

«Պատկի» և նրա հրատարակիչ-խմբագրի ազատասիրական գաղափարները անկատ չմնացին ցարական դրաքննությունից և ատիկանությունից։ Թեպետ թերթը արևմտահայերի ազատագրման հարցը կապում էր «անհաղթ ռուսի» օգնության հետ և ընդհանուր առմամբ առերես անտարբեր էր ցարական կառավարության և նրա ատիճանավորների ռուսականացման քաղաքականության նկատմամբ, սակայն միագամայն ակնհայտ էր, որ մի օր էլ նույն թերթը նույնպիսի համարձակությամբ կարող էր հանդես գալ հենց նույն ցարական կառավարության հայահալած քաղաքականության դեմ։ Ուստի կարգադրվեց ժամանակավորապես դադարեցնել թերթի հրատարակումը, իսկ հետագայում նրա լույս տեսնվող համարները ենթարկվում էին ավելի խիստ դրաքննության։ Ցարական օրգանները բավական զգուշավոր էին և լավ էին

1 «Պատկ», 1883, № 7։

2 Բերում ենք նկատված վրիպակների ուղղումով։

1 «Պատկ», 1883, № 9։

կառոում Թերթին ուղղություն տվող Վասակ Պապաջանյանի ապատազրական հայացքներն ընդհանրապես։ Չէ՞ որ վերջինս ակտիվ մասնակիցներից մեկն էր 80-ական թվականների սկզբներին երևանում գործող ցարական քննչական օրգանների կողմից «Հայասեր» և «Ազգասեր» անվանված խմբակի, որը պայքարում էր հայոց լեզվի, հայ մշակույթի, դպրոցի պահպանման և ցարական կառավարության ռուսականացման քաղաքականության դեմ։

«Հայասեր» և «Ազգասեր» խմբակի գործունեության մասին համեմատաբար քիչ տեղեկություններ են հասել։ Դրա մասին մենք պաղպաիար ենք կազմում ցարական պետական օրգանների ու պահնորդական բաժնի կատարած երկարատև հետաքննության, ժամանակի պարբերական մամուլում հրապարակված տեղեկություններ և խմբակի մասնակիցներից մեկի՝ բժիշկ Լևոն Տիգրանյանի ընդարձակ հիշատակարանի միջոցով։ Պահնորդական բաժնի հետաքննության ընթացքը մի առանձին գործով պահպանվել է ՀՍՍՌ ՊԿՊԱ-ում, իսկ Տիգրանյանի հիշատակարանը (ձեռագիր) գտնվում է ՀՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում [1]։ Հեղինակն իր հիշատակարանին է կցել «Հայասեր» և «Ազգասեր» խմբակի գործունեությանը վերաբերող մամուլում հրապարակված բոլոր նյութերը, որոնք գրված են հետաքննության հետ միասին։ Լ. Տիգրանյանի հիշատակարանը շատ տեղերում լիովին հակասում է նշված արձանագրություններին և սրա հիման վրա մամուլում հրապարակված նյութերին։ Հիշատակարանից պարզ երևում է, որ ցարական պահնորդական բաժինը և քննչական օրգանները քաղաքի հայասեր երիտասարդությանը պետական հանցագործության մեջ մեղադրելու համար կանգ չէին առել հասարակության տականքներից կեղծ վկայություններ հավաքելու, ինարիգներ լարելու, երիվույթները ծուռ հայելու մեջ ներկայացնելու և անձնական վիրավորանքները պետության դեմ ըմբոստացումներ ձևակերպելու զազրելի մեթոդների առջև։ Տիգրանյանն իր հիշատակարանում ուղղակի գրում է, որ իրենց մեղադրելու ամբողջ գործը հնարել են «անզգամ չինովնիկները» և որ ինքը «այդ մեղադրանքների պատճառը» լոկ իր «մոտ պահելն է «որպես հիշատակ», «որպեսզի տեսնեն, թե ինչ անզգամություններ կարող են անել չինովնիկները մարդկանց հետ» [2]։ Որ ցարական օրգանները իրականությունը

1 Մինչև Մ. Մաշտոցի անվան մատենադարան տեղափոխելը այդ հիշատակարանը գտնվում էր ՀՍՍՌ ԴԱ բժշկագիտության պատմության սեկտորում։

2 «Իմ յիշատակարանը բժ. Լևոն Տիգրանեանց» (Մաշտոցի անվան մատենադարան), թ. 120։

խտացնելով մտացածին շատ մեղադրանքներ են բարդել Երևանի հայ առաջադիմական մտավորականության վրա, որպեսզի խափանեն նրանց հետագա ազդօգուտ գործունեությունը, դա հավիլ թե որևէ մեկի կողմից ենթարկվի առարկության, բայց որ Լ. Տիգրանյանն էլ իր հիշատակարանը գրելու ժամանակ (1898 թ.) լինելով արդեն պետական պաշտոնյա՝ քաղաքագլուխ, մեր կարծիքով չէր կարող խոստովանել, թե ինքը ժամանակին ունեցել է հակակառավարական գործունեություն այդ էլ անժխտելի է, մանավանդ, որ, ինչպես ինքն է ասում, եթե մի ժամանակ եղել է «խիստ օպտիմիստ», ապա հիշատակարանը գրելու ժամանակ դարձել էր «բավարար պեսիմիստ» [1]։ Այնպես որ չնայած վիոքրաթիվ են աղբյուրները, սակայն զգալի են դրանց մեջ եղած հակասությունները և խնդությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է եղած նյութերը լուսաբանել բանասերի զգուշավորությամբ ու խնամքով։

Իրականում ի՞նչ էր ներկայացնում «Հայասեր» և «Ազգասեր» կոչված խմբակը, ովքե՞ր էին նրա անդամները, ի՞նչ նպատակներ ունեին նրանք, ցարական քննչական և վարչական օրգանները ինչպիսի՞ պատիժներ սահմանեցին նրանց համար։ Հարմարության տեսակետից այդ հարցերը շարադրենք քննչական օրգանների հետաքննության արձանագրություններից կատարված համառոտագրության և Լ. Տիգրանյանի հիշատակարանի (որի մի մասն են կազմում նաև մամուլում հրապարակված նյութերը) ընթացքին համապատասխան։

Ցարական քննչական օրգանները և պահնորդական բաժինը Երևանի՝ թվով մոտ 40 հայ մտավորականների դեմ գործ են սկսում 1883 թ. մարտի 19-ից, նրանց մեղադրելով «Հայասեր» և «Ազգասեր» կոչված խմբակ կազմելու և հակառուսական-հակապետական գործունեություն ծավալելու մեջ։ Հետաքննության ասիք է ծառայում այն, որ Երևան քաղաքի բնակիչ Թովմաս Մհերյանը նույն այդ օրը քաղաքային ղբոսայգում հրապարակորեն ապտակել էր գիմնազիայի դիրեկտոր Բրաժնիկովին, որը հրաժարվել էր գիմնազիայից դուրս մնացած նրա եղբոր՝ Բագրատ Մհերյանի վկայականները տալուց և այդ մասին ղբոսայգում նրա վերջին հարցումին պատասխանել էր նրան «արմյաշկա» անվանելով [2]։

1 «Իմ յիշատակարանը բժ. Լևոն Տիգրանեանց» (Մաշտոցի անվան մատենադարան), թ. 159։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20, Լ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 116։

Նահանգապետ Շալիկովը և գիմնազիայի ապտակված դիրեկտոր Բրաժնիկովը հայատյաց տարրեր էին և քաղաքի տարբեր ազգությունների բնակիչների միջև սերմանում էին ատելություն ու թշնամանք[1]։ Այդ պատճառով էլ քաղաքի բնակչությունը, հատկապես հայերը, մեծ ատելությամբ էին լցված ցարական ռուսաֆանացման քաղաքականության այդ երկու կամակատարների նկատմամբ, կամակատարներ, որոնցից մեկը գործում էր ուսման բնագավառում, քաղաքի մեկ գիմնազիայում, իսկ մյուսը Նահանգի մասշտաբով։ Պատահական չէ, որ նախքան այդ դեպքը երկու անգամ «անհայտ մարդիկ» ջարդել էին Բրաժնիկովի բնակարանի ապակիները և անանուն նամակով Կովկասյան ուսումնական օկրուգից պահանջել էին նրան հեռացնել գիմնազիայի դիրեկտորի պաշտոնից[2]։ Ցարական օրգաններին պատրվակ էր պետք իր լեզուն, կուլտուրան, ազգային սովորություններն ու սովորույթները սիրող, իր արևմտյան արյունակիցների ազատագրության համար մտահոգվող արևելահայ մտավորականության հետ հաշվեհարդար տեսնելու։ Ահա և ներկայացավ առիթը։ Հայ երիտասարդ Մհերյանը հրապարակորեն անպատվել է ցարական ատենաձանավոր Բրաժնիկովին, որն իր անբարշտության պատճառով մինչ այդ երկու անգամ էլ ծեծ էր կերել ռուսների կողմից՝ ռուսական քաղաքներում[3]։

Ապտակ ստանալուց հետո Բրաժնիկովը իսկույն դիմում է Երևանի օկրուգային դատախազ գերմանացի Ֆրեյգանգին և, դեպին քաղաքական քող տալով՝ խնդրում է պատժել ոչ միայն Մհերյանին (որին ձևացնում է, թե ինքը մինչև ապտակ ուտելը չի ճանաչել), այլև հայկական խմբակի այն անդամներին, որոնք ռուս ատենաձանավորներին հալածում են «իբրև» հայ «կրոնի, լեզվի և ազգության» թշնամիների[4]։ Մինչ այդ, արդեն Մհերյանին կալանավորել էին և նրա գործի հետ կապված հետաքննությունը հանձնարարել տեղական դատական քննիչ Բալիմասովին։

Մյուս օրը՝ մարտի 20-ին Մհերյանին նախնական կալանքից ազատելու համար գրավագին է սահմանվում 5000 ռ.[5], հավատացած լինելով, որ նա միջոցներ չունի և ի վիճակի չէ նման խոշոր գումար տալ։ Սովորաբար նման դեպքերում անգամ ամենածանր հանցագործին ու մարդասպանին նախնական կալանքից ազատում էին 500—1000 ռ. գրավականով[1]։ Ցարական ռեակցիոն աստիճանավորության դեմ ատելությամբ լցված երիտասարդությունը գրավագինը նշանակելուց միայն մեկ ժամ անց հավաքում ու քննիչին է ներկայացնում գումարը, պահանջելով ազատ արձակել Մհերյանին։ Քննիչը հրաժարվում է անմիջապես ընդունել գումարը և արձակել կալանավորին, պատճառաբանելով, թե օրը ուշ է և ինքը հնարավորություն չունի ստացած գումարը դանձարանին հանձնելու։ Այն ժամանակ, ինչպես արձանագրված է հետաքննության համառոտագրության մեջ, հայ երիտասարդությունը ցույց է կազմակերպում քննիչի տան առաջ և պահանջում անհապաղ վերցնել գրավագինն ու ազատել Մհերյանին։ Նրանցից մեկը Մհերյանի անունից նույնիսկ բարձր իշխանություններին բողոքի հեռագիր է ուղարկում՝ քննիչին մեղադրելով անօրինական գործողությունների մեջ[2]։ Մարտի 21-ին գրավագինը ընդունում են և Մհերյանին ազատ արձակում, սակայն մի երկու օր անց նրան նորից են բանտարկում և շարունակում գործի հետագա քննությունը։

Գործի քննության ընթացքում արձանագրելով Երևանի հայ հասարակությունից կարճ ժամանակամիջոցում Մհերյանին բանտից ազատելու համար 5000 ռ. փրկագնի հավաքումը, հայ երիտասարդության ցույցը քննիչի տան առաջ, Մհերյանի անունից հեռագրի ուղարկումը բարձր իշխանություններին, քաղաքային բժիշկ և հայկական Կովկասյան բարեգործական ընկերության երեվանի բաժանմունքի նախագահ Լ. Տիգրանյանի կողմից իր պաշտոնական գործերով բանտում կարգադրություններ անելիս իբր Մհերյանին շնորհավորելը, իբր նույն ընկերության այլ անդամների բանտ այցելելը և Մհերյանին փրկագնի հավաքման մասին հաղորդելն ու հանգստացնելը, բանտից ազատելու պահին նրան օվացիայով դիմավորելը, «հայ ազգի» անունից Կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուին դիմում ուղարկելը (որով խնդրվում էր Բրաժնիկովին գիմնազիայի դիրեկտորությունից հանել), Երևանի օկրուգային դատարանի դատախազ Ֆրեյգանգը գալիս է այն եզրակացության, որ Բրաժնիկովին անպատվելը պատահական ու մասնավոր բնդհարում չէր, այլ կատարվել է հայկական խմբակի մասնակցությամբ և ունի քաղաքական բնույթ[3]։ Այնուհետև մեղա-

1 Լ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 116։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
3 Լ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 116։
4 Նույն տեղը։
5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։

1 Լ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 117։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
3 Նույն տեղը։

պրական եղրակացության մեջ հիշվում են «Պատկ» թերթի վերը նշված հոդվածները, որոնք բնութագրվում են իբրև գրգռիչ հոդվածներ, և մարտի սկզբներին հայերեն լեզվով քաղաքում նկատված [1] թուղթիկը [2]։

Պահնորդական վարչության պետի հետաքննության ուղարկված այդ գործի հետ առնչվող անձնավորությունների հարցաքննությունն սկսվում է Բրաժնիկովով, որը իր տված ցուցմունքներում հակառուսական տարր է համարում դիմնազիայի հայոց լեզվի նախկին ուսուցիչ Բեկնազարյանին, նրան մեղադրելով դասերի ժամանակ աշակերտների միջավայրում հայրենասիրական մտքեր սերմանելու մեջ [3]։

Հետագա հարցաքննությունների ժամանակ ժանդարմական վարչության պետը, իր համար ցանկալի վկաների տված ցուցմունքների հիման վրա գալիս է այն եզրակացության, որ Բրաժնիկովի անպատվումը եղել է Երևանում «Հայասեր» և «Աղդասեր» անունով հայանի խմբակի անդամների գործը, մի խմբակ, որը, ըստ նրա դատողությունների, «ձգտում էր երիտասարդության դաստիարակության և հասարակության վրա ազդելով, պատրաստել միավորման և հետագայում անկախ Հայաստանի վերականգնմանը նպաստող ընդունակ գործիչներ», իսկ քանի որ «հանձինս Բրաժնիկովի» տեսել են «այդ պրոպագանդայի» հակառակորդին, ուստի աշխատել են անպատվելու և ահաբեկելու միջոցով առաջին հերթին հրապարակից հեռացնել նրան [4]։ Այնուհետև նշվում է, որ հարցաքննության ժամանակ ցուցմունքներ են տրված Երևանում թուրքահայերի համար զենք գնելու և հայրենասիրական այլ նպատակներով մի քանի անգամ գաղտնի կերպով դրամ հավաքելու մասին։ Ընդ որում, ըստ նույն ցուցմունքների, «Հայասեր» և «Աղգասեր» խմբակի գլխավոր գործիչներն էին՝ օկրուգային դատարանի քարտուղարի օգնական Հ. Տեր-Զաքարյանը, մասնավոր հավատարմատար Ռ. Ջալալյանը, քաղաքային բժիշկ Լ. Տիգրանյանը, Երևանի հայկական օրիորդաց դպրոցների տեսուչ օր. Գ. Հովհաննիսյանը, մասնավոր հավատարմատար Վ. Եղիազարյանը, նոտար Տ. Վարդանյանը, օկրուգային դատարանի քարտուղար Հ. Մատակյանը, «Պատկ» թերթի հրատարակիչ-խմբագիր Վ. Պապաջան-

1 Այդ թուղթիկի մասին տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 14, գ. 552, թ. 1—2։
2 Նույն տեղը, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, Լ. Տիգրանյան, Հիշատակարան, Ե. 118։

յանը, Գայանյան օրիորդաց ուսումնարանի ուսուցիչ Ա. Մելյանը, հայկական թեմական հոգևոր դպրոցի տեսուչ Ս. Բեկնազարյանը, Գայանյան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձու Թ. Մհերյանը, Գրիգոր Սուքիասյանը և ուրիշներ։

Հրահանգի հիման վրա խուզարկության են ենթարկվում Հ. Տեր-Զաքարյանի, Լ. Տիգրանյանի, Ռ. Ջալալյանի, Գ. Սուքիասյանի և այլոց տները։ Ընդամենը մեղադրվում են 39—40 անձնավորություններ [1], որոնք բոլորն էլ, սկսած Մհերյանից, ենթարկվում են հարցաքննության։ Մեղադրվածների թվում էր նաև դիմնազիայի ուսուցիչ Ստ. Զելինսկին, որը, չնայած ռուսական ազգանվանը, ազգությամբ հայ էր, լավատեղյակ էր հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրային [2], հայոց լեզվին և կրքոտ հայրենասեր էր։

Ըստ պահնորդական բաժնի խուզարկության ու հետաքննության տվյալների, Մհերյանը Բրաժնիկովին ապտակելու ժամանակ գրպանում ունեցել է լիցքավորված ատրճանակ։ Հետաքննության ժամանակ արձանագրվել է, որ Մհերյանը իբր բանտից աղատ արձակելու համար նամակ է գրել «Մշակ»-ի խմբագիր Գր. Արծրունուն և խնդրել նրա միջնորդությունն այդ հարցում, որ Երևանում երկու «գրգռիչ» նամակ է ստացվել՝ մեկը Մոսկվայից՝ ուսանող Տեր-Գրիգորյանից, իսկ մյուսը, «Կայծակ» անունով բաց նամակը, Թիֆլիսից [3]։ Երևանի խմբակը կապ ուներ նաև 1881 թվականին կազմակերպված էրզրումի «Պաշտպան Հայրենյաց» (կամ «Երկրագործական բնկերություն») [4] գաղտնի կազմակերպության հետ։

Խմբակի մյուս անդամների խուզարկությունը սկսվում է ապրիլի 20-ին։ Հ. Տեր-Զաքարյանի բնակարանից, ըստ պահնորդական բաժնի արձանագրության, հայտնաբերվում են հայերեն լեզվով գրված մի թուղթիկ, որի մեջ իբր հայ երիտասարդությանը կոչ էր արված կռվելու հանուն Հայաստանի անկախության, գրքի տպագրության սիրողների ընկերության ցուցակը, ընկերություն, որը նույն փաստաթղթի համաձայն, գոյություն է ունեցել 1881 թ. մինչև 1882 թ. կեսերը և ապա միացել է հատուկ կանոնադրու-

1 Նույն տեղերում։ Պահնորդական բաժնի հետաքննության մեջ մի այլ տեղում ասվում է, որ խմբակն ունեցել է 28 անդամ և դրանք բոլորն էլ մեղադրվել են։
2 Ոմանք Զելինսկուն համարում են ռուս։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
4 Այդ կազմակերպության մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., էջ 182—199։

թյուն ունեցող՝ Կովկասի հայկական բարեգործական ընկերության հետ, և ընկերության անդամներից մեկի՝ Արամ Մելյանի մի գրությունը՝ հասարակության ընթերցանության համար հրատարակվելիք գրքերի բնույթի ու բովանդակության մասին։ Վերջինիս մեջ, ըստ հետաքննության ավյալների, Մելյանը գրում է, որ իրենց տպագրած գրքերով իրենք պետք է հասարակության «աչքերը բացեն» և նրան գրգռեն գործողությունների, իսկ այնուհետև հասարակությունն ինքը «կրմբռնի թե ինչ է եղել մինչ այդ ժամանակ» [1], Տեր-Ջաբարյանի խուզարկության ժամանակ նրա մոտ գտել են նաև Կովկասի հայկական բարեգործական ընկերության Երևանի բաժանմունքի փաստաթղթերը, որոնց մեջ էին նաև ընկերության դրամական ցանկալան հաշիվներ։ Պահնորդական բաժինը դրանց ծանոթանալով՝ գալիս է այն եզրակացության, որ «բարեգործական ընդհանրությունը» միայն արտաքին քող է, ըստ էության նախկին գաղտնի ընկերությունը (գրքի տպագրության սիրողների ընկերության մասին է խոսքը) ուժի մեջ է մնացել այդ նոր անունով և նրա հավաքած միջոցներն էլ ծախսվել են ոչ թե բարեգործական նպատակներով, այլ երիտասարդությանը որոշակի ուղղությամբ դաստիարակելու համար [2]։

Գայանյան օրիորդաց դպրոցի փաստաբան Ի. Ջալալյանին, բժ. Լ. Տիգրանյանին և Երևանի հայկական օրիորդաց դպրոցների տեսուչ օր. Գ. Հովհաննիսյանին խուզարկում են ապրիլի 24-ին։ Այդ խուզարկության ընթացքը արձանագրելիս նշվում է, որ Ջալալյանի մոտ հայտնաբերված են հայ-քրդական դաշինքի անհրաժեշտության համար մի փաստաթուղթ, Մելիք Հակոբյանի (Բաֆֆի) մի նամակը, որը վերաբերում է Կոստանդնուպոլսի «Արարատյան» ընկերության հանձնարարությամբ արևմտահայերի ազատագրության հարցով Անդրկովկաս եկած թուրքահպատակ Շահնազարյանին, և մի քանի այլ նամակներ՝ գրված Կոստանդնուպոլսի նույն ընկերության կողմից, որն իր գործակալներն ուներ Թիֆլիսում և Երևանում։ Այդ ընկերության Երևանի ու Թիֆլիսի հատուկ հանձնաժողովները դրամական նվիրատվություններ էին հավաքում արևմտահայերին օգնելու համար և գործակալների հետ միասին մասնակցում արևելահայերի ու արևմտահայերի մերձեցմանը՝

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
2 Նույն տեղը։

կիսավորապես ուսման բնագավառում։ Այնուհետև, արձանագրվում է, որ Ջալալյանի մոտ հայտնաբերված են հրաձգային զենքի առ ու վաճառքի մասին թղթակցություններ և մի փաստաթուղթ Վանի ռուսական հյուպատոսի տեղակալ Կամսարականի հետ ունեցած նրա կապի վերաբերյալ։ Բժիշկ Լ. Տիգրանյանի մոտ հայտնաբերված թղթերն ըստ երևույթին ավելի աննշան էին, սակայն, այնուամենայնիվ, արձանագրվել է, որ նրա մոտ հայտնաբերված նամակներից երևում է, որ նա կապ է ունեցել Կոստանդնուպոլսի, Վանի ու Խառակոնիսի հայրենասերների հետ և գործի հաջողության համար անհրաժեշտ է համարել Կիլիկիայի ու Ռուսական Հայաստանի միաժամանակյա ապստամբությունը [1]։ Պակաս ծանր չէր նաև օր. Գ. Հովհաննիսյանի դեմ հարուցված մեղադրանքը։ Խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերված երկու նամակները, որոնք ստացվել էին Ժնևից՝ օր. Ե. Դրենտելնից, դիտվում են իբրև վճռանպավոր փաստաթղթեր, քանի որ դրանք սուր վերաբերում էին մանուկների դաստիարակության մեթոդներին։ Բացի դրանից, արձանագրվում է, որ օրիորդը իր ուսումնական գործունեության ընթացքում հանդես է եկել իբրև ազգայնական-հայրենասեր, հայկական դպրոցներում պարտադիր առարկա դարձնելով Հայաստանի վաղեմի փառքը, ներկա խղճուկ վիճակը և հայրենիքի ազատագրության համար պայքարի անհրաժեշտությունն արտահայտող հայրենասիրական երգերի ուսուցումը [2]։

Հարցաքննության և խուզարկության ընթացքում ձեռք բերած ավյալների հիման վրա Երևանի պահնորդական բաժինը անհրաժեշտ է համարում Թիֆլիսում խուզարկություն ենթարկել «Մշակի» խմբագրությունը և նրա թղթակից Մելիք Հակոբյանին՝ Բաֆֆուն։ Թիֆլիսի պահնորդական բաժնի կողմից այդ խուզարկությունը կատարվում է ապրիլի վերջերին և մայիսի սկզբներին։ Թերթի խմբագրությունում պահնորդական բաժնին հետաքրքրող ոչինչ չի հայտնաբերվում, իսկ վիպասանի թղթակցությունները, նամակներն ու մի շարք աշխատություններ համարվում են գրգռիչ, ոմանցից ոմանք նույնիսկ հակապետական [3]։

Կասկածից դուրս է, որ և՛ հետաքննության, և՛ խուզարկության ժամանակ քննչական օրգաններն ու պահնորդական բաժինը դիմել են ամենանենգ միջոցների։ Ժամանակակից մամուլում և բժ.

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։

Հ. Տիգրանյանի հիշատակարանում նշվում է, որ նահանգապետը, դատախազը, քննիչը և պահնորդական բաժինը վկաների դերում օգտագործել են հասարակության տականքներին՝ խաբեբաներին ու բրևնական տարրերին, մեղադրվողների անձնական թշնամիներին, պատրաստել են կեղծ փաստաթղթեր, չափազանցրել են եղած նամակների ու այլ փաստաթղթերի վտանգավորությունը, արձանագրել են մտացածին կապեր և այլն, և այլն [1]։ Հ. Տիգրանյանն իր հիշատակարանում առանձնապես նշում է, որ իրենց գործունեության մեջ հակապետական ոչինչ չի եղել, որ այդ իրենք՝ հետաքննողներն էլ գիտեին, բայց քանի որ գործը «սկսել են, պետք է հնարեին, որ չհայտառակվեին կառավարության առաջ...» [2]։ Նա դրում է, որ խուզարկության ժամանակ իր մոտից տարած բազմաթիվ թղթերի մեջ հակապետական ոչինչ չկար, բայց, այնուամենայնիվ, պահնորդական բաժինը նրան մեղադրել է Հայաստանի անկախությունն ապագայում վերականգնելու ձգտումների, մարմնամարզության դասերի միջոցով հայ պատանիներից ապագա զինվորներ պատրաստելու մտադրության, իր անձնական գրադարանի միջոցով աշակերտների մոտ հակապետական տրամադրություններ պատվաստելու, հակապետական ընկերություններին մասնակցելու և մի քանի այլ հանցանքների մեջ [3]։

Այդ հարցում ցարական օրգանների նենգամտությունն ու խարդախությունները ակնհայտ կերպով երևում են նաև գործի արձանագրության ազատակող հակասություններից։ Այսպես, օրինակ՝ մի դեպքում խմբակի անդամների վրա արձանագրվում է, որ նրանք մտադիր էին ամենայն հայոց կաթողիկոսությունը էջմիածնից տեղափոխել Ախթամար, իսկ մյուս դեպքում հակակառավարական է համարվում «Պսակ» թերթի 1883 թ. № 9-ում տպագրված հոդվածը, որը, ընդհակառակը, կոչ է անում էջմիածինը դարձնել միակ հոգևոր գերագույն աթոռանիստը, նույնիսկ Սսի և Ախթամարի կաթողիկոսությունների վերացման գնով [4]։

Իսկ խմբակի անդամների վրա բարդված շատ մեղադրանքներ ընդհանրապես չեն հիմնավորվում որևէ կոնկրետ փաստով կամ վկայությամբ։ Մեղադրական ակտի արտառավորությունը զգում էին և իրենք՝ կազմողները։ Այդ պատճառով էլ, ինչպես կտեսնենք, հետաքննության ավարտումից հետո գործը դատական օրգաններին տալու փոխարեն հարց է հարուցվում մեղադրյալներին պատժել վարչական կարգով։

Սակայն փաստը մնում է փաստ, որ ցարական պաշտոնական փաստաթղթերի մեջ «Հայասեր» և «Ազգասեր» կոչված Երևանի խմբակի անդամները, լինելով ժամանակի մտավորականության առաջադեմ ներկայացուցիչները՝ իրենց գործունեությամբ պրոպագանդել են հայրենասիրություն, ազգային ինքնագիտակցություն, պայքարել են հայոց լեզվի ու հայկական կուլտուրայի պահպանման ու զարգացման համար, զբաղվել են հայ երիտասարդության կրթության, ֆիզիկական դաստիարակության հարցերով, նյութական ու բարոյական օգնություն են կազմակերպել իրենց արևմտյան եղբայրների՝ սուլթանական բռնապետությունից ազատագրվելու գործի համար, պայքարել են ցարական կառավարության և նրա տեղական աստիճանավորների դաղութային ու ռուսականացման քաղաքականության դեմ։

Ցարական պահնորդական վարչությունը լավ էր հասկանում, որ Երևանի մտավորականության այդ գործունեությունը ուղղակի թե անուղղակի կերպով կապված է այն ընդհանուր ազգային-ազատագրական շարժման զարթոնքի հետ, որը տեղի էր ունենում ռուսական քաղաքների հայ երիտասարդության մեջ, Անդրկովկասի հայաբնակ մասերում և Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի հայաբնակ մյուս շրջաններում։ Այդ շարժումը սկսվել էր հատկապես Բեռլինի դաշնագրից հետո և արտահայտվում էր ինչպես գրականության ու քաղաքական կյանքի մեջ, այնպես էլ դպրոցում, բարեգործական ընկերությունների գործունեության մեջ, դաստիարակության բնագավառում և այլն։

Գործի հետաքննությունն ավարտվելուց հետո բոլոր փաստաթղթերը եղրակացության հետ միասին (որով նպատակահարմար էր համարվում մեղադրվածներին վարչական կարգով քաղաքից աքսորել) ուղարկվում են բարձրագույն իշխանություններին։ Լուրերի համաձայն, Պետերբուրգում սկզբնական շրջանում մեծ կարևորություն չեն տալիս այդ գործին և երկար ժամանակ այն թողնում են անհետևանք [1]։

Կարելի է կարծել, որ Երևանի հայրենասերների նկատմամբ սկսած այդ գործը ուղղակի կապված էր ցարական կառավարության կողմից հայկական դպրոցները փակելու մասին նախապատրաստ-

1 Հ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 116—119։

2 Նույն տեղը, թ. 119։

3 Նույն տեղը։

4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20, 21 և «Պսակ», 1883, № 9։

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 51/115, ցուցակ 2, գ. 44, թ. 1—20։

վոգ հրամանի հետ։ Կառավարությունն այնքան միամիտ չէր, որ չհասկանար, թե քաղաքում ինչպիսի շարժում կառաջանար, եթե դպրոցների փակման մասին հրամանագիրը հրապարակվելու ժամանակ քաղաքում լինեն և ազատ գործեն մի քանի տասնյակի հասնող այդ մտավորականները։ Եվ իրոք, արդեն մասամբ մոռացության տրված գործը նորից լույս աշխարհ է գալիս 1885 թ. սկզբնեբին։ Այդ թվականի հունվարի 15-ին, դպրոցների փակման մասին կարգագրությունից առաջ, Երևանում արդեն ստացվում է ցարի հրամանը՝ մեղադրվածներին քաղաքից երկու-երեք տարով տարբեր տեղեր արտաքսելու մասին [1], նրանց իրավունք վերապահելով ընտրելու իրենց աքսորավայրը։ Բժ. Լ. Տիգրանյանը երեք տարով արտաքսվում է Դորպատ, Ռ. Զալալյանը, Հ. Մատակյանը (Գայանե Հովաննիսյանի ամուսինը), Հ. Տեր-Զաքարյանը և Գ. Հովհաննիսյանը (վերջինս երկու տարով) աքսորվում են իրենց ընտրած Օդեսա քաղաքը [2], իսկ Թ. Մհերյանը, երեք ամիս Երևանում բանտարկվելուց հետո, էտապով (ոտով) աքսորվում է Կազան [3]։

Լ. Տիգրանյանը իր հիշատակարանում գրում է, որ քաղաքացիներից շատերը, որոնց թվում և նույնիսկ ցարական աստիճանավորներ, քննիչներ, անբավական էին գտահարպի նենգամիտ գործողություններից, նրանք համակրանք էին տածում դեպի աքսորվողները։ Քաղաքացիներից շատերը պատրաստակամություն էին հայտնում մեծ խմբով հանդիսավոր պայմաններում ճանապարհել արտաքսվողներին։ Բայց ավելորդ անախորժություններից խուսափելու համար նրանք իրենց խորհրդով կանխում են բնակչության այդ ցանկությունը [4]։ «Հայասեր» ու «Ազգասեր» խմբակի անդամներին արտաքսելուց հետո շուտով բարձրագույն հրաման է ստացվում հայկական դպրոցների փակման մասին, որը ամբողջ Անդրկովկասում տեղիք է տալիս մեծ անհանգստությունների, բողոքների ու ըմբոստացումների։ Հակացարական տրամադրությունների դրոշակակիրը Թիֆլիսում 1882—1883 թթ. մի խումբ հայ մտավորականների կազմակերպած նարոդնիկական խումբն էր, որի՝ հայ ժողովրդին ուղղված 1885 թ. փետրվարի 22-ին վերաբերող հակացարական թռուցիկը [5]

1 Լ. Տիգրանյան, Հիշատակարան, թ. 120—121։

2 Նույն տեղը, թ. 125։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, թ. 125—126։

5 Այդ թռուցիկը պահպանված է ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 114-ի (ցուցակ 2) 53-րդ գործում։ Դրա ամբողջական տեքստը հրապարակված է Մ. Գ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում» աշխատության մեջ։

մեծ արձագանք է գտնում նաև Երևանում։ Թռուցիկը տպագրված էր Թիֆլիսի ազատ տպարանում և գրված էր հայրենասիրական մեծ շնչով, ռուսական բռնակալության նկատմամբ տածած մեծ ատելությամբ։ Թռուցիկը սկսվում էր հայ ժողովրդին ուղղված հետևյալ խոսքերով. «Այսօր ամենքիդ առաջ կատարվում է մի սարսափելի ավազակություն, մի հանդուգն բաշիբոզուկություն, մի խայտառակ բռնաբարություն՝ ռուսաց միապետությունը իբեն հատուկ բռնակալությամբ փակում է մեր դպրոցները։

Թեթևամիտ տղաները, դեպի ամեն սուրբ բան անտարբեր վերաբերվող հաստատուն բուրժուաները, մեր պճնասեր մտիկիններն ու օրիորդները, վերջապես ոգով ու մարմնով ապականված՝ իրեն ինտելիգենցիա անվանող դասը, իհարկե, թեթև, շատ թեթև աչքով է նայում այդ անօրեն կերպով կատարվող իրականության վրա։ Բայց արդյոք հե՞շտ է տանել այդ հարվածը, մի՞թե պետք է անտարբեր նայինք մենք՝ հայերս, այդ անխիղճ անարգարության վրա» [1]։ Այնուհետև Թռուցիկում ասվում է, որ Ալեքսանդր Երրորդը փակելով հայկական դպրոցները՝ փաստորեն դրանով մի ահագին «պետության թագավորը պատերազմ է» հայտարարում «մի փոքրիկ ազգության թագավորը պատերազմ է» հայտարարում «մի փոքրիկ ազգության թագավորը պատերազմ է» [2] և նշում, որ նրա այդ քաղաքականությունը անակնկալ ու զարմանալի չէ։ Ալեքսանդր Երրորդը առանց շեղվելու շարունակում է փոքր ազգերի նկատմամբ իր նախորդների ռուսականացման քաղաքականությունը։ «Ռուսաց բռնակալների քաղաքականությունը վարդուց հայտնի է ամենքիս,— ասված է նրանում,— զանազան արտոնություններ տալով՝ իրեն հպատակեցնել փոքրիկ ազգությունները նրանց հազար ու մի խոստումնքեր անելով, դաշնագրերներ կնքելով. իսկ հպատակեցնելուց հետո՝ աշխատել փոքր առ փոքր ոչնչացնել տված արտոնությունները, ծծել նրանց բոլոր կենսական ուժերը և ապա դեն շպրտել նրանց քամած լիմոնի պես» [3]։

Թռուցիկի հեղինակները լավ էին հասկանում, որ ռուս մեծ ժողովուրդն էլ է տնքում ցարական բռնակալության լծի տակ, որ նա էլ զոհ է բռնակալների ձեռքում, բայց հույս են հայտնում, որ այդ մեծ ժողովուրդն արդեն ուղիներ է փնտրում ազատագրվելու և նա կազատագրվի։ Աչքառու ուղղակի ասված է. «Ինչ կարող ենք անել մենք, կպատասխանեք դուք, քանի որ այսօր նույնիսկ հարյուր միլիոն ռուս ժողովուրդը տնքում է յուր բռնակալի լծի տակ։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 114, ցուցակ 2, գ. 59, թ. 3։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

Այո, հարյուր միլիոնից բաղկացած այդ ժողովուրդը նույնպիսի զոհեր են իրենց բռնակալների ձեռքում, որպիսին և մենք ենք, բայց մի մոռանաք, որ այդ ժողովուրդը այսօր թե վաղը կարող է ազատվել այդ լծից և իհարկե այդ ազատությունը ձեռք բերելու համար նա գործում է» [1]:

Թուրքիը նշելով հայկական դպրոցների ու հայոց լեզվի ոչընչացման համար ցարերի վարած քաղաքականությունը, նշված հրամանի կիրառումը երկու-երեք ամսով հետաձգելու մասին էջմիածնի հոգևոր խորհրդի արած խնդրանքը կարուկ մերժելը, ազգային դպրոցների շենքերում ցարական զինվորների երեալն ու կատարած բռնությունները՝ կոչ է անում ժողովրդին ըմբռնել հայերի նկատմամբ բռնակալների՝ սուլթանների և ցարերի վարած քաղաքականության կործանարար իմաստը և «վիզներն» «անամոթ դահճի կացնի տակ» դնելու փոխարեն բռնությունը դիմավորել բռունցքով, սիրել ու սովորել իր մայրենի լեզուն, «յուրաքանչյուր հայ ընտանիք» դարձնել հայկական մի փոքրիկ դպրոց [2]:

Հայկական դպրոցների փակման հրամանը հակացարական տրամադրությունների բազմաթիվ պատճառներից միայն մեկն էր, բայց ամենակարևորներից մեկը: Դպրոցների փակման հարցը փաստորեն հայոց լեզվի գոյության հարցն էր, հայ ազգի գոյության հարցը: Եվ զարմանալի չէ, որ 80-ական թվականների կեսերին Անդրկովկասի հայաբնակ բոլոր շրջանների ու բնակավայրերի հայության հակացարական տրամադրությունները ամբողջպես երանգավորված էին հայոց լեզվի ու հայ մշակույթի պահպանման համար մղվող պայքարով:

XIX դարի վերջերից ազգային-ազատագրական շարժումը Արևելյան Հայաստանում թևակոխում է նոր փուլ և ստանում ավելի մեծ բովանդակություն: Ռուսական հզոր պրոլետարիատը մարտական պայքարի դրոշ է բարձրացնում ցարական կարգերի տապալման և ընդհանրապես շահագործման վերացման համար: Ազգային ազատագրական շարժումն էլ այդ նոր պայմաններում սերտորեն կապվում է այդ ընդհանուր սոցիալական պայքարի հետ և դառնում նրա բաղկացուցիչ մասը: Ընդհանուր թշնամիների՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղվող պայքարը հնարավորություն է ընձեռնում այդ պայքարը գլխավորող կոմունիստական կուսակցությանը՝ միավորելու Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի ու աշխատավոր

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 114, ցուցակ 2, գ. 53, թ. 3:
2 Նույն տեղը:

գյուղացիության ուժերը, ինտերնացիոնալ հիմունքներով դրանց համախմբելու ռուսական առաջավոր պրոլետարիատի շուրջը և երկարատև ու համառ պայքարի գնով հասնել վերջնական հաղթանակի:

Այդ սրբազան գործի մեջ իրենց համեստ լուման են մտցրել նաև Երևան քաղաքի աշխատավոր բնակչությունը և բանվոր դասակարգը:

Գ) ՅԵՎԼՈՅԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուի գաղտնի նամակը Երևանի առական գիմնազիայի դիրեկտորին: Հուզումներ հայկական եկեղեցու կալվածքների պետականացման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հետևանքով: Հակակառավարական գրույկների հայտնաբերում Երևանի երկաթուղային կայարանում: ԴՍԴԲԿ Երևանի կազմակերպության հիմնումը, նրա գործունեության սկիզբը, նշանավոր անդամներն ու ղեկավարները: 1903—1907 թթ. հեղափոխության երևանյան առձագանքների յուրահատկությունները: Բնակչության հերկայացրած գրավոր բողոքը 1905 թ. մարտին: Սարաջյանի և Շուստովի գինու ու կոնյակի գործարանների բանվորների գործադուլները 1905 թ. ապրիլին: Հյուրանոցների, նաշարանների և բաղաքային ակումբի բանվորների ու ծառայողների գործադուլը 1905 թ. ապրիլին: Առական գիմնազիայի և թեմական դպրոցի աշակերտների ու ուսուցիչների մի մասի դասադուլը 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Հեղափոխական բովանդակությամբ թռուցիկների տարածումը զորի մեջ 1905 թ.: Փոստ-հեռագրատան աշխատողների գործադուլը հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո: Ռազմական դրություն Երևանի նահանգում: Քաղաքի բոլշևիկյան կազմակերպության գործունեությունը: Նրա կոչերը՝ ուղղված բանվորներին և մյուս աշխատավորներին (1906 թ. փետրվար): «Կայծ» թերթը հեղափոխական շարժման պրոպագանդիստ: Պրոֆմիութենական կազմակերպությունները: Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության տակտիկան բուրժուական պարտիաների և առաջին Պետական դումայի նկատմամբ: Ստ. Շահումյանի ժամանումը Երևան 1906 թ. մայիսին: Հեղափոխական շարժումները 1906 թվականին. առական և Հռիփսիմեի օրիորդաց գիմնազիաների աշակերտության դասադուլը, մայիսմեկյան տոնակատարությունը, «*Русское товарищество*» առևտրական ընկերության Երևանի գործակալության բանվորների գործադուլը 1906 թ.

մայիսին: Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի աշխատակիցների գործադուլը 1906 թ. օգոստոս—նոյեմբեր ամիսներին: Հյուսների և ատաղձագործների վարպետացուների ու աշակերտների գործադուլը 1906 թ. օգոստոսին: Փականագործների ու դարբինների վարպետացուների և Տեր-Ավետիքյանների մեխանիկական գործարանի բանվորների գործադուլը 1906 թ. սեպտեմբերին: Ա. Հակոբյանի տպարանի բանվորների գործադուլը 1906 թ. հուլիս—սեպտեմբեր ամիսներին: Սարաջյանի գինու և կոնյակի գործարանների բանվորների գործադուլը 1906 թ. նոյեմբերին: Կաշվի գործարանի բանվորների, գինեգործների և բաղնիքի աշխատողների գործադուլը: Սարաջյանի գինու և կոնյակի գործարանների բանվորների գործադուլը 1907 թ. հունվար-փետրվար ամիսներին: Հ. Եղիազարյանի բաղնիքի բանվորների գործադուլը 1907 թ. մարտի սկզբներին: Այգիների սևագործ բանվորների ցույցը և գործադուլը 1907 թ. մարտին: Ա. Հակոբյանի և Խ. Այվազյանի տպարանների և Տեր-Նիկողոսյանի ու Առաքելյանի կազմարարական արհեստանոցների բանվորների գործադուլը 1907 թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Քաղաքային ձիասարշի բանվորների ու ծառայողների գործադուլը 1907 թ. օգոստոսին: Հեղափոխական շարժումները ռեակցիայի տարիներին և 1910—1917 թթ.: Հ. Եղիազարյանի բաղնիքի բանվորների գործադուլը 1907 թ. վերջերին և 1908 թ. սկզբներին, շարժումներ արական գիմնազիայում 1908 թ. սկզբներին, հոգևոր թեմական դպրոցի աշակերտական հուզումներն ու շարժումները 1908 թ. վերջերին և 1909 թ. սկզբներին, հեղափոխական ու ազատագրական բնույթի գրականության տարածումը քաղաքում 1910—1912 թթ., քաղաքի բոլշևիկյան կազմակերպությունը 1907—1917 թթ., «Խոսք» լրագիրը: Ցարիզմի կազմակերպած հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները 1905—1906 թթ.:

Քաղաքի տնտեսական կյանքի մասին խոսելիս տեսանք, որ Երևանը արդյունաբերական մեծ կենտրոն չի եղել, նրա բանվոր պատակարդը մեծաթիվ չէր, նա մարդաշատ քաղաք չէր, համապատասխան առումով հասարակական կյանքի կենտրոն չէր: Սակայն իր մասշտաբի համեմատ Երևանը բանվորական ու հեղափոխական շարժումներով դգալի դեր է խաղացել երկրի քաղաքական կյանքում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ նա փաստորեն Արևելյան Հայաստանի մեծ մասի վարչական կենտրոնն էր և դրա ամենախոշոր քաղաքը: Այստեղ առանձնապես մեծ դժվարություններով էր կապված կուսակցական-քաղաքական աշխատանքը: Քաղաքի

նացիոնալիստորեն տրամադրված բուրժուական և մանրբուրժուական կուսակցական կազմակերպությունները, հեղափոխական շարժումից աշխատավորությանը ապակողմնորոշելու և շեղելու համար ցարական կառավարության կազմակերպած ազգամիջյան ընդհարումները, հանուն ցարիզմի և կապիտալիզմի տապալման մղվող պայքարի հետ միասին՝ արևմտյան արյունակիցների ազատագրական պայքարին արձագանքելը ու նրանց անհրաժեշտ օգնություն ցույց տալը մեծ բարդություններ էին ստեղծում քաղաքի բոլշևիկյան կազմակերպության համար՝ նրանից պահանջելով ուժերի մեծ լարում, ճշգրիտ կողմնորոշում, գործունեության ճկունություն:

Անհրաժեշտ է նշել, որ մեզ հետաքրքրող շրջանի Երևանի պատմության հարցերի մեջ միայն ուսոլյուցիոն շարժումների և բոլշևիկյան կազմակերպության գործունեության պատմությունն է համեմատաբար լավ ուսումնասիրված: Ճիշտ է, այդ բոլոր հարցերն ընդգրկող հատուկ մենագրություններ տակավին չեն հրապարակվել, սակայն Հայաստանի հեղափոխական շարժումներն ուսումնասիրել են Ս. Աղայանը, Վ. Պարսամյանը, Գ. Ղարիբջանյանը, Մ. Արզումանյանը, Ս. Կարապետյանը և ուրիշներ իրենց աշխատություններում հատուկ ուշադրություն են դարձրել Երևանի հեղափոխական շարժման և բոլշևիկյան կազմակերպության գործունեության վրա: Իսկ Գ. Ղարիբջանյանն ու Խ. Բարսեղյանը նշված հարցերի առթիվ մամուլում հանդես են եկել հատուկ հոդվածաշարերով:

Օգտվելով արդեն ստեղծված ժառանգությունից և ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ բերած նոր նյութերից, մենք պետք է փորձենք ներկայացնել նշված հարցերի՝ մեր աշխատության բնույթին ու ծավալին համապատասխան, ամբողջական շարադրանքը:

Երևանում հեղափոխական շարժման նախադրյալներ են ստեղծվում 90-ական թվականներին: Երկրի այլ մասերի նման Երևանում ևս հեղափոխական շարժման առաջին գաղափարակիրներից էին միջնակարգ դպրոցները՝ առաջին հերթին արական գիմնազիան: Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուն 1891 թ. փետրվարի 18-ին թվագրված իր գաղտնի նամակում Երևանի արական գիմնազիայի դիրեկտորին նախազգուշացնում է, որ ներքին գործերի մինիստրության տվյալներով ուսումնական հաստատություններում տարածված են պետության համար վնասակար գաղափարներ, որ ժողովրդական լուսավորության մինիստրը անհրաժեշտ է համարել իրեն նախազգուշացնել «հոգ տանելու», որպեսզի «ուսումնական հաստատություններում» տեղ չգտնի նման «անհանգուրժելի չարի-

րը» [1]։ *«Հեռատես» հոգաբարձուն արական գիմնազիայի դիրեկտորին հիշեցնում է, որ «հեղափոխական ընկերակցությունները սովորաբար ծնվում են այսպես կոչված ինքնուսուցման կամ ինքնազարգացման խմբակներում, որոնք նկատվում են սովորողների միջավայրում, մեծ մասամբ միջնակարգ ուսումնական հաստատությունների աշակերտների մոտ»* [2]։ *Այնուհետև նամակում խոսվում է այն մասին, որ նման խմբակներում ընթերցում են արգելված գրքեր, տարածվում են «վտանգավոր ուղղություն» ունեցող պարբերականներ, ծագում են նոր, պետության համար վտանգավոր գաղափարներ։ Այդ բոլորի մասին դիրեկտորին տեղեկացնելուց հետո, հոգաբարձուն բարձր իշխանությունների անունից նրան առաջարկում է զգոն լինել, հսկել և արգելել իր հաստատության մեջ նման երևույթների տարածումը* [3]։

Գիմնազիայի դիրեկտորն ու նրա ղեկավարած մանկավարժական խորհուրդը առանց այդ էլ հետևում էին աշակերտների գործունեությանը, ամեն կերպ խափանելով հեղափոխական նոր գաղափարների տարածումը։ Սակայն այդ նրանց լիովին չէր հաջողվում։ Երևանի գիմնազիայի աշակերտությունը՝ մանավանդ բարձր դասարանների աշակերտները ակտիվորեն արձագանքում էին երկրի քաղաքական կյանքին, հետաքրքրվում և յուրացնում էին «պետության համար վտանգավոր» շատ գաղափարներ։

Անդրկովկասի հայաբնակ շատ շրջանների ու բնակավայրերի հետ միասին Երևանում մեծ հուզումների ու ըմբոստացման պատճառ է դառնում ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի հայ եկեղեցական կալվածքներն ու գույքը պետականացնելու մասին օրենքը։ Դժգոհությունն ու հուզումները համընդհանուր էին։ Դրանք իրենց գագաթնակետին են հասնում մանավանդ այն ժամանակ, երբ սկսվում է օրենքի գործադրումը [4]։ *Հակացարական այդ փայլուն ելույթներին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս Երևանի բնակիչները։ Նրանք 1903 թ. օգոստոսի 3-ին քաղաքում կազմակերպում են հզոր ու բազմամարդ ցույց և երդվում բոլոր միջոցներով կռվել այդ օրենքի կիրառման դեմ* [5]։ *Այդ օրենքը եկեղեցու դեմ չէր միայն ուղղված։ Եկեղեցական կալվածքների ու գույքի պե-*

1 *ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, գ. 57, թ. 1—2։*

2 *Նույն տեղը։*

3 *Նույն տեղը։*

4 *Վ. Գաբամյան, Բնոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 29—31։*

5 *Նույն տեղը, էջ 31։*

տականացումով փաստորեն հայկական ծխական դպրոցները զրկվում էին նյութական միջոցներից և կանգնում փակման վտանգի առաջ։ Ըստ էության, այդ օրենքը ցարական կառավարության ռուսաֆիկացման քաղաքականության արտահայտումներից մեկն էր։ Օրենքի դեմ ուղղված հուզումներն ու դժգոհությունները շարունակվում են նաև 1904—1905 թվականներին։ Վրա հասնող հեղափոխությունից ահաբեկված և հայերի հակացարական շարժումներից հարատևդրված ցարական կառավարությունը 1905 թ. ամռանը չեղյալ է հայտարարում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը [1]։

Արխիվային փաստաթղթերից երևում է, որ ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Երևանում տարածվել են հակակառավարական գրքույկներ՝ ռուսերեն և հայերեն լեզուներով։ Անդրկովկասի երկաթուղիների պահնորդական վարչության Ալեքսանդրոպոլի բաժանմունքի պետի պաշտոնական գաղտնի գրության համաձայն պահնորդական բաժնի գործակալը 1904 թ. հուլիսի 31-ին Երևանի երկաթուղային կայարանում մի անհայտ անձնավորության մոտ հայտնաբերել է 119 օրինակ ռուսերեն և 142 օրինակ հայերեն հակակառավարական գրքույկներ։ Նրա կցկտուր հաղորդումից երևում է, որ գրքույկն ուղղված է եղել ցարական կառավարության 1903 թ. վերը նշված օրենքի դեմ։ Գրքույկները ինչ-որ մի անհայտ անձնավորություն հատուկ արկղով Երևանից տեղափոխելիս է եղել Թիֆլիս, բայց նկատելով ժանդարմական գործակալին, թողել է իր արկղը և հեռացել անորոշ ուղղությամբ [2]։

Վրա հասնող ռուսական առաջին հեղափոխության նախնական ալիքները արդեն իրենց արձագանքներն էին գտնում երկրի նույնիսկ ամենահետամնաց ծայրամասերում։ Դեռ դրանից առաջ Հայաստանի մի շարք բնակավայրերում առաջացել էին սոցիալ-դեմոկրատական կուսակցության խմբեր։ Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ 1899 թ. Ջալալօղլիում (Ստեփանավան) մարքսիստական առաջին խմբակը ստեղծվելուց հետո մի քանի տարվա ընթացքում՝ 1902—1905 թթ. ձևավորվում են ՌՍԴԲԿ Կովկասյան Միության (որի հետ միացել էր 1902 թ. կազմակերպված և լենինյան-իսկրայական ամուր դիրքերի վրա կանգնած [3] *«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը») Հայաստանի մի շարք կազմակերպությունները՝ Հաղպատի, Ալավերդու, Ալեքսանդրոպոլի, Երևանի, Կարսի, Սարիղամիշի, Ղափանի և այլ կազմակերպություններ։*

1 *Մոավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930, էջ 29։*

2 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 00, 1904, д. 5, ч. 60, *թ.* 3:

3 *Տե՛ս «Искра» (газета), 1903:*

Երևանում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան առաջին խմբակները գոյություն ունեին 1902—1903 թվականներից։ Դրանցից առաջինը ստեղծվել էր 1902 թ. Երևան—Ալեքսանդրապոլ (Մասիս) երկաթուղու տեղամասում, որի կառուցմանը տեղացիների հետ միասին մասնակցում էին նաև Ռուսաստանից եկած մասնագետներ ու բանվորներ։ Շուտով նույնատիպ հիմնարկային սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ են առաջանում արական ու իգական գիմնազիաներում, թեմական դպրոցում, փոստ-հեռագրատանը։ Այդ բոլոր կազմակերպությունների անդամների ճնշող մեծամասնությունը ՌՍԴԲԿ երկրորդ համագումարի նախօրյակին և դրանից հետո հաստատուն կերպով կանգնեց լենինյան դիրքերի վրա։ Սակայն այդ դեռ բավական չէր։ Վրա էր հասնում ռուսական առաջին հեղափոխությունը։ Անհրաժեշտ էր ոտն առ և ղեկավարել քաղաքում այդ revolyուցիայի աղդեցությամբ սկսվող հեղափոխական ու գործադուլային շարժումները։ Իսկ դրա համար նախ և առաջ պետք է միավորվեին հիմնարկային առանձին բջիջները մի միասնական կենտրոնի շուրջը, ստեղծվեր համաքաղաքային կոմիտե, որպեսզի կենտրոնացներ դրանց աշխատանքը, կազմակերպեր միասնական պայքարը և դրանց ուղղություն ցույց տար կազմակերպչական ու այլ հարցերում։ Արտաքնապես թվում է, թե այդ առանձին մեծ դժվարությունների հետ չէր կապված, բավական էր, որ նշված կազմակերպությունների անդամների կամ ներկայացուցիչների միջոցով ընտրվեր քաղաքային կոմիտե և ամեն ինչ կվերջանար։

Մինչդեռ այդ այդպես չէր։ Միասնական սոցիալ-դեմոկրատական ղեկավար օրգանի ստեղծումը կապված էր մեծ դժվարությունների հետ, որովհետև, ինչպես նշում է Ասք. Մռավյանը, այդ ժամանակ քաղաքում «ազգայնական-շովինիստական» կրքերն «ապրում էին» «կատարյալ հարսանիք», Հայաստանի մյուս տեղերի նման Երևանն էլ «Ռուսական հեղափոխության 1905 թ. փոթորիկները» ապրում էր «ազգամիջյան արյունոտ ընդհարումների ձևով», «քաղաքական բախտի» ղեկը գտնվում էր իրեն «Հայ հեղափոխական դաշնակցություն անվանող բուրժուական-նացիոնալիստական կուսակցության ձեռքին»։ Հնչակյանները ևս քաղաքում ունեին իրենց բավական բազմանդամ կազմակերպությունը [1]։

Հիմնարկային բոլշևիկյան կազմակերպությունների միջև կազմակերպչական կապը բացակայում էր, դրանք իրար աշխատանքի

1 «Խորհրդային Հայաստան» (լրագիր), 1928, № 283։

հաղորդակից էին դառնում միայն «առանձին ագիտատորների և կուսակցական ղեկավարների միջոցով» [1]։

Բայց և այնպես այդ բոլորը հաղթահարվում են։ Տեղում եղած ղեկավար ընկերների և դրսից եկած նոր թարմ ուժերի ջանքերով Երևանի անջատ-անջատ կազմակերպությունները կարճ ժամանակամիջոցում մերձենում են այն աստիճան, որ հնարավոր է դառնում նրանց մեկ կենտրոնից ղեկավարելը, մեկ կազմակերպության մեջ միավորելը։ Գործը բավականաչափ հեշտանում է նրանով, որ 1905 թ. աշնան մոտերքը հնչակյան կազմակերպության մեջ տեղի է ունենում պառակտում, նրանից հեռանում են մեկ-երկու տասնյակի հասնող մտավորական, արհեստավոր և դպրոցական անդամներ [2]։ Գումարվում են նախապատրաստական մի քանի ժողովներ, որոնց մասնակցում են նաև հնչակյաններից պառակտված 10—15 հոգի մտավորականներ։ Նրանք դեռևս լիովին չէին վերափոխվել և քիչ էին ծանոթ բոլշևիկյան ծրագրային հարցերին։ Նախապատրաստական ժողովներում մեծ դեր էր խաղում Տոմսկի պոլիտեխնիկումի ուսանող Ալեքսանդր Մալխասյանը [3]։ Նախապատրաստական աշխատանքները պսակվում են հաջողությամբ և 1905 թ. աշնանը նըշված բջիջների բազայի վրա հիմնվում է քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, ընտրվում է քաղաքային կուսակցական ղեկավար օրգան՝ կոմիտե և սկսվում են նրա առօրյա աշխատանքները [4]։ Կազմակերպությունը շուտով ձեռք է բերում ապակետիպի հարմարանքներ, բաց է թողնում մի «քանի թռուցիկներ», կազմակերպում է «միտինգներ տպարանի բանվորների մեջ և Ալեքսանդրապոլում» [5], զանազան հարցերի լուծման համար գումարվում են մի քանի ժողովներ։

Չնայած իր փոքրությանն ու նորակազմ լինելուն, Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը սկզբից ևեթ ձգտում էր իր ձեռքը վերցնել գործադուլային շարժման ամբողջ ղեկավարությունը։ Նա այդ գործին ձեռնամուխ էր եղել դեռևս մինչև իր վերջնական ձևավորումը՝ 1905 թ. փետրվար-մարտ ամիսներին, երբ Երևանի մի շարք ձեռնարկություններում արդեն տեղի էին ունենում գործադուլներ։

1 Ս. Պ. Աղայան, Revolyուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., էջ 148։

2 «Խորհրդային Հայաստան» 1928, № 283։

3 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 25։

4 «Խորհրդային Հայաստան» 1928, № 283։

5 Նույն տեղը։

Քաղաքի կազմակերպության մեջ ընդգրկված էին մասվորականներ, բանվորներ, աշակերտներ, պրոֆեսիոնալ հեղափոխականներ։ Մոսվյանի վկայությամբ 1906 թ. գարնանը Երևանի կազմակերպության անդամների թիվը հասնում է մոտ 100-ի [1]։ Քաղաքի կազմակերպության ստեղծման և նրա հետագա աշխատանքներում մեծ դեր է խաղացել վերը նշված Տոմսկի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող երիտասարդ Ալեքսանդր Մալխասյանը։ Նա իր կարդացած դասախոսություններով, սկզբունքայնությամբ ու եռանդուն գործունեությամբ դարձել էր բոլորից սիր-



Ա. Մալխասյան (ՀՍՍՌ ռեսյուցիայի պետական թանգարան)։

1 Մոսվյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 27։

ված ղեկավար ու ընկեր։ Նա քաղաքականապես պատրաստ էր և մարքսիզմին քաջածանոթ։ Սակայն նրա գործունեությունը երկար չի տևում։ Մալխասյանը 1905 թ. դեկտեմբերի վերջերին մահանում է թոքախտից։ Նրա թաղումը վեր է ածվում կատարյալ ցույցի։ Ասք. Մոսվյանը՝ նկարագրելով Մալխասյանի թաղումը, գրում է. «Նրա թաղումը սառցալ հեղափոխական բնավորություն, և Երևանի ս.-դ. առաջին անգամ հրապարակային ճառեր ասացին, ու Երևանի բնակիչներն էլ կարմիր դրոշակ տեսան» [1]։



Ասքանազ Մոսվյան (ՀՍՍՌ ռեսյուցիայի պետական թանգարան)։

1905—1906 թթ. Երևանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպության մեջ հույժ կարևոր դեր է խաղացել նաև Ասքանազ Մոսվյանը (1886—1929 թթ.), որը ծնվել էր Գանձակում (Գյանջա) և սովորել էր նախ էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա՝ Երևանի թեմական դպրոցում, որտեղից և սկսվում է նրա քաղաքական գործունեությունը։ Մոսվյանը Երևանի սոցիալ-

1 Մոսվյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 25—26։

դեմոկրատական կազմակերպության փոքրաթիվ հիմնադիրներից մեկն է և մինչև իր կյանքի վերջը մնացել է իրրև մարքսիզմ-լենինիզմի հետևողական մարտիկ։ Նա իր գրույցներով, զեկուցումներով ու ագիտացիոն աշխատանքով 1905—1906 թթ. դարձել էր Երևանի շատ հիմնարկ-ձեռնարկությունների ու ուսումնական հաստատությունների, բանվորների ու արհեստավորների և աշակերտների ու



Գ. Սոկոլովսկի (ՀՍՄՌ ռևոլյուցիայի պետական թանգարան)։

մտավորականների սիրված ավագ ընկերն ու զեկավարը։ 1907 թ. Մոռավյանը փոխադրվում է այլ քաղաքներ՝ Գանձակ, Թիֆլիս, Բաքու, Պետրոգրադ, որտեղ համալսարանը 1915 թ. ավարտելուց հետո վերադառնում է Թիֆլիս և աշխատում իրրև ուսուցիչ։ 1918 թ. կուսակցության հանձնարարությամբ նա տեղափոխվում է Հայաս-

տան և իրեն նվիրում կուսակցական աշխատանքին։ Դաշնակցության դեմ ունեցած իր փայլուն ելույթների և անհաշտ պայքարի պատճառով նա 1920 թ. փետրվարին աքսորվում է Հայաստանից։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Մոռավյանը վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ՝ արտաքին գործերի կոմիսար, ժողկոմխորհի նախագահի տեղակալ, «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր և լուսավորության ժողովրդական կոմիսար [1]։

Երևանի կազմակերպության անդամներից հայտնի էր նաև Գ. Ն. Սոկոլովսկին, որը ծնվել էր Թիֆլիսում 1879 թ. և 1899—1904 թթ. սովորել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Նա Երևանի կազմակերպության մեջ ակտիվ գործունեություն է ծավալել 1904—1910 թթ., 1907 թ. քաղաքի ՌՍԴԲԿ կազմակերպության կողմից ընտրվել է կուսակցության 5-րդ լոնդոնյան միավորիչ համագումարի պատգամավոր։ Այդ նույն թվականին նա խմբագրում էր Երևանում լույս տեսնող «Факты» թերթը, որի էջերում լայն կերպով լուսաբանվում էին դեռևս շարունակվող հեղափոխական շարժումները՝ գործադուլներն ու դասադուլները։ 1910 թվականից հետո նա հարել է մենշևիկներին [2]։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին «Կայծ» թերթում բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել Մուշեղ Բագրատունին՝ Նարիմյան ազգանունով։ Նա նախկինում հրնչակյան էր, բայց հետագայում հարել է սոցիալ-դեմոկրատիային։ Հայտնի են նաև նրա ֆելիետոնները՝ տպագրված գլխավորապես «Երևանի հայտարարություններ» երկլեզվյան թերթում՝ Փալանդուզ Մկո ծածկանունով։ Իր հոդվածներում ու ֆելիետոններում Մ. Բագրատունին սուր քննադատության էր ենթարկում ցարական օրգանները, քաղաքային դուման ու վարչությունը, դաշնակցական կուսակցության քաղաքականությունը։


Մեզ հետաքրքրող շրջանի Երևանի ՌՍԴԲԿ կազմակերպության մյուս անդամներից հայտնի էին 1905 թ. Թիֆլիսից եկած Ղարաջանյանը, Արշակը (ազգանունը չի հիշատակված), բանվոր Շանթը (Մարտիրոս Միրաքյան) և ուրիշներ։ Մոռավյանը նշում է, որ նրանց ջանքերով բավական ակտիվացել է Երևանի կազմակերպության աշխատանքը։ Նրանցից հատկապես հայտնի էր բանվոր

1 ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 10, գ. 390, թ. 1—3 կամ գ. 2, թ. 33—34։

2 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», հ. 1-ին, Երևան, 1958։

Շանթը, որը Մռավյանի խոսքերով ասած, «բավական փորձված, հռանդուն գործիչ էր» և եկել էր Բաքումից [1]։

Հետագայում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության մեջ հայտնի են դառնում նոր գործիչներ ու ղեկավարներ, որոնց, ինչպես և կազմակերպության հետագա գործունեության մասին խոսք կլինի ըստ ժամանակագրական կարգի, քաղաքի հեղափոխական շարժումների առնչությամբ։ Սակայն չի կարելի չնշել, որ Երևանի սոցիալ-դեմո-



Մ. Միրաքյան (Շանթ) (ՀՍՍՌ տեղեկագրքի պետական թանգարան)։

կրատական կազմակերպությունն իր ամբողջ գործունեության ընթացքում՝ հեղափոխության ու քաղաքական իր հիմնական աշխա-

1 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 26։

տանքների հետ միասին համառ պայքար է մղել բանվոր դասակարգին ու ողջ աշխատավոր զանգվածներին օտար և թշնամի կուսակցությունների, հատկապես՝ դաշնակցության դեմ։ Դաշնակցությունից բացի, Երևանում իր ուժեղ կազմակերպությունն ուներ և հրնչակյան կուսակցությունը, իսկ «սպեցիֆիկները» (այսպես կոչված՝ «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը», որը Վ. Ի. Լենինի բնութագրմամբ իրենից ներկայացնում էր «բունդական արարած») Երևանում մեզ հետաքրքրող շրջանում կազմակերպություն չեն ունեցել և որևէ դեր չեն խաղացել։ Դրանց մասին Ասք. Մռավյանն ուղղակի գրում է. «1905—6 թվի ձմեռվա ամիսներին Երևան էին գալիս նաև հայ ս.-դ. կազմակերպության երկու ներկայացուցիչներ՝ Եսայեմ (Գարեգին Կուզիկյան) և Կարեն Միքայելյան։ Նրանք փորձ էին անում Երևանում ստեղծել իրենց «սպեցիֆիկ» կազմակերպության ճյուղը, բայց այդ չի հաջողվում, և նրանք քաշվում են ասպարեզից» [1]։

Այժմ տեսնենք ինչ ընթացք ունեին հեղափոխական-գործադուլային շարժումները և ինչպիսի ղեկավարություն էին դրանք ստանում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունից։

Երևանի բանվոր դասակարգն ու հասարակության մյուս աշխատավորական խմբերը իրենց հեղափոխական շարժումներով արձագանքել են 1905—1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությանը։ Երևանի հեղափոխական շարժումների յուրահատկությունները կայանում էին նրանում, որ դրանք սկզբից համեմատաբար ուշ, որ քաղաքի գործադուլային շարժումը միատեսակ բնույթ չէր կրում, գործադուլները տեղի էին ունենում տարբեր ժամանակներում և մեծ մասամբ առանձին-առանձին, որ բանվորական շարժումը այստեղ չհասավ քաղաքական պայքարի այնպիսի մակարդակի, ինչպիսին նա հասել էր Թիֆլիսում, Բաքվում և պրոլետարական այլ քաղաքներում։ Այդ տեսակետից էլ որոշ վերապահությամբ կարելի է ընդունել Ա. Մռավյանի այն թեզը, թե՝ «1905 թվի հեղափոխության փոթորիկը, որպես այդպիսին, չի ապրել ռուսական կայսրության ծայրագույն անկյուն Երևանի նահանգը։ Երևանի նահանգի բանվորներն ու գյուղացիները՝ հեղափոխության այդ շարժիչ ուժերը կազմակերպված հեղափոխական պայքար չեն մղել միապետության դեմ» [2]։ Կարծում ենք, որ Երևանի հեղափոխական շարժումների այդ առանձնահատկությունները հետևանք

1 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 28։

2 Նույն տեղը։

էին գիտակից բանվորների հոծ զանգվածների բացակայության, ցարական կառավարության կողմից վարվող ազգամիջյան կռիվների հրահրման, տեղական բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների հակահեղափոխական գործունեության և մի շարք այլ պայմանների, որոնք չէին կարող իրենց կնիքը չդնել հասարակական երևույթների վրա ընդհանրապես։

Երևանում հեղափոխական շարժումներն ու ելույթները նշանակալից չափեր են ընդունում 1905 թ. սկզբներից՝ «Արյունոտ կիրակի»-ից հետո[1], երբ Ռուսաստանի շատ քաղաքներում ու մարզերում հեղափոխական շարժումն ապրում էր իր բուռն վերելքի շրջանը։

1905 թ. մարտ ամսին Երևանի բնակչությունը մի ընդարձակ գրավոր պահանջագիր է ուղարկում Կովկասի փոխարքային, ավելի բարձրագույն իշխանություններին ներկայացնելու համար։ Բնակչությունն իր այդ պահանջագրում մացրել էր 28 կետից բաղկացած առաջարկություններ՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի քվեարկության հիմունքներով սահմանադիր ժողով հրավիրելու, ոչ դասային զեմստվոյական հիմնարկներ ստեղծելու, լրիվ ինքնավարական հիմունքներով քաղաքային կանոնադրությունը փոխելու, դատական օրգանների ընտրության կարգը դեմոկրատացնելու, մահապատիժն ու զինվորական դատարանները վերացնելու, հողը ազգայնացնելու, հողազուրկ և սակավահող գյուղացիներին պետական հողերում բնակվելու ու դրանք օգտագործելու, Կովկասի ժողովուրդներին իրենց մայրենի լեզուներով պարտադիր տարրական և անվճար ուսուցման իրավունքի, հայկական եկեղեցական-ծխական փակված դպրոցների, բարեգործական-լուսավորական հաստատությունների անհապաղ վերաբացման, Թիֆլիսում արևելյան բաժնով բարձրագույն ուսումնական հաստատություն բաց անելու, ժողովների, հավաքույթների, ելույթների, պրոֆմիությունների, մամուլի ազատության, 8-ժամյա բանվորական օր սահմանելու, տղամարդկանց հետ կանանց համահավասարության իրավունք տալու, քաղաքային ոստիկանությունը ինքնավարական օրգանների տնօրինությանը հանձնելու, ազատ կերպով մասնավոր դպրոցներ ու հրատարակչություններ բաց անելու, կրոնների ու պաշտամունքի ազատության, հայկական եկեղեցիների ու վանքերի բռնագրավված գույքի ու կապիտալների վերադարձման, զինվորական ծառայության ժամկետի կրճատման, վարչական կարգով Կովկասից աքսորվածներին ամնիստիայով ազատելու, ընդհանուր սրոգրեսիվ եկամտահարկ մտցնելու մասին[1]։ Ինչպես տեսնում ենք, բնակչության առաջարկներն ու պահանջները բազմապիսի էին և հիմնականում ելնում էին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների խնդիրներից։

Դրանից հետո Երևանում մեկը մյուսի հետևից գործադուլ են անում գինու-կոնյակի գործարանների բանվորները, հյուրանոցների, ճաշարանների ու ակումբների աշխատողները, ուսումնարանների աշակերտները, փոստ-հեռագրատան աշխատողներն ու ասֆալտանավորները, արհեստավորները, վարպետացուները և ուրիշներ։ Կարելի է ասել, որ 1905—1907 թթ. Երևանի սոցիալական կյանքում գործադուլային շարժման մի փայլուն ժամանակաշրջան է, երբ հեղափոխության ալիքներից արբնացած բանվորներն ու մյուս աշխատավորները կազմակերպված ձևով հանդես են գալիս իրենց պահանջներով, պայքարի հիմնական ձև ընդունելով գործադուլը։

Գործադուլի առաջին դրոշը բարձրացնում են Սարաջյանի (Սարաջևի) գինու և կոնյակի ոչ մեծ գործարանների բանվորները։ Նրանք 1905 թ. ապրիլին, ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարությամբ, հայտարարում են գործադուլ և մի շարք կետերից բաղկացած իրենց պահանջները ներկայացնում գործարանատիրոջը։ Բանվորները պահանջում էին աշխատավարձի բարձրացում, բանվորական օրվա տևողության կրճատում, դաժան կառավարիչ Զեդվորական օրվա տևողության կրճատում, դաժան կառավարիչ Զեդպինիձեի հեռացում։ Նրանք պահանջում էին, որպեսզի բանվորների աշխատանքի ընդունումը և հեռացումը կատարվի բանվորական կոմիտեի համաձայնությամբ, որ գործարանատերը ընդհանրապես բանվորներին վերաբերող հարցերը լուծի միայն այդ կոմիտեի համաձայնությամբ[2]։ Սարաջյանի գործարանների բանվորները նույնատիպ մի պահանջագիր էլ ներկայացնում են 1906 թ. իրենց գործադուլի ժամանակ, որի մասին կխոսվի իր տեղում։

Գրեթե Սարաջյանի գործարանների բանվորների հետ միաժամանակ գործադուլ են հայտարարում նաև Շուստովի գործարանի բանվորները, որոնք նույնպես իրենց պահանջագիրն են ներկայացնում գործարանատիրոջը։ Վերջինս ընդհանուր գործադուլից վախե-

1 Ս. Պ. Ադայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., էջ 151։

1 ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 3, գ. 163, թ. 1—3։ Հմմտ. Ս. Պ. Ադայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., էջ 151—152։

2 Տե՛ս ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, գ. 167։

ցած՝ դիմում է դիջումների և, այդպիսով, գործարանում վերականգնում նորմալ աշխատանքը։

1905 թ. ապրիլի երկրորդ կեսին գործադուլ են անում հյուրանոցների, ճաշարանների ու քաղաքային ակումբի աշխատողները։ Մարաջյանի և Շուստովի գործարանների բանվորների օրինակով նրանք ևս հիմնարկների տերերին ներկայացնում են 13 կետից բաղկացած պահանջներ՝ աշխատավարձի բարձրացման, բանվորական օրվա տևողության կրճատման, բանվորների բնակարանային-կենցաղային պայմանների բարելավման, բժշկական օգնության, տուգանքների վերացման, արձակուրդի, գործադուլային օրերի համար աշխատավարձ տալու մասին և այլն [1]։ Ձեռնարկատերերն անընդունելի են համարում բանվորների և ծառայողների առաջադրած պահանջները և ի պատասխան դրանց սկսում են աշխատանքից ազատել «անհնազանդներին», գործադուլավորների մեջ որոնելով իրենց համար ավելի վատահելի մարդիկ։

Քաղաքի աշակերտների ու ուսուցիչների հեղափոխական ելույթներն սկսվում են մի փոքր ավելի ուշ, 1905 թ. հոկտեմբերի վերջերին։ Այդ, մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ ուսումնական հաստատություններում՝ և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների շրջաններում դեռևս բավական մեծ էր դաշնակցության ազդեցությունը, հակառակ արդյունաբերական ձեռնարկությունների ու մյուս կարգի օբյեկտների, որոնց բանվորներն ու աշխատակիցները հիմնականում գտնվում էին քաղաքի բոլշևիկյան կազմակերպության ազդեցության տակ։ Այնուամենայնիվ, ուսումնական հաստատությունների աշակերտների ու ուսուցիչների մեծ մասը ևս դիմում է հեղափոխական ելույթների։ Պայքարի առաջին դրոշը բարձրացնում են արական գիմնազիայի բարձր դասարանի աշակերտները։ Նրանք 1905 թ. հոկտեմբերի 26-ին դասադուլ են անում և կազմակերպում են բողոքի ցույց։ Այդ օրերին քաղաքի տարբեր մասերում հայտնաբերվում են անլեգալ շատ գրքեր։ Ոստիկանական և պահնորդական բաժինների հետապնդումները ցույց են տալիս, որ անլեգալ գրականության տարածման հիմնական հեղինակը ուսանող երիտասարդությունն էր։ Այդ առիթ ծառայեցնելով, նահանգապետի հրամանով ոստիկանական վարչությունն ու պահնորդական բաժիններ խուզարկություններ են սկսում ուսանողների և կասկածելի ուսուցիչների բնակարաններում, հույս ունենալով գտնել «անկարգությունների» հետքերը։ Հենց ի պատասխան այդ խուզարկությունների էր, որ գիմնազիայում հայտարարվում է դասադուլ։

1 Տե՛ս ՀԿՊ կկ պատմարխիվ, ֆ. 33, գ. 167։

Մի փոքր ուշացումով, բայց ավելի համառ ու երկարատև պայքարի են դուրս գալիս թեմական դպրոցի աշակերտները։ Նրանց ըմբոստ դասադուլը, որը տևել է երկու ամիս 25 օր՝ սկսելով 1905 թ. դեկտեմբերի սկզբներին, ավարտվել է միայն հաջորդ տարվա փետրվարի վերջին, ուղղված էր դպրոցի բյուրոկրատական բարքերի, հնացած ու անպիտանի ծրագրերի և պլանների, հետամնաց մեթոդների դեմ։ Դասադուլին ակտիվ մասնակից Ասք. Մովսյանը դրա մասին հետևյալն է գրում.

«...Մեղանչած չեմ լինի, եթե ասեմ, որ 1905 թ. հեղափոխությանը Երևանի ցուցահանած մասնակցության լավագույն էջը թեմական դպրոցի աշակերտության ըմբոստ դասադուլն էր, որ սկսվեց դեկտեմբերի սկզբին և ավարտվեց փետրվարի վերջին, տևելով երկու ամիս 25 օր։ Դասադուլն ուղղված էր դպրոցի հոգաբարձության և ուսուցչական բյուրոկրատական բարքերի, դպրոցի հնացած և շփոթ ծրագրի դեմ։ Կազմվեց պահանջների մի երկար շարք և ներկայացվեց տեսուչ Արշակ Չիլինգարյանին (նա դաշնակցության Երևանի կոմիտեի անդամ էր)։ Դպրոցի հոգաբարձությունը, տեսուչն ու ուսուցիչները (գլխավորապես դաշնակցականներ էին, կային նաև հնչակյաններ) բթամիտ համառությամբ դեմ էին դասադուլին և ամեն միջոցի դիմում էին այն խորտակելու։ Տեսուչի և ուսուցիչների ուղեկցությամբ դպրոց եկավ նոր առաջնորդ Հուսիկ եպիսկոպոսը և վեցերորդ դասարանի աշակերտներին հավաքելով (այս դասարանի աշակերտներն էին ղեկավարում դասադուլը)՝ խրատներ կարդաց մեր գլխին։ Կծու պատասխաններ տվինք սրբազանին և ճամփա դրինք իր դաշնակցական ուղեկիցների հետ» [1]։

Ականատեսի և մասնակիցի խոսքն այնքան պարզ է, որ հավելի թե անհրաժեշտ լինի բացատրություններ։ Նա իր խոսքը շարունակելով հաղորդում է, որ դասադուլավորները դեմարում էին ժողովներ, որոնց մասնակցում էին ծնողների մի մասն ու քաղաքի բոլշևիկյան կազմակերպության անդամները, որ դաշնակցությունը դեմ էր դասադուլին և ամեն կերպ ձգտում էր տապալել այն, որ դասադուլին մասնակցում էին նույնիսկ դաշնակներին հարող աշակերտները, և այլն [2]։

Հեղափոխական շարժումներից զերծ չմնաց և կայազորը։ Ըստ արխիվային նյութերի, 1905 թ. Երևանի զորքի մեջ տարածվել են հեղափոխական բովանդակություն ունեցող թռուցիկներ։ Տարածող-

1 Մովսյան, Հուշագրություններ, հիշողությունների ժողովածու, էջ 31։

2 Նույն տեղը, էջ 32։

ներին գտնելու համար Երևանի պահնորդական բաժինը ծավալում է «հետախուզություն» գործունեություն և այդ առիթով կազմում է մի բավական հաստափոր գործ [1]։ Երևանի նահանգական պահնորդական բաժինը առանձնապես մեծ «հետաքրքրություն» է ցուցաբերում նույն թվականի ապրիլի 19-ին Թիֆլիս—Երևան երկաթուղու թունելներից մեկում հայտնաբերված 5 օրինակից բաղկացած ռուսերեն թռուցիկի նկատմամբ, որը բովանդակում էր հակակառավարական կոչեր և կրում էր «Բոլոր սոլդատներին» վերնագիրը [2]։

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստի լուրը, մանիֆեստ, որով Նիկոլայ 2-րդը «քաղաքացիական ազատություններ» և «սահմանադիր դուման» խոստանալով՝ փորձում էր թուլացնել հեղափոխական շարժումը և ճնշել այն, Երևանում ստացվում է երկու օր ուշացումով։ Երևանի նահանգի ու Կարսի մարզի շատ բնակավայրերում, մանավանդ այնպիսիներում, որտեղ բոլշևիկյան կազմակերպություններն ունեին մեծ ազդեցություն, մանիֆեստն ընդունվում է թշնամաբար և ցույցեր են կազմակերպվում։ Երևանի նահանգապետն ու պահնորդական բաժնի պետն իզուր են Թիֆլիս ուղարկած իրենց հեռագրում նշում, թե իբր բացի մի քանի տեղերից հոկտեմբերի 17-ի մանիֆեստը բնակչության կողմից ընդունվել է «հրճվանքով և հանդիսավորությամբ» [3]։

1905 թ. հեղափոխական տարին փակվում է փոստ-հեռագրական տան աշխատողների երկարատև գործադուլով, որը սկսվել էր 1905 թ. նոյեմբերի 15-ին և տևել մինչև դեկտեմբերի 23-ը. մոտ մեկ և կես ամիս։ Գործադուլը տեղի էր ունեցել «Համառուսական փոստ-հեռագրական միության» գիտությամբ, մի միություն, որը նպատակ էր դրել տնտեսական պայքարի միջոցով հասնել բանվորների դրության արմատական բարելավման։ Ցարական կառավարությունը այդ միությունը համարել էր «անհուսալի» և «անօրինական» կազմակերպություն։ Գործադուլի ակտիվ մասնակիցների ու ղեկավարների՝ Ա. Սակվարելիձեի, Ն. Անտոնովայի (Մելիքյան), Կ. Ասլամազյանի, Մ. Ռոդովիչի և մյուսների գործը հանձնվում է Երևանի օկրուգային դատարանին։ Մի քանի տարի շարունակ, ընդհուպ մինչև 1910 թվականը, տեղական և փոխարքայական դատական օրգաններում քննվում և վերաքննվում է նրանց հարցը։ Երկաթուղային դատական քննություններից հետո Թիֆլիսի դատական պալատի հատուկ դատական խումբը 1910 թ. հոկտեմբերի 29-ին գործադուլավորներին մեղադրում է կամայական կերպով աշխատանքը խողնելու մեջ և պատժում տարբեր ժամկետներով կալանքի՝ Ասլամազյանին 4 ամիս, Ռոդովիչին՝ երկու ամիս, Մելիքյանին՝ երկու շաբաթ և այլն, իսկ Ա. Սակվարելիձեի գործը, իբրև գլխավոր ղեկավարի, հանձնվում է առանձին քննության [1]։

Հեղափոխությունը տագնապի մեջ էր գցել ցարական կառավարությանը։ Նա հատկապես սարսափում էր ղինված ապստամբությունից։ Աշխատավոր բնակչության հեղափոխական թափը կոտրելու համար խոստումներ տալուց զատ, ցարական կառավարությունը նախազգուշական միջոցներ էր ձեռնարկում անցանկալի ու անախորժ ընդհարումներից խուսափելու համար։ Այդ քաղաքականության կիրառման տիպիկ օրինակն էր այն, որ նահանգապետի հատուկ կարգադրությամբ 1905 թ. Երևանի նահանգում հայտարարվում է ռազմական դրություն [2], չնայած ոչ միայն Երևանի նահանգը, այլև Կովկասն ու երկրի շատ մասերը դուրս էին գտնվում ռուս-ճապոնական պատերազմի ոլորտից։ Ըստ այդ կարգադրության Երևանում, Ալեքսանդրապոլում և Նախիջևանում անկախ դեմքից ու դիրքից բոլորին արգելվում էր հրաձգային զենք, ինչպես նաև ամեն տեսակի սուր զենքեր կրել [3]։

Հեղափոխական և գործադուլային շարժումը ավելի մեծ վերելք է ապրում 1906 թվականին, ընդգրկելով աշխատավորական զանգվածների ավելի ու ավելի լայն շերտեր։ Այդ թվականին տեղի ունեցած գրեթե բոլոր գործադուլներն ու ըմբոստացումները ղեկավարում էր քաղաքի բոլշևիկյան կազմակերպությունը, որն արդեն բավական բազմանդամ էր և, չնայած իր գոյության համեմատաբար կարճ ժամանակամիջոցին, կոփվել էր հեղափոխական շարժումների բովում։

Երևանի բանվորության և հասարակության աշխատավոր մյուս խմբերի հեղափոխական նոր տարին՝ 1906 թ. սկսվում է քաղաքի բոլշևիկյան կազմակերպության մարտական կոչերով։ Հեղափո-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 115, ցուցակ 2, գ. 31։

2 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 00, 1904, д. 5, ч. 60, թ. 4։

3 Այդ հեռագրերի տեքստերը տե՛ս ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, գ. 203, թթ. 5, 9, 10, 11, 12, 47, 49։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 115c, գ. 20, թթ. 5—6, 188, 191—192, 195—196, գ. 21, թ. 16, ЦГИА Грузинской ССР, ф. 1, д. 51, թ. 6, «Эриванские объявления», 1910, № 79 և այլ տեղերում։ Հետաքրքրական է, որ 1910 թվականին Թիֆլիսում դատական պալատի կողմից Երևանում այդ գործը լսելիս գործադուլավորներից մեկի պաշտպանի դերում փայլուն կերպով հանդես է գալիս Մկլիք-Ազամալյանը և չերմորեն պաշտպանում մեղադրվողին։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 580, թ. 199։

3 Նույն տեղը։

խական շարժման դեկա՝ խարուիյունը դրեթե ամբողջապես իր ձեռքը վերցրած բոլշևիկյան կազմակերպությունը 1906 թ. փետրվարի 4-ին բաց է թողնում «Երևան քաղաքի բոլոր բանվորներին» ուղղված թռուցիկ։ Դրա մեջ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունը նշում է, որ Երևանի բանվորները՝ արթնանալով քնից, պայքար են սկսել կապիտալիստների և մյուս տերերի դեմ, որ նրանք եթե մինչ այդ համբերությամբ տանում էին ճնշումը, վիրավորանքը, սովն ու ցուրտը, ապա այժմ ճանաչելով իրենց թշնամիներին՝ հանուն մարդկային տարրական իրավունքների, պայքարի դրոշ են բարձրացրել նրանց դեմ։ Թռուցիկը կոչ է անում հեռանալ հրուշակեղենի և բուլկեղենի ձեռնարկությունների բանվորներին, որոնք գործադուլ անելով՝ իրենց տերերին ներկայացրել էին մի շարք պահանջներ բանվորական օրվա կրճատման, աշխատավարձի (ամսվա ընթացքում երկու անգամ կանոնավոր կերպով վճարել), աննպատ պայմանների բարելավման, մասնագիտական հագուստներ տրամադրելու, աշակերտներին գոնե նվազագույն չափով աշխատավարձ տալու, բանվորների աշխատավարձը 10-ից մինչև 50 տոկոս բարձրացնելու, վարպետների, վարպետացուների ու աշակերտների բնակարանային վարձի մի մասը հոգալու, բանվորներին առանց հարգելի պատճառի աշխատանքից չհեռացնելու, բժշկական օգնության, հիվանդ ժամանակ վարձատրելու, աշխատանքի կերտներ ընդունելու ու արհեստ սովորեցնելու, բանվորների հետ քաղաքավարի վերաբերվելու և գործադուլային օրերի համար աշխատավարձ տալու մասին [1]։ Այնուհետև, կոչ է արվում գործնել միասնաբար՝ հավատացած լինելով, որ «շուտով երկրի երեսից» պետք է ջնջվեն բոլոր շահագործողները [2]։

Հեղափոխական շարժումների վերընթացի համար էլ ավելի մեծ նշանակություն է ունենում նույն թվականի փետրվարի 19-ին, ճորտատիրության վերացման 45-ամյակի առթիվ գրված թռուցիկը։ Երևանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպության այդ մարտական՝ «Ընկերներ» վերնագիրը կրող հայերեն և ադրբեջաներեն թռուցիկը ընդգրկում է ավելի լայն հարցեր։ Նրանում հանրեճ կերպով նախ խոսվում է 1861 թ. ռեֆորմի անցկացման պատճառների մասին, ապա նշվում, որ տնտեսական կյանքի, հատկապես արդյունաբերության զարգացմամբ հրապարակ են իջել հեղափոխական այնպիսի հզոր ուժեր, որոնք ահ ու սարսափի մեջ են

1 ЦГИА Грузинской ССР, ф. 1с, опись 1, д. 297, л. 5։
2 Նույն տեղը։

պահում ինքնակալությունը։ Թռուցիկում մերկացված է հեղափոխությունից խուսափելու համար նույն ինքնակալության կիրառած արտաքին անհաջող քաղաքականությունը՝ Սևաստոպոլի խայտառակ կամպանիան, ռուս-ճապոնական պատերազմում կրած ամոթալի պարտությունը, ինչպես նաև ազգությունների միջև հրահրած թշնամանքներն ու կոտորածները [1]։ Միանգամայն ճիշտ գնահատական տալով այդ երևույթներին ու 1905 թ. հոկտեմբերի մանիֆեստին և պատժիչ ջոկատների՝ սենհարյուրակալինների ու մյուսների մարդասպան գործողություններին, թռուցիկը կոչ է անում դադարեցնել ազգամիջյան թշնամանքը, միավորել ուժերը և զենքը ձեռին կռվել ցարիզմի տապալման համար [2]։ Թռուցիկը վերջանում է հետևյալ խոսքերով. «Կազմակերպվեցե՛ք ընկերներ, ձեռք մեկնեցեք ռուսական պրոլետարիատին և ընդհանուր ուժերով տապալեք ցարական գահը։ Կորչի՛ ցարիզմը։ Կեցցե՛ ընդհանուր զինված ապստամբությունը» [3]։

Աշխատավորների հեղափոխական պայքարի կազմակերպմանը ամենաակտիվ մասնակցություն էր ցույց տալիս բոլշևիկյան «Կայծ» թերթը։ Նրա էջերում լայն կերպով պրոպագանդվում էր բոլշևիկների տակտիկան տվյալ հեղափոխության մեջ, լուսաբանվում էին ընթացիկ դեպքերը, և աշխատավորներին կոչ էր արվում ավելի կազմակերպված հանդես գալու համար։ «Կայծից» բացի հեղափոխության տարիներին կարևոր դեր էին խաղում «Բանվորի ձայնը» (լրագիր, հրատարակվում էր Թիֆլիսում), «Նոր խոսքը» (Բաքու), «Կավկազսկի ռաբոչի» թերթիկը (Թիֆլիս), երևանում 1907 թ. հրատարակվող «Факты»-ը, որը խմբագրում էր Գ. Ն. Սոկոլովսկին և այլն [4]։

Հեղափոխական շարժման, մանավանդ գործադուլային կազմակերպված պայքարի համար կարևոր նշանակություն ունեին մասայական կազմակերպությունները, առաջին հերթին պրոֆմիությունները։ Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը մեծ նշանակություն էր տալիս պրոֆմիությունների գործունեությանը և այդ պատճառով էլ ամեն կերպ ձգտում էր, որպեսզի բոլոր տեղերում ստեղծվեն պրոֆմիութենական կազմակերպություններ։ Ինչպես քիչ առաջ տեսանք, Երևանի բոլշևիկյան կազմակերպությունն իր թռուցիկներում

1 ЦГИА Грузинской ССР, ф. 1с, опись 1, д. 194, л. 152, д. 209, л. 4։
2 Նույն տեղերում։
3 Նույն տեղը, գ. 209, թ. 4։
4 «Սովետական Հայաստան» (լրագիր), 1960, № 217, Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении за победу Советской власти, էջ 21։

պրոֆմիութիւններ կազմակերպելու համար հատուկ կոչ էր արել քաղաքի արդյունաբերական և մյուս կարգի ձեռնարկությունների բանվորներին ու աշխատակիցներին։ Պրոֆմիությունն այն հիմնական օղակներից մեկն էր, որ պետք է համախմբեր բանվորական զանգվածներին, նրանց գործողությունները դարձնելով միասնական, պայքարը՝ համընդհանուր։ Թիֆլիսում հրատարակվող բոլշևիկյան «Կայծ» թերթը իր էջերում յայն կերպով պրոպագանդում էր պրոֆմիությունների դերի ու նշանակության մասին և Անդրկովկասի քաղաքների, այդ թվում նաև Երևանի բանվորներին ու մյուս աշխատավորներին կոչ էր անում ստեղծելու իրենց պրոֆմիութենական կազմակերպությունները [1]։

Երևանում պրոֆմիութենական առաջին կազմակերպությունը ստեղծում են գործակատարները, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ջանքերով ու ղեկավարությամբ, 1906 թ. գարնանը։ Այդ կազմակերպությունը մարդաշատ չէր։ Նա ընդամենը ուներ մի քանի տասնյակ անդամներ [2], որոնցից ոմանք հարում էին դաշնակցությանը, սակայն, այնուամենայնիվ, կազմակերպությունն ընդհանուր առմամբ ղեկավարվում էր բոլշևիկների կողմից և օրինակ էր դարձել մյուս հիմնարկների ու արդյունաբերական ձեռնարկությունների աշխատավորության համար։ «Կայծ» թերթում տպագրված հոդվածներից մեկում, որ առաջվել էր Երևանից, ասված է. «Հայտնի է, որ Երևանում գոյություն ունի գործակատարների պրոֆեսիոնալ միություն, որ իր հիմքը դնելով միմիայն լոկ տնտեսական հողի վրա, ավելի դրական կերպով ձգտում է բարելավել գործակատար դասակարգի տնտեսական վիճակը և զարկ տալ նրա մշտավոր ու բարոյական զարգացման... այսօր նա ունի իր գրադարան-ընթերցարանը, վարչությունը և... կանոնադրությունը»[3]։ Թերթի նույն տարվա մի այլ համարում քաղաքի արհեստավորների, քարտահների (վարպետացուներ) և աշակերտների վատթարագույն պայմանները նկարագրելուց հետո, կոչ է արվում ուրիշ քաղաքների արհեստավորների և Երևանի գործակատարների օրինակով պրոֆեսիոնալ միության կազմակերպություններ ստեղծելու և կազմակերպված պայքար մղելու համար [4]։

Գործակատարներին հետևում են մի շարք հիմնարկ-ձեռնարկությունների աշխատավորներ։ 1906 թ. Երևանում պրոֆմիութենական կազմակերպությունների թիվը 10-ից անցնում էր։ Գործակատարներից բացի իրենց պրոֆմիութենական կազմակերպություններն էին ստեղծել զինագործ արհեստավորները, կաշեգործները, այգեգործները, Սարաջյանի գործարանի բանվորները և ուրիշներ [1]։

Հեղափոխական շարժման ծավալման համար առանձնահատուկ նշանակություն ուներ հակահեղափոխական կուսակցությունների երկդիմի և հակաաշխատավորական քաղաքականության մերկացումը, Պետական առաջին դումայի ակտիվ բոյկոտի տակտիկան և հայ-թուրքական (ադրբեջանական) բշնամանքներ սերմանելու ու ընդհարումներ կազմակերպելու՝ ցարիզմի վարած նենգ քաղաքականության մերկացումը, որի մասին խոսք կլինի քիչ հետո։

Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին չէր կարող նույնիսկ նվազագույն չափով աշխատավորության հեղափոխական ելույթները կազմակերպել, առանց հեղափոխության պատահական ուղեկիցների և բուրժուական ու մանրբուրժուական պարտիաների՝ հատկապես դաշնակցության դեմ երկարատև ու համառ պայքար մղելու։ Ժամանակի բոլշևիկյան մամուլը ծանրաչափական ճշգրտությամբ արձանագրել ու լուսաբանել է այդ պայքարը։ Իսկ վերջինս հիմնականում ծավալվում էր ազգային հարցի, պրոֆմիությունների, գործադուլային շարժումների և հեղափոխության շուրջը։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները ռեալ կյանքի և պատմության հարուստ փորձի հիման վրա ամենուրեք մերկացնում էին բուրժուական կուսակցությունների բուրժուական էությունն ու տակտիկան։ Առանձնահատուկ նշանակություն է ունենում քաղաքի բոլշևիկյան կազմակերպության՝ Պետական առաջին դուման ակտիվ բոյկոտի ենթարկելու տակտիկան, դուման, որը ցարը հարկադրված խոստացել էր հեղափոխության շարժման վերելքի շրջանում, բայց նպատակ ուներ նույն հեղափոխության թափը թուլացնել, ժամանակ շահել և այն ճնշել։ «Կայծ» թերթի հեղողրդագրության համաձայն, ընթացիկ մոմենտի և Պետական դումայի բոյկոտի մասին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը՝ բազմաթիվ բանվորների ու արհեստավորների մասնակցությամբ 1906 թ. ապրիլի 16-ին քաղաքի այգիներից մեկում կազմակերպված միտինգում լսում է հատուկ դասախոսություններ [2]։

1 Տե՛ս «Կայծ» (լրագիր), 1906, №№ 21 և 33։
2 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 32։
3 «Կայծ», 1906, № 21։
4 Նույն տեղը, № 33։

1 Տե՛ս Ս. Պ. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ. էջ 157։
2 «Կայծ», 1906, № 7։

Քաղաքի ՌՍԴԲԿ կազմակերպության աշխատանքի ծավալման համար կարևոր նշանակություն է ունենում նույն կազմակերպության մանդատով ստոկհոլմյան միավորիչ համագումարին (ապրիլին) մասնակցած Ստ. Շահումյանի ժամանումը Երևան, որը տեղի ունեցավ 1906 թ. մայիսի վերջերին։ Նա Երևան էր եկել քաղաքի



Ստեփան Շահումյան (ՀՍՍՌ անոլյուցիայի պետական թանգարան).

բոլշևիկյան կազմակերպության հրավերով, որպեսզի ծանոթանա կազմակերպության ընթացիկ աշխատանքներին և միավորիչ համագումարի մասին կարդա հատուկ զեկուցում։ Հենց նույն օրն էլ կոմիտեի հատուկ նիստում նա կարդում է երկու ժամ տևողությամբ

իր առաջին զեկուցումը։ Ասք. Մռավյանն այդ կապակցությամբ գրում է. «Հեղափոխության կուսակցության ավանդներից զուրկ Երևանի կազմակերպության համար զարթուն բոլշևիկ Ստեփանի խոսքը, կրկնում եմ, մի կատարյալ հայտնություն էր։ Հարցերի մի ամբողջ տարափ էլ նա պատասխանեց, և մեր առաջ պատկերացավ կուսակցությունն իր ամբողջ կյանքով»[1]։ Հետևյալ օրը, երեկոյան Ստ. Շահումյանը իր զեկուցումը կրկնում է կազմակերպության ընդհանուր ժողովում, որին մասնակցում էին 40 հոգի։ Շահումյանը Երևանում մնում է մոտ մի շաբաթ։ Նա այդ կարճ ժամանակամիջոցում, նշված զեկուցումներից բացի, որոնցում պատասխանում և կազմակերպությանը ուղղություն է ցույց տալիս մի շարք հարցերում, ծանոթանում է գործի ամբողջ ընթացքին, բանվորների և աշխատավորների կյանքի ու գործի պայմաններին, լինում է Գաբրիելյան եղբայրների կաշեգործարանում և դրույց ունենում բանվորների հետ, ցուցումներ է տալիս արդյունաբերական ձեռնարկություններում կուսակցական աշխատանքը ուժեղացնելու համար, հրապարակային զեկուցում է կարդում գործակատարների պրոֆմիության ընդհանուր ժողովում, խորհուրդներ է տալիս բանվոր դասակարգին՝ խորթ կուսակցությունների դեմ հաջող պայքար մղելու, աշխատավորությանը ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու և այլ հարցերի մասին[2]։

Այժմ տեսնենք ինչ ընթացք ունեին հեղափոխական շարժումները Երևանում հեղափոխության երկրորդ տարում՝ 1906 թվականին։ 1905 թ. սկզբներին որոշ բնդմիջումներով դեռևս շարունակվում էր 1905 թ. վերջերին սկսված Երևանի արական և էհիխսիմի գիմնազիաների աշակերտների դասադուլները։ Ատիճանական ու ստահնորդական բաժինների հաղորդագրության համաձայն արական գիմնազիայի աշակերտությունը միայն բնդմիջումներից հետո նոր դասադուլ էր հայտարարել 1906 թ. մարտի 20-ին։ Արական գիմնազիայի աշակերտների կոչով նրանց հետևում են նաև Հռիփսիմեի օրիորդաց գիմնազիայի աշակերտուհիները[3]։

Հեղափոխական շարժման համար կարևոր նշանակություն ուներ մայիսմեկյան տոնի կազմակերպումը։ «Կռվի» թիվ 1 հաղորդումից երևում է, որ 1906 թ. մայիսի մեկի տոնի կազմակերպումը

1 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 34։

2 Տե՛ս նույն տեղը, էջ 32—37 կամ «Խորհրդային Հայաստան» (լրագիր), 1925, № 213։

3 ЦГИА Грузинской ССР, ф. 1с, д. 194, ф. 248։

կապված էր մեծ դժվարությունների և լուրջ վտանգների հետ։ Բուրժուական-նացիոնալիստական պարտիաները դրպարտություններ էին հորինում բոլշևիկյան կազմակերպության դեմ, վերջինիս մեղադրելով «աղգուրացության», «անտեղի կոտորած, ընդհարում» առաջ բերելու, «կռվի ու արյան» պատճառ դառնալու մեջ և այլ հերյուրանքներ [1]։ Նրանք ձգտում էին քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը մղել ժամանակին ու պայմաններին չհամապատասխանող գործողությունների, որպեսզի հնարավորություն առանան հասարակության մեջ բացասական կարծիք առեղծել բոլշևիկների նկատմամբ. Սակայն բոլշևիկյան «ռնդական կազմակերպությունը լավ հասկանալով իր պայմանների շրջապատը, մայիսի մեկը առնեց միայն իր շրջանում՝ այնպես որ, ոչ մի միջադեպի առիթ չտալով և հօդս ցնդեցին այն բոլոր պրովոկացիաները ու ապատած ցույցերը, որոնք, իհարկե, էժան չէին նստել ԲՆ՝ իր ՍԴԲԿ գործունեության ապագայի. ԲՆ՝ ժողովրդի համար» [2]։ Այդպիսի տակտիկան ցույց էր տալիս Երևանի բոլշևիկյան կազմակերպության ոչ թե թուլությունը, այլ ճկունությունը և ժամանակի ու պայմանների մեջ ճիշտ կողմնորոշվելը, հեղափոխական շարժման և հենց իր՝ կուսակցության հեղինակության ու ապագայի մասին ճիշտ ընթռնողությունը։

Մայիսի 22-ին քաղաքի բոլշևիկյան կազմակերպության անմիջական ղեկավարությամբ գործադուլ են հայտարարում «Российское товарищество» առևտրական ընկերության Երևանի գործակալության բանվորները։ Նրանց պայմանները շատ վատ էին, իսկ աշխատանքային օրվա տեւողությունը՝ անչափ երկար։ Գործակալության բանվորները փաստորեն սահմանված աշխատաժամեր չունեին, նրանք աշխատում էին առավոտից մինչև գիշերվա ժամը 10—11-ը, շատ դեպքերում աշխատանքային էին հայտարարվում նույնիսկ կիրակի և օրենքով սահմանված՝ տոնական օրերը [3]։ Գործադուլը պատահական բնույթ չէր կրում։ Գործադուլավորները ընկերության վարչությանը և աստիճանավորներին են ներկայացնում մի քանի կետից բաղկացած իրենց պահանջները՝ աշխատանքային օրվա ժամերը կրճատելու, աշխատավարձը բարձրացնելու, բանվորների ու ծառայողների նկատմամբ կոպիտ վերաբերմունքին վերջ տալու, կենցաղային պայմանները լավացնելու և մի քանի այլ պահանջներ։ Գործադուլավորները համառ էին և միասնական, իսկ նրանց ղեկավարությունը՝ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունը՝ կայուն։ Գործադուլն ավարտվում է հաղթանակով. ընկերության վարչությունը հարկադրված է լինում ընդունել պահանջագիրը և ղգալի զիջումներ կատարել գործադուլավորներին [1]։ Բոլշևիկյան «Կայծ» թերթը, որը ապրում էր աշխատավորների առօրյայով, առանց հապաղելու արձագանքում է այդ գործադուլին՝ իր ընթերցողներին պատմելով նրա մասին եղած մանրամասնությունները, և շնորհավորում հաղթանակը։ «Շնորհավորում ենք մեր ընկերների հաղթանակը, որ և հաղթանակ է ՌՍԴԲ կուսակցության տեղում կազմակերպության»,— գրում է թերթը [2]։

Հունիս-հուլիս ամիսները համեմատաբար «խաղաղ» են անցնում, թեպետև մի քանի հիմնարկ-ձեռնարկություններում նկատվում են առանձին փոքր ու կարճատև հրաժարումներ և գործադուլներ։ Գործադուլային շարժումը ուժեղանում է օգոստոսից։ Օգոստոսի սկզբներին գործադուլ են հայտարարում Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի աշխատողները։ Այդ գործադուլը Երևանում 1905—1907 թթ. տեղի ունեցած ամենահուժկու, երկարատև ու մարտական գործադուլներից մեկն էր։ Գործադուլը գլխավորում էր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, որը ձգտում էր միասնական պայքարի կոչել նույն բանկի նաև մյուս քաղաքների բաժանմունքների աշխատողներին։

Երեւնի նուհանգապետի 1906 թ. օգոստոսի 22-ի պաշտոնական գրության համաձայն, գործադուլավորների թիվը մեծ չէր, որովհետև փոքր էր և հիմնարկը։ Նրանք բանկի կառավարչությանն են ներկայացնում 10 կետից բաղկացած մի պահանջագիր, որով գործադուլավորները բանկի կառավարչությունից պահանջում էին՝ աշխատավարձը բարձրացնել, աշխատավարձի պահպանմամբ տարեկան մեկ ամիս արձակուրդ տալ (իսկ հիվանդության դեպքում ավելի երկար ժամանակով), աշխատակցին աշխատանքից ազատել միայն ծառայողների համաձայնությամբ, մահանալու կամ կամավոր կերպով աշխատանքից ազատվելու դեպքում յուրաքանչյուր տարվա ծառայության դիմաց տրամադրել մեկ ամսվա աշխատավարձ, հիվանդ աշխատակիցների բուժումը կատարել հիմնարկի հաշվին, յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ որոշակի տոկոս-

1 «Կայծ», 1906, № 13։

2 Նույն տեղը։ Հմմտ. Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 32։

3 «Կայծ», 1906, № 23։

1 «Կայծ», 1906, № 23։

2 Նույն տեղը։

ներով բարձրացնել աշխատավարձը և այլն [1]։ Գործադուլավորներն իրենց այդ պահանջների կատարման համար կառավարչությանը ասլիս են 10 օր ժամանակ։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն «Բոլոր քաղաքացիներին» թռուցիկում (1906 թ. սեպտեմբերի 25-ին), մեջ բերելով բանկի Երևանի բաժանմունքի գործադուլավոր ծառայողների պահանջները և նշելով, որ կառավարչությունը աշխատավարձի բարձրացման իրավունքը փայատերերի ընդհանուր ժողովին վերագրելու պատրվակի տակ փաստորեն հրաժարվում է աշխատավարձի մասին նրանց ներկայացրած պահանջները կատարելուց, կոչ է անում քաղաքացիներին «բոլոր միջոցներով ոտակցել գործադուլավոր ծառայողներին» [2]։ Թռուցիկում Թիֆլիսի առևտրական բանկի մյուս բաժանմունքների ծառայողներին և ընդհանրապես քաղաքացիներին ազդարարվում է, որ Երևանի բաժանմունքի ծառայողների պայքարը բոլորի պայքարն է, որ «նրանց հաղթանակը» նաև իրենց հաղթանակն է, «պարտությունը»՝ իրենց «պարտությունը» [3]։ Թռուցիկը ավարտվում է հետևյալ մարտական կոչով. «Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի ծառայողներ, ե՛ղեք տոկուն։ Թող ձեղնից ոչ ոք աշխատանքը չվերսկսի, բանի դեռ առանց որևէ կրճատումների չեն բավարարվի ձեր պահանջները։

Շահագործողները և նրանց կողմնակիցները ձգտում են ձեզ հրապուրել աղորմություններով։ Նրանց մի հավատացեք, մի հանձնվեք նրանց կաթիլին։ Մինչև վերջ պնդեցեք ձեր պահանջը և մեր գործակցությունը ապահովված կլինի։

Կե՛ցցե երևանցիների պայքարը...» [4]։

Իրոք որ երևանցիները երկար ժամանակ շարունակում են իրենց պայքարը։ Նրանց գործադուլը տևում է երեք ամիս՝ օգոստոսից մինչև նոյեմբեր։ Միայն ծայր աստիճան հարկադրանքն ու սպառնալիքը պատճառ դարձան աշխատանքի վերսկսելուն։

Նույն թվականի օգոստոսի 21-ին գործադուլ են անում քաղաքի հյուսներն և աստղձագործների վարպետացումներն ու աշակերտները։ Նրանք միասնական հանդես գալով՝ ձեռնարկատերերին ներկայացնում են հետևյալ երեք պահանջները. 1) բանվորական օրվա տևողությունը կրճատել և դարձնել 9 ժամ, 2) աշխատավարձն ավելացնել 20 տոկոսով և 3) քաղաքավարի վերաբերվել իրենց հետ [1]։ Գործադուլավորների պահանջները մեկ օրվա ընթացքում բավարարվում են և օգոստոսի 22-ին նրանք անցնում են աշխատանքի [2]։

Բավական մեծ թվով հիմնարկներ է ընդգրկում 1906 թ. սեպտեմբերի 4-ին սկսված փականագործների և դարբինների վարպետացումների գործադուլը, որը տևում է մինչև նույն ամսվա 14-ը։ Գործադուլավորներն իրենց աշխատանքային, վարձատրության և կենցաղային պայմանները բարելավելու համար ներկայացնում են մի շարք պահանջներ, որոնք սակայն, տերերի կողմից չեն ընդունվում և թողնվում են անհետևանք։ Վարպետացումների հետ միաժամանակ գործադուլ են անում Տեր-Ավետիքյան եղբայրների մեխանիկական-թուջակաղապարման գործարանի բանվորները։ Վերջիններս ընդհուպ մինչև սեպտեմբերի 18-ը շարունակում են գործադուլը։ Սակայն և՛ փականագործների ու դարբինների վարպետացումները, և՛ մեխանիկական գործարանի բանվորները ի վերջո հարկադրված են լինում աշխատանքը վերսկսել։ Գործադուլի ծավալմանը նպաստել են մի քանի ակտիվ բանվորներ, որոնք սոցիալ-դեմոկրատական աշխատանք էին ծավալել գործադուլի հենց սկզբից։ Գործադուլի անհաջող վախճանի պատճառներից մեկն այն էր, որ նրա ղեկավարներն ու ոդեշնչողները՝ Ա. Հայրապետյանը, Հ. ու Գ. Բաղդասարյան

գործադուլի և ձեռնարկատիրոջից պահանջում՝ սահմանել 8-ժամյա աշխատանքային օր, ոռճիկների ավելացում և բանվորների ընդունման ու արձակումը կատարել իրենց՝ բանվորների համաձայնությամբ։ Տեղի են ունենում երկարատև բանակցություններ, բայց համառ գործարանատերը հրաժարվում է բանվորների պահանջները բավարարելուց և հայտարարում է, թե ինքը «տպարանը փակում է և հեռանում է քաղաքից»[1]։ Նա երկուս ու կես ամիս բանվորներին անգործ ու նյութական անապահովության մեջ պահելուց հետո, ընթանց հարկադրում է ընդունել իր նախկին պայմանները և աշխատանքի է վերընդունում նրանցից միայն երեք հոգու։ Գործադուլի այդպիսի ընթացքի գլխավոր մեղքը, ինչպես նշում է լրագիրը, ընկնում էր դաշնակցականների վրա, որոնք ղեկավարելու փոխարեն գործում էին գործարանատիրոջ օգտին և իրենց վարմունքով մի քանի բանվորների մղում դնելի շրջիկ բրիգադներ կազմելու[2]։

1906 թ. նոյեմբերի սկզբներին գործադուլ են անում Սարաջյանի գինու և կոնյակի գործարանների բանվորները։ Գործադուլը տևում է մեկ շաբաթ և պահանջների նվազագույն բավարարումով բանվորները հարկադրված են լինում աշխատանքը վերսկսել։ Սակայն բանվորները դրանով չեն հրաժարվում իրենց պահանջների լիովին բավարարումից։ Նրանք, ինչպես կտեսնենք մի փոքր հետո, հաջորդ տարվա հունվարի վերջերին նորից են բարձրացնում պայքարի դրոշը՝ գործարանատիրոջից պահանջելով իրենց պայմանների բարելավում[3]։

Նույն թվականի դեկտեմբերին գործադուլային շարժումը ավելի է ծավալվում։ Գրեթե միաժամանակ գործադուլ են անում կաշվի գործարանի բանվորները, դինապործները, բաղնիքի աշխատողները։ Նրանք պայքարը շարունակում են մոտ երեք շաբաթ և ձեռնարկատերերին հարկադրում բավարարել իրենց բոլոր պահանջները[4]։

1907 թ. առաջին ամիսը նշանավորվում է Սարաջյանի գինու և կոնյակի գործարանի բանվորների գործադուլով, որը սկսվում է հունվարի 27-ին և տևում է մինչև փետրվարի 12-ը[5]։ Գործադուլը

1 «Նոր խոսք» (լրագիր), Թիֆլիս, 1906, № 13։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս Ս. Պ. Ազոյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., էջ 166—167։

4 Նույն տեղը։

5 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4 д.-во, 1907, д. 87, ч. 2, л. 1в և 2։

ղեկավարում է ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեն և փաստորեն շարունակությունն էր կազմում այն ընդհատված գործադուլի, որը տեղի էր ունեցել 1906 թ. նոյեմբերին։ Գործադուլավորների մշակած և գործարանատիրոջը ներկայացրած պահանջագիրը պարունակում էր մի շարք կետեր[1]։ Գործադուլ հայտարարած բանվորները, որոնք թվով մոտ 20 հոգի էին, գործարանատիրոջից պահանջում էին. ա) փետրվարի մեկից աշխատավարձը ավելացնել՝ մինչև 30 ռուբլի ստացողներինը 15 տոկոսով, մինչև 35 ռ. ստացողներինը՝ 10 տոկոսով, իսկ 35 ռուբլուց բարձր ստացողներինը՝ 5 տոկոսով, բ) բանվորներին տրամադրել բնակարան, որն ապահոված լինի լույսով ու ջեռուցմամբ, գ) սահմանել 8-ժամյա բանվորական օր և դ) բանվորների աշխատանքի ընդունելը և աշխատանքից ազատելը կատարել գործարանատիրոջ ու բանվորների ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ։ Բանվորների առաջադրած այդ բոլոր պայմաններն ընդունվում են գործարանատիրոջ կողմից և գործարանում նորմալ աշխատանքը վերսկսվում է փետրվարի 12-ին[2]։

Երևանի գործադուլային շարժման մեջ իր տեղն ունի Համբարձում Եղիազարյանի բաղնիքի աշխատակիցների գործադուլը, որը սկսվել էր մարտի սկզբներին։ Դրան մասնակցում էին քիսաչիները, վառարան վառողները (երկու հոգի) և բաղնիքի կառավարիչը։ Գործադուլավորների պահանջները շատ համեստ էին, քիսաչիները այցելուներից վերցվող վարձից բացի պահանջում էին նաև մշտական աշխատավարձ, իսկ մյուսները՝ աշխատավարձի բարձրացում, յուրաքանչյուրին ամսական 10 ռուբլու չափով, ընդ որում բաղնիքի կառավարիչը ամսական ստանում էր 25 ռուբլի, իսկ վառարան վառողները՝ 10-ական ռուբլի։ Սկզբում բաղնիքատերը կտրուկ կերպով հրաժարվում է վառարան վառողների և կառավարիչի պահանջը բավարարելուց, իսկ քիսաչիներին խոստանում է աշխատավարձ տալ այն պայմանով, որ նրանք այցելուներից վերցրած գումարները ոչ թե վերցնեին իրենք, այլ մուծեին բաղնիքի դրամարկղ[3]։ Գործադուլը շարունակվում է և վերջիվերջո Հ. Եղիազարյանի դիմադրությունը կոտրվում է։ Նա հարկադրված է լինում ընդունել գործադուլավորների պահանջը և բավարարել այն։ Մարտի 28-ին բաղնիքի աշխատանքը վերսկսվում է[4]։

1 ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆ. 33, գ. 302, թ. 1։

2 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4 д.-во, 1907, д. 87, ч. 2, л. 1в։

3 Նույն տեղը, թ. 4։

4 Նույն տեղը, թ. 7։

Չի կարելի չնշել, որ մեր օրերում հրապարակի վրա դրված պատմական գրականության մեջ մեծ մասամբ չափազանցվել է բաղնիքի բանվորների այդ և հաջորդ գործադուլը, որի մասին կխոսվի իր տեղում։ Իրականում բաղնիքի բանվորների գործադուլը ուներ շատ համեստ նշանակություն՝ նրա մասնակիցները միայն մի քանի հոգի էին, պահանջը սահմանափակվում էր միայն աշխատավարձի բարձրացմամբ և որևէ ազդեցություն չի թողել մյուս հիմնարկ-ձեռնարկությունների գործադուլային շարժման վրա։ Դա մասամբ կարելի է բացատրել նաև նրանով, որ բաղնիքի բանվորների գործադուլները տեղի էին ունենում արդեն մոխեղնող ռեակցիայի շրջանում։ Ինչպես էլ ուզում է լինի Հ. Ղազարյանի բաղնիքի քիսաչիների ու վառարան վառողների գործադուլը (կամ գործադուլները) իր նշանակությամբ ու մասշտաբներով անհամեմատելի էր քաղաքի շատ հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողների հուժկու շարժումների հետ։ Այլ կերպ ասած, պատմաբաններից ոմանց կողմից բաղնիքի բանվորների գործադուլին մեծ նշանակություն տալը ավելորդ չափազանցություն է։

Չնայած վրա հասնող ռեակցիային, Երևանում բանվորական հեղափոխական շարժումը շարունակում է արտահայտվել ցույցերի ու գործադուլների ձևով։ 1907 թ. մարտի 25-ին քաղաքի «Դարիբանոց» կոչված դերեզմանոցում ցույցի են դուրս գալիս արվարձանների այգիների սեզոնային բանվորները, թվով մոտ 100 հոգի, որոնք մեծ մասամբ սեզոնային աշխատանքի էին գալիս Էջմիածնի և Նոր Բայազետի գավառներից[1]։ Երևանի առաջին քաղաքամասի ոստիկանապետի տվյալներով կազմված՝ Կոմկոսի փոխարքայության ոստիկանական հատուկ բաժնի պաշտոնական գրության մեջ ասվում է, որ ցույցը տեղի է ունեցել աշխատավարձը բարձրացնելու համար։ Ոստիկանական ատիճանավորներին ցուցարար բանվորների ներկայացուցիչները պատասխանել են, որ իրենց ստացած 30 կոպեկ օրավարձը բանկուբյան պատճառով ամենևին իրենց չի բավարարում և ժողովի կամ ցույցի են հավաքվել այդ դրությունից դուրս գալու ելք որոնելու համար։ Բանվորներն իրենց աշխատավարձի բարձրացման լավագույն ելքը համարել են աշխատանքի դադարեցումը և ցույցի կազմակերպումը[2]։ Այդիններում աշխատանքների դադարեցումը՝ դրանց ամենա եռուն պահին՝ մարտի վերջերին, այգիների բացման, էման, հողի փխրեցման, ծառատունկի

1 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4 д.-во, 1907, д. 87, ч. 2, թ. 5։
2 Նույն տեղը։

պահին, մեծ հարված էր այգետերերի համար։ Ուստի վերջիններս հարկադրված են լինում ընդունել բանվորների առանց այն էլ ոչ մեծ պահանջները և նրանց օրավարձը բարձրացնել մինչև 45—60 կոպեկ[1]։

Սեզոնի բանվորների գործադուլին (մոտ երեք շաբաթ անց) հաջորդում է հրուշակեղենի ձեռնարկությունների բանվորների գործադուլը, որը սկսվում է ապրիլի 17-ին և որը հիմնականում ծագում է ցածր աշխատավարձի ու աշխատանքային վատ պայմանների պատճառով։

1907 թ. հուլիսի 3-ին գործադուլ են անում Արշակ Հակոբյանի ու Խաչատուր Այվազյանի տպարանների ու Տեր-Նիկողոսյանի ու Ահաքելյանի կազմարարական արհեստանոցների բանվորները։ Գործադուլավորները ձեռնարկատերերին ներկայացնում են 15 կետից բաղկացած մի պահանջագիր, որը կտրականապես մերժվում է։ Կոմկոսի փոխարքայության ոստիկանական հատուկ բաժնի հաղորդագրության համաձայն, ձեռնարկատերերը բանվորների մի մասին արձակում են աշխատանքից, վարչական պատասխանատվության են ենթարկում այն գործադուլավոր բանվորներին, որոնք գործադուլի նախօրյակին՝ հուլիսի 2-ին հավաքվել էին ժողովի, որպեսզի մշակեն իրենց առաջարկներն ու պահանջները[2]։ Նույն հաղորդագրությունից երևում է, որ բանվորների պահանջները ընդգրկում էին աշխատանքային պայմանների, աշխատավարձի չափի և բանվորների հետ ձեռնարկատերերի ունեցած վերաբերմունքի բնագավառները։ Բանվորները պահանջում էին, որպեսզի աշխատանքային օրվա տևողությունը սահմանվի 8 ժամ, տարվա ընթացքում տրվի մեկամսյա արձակուրդ, տոն և նիրակի օրերը միշտ համարվեն հանգստի օրեր, աշխատավարձը բարձրացվի 10—30 տոկոսով, մինչև երեք ամիս վճարվի աշխատավարձը և պահվի հիվանդ բանվորի հաստիքը, աշակերտներին ճաշի համար օրական տրվի 20 կոպեկ, գործադուլի ժամանակվա համար վճարվի լրիվ աշխատավարձը, աշխատուժի ընդունումն ու հեռացումը կատարվի ձեռնարկատերերի ու բանվորների փոխադարձ համաձայնությամբ, յուրաքանչյուրն աշխատի ըստ իր մասնագիտության, աշակերտներն աշխատեն միայն իրենց արհեստի գծով, ձեռնարկատերերը բանվորների հետ վերաբերվեն քաղաքավարի և այլն[3]։ Գործադուլը շա-

1 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4 д.-во, 1907, д. 87, ч. 2, թ. 5։
2 Նույն տեղը, թ. 1։
3 Նույն տեղը։

րունակվում է նաև հաջորդ ամսվա՝ օգոստոսի առաջին տասնօրյակում, սակայն բացառությամբ Տեր-Նիկողոսյանի, մյուս ձեռնարկատերերը հրաժարվում են բանվորների պահանջները բավարարելուց [1]։ Տեր-Նիկողոսյանի և նրա բանվորների միջև (որոնք ընդամենը երեք հոգի էին) փոխադարձ զիջումներով կայանում է համաձայնություն, և արհեստանոցի աշխատանքը վերսկսվում է հուլիսի 30-ին [2]։ Ըստ այդ համաձայնագրի, Տեր-Նիկողոսյանը 10—15 ռուբլի ստացող բանվորների աշխատավարձը բարձրացնում է մինչև 50 տոկոսով, իսկ բանվորական օրվա տեւողությունը սահմանում 9 ժամ [3]։

1905—1907 ԹԹ. վերջի գործադուլներից էր ձիաքարշի բանվորների ու ծառայողների գործադուլը, որը տեղի է ունեցել 1907 թ. օգոստոսի 20—24-ի ընթացքում։ Կովկասի փոխարքայության ոստիկանական հատուկ բաժինը բարձրագույն իշխանություններին հասցեագրած իր պաշտոնական գրությամբ հաղորդում է, որ ինժեներ Միրզոյանին (Միրզոև) պատկանող քաղաքային ձիաքարշի բանվորներն ու ծառայողները նախ 1907 թ. օգոստոսի 20-ին երեկոյան հավաքվում են ցույցի, ապա հայտարարում գործադուլ։ Օգոստոսի 22-ին ձիաքարշի երթևեկությունը կանգ է առնում, երթևեկության պետը, տոմսավաճառները և կառապանները՝ թվով 26 հոգի, միասնաբար հրաժարվում են աշխատանքի դուրս գալուց։ Ձիաքարշի տերը զիջումներ անելու փոխարեն վերջնագիր է ներկայացնում գործադուլավորներին մինչև ցերեկվա ժամը 12-ը մատնելու գործադուլի կազմակերպիչներին, հակառակ դեպքում սպառնալով նրանց աշխատանքից հեռացնել ու փոխարինել նոր աշխատողներով [4]։ Գործադուլը տեւում է երեք օր, օգոստոսի 23-ին ձիաքարշի շարժումը վերսկսվում է, իսկ 24-ից նորմալ ընթացքի մեջ են ընկնում և մյուս աշխատանքները։ Միրզոյանը աշխատանքից հեռացնում է երկու կայարանների պետերի՝ նրանց համարելով գործադուլի կազմակերպիչներ։ Բացի դրանից, օգտվելով արդեն ամենուրեք մոլեգնող ռեակցիայից, գործադուլի մյուս մասնակիցներին նույնպես աստիճանաբար հեռացնում է աշխատանքից, նրանց փոխարինելով նոր, իր համար ավելի վստահելի մարդկանցով [5]։

Հանուն երևույթների տրամաբանական կապի, ժամանակագրական խախտում կատարելով՝ այժմ տեղեկանք ինչպիսի՞ ընթացք ստացան հեղափոխական շարժումները և կուսակցական աշխատանքը ռեակցիայի տարիներին ու հետագայում, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան։

Երկրի մյուս մասերի ու քաղաքների նման 1907 թվականից Երևանում ևս միանում են ռեակցիայի բոլոր ուժերը ընդդեմ հեղափոխական ուժերի և դրանց արտահայտությունների։ Սակայն ռեակցիան ևս անզոր եղավ ընկճել Երևանի աշխատավոր մասսաների հեղափոխական ոգին [1]։ Թե՛ ռեակցիայի տարիներին և թե՛ մանավանդ 1910—1917 թվականներին Երևանի աշխատավոր բնակչության ու աշակերտության դասակարգային պայքարը ամենևին չի ընդհատվել։ Այդ, նայած պայմաններին, մերթ արտահայտվել է դույլերով ու հրաժարումներով, մերթ մամուլի միջոցով ծավալված պրոպագանդայով, մերթ մարքսիստական տեսական մտքի մասսայականացմամբ, մերթ էլ զանազան շարժումներով։ 1907 թ. դեկտեմբերի վերջերին և 1908 թ. սկզբին նորից են գործադուլ անում Հ. Եղիազարյանի բաղնիքի բանվորները։ Գործադուլավորները ձեռնարկատերերից պահանջում են բարձրացնել աշխատավարձը, բանվորական օրվա տեւողությունը սահմանել 8 ժամ, տարեկան տալ երկու շաբաթ տեւողությամբ արձակուրդ, աշխատավարձ վճարել հիվանդ օրերի ու գործադուլի ժամանակվա համար և այլն։ Եղիազարյանը երկար ժամանակ համառում է և գործադուլը ճնշելու համար նույնիսկ դիմում է նահանգապետի օգնությանը։ Բայց իզուր, գործադուլավորները մնում են անդրդվելի և հարկադրում են ձեռնարկատիրոջը կատարել որոշ զիջումներ։ Բաղնիքում աշխատանքը վերսկսվում է փետրվարի սկզբներին [2]։

Արխիվային նյութերից երևում է, որ 1908 թ. սկզբներին հանգիստ չէր դրությունը նաև արական գիմնազիայում։ Նահանգական պահնորդական վարչությունը հատուկ հսկողություն էր սահմանել գիմնազիայի բարձր՝ 6, 7, 8-րդ դասարանների աշակերտների վրա ու հետաքրքրվում էր նրանց գործունեությամբ, դասերից բացակայելու պատճառներով [3]։

Ռեակցիայի տարիներին, սակայն, ամենափայլուն էլույթները

1 ЦГИА СССР в Москве, ф. ДП, 4 д.-во, 1907, д. 87, ч. 2, թ. 14։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը, գ. 57, մաս 6, թ. 12։

1 Ս. Պ. Ազոյան, Բանվորական շարժումները Հայաստանում 1905—1907 ԹԹ., էջ 168։
2 Տե՛ս Մ. Վ. Ալգումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 ԹԹ., Երևան, 1959, էջ 233—234։
3 ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 4, գ. 342, թ. 5։

ունեցել են թեմական դպրոցի աշակերտները։ Այստեղ դրությունը լարված էր հատկապես 1908 թ. նոյեմբերից մինչև 1909 թ. հունվարն ընկած ժամանակամիջոցում, երբ դպրոցի աշակերտները միահամուռ պայքարի էին դուրս եկել ընդդեմ դպրոցում հաստատված անտանելի կարգ ու կանոնի, աշակերտների նկատմամբ եղած անվստահության ու հետապնդումների, անպետք դեկավարության, մանկավարժական խորհրդի ապօրինի գործողությունների և, հատկապես դպրոցի տեսուչ Տիգրան Աղամալյանի, որին մի հանգամանք արդարացի կերպով դիտում էին որպես բոլոր ապօրինությունների գլխավոր հեղինակներից մեկը [1]։ Հուզված աշակերտները առաջին հերթին պահանջում են տեսչի և ուսուցչի պաշտոնից հեռացնել Տիգրան Աղամալյանին։ Նախաձեռնողի դերում հանդես են գալիս 6-րդ դասարանի աշակերտները, իսկ մյուս դասարանցիները պաշտպանում են նրանց։ Դեպքերը սկսվում են 1908 թ. նոյեմբերի 24-ից, երբ 6-րդ դասարանի աշակերտները չեն ցանկանում լսել Տ. Աղամալյանի դասը և պահանջում են, որ նա հեռանա դասարանից։ Վերջինս աշակերտներին ղղվեցրել էր իր հակամանկավարժական մեթոդներով։ 4-րդ, 5-րդ և 6-րդ դասարանի աշակերտները թեմական դպրոցի հոգաբարձությանն ուղղած իրենց դիմումում գրում են, որ իրենք «բազմակողմանի քննելով նրա ամբողջ մանկուկս տարվա ուսուցչական և տեսչական գործունեությունը», գտել են, որ «նախ, Նա իր հակամանկավարժական և անպետք ուսուցչությամբ անարժան է» իրենց դպրոցի «ուսուցչության պատիվը կրելու և հետու է աշակերտության համակրանքը վայելելուց. երկրորդ, որ նա անընդունակ է և անպատրաստ է» այդպիսի մեծ դպրոցի տեսուչ լինելու։ «Ուստի աշակերտությունը» վճռել է «այլևս չհանդուրժել պ. Աղամալյանի դասերին և դիմել Ձեզ հեռացնելու նրան ուսուցչության և տեսչության պաշտոնավարությունից մինչև դեկտեմբերի 1-ը», զգուշացնելով, որ նրան չհեռացնելու դեպքում որոշել են իրենք իրենց իրավունքները պաշտպանել՝ միահամուռ դասադուլ հայտարարելով [2]։ Այդ առթիվ հրավիրված մանկավարժական խորհրդի նիստերը որոշում են չդիջել աշակերտներին։ Սկսվում է աշակերտների մասսայական դասադուլը։ Կաթողիկոսի ուղարկած պատվիրակը անզոր է լինում դասադուլը դադարեցնելու և աշակերտներին հանդստացնելու խնդրում։ Գնալով դեպքերն ավելի սուր բնույթ են ստանում։ Սկսվում

1 Նա, Պատմություն երևանի Հայոց թեմական հոգևոր դպրանոցի, Թիֆլիս, 1914, էջ 535։

2 Նույն տեղը։

էն հետաքննություններ, հոգաբարձությունն ու մանկավարժական խորհուրդը որոշում են արձակել բարձր դասարանների աշակերտներին։ Դեպքերի այդպիսի ընթացքը տեղիք է տալիս և հասարակության ընդհանուր դժգոհության։ Տեսուչ Աղամալյանը վերջ ի վերջո հարկադրված է լինում դիմել իր պաշտոնից ազատվելու համար, իսկ մանկավարժական խորհուրդը 1909 թ. հունվարի 20-ին կայացրած իր հատուկ նիստում որոշում է բոլոր ջանքերը գործադրել դպրոցի նորմալ առօրյան վերսկսանգնելու։ Ուժեղացվում է հսկողությունը աշակերտության վրա, նրանց արգելվում է իրենց պատի թերթում գրական-գեղարվեստական հոդվածներից բացի այլ բնույթի նյութեր տեղադրել [1]։

Թեմական դպրոցի օրինակով 1910 թ. հոկտեմբերի վերջերին դասադուլ են հայտարարում արական գիմնազիայի բարձր դասարանի աշակերտները։ Դպրոցի դիրեկցիան դասադուլին վերջ տալու համար դիմում է կարուկ միջոցների։ Առանց հապաղելու դպրոցից հեռացնում են դասադուլին առավել ակտիվ մասնակցած վեց աշակերտ, իսկ մյուս աշակերտների նկատմամբ սահմանվում է խիստ հսկողություն [2]։

Արխիվային նյութերից երևում է, որ 1910—1912 թվականներին քաղաքի որոշ շրջաններում տարածվում են ցարական պահնորդական վարչության և գրաքննության կողմից խիստ արգելված, ազատագրական շարժման ոգով գրված և հեղափոխական բովանդակություն ունեցող գրքեր, որոնց թվում «Маркс и Энгельс о крестьянстве» գիրքը։ 1913—1914 թվականներին տեղի ունեցած էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսանողների հուզումների օրինակով ըմբոստացումներ են տեղի ունենում նաև Երևանի թեմական դպրոցում։

Չնայած դաժան բռնություններին ու հետապնդումներին, որոնց հետևանքով Երևանի բոլշևիկյան կազմակերպության շարքերը զգալի չափով նոսրացել էին և բավական խախտվել էր կազմակերպության միասնությունը [3], այնուամենայնիվ, և՛ ռեակցիայի տարիներին, և՛, մանավանդ, հետագայում՝ հեղափոխության վերելքի ու առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Երևանում շարունակում է գոյություն ունենալ բոլշևիկյան կուսակցա-

1 Մանրամասը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 8, գ. 73, թ. 124—128, գ. 84, թ. 33—34։

2 Նույն տեղը, ֆ. 1, գ. 652ա, թ. 2։

3 Մռավյան, Հոդվածների, հիշողությունների ժողովածու, էջ 27։

կան խմբակը, որն իր աշխատանքով բարձր է պահում պրոլետարական հեղափոխության դրոշը։ 1910—1912 ԹԹ., ռեակցիայի տարիների համեմատությամբ, Երևանում կուսակցական աշխատանքը բավական աշխուժանում է։ Երևանի բոլշևիկյան խմբակն այդ ժամանակ ղեկավարում էր հին ու կոփված բոլշևիկ Աբշավիր Մելիք-յանը, իսկ խմբակում հեղափոխական ակտիվ աշխատանք էին կատարում Վառն Տեր-Հովսեփյանը, Աբամ Շուշանյանը, Աբշավիր Տեր-Ղազարյանը, Վարդան Բաղդասարյանը և ուրիշներ [1]։



Ա. Մելիքյան (ՀՍՍՌ ռևոլյուցիայի պետական թանգարան)։

Երևանի բոլշևիկյան խմբակի աշխատանքների համար կարևոր ազդակ էր գարձել Աբշավիր Մելիքյանի խմբագրությամբ 1913 թ.

1 Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван, 1957, էջ 27, Մ. Վ. Աբգումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 ԹԹ., էջ 272։

դեկտեմբերից մինչև 1914 թ. հունիս հրատարակվող «Խոսք» թերթը, որին աշխատակցում էին Աբտ. Կարինյանը, Վ. Բաբայանը, Մ. Նեգիբարյանը և ուրիշներ։ Թերթը հրատարակվում էր լեգալ և ուներ հեղափոխական-դեմոկրատական ուղղություն։ Նրա էջերում, սակայն, ժուռնալիստական ամենանուրբ եղանակներով պրոպագանդվում էին մարքսիստական տեսությունը հեղափոխության հարցերում, ապագա հեղափոխության ժամանակ պրոլետարիատի դերի հույժ կարեորությունը, իբրև հին հասարակության «վիրաբույժի», և այլն [1]։ Շուտով թերթը իր վրա է բևեռում ցարական գրաքննության և ոստիկանական օրգանների ուշադրությունը։ 1914 թ. հունիսի 20-ին, թերթի 25-րդ համարը լույս տեսնելուց հետո, արգելվում է նրա հետագա հրատարակությունը։

1907—1917 ԹԹ. քաղաքի բոլշևիկյան խմբակն ու անհատ կոմունիստներ զբաղված էին պրոլետարական հեղափոխության գաղափարների պրոպագանդայով, սոցիալիստական ռևոլյուցիայի համար մասսաներին նախապատրաստելու և ապագա մարտերին նրա ակտիվ մասնակցությունը ապահովելու պատվաբեր գործով։

Այժմ նորից վերադառնանք 1905—1906 թվականներին և համառոտակի ներկայացնենք ցարական պետական օրգանների կազմակերպած ազգային ընդհարումները, որոնք ելնում էին հայոնի «բաժանիր և տիրիր» քաղաքականությունից և տվյալ դեպքում հատկապես նպատակ ունեին ազգերի միջև թշնամանք առաջացնելով, թուլացնել հեղափոխական շարժումների թափը և հնշտությամբ ճնշել այն։ Ցարական կառավարությունը իր տեղական օրգանների միջոցով, օգտվելով տեղական բուրժուական-նացիոնալիստական կուսակցությունների ծառայություններից, ռուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասի հայ-ադրբեջանական ազգային խառը բնակչություն ունեցող քաղաքներում և բազմաթիվ այլ կարգի բնակավայրերում պրովոկացիոն, սուր եղանակներով կազմակերպում է հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումներ և կոտորած։

Ընդհարումները տեղի են ունեցել 1905 և 1906 թվականներին՝ ընդմիջումներով։ Այդ ամբողջ երկու տարում ցարական տեղական օրգանները բոլոր միջոցներով գաղտնաբար ձգտում էին քաղաքի

1 Տե՛ս «Խոսք» (լրագիր), 1913, № 1, 1914, №№ 13, 14, 25, Г. Б. Гарибджанян, Коммунистич. организации Армении в борьбе за победу Советской власти, էջ 27, Մ. Վ. Աբգումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 ԹԹ. էջ 334—337։

հասարակությանը լարված վիճակում պահել՝ հայերի և ադրբեջանցիների միջև թշնամանք սերմանելու միջոցով։ Նրանք մասնակիորեն հասնում են իրենց նպատակին։ Քաղաքում կոտորածները սահուն են ունենում հիմնականում 1905 թ. փետրվար ու մայիս և 1906 թ. մայիս-հուլիս ամիսներին [1]։ Առաջին ընդհարումը տեղի է ունենում 1905 թ. փետրվարի 20—23-ի ընթացքում։ Պահնորդական բաժինը իր պաշտոնական գրության մեջ ճիգ է գործադնում այդ ընդհարումը ներկայացնել իբրև արդյունք շուկայում տեղի ունեցած սովորական մասնավոր կռվի։ Երեք օր շարունակ քաղաքում ադմնապալից դրություն էր, խանութների մի զգալի մասը փակ էր, շատ բանվորներ հրաժարվում էին աշխատանքի դուրս գալուց, պղուշանալով անցանկալի ու մարդասպան ընդհարումներից։ Տարբեր տվյալներով այդ երեք օրվա ընթացքում երկու կողմերից զոհվել և վիրավորվել են 49—80 մարդ [2]։ Որոշ ժամանակ խաղաղվելուց հետո դրությունը նորից է սրվում նույն թվականի մայիս ամսին։ Այդ ամսվա վերջերին՝ 23—29-ը ընկած շրջանում քաղաքի տարբեր մասերում տեղի են ունենում մի շարք ընդհարումներ, նորից է խախտվում քաղաքի տնտեսական կյանքը ձեռնարկություններում ու շուկաներում, նորից է կրկնվում արյունահեղությունը։ Պաշտոնական տվյալներով 7 օրվա ընթացքում սպանվում են 42 և վիրավորվում 28 մարդ [3]։ Ընդհարումից օգտվելով՝ քաղաքի տականքները կատարում են անկարգություններ, կողոպուտ ու թալան [4]։

1905 թ. դեկտեմբերին քաղաքում նորից է դրությունը լարվում [5], բայց հասարակության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ այն ընդհարման չի հասնում և մթնոլորտն աստիճանաբար հանդարտվում է։ Այնուամենայնիվ սև ուժերը չեն դադարում գործելուց։ Հեղափոխական շարժումը քաղաքում ծավալվում էր, նրանց անհրաժեշտ էր սեպ խրել տարբեր ազգություններին պատկանող աշխատավորների մեջ և նրանց ուժերն ուղղել եղբայրասպանության կողմը։ 1906 թվականի մայիս-հուլիս ամիսների ընթացքում քաղաքում պարբերաբար տեղի են ունենում մի քանի ընդհարումներ։ Այդ թվականի մայիսի վերջերին տեղի ունե-

1 ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆ. 33, ցուցակ 2, գ. 140, թ. 3, ցուցակ 3, գ. 172, թ. 1—3, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 576, թ. 51—53, «Կայծ» (լրագիր), 1906, №№ 21, 27, 39 և այլն։

2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 576, թ. 51—53, ՀԿՊ պատմարխիվ, ֆ. 33, ցուցակ 2, գ. 140, թ. 3։

3 ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆ. 33, ցուցակ 3, գ. 172, թ. 1—3։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը, ցուցակ 2, գ. 321, թ. 2։

ցած ընդհարման ժամանակ սպանվել են մի քանի տասնյակ մարդիկ, գերազանցապես արհեստավորական և բանվորական խավերից։ Խանութները մի քանի օր մնացել են փակված, քաղաքի տնտեսական կյանքը մեծապես խանգարվել է։ Դրանից հետո լարված դրությունը ընդհանուր առմամբ շարունակվել է, իսկ հուլիսի 12-ին նորից է տեղի ունեցել ընդհարում, որի ժամանակ հնացած զոհերը շնչին են եղել, սակայն, ինչպես ասված է «Կայծ» թերթում, «...դա բավական» էր ժողովրդի մեջ մեռցնելու քաղաքական մոմենտի տրամադրությունը» և «քաղաքը պանիկի մեջ» գցելու համար [1]։

Հասարակության գիտակից մասի համար միանգամայն պարզ էր, որ ընդհարումները կազմակերպում են ցարական տեղական օրգանները՝ բարձրագույն իշխանությունների դիտությամբ ու գաղտնի հրահանգներով։ Վերջիններս, հանձին գեներալ նահանգապետի, ոստիկանական ու պահնորդական վարչությունների պետերի, կայազորի պետի և այլ պաշտոնյաների ու պետերի, արտաքինից ցույց էին տալիս, թե իրենք որևէ տեղեկություն չունեն ընդհարումներից և նույնիսկ մեծ ջանասիրություն ու եռանդ էին ցուցաբերում դրանք վերացնելու ու քաղաքի նորմալ կյանքը վերականգնելու ուղղությամբ [2]։ Ընդհարումներ կազմակերպող գլխավոր հեղինակներից մեկը՝ ժամանակի գլխավոր հեղինակը վ. Ֆ. Տիղնհաուզենը, ցարական կառավարության աղդաձայց քաղաքականությունը խնամքով քողարկելու և այդ քաղաքականությունից ելնող իր մեղսակցությունը թաքցնելու համար, նույնիսկ կատարում էր հայ-թաթարական (ադրբեջանական) հաշտություն հաստատելու համար դամվածհանձնաժողովի նիստերի նախագահի պարտականությունը [3], իսկ ժամանակի քաղաքագլուխ Մելիք-Աղամալյանը մասամբ իր դյուրահավատության և մասամբ էլ 1892 թվականի քաղաքային կանոնադրության ու հետագայի օրենքների համաձայն ցարական չորահատուկ աստիճանավոր լինելով՝ նահանգապետին ու կայազորի պետին ընդհարումների հեղինակներ դիտելու փոխարեն, հասարակության առաջ նրանց ներկայացնում էր իբրև հաշտություն ու խաղաղություն հաստատողներ, և շնորհակալություն հայտնում նրանց [4]։

Հայ-թաթարական ջարդեր կազմակերպելու ցարական կառա-

1 «Կայծ», 1906, № 21 և 27։

2 Նույն տեղը, №№ 21, 23, 39 և այլուր։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 580, թ. 399։

4 Նույն տեղը, թ. 33։

վարության և նրա տեղական պաշտոնյաների ու օրգանների դեմ վճռականապես հանդես են գալիս բոլշևիկները. «Կայծ» թերթի էջերում մերկացվում են ջարդերի կազմակերպիչները։ Հետևողական կերպով բնակչությանը բացատրելով ջարդերի կազմակերպման իսկական պատճառները, «Կայծ» թերթը հայ և ադրբեջանցի աշխատավոր բնակչությանը կոչ է անում խաղաղ հարաբերությունների պահպանում և ընդհանուր թշնամու դեմ միասնական հանդես գալու անհրաժեշտության։ Բոլշևիկներն իրենց մարտական օրգանում՝ «Կայծում» դրաավոր փաստերի հիման վրա դիմակազերծ էին անում ինքնակալության և նրա տեղական օրգանների խնամքով քողարկած արյունոտուշտ գործունեությունը։ Անդրադառնալով Երևանում տեղի ունեցած ընդհարման դեպքերից մեկին, «Կայծն» իր թղթակիցներից մեկի բերանով կառավարության և նրա աստիճանավորների գրաված դիրքը բնութագրում է հետևյալ կերպ. «Այն ամենախայտառակ դիրքը, որ բռնել է բյուրոկրատիան դեպի իր երկրի և ժողովրդի կարգն ու խաղաղությունը, և... դեպի առաջ մղող քաղաքական նենգամիտ ուղղությունը, արդեն այսօր նույնիսկ մեր ամենահին գավառական անկյուններում ևս ակնհայտ է լինում։ Դիմակը պատռվեց և նրա տակից արդեն երևան եկավ այն արյունոտուշտ անսրտությունը, որ բյուրոկրատիան սկզբունք դարձրած իրեն, նյութում է ժողովրդի աղեխարշ արցունքը, արյուն, ավերն ու կոտորածը. այլևս մեզ համար պարզ են բյուրոկրատիայի խղճմտանքը, նրա հովանավորությունը, վերջապես նրա կեղծ քաղաքական հակումները»[1]։ Քիչ հետո նույն հոդվածագիրը շարունակում է. «Փաստերը հայտարարում ենք ի լուր աշխարհի, թող տարածվի ամենուրեք, որ մենք որքան էլ խաղաղություն ուզենք, որքան էլ տենչանք մի փոքր հանգիստ կյանքի և խաղաղ բարեկամական ձեռք կառկառենք մեր դրացի ազգերին, բայց դա մեզ չի հաջողվիլ, մեզ չեն թողնում, մեզ արգելում են, այո, արգելում են ինքը բյուրոկրատիան, տեղական իշխանությունը. և նրա բոլոր ձեռք առած միջոցները ամեն տեղ և այլուր խաղաղության մասին, բոլորը կեղծ են, շինծու և մի դիմակ՝ խաբելու ժողովրդին»[2]։

Հոդվածագրի այդ վստահ եզրակացությունն իր հիմքում ուներ դրաավոր փաստեր։ Բանը նրանումն էր, որ դեռևս 1906 թ. մարտին պրովոկացիոն նպատակով անհայտ ազգի հաղուստով մի զինվորական և մի անծանոթ քաղաքացի (ամենայն հավանականությամբ նույնպես ծպտված զինվորական) գիշերով առանց պատճառի սպանել էին մի հայ ոստիկանի, որը իր ծառայությունն էր կատարում քաղաքի փողոցներում։ Թերթի հաղորդման համաձայն, այդ կազմակերպել էին տեղական օրգանները։ Սակայն ավելի ցցուն մի փաստ է երևան գալիս ապրիլին։ Այդ ամսվա 24-ի լույս 25-ի գիշերը հայ ոստիկանների վրա են հարձակվում թուրքական հագուստներով ծպտված մի քանի անձնավորություններ, որոնց քաղաքամաս տանելուց հետո պարզվում է, որ դրանք ծպտված զինվորականներ են։ Հայտնի է դառնում, որ այդ պրովոկացիան ակնհայտորեն կազմակերպել են տեղական իշխանությունները[1]։ Այդ որոգայթների ու նենգամտությունների մասին խոսելուց հետո հոդվածագիրը ամփոփում է հետևյալ կերպ. «Այլևս արդյոք կասկած կա՞, որ ներկա կառավարությունը ժողովրդի ոչ թե խնամակալն է և բարեկամը, այլ նրա թշնամին։ Այլևս դիմակը պատռված է. ժողովրդի կասկածը փարատված»[2]։ Ցարական կառավարության նենգամիտ քաղաքականության մերկացման համար ցցուն փաստեր են բերված նաև Թերթի այլ համարներում[3]։ Թերթն իր մի ուրիշ թղթակցի հոդվածով կոչ է անում տեսած փաստերի հիման վրա ճանաչել դավադիր իշխանություններին ու աստիճանավորներին և չենթարկվել նրանց սարքած պրովոկացիաներին։ Ահա թե ինչ է ասված Թերթում այդ մասին. «Չնայած Երևանի ինչպես հայ, այնպես էլ թուրք ազգաբնակությունը անցյալի նման անմիջապես չի ենթարկվում պրովոկացիայի ազդեցության, բայց շատ պրովոկացիան այնպիսի միջոցներով է երևան գալիս, որ ինչպես էլ լինի կարողանա օգտվել ամբոխի անգիտակցությունից[4]։

Մեզ, Երևանի ինչպես հայ, նույնպես և թուրք ազգաբնակության, մնում է բավական համարել այն բոլոր կենդանի փաստերը, որ կատարվել են մեր աչքերի առաջ, վերջնականապես ճանաչած լինելով այդ լուրերը և դեպքերը ստեղծող իսկական աղբյուր՝ ժողովրդի թշնամուն և գիտակցաբար վերաբերվելով բոլոր այդպիսի լուրերին և դեպքերին, երբեք չենթարկվել դրանց ազդեցության. Ե՛ հայ և Ե՛ թուրք ազգաբնակության միակ պատասխանը պիտի լինի նույնանման լուրերին և դեպքերին։ Կորչի պրովոկացիան»[5]։

1 «Կայծ», 1906, № 9։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, №№ 3, 21, 23 և այլն։

4 Հայտնի է, որ նույնպիսի պրովոկացիոն միջոցներով են կազմակերպվել նաև Բաքվի, Ելիզավետապոլի, Նախիջևանի և մյուս քաղաքների ու բնակավայրերի հայ-«թաթարական» (ադրբեջանական) կոտորածները։

5 «Կայծ», 1906, № 3։

Բոլշևիկների պրոպագանդան կարևոր նշանակություն է ունենում։ Բնակչության հսկայական զանգվածները գիտակցում են ազգամիջյան կռիվների ու կոտորածների կորստաբեր լինելը և բոլոր միջոցներով ձգտում են քաղաքում ապրող երկու տարբեր ազգություններին պատկանող բնակչության միջև խաղաղություն ու փոխադարձ վստահություն ստեղծել։ Անդրկովկասի մյուս քաղաքների նման Երևանում ևս ազգամիջյան կռիվներին վերջ տալու համար ստեղծվում է հատուկ հաշտարար հանձնաժողով, որը կազմվում է 1906 թ. փետրվարին հավասար թվով հայ և ադրբեջանցի ներկայացուցիչներից։ Հանձնաժողովը կազմվում է հայ ու ադրբեջանցի բնակիչների ջանքերով նույն ամսի 13-ին կայացած ժողովում, որտեղ կնքվում է մի հատուկ պայմանագիր հետևյալ պայմաններով. ա) ժողովի հավաքված ներկայացուցիչների կազմով ստեղծվում է հաշտարար հանձնաժողով, որը պետք է զբաղվի քաղաքում անդորրության վերականգնման ու պահպանման գործով, բ) այդ նպատակով հանձնաժողովը մշակում է բնակչության վրա բռնությանս ազդելու հատուկ միջոցներ, իսկ եթե քաղաքի որևէ մասում թշնամական ակտեր են տեղի ունենում հայերի և ադրբեջանցիների միջև, ապա ավյալ մասում ապրող հանձնաժողովի անդամը պարտավոր է պարզել հանցագործության հանգամանքներն ու չափը և օգնել համապատասխան օրգաններին՝ հանցագործներին պատժելու համար, գ) հանձնաժողովը պարզում է ազգամիջյան բռնհարումների ժամանակ այս կամ այն անձնավորության ունեցած կորստի չափը և հանձնաժողովի ու ոստիկանական իշխանությունների միջոցով այն հօգուտ տուժողի երկու շաբաթվա ընթացքում բռնագանձում է հանցագործից, դ) հանձնաժողովի անդամների օգնությամբ գավառներում ստեղծվում են հնթակոմիտեներ, որոնք իրենց տեղերում նույնպես պետք է զբաղվեն ազգությունների միջև խաղաղություն պահպանելու խնդրով, ե) ազգամիջյան թշնամանքի ու բռնհարումների վերաբերյալ եղած հարցերը հետաքննել անհապաղ, արտահերթ, զ) պրովոկատորներին առանց հապաղելու հանձնել իշխանության օրգաններին՝ համապատասխան պատիժ տալու համար, է) հանձնաժողովի նախագահ է համարվում քաղաքագլուխը և նրա վրա է դրվում հանձնաժողովի առանձին անդամների և հանձնաժողովի գործունեության պատասխանատվությունը, ը) հանձնաժողովի նիստերում նախագահում է նահանգապետը, և այլն [1]։ Հանձնաժողովը բաղկացած էր 12 հոգուց, որոնցից 6-ը հայեր էին, իսկ մյուս 6-ը՝ ադրբեջանցիներ [1]։ Հանձնաժողովը գործունեություն է ծավալում քաղաքում և նահանգի գյուղական վայրերում՝ հայ և ադրբեջանցի բնակչության միջև հաշտ ու խաղաղ հարաբերություններ ստեղծելու ազնիվ նպատակով։ Սակայն հանձնաժողովը երբեք չէր կարող հասնել իր նպատակին։ Նա ամբողջապես դանվում էր տեղական իշխանությունների հսկողության տակ և առանց դրանց էական որևէ քայլ չէր կարող անել, իսկ հանձնաժողովի նիստերի նախագահ նահանգապետը, հանձնաժողովի որոշումները ի կատար ածող ոստիկանական վարչությունը և իշխանության մյուս ներկայացուցիչներն ու օրգանները, մեղմ խոսքով ասած, շահագրգռված չէին ազգերի բարեկամության հարցով։ Պատահական չէ, որ քանի դեռ երկրում հեղափոխական սիտուացիա էր, հաշտարար հանձնաժողովները և ամեն տեսակ հաշտության պայմանագրերը լիովին անամեջ էին, ամենուրեք գործում էին միայն ցարական իշխանությունները, որոնք ազգությունների միջև ստեղծում էին արհեստական թշնամանք ու անվստահություն։ Հանձնաժողովների և փոխադարձ վստահության պայմանագրերի թույլ կողմը այն էր, որ դրանց նախաձեռնողներն ու կիրառողները իշխանության ներկայացուցիչներն էին։ Ուստի լիովին պետք է միանալ «Կայծ» թերթի այն բնութագրմանը, որ նա ավել է կոտորածների ժամանակ իշխանության ներկայացուցիչների նախաձեռնությամբ կնքված հաշտության պայմանագրերին։ Թերթում մենք կարդում ենք.

«Վերջին ժամանակներս փոխնահանգապետ Կովալյովի ձեռնարկությամբ ինչ-որ հաշտության պայմաններ կնքվեցին։ Այդ հաշտությունը արտաքուստ որքան մտացածին էր և շարունակությունը բազմիցս կատարված նախկին կոմեդիաների, նույնքան և մեր ամենազամիտ հասարակության համար հալած յուղի տեղ էր ընդունվում։ Հենց իրենց ժողովականներին ևս մի արտասովոր բան էր թվում, թե ինչո՞ւ այդ ժողովների ժամանակ տխրահռչակ հովապը գառան մորթի էր հագած...։ Սա արդեն 100-րդ անգամվա հաշտության կոմեդիան էր, որից ճիշտ մի քանի օր հետո պայթեց դարձյալ մարդասպանությունը...։ Չէ՞ որ Թուրաստանի ներքին նահանգների համար զորք է պետք, իսկ այստեղ արդեն ազգային կռիվը բավական ուժեղ զենք է հանգրված պահելու ազատագրական շարժումը» [2]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 580, թ. 270։

2 «Կայծ», 1906, № 39։

Հարցը միանգամայն սպառ է և մեկնություններ կարիք չունի։ Ժողովուրդը ձգտում էր խաղաղության, իսկ իշխանության տեղական օրգանները ընդհակառակը, ամեն կերպ ձգտում էին ազգամիջյան թշնամանքը բորբոքել և խորացնել։

4. ՔԱՂԱՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Նորություններ բաղաքի շինարարության և ճարտարապետության մեջ։ Նոր տիպի հիմնարկային շենքերն ու բնակելի տները, դրանց ճարտարապետական առանձնահատկություններ և թիվը։ Բնակարանային դժվարություններ։ Քաղաքի գրաված տարածությունը և բնակչության խտությունը։ Քաղաքի ճատակագծումը և նոր փողոցների բացումը։ Փողոցների ու ճանապարհների անբարեկարգ վիճակը։ Փողոցների և տների գրանցումը։ Նոր կառուցումներ կատարելու կարգը։ Քաղաքի ճարտարապետի, հողաչափի և տեխնիկի պարտականությունները։ Քաղաքի տեխնիկ Բ. Յա. Մեհրաբյանի կազմած քաղաքի ճատակագիծը։ Փողոցների, տների, հրապարակների և գրոսայգիների թիվը, մեծությունն ու բարեկարգման աստիճանը։ Քաղաքի եկամուտները ու ծախսերը։ Քաղաքային տրանսպորտը մինչև ձիահարշի կառուցումը։ Ձիահարշի կառուցումը։ Քաղաքի լուսավորությունը։ Խմելու ջրի պրոբլեմը և դրա լուծումը։ Քաղաքային հեռախոսային ցանցի ստեղծումը։ Կոյուղու պրոբլեմը։ Հյուրանոցները։ Բաղնիքները։ Ջրոսայգիները։ Անգլիական այգին։ Քաղաքի սանիտարական պայմանները ու առողջապահությունը։ Աղետները։ Քաղաքի ներքին «կարգ ու կանոնը»։ Քաղաքամասերն ու թաղերը։

1879—1914 թթ. ընթացքում քաղաքի կոմունալ պայմանների, արտաքին տեսքի և ներքին կյանքի բնագավառներում տեղի են ունենում զգալի փոփոխություններ։ Այդ ժամանակաընթացքում գլխավոր հեռանկարային հատակագծի հիման վրա բացվում են մի շարք փողոցներ, բավական լայն թափ է ստանում շինարարությունը (թե՛ պետական և թե՛ մասնավոր), նշանակալից փոփոխություններ է կրում քաղաքի ճարտարապետությունը, համեմատական չափով անհրաժեշտ ուշադրություն է դարձվում բարեկարգման վրա, առաջանում և որոշ չափով ձևավորվում է քաղաքի կենտրոնական մասը, նավթային ու գազային լապտերների հետ միասին XX դարի սկզբներից քաղաքը ստանում է նաև էլեկտրական լուսավորություն,

մի փոքրիկ տարածության վրա անց է կացվում ձիաքարշ, կառուցվում է քաղաքի ջրմուղը, ստեղծվում է հեռախոսային ցանց և այլն, և այլն, որոնք իրենց հերթին բավական վերափոխում են քաղաքացիների կոմունալ ու կենցաղային պայմանները։

XIX դարի երկրորդ կեսից, կապիտալիստական հարաբերությունների զարգացման շնորհիվ ծավալվում է և քաղաքաշինությունը։ Կազմվում են քաղաքների հեռանկարային գլխավոր հատակագծեր, և շինարարությունը գերազանցապես կատարվում է այդ հատակագծերի հիման վրա։ Շինարարությունը հիմնականում կատարվում էր քաղաքների, այդ թվում և Երևան քաղաքի կենտրոնական մասում։ Մի քանի տասնյակ տարվա ընթացքում Երևանի կենտրոնական մասը, ծայրամասերի համեմատությամբ, ենթարկվում է զգալի փոփոխության[1]։ Երևանում հողային տարածությունները ունեին տնտեսական մեծ նշանակություն, յուրաքանչյուրը ձգտում էր ինչքան հնարավոր է ավելի ինտենսիվ օգտագործել իր տանը կից եղած հողակտորը։ Այդ էր այն հիմնական պատճառը, որի շնորհիվ սովորաբար բոլոր հողատերերը իրենց տները կառուցում էին դրանց՝ փողոցի կողմի ծայրամասում, փողոցի, այսպես կոչված, կարմիր գծի վրա[2]։ Տներն իրարից ոչ հեռու գտնվելու և հաճախ իրար հետ փողոցի կարմիր գծի ուղղությամբ բարձր պարսպապատերով միացած լինելու հետևանքով, փողոցների երկու կողմերի երկայնքով կազմում էին համատարած գծեր։


Քաղաքի կենտրոնական մասում XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբներում Երևան են գալիս նոր տիպի կառուցվածքներ՝ վարչա-ֆինանսական շենքեր, հյուրանոցներ, ռեստորաններ, կաֆեներ, թատրոնի շենքեր և այլն։ Սրանք ի տարբերություն նախկին ժամանակներում նույն նպատակներին ծառայող շենքերի (որոնք ուղղակի կառուցված էին շինարար վարպետների կողմից առանց հատուկ հատակագծի) կառուցված էին ժամանակի ճարտարապետական պահանջներին համապատասխան՝ ճարտարապետ-մասնագետների տված հատակագծերի հիման վրա, քաղաքի գլխավոր պլանին համապատասխան և հաստատված էին քաղաքային վարչության կողմից[3]։ Երևանում իրրև այդ տիպի կառուցվածքների օրինակներ Հ. Խ. Խալփախչյանը հիշատակում է նահան-

1 Հ. Խ. Խալփախչյան, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, Ереван, 1957, էջ 43։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

գական վարչության շենքը, Նահանգապետի տունը, որոնք գտնվում էին Նահանգական (այժմ Ալավերդյանի) փողոցի վրա և այժմ էլ կանգուն են, պետական գանձատունը Փանահխանի (այժմ Աղիղբեկովի) հրապարակում, կառուցված 1902 թ., պետական բանկի Երևանի բաժանմունքի շենքը, կառուցված 1890—1891 թթ.՝ Կարավանսարայի (նախկին Թումանյանի, այժմ Տեր-Գաբրիելյանի) փողոցի վրա, քաղաքային դումայի շենքը, որը կառուցվել է 1905—



Նահանգական վարչության շենքը Նահանգական (Ալավերդյանի) (մակետ, Երևանի պատմության բանգարան)։

1906 թթ.՝ Բաղարի (այժմ Մարքսի) փողոցի վրա, ուսուցչական սեմինարիան (այժմ պետական համալսարանի կենտրոնական կորպուսը, որի երրորդ հարկը կառուցվել է մեր օրերում՝ 1930-ական թվականներին), արական գիմնազիան, որը կառուցվել է Նահանգական ճարտարապետ Վ. Օ. Սիմոնսոնի նախագծով, և այլն [1]։ Ճարտարապետական առումով գգալի նորություններ են նկատվում նաև բնակելի տների շինարարության մեջ։ Վաճառականները, ձեռնարկատերերը և մյուս հարուստները իրենց տները կառուցում են հա-

[1] *О. Х. Халпахчьян*, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 44։

տուկ պլանով՝ ժամանակակից պահանջներին համապատասխան։ Այդ տները գրեթե առանց բացառության երկհարկանի էին, ճակատային մասը (հաճախ նաև մյուս պատերը) շարված սրբատաշ սև տուֆով (երբեմն օգտագործվել է և կարմիր տուֆը, որը ևս արդյունահանվում էր տեղում)։ Դրանց պատերը ամուր էին, նուրբ շարվածքով։ Ճակատային մասում, մանավանդ կառնիզների ուղղությամբ, քանդակված էին զանազան նախշեր, հաճախ ունեին այունիկներ, խոյակներ, երկրաչափական զանազան ձևեր։ Դրանք նախորդ ժամանակների բնակելի տներից տարբերվում էին նաև այլ հատկանիշներով։ Իբրև կանոն, նոր կառուցվող բնակելի տները փողոցի կողմից ունեին մեծադիր պատուհաններ, ընդարձակ պատշգամբներ, ճաշակավոր նախշեր ունեցող երկաթյա բազրիքներով, նորաձև շրամուտքեր, որոնց փայտե դռներին և դրանց շուրջը՝ սևատուֆ պատի վրա, քանդակված էին ծաղիկներ ու երկրաչափական զանազան ձևեր։

Մեծ էին փոփոխությունները նաև բնակելի տների ներսում։ Եթե նախկինում բնակելի տները մեծ մասամբ բաղկացած էին 1—3 սենյակներից, մեծ տներում սենյակները դասավորված էին իրար կողք-կողքի՝ մի ընդհանուր միջանցքի երկայնքով, իրար հետ չունեին որևէ կապ և առանձին-առանձին կապված էին միջանցքի հետ, ապա այժմ, իբրև կանոն, այդ շենքերը բաղկացած էին ավելի մեծ թվով սենյակներից, որոնք սովորաբար դասավորված էին երկու շարքով, շատերն իրար հետ կապված էին հատուկ դռներով, սենյակներից բացի ունեին այլ հարմարություններ՝ նկուղներ, խոհանոցներ և նույնիսկ լոգարան ու զուգարան [1]։ Սենյակները կառուցված էին մեծ ճաշակով՝ բարձր առաստաղներով (դրանց բարձրությունը սովորաբար 3,5—4 մետրից ավելին էր), նուրբ կառնիզներով, երկնափեղկ ու մեծադիր պատուհաններով, հարթ ու գաջով վարպետորեն ծեփած պատերով։


Տան համար յուրահատուկ զարդ էր պատի վառարանը, որն իր գեղեցկությամբ մինչև օրս էլ դիտողին զարմանք է պատճառում։

Այդ շրջանի թե՛ հիմնարկային և թե՛ բնակելի տներից շատերը պահպանվել են մինչև օրս և կարելի է դրանք տեսնել այժմյան Ալավերդյանի, Նալբանդյանի, Աբովյանի, Տերյանի, Տեր-Գաբրիելյանի, Մարքսի, Ամիրյանի, Սպանդարյանի փողոցներում ու Թումանյանի պողոտայի վրա, իսկ մի մասն էլ քաղաքի վերակառուց-

[1] *О. Х. Халпахчьян*, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 46։

ման շնորհիվ արդեն քանդվել էր, և դրանց տեղում բարձրացել են նոր, հոյակապ շենքեր։

Նոր կառուցվածքները չէին սահմանափակվում միայն նշված բնագավառներով։ Շինարարության ու ճարտարապետության նոր ձևերն իրենց կիրառությունն են գտնում նաև արդյունաբերական ու առևտրական հիմնարկ-ձեռնարկությունների նորակառույց շենքերում։ Երևանի կոնյակի և գինու գործարանները (Շուստովի, Սարաջյանի և այլոց), առևտրական տների և զանազան գործակալությունների շենքերը նույնպես կառուցվում էին նոր պահանջներին համապատասխան։ Դրանք արտադրական և առևտրական նախկին



Ձախ կողմում նահանգական ոստիկանական վարչության և «Ապոլլո» կինոյի շենքը, իսկ աջ կողմում «Վիոն» հյուրանոցը (մակետ, Երևանի պատմության թանգարան)։

հիմնարկների շենքերից տարբերվում էին ո՛չ միայն իրենց մեծությամբ ու շքեղությամբ, այլև բարդությամբ ու հարմարություններով։ Այդ բոլոր շենքերը փողոցի կողմից լավ ձևավորված էին և ոչնչով չէին տարբերվում մյուս՝ ոչ արտադրական շենքերից։ Ավելորդ չէ նշել, որ այդ լավագույն տրադիցիան այժմ էլ ուժի մեջ է մնացել հիմնովին վերափոխված և վերափոխվող Երևանում։ Պատահական չէ, որ մեր մայրաքաղաքի արդի արդյունաբերական

քաղերը իրենց ճարտարապետական կառուցվածքով կատարյալ ներդաշնակ են քաղաքի մյուս մասերի նկատմամբ։

Շինարարության բնույթի և կառուցվածքների տեսակների փոփոխության հետ միասին փոփոխության է ենթարկվում նաև շինանյութերի կազմն ու շինարարական տեխնիկան։ Տեղական բազմագույն տուֆի, կրի ու գաջի հետ միասին երևան են գալիս նաև ցեմենտն ու երկաթը, իսկ աղյուսը, որ պարսկական տիրապետության շրջանում բավականաչափ տարածված շինանյութ էր, աստիճանաբար դուրս է գալիս գործածությունից, եթե չհաշվենք պատի վառարանները և գործարանային որոշ հարմարանքներ։ Խալիփախչյանի, մեզ համար ընդունելի կարծիքով, Հայաստանի քաղաքների, այդ թվում և Երևանի XIX դարի վերջի և XX դարի սկզբների շինարարական տեխնիկայի բնագավառի կարևորագույն նորությունը պատրաստի մետաղյա կոնստրուկցիաների և փողոցահայաց մետաղյա ճաղաշարքեր ունեցող պատշգամբների ու մետաղյա աստիճանների բավական լայն տարածումն էր[1]։ Մետաղյա պատրաստի կոնստրուկցիաները ավելի մեծ չափերով օգտագործվում էին գործարանային կառուցվածքներում, կամուրջների վրա, հասարակական ու վարչական շենքերում։

Մեզ հետաքրքրող շրջանում եկեղեցական կառույցներից հիշատակության արժանի են հայկական նոր եկեղեցին և ռուսական նոր տաճարը։ Վերջինիս շինարարությունը, որ 1901 թ. սկսել էր[2] վ. Զ. Միրզոյանը, ավարտել է Ս. Կիտկինը։ Տաճարը, որը կոչվում էր Նիկոլաևյան, գտնվում էր այժմյան Շահումյանի անվան հրապարակում և կառուցված էր սև ու կարմիր տուֆերից։ Այն կառուցված էր ռուսական եկեղեցական ճարտարապետական ոճով[3]։ Հայկական նոր եկեղեցին նույնպես կառուցված էր բարձր վարպետությամբ, կարմրավուն տուֆից, գտնվում էր այժմյան Չարենցի անվան միջնակարգ դպրոցի տեղում (Ամիրյանի փողոցի վրա) և կոչվում էր ս. Գրիգոր։


Առիթից օգտվելով նշենք, որ 1906 թ. Երևանում եկեղեցիների, տաճարների, աղոթատների, ժամերի ու մզկիթների թիվը հասնում էր 22-ի, որոնցից յուրաքանչյուրին ընկնում էր 1314 բնակիչ, իսկ

1 *О. Х. Халпахчьян*, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 44։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 475, թթ. 1 և 2։

3 *О. Х. Халпахчьян*, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 44։

գերեզմանոցները թվով չորս էին (տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. *4, էջ 18)։*



Նիկոլաևյան ռուսական տաճարը (Երևանի պատմության թանգարան)։

Այդ բոլոր նորակառույցներում՝ թե՛ վարչական ու դպրոցական և թե՛ հասարակական շենքերում ու բնակելի տներում ամենուրեք զգացվում էին հայկական ու ռուսական ճարտարապետության ոճական առանձնահատկությունները։ Դրանք գրեթե առանց բացառության, կառուցվել էին հայկական ու ռուսական ճարտարապետության ոճերի համագրությամբ։ Իսկ «բնակարանային մասսայական շինարարությունը,— ինչպես միանգամայն իրավացիորեն նշում է Հ. Խ. Խալփախչյանը,— դեռևս երկար ժամանակ շարունակում էր կրել տեղական ազգային ճարտարապետության գծերը» [1]։

1 *Հ. Խ. Խալփախչյան,* Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, *էջ* 45:




Նիկոլաևյան ռուսական տաճարի մատուռը (մակետ, Երևանի պատմության թանգարան)։

Խալփախչյանը Երևան քաղաքի բնակելի տների հիմնական զանգվածները բաժանում է երկու խմբի՝ առևտրականների ու արհեստավորների տների և այգեզործների տների, ապա գրում, որ «իբրև կանոն» «առաջիններդ» գտնվում էին «քաղաքի կենտրոնական մասում և երկհարկանի էին» [1]։ *Որ իրոք Երևան քաղաքի այդ ժամանակվա բնակելի տները և՛ իրենց կառուցվածքով, և՛ նշանա-*

1 *Հ. Խ. Խալփախչյան,* Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, *էջ* 45:

կությամբ իրարից մեծապես տարբերվում էին, այդ չի կարող վիճարկվել։ Սակայն մեր ձեռքի տակ եղած նյութերը և այժմյան Երեվանում դեռևս պահպանված հին տների խմբերը թույլ են տալիս մեզ չընդունել Հարգելի մասնագետի այդ բաժանումը, մի բաժանում, որը նրա ասելով ելնում է տնատերերի զբաղմունքի տեսակից։ Կարծում ենք, որ առևտրականների (որի տակ Օ. Խ. Խալփախչյանը հասկացել է նաև վաճառականներին ու հարուստ առևտրականներին) ու արհեստավորների տները ամբողջությամբ վերցրած իրարից զգալի չափով տարբերվում էին՝ չնայած ձևականորեն գրեթե միշտ երկուսն էլ իրենց տան կից ունեին խանութ կամ արհեստանոց։ Այդ տեսակետից էլ ճիշտ կլիներ, որ քաղաքի տները ըստ տնատերերի զբաղմունքի տեսակների, ունեցվածքի չափի և հասարակության մեջ գրաված դիրքի բաժանվեին հետևյալ խմբերի՝ արհեստավորների և մանր առևտրականների տների, այգեգործների տների, զանազան կարգի բանվորների տների և վաճառականների, հարուստ առևտրականների ու խոշոր ձեռնարկատերերի տների։ Ճիշտ է նկատում Օ. Խ. Խալփախչյանը՝ արհեստավորների ու առևտրականների տները հիմնականում գտնվում էին քաղաքի կենտրոնում[1] և զգալի մասով երկհարկանի էին, բայց պետք է նշվի, որ դրանք մեծ մասամբ էժանագին էին և ճարտարապետական առումով որևէ հետաքրքրություն չէին ներկայացնում։ Ճիշտ է նաև այն, որ դրանց կից, սովորաբար առաջին հարկում տեղադրված էր լինում կրպակ-խանութը կամ արհեստանոցը։ Սակայն դրանք մասսայականորեն մի շարք սենյակներից բաղկացած համեմատաբար մեծ շենքեր չէին, այլ 1—3 սենյակներից բաղկացած փոքրիկ տներ։ Այգեգործների տների կառուցվածքի բնորոշ առանձնահատկությունը ևս Օ. Խ. Խալփախչյանը միանգամայն իրավացիորեն համարում է այն, որ դրանք ունեին տան տարածությանը հավասար բարձր առաստաղ ունեցող կիսանկուղներ կամ նկուղներ, որոնք ծառայում էին իբրև մառաններ։ Այգեգործների տների մեծ մասը քաղաքի կենտրոնական մասից դուրս էր գտնվում, իսկ քաղաքի գլխավոր պլանի համաձայն կենտրոնական մասում եղած այգիների զգալի մասը վեր էր ածվում շենքաշածած տարածությունների կամ փոխարինվում փողոցներով։

Բանվորների մեծ մասը (իսկ սեզոնային բանվորներն ամբողջությամբ) ապրում էր հանրակացարաններում, մյուս՝ համեմատաբար փոքր մասի տները, գրեթե առանց բացառության, միհարկանի էին, մեծ մասամբ բաղկացած մեկ միավոր բնակելի տարածությունից, առանց հարմարությունների։ Դրանցից շատերն ուղղակի հյուղեր էին։ Այդ բոլորից խիստ կերպով տարբերում էին գրեթե բացառապես քաղաքի կենտրոնում տեղադրված խոշոր վաճառականների, հարուստ առևտրականների, խոշոր ձեռնարկատերերի՝ Աֆրիկյանների, Տեր-Ավետիքյանների, Գյոզալյանների, Ջանփոլադյանների և ուրիշների բազմաթիվ սենյակներից բաղկացած, երկհարկանի, սրբատաշ տուֆով կառուցված, քանդակազարդ ու հարմարավետ բնակելի շենքերը, որոնցից շատերն առաջին կամ նկուղային հարկում ունեին իրենց ընդարձակ խանութները կամ հարուստ մառանները։



Անգլիական այգու մասերը։ Աջ կողմում «Երիտասարդության և բնկ.» առևտրական տան շենքը, իսկ ձախ կողմում քաղաքային դումայի շենքը (Երևանի պատմության թանգարան)։

Ոչ բնակելի կառուցվածքները ևս կարելի է բաժանել տարբեր խմբերի՝ հասարակական ու վարչական շենքերի, արտադրական շենքերի և այլն։

1 О. Х. Халпахчьян, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 45։

Արխիվային տվյալներով քաղաքի հաշվառված բնակելի և ոչ բնակելի տների թիվը հասնում էր 3461-ի։ Դրանցից բնակելի տները կազմում էին 2541, խանութները՝ 910 և այլն [1]։ Հետագայում տների թիվը դանդաղ, բայց ավելանում է, XX դարի սկզբներին հասնելով ավելի քան 5000-ի։

Քաղաքում 80-ական թվականների վերջերից, կապված բնակչության թվի մեխանիկական աճի հետ, արդեն զգացվում էր բնակարանային սղություն։ XX դարի սկզբներին բնակարանային հարցը ավելի է սրվում ու դառնում այն ժամանակվա համար անլուծելի։ Հենց հիմնականում դրանով պետք է բացատրել բնակարանային վարձի այնքան բարձր և անմատչելի լինելը Երևանում։ 1906 թ. տվյալներով Երևանում, Ալեքսանդրոպոլում և Նոր Բայազետում բնակարանային վարձը արտահայտված էր հետևյալ թվերով [2].

Աղյուսակ 4

№ № կ/կ	Քաղաքի անունը	Բնակարանի մեկ սենյակի վարձը ռ.-ով		
		մեծ (բաղկացած ավելի քան 6 սենյակից)	միջին (բաղկացած 4—6 սենյակից)	փոքր (բաղկացած 1—3 սենյակից)
1	Երևան	7000	350 - 1500	0 350
2	Ալեքսանդրոպոլ .	600 800	300 500	1.0 - 180
3	Նոր Բայազետ . .	—	100 200	50

Աղյուսակի թվերը համեմատելով համապատասխան տեղում բերված աշխատավարձի տվյալների հետ, դժվար չէ եզրակացնել, որ բնակարանի վարձակալումը հասարակության ցածր և միջին խավերի համար ընդհանրապես անմատչելի էր։

Սակայն դժվարությունը միայն բնակարանային վարձի բարձր լինելու մեջ չէր։ Երևանը չուներ ոչ նավթ, ոչ քարածուխ, ոչ էլ անտառներ՝ փայտի համար. այդ բոլորը մեծ դժվարություններով նա տանում էր հեռավոր վայրերից։ 1906 թվականին Երևանում մեկ խոր. սաժեն փայտը վաճառվում էր 40—50 ռուբլով, մեկ փութ քարածուխը՝ 80 կոպեկով, իսկ մեկ խոր. սաժեն աթարը՝ 23 ռուբլով [3]։ Մինչև երկաթուղու կառուցումը վառելիքի գները էլ ավելի բարձր


1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, գ. 25, թ. 34։

2 «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», Эривань, 1908, отд. 4, էջ 14, աղյուսակ № 8։

3 Նույն տեղը, էջ 14։

էին։ Քաղաքի բնակչության զգալի մասի վառելիքը աթարն էր։ Ձմռանը քաղաքը ծածկվում էր աթարի թանձր ծխով, ամենուրեք տարածելով գարշահոտություն։

Մեծ ծախսերի հետ էր կապված նաև լուսավորության հարցը։ XX դարի սկզբներից կառուցված հիդրոէլեկտրակայանները, որոնց մասին մասամբ ասվել է և դեռ հարկ կլինի ասել քաղաքի փողոցների լուսավորության հարցի առթիվ, նույնիսկ նվազագույն չափով չէին լուծում այդ պրոբլեմը, մանավանդ որ էլեկտրական էներգիան իր թանկության պատճառով մատչելի էր միայն շնչին թվով հարուստների համար։ Լուսավորության գրեթե միակ աղբյուրը մնում էր կերոսինը, որի մեկ ֆունտը նշված թվականին վաճառվում էր 3,5—4 կոպեկով [1]։



Ս. տեսարան քաղաքի կենտրոնական մասից (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնդ-կինո արխիվ)։

«Երևանի հայտարարություններ» թերթիկի թղթակիցներից մեկը միանգամայն իրավացի է, որ «Բնակարանային հարց» վերնագրով իր հոդվածում գրում է, թե բնակարանային հարցը Երևանում անտանելի դժվարությունների հետ է կապված, որ այստեղ հասարակության ցածր խավերի համար շատ քիչ հարմարավետ բնա-

1 «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. 4, էջ 14։

կարաններ վարձելը անհնարին է, իսկ վարձելու համար համեմատաբար մատչելի տները զուրկ են ամենատարրական հարմարություններից, ձմռանը սաստիկ ցուրտ են լինում, իսկ աշնան ու գարնան անձրևների ժամանակ օրերով կաթում են[1]։



Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի) փողոցի տեսքը (ՀՍՍՌ ֆոտոֆոնո-կինո արխիվ)։

XX դարի սկզբներին քաղաքը գրավում էր մոտ 90 քառ. վերստ տարածություն, որը կազմում էր 9450 դեսյատին[2]։ Դրա մեջ մտնում էին բուն քաղաքից բացի նաև նրա արվարձանները, այգիները, բանջարանոցները, մշակելի տարածությունները և խոտհարքներն ու արոտավայրերը։ Իր բնակչության թվի համեմատությամբ նախկինի նման Երևանը, այսպիսով, փռված էր մեծ տարածության վրա։ Այդ բացատրվում է ոչ միայն նրանով, որ տների մեծագույն մասը միահարկ էր, այլև քաղաքում մեծ տեղ գրավող բանջարանոցներով ու այգիներով։ Երևանն այնքան լավ իմացող Էմին Տեր-Գրիգորյանը գրում է, որ «Ուրիշ քաղաքներ նույն տարածության վրա, ինչպիսին մեր Երևանն էր, ունեն 100—150 հազար և ավելի բնակիչներ, այնինչ մեր բնակչությունը հասնում է 30.000-ի միայն.

1 «Эриванские объявления», 1911, № 9։

2 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г., отд. 1, էջ 106—107, на 1910 г., отд. 2 և այլուր։ Որոշ աղբյուրներում տրված է այլ թիվ։ Օրինակ՝ 1891 թ. «Кавказск. календарь»-ի տվյալներով 1891 թ. Երևանի գրաված տարածությունը եղել է 35,03 քառ. դեսյատին (отд. 1, էջ 12—13)։ Համապատասխանաբար դրա մեջ չեն մտել արվարձանները։

որովհետև մեզանում ամեն մի տուն իր մի կամ երկու բնակարաններով օգտվում է լայն բակերից, պարտեզներից և նույնիսկ այգիներից»[1]։

Բնակելի տներն ու բնակչությունը չափազանց նոսր էին նույնիսկ քաղաքի կենտրոնական մասում։ Էմին Տեր-Գրիգորյանը նշում է, որ մոտ երեք վերստ երկարություն ունեցող Աստաֆյան փողոցի երկու կողմերում ընդամենը կային 130 տուն, որի մեծ մասը գտնվում էր Ցարական փողոցից (այժմ Սպանդարյանի փ.) մինչև Կաթողիկե եկեղեցին (այժմյան գիտությունների ակադեմիայի հին շենքի բակում) ընկած հատվածում[2]։ Քաղաքային շրջագծի մեջ ընկած շատ տարածություններ կատարյալ ամայի ու անմարդաբնակ էին։


Երևանի պլանավորումը, ինչպես տեսանք սույն աշխատության նախորդ գրքում, սկսվել էր XIX դարի 50-ական թվականներից, երբ այն դարձել էր նահանգական քաղաք և երբ 50-ական թվականների նկատմամբ հաստատվել էր նրա հետանկարային, գլխավոր հատակագիծը։ Ըստ այդ հատակագծի, քաղաքի առանցքը կազմում էր 60-ական թվականներից բացված Աստաֆյան (Աբովյանի) փողոցը[3], որը ձգվում էր քաղաքային շուկայի մոտակայքից դեպի հյուսիս, դեպի Նորք։ Հետագայում նույն հատակագծի համաձայն, որը հաստատել էր Կովկասի փոխարքան, ընդլայնվեցին հիմնական առանցքին՝ Աստաֆյանին զուգահեռ և ուղղահայաց մի շարք փողոցներ՝ Նահանգական, Ամիրխանյան, Դոկտորական, Ցարական և այլն, և այլն։ Դրանց մեծ մասը անց է կացվել 90-ական թվականներին և XX դարի սկզբներին։ Այդ աշխատանքները, այսպիսով, ժամանակագրական առումով և բուն էության կապված էին քաղաքում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ։ Նրա կենտրոնական մասում աստիճանաբար ձևավորվում է կապիտալիստական քաղաքին հատուկ գործի կենտրոնը, խոշոր բուրժուազիայի բաղը, որին հատուկ էին համեմատաբար շքեղ առանձնատներն իրենց պարտեզներով հանդերձ։

Քաղաքի բարեկարգման, բուն գլխավոր հատակագծի նոր փողոցների բացման է։ արդեն եղած փողոցների բարեփոխման հարցերով զբաղվելու համար նահանգապետի կարգադրությամբ Երևա-

1 «Эриванские объявления», 1909, № 42:

2. Նույն տեղը։

3 *О. Х. Халпахчьян*, Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, էջ 42։




Քաղաքի հատակագծի մի մասը (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

Նում 1892 թ. նոյեմբերի 28-ին սահմանվում է հինգ հոգուց բաղկացած մի հատուկ հանձնաժողով, որը պլհասվորում էր քաղաքային ասիկանասպետը[1]։ Ասիկանասպետին հասցեագրված պաշտոնական գրություններից պարզ կերպով երևում է, որ հանձնաժողովը պարտավոր էր հիմնականում զբաղվել քաղաքի Դեմիրբուլաղ և Շահար

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, թ. 2։*

քաղամասերի պլանավորմամբ, նա պետք է որոշեր, թե որտեղով և ինչպիսի փողոցներ պետք է անցկացվեն, թե ինչպիսի հողատարածություններ ու շենքեր են ընկնելու նոր բացվելիք փողոցների տակ և ինչ եղանակներով պետք է յուրացվեն այդ տարածությունները[1]։ Հանձնաժողովն իր կատարած աշխատանքների մասին պարտավոր էր ամսական երկու անգամ (տվյալ ամսվա 1-ին և 15-ին) ինֆորմացիա ներկայացնել նահանգապետին[2]։ Հանձնաժողովի աշխատանքը հիմնականում ծավալվում է 1892—1894 թթ. ընթացքում. Նրա գործունեությունը մեծ մասամբ կապված էր նոր բացվող Նահանգական (այժմ Ալավերդյանի) փողոցի ձևավորման աշխատանքների հետ։ Իր առաջին նիստում (1892 թ. դեկտեմբերի 7-ին) հանձնաժողովը որոշում է դեկտեմբերի 10-ին ամբողջ կազմով տեղում որոշել այդ նոր փողոցի ուղղությունը, դիտել, թե ինչպիսի բնակելի և ոչ բնակելի տարածություններ պետք է յուրացվեն, կազմել այդ տեղամասերի տերերի մանրամասն ցուցակը, մոտավորապես որոշել յուրացվող տեղամասերի մեծությունները ու դրանցից յուրաքանչյուրի արժեքը և առաջին իսկ նիստին հրավիրել դրանց տերերին՝ հենի մասին անհրաժեշտ բանակցություններ վարելու համար[3]։ Հանձնաժողովի աշխատանքի ընթացքից և նահանգապետի, քաղաքային վարչության, հանձնաժողովի ու բարձրագույն իշխանությունների միջև տեղի ունեցած գրագրություններից երևում է, որ, ինչպես նահանգական, այնպես էլ վերափոխվող ու նոր բացվող մյուս փողոցների պլանավորումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Մի կողմից՝ տների ու այլ տարածությունների կատարյալ քաոսային դասավորությունը, իսկ, մյուս կողմից, դրանց յուրացման համար պահանջվող անհրաժեշտ գումարների բացակայությունը հնարավորություն չէին տալիս հանձնաժողովի աշխատանքը արդյունավետ դարձնելու[4]։ Նահանգական փողոցի, ինչպես և քաղաքի շատ փողոցների բացման կամ վերապլանավորման գործում մեծ խոչընդոտներ էին հարուցում նաև անվանի վաճառականները, խոշոր ձեռնարկատերերն ու մյուս «անվանի» մարդիկ։ Նրանք բոլոր միջոցները գործադրում էին, որպեսզի քաղաքի հատակագծի վերակառուցման ընթացքում հաշվի նստեն իրենց հետ և իրենց առանձնատներն ու մյուս ունեցվածքները չենթարկեն պլանի տակ

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, թթ. 1 և 2։*
2 *Նույն տեղը։*
3 *Նույն տեղը, թ. 18։*
4 *Նույն տեղը, թթ. 94, 132։*



Քաղաքի հատակագծի մի մասը (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։


նում 1892 թ. նոյեմբերի 28-ին ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած մի հատուկ հանձնաժողով, որը պլհավորում էր քաղաքային ասոիկանապետը[1]։ Ասոիկանապետին հասցեագրված պաշտոնական գրությունից պարզ կերպով երևում է, որ հանձնաժողովը պարտավոր էր հիմնականում զրաղվել քաղաքի Դեմիրբուլաղ և Շահար

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, թ. 2։

թաղամասերի պլանավորմամբ, նա պետք է որոշեր, թե որտեղով և ինչպիսի փողոցներ պետք է անցկացվեն, թե ինչպիսի հողատարածություններ ու շենքեր են ընկնելու նոր բացվելիք փողոցների տակ և ինչ եղանակներով պետք է յուրացվեն այդ տարածությունները[1]։ Հանձնաժողովն իր կատարած աշխատանքների մասին պարտավոր էր ամսական երկու անգամ (ավյալ ամսվա 1-ին և 15-ին) ինֆորմացիա ներկայացնել նահանգապետին[2]։ Հանձնաժողովի աշխատանքը հիմնականում ծավալվում է 1892—1894 թթ. ընթացքում. Նրա գործունեությունը մեծ մասամբ կապված էր նոր բացվող Նահանգական (այժմ Ալավերդյանի) փողոցի ձևավորման աշխատանքների հետ։ Իր առաջին նիստում (1892 թ. դեկտեմբերի 7-ին) հանձնաժողովը որոշում է դեկտեմբերի 10-ին ամբողջ կազմով տեղում որոշել այդ նոր փողոցի ուղղությունը, դիտել, թե ինչպիսի բնակելի և ոչ բնակելի տարածություններ պետք է յուրացվեն, կազմել այդ տեղամասերի տերերի մանրամասն ցուցակը, մոտավորապես որոշել յուրացվող տեղամասերի մեծությունները ու դրանցից յուրաքանչյուրի արժեքը և առաջին իսկ նիստին հրավիրել դրանց տերերին՝ ընի մասին անհրաժեշտ բանակցություններ վարելու համար[3]։ Հանձնաժողովի աշխատանքի ընթացքից և նահանգապետի, քաղաքային վարչության, հանձնաժողովի ու բարձրագույն իշխանությունների միջև տեղի ունեցած գրագրություններից երևում է, որ, ինչպես Նահանգական, այնպես էլ վերափոխվող ու նոր բացվող մյուս փողոցների պլանավորումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Մի կողմից՝ տների ու այլ տարածությունների կատարյալ քաոսային դասավորությունը, իսկ, մյուս կողմից, դրանց յուրացման համար պահանջվող անհրաժեշտ գումարների բացակայությունը հնարավորություն չէին տալիս հանձնաժողովի աշխատանքը արդյունավետ դարձնելու[4]։ Նահանգական փողոցի, ինչպես և քաղաքի շատ փողոցների բացման կամ վերապլանավորման գործում մեծ խոչընդոտներ էին հարուցում նաև անվանի վաճառականները, խոշոր ձեռնարկատերերն ու մյուս «անվանի» մարդիկ։ Նրանք բոլոր միջոցները գործադրում էին, որպեսզի քաղաքի հատակագծի վերակառուցման ընթացքում հաշվի նստեն իրենց հետ և իրենց առանձնատների ու մյուս ունեցվածքները չենթարկեն պլանի տակ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, թթ. 1 և 2։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թ. 18։
4 Նույն տեղը, թթ. 94, 132։

դնելու վտանգին։ Ընդհակառակը, նրանց ցանկությունն այն էր, որ նոր բացվող փողոցներն անցնեն իրենց տների առջևով։ Պատահում էին նույնիսկ այնպիսի դեպքեր, երբ որևէ «անվանի» մարդու տան պատճառով փոխում էին փողոցի ուղղությունը կամ զգալի շեղումներ կատարում արդեն հատատված հետագիծից։ Այսպես, օրինակ՝ նահանգական փողոցի մի հատվածի լայնությունը բավական փոքրացնում են միայն այն բանի համար, որ Աֆրիկյանների ու ամն Հաջի Համիդ Մամեդ-օղլիի տներն ընկնում էին կարմիր գծից ներս[1]։ Դա եզակի դեպք չէր։




Քաղաքի կենտրոնական մասի ընդհանուր տեսքը (մակետ, Երևանի պատմության թանգարան)։

90-ական թվականներին և XX դարի սկզբներին զգալի աշխատանքներ են կատարվում նաև մյուս փողոցների՝ Տեր-Ղուկասովի, Նազարովի, Յարական, Աստաֆյան, Դոկտորական ու այլ փողոցների վերակառուցման ու բարեկարգման ուղղությամբ։ Դրանցից համեմատաբար նոր է Տեր-Ղուկասովի անունը կրող փողոցը, որը բացված էր դեռևս 60-ական թվականներին։ Այդ փողոցի անունը կոչեցին Տեր-Ղուկասով 1881 թ.՝ հայ հայտնի զորավարի՝ Արշակ Հարությունյան Տեր-Ղուկասյանի անունը հավերժացնելու համար։ Փողոցի վերանվանումը կատարվել է քաղաքային դումայի

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, թ. 145։*

վճռով 1881 թ. հունվարի 25-ին Պողոս Պետրոս եկեղեցում գեներալի հոգեհանգիստը կատարելու ժամանակ[1]։

Քաղաքի այլ փողոցների անունների մի մասը ևս կապված էր առանձին անձնավորությունների անունների հետ՝ Բեհբուդովի, Ջատաֆևի, Նազարովի և այլն։ Իրրև կանոն, քաղաքի փողոցներն ունեին իրենց հատուկ անունները, համարներով փողոցներ Երևանում ընդհանրապես չեն եղել։



Հայկական փողոցի (Հենինի պողոտա) ընդհանուր տեսքը (Երևանի պատմության թանգարան)։

Քաղաքային վարչությանը ներկայացրած քաղաքային ճարտարապետի՝ 1891 թ. ապրիլի 10-ին վերաբերող զեկուցագրից երևում է, որ քաղաքի կենտրոնական փողոցների մեծ մասը գտնվում էր միանգամայն անբարեկարգ վիճակում։ Նրա զեկուցագրում նշվում են, որ Յարական փողոցում կա 200 շեղջ հող, քար ու շինարարության զանազան մնացորդներ, Բեհբուդովի փողոցում՝ 260 շեղջ, Նազարովի փողոցում՝ 175, Հայկականում՝ 100, Տեր-Ղուկասովում՝ 290, Թարխանովի փողոցում՝ 540, իսկ Սուլթանովի փողոցում՝ 200

1 *«Պատկ», 1881, № 3։*

շեղջ [1]։ Նա գտնում է, որ այդ շեղջերը պետք է ցրվեն փողոցներով մեկ։ Ճարտարապետի զեկուցագրում նշվում է նաև, որ քաղաքի՝ իր ստուգած փողոցներում անհրաժեշտ է կառուցել 19 կամուրջներ [2] և վերակառուցել արդեն գոյություն ունեցող 13 կամուրջները [3]։

Դրությունը շատ քիչ է փոխվել XX դարի սկզբներին։ Քաղաքային վարչության կազմած տեղեկագրերից մեկի համաձայն (1912 թ.) խիստ անբարեկարգ վիճակում էին գտնվում դեպի կայարան տանող ճանապարհներն ու փողոցները։ Այդ աննորմալ վիճակին վերջ տալու համար քաղաքային վարչությունն իր տեղեկագրում նշում է այն բոլոր աշխատանքները, որոնք պետք է կատարվեն բատ հերթականության։ Հիմնական աշխատանքը փողոցների և ճանապարհների սալահատակումն էր։ Ըստ տեղեկագրի, առաջին հերթին պետք է 485 սաժեն երկարությամբ և 3,5 սաժեն լայնությամբ խճապատավի երկաթուղային կայարան տանող ճանապարհը, 280 սաժեն երկարությամբ և 3,5 սաժեն լայնությամբ՝ Մոլոկանի փողոցը, 600 սաժեն երկարությամբ և 3,5 սաժ. լայնությամբ՝ Բազարի փողոցը, 650 սաժեն երկարությամբ և 3,5 սաժ. լայնությամբ՝ Կայարանային փողոցը։ Երկրորդ հերթին պետք է սալահատակվեին Նորքի ճանապարհի և Նահանգական ու Ցարական փողոցների մի մասը, երրորդ հերթին՝ Թարխանովի, Կարավանսարայի, Դոկտորական և Բաղնիքի փողոցների մի մասը, և այլն [4]։ Ընդ որում նախատեսվում էր փողոցի ամբողջ հատվածը սալահատակել ոչ թե նրա ամբողջ լայնքով, այլ միայն երեք ու կես սաժեն (7,44 մետր) լայնությամբ, որպեսզի դրանով լոկ անխափան երթևեկության հնարավորություն ստեղծվի նշված փողոցներից դեպի կայարան։ Քաղաքային վարչության նախագծած այդ աշխատանքների ծավալն ու բնույթը ամբողջական ձևով ներկայացնելու նպատակով ավելորդ չենք համարում նշված տեղեկագրի հիմնան վրա ներկայացնել հետևյալ № 41 աղյուսակը [5]։

Քաղաքային վարչությունը նույնիսկ նվազագույն չափով չէր կարող իրականացնել իր այդ նախագծումները։ Ինչպես կտեսնենք իր տեղում, քաղաքի բարեկարգման համար նա չուներ անհրաժեշտ միջոցներ, նրա ձեռքում կուտակվող միջոցների մեծագույն մասը

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 260, թ. 78—79։

2 Նույն տեղը։

3 Դրանք փոքրիկ կամրջակներ էին, որ կառուցվում էին փողոցով անցնող ջրի առուները վրա՝ ջուրը փողոցի մեկ կողմից մյուսը անցկացնելու համար։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 478, թ. 68։

5 Նույն տեղը։

№ պ/կ	Փողոցների և ճանապարհների անվանումը	Միավոր երկարության սալահատակման ենթակա մակերեսը, քառ. սաժեն	Միավոր մակերեսի սալահատակման ենթակա երկարությունը, սաժեն	Ընդհանուր մակերեսը, քառ. սաժեն	Ընդհանուր ծախսը, ռուբլի
	ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹ				
1	Դեպի կայարան տանող նոր ճանապարհ	485	3,5	1697,5	39382
	Այդ ճանապարհի հիմքի կառուցումը	—	—	—	4290
2	Մոլոկանի փողոց	280	3,5	980	194.236
3	Բազարի փողոց	600	3,5	2100	
4	Կայարանի փողոց	650	3.5	2275	
	ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹ				
5	Նորքի ճանապարհ	650	»	2275	138.040
6	Նահանգական փողոց	530	»	1855	
7	Ցարական փողոց	520	»	1820	
	ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹ				
8	Թարխանովի փողոց	730	»	2555	175.392
9	Կարավանսարայի փողոց	580	»	2030	
10	Դոկտորական փողոց	500	»	1750	
11	Բաղնիքի փողոց	350	»	1225	
	ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹ				
12	Տեր-Ղուկասովի փողոց	820	»	2870	140.070
13	Արխիեպիսկոպոսի փողոց	135	»	472.5	
14	Նազարովի փողոց	430	»	1505	
15	Կոնդի փողոց	440	»	1190	
	Ընդամենը	7000	—	26600	621.410

ծախսվում էր բոլորովին այլ նպատակներով։ Այնուամենայնիվ, նա հարկադրված էր եղած հնարավորությունների չափով առաջին հերթին զբաղվել քաղաքի հիմնական զարկերակների՝ դեպի կայարան տանող ճանապարհների և փողոցների որոշ բարեկարգման հարցով, որը հարուցվել էր երկաթուղին կառուցվելու հետ միասին։ Սակայն նույնիսկ 1906 թ. քաղաքը շատ քիչ տաների ճանապարհով չէր կապված երկաթուղային կայարանի հետ, մոտ 1,5 կմ նրանից անջատված էր այնպիսի դժվարանցանելի տարածությամբ, որ կառավարիչներն ու սպասավորները հաճախ հրաժարվում էին քաղաքից կայարան և հակառակ ուղղությամբ երթևեկել [1]։ Նույն այդ թվականին

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 661, թթ. 58, 61։

կայարան տանող ճանապարհը բարեկարգելու և խճապատելու համար քաղաքային վարչությունը բաց է թողնում 7650 ռուբլի և այդ աշխատանքը կապալով տալիս է երկու քաղաքացիների[1], որոնք և գումարի թուլլատրած սահմաններում կատարում են իրենց հանձնարարված աշխատանքը։ Սակայն դրությունը դրանով էապես չի փոխվում։ Աշխատանքը անորակ, կիսատ-պռատ կատարելու, մրշտական հսկողություն չունենալու, խանգարումները ժամանակին չվերացնելու պատճառով կայարան տանող ճանապարհը միշտ գտնվում էր անբարեկարգ վիճակում։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1909 թ. համարներից մեկում հետևյալ կերպ է նկարագրվում այդ ճանապարհը.

«Աննկարագրելի բաներ էին պատմում մեզ քաղաքից մինչև վակզալ տանող ճանապարհի մասին։ Մենք դժվարանում ենք հավատալ այդ տեղով անց ու դարձ անողներին։ Որոշեցինք ամսույս 12-ին աչքի անցնել այդ ճանապարհը, և մենք եկանք այն եզրակացության, որ իրոք, ոչ լիովս կարող է արտահայտել և ոչ գրիչ նկարագրել այն, ինչ մենք տեսանք։ Սարսափելի ցեխ, տիղ, ջրերի հոսանք... կառքը ամեն վայրկյանում սպառնում է շուռ գալ. շատ տեղերում խրվում է ավելի քան կես արշին տիղի մեջ, շատ տեղերում էլ ձիանքը անասելի տանջանքներով են դուրս քաշում կառքը... Իսկ ոտով անց ու դարձի մասին երևակայելն անկարելի է»[2]։

Թղթի վրա են մնում նաև կայարան տանող ճանապարհների ու փողոցների բարեկարգման ու սալահատակման համար քաղաքային վարչության վերը նշված նախագծումները։

Պակաս վատթար չէր դրությունը նաև քաղաքի մյուս փողոցներում ու թաղերում։ Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ զանազան ֆոնդերի բազմաթիվ գործերում խոսվում են տեղատարափ անձրևների ու ձյան հալոցքի հետևանքով փողոցները փլչանալու, քաղաքի տարբեր մասերի անբարեկարգության, կամուրջների բացակայության հետևանքով երթևեկության խափանման և քաղաքի առօրյա շատ հարցերի մասին[3]։


Անբարեկարգության պատճառներից մեկն էլ այն պետք է համարել, որ բարեկարգման գրեթե բոլոր տիպի աշխատանքները տալով կապալով՝ քաղաքային վարչությունը կապալառուների վրա

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 661, թթ. 58, 61, 67, 128։

2 «Эриванские объявления», 1909, № 10:

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գգ. 291, 589, թ. 2, գ. 671, թ. 30, ֆ. 53 с/117, գ. 260, թթ. 101, 102 և այլուր։

անհրաժեշտ հսկողություն չէր սահմանում և աշխատանքը ընդունում էր անորակ կամ կիսատ-պռատ վիճակում։ «Ցավալին այն է, որ մեր ուսրաավայի գործունեության մեջ մի որոշ սիստեմ չկա և այդ սիստեմի բացակայության շնորհիվ, ամենայն ինչ շինվում է, վերաշինվում է, կատարվում է, կարգի է բերվում կիսատ-պռատ, հարևանցի, անկանոն, խաբուսիկ... այդ է պատճառը, որ շարունակ, համարյա ամեն տարի պատկառելի գումարներ են ծախսվում մեր փողոցների վրա, բայց անօգուտ»[1],— միանգամայն տեղին ու առանց չափազանցնելու նկատում է ականատես և գործին տեղյակ թղթակիցը։



Մի տեսարան Կոնդ թաղամասից (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Նույնպիսի խստությամբ է նկարագրվում քաղաքի անբարեկարգ վիճակը դեռևս 90-ական թվականների կեսերին։ «Նախկին քաղաքագլուխ Վասիլ Գեղամովի շրջանի կորստաբեր և անհաջող հանդամանքների շնորհիվ քաղաքը դառնվում է կատարյալ ողբալի վիճակի մեջ. շատ կենսական խնդիրներ չհարուցված և չլուծված, քաղաքը պարտքերի մեջ թաղված, փողոցները աղտոտ, օդն ու ջուրը անմաքուր...»[2]։

1 «Эриванские объявления», 1909, № 37:

2 «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1893, № 12, էջ 1672։

Քաղաքային վարչությունը այդ դրությունը փոքր ինչ մեղմացնելու նպատակով քաղաքի բարեկարգման համար իր հիմնական եկամուտներից հանվող համեստ բաժնից բացի, որի մասին խոսք կլինի քաղաքի եկամուտներին ու ծախսերին անդրադառնալիս, որոնում էր և այլ աղբյուրներ ու միջոցներ։ Այսպես, 1912 թ. հունվարին տեղի ունեցած իր նիստերից մեկում քաղաքային դուման որոշում է ընդունում երկաթուղով ստացված ապրանքների վրա հօգուտ քաղաքի դնել որոշակի հարկ և դրանից ստացված միջոցներով բարեկարգել քաղաքից երկաթուղային կայարան տանող Կայարանի, Բազարի և Մոլոկանի փողոցները [1]։



Մոլոկանի փողոցի ընդհանուր տեսքը (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Քաղաքային վարչությունն ու դուման, հենվելով գոյություն ունեցող օրենքներից, ամեն կերպ ձգտում էին քաղաքի բարեկարգման և նրա մայթերն ու փողոցները կարգին վիճակում պահելու պարտականությունների զգալի մասը հանձնարարել բնակչությանը ձրիաբար կատարելու։ Ըստ պարտադիր որոշման, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր էր մաքրել իր տան շրջակայքը և իրեն պատկանող տեղամասի երկայնքով ձգվող մայթը, պատրաստել ու վերանորոգել վերջինս և աղբը հավաքել հատուկ արկղներում՝ քաղաքից դուրս տանելու համար։ Այդպիսի պարտականություններ կատարում էին նաև շուկաներում՝ խանութպաններն ու կրպակատերերը [1]։ Քաղաքացիները նաև պարտավոր էին յուրաքանչյուրն իր տան դռանը կախել լապտեր, որի վրա գրված լինեն տան համարը և փողոցի անունը [2]։ Իսկ բուն փողոցի մաքրման, բարեկարգման և լուսավորության պարտականություններն ընկած էին քաղաքային ինքնավարության վրա, որը դրանք կատարում էր կապալով տալու միջոցով։

Մեզ հետաքրքրող շրջանում հսկայական փոփածություն ունեցող քաղաքի փողոցներում ջուր էին ցանում անիվների վրա դրված և ձիերով տեղափոխվող երկու-երեք տակառներով։ Ջրցան տակառները քաղաքի կենտրոններից դուրս ոչինչ չունեին անելու, իսկ կենտրոնում երևում էին մեծ ուշացումներով։

Գլխավոր նախագծի հիման վրա քաղաքի ներքին կարգ ու կանոնը պահպանելու համար կարևոր նշանակություն ունեին փողոցների ու դրանց վրա գտնվող տների դրանցումը, ինչպես և տնային գրքեր սահմանելը։ Գոյություն ունեցող օրենքի հիման վրա 1908 թ. հրապարակվում է մի պարտադիր որոշում, ըստ որի Երևանում և Ալեքսանդրոպոլում քաղաքային վարչությունները պարտավոր էին այդ թվականի օգոստոսի 1-ից սկսած չորս շաբաթվա ընթացքում քաղաքների բոլոր փողոցների բոլոր խաչմերուկներում փակցնել հատուկ ցուցատախտակներ, դրանց վրա նշելով տվյալ փողոցի վրա եղած բոլոր տների համարները [3]։ Դրանից մի քանի ամիս անց, կարգադրվում է յուրաքանչյուր տանտիրոջ ունենալ հատուկ կնքված տնային դիրք, որի որպիսությունը սկզբնական շրջանում քաղաքացիների համար հանելուկային էր [4]։

Քաղաքի արտաքին տեսքի վերափոխման համար կարևոր նշանակություն ունեին նոր կատարվող կառուցումները՝ բնակելի տները, խանութներն ու կրպակները, նոր բացված փողոցների երկու կողմերում պատրաստվող մայթերը և այլն։ Եղած պարտադիր կանոնների համաձայն որևէ նոր կառուցում կատարելու համար անհրաժեշտ էր կառուցվող օբյեկտի նախագիծը նախօրոք ներկայացնել քաղաքային վարչության, որը նահանգական վարչության շինա-


1 «Կոչան» (լրագիր), Երևան, 1912, № 29։

2 «Խոսք» (լրագիր), 1914, № 17։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 638, թ. 2։

4 «Эриванские объявления», 1909, № 52։

բարական բաժնի միջոցով ստուգում էր տեխնիկական և այլ առումներով դրա համապատասխանությունը քաղաքի գլխավոր պլանին, ապա թույլատրելու կամ չթույլատրելու մասին կայացնում իր որոշումը։ Ներկայացվող նախագծերը քննարկելիս շինարարական բաժինը ուշադրություն էր դարձնում դրանց ճակատամասերի ձևավորման, մեծության, բարձրության, ծածկի տեսակի և այլ հարցերի վրա [1]։ Շինարարական բաժնի եզրակացությունը ստանալուց հետո հարցը վերջնականապես լուծվում էր քաղաքային վարչությունում։ Մեզ հասած տվյալներով, միայն 1897, 1898 և 1899 թվականներին քաղաքային վարչությունը քննել է այդ տիպի 180 հարց [2]։ Սակայն մեծ թիվ էին կազմում և անօրինական շինարարությունները, որոնք իրենց տեխնիկական ցածր մակարդակով, պրիմիտիվ ճարտարապետությամբ և գլխավոր պլանին անհամապատասխան լինելով մեծ վնաս էին հասցնում քաղաքի վերակառուցման՝ առանց այն էլ շատ սահմանափակ մասշտաբներ ունեցող աշխատանքներին։



Մի տեսարան քաղաքի կենտրոնական մասից (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնոկինո արխիվ)։

1 *Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 316, թ. 42—43, գ. 449, թ. 3 և այլն։*
2 *Նույն տեղը, գ. 449, թ. 3։*

Քաղաքի հատակագծման, քաղաքային նոր շինությունների տեխնիկական հատակագծերի ու նախագծերի կազմման և դրանց ճիշտ կիրառման, անհատական շինարարության համար գոյություն ունեցող կանոնների ճիշտ պահպանման, վարչության կողմից հաստատման ենթակա նախագծերի ու հատակագծերի մասին եզրակացություն տալու, տեխնիկական արխիվի ղեկավարման պարտականությունը և ճարտարապետական ու շինարարական արվեստին վերաբերող թղթեր, զեկուցագրեր կազմելու գործի պատասխանատվությունն ընկած էր քաղաքային ճարտարապետի վրա [1]։

1892 թ. քաղաքային կանոնադրությամբ քաղաքային ճարտարապետի պաշտոն չէր նախատեսված։ Այդ կանոնադրության կիրառումից մի քանի տարի անց, ներքին գործերի մինիստրության միջամտությամբ Կովկասի փոխարքայության քաղաքացիական բաժինը 1898 թ. սեպտեմբերի 30-ին հատուկ շրջաբերականով բոլոր նահանգապետներին ցուցում է տալիս վերացնել քաղաքի ճարտարապետի պաշտոնը [2]։ Նույն թվականի հոկտեմբերի 24-ին թվագրված իր պաշտոնական գրության մեջ Երևանի նահանգապետն առաջարկում է Երևանի քաղաքագլխին ղեկավարվել վերը նշված շրջաբերականով և վերացնել քաղաքային ճարտարապետի պաշտոնը [3]։ Քաղաքային ճարտարապետի ֆունկցիաները դրանից հետո ամբողջապես կատարում էր քաղաքային տեխնիկը և միայն հազվագյուտ դեպքերում, այս կամ այն ճարտարապետական պատասխանատու գործին ընթացք տալու համար, կարող էին ժամանակավորապես դիմել այս կամ այն ճարտարապետի օգնությանը։

Քանի դեռ գոյություն ուներ ճարտարապետի պաշտոնը, քաղաքն ուներ նաև իր հատուկ հողաչափը, որի պարտականությունների մեջ մտնում էին՝ ա) քաղաքի հատակագիծը մշտապես պատրաստի վիճակում պահելը, բ) քաղաքային հողերի պլանների կազմումն ու դրանց պահպանումը, գ) քաղաքի կվարտալների հատակագծերի կազմումը, դրանց վրա նշանակելով բնակելի և ոչ բնակելի տեղամասերը, դ) տեղում հողակտորների մեծությունն ու դրանց տեղաբաշխումը ստուգելը, ե) ըստ փողոցների տնային տեղամասերի կազմումն ու համարակալումը, և այլն [4]։ Քաղաքի ճարտարա-

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 5։*
2 *Նույն տեղը, գ. 408, թ. 22։*
3 *Նույն տեղը, թ. 21։*
4 *Նույն տեղը, գ. 637, թ. 5։*

պետի պաշտոնի վերացման հետ միասին վերացվում է նաև հողաչափի պաշտոնը։ Վերջինիս պարտականությունները ևս դրվում են քաղաքային տեխնիկի վրա։

Երևանի քաղաքային տեխնիկներից հայտնի է Բ. Յա. Մեհրաբյանը, որը պաշտոնավարել է բավական երկար ժամանակ։ Նրա նախագծով են կառուցվել նախասովետական շրջանի Երևանի մի շարք շենքեր, որոնց թվում և ուսուցչական սեմինարիայի շենքը։ Սակայն Բ. Մեհրաբյանը հայտնի է ոչ իր տված շենքերի նախագծերով, այլ Երևան քաղաքի լրիվ հատակագծի հանույթով։ Նա այդ գործի վրա աշխատել է ավելի քան տաս տարի և քաղաքի գրաված ամբողջ տարածությունը՝ բնակելի թաղերը, այգիները, փողոցները, հրապարակները, անպտուղ տարածությունները և այլ կարգի տեղամասերը իր քրտնաջան աշխատանքով հանույթի է ենթարկել 1906—1911 թթ. դրությամբ։ Պլանը կազմված է եղել մեծ մասշտաբով։ Նրա կազմած հատակագծի մեջ դյույման (2,5 սմ) համապատասխանում էր 25 սաժենի (53,25 մ)։ Հատակագծի չափսերը կազմել են՝ երկարությունը՝ 4,5 արշին (մոտ 3 մ 20 սանտիմետր), լայնությունը՝ 2,25 արշին (մոտ 1 մ 60 սանտիմետր)[1]։ Այդպիսի մասշտաբով ու մեծությամբ հատակագիծն այնքան մանրամասն է եղել, որ յուրաքանչյուր քաղաքացի դրա վրա կարող էր գտնել իր հողային տարածությունն ամենայն ճշտությամբ և սահմաններով[2]։ Քաղաքի այդ խոշոր մասշտաբի հատակագծից մեզ հաջողվեց արխիվներում հայտնաբերել միայն նրա առանձին հատվածները՝ առանձին թերթիկների վրա։ Սակայն այդ բացը լիովին վերանում է շնորհիվ այն բանի, որ նույն հատակագիծը 1911—1912 թթ. ընդօրինակվել է երկու ավելի փոքր մասշտաբով՝ մեկը մեկ դյույմային 50 սաժեն համապատասխանությամբ, իսկ մյուսը՝ մեկ դյույմային 100 սաժեն[3]։ 50 սաժենանոցը 500 օրինակով հրատարակվել է Թիֆլիսում և մինչև օրս էլ մի քանի արխիվներում և առանձին մարդկանց մոտ պահպանվել են դրա մի շարք օրինակները։

Մեհրաբյանի կազմած հատակագիծը, որի պատճենը մեր կազմած սխեմայի հետ միասին կցում ենք սույն գրքին, տերիտորիալ առումով իր մեջ չի ընդգրկում քաղաքային շրջագծի մեջ ընդգրկված ամբողջ տարածությունը։ Նրա ընդգրկած տերիտորիայի սահմանները ձուլում են երկաթուղային կայարանից մինչև այժմյան Հաղ-

---

1 Տե՛ս «Эриванские объявления», 1911, № 49։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։


ПЛАНЪ
ГОРОДА ЭРИВАНИ
СНЯТЫЙ СЪ НАТУРЫ ГОРОДСКИМЪ ТЕХНИКОМЪ
Б.Л.МЕГРАНОВЫМЪ
ВЪ 1906-1911 г.


37
38
40
42
43
44
45
46
47
48

թանակի այգու սարալանջի ստորոտները՝ մինչև «Պլանի գլուխը», ինչպես ժողովուրդը կոչում էր այն ժամանակ, Զանգվի (Հրազդան) աջ ափում գտնվող՝ նախկին սարդարի այգուց մինչև Նորք ու այժմյան հեսպուբլիկական ստադիոնի մոտերքը։ Հանուխյանին աշխատանքների յուրահատկություններից ելնելով՝ հեղինակն այդ ամբողջ տարածությունը վեր է ածել 48 քառակուսիների։ Նախագծի վրա տրված են Զանգուն, նրա ձախակողմյան վտակ Գետառը, քաղաքի ոռոգման առուները, կամուրջները, նշված սահմանների մեջ եղած այգիներն ու բանջարանոցները, շուկաները, գերեզմանոցները։ Հատակագծի ճշգրտությունը բավական բարձրանում է հորիզոնականների առկայությամբ։ Պետք է նշել, որ հատակագիծն ունի և որոշ անճշտություններ, որոնք սակայն ամենևին չեն իջեցնում դրա արժեքը։ Առանց չափազանցնելու կարելի է ասել, որ Մեհրաբյանը հանձինս իր այդ հատակագծի մեծ ծառայություն է թողել մեր մայրաքաղաքի հետագա սերունդներին։ Դրա արժեքը մեծանում է մանավանդ այն պատճառով, որ Երևանը հազվագյուտ արագությամբ մեծացել և գլխովին վերափոխվել է։ Այդ հսկայական վերափոխությունը ամենայն մանրամասնությամբ կարելի է տեսնել երկու հատակագծերի՝ Մեհրաբյանի կազմած և այժմյան ավելի քան վեց հարյուր հազար բնակիչ ունեցող Երևանի հատակագիծը իրար մոտ դնելով։ Սակայն դրանցով չի սպառվում նախասովետական շրջանի Երևանի այդ հատակագծի նշանակությունը։ Նա կարևոր ուղեցույց է եղել սոցիալիստական Երևանի հեռանկարային առաջին հատակագծերը կազմելիս՝ XX դարի 20-ական թվականներին։ Արխիվներում երբեմն հանդիպում ենք Մեհրաբյանի կազմած հատակագծերի տարբեր օրինակների վրա Թամանյանի արած շատ նշումների՝ հին փողոցների վերակառուցման, նորերի բացման, ճարտարապետական նոր անսամբլների կառուցման, նոր թաղերի ու ամբողջական քաղաքամասերի ստեղծման և այլնի վերաբերյալ։ Վերջապես ժամանակակից մամուլի վկայությամբ «... Մեհրաբյանն իր այս բազմատանջ աշխատությունը կատարել է, ինչպես ինքն է ասում, ոչ իբրև ծառայության պարտականություն, այլ իբրև ինքնահամ ցանկություն և իր այս տաս հազար արժողությամբ գործը նվիրաբերում է քաղաքին ընդ միշտ իրեն հիշելու համար»[1]։

Հատակագծում առանձնապես մեծ խնամքով են արտահայտված բուն քաղաքի՝ Շահարի, Դեմիրբուլաղի և Կոնդի բնակելի ու ոչ բնակելի տարածությունները։ Նրանում տրված են այն ժամանակ-

1 «Эриванские объявления», 1911, № 49:

ներում գոյություն ունեցող շատ թե քիչ բարեկարգ բոլոր փողոցները՝ նահանգական (այժմ Ալավերդյանի), Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի), Աստաֆյան (Աբովյանի), Մալյարների (Տերյանի), Կարավանսարայի (Տեր-Գաբրիելյանի), Հայկական (Լենինի անվան պողոտա), Նազարովի (Ամիրյանի), Բեհբուդովի (Սվերդլովի), Ցարական (Սպանդարյանի), Թարխանովի (Կնունյանցի և Պուշկինի), Դոկտորի (Թումանյանի անվան պողոտա) և այլն։ Կարմիր գծերով տրված են նաև նոր բացվելիք մի քանի փողոցների ուղղությունները։ Մասնագետի, հետաքրքրասերի, ընթերցողի և ընդհանրապես երևանցու համար մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել նաև այն, որ բազմադույն և ընդհանուր առմամբ ճաշակով ձևավորված այդ հատակագծի վրա՝ մուգ կարմիր գույնով նշանակված են բոլոր շատ թե քիչ հայտնի շենքերն ու օբյեկտները, դրանց անունները համապատասխանելու միջոցով ցույց տալով պլանի ձախ մասում, հատուկ աղյուսակի ձևով, իսկ պայմանական նշանները՝ աջ կողմում։ Այնպես որ հատակագծի վրա կարելի է անմիջականորեն տեսնել քաղաքի մինչև 40-ի հասնող ուշադրության արժանի զանազան շենքեր՝ հասարակական ու վարչական, եկեղեցիներ, մզկիթներ և այլն։


Երևանի նահանգի բոլոր հինգ քաղաքների բնակեցված տարածության, բնակելի շենքերի թվի, շենքերի ծածկի տեսակի, փողոցների թվի, դրանց ընդհանուր երկարության և բարեկարգման աստիճանի, հրապարակների թվի ու մեծության և պրոսպեկտների մեծության մասին 1906 թ. դրությամբ հետաքրքրական տվյալներ են հաղորդված «Памятная книжка Эриванской губернии» 1908 թ. համարում։ Խիստ անհրաժեշտ ենք համարում աղյուսակի ձևով ներկայացված այդ տվյալները ընթերցողի ուշադրությանն արժանացնել նույնությամբ [1] (տե՛ս աղյուսակ 42)։

Թեպետև թվերը բավական կասկածելի են, սակայն աղյուսակն, այնուամենայնիվ, գաղափար է տալիս XX դարի սկզբների Երևանի նահանգի հինգ քաղաքների բարեկարգության աստիճանի վերաբերյալ։ Աղյուսակից երևում է. ա) որ տները եղել են շատ մանր, դրանցից յուրաքանչյուրին միջին հաշվով Երևանում ընկել է 12,5 շունչ, Ալեքսանդրապոլում՝ 8,9, Նախիջևանում՝ 4,9 շունչ և այլն, բ) որ քաղաքների բնակեցված մասերը ընդարձակ տարածությունը-

---

1 «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. 4, էջ 4—5, աղյուսակ № 2։


ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՀԱՏԱԿԱԳԾԸ 1906-1911 Թ.Թ. (ԸՍՏ ՔԱՂԱՔԱՇԻՆ ՏԵԽՆԻԿ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՀԱՏԱԿԱԳԾԻ)



1-ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ, 2-ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԸ, 3-ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ, 4-ՊԱՐՈՍ-ՊԱՏԱՆԻ ԿԱՐԳԵՐ, 5-ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԳԵՐՈՎ, 6-ՄԱՐԴԱՀԱՍԱԿՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԵՐ, 7-ՄԱՍԱՅԻՆ ՏՈՒՆԵՐ

Բնակիչներ հոգեկան հիվանդությամբ										Ընդհանուր թվից հոգեկան հիվանդություններ ունեցող ընտանիքներում								Տեղափոխված հոգեկան հիվանդներ								Ընդհանուր թվից հոգեկան հիվանդություններ ունեցող ընտանիքներում							

ներ են գրավել, գ) որ տների մեծագույն մասը եղել է հողածածկ, դ) որ Երևանում, Ալիքսանդրոպոլում ու Օրդուբադում սալահատակված է եղել փողոցների միայն մի չնչին մասը, իսկ Նախիջևանում ու Նոր Բայազետում ընդհանրապես սալահատակված փողոցներ չեն եղել։



Քաղաքային միակ ժամացույցը (Երևանի պատմության թանգարան)։

Բերված թվերը միաժամանակ ցույց են տալիս, որ չնայած Երևանի նահանգի քաղաքների մեջ Երևանը իբրև նահանգի կենտրոն մյուս քաղաքների համեմատությամբ իր վիճակով մի փոքր ավելի բարձր էր կանգնած, բայց նա էլ գտնվում էր խիստ անբարեկարգ վիճակում։ փողոցների մեծագույն մասը անփոփոխ էր մնացել իր «ստեղծման» օրից ի վեր, տները հողածածկ էին ու գա-

ճաճ, զբոսայգիների ու հրապարակների թիվը՝ չնչին, բնակչության խտությունը՝ խիստ փոքր։ Բավական է ասել, որ նույնիսկ քաղաքի գլխավոր փողոցի՝ Աստաֆյանի ուղղությամբ բավական մի մեծ հատված մնում էր գրեթե անմշակ[1], իսկ քաղաքի ու երկաթուղային կայարանի միջև այդպիսի տեղեր շատ կային։ Քաղաքի բնակչության խտությունն այնքան ցածր էր, որ նրա ծայրամասային որոշ թաղերում ձմռանը երբեմն կարելի էր զբաղվել նույնիսկ որսորդությամբ։ «Պսակ» թերթի թղթակիցներից մեկը 1882 թ. համարներից մեկում գրում է. «Այս ձմեռվա անմոռանալի խիստ ցրտերի շնորհիվ Երևանում կաքավը, նապաստակը, վայրի բադն ու սագը ամեն առատությամբ են գտնվում։ Գայլերն այնքան համարձակություն ստացան, որ ցերեկով քաղաքիս մեջ անգամ մտան. եղել են և կատաղածներ, որոնց գոհ գնացին նորքում ու քաղաքիս Դամբր-բուլաղ մասում մի քանի հոգի»[2]։ Դա պատահական երևույթ չէր 90 քառ. վերստ տարածություն ունեցող, բայց իր բնակչության թվով փոքր՝ Երևանի համար։ Ականատեսները պատմում են, որ ձմռանը նապաստակի, աղվեսի ու զանազան թռչունների որսը սովորական երևույթ էր քաղաքի արվարձաններում ու ծայրաթաղերում։ Բոլոր եղանակներին ու ամենուրեք թափառում էին ընտանի կենդանիներ՝ շներ, հավեր, խոզեր։

Բայց և այնպես, 1879—1914 թթ. Երևանի արտաքին տեսքը և կոմունալ պայմանները, որոնց կանդրադառնանք քիչ հետո, ենթարկվել է զգալի փոփոխության։ Եթե նախորդ շրջանում քաղաքի ընդհանուր ֆոնից առանձնանում էին միայն բերդի կառուցվածքները, եկեղեցիներն ու մզկիթները, ապա այս շրջանում աստիճանաբար ձևավորվում է նրա՝ համեմատաբար բարեկարգ կապիտալիստական կենտրոնը, հարուստների ու «նշանավոր» մարդկանց թաղերը, որոնք բավական խիստ հակադրության մեջ էին գտնվում քաղաքի մյուս մասերի նկատմամբ։

Այս շրջանում խոպան լցվում ու վերանում են ամրոցի նախկին ապարանքները, որոնց վրա 80—90-ական թվականներին դեռևս շարունակում էին ուշադրություն դարձնել իբրև անցյալի հուշ[3], նվազագույնի է հասնում եկեղեցաշինությունը, իսկ դրանց փոխարեն, ինչպես ասվեց, ավելի մեծ տեմպերով կառուցվում են գոր-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 670, թ. 19։
2 «Պսակ», 1882, № 1։
3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 1, թ. 53—56։

ծառաններ, բնակելի տներ, խանութներ, դպրոցներ և այլն, և այլն [1]։

Քաղաքի բարեկարգման գործն ամբողջությամբ դառնում էր քաղաքային ինքնավարության ձեռքին։ Ճիշտ է, այս կամ այն անհատի, ընկերության կամ պետության կատարած կառուցումները մեծապես նպաստում էին քաղաքի վերափոխմանը, բայց նրա բուն բարեկարգման բոլոր աշխատանքները ենթակա էին քաղաքային ինքնավարությանը և կատարվում էին վերջինիս տնօրինության տակ եղած միջոցներով։

Այժմ տեսնենք ինչպիսի՛ եկամուտներ ուներ Երևան քաղաքը և նրա ինքնավարության օրգանները ինչպե՛ս էին ծախսում դրանք։

Քաղաքի եկամուտները գոյանում էին նրա ունեցվածքներից (մշակովի հողերից, այգիներից, խանութներից) և զանազան հարկերից՝ գնահատման հարկից, առևտրի, արհեստի ու այլ զբաղմունքների թույլատվության իրավունքի տեղեկանքներ տալուց, չափերի ու կշիռների ատուգումից ստացվող միջոցներից և այլն, և այլն [2], որոնց նշանակման ու գանձման կարգի վերաբերյալ բավական մանրամասնությամբ խոսվել է աշխատության նախորդ գլուխում։ Մեզ մնում է փաստական նյութերով ցույց տալ, թե քաղաքը եկամտի ի՛նչ աղբյուրներ ուներ, ինչքա՛ն էր նրա եկամուտների չափը, ինչպե՛ս էր բաշխվում ծախսերն ըստ տարբեր բնագավառների և եկամուտների ու ծախսերի, ինչպիսի համեմատական վիճակ գոյություն ուներ Կովկասի ու Երևանի նահանգների քաղաքներում։ Այդ բոլոր հարցերին առանց ձգձգելու կարելի է պատասխանել մի քանի աղյուսակների միջոցով, որոնց տվյալները վերցված են պաշտոնական հաղորդագրություններից։

Քաղաքի եկամտի աղբյուրներն ու դրանցից ստացվող գումարների համեմատական չափը ցույց տալու համար կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակը։

1 Մեր օրերի Երևանի նկատմամբ նախահեղափոխական շրջանի Երևանի խղճուկ վիճակը նկարագրելիս որոշ հեղինակներ գույներն անչափ խտացնում են։ Օրինակ՝ քաղաքի հարտարապետներից մեկին նվիրված մի ակնարկում ասված է, թե իբր նախահեղափոխական Երևանում միայն մեկ քարաշեն տուն է եղել (տե՛ս «Երևան» 1958, № 15)։ Կարծում ենք, որ նման խտացումները ակնարկին գրական գեղեցկություն ու համ չեն տալիս, ընդհակառակը, իջեցնում են նրա արժեքը։ Նախահեղափոխական և այժմյան Երևանի տարբերությունները այնքան հսկայական են ու բացարձակ, որ այդպիսի միջոցների կարիքը ամենևին չի զգացվում։

2 Տե՛ս «Городовое положение 1870 года», էջ 47—60։

№ № կ/կ	Եկամուտի աղբյուրները	1883 թ. [1] ըստ նախահաշվի ռ.	1883 թ. [1] ըստ նախահաշվի կ.	1883 թ. [1] ստացվել է ռ.	1883 թ. [1] ստացվել է կ.	1898 թ. [2] ըստ նախահաշվի ռ.	1898 թ. [2] ըստ նախահաշվի կ.	1898 թ. [2] ստացվել է ռ.	1898 թ. [2] ստացվել է կ.
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Նորագեղի քաղաքապատկան 16 այգիներից	657	70	1024	43	599	70	573	72
2	Քաղաքապատկան 12 հողաբաժին յանջալըզներից և մշակման ենթակա 110 հողաբաժիններից (որոնք բոլորը միասին կազմում էին 1242 դես. 1250 քառ. սաժ.)	5700	—	6428	—	14095	—	15452	34
3	Բանջարանոցային 1 դ. 900 քառ. սաժ. կազմող հողից	201	—	75	—	195	—	195	—
4	Քաղաքապ. 2 դես. 615 քառ. սաժ հողամասից	184	—	70	—	100	—	100	—
5	Աքոռատվայրերից	350	—	258	—	281	—	576	37
6	Քաղաքային շուկայում մանր առևտրի համար հատկացված տեղերից	750	—	679	75	3582	—	2900	03
7	Կարավանների՝ քաղաքային հողում կանգնելու համար	190	05	95	—				
8	Վաճառքի բերված անասունների՝ քաղաքային հողում կանգնելու համար	1170	—	800	—	7200	—	7517	18
9	Ապրուստպղծարանների տեղադրավայրերից	250	—	—	—				
10	Բարձանքներից	100	—	60	—				
11	Գաջի հանքավայրից	200	—	—	—				
12	Ջուր դնգաշեղերից	50	—	30	—	4	—	12	—
13	Քաղաքային բոլսայից	450	—	440	—				
14	Բեռներով տեղափոխություններ կատարող մարդկանցից՝ քաղաքային հողում կանգնելու համար	350	—	—	—	380	—	548	—
15	Կառապաններից՝ քաղաքային բոլսայում կանգնելու համար	50	—	32	—	1044	—	1085	98
16	Բանող անասունների վաճառքից՝ քաղաքային հողում կանգնելու համար	120	—	130	66	706	20	486	10
17	Քաղաքապատկան Կուլթակինի և Անգլիական գրատպչներից	100	—	30	—	115	—	156	20

1 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1171, թ. 4—9։

2 Նույն տեղը, գ. 1373, թ. 1—8։

1	2	3	4	5	6	7	8	9	10
18	Կշիռներից և չափերից . . .	9400		9400	04	13749	—	5013	90
19	Հյուրանոցներից, ճաշարաններից, սրճարաններից և այլն . . .	800	—	718	50	1466	50	1423	50
20	Կարավանատներից և գոմերից	840	—	404	83				
21	Քաղաքացիների անշարժ ունեցվածքի գնահատման աուրքից . . .	25475	40	18245	91	39386	20	25466	89
22	Քաղաքացիների անշարժ ունեցվածքի գնահատման աուրքն նախորդ տարինեից մնացած պարտքերից .	2000	—	9636	24	20189	85	14382	69
23	Զանազան տնտակի ակտերից և բանկեռատների ու այլ կարգի ունեցվածքների վաճառքից . . .	900	—	402	10	2204	—	2120	85
24	Ձահաբի, արհեստի ու արդյունաբերության իրավունքի համար տրված փաստաթղթերից և իմիչքներից .	4000	—	3624	51	4972	—	4015	15
25	Տուգանքներից և չնախատեսված այլ աղբյուրներից .	100	—	61	41	2730		2666	41
26	Մուտք քաղաքային դանձարան՝ սեփականատների մեջ մտած գումարներից . .	—	—	148	—				
27	Քաղաքային շենքերից՝ կըրպակներից, փախ, կոնդում դանվող շենքից և այլն .					720	—	587	85
28	Քաղաքապետական երեք հոդապահներից . .					264	—	321	33
29	Ջրագրի կառուցման համար տրված քաղաքային հողակտորից . .					18	—	18	—
30	Ագյուսի ու գալի գործարաններից և քարհանքերից .					318	—	512	50
31	Քաղաքային հիվանդանոցում բուժվելու վարձից . .					1422	—	1912	13
32	Քաղաքային տարրական դպրոցի ուսման վարձից .					120	—	42	—
33	Պետական հարկերի հավաքման համար քաղաքային ինքնավարությանը տրվող աուրքից . . .					2300	—	1364	46
34	Քաղաքային ունեցվածքի վաճառքից					25	—	174	65
	Ընդամենը	54398	15	52794	42	115536	45	89506	23

Այսպիսով, 15 տարվա ընթացքում միջին հաշվով և մոտավոր թվերով քաղաքի փաստաղի եկամուտները 52 794 ռուբլուց հասել

էին 89 506 ռուբլու։ Ավելացումը տեղի էր ունենում շատ դանդաղ։ Ընդ որում աղյուսակից պարզ երևում է, որ եկամուտների ավելացումը հիմնականում արդյունք էր առևտրի ծավալման, արդյունաբերության զարգացման և քաղաքացիների անշարժ գույքից գանձվող գնահատման աուրքի ծավալի մեծացման։

Աղյուսակ 44

№ № կ/կ	Վարկավորման օբյեկտի տեսակը	1893 թ.[1] վարկի քանակը		փաստացի ծախսված է		1911 թ.[2] վարկի քանակը		փաստացի ծախսված է	
		ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.	ռ.	կ.
1	Պետական օբլիգացիաների վրա կատարված ծախսերը . .	1291	—	1291	—	—	—	11359	48
2	Քաղաքային օբլիգացիաների և պարտատոմսերի պահպանման վրա	17463	27	9453	37	—	—	30628	04
3	Բանկի ֆինանսման ու լուսավորության համար . . .	5482	18	3346	51	—	—	—	—
4	Ծովամերձան, բնակարանային և ռազմական այլ աուրքեր	16524	33	13108	54	—	—	15855	24
5	Քաղաքային ոստիկանության պահպանման համար .	20676	23	22732	36	—	—	11761	67
6	Հրդեհաշեջ խմբերի պահպանման համար	435	—	212	50	—	—	350	32
7	Քաղաքի բարեկարգման վրա	12610	42	12659	54	—	—	25047	61
8	Քաղաքային կառուցվածքների պահպանման համար	1156	—	260	02	—	—	1209	96
9	Ժողովրդական կրթության գծով	3551	62	2571	16	—	—	10187	80
10	Բժշկության, անասնաբուժության և առևտ. մասի գծով	10757	77	9041	10	—	—	30631	24
11	Պարտքերի վճարում	18945	—	1877	25	—	—	1468	29
12	Զանազան ծախսեր . . .	4450	—	3002	35	—	—	—	—
13	Թոշակների վճարում . . .	—	—	—	—	—	—	669	80
14	Քաղաքի լուսավորության վրա	—	—	—	—	—	—	11933	31
	Ընդամենը	115536	45	89056	03	—	—	1.1502	76

Ստացված եկամուտների մեծագույն մասը ծախսվում էր քաղաքային հիմնարկների, քաղաքային ոստիկանական վարչության պահպանման ու վարչական այլ նպատակներով։ Ծախսումների քան

1 *Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1373, թ. 12—21։*

2 «Кавказский календарь на 1913 г.», отд. 4, *էջ 288—289։*

առանձին հոդվածների պատկերացնելու համար աղյուսակի ձևով ներկայացվել են (տե՛ս աղյուսակ 44) 1898 և 1911 թվականներին նախագծով հաստատված և փաստացի կատարված ծախսումները ըստ բնագավառների։

Մեջ բերված պաշտոնական տվյալներից երևում է, որ 1892 թ. կատարված 89 056 ռ. 03 կ. ծախսից միայն պետական օրգանների, քաղաքային օրգանների ու պաշտոնյաների, բանտի ջեռուցման ու լուսավորության, ռազմական, բնակարանային և այլ տուրքերի ու քաղաքային ոստիկանության պահպանման համար ծախսվել է 49 931 ռ. 72 կոպեկ, այսինքն՝ ամբողջ գումարի կեսից ավելին, մինչդեռ նույն թվականին քաղաքի բարեկարգման ծախսերը կազմել են ընդամենը 12 639 ռ. 54 կ.։ Պակաս ցցուն չեն նաև 1911 թ. վերաբերող տվյալները։ Այդ թվականին կատարված 151 502 ռ. 76 կ. ընդհանուր ծախսերից նշված հոդվածների գծով ծախսվել է 69 604 ռ. 43 կ.։

Աղյուսակ 45

Տարեթվեր	Եկամուտներ		Ծախսեր[8]	
	ռ.	կ.	ռ.	կ.
1885 թ.[1]	61407	—	98896	—
1896 թ.[2]	81844	94	78231	10
1898 թ.[3]	89506	23	89141	—
1902 թ.[4]	135-47	39	134633	57
1908 թ.[5]	138400	—	138400	—
1911 թ.[6]	146984	27	151502	76
1912 թ.[7]	187885	34	187885	34

Փոխանակ գնալով վարչական ծախսերը համեմատական չափով փոքրանալու, որովհետև քաղաքը բավական արագ մեծանում էր, իսկ նրա վարչա-ոստիկանական անձնակազմը մնում էր նույնը,

1 «Кавказский календарь на 1887 г.», отд. 1, էջ 179—183:

2 «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 13։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1373, թ. 1—8, «Кавказский календарь на 1901 г.», отд. 3, էջ 95։

4 «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 2, էջ 134—137, աղյուսակ №№ 28 և 29։

5 Նույն տեղը, на 1908 г., отдел 4, էջ 27, աղյուսակ 19։

6 «Кавказский календарь на 1913 г.», отд. 4, էջ 284—289։

7 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 324, թ. 22։

8 1912 թ. եկամուտներն ու ծախսերը տրված են ըստ նախահաշվի։

դրանք շարունակում էին աճել, թեպետև ընդհանուր ծախսի մեջ նրա տեսակարար կշիռը որոշ չափով փոքրանում էր։

Մեզ հետաքրքրող շրջանի քաղաքի եկամուտների ու ծախսերի՝ աստիճանական փոփոխությանն ավելի հանգամանորեն ծանոթանալու համար, հարկ ենք համարել ի մի բերել եղած տվյալները և ոչ մեծ աղյուսակով ընթերցողի ու մասնագետի ուշադրությանը հանձնել տարբեր թվականներին քաղաքի ունեցած փաստական եկամուտներն ու ծախսերը, առանց եկամուտների աղբյուրներն ու ծախսերի հոդվածները նշելու (տե՛ս աղյուսակ 45)։

Աղյուսակը ցույց է տալիս, որ քաղաքի եկամուտներն ու ծախսերը 1885—1912 թթ. ընթացքում մեծացել են ավելի քան երեք անգամ։ Սակայն ընդհանուր առմամբ դրանք չնչին մեծություններ էին ներկայացնում և՛ 1885 թ. և՛ 1912 թ.։ 1896 թ. դրությամբ քաղաքի յուրաքանչյուր բնակչին ընկնող ծախսը նույնիսկ չէր հասնում 3 ռուբլու, իսկ 1912 թվականին ըստ նախահաշվի մոտ երեք ռուբլի էր։ Ընդ որում պետք է նկատել, որ եթե ծախսերը հիմնականում կատարվում էին քաղաքի ինքնավարական ու պետական օրգանների պահպանման վրա, ապա եկամուտների ավելացումն էլ մեծ մասամբ տեղի էր ունենում հարկերի ծավալի մեծացման հաշվին։

Եկամուտների ու ծախսերի գծով Անդրկովկասի նշանավոր քաղաքների և Երևանի նահանգի մյուս քաղաքների նկատմամբ Երևանի տեղն ու դիրքը որոշակի է դառնում հետևյալ երկու աղյուսակներից (տե՛ս աղյուսակ №№ 46 և 47)։

Աղյուսակը անշափ պարզ է ու խոսուն և հարկ չունի բացատրությունների։ Միայն պետք է նկատել, որ նշված քաղաքների մեջ Երևանի ծախսերը, իբրև կանոն, եկամուտներին բավականաչափ գերազանցում էին։ Եթե իր եկամուտներով ու ծախսերի ծավալով այն ամբողջ նահանգում գրավում էր առաջին տեղը, ապա Անդրկովկասի մասշտաբով նրա տեղը երրորդն էր։ Այսպես, օրինակ՝ 1884 թ. Թիֆլիսի եկամուտները կազմում էին 667074 ռ., Բաքվինը՝ 302469 ռ., Կարսինը՝ 47426 ռ., Շուշիինը (1885 թ.)՝ 29512 ռ., Գորիինը (1885 թ.)՝ 18516 ռ., իսկ Երևանինը (1885 թ.)՝ 61407 ռ.։ Նույն թվականներին Թիֆլիսի ծախսերը կազմում էին 639121 ռ., Բաքվինը՝ 310268 ռ., Կարսինը՝ 39461 ռ., Շուշիինը՝ 25316 ռ., Գորիինը՝ 21575, իսկ Երևանինը՝ 98896 ռ.[1]։

1 «Кавказский календарь на 1887 г.», отд. 1, էջ 179—183։

Երևանի ճահճացի հարմարների եկամուտներն ու ծախսերը

Աղյուսակ 46

№ № կ/կ	Քաղաքներ	1886 թ.[1]			1891 թ.[2]			1895 թ.[3]			1902 թ.[4]		
		եկամուտներ		ծախսեր	եկամուտներ		ծախսեր	եկամուտներ		ծախսեր	եկամուտներ		ծախսեր
		ռ.	կ.	ռ. կ.	ռ.	կ.	ռ. կ.	ռ.	կ.	ռ. կ.	ռ.	կ.	ռ. կ.
1	Երևան	65547	—	81899 —	75187	97	76636 —	81844	94	78231 10	135847	39	134633 57
2	Ալեքսանդրապոլ . . .	29824	96	25798 79	30907	89	32843 —	54874	32	57040 16	110554	65	94798 72
3	Նախիջևան	11289	04	6083 91	7940	68	9142 —	13361	23	17931 53	28543	19	22597 55
4	Օղուրլար	2578	31	1075 43	3810	36	3105 —	4670	58	4942 83	5027	28	5007 79
5	Նոր Բայազետ	4774	60	3145 71	5533	56	5796 —	5219	14	5603 82	9643	92	9755 80

1 «Обзор Эриванской губернии за 1886 г.», *ադյուսակ № 5*:

2 «Кавказский календарь на 1893 г.», *էջ 55*:

3 «Обзор Эриванской губернии за 1896 г.», *էջ 13*:

4 *Նույն տեղը*, за 1904 г., отдел 2, *էջ 134—137*, *ադյուսակ №№ 28 և 29*:

Սակայն պատկերը մի փոքր այլ է ստացվում, երբ եկամուտներն ու ծախսերը հաշվում ենք ըստ բնակչության թվի:

Անդրկովկասի երեք գլխավոր քաղաքների եկամուտներն ըստ շնչերի թվի

Աղյուսակ 47

№ № կ/կ	Քաղաքներ	Տուրքաքանչյուր 100 շնչին ընկնող եկամտի քանակը			
		1883 թ.[1]		1898 թ.[2]	
		ռ.	կ.	կ.	կ.
1	Թիֆլիս	605	—	676	80
2	Բաքու	409	—	962	80
3	Երևան	510	—	308	60

Այսպիսով, 1885 թ. մեկ շնչին ընկնող եկամուտներով Երևանը Անդրկովկասի քաղաքների մեջ զրավում էր երկրորդ տեղը, առաջին տեղը զիջելով Թիֆլիսին, որի այդ թվականի եկամուտների մոտ 45 տոկոսը՝ յուրաքանչյուր 100 շնչին ընկնող 605 ռուբլուց 255 ռուբլին, բաժին էր ընկնում արտակարգ եկամուտներին: Վերջիններս կարող էին և չլինել կամ լինել շատ քիչ, ինչպես անկայուն և պատահական էին Երևանի և մյուս քաղաքների այդ հոդվածով ստացվող եկամուտները: Այդ դեպքում Երևանը նույնիսկ կգրավեր առաջին տեղը, Թիֆլիսին մղելով երկրորդ կամ թերևս երրորդ տեղը:

1898 թ. դրությունն արդեն կարուկ կերպով փոխվել էր: Արդյունաբերության արագ զարգացման շնորհիվ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների քանակով (և ընդհանուր եկամուտներով) Բաքուն բացարձակապես գրավում է առաջին տեղը, Թիֆլիսը մղվում երկրորդ տեղը, իսկ Երևանը՝ երրորդ: Եկամուտների աճելացման հետ միասին ավելանում են նաև ծախսերը: Այսպես, եթե 1885 թ. Երևանում յուրաքանչյուր 100 շնչին ընկնում էր 829 ռ. ծախս, Բաքվում՝ 487 ռ., իսկ Թիֆլիսում՝ միայն 396 ռ.[3], ապա XIX դարի վերջերին Բաքուն անցնում է առաջին տեղը, Թիֆլիսը՝ երկրորդ, իսկ Երևանը՝ առաջին տեղից մղվում երրորդը:

Երևանը պետությունից գրեթե ոչ մի վարկավորում չէր ստանում: Ընդհակառակը՝ պետական-վարչական շատ ծախսեր պետության փոխարեն կատարվում էին քաղաքային միջոցների հաշվին:

1 «Кавказский календарь на 1887 г.», отд. I, *էջ* 177:

2 *Նույն տեղը*, на *1901* г. отд. *3*, *էջ 92—93*:

3 *Տե՛ս նույն տեղը*, отд. *1*, *էջ 177*:

Քաղաքը միշտ թաղված էր պարտքերի մեջ[1]։ Նրա եկամուտները սովորաբար չէին ծածկում ծախսերը և պետական հարկերը։ Նույն վիճակի մեջ էր նաև Երևանի նահանգի և ամբողջ Անդրկովկասի մյուս քաղաքների մեծագույն մասը[2]։ Ֆինանսական առումով նախասովետական Երևանը շատ ծանր պայմանների մեջ էր գտնվում։ Նա հնարավորություն չուներ շատ թե քիչ միջոցներ պահանջող ձեռնարկումների համար։ Հենց դրանով են բացատրվում քաղաքային ակումբի, սպանդանոցի, հիվանդանոցի և մի քանի նույնանման օբյեկտների շինարարության ձգձգումները, իսկ ավելի մեծ ծախսեր պահանջող ձեռնարկումները՝ խմելու ջրի հարցը, ձիաքարշը, էլեկտրակայանի հարցը և ուրիշներ, միանգամայն անհնար էին քաղաքային միջոցներով գլուխ բերելը։

Այդ ձեռնարկումների հարցը առաջ քաշողներին նույնիսկ համարում էին ուտոպիստներ[3]։ Սակայն խմելու ջրի, տրամվայի, էլեկտրական լուսավորության և այլ ձեռնարկումները քաղաքի համար XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին դարձել էին հույժ կարևոր և անհետաձգելի։ Անհրաժեշտ էր գտնել դրանց լուծման միջոցները։ Քաղաքն իր հաշվին միանգամայն անզոր էր այդ անելու և հարկադրված դիմում է անհատներին կամ ակցիոներական ընկերություններին կապալով տալու՝ քաղաքի շահերի համար ոչ օգտավետ միջոցին։ Երևանի կոմունալ պայմանների վերափոխման մեծ պրոպագանդիստներից մեկը էմին Տեր-Գրիգորյանն էր, որն իր հրապարակած «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1909 թ. 24, 25, 26, 27, 28 և 29-րդ համարներում «Անհրաժեշտ ձեռնարկություն» վերնագրի տակ գրել է Երևանում ջրմուղ ու կոյուղի կառուցելու, էլեկտրական տրամվայ ու հեռախոս դցելու և քաղաքային էլեկտրակայան կառուցելու մասին մի ծավալուն հոդվածաշար, որի մեջ, վանաղան հաշվարկներ կատարելով, ցույց է տվել այդ ձեռնարկումների օգտակարությունը և դրանցից ապասնելիք մեծ եկամուտները։ Նա՝ մասնացույց անելով արագահոս ու ջրառատ Զանգուի առկայությունը, գրում է, որ կան բոլոր հնարավորությունները Երևանը իր կոմունալ հարմարություններով ժամանակակից օրինակելի քաղաք դարձնելու։

1 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1886 г.», էջ 20—21 և աղյուսակ № 4, «Кавказский календарь на 1893 г.», էջ 55, «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 11 և աղյուսակ № 46, «Памятная книжка Эриванск. губернии на 1904 г.», էջ 110—111 և այլուր։

2 Նույն տեղերում։

3 «Эриванские объявления», 1909, № 53։

Այժմ՝ հետևելով ժամանակագրական կարգին, տեսնենք ինչպես են լուծվել նշված պրոբլեմները։

Ժամանակագրական առումով առաջինը լուծվել է ձիաքարշի (կամ հանրակառք) պրոբլեմը։ Մինչև ձիաքարշի շահագործման հանձնելը քաղաքի տրանսպորտային միջոցները սահմանափակվում էին բացառապես կառքերով, որոնք առաջվա պես երթևեկում էին առանց որոշակի չվացուցակի և շատ թանկ էին նստում քաղաքացիների վրա։ 1900 թ. հունվարին սահմանված սակագնի համաձայն ցերեկով (առավոտյան ժամը 7-ից մինչև գիշերվա ժամը 12-ը) քաղաքի կենտրոնից մինչև նորքի կամուրջը կառքով գնալն արժեր 30 կոպեկ, քաղաքում յուրաքանչյուր ժամը՝ 60 կոպեկ, քաղաքում ման գալու յուրաքանչյուր ժամը՝ 1 ռ., մինչև նախկին սարդարի այգին՝ 40 կ., մինչև նորք՝ 60 կ., նորք և վերադարձ՝ 1 ռ.։ Գիշերվա ժամերին (գիշերվա ժամը 12-ից մինչև առավոտյան ժամը 7-ը), ինչպես նաև նոր տարվա, զատկի ու նավրուզի տոների առաջին օրերը գիշերով և ցերեկով սակագինը նշվածի կրկնապատիկն էր[1]։

Երկաթուղու կառուցումից հետո քաղաքում կատարվող երթևեկության հետ միասին կարևոր նշանակություն է ունենում քաղաքի և երկաթուղային կայարանի միջև պահպանվող կապը։ Երևանի քաղաքային դուման 1901 թ. վերջին հատուկ սակագին է սահմանում քաղաքից երկաթուղային կայարան և հակառակ ուղղությամբ կառքով երթևեկելու համար։ Այդ սակագնի համաձայն, որը հաստատվել է նահանգապետի կողմից 1902 թվականի փետրվարին, քաղաքից երկաթուղային կայարան կառքով գնալն արժեր 40 կոպեկ, կայարանից քաղաք՝ 50 կոպ., իսկ քաղաքից կայարան և կայարանից քաղաք՝ մինչև 15 րոպե կանգառումով, արժեր 80 կոպեկ[2]։ Սակայն շուտով (1905 թ. մարտին) քաղաքային վարչությունը քաղաքի և երկաթուղային կայարանի միջև կատարվող երթևեկության սակագինը ավելացնում է 10 կոպեկով՝ կայարանից քաղաք 50 կոպեկի փոխարեն դարձնելով 60 կոպեկ[3]։

Քաղաքում երթևեկելը դժվարանում էր ոչ միայն կառքերի պակասության, դրանց ոչ կատարելագործված ու կոշտ լինելու, թարմ ու անմատչելի սակագնի, այլև անբարեկարգ ուղիների պատճառով, որոնց մասին խոսվեց իր տեղում։ Կառապանները հօգուտ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 438, թ. 127։

2 Նույն տեղը, թ. 152։

3 Նույն տեղը, գ. 331, թ. 42։

քաղաքի ենթակա էին հատուկ հարկադրման։ Բացի դրանից, նրանք տալիս էին նաև ուրիշ տուրքեր։ Այսպես, օրինակ՝ 1892 թ. քաղաքային կանոնադրության 78-րդ հոդվածի 4-րդ պարագրաֆի հիման վրա նահանգապետը Նորքի կամուրջի վրայով մեկ անգամ կառքով անցնելու համար սահմանել էր 30 կոպեկ տուրք։ Նրա այդ կարգադրությունը ուժի մեջ էր մտել 1895 թ. հոկտեմբերի 3-ից։ Դժվար չէ եզրակացնել, որ այդպիսի պայմաններում քաղաքում կառքով երթևեկելը մատչելի էր միայն հարուստներին, մեծ եկամուտներ ունեցողների համար։ Արհեստավորը և մանավանդ բանվորը ի վիճակի չէին կառքով երթևեկելու։ Բանվորի մեկ օրվա աշխատավարձով հազիվ կարելի էր մեկ անգամ քաղաքի հակառակ ծայրից հասնել երկաթուղային կայարան։



Աստաֆյան (Արովյանի) փողոցի ընդհանուր տեսքը։ Ձախ կողմում առաջին պլանի վրա «Ֆրանսիա» հյուրանոցը, իսկ կենտրոնում ձիաքարշի վագոններից մեկը (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

1906 թ. քաղաքում կար մոտ 100 կառապան և սայլապան [1]։ Դրանից հետո կառապանների թիվը գրեթե չի մեծանում։ Շահագործման հանձնված ձիաքարշը մանավանդ սկսած 1914—1915 թթ., երբ աստիճանաբար քաղաքի կենցաղի մեջ են մտնում մարդատար ու բեռնատար ավտոմեքենաները, կառքերը կորցնում են իրենց

1 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. 4, էջ 12, աղյուսակ № 6։

նախկին արտակարգ նշանակությունը, թեպետև առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակների տիրապետության շրջանում ավտոմեքենաները չնչին թիվ էին կազմում, իսկ ձիաքարշը 1918 թ. օդոստոսից դադարել էր գործելուց [1]։ Այնպես որ միակ տրանսպորտային միջոցը այդ տարիներին դարձյալ քաղաքում մնացել էին ավանդական կառքերը, որոնք, այնուամենայնիվ, իրենց գոյությունը պահպանեցին մինչև 30-ական թվականները, մինչև էլեկտրական տրամվայի գծի կառուցումը։ Ավտոմեքենան առաջին անգամ Երևան մուտք է գործում 1913 թվականին։ 1914 թ. սկզբներին Երևանում արդեն գոյություն ուներ տեխնիկա-շինարարական հատուկ մի դրասենյակ, որը զանազան տեսակի բեռնատար ու մարդատար ավտոմեքենաներ էր վաճառում առանձին մարդկանց կամ ընկերություններին ու հիմնարկներին։ Այդ դրասենյակը պատկանում էր ինժեներ Ա. Ա. Մալխասյանին և Մ. Բ. Միրբաղիրովին [2]։

Այժմ տեսնենք ինչպիսի պատմություն ունի Երևանի ձիաքարշի (конка) շինարարությունը։

Ձիաքարշի շինարարության հարցը օրակարգի մեջ է դրվում 90-ական թվականներից։ Քաղաքային վարչությունը մի քանի ԹերԹերում ազդարարում է այդ ձեռնարկության մասին, զանազան ընկերություններ ու անհատ մարդիկ 1895 թվականից սկսած արդեն իրենց առաջարկներով և խնդրանքներով, քաղաքային վարչությանը կամ դումային են դիմում այդ աշխատանքն իրենց վրա վերցնելու կամ դրան որևէ չափով մասնակցելու համար։ Առաջին դիմումը քաղաքային վարչության հասցեով ստացվում է 1895 թ. մարտի 9-ին Վ. Սուկավիդցիանի և Վ. Տրետյակովի կողմից, որոնք առաջարկում էին կոնցեսիայով իրենց վրա վերցնել Աստաֆյան փողոցով էլեկտրոտրամվայի գիծ անցկացնելը [3]։ 1897 թ. մայիսի 29-ին նույն հարցով քաղաքային վարչությանը դիմում է վաճառական Ջանփոլադյանը, իր դիմումի մեջ նշելով, որ ինքը պատրաստ է Աստաֆյան փողոցով ձիաքարշ անցկացնելու գործը իր վրա վերցնել կոնցեսիայի կարգով [4]։ Նա իր դիմումի հետ ներկայացնում է 40 կետից բաղկացած ապագա պայմանագրի նախագիծը, որի առաջին կետով խոստանում է ձիաքարշի գիծ գցել մոտ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189/506, գ. 165, թ. 13—14։
2 «Эриванские объявления», 1914, № 12։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 397, թ. 11, գ. 489, թ. 47։
4 Նույն տեղերում։

չորս վերստ երկարությամբ՝ մեկ կամ երկու գծով՝ Աստաֆյան փողոցով մինչև դանթար[1]։ 1899 թ. քաղաքային վարչությունը միանգամից երկու դիմում է ստանում (մայիսի 15-ին և հունիսի 3-ին) Ղորղանյանի և Ալիբեկյանի կողմից, որոնք նույնպես առաջարկում էին կոնցեսիոն կարգով իրենց տալ Աստաֆյան փողոցով ձիաքարշի գիծ անցկացնելու գործը։ 1898—1901 թթ. մի շարք ընկերություններից ու անհատներից ստացվում են բազմաթիվ դիմումներ կոնցեսիայով կամ քաղաքային միջոցներով էլեկտրոտրամվայի կամ ձիաքարշի գիծ անցկացնելու, նույն հիմունքներով միաժամանակ ջրմուղ կառուցելու, կամ դրանց նախագծերը տալու, շինարարության անհրաժեշտ պարագաները՝ ռելսեր, շպալներ, խողովակներ մատակարարելու և այլն, և այլն։ Այդպիսի առաջարկներով նշված թվականներին քաղաքային վարչությանը դիմել են՝ Պետերբուրգի Ռուսական «Ունիոն» կոչված էլեկտրաընկերությունը (1898 թ. նոյեմբերի 18-ին), Մոսկվայում գտնվող՝ «Ռուսաստանի քաղաքային և մերձքաղաքային ձիաքարշի գծերի ակցիոներական ընկերությունը» (1899 թ. մայիսի 24-ին), «Քյոլնի Հելիոս էլեկտրական ակցիոներական ընկերության» Պետերբուրգի գործակալությունը (1901 թ. հուլիսի 25-ին), «Սիմենս և Գալսկե ռուսական էլեկտրատեխնիկական գործարանների ընկերությունը» (1901 թ. հուլիս), հողային և շինարարական աշխատանքների կապալառու Ն. Մ. Սելիվանովը (1901 թ. հուլիս), «Ընդհանուր էլեկտրաընկերության հարավ-ռուսական բաժանմունքը» (1901 թ. օգոստոս) և այլն[2]։

1901 թ. ապրիլին քաղաքային վարչության հասցեով ստացվում է ինժեներ Ն. Վ. Պասեկի դիմումը, որը Թիֆլիսում ուներ իր տեխնիկական-շինարարական բյուրոն։ Նա ներկայացնելով իր պայմանները, քաղաքային վարչությանն առաջարկում է իրեն հանձնել միաժամանակ քաղաքի ջրմուղի, էլեկտրակայանի և էլեկտրոտրամվայի գծի կառուցումը[3]։ Պասեկի այդ առաջարկի մասին խոսք կլինի հետագայում ջրմուղի շինարարության առնչությամբ։ Մյուս առաջարկություններից քաղաքային վարչության հատուկ քննարկմանն են արժանանում միայն Սուկավիդիցիանի ու Տրետյակովի, Ջանփոլադյանի և Ղորղանյանի ու Ալիբեկովի դիմումները։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 397, թ. 1։

2 Նույն տեղը, թթ. 7 և 20, գ. 488, թթ. 81, 85, 86, 92 103, գ. 1519, և այլն։

3 Նույն տեղը, գ. 488, թ. 6—7։

Դրանց առաջարկած պայմանների առթիվ քաղաքային վարչության 1900 թ. փետրվարի 25-ի զեկուցագրում ասվում է.

«Քննարկելով առաջարկված պայմանները՝ վարչությունը նշված երեք կոնցեսիաները բոլորն էլ քաղաքի համար համարում է ոչ ձեռնտու, քանի որ քաղաքի ջրմուղի և սպանդանոցի հարցերը լուծելուց հետո» քաղաքն իր բյուջեի շահերից ելնելով՝ այդ հարցը կլուծի իր միջոցներով, առանց կոնցեսիայի դիմելու[1]։ Բացի դրանից, նրանում նշվում է, որ ձիաքարշի անցկացումը երկաթուղու նաուցման շնորհիվ, որ ավարտվելու է մոտակա ամիսների ընթացքում, մեծապես հեշտանալու և էժանանալու է[2], իսկ էլեկտրոտրամվայի մասին առայժմ ընդհանրապես խոսք լինել չի կարող, որովհետև քաղաքում գործող ոչ մի էլեկտրակայան դեռևս գոյություն չունի։ Էլեկտրոտրամվայն այդ ժամանակվա Երևանի համար այսպիսով կրկնակի ծախս կնստեր։

Քաղաքային դուման իր 1900 թ. մարտի 3—4 նիստում վարչության ուված պատճառաբանությունները հաշվի առնելով հիմնավորված՝ հաստատում է նրա զեկուցագիրը և մերժում է Ջանփոլադյանի ու մյուսների դիմումները։ Դուման դրանով իսկ ձիաքարշի անցկացումը կախման մեջ է դնում ջրմուղի և սպանդանոցի կառուցումից։

Սակայն դեպքերն ընդունում են այլ ընթացք։ Քաղաքային վարչության և դումայի՝ քաղաքի սեփական միջոցներով ջրմուղ կառուցելու բոլոր ձգտումներն ապարդյուն են անցնում։ Քաղաքը չուներ այդ գործի համար պահանջվող դումարի նույնիսկ չնչին մասը, նա թաղված էր պարտքերի մեջ և հնարավոր չի լինում որևէ այլ աղբյուր գտնել անհրաժեշտ միջոցները ձեռք բերելու։ Ուստի դուման և վարչությունը դլխավոր պրոբլեմի՝ ջրմուղի կառուցման լավագույն միջոցը համարում են այն, որ այդ գործի իրականացումը կապվի ձիաքարշի անցկացման հետ և երկուսն էլ միաժամանակ տրվի կոնցեսիայով միևնույն անձնավորությանը[3]։

Քաղաքային վարչությունը ինժեներ-մեխանիկ Ա. Բաբայանի (Բաբով) առաջարկած պայմանները համարում է ամենաձեռնտուն, որոնք տեղ էին գտել 1901 թ. հոկտեմբերի 4-ին վարչությանը նրա ներկայացրած դիմումի և պայմանագրերի նախագծերի մեջ։ Առաջարկված երկու պայմանագրերի նախագծերից մեկը վերաբերում էր ձիաքարշին, իսկ մյուսը՝ ջրմուղին։ Ջրմուղի նկատ-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 397, թ. 11։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, գ. 489, թ. 47։

մամբ ձիաքարշի պրոբլեմը քաղաքի համար համարվում էր երկրորդական, սակայն ձիաքարշը նախապայման էր վերջինիս համար։

Քաղաքային վարչությունը ձիաքարշի գծի անցկացման համար Ա. Բաբայանի առաջարկած պայմանները Ջանփոլադյանի, Սուկավիդիցիանի, Տրեյակովի և Ղորղանյանի ու Ալիբեկովի առաջարկած պայմաններից ավելի ընդունելի է համարում՝ նկատի ունենալով կոնցեսիայի ժամկետները (ըստ Բաբայանի նախապայմանի՝ կոնցեսիայի ժամկետը 36 տարի էր, Սուկավիդիցիանը և Տրեյակովը պահանջում էին 49 տարի, Ղորղանյանն ու Ալիբեկովը՝ 45 տարի, իսկ Ջանփոլադյանը՝ 60 տարի), քաղաքի ունենալիք օգուտները, ժամկետից շուտ քաղաքի կողմից ձիաքարշը գնելու պայմանները, ռելսային ճանապարհի երկարությունը (ըստ Բաբայանի ու Ջանփոլադյանի առաջարկության 4 վերստ էր նախատեսվում, իսկ մյուսները միայն 2 վերստ) և այլ պայմաններ [1]։ Այդ բոլորը թվարկելուց հետո՝ իբրև ամփոփում քաղաքային վարչությունը իր զեկուցագրի մեջ գալիս է հետևյալ եզրակացության.

«Ուշադիր դնահատելով սույն պայմանագրի (Բաբայանի— Ք. Հ.) նախագծի բոլոր պայմանները, վարչությունը գալիս է այն եզրակացության, որ այդ պայմանագիրը քաղաքին տալիս է անտարակուսելի օգուտներ և առավելություններ, որոնց նշանակությունը ավելի է մեծանում նաև նրանով, որ այդ պայմանագրի ընդունմամբ քաղաքը դրա հետ միասին ապահովում է նաև քաղաքային ջրմուղի կառուցումը [2]։

Քաղաքային դուման վարչության ներկայացրած զեկուցագիրն ու եզրակացությունը համարում է հիմնավորված և քաղաքի համար միանգամայն ընդունելի։ Ձայների ճնշող մեծամասնությամբ դումայի նիստում հաստատվում է Արշակ Սերգևի Բաբայանի առաջարկած պայմանագրի նախագիծը [3]։

Քաղաքային դուման մասնավոր ձեռնարկատերերի հետ պայմանագրեր կնքելու համար չուներ լիակատար ազատություն։ Քաղաքային տրամվայի գիծ անցկացնելու, էլեկտրակայաններ կառուցելու և քաղաքում էլեկտրացանց ստեղծելու, ջրմուղի կառուցման և այլ աշխատանքների համար դուման կոնցեսիոն պայմանագրեր կնքելիս պարտավոր էր խստիվ պահպանել գոյություն ունեցող համապետական օրենքները, իսկ այդ օրենքներով պայմանագրերով նախատեսվող պայմաններից շատերը ենթակա էին նահանգապետի և, նույնիսկ, ներքին գործերի մինիստրության հաստատմանը։ Ներքին գործերի մինիստրության տնտեսական դեպարտամենտը նահանգապետներին՝ այդ թվում և Երևանի նահանգապետին, հասցեագրած իր շրջաբերականում (1897 թ. ապրիլի 1) նշում է, որ որոշ տեղերում այդ կարգի պայմանագրեր կնքելիս երբեմն զանց են առնում կամ խախտում պետական օրենքներն ու օրենքի ուժ ունեցող կարգադրությունները։ Դեպարտամենտն առաջարկում էր նահանգապետին, որպեսզի պայմանագրերում ամենուրեք նկատի առնվեն պետական օրենքները և ղեկավարվեն դրանցով [1]։ Երևանի նահանգապետն էլ իր հերթին հատուկ գրությամբ քաղաքագլխին հիշեցնում է կոնցեսիոն պայմանագրերի մասին եղած պետական օրենքները և առաջարկում դրանք ընդունել ի զեկավարություն [2]։ Դումային իրավունք էր տրված կոնցեսիոներների հետ, քաղաքային կանոնադրությունից ելնելով, ազատորեն պայմանագրվել տրամվայների ու ձիաքարշերի թույլատրելի արագության, դրանց աշխատաժամերի կարգի ու տևողության և այլ, երկրորդական՝ նահանգապետի կամ ներքին գործերի մինիստրության հաստատմանը չենթակա հարցերում [3]։ Մյուս պայմանները ենթակա էին պետական օրգանների հաստատմանը։

Ա. Ս. Բաբայանի հետ ձիաքարշի ու ջրմուղի կառուցման պայմանագրերը հաստատման են ենթարկվում 1903 թ. մայիսի 2-ին, և ըստ պայմանագրերի շինարարական աշխատանքների սկիզբ է սահմանվում 1904 թ. փետրվարի 6-ը։ Սակայն տեխնիկական կարգի դժվարություններից ելնելով՝ կոնցեսիոները 1905 թ. մի հատուկ դիմումով խնդրում է վարչությանը շինարարության սկիզբը հաշվել ոչ թե 1904 թ. փետրվարի 6-ից, այլ նույն թվականի հոկտեմբերի 25-ից, այսինքն՝ այն օրից, երբ կոնցեսիոներին վերջնականապես թույլատրվեց կառուցելու նաև ջրմուղը [4]։ Շատ չանցած Ա. Բաբայանի կնքած պայմանագրի կատարումը անցնում է տիկ. Միրզոյանին (Միրզոևա), որը և իր ներկայացուցչի՝ ինժեներ Միրզոյանի (Միրզոև) միջոցով կառուցում է Երևանի ձիաքարշի գիծը։

Ըստ պայմանագրի Բաբայանը պարտավորվել էր իր հաշվին Երևանում անցկացնել ձիաքարշի գիծ մոտ 4 վերստ երկարու-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 489, թ. 47։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 32, թ. 8—9։
2 Նույն տեղը, գ. 387, թ. 1։
3 Նույն տեղը, գ. 32, թ. 8—9։
4 Նույն տեղը, ֆ. 117, գ. 532, թ. 74։

թյամբ՝ 1 կամ 2 գծով, այն բաղկացած էր լինելու երկու հատվածից, որոնցից մեկը զանթարը միացնելու էր երկաթուղային կայարանի հետ, իսկ մյուսը՝ նույն զանթարից Աստաֆյան փողոցով ձգվելու էր վեր՝ մինչև դատարանի շենքի մոտակայքը։ Քաղաքը պարտավոր էր անվճար Բաթայանին զիջել քաղաքային այն հողամասերը, որոնք ընկնում էին գծի տակ կամ անհրաժեշտ էին ձիաքարշի վագոնների պարկեր, կայարաններ, պահեստներ ու տաղավարներ կառուցելու համար։ Բացի դրանից, քաղաքը միջնորդելու էր նույն նպատակների համար անհրաժեշտ պետական կամ մասնավոր հողերը համապատասխան հատուցմամբ Բաթայանին տալու նրա հաշվին։ Ձիաքարշի գիծն ու վագոնները պետք է բավարարեին համապատասխան տեխնիկական պայմանների։ Նախագծերի հաստատումը ստանալուց հետո Բաթայանը պարտավոր էր մեկ ու կես տարվա ընթացքում ավարտել և շահագործման հանձնել ձիաքարշի գիծը, ձիաքարշի գծի հետ կապված բոլոր կարգի կառույցները՝ կամուրջներ, առուներ և այլն, որոնք պիտի կատարվեին կոնցեսիոների հաշվին։ Մարդատար վագոնների երթևեկության ժամերը պիտի սահմանվեին տեղական պայմաններից ելնելով՝ վարչության կողմից կապալառուի հետ համաձայնության գալու միջոցով, բացի պիշերային ժամերից, այն է՝ երեկոյան ժամը 10-ից մինչև առավոտյան ժամը 7-ը, որի ընթացքում կապալառուն կարող էր վագոնների երթևեկություն սահմանել իր հայեցողությամբ։ Շրջադարձներին, փողոցների խաչմերուկներում վագոնները պետք է շարժվեին դանդաղ, իսկ դրանց արագությունն ընդհանրապես մեկ ժամում պետք է 10 վերստից չանցներ։ Սկզբնական շրջանում կապալառուն պետք է ունենար 6 մարդատար վագոնից ոչ պակաս, իսկ բեռնատար վագոնների թիվը թողնվում էր նրա հայեցողությանն։ Կապալառուն պարտավոր էր արգելն շարք մտած գիծը պահել սարքին վիճակում, յուրաքանչյուր ուղևորից մեկ գծով մեկ կողմի վրա գնալու համար վերցնել ոչ ավելի, քան 5 կոպեկ, 2 գծով՝ դարձյալ մեկ ծայրից մյուսը գնալու համար 7 կոպեկից ոչ ավելի, իսկ բեռները փոխադրել մեկ փթից մեկ վերստի համար ½ կոպ. ոչ ավելի։ Մինչև 5 տարեկան երեխաները ազատվում էին տոմս գնելուց, եթե դրանք առանձին տեղ չէին զբաղեցնում։ Ստացվող շահույթի 20 տոկոսը պատկանելու էր քաղաքին, իսկ 80 տոկոսը՝ կապալառուին։ Վերջինիս կողմից իր վերցրած պարտականությունների ճիշտ ու լրիվ կատարման ընթացքի վրա հսկելու էր քաղաքային վարչության ընտրած հատուկ հանձնաժողովը։ Անհարգելի պատճառով ձիաքարշի գծի անցկացումը ձգձգելու

դեպքում, յուրաքանչյուր մեկ ամիս շահագործումը հետաձգելու համար, կոնցեսիոները քաղաքի գանձարանին տալու էր 200 ռուբլի տուգանք։ Տուգանք էր սահմանվում նաև այլ թերացումների ու խախտումների համար։ Կապալառուին թույլատրվում էր ձիաքարշի անցկացման ու շահագործման համար կազմակերպել ընկերություն, պայմանով որ չխախտվի պայմանագրով իր վրա վերցրած բոլոր պարտականությունների անթերի կատարումը։ Կանոնավոր երթևեկությունը սկսելուց հետո կոնցեսիոները պարտավորվում էր յուրաքանչյուր տարվա համար անվճար 10 տոմս տրամադրել քաղաքային վարչությանը։ Կոնցեսիոներին իրավունք էր տրվում ձիաքարշը էլեկտրաքարշով փոխարինելու, պահպանելով պայմանագրի համապատասխան պայմանները։ Այդ փոփոխությունը պայմանագրային ժամկետի (որը սահմանված էր 36 տարի՝ սկսած շահագործման հանձնելու օրից) առաջին կեսի ընթացքում կատարվելու դեպքում ժամկետը ավելացվելու էր 10 տարով, այսինքն՝ 36-ի փոխարեն պետք է դարձվեր 46 տարի։ Կանոնավոր շարժումը սկսվելուց 20 տարի անց քաղաքն իրավունք ուներ վերջին 5 տարիներին իր տրամադրության տակ վերցնել ամբողջ ձիաքարշը, կապալառուին յուրաքանչյուր տարի տալով վերջին 5 տարվա տարեկան միջին շահույթի չափով համապատասխան գումար, իսկ կոնցեսիայի ժամկետը լրանալուց հետո, այսինքն՝ երթևեկությունը սկսելուց 36 տարի անց, ձիաքարշն իր զբաղեցրած հողերով, իր անշարժ և շարժական ամբողջ գույքով միանգամայն սարքին ու պարտքերից ազատ վիճակում, առանց որևէ հատուցման անցնելու էր քաղաքին՝ իբրև նրա սեփականություն։ Պայմանագրերը վող կողմերը ենթակա էին պետության մեջ գործող ընդհանուր օրենքներին, իսկ պայմանագրի մեջ եղած այն պայմանները, որոնք ենթակա էին նահանգապետի կամ ավելի բարձրադիր օրգանների հաստատմանը, ուժի մեջ էին մտնում հաստատումից հետո միայն։ Պայմանագիրը բաղկացած էր ընդամենը 42 կետից և նշված ձևով նահանգապետի կողմից հատուկ գրությամբ թույլատրված էր հաստատել [1]։

Ձիաքարշի Աստաֆյան գիծը շահագործման է հանձնվում 1906 թ. սեպտեմբերի 17-ին, իսկ կայարան տանողը՝ նույն թվականի դեկտեմբերի 11-ին։ Ձիաքարշն ամբողջությամբ կոնցեսիոների վրա նստել էր ավելի քան 100 հազար ռուբլի [2]։ Տոմսերի գները և

1 Տեքստը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 489, թ. 49—51։

2 Նույն տեղը, գ. 645, թ. 8—9։

մյուս պայմանները լիովին համապատասխանում էին պայմանագրով նախատեսվածներին [1]։ Իր շահագործման օրից ընդհուպ մինչև 1918 թվականի ամառը ձիաքարշը, որոշ խափանումներով ու ընդհատումներով գործում է։ Դաշնակների տիրապետության շրջանում՝ 1918 թ. օգոստոսի սկզբից Միրզոևյան ձիաքարշը դադարեցնում է իր գործունեությունը։

Ձիաքարշի վագոնները մանր էին, կոշտ ու անշուք։ Նա ուներ հատուկ չվացուցակ, բայց ամենուրեք խախտվում էր։ Երևանում հրատարակվող «Հրազդան» թերթի թղթակիցներից մեկը հետևյալ կերպ է նկարագրում քաղաքի ձիաքարշի գիծն ու նրա պատճառած վնասները։

«Ոչ մի տեղ չենք տեսել այնպիսի ձիաքարշ, ինչպիսին Երևանինն է, ոչ մի քաղաքում մենք չենք տեսել ձիաքարշի գիծը այնպես գռեհկորեն փողոցների մեջ դուրս ցցված, ինչպես Երևանի Միրզոևյան ձիաքարշի գիծը, շնորհիվ այս տգեղ գծի, ոչ միայն փողոցները կորցրել են իրենց գեղեցկությունն ու կոկությունը, այլև դարձել են կառքերի, ֆուրգոնների և մասնավորապես սայլապանների համար մի չարիք, մի պատուհաս...։

Այդ չարաբաստիկ դուրս ցցված գծին դեմ տալով խեղճ սայլապանը կոտրում է իր սայլի կամ ակը, կամ առնակը և կամ մի այլ մասը և շշմած ու շվարած կանգ առնում, մնում կես ճանապարհին...։

Ժամանակն է, վերջապես, լուրջ ուշադրություն դարձնել և մենք կարծում ենք ամենից առաջ քաղաքային ուպրավայի անմիջական պարտականությունն է վերացնել այդ չարիքը» [2]։

Նույնատիպ նկարագրություններ են կատարում ականատես այլ քաղաքացիներ ևս։

Ձիաքարշը իր դանդաղաշարժությամբ, խափանումների և այլ պատճառներով սովորաբար աշխատում էր բավական վնասներով։ Ըստ մեզ հասած վիճակագրական տվյալների, 1907, 1908, 1909, 1912, 1913, 1914 թվականներին նա համապատասխանաբար վնաս է ունեցել 3359 ռ. 88 կ., 3674 ռ. 21 կ., 2119 ռ 13 կ., 322 ռ. 63 կ., 1843 ռ., 36 կ. և 90 ռ. 38 կ., 1916 և 1917 թվականների համար տվյալներ չկան, իսկ 1910, 1911 և 1915 թվականներին ունեցել է շնչին օգուտներ [3]։

Ձիաքարշը, այնուամենայնիվ, նույնիսկ նվազագույն չափով չի

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189/506, գ. 165, թ. 13։

2 «Հրազդան» (լրագիր), Երևան, 1908, № 1։

3 ՀՆՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189/506, գ. 165, թ. 13—14։

ջուծում քաղաքի տրանսպորտի հարցը։ Նա գործում էր հսկայական փովածություն ունեցող քաղաքի միայն մի փոքր մասում և այն էլ, ինչպես նշվեց, խափանումներով։

Քաղաքի համար հույժ կարևոր պրոբլեմներից մեկը, ինչպես ասվեց, լուսավորության հարցն էր։ Մինչև XX դարի սկզբները քաղաքի լուսավորումը առաջվա նման կատարվում էր նավթային լապտերներով։ 70-ական թվականներին քաղաքի լուսավորությունը գտնվում էր անմիջապես քաղաքային օրգանների ձեռքին, որոնք էին տնօրինում այդ գործը։ Սակայն 1878 թ. քաղաքային օրգանները գտնելով, որ այդ ձևն անհարմար է և իրեն չի արդարացնում, դիմում են նահանգապետին քաղաքի լուսավորությունը կապալով տալու համար։ Վերջինս 1870 թ. քաղաքային Կանոնադրության կիրառման նախապատրաստական հանձնաժողովի միջոցով պարզում է այդ գործում կապալային սիստեմի հարմար լինելը [1] և բավարարում քաղաքի խնդիրքը։ Քաղաքի լուսավորությունը 1879 թ. սկսած արդեն անընդմեջ տրվում էր կապալով՝ 1 կամ 3 տարի ժամանակով։ Կապալը ձևակերպվում էր աճուրդի միջոցով, այդ մասին նախօրոք ի լուր բոլորին հայտարարելով թերթում։ Քաղաքային վարչությունը կապալառուի հետ կնքում էր հատուկ պայմանագիր, որտեղ նշում էին լապտերների թիվն ու տեսակները, օրվա մեջ լույս տալու ժամերը, յուրաքանչյուր լապտերի համար տրվելիք գումարը և այլն, և այլն [2]։

Երևանի փողոցների, հրապարակների, պրոսպեկտների լապտերների թիվը շատ փոքր էր։ 1878 թ. քաղաքի վառվող բոլոր լապտերների թիվը հասնում էր 74-ի [3], 1880 թ.՝ 85-ի [4], 1881 թ.՝ 100-ի [5], 1906 թ.՝ 722-ի [6], իսկ 1913 թ. վերջերին՝ 228-ի [7]։ Ինչպես տեսնում ենք, լապտերների թիվը 1880—1906 թթ. ավելանում է մոտ 10 անգամ, իսկ դրանից հետո կտրուկ կերպով իջնում է՝ 1913 թ. հասնելով 228-ի։ Այդ միանգամայն հասկանալի է։ 1907 թ. «Ամպեր» ընկերության էլեկտրակայանը շահագործման հանձնվելուց հետո քաղաքի կենտրոնական մասերում նավթային լապտեր-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 3, ցուցակ 1/ա, թ. 46—47։

2 Տե՛ս նույն տեղը, գ. 25, թթ. 11, 14—15, 21, 22, գ. 548, թ. 200, գ. 590, թ. 8, գ. 670, թ. 14 և այլն։

3 «Պատկ», 1880, № 14։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 25, թ. 16։

5 Նույն տեղը, գ. 60, թ. 43։

6 «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. 4, էջ 6, աղյուսակ № 3։

7 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 726, թթ. 44—45, գ. 779, թ. 28։

ների մեծագույն մասը փոխարինվում է էլեկտրականով, իսկ դրանից դուրս գտնվող մասերում նավթային լապտերները շարունակում են գոյություն ունենալ մինչև սովետական ժամանակաշրջանը։

Երևանում հիմնականում գործածության մեջ էին երկու սիստեմի լապտերներ՝ հասարակ և «Գալկինի» սիստեմի, որը չնչին թիվ էր կազմում։ XX դարի սկզբներից «Գալկինից» բացի մեծ ռեկլամներ են արվում ուրիշ տեսակի լապտերների՝ «Սելենա»-ի, «Ռուսաստան»-ի («Россия»), «Դենայրուզ»-ի, «Լուքս»-ի մասին, որոնցից առաջին երկուսը կերոսինային էին, իսկ վերջինները՝ սպիրտային [1]։ Սակայն Երևանը մնում էր հնաձև լապտերների աղտոտ լույսի տակ։ Քաղաքային վարչության 1904 թ. օգոստոսի 9-ի որոշման մեջ նշվում է, որ քաղաքը չունի միջոցներ նոր ձևի՝ բանկարժեք լապտերներ գնելու, որ պետք է բավարարվել հին ձևի ավելի էժան լապտերներով [2]։

Տված արդյունքի հետ համեմատած լուսավորության վրա ծախսվում էին բավական մեծ գումարներ։ 1880 թ. կապալառուն յուրաքանչյուր վառվող լապտերի համար քաղաքային ինքնավարությունից տարեկան վերցնում էր 24 ռ. 50 կ.։ 83 վառվող լապտերի համար քաղաքն այդ թվականին կապալառուին տվել է 2058 ռ. 40 կ., 1898 թ. լուսավորության ծախսերը կազմել են 4784 ռուբլի (յուրաքանչյուր 1000 շնչին 165 ռուբլի), իսկ 1913 թ.՝ 2451 ռ.[3]։ Ծախսերի նվազումը կապված էր երկաթգծի կառուցման և էլեկտրական լուսավորության հետ։

Սովորաբար լապտերները վառվում էին մութն ընկնելուց մինչև երեկոյան ժամը 10—11-ը, քաղաքի նույնիսկ կենտրոնական մասը կանոնավոր չէր լուսավորվում։ Այսպես, Աստաֆյան փողոցում 1913 թ. մեկ և կես կիլոմետր տարածության վրա ընդամենը վառվում էր երկու լապտեր [4], իսկ քաղաքի ծայրամասերն ու արվարձանները մութն ընկնելուն պես թաղվում էին խավարի մեջ։ Առանձնապես վատ էր գործը Նորքում։ Երևանի քաղաքային բժիշկ Լ. Տիգրանյանը «Պատկ» թերթին գրած իր նամակում (1880 թ.) բողոքում է այն բանի համար, որ Նորքի փողոցները չեն լուսավորվում [1]։ Թաղի դրությունը ոչնչով չէր փոխվել նաև XX դարի սկզբներին։ Նորքի 97 բնակիչներ 1905 թ. քաղաքային վարչությանն ուղղած իրենց դիմումի մեջ նշում են, որ Նորքը մի տեսակ խորթ է քաղաքի համար, որ նրան տրամադրված են միայն «8 ռ. դորմելի հին լապտերներ, որոնք չեն լուսավորում երեք քայլի վրա»։ Նրանք միահամուռ կերպով պահանջում են այդ 8 «լուսատուների» վրա գումարել գոնե ևս 15 լապտերներ [2]։

XX դարի սկզբներից տարբեր անձնավորությունների ու ընկերությունների կողմից առաջարկներ են ստացվում Երևանի լուսավորության համար Զանգուի կամ Գետառի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու մասին։ Այդ գործում ցանկալի արդյունքների է հասնում «Ամպեր» ընկերությունը, որի կառավարիչը ինժեներ Գ. Ե. Կիրակոսյանն էր։ Վերջինս առանց քաղաքային վարչությունից կամ որևէ այլ հիմնարկի կողմից երաշխիք ունենալու, Զանգու գետի վրա 1907 թ. սկսում է մի փոքր հիդրոէլեկտրակայանի շինարարություն։ Շինարարական ու հավաքման աշխատանքներն ընթանում են բավական արագ, և էլեկտրակայանը նույն թվականի մայիսի վերջերին արդեն սկսում է գործել։ Կիրակոսյանի ասելով՝ էլեկտրակայանը կառուցվել էր գրեթե բացառապես քաղաքի փողոցներն ու տները լուսավորելու համար [3]։ Սակայն կայանը կառուցելուց հետո քաղաքին էլեկտրաէներգիա տալու շուրջը նա տարիներ շարունակ սակարկություններ է անում քաղաքային վարչության ու դումայի հետ։ Երկուսուկես տեղի ունեցող բանակցությունները տևում են մոտ 6 տարի՝ 1907—1913 թթ., որի ընթացքում քաղաքը ամիսներով զրկվում էր էլեկտրական լույսից։ Կիրակոսյանի և քաղաքային ինքնավարության բանակցությունները մի շարք ոլորաններ ունենալուց հետո ավարտվում են 1913 թ. մարտի 31-ին, երբ դրանց միջև կնքվում է հատուկ պայմանագիր՝ քաղաքին էլեկտրաէներգիա տալու վերաբերյալ [4]։ Պայմանագիրը կնքվել էր անհավասար պայմաններում։ Կիրակոսյանը օգտվելով այն հանգամանքից, որ քաղաքում իր հիդրոէլեկտրակայանը, եթե չհաշվենք Շուստովինը, որը կառուցված էր գինու-կոնյակի գործարանի համար և հնարավորություն չուներ քաղաքին զգալի չափով էներգիա մատակարարելու, միակն է, վարչությանն առաջադրում

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 548, թ. 136։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, գ. 25, թ. 17, գ. 726, թ. 44—45, «Кавказский календарь на 1901 год», отд. 3, էջ 95։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 726, թ. 52։

1 «Պատկ», 1880, № 11։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 590, թ. 18։
3 Նույն տեղը, ֆ. 189 с/506, գ. 87, թ. 2—3։
4 Նույն տեղը։

է դժվար և անընդունելի պայմաններ։ «Երևանի հայտարարություններ» թերթիկում բազմաթիվ տեղեկություններ են զետեղված Կիրակոսյանի առաջարկած պայմանների և դրանք քաղաքային վարչության կողմից ընդունել տալու համար նրա ձեռնարկած միջոցառումների մասին[1]։ Ճշմարտության առաջ չմեղանչելու համար պետք է ասել, որ թերթիկի հրատարակիչ-խմբագիր էմին Տեր-Գրիգորյանը և թերթիկն ընդհանրապես որոշ կողմնակալ վերաբերմունք ունեն ինժ. Կիրակոսյանի նկատմամբ։ Նրանք խստացված ու խառցված են ներկայացնում քաղաքային ինքնավարությանը առաջարկած վերջինիս պայմանները։ Այդ տարիներին դուման բազմաթիվ անգամ աղմկոտ նիստեր է գումարում լույսի հարցը լուծելու համար, իսկ ինժ. Կիրակոսյանն էլ օգտվելով իր մոնոպոլ դիրքից՝ էներգիայի համար առաջարկում է բարձր գներ ու ծանր պայմաններ և, էներգիան կտրելու սպառնալիքի տակ, իր կամքն է թելադրում դումային[2]։ Թերթի թղթակիցներից մեկը հետևյալ կերպ է նկարագրում էլեկտրաէներգիայի շուրջը վարվող բանակցությունները. «Չարաբաստիկ ջրանցքի հարցը հիմնովին վերջացած պետք է համարել...։ Բայց մեր առաջ կանգնած է ոչ պակաս չարաբաստիկ ևս մի հարց։

Դա էլեկտրական լուսավորության հարցն է։

1908 թվից մինչև օրս դեռ մի որոշ կերպարանք չէ ընդունել այդ հարցը։

Երկու կողմերը—քաղաքը և «Ամպեր» ընկերությունը—մերթ ընդ մերթ զզզում են այդ հարցը, երբեմն սուր կերպարանք է առաջ գալիս կողմերի մեջ, երբեմն էլ գործը քնում է հանդիստ, խաղաղ քնով, մինչև որ մի որևէ առիթով նորից առաջ գա հարցը, նորից աղմուկ բարձրանա, նորից կրքեր շարժվեն և ապա... նորից, ինչպես և միշտ, ի դադար մատնվի, թողնելով քաղաքի փողոցները կիսախավար դրության մեջ, իսկ քաղաքային սնդուկը՝ ավելորդ ու աննպատակ ծանրության տակ»[3]։

Բանակցությունները հաճախ կանգնում էին միանգամայն փակուղու առաջ և քաղաքացիներից ու դումայի ձայնավորներից շատերը առաջարկում էին ընդհանրապես խզել «Ամպեր» ընկերության հետ բոլոր տեսակի հարաբերությունները և մտածել զանազան մի-

1 Տե՛ս «Эриванские объявления», 1910, № 40, 1911, №№ 45 և 72, 1912, № 39, 1913, №№ 3, 4, 5, 10 և այլուր։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, 1912, № 39։

ջոցներով, հատկապես փոխառություն վերցնելով, քաղաքի համար կառուցել սեփական հիդրոէլեկտրակայան, ինչպես նաև օգտագործել Շուստովի էլեկտրակայանի էներգիայի մի մասը[1]։ Կողմերի միջև լարվածությունը առավելագույն չափի է հասնում 1913 թ. սկզբներին, երբ Կիրակոսյանը առանց որևէ պատճառի դադարեցնում է քաղաքին էլեկտրականություն տրամադրելը։ Այդ մասին ականատես թղթակիցը խոսում է մեծ զայրույթով։ Ահա նրա խոսքերը. «Քաղաքիս էլեկտրական լուսավորության հարցը... այս քանի տարի է ձգձգվում ու մնում է առկախ։ Բացի դրանից, քանի գնում ավելի ու ավելի բարդանում ու խճճվում է գործը։ Մինչև վերջին օրերը երկու կողմերից և ոչ մեկը ներգործական քայլ չէր ուզում անել՝ մեկը մյուսի վրա գցելով առաջնությունը։ Բայց ահա «Ամպեր» ընկերությունը մերձանցյալ դեկտեմբերի 26-ից այդ քայլն առաջինն արեց՝ փակելով էլեկտրական լույսը և «Կիրակոսյան խավարը» տարածելով քաղաքի բոլոր փողոցներում»[2]։

1913 թ. հունվար-փետրվար ամիսներին քաղաքային դուման լույսի հարցը քննում է 8 անգամ։ Մի քանի անգամ այս հարցը քննարկվում է նաև մարտին և վերջապես կնքվում է վերը նշված պայմանագիրը։ Ինչպես ասվեց, պայմանագիրը կնքվել է 1913 թ. մարտի 31-ին։ Այն վերաբերում էր քաղաքի փողոցների ու մասնավոր տների լուսավորությանը և կնքված էր 8 տարով։ Ըստ պայմանագրի քաղաքային ինքնավարությունը պարտավորվել էր պայմանագրային ժամկետում մոնոպոլ կերպով «Ամպեր» ընկերությանը տալ քաղաքում էլեկտրական գծերի անցկացման և դրանց շահագործման իրավունքը, այլ ձեռնարկատերեր կամ ինքը՝ քաղաքային ինքնավարությունը իրավունք չունեին այդպիսի գործերի դիմելու, բացառությամբ Շուստովի ընկերության, որին թույլատրված էր էլեկտրական լարեր անցկացնելու միայն որոշակի սահմաններում։ Պայմանագրային ժամկետը լրանալու դեպքում, եթե քաղաքը ցանկանա կոնցեսիոն կարգով ձեռք բերել իր սեփական հիդրոէլեկտրակայանը, ապա հավասար պայմաններով այդ կոնցեսիան առաջին հերթին տրվում է «Ամպեր» ընկերությանը[3]։

Կոնցեսիոներ Կիրակոսյանի ասելով՝ էլեկտրակայանի, ենթակայանների, էլեկտրացանցի և ձեռնարկության մյուս բոլոր օբյեկտների վրա ընդամենը ծախսվել էր 150.000 ռուբլի (ոսկով)[4],

1 «Эриванские объявления», 1911, № 72, 1912, № 39, 1913, № 4։

2 Նույն տեղը, 1913, № 3։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189 c/506, գ. 87, թ. 2—3։

4 Նույն տեղը։

Պայմանագրի պայմանները շատ ծանր էին, էլեկտրաէներգիան՝ թանկ։ Սակայն այդ մի կերպ կարելի էր տանել, եթե ընկերությունը գոնե կարողանար նվազագույն չափով և անխափան լուսավորել քաղաքի փողոցներն ու ղրոսայգիները, հասարակական և մասնավոր տները։ Քաջատեղյակ ժամանակակիցը գրում է, որ «Կիրակոսյանի տված էլեկտրական լույսի էներգիան շատ քիչ է, բավարարություն չէ տալիս նրա աբոնենտներին։ Բավական է, որ «Իլլյուզիոնում» կամ թատրոնում ներկայացում լինի և կամ դուռմայի դահլիճում նիստեր՝ և տեսնում ենք մյուս տեղերում ու տներում ստացվում է վնասակար կարմիր լույս։ Նույն լույսն էլ ստացվում է կլուբում և թատրոնում։ Լույսը մերթ բարձրանում է, մերթ իջնում, իսկ երբեմնապես միանգամայն հանգչում։ Սա ի՞նչ է։ Մեզ քոռացնելու միտք ունի պ. Կիրակոսյանը, ի՞նչ է։ Բացի դրանից, նա պարտական է քաղաքի լապտերները լուսավորել երեկոյան մութն ընկնելու և հանգցնել առավոտյան լույսը ծագելու ժամանակ, այնինչ՝ գիշերվա ժամը 3—4-ին, ինչպես մեզ հավատացնում են, շատ անգամ բոլոր լապտերները հանգած են լինում»[1]։

Այո, Կիրակոսյանն իր «Ամպեր» ընկերության խղճուկ էլեկտրակայանով եթե ցանկանար էլ, չէր կարող նույնիսկ նվազագույն չափով բավարարել քաղաքի էլեկտրական լույսի պահանջը։ Պատահական չէ, որ նույնիսկ քաղաքի ամենակենտրոնական մասերում էլեկտրական լապտերների հետ միասին նրանց կողքին կախված էին մնում և կերոսինի վաղեմի լապտերները, որոնք օգտագործվում էին և էլեկտրաէներգիա ունեցած ժամանակ և, մանավանդ, էլեկտրակայանի խափանումների պահերին, իսկ էլեկտրակայանը այդպիսի խափանումներ շատ էր տալիս, մանավանդ ձմռանն ու գարնանը։ Քաղաքացիները հույս ունեին, որ քաղաքային ինքնավարության և «Ամպեր» ընկերության միջև վերջնական պայմանագիրը կնքվելուց հետո կկանոնավորվի լուսավորության գործը։ Բայց խղուր, նրանց հույսերը շուտով ի դերև եղան։ Էլեկտրակայանի փոքր հզորությունը և, մանավանդ, մեքենաների հաճախակի փչանալը քացառում էին լույսի պրոբլեմի բավարար լուծումը։ Պայմանագիրը կնքելուց 4—5 ամիս անց «Ամպեր»-ի էլեկտրակայանն արդեն հաճախակի կանգ էր առնում զանազան պատճառներով։ «Կիրակոսյան խավարը» դարձյալ տիրեց ժողովրդին,— կարդում ենք «Երևանի հայտարարություններ» թերթիկի էջերում։— Արդեն ամսից ավելի է, ինչ «Ամպեր» ընկերության էլեկտրակայանի մեքենաները փչանալով՝ չեն կարողանում լույս մատակարարել քաղաքի շատ տեղերում։ Շատ տներ ու խանութներ դարձյալ դիմում են կերոսինի օգնության...»[1]։ Իսկ նույն թվականի նոյեմբերի համարներից մեկում հաղորդվում է, որ չնայած արդեն յոթ-ութ ամիս է, ինչ 8 տարով մոնոպոլիա է տրված «Ամպեր» ընկերությանը քաղաքը լուսավորելու, սակայն քաղաքի լուսավորումը գտնվում է անմխիթար վիճակում, փաստորեն քաղաքում էլեսախավարն է իշխում՝ կանոնավոր չեն ո՛չ էլեկտրական լամպերը և ո՛չ էլ նավթայինը[2]։ Հետագայում դրությունը նույնիսկ վատանում է, իսկ դաշնակների տիրապետության շրջանում էլեկտրակայանի մունիցիպալիզացիայի հարցի շուրջը Կիրակոսյանի և քաղաքային վարչության միջև առաջանում են մեծ անախորժություններ[3], որոնք պատճառ են դառնում «Կիրակոսյան» նոր «խավարումների»։

«Ամպեր» ընկերության հիդրոէլեկտրակայանը միակը չէր։ Ինչպես նշվել է, գրեթե «Ամպեր» ընկերության հետ միաժամանակ իր գինու և կոնյակի գործարաններին էներգիա մատակարարելու համար մի փոքրիկ հիդրոէլեկտրակայան է կառուցել նաև Շուստովը։ Վերջինիս հիդրոէլեկտրակայանի էներգիայի մի մասը ևս օգտագործվում էր քաղաքի լուսավորության համար։ Շուստովը իրավունք էր ստացել քաղաքի որոշ մասերում անցկացնել էլեկտրալարեր և էներգիա տալ այդ մասերի փողոցներին ու տներին. մի բան, որ, ինչպես ասացինք, Կիրակոսյանից բացի մյուս բոլորին արգելված էր պայմանագրով։ Իսկ Հաջի Իբրահիմ-օղլու ավելի փոքրիկ էլեկտրակայանը, որ էներգիա էր մատակարարում բացառապես նրա կաշվի գործարանին, գոյություն է ունեցել և գործել միայն մի քանի ամիս։

Այդ հարցը լիովին լուծված չէր համարվում նաև ժամանակակիցների գնահատմամբ, որոնք գրեթե ամենուրեք մատնացույց են անում Երևանի էլեկտրաէներգիայի անբավարար և քաղաքի աղբատ բնակչության համար անմատչելի լինելը, չնայած ուրիշ քաղաքների համեմատությամբ այստեղ էլեկտրաէներգիան ձեռք էր բերվում շատ էժան, հոսող ջրի միջոցով։ Ժամանակակիցները միանգամայն ճիշտ են արձանագրում իրականությունը, երբ գրում են, թե՝ ««Ամպեր» ընկերության էլեկտրակայանի ուժը... այնքան

1 «Эриванские объявления», *1909, № 3*։

1 «Эриванские объявления», *1913, № 59*։
2 Նույն տեղը, *№ 81*։
3 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189 с/560, գ. 87, թ. 2—3*։

քիչ է, այնքան թույլ, այնքան երերուն և թանկ, որ չի կարելի նրա վրա որևէ հույս դնել։ Եղած ուժը կարող է միայն պարծենալու մի բան համարվել մի քանի հարուստների համար, իսկ մեծամասնության համար ուղղակի անմատչելի է»[1], կամ՝ «Ամենքին էլ հայտնի է, որ մեր քաղաքն ունի երկու էլեկտրակայան, որ մատակարարում է թե քաղաքին և թե ժողովրդին էներգիա—լույս՝ ամենամատչելի և աժան գներով, քան ուրիշ մյուս քաղաքների կայարանները, նշանակում է այդ երկրորդական, այնքան էլ ոչ էական հարցը, եթե ոչ բոլորովին, գոնև կես չափով սառցել է յուր լուծումը. այդ լույսով օգտվողները մեծ մասամբ հարուստ ու միջին դասակարգն է և ոչ աղքատը»[2]։

Ըստ պայմանագրի յուրաքանչյուր լամպը քաղաքի կամ քաղաքացիների վրա տարեկան նստում էր 12 ռուբլի[3]։

Ինչպես ասվեց, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ելնելով քաղաքի կարիքներից, «Ամպեր» ընկերությունից ու Շուստովից բացի Երևանում էլեկտրակայան կառուցելու հարցով դիմում են նաև ուրիշները։ Այդ հարցով քաղաքային վարչությանը առաջինը դիմում է ինժեներ Ն. Վ. Պասեկը, որը առաջարկում է ջրմուղի և էլեկտրական տրամվայի հետ միասին քաղաքում, Զանգու գետի ափին, կառուցել 200 ձիու ուժ ունեցող էլեկտրակայան և էլեկտրալարերի ու լամպերի ցանց ստեղծել քաղաքի գլխավոր փողոցներում և երկու պուրակներում[4]։ 1901 թ. ապրիլի 13-ին թվագրված այդ դիմումը վերջ ի վերջո քաղաքային վարչության և դումայի կողմից մերժվում է, որովհետև քաղաքի համար ավելի ձեռնտու են համարվում Պասեկից մի քանի ամսով ավելի ուշ դիմած Բաբայանի առաջարկած պայմանները՝ ձիաքարշի ու ջրմուղի կառուցման համար, որի մասին արդեն մասամբ ասվել և դեռ պետք է ասվի ջրմուղի առնչությամբ։

Էլեկտրակայան կառուցելու համար քաղաքային վարչությանը դիմում են նաև Հաջի Իբրահիմ-օղլին, որը, թույլտվություն ստանալով, կառուցում է մի փոքրիկ հիդրոէլեկտրակայան, բայց այն շուտով դադարում է գործելուց (1906 թ. մարտին), Սիմեոն Համբարյանը, որին նույնպես թույլատրվում է (1906 թ. ապրիլ) հիդրոէլեկտրակայան կառուցելու[5], բայց նա շուտով հրաժարվում է

1 «Эриванские объявления», 1911, № 72։
2 «Նոր մամուլ» (լրագիր), Երևան, 1913, № 10։
3 «Эриванские объявления», 1909, № 60, 1913, № 28։
4 ՀՆՄՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 488, թ. 6։
5 Նույն տեղը, գ. 1492, թ. 1։

այդ մտքից։ 1906 թ. նույնպիսի հարցով դիմում է Ա. Ա. Տեր-Աստվածատրյանը[1], որին հաջորդում են և ուրիշներ։ Հետագա տարիներին, ընդհուպ մինչև «Ամպեր» ընկերության հետ վերջնական պայմանագիր կնքելը և դրան մենաշնորհ իրավունքներ տալը, դիմումների հոսանքը շարունակվում է[2]։ Դրանց մեջ առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ինժեներ-տեխնոլոգ Արշակ Մալխասյանի ու Խալիկ բեկ Կասումովի և «Կոոպերացիա» փայատիրական ընկերության դիմումները։ Առաջինները 1909 թ. մարտին դիմում են քաղաքային վարչությանը, առաջարկելով վերջինիս հետ միասին կառուցել մի հիդրոէլեկտրակայան։ Ըստ նրանց նախնական հաշիվների, էլեկտրակայանի վրա ծախսվելու էր 60 հազար ռուբլի, որից 15 հազարը խոստանում էին տալ իրենք, իսկ 45 հազարը պահանջում էին քաղաքից։ Քաղաքային վարչությունը, հատուկ հանձնաժողովի միջոցով քննելով Մալխասյանի և Կասումովի առաջարկը, այն համարում է անընդունելի. Քաղաքային դուման 1909 թ. մայիսի 5-ին կայացած նիստում հաստատում է քաղաքային վարչության նախնական եզրակացությունը՝ մերժելով նշված առաջարկը[3]։

«Կոոպերացիան» փայատիրական ընկերություն էր։ Նա, ինչպես իրենք՝ փայատերերն են ասում, «էլեկտրական-արտադրական և սպառողական» ընկերություն էր, որ կազմակերպվել էր 1913 թ. դեկտեմբեր ամսին։ Նա ուներ իր կանոնադրությունը, ըստ որի նրա պատակներից էր լուծել քաղաքի էլեկտրական լուսավորության պրոբլեմը։ Ընկերությունն իրեն համարում էր «Ամպերին» մրցակիցը և հօգուտ իր առաջարկած պայմանների «Երևանի հայտարարություններ» թերթիկում ծավալում է լայն պրոպագանդա։ Ընկերության անդամներն ու առանձին ներկայացուցիչներ, օգտվելով թերթի հրատարակիչ-խմբագիր Էմին Տեր-Գրիգորյանի բարյացակամությունից, թերթիկում պարբերաբար տպագրում են բազմաթիվ հոդվածներ, որոնցում, հենվելով զանազան փաստերի վրա, իրենց առաջարկները համարում են քաղաքի համար ամենաձեռնտուն և շահավետը։ Նրանք գրում են, որ «Ամպերին» մենաշնորհ տալը մեծ վնաս է բերելու քաղաքին, որ նրա էներգիան շատ թանկ է նստում քաղաքի վրա, որ նա իր արտակարգ իրավունքներով սահմանափակում է և՛ քաղաքացիների, և՛ թե հենց իր քաղաքային ինքնավարության նախաձեռնությունը։ Ընկերության գործունեու-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1493, թ. 2։
2 Տե՛ս «Эриванские объявления», 1910, № 29։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 679, թ. 3։

բյունը առանձնապես եռուն էր առաջին մեկ և կես ամսվա ընթացքում, քանի դեռ քաղաքի և Կիրակոսյանի միջև չէր կնքվել վերը նշված պայմանագիրը։ Սակայն պայմանագրի կնքումից հետո էլ «Կոոպերացիան» շարունակում է գործել՝ ունենալ իր ժողովները, հավաքել անդամավճարներ, կազմել զանազան պլաններ ու ծրագրեր, հորդորել քաղաքային ինքնավարությանը Կիրակոսյանին տրված մենաշնորհ իրավունքը վերացնելու ու պայմանագիրը չեղյալ հայտարարելու և այլն։ Կարելի է ասել «Կոոպերացիայի» գործունեությունը որոշ առումներով Կիրակոսյանի կնքած պայմանագրից հետո նույնիսկ աշխուժանում է։ Հենց այդ ժամանակներում է, որ նա իր փայատերերի և քաղաքի էլեկտրական լույսի պահանջի մի մասը շուտափույտ կերպով բավարարելու համար բանակցություններ է սկսում Շուստովի հետ՝ նրա էլեկտրակայանը գնելու համար։ Բանակցությունները սկզբում վարվում են հաջողությամբ։ Շուստովը համաձայնվում է «Կոոպերացիային» վաճառել իր հիդրոէլեկտրակայանը պայմանով, եթե շարունակվի իր առաջարկած պայմաններով գինու և կոնյակի գործարաններին էլեկտրաէներգիայի մատակարարումը։ Երկու կողմերը համաձայնվում են էլեկտրակայանի վաճառքի գինը սահմանել 50.000 ռուբլի։ Ինքը Շուստովը պետք է մասնակցեր 10.000 ռ. փայով։ Ուստի ընկերությունը Շուստովին պետք է տար միայն 40.000 ռուբլի, այն էլ երեք նվագով։ Վերջնական պայմանը կնքելու պահին (1913 թ. աշնան սկզբին), սակայն, Շուստովը զանազան պատրվակներ բերելով՝ հրաժարվում է այդ գործարքից։ Դրանից հետո նույնպես «Կոոպերացիան» շարունակում է իր գոյությունը, բայց իրրև սոսկ սպառողական ընկերություն, առանց ակտիվ գործունեության [1]։

Ժամանակակիցներից շատերը միանգամայն իրավացիորեն գտնում էին, որ քաղաքի լուսավորության գործը հաջող կկազմակերպվեր, եթե քաղաքն ունենար իր սեփական հիդրոէլեկտրակայանը և այդ գծով կախված չլիներ զանազան ընկերություններից ու մասնավոր մարդկանցից։ Քաղաքային դումայի շրջանում այդ տեսակետն ավելի մեծ կողմնակիցներ ուներ մանավանդ 1911—1912 թթ., երբ քաղաքային ինքնավարության և Կիրակոսյանի միջև բանակցությունները հասել էին առավելագույնի ու երբ վերջինիս պատճառով քաղաքն ամիսներով զրկված էր լույսից։ Այդ հարցն առաջին անգամ առաջ էր քաշել էմ. Տեր-Գրիգորյանը դեռևս 1910

1 «Կոոպերացիա» ընկերության կազմակերպման ու գործունեության մասին մանրամասն տե՛ս «Эриванские объявления», 1913, №№ 11, 15, 20, 23, 24, 25, 26, 28, 35—36, 40—41, 50, 56, 77, 86։

թվականի վերջերին։ Հետագայում նրան միանում են ուրիշները [1], 1912 թ. սկզբներին հարցն ավելի է կոնկրետանում և դուման այն լուծելու համար դիմում է որոշ միջոցների։ Մամուլի հաղորդագրության համաձայն, դեռևս 1911 թ. նոյեմբերի 9-ի նիստում դուման ընտրել էր 10 հոգուց բաղկացած մի գիտակ հանձնաժողով, որին հանձնարարել էր քաղաքային սեփական էլեկտրակայան ունենալու հարցը հետազոտել ու քննարկել և գործողության համապատասխան ծրագիր կազմելով՝ ներկայացնել դումային [2]։ Հանձնաժողովը, սակայն, դուրս է գալիս անգործունյա [3], ամիսներ շարունակ նույնիսկ զգացնել չտալով իր գոյությունը, իսկ դուման էլ բավարարվում է նրա սոսկ կազմակերպումով, առանց նրանից գործ պահանջելու։ Կիրակոսյանի հետ պայմանագիր կնքելուց հետո դուման այլևս ընդհանրապես հրաժարվում է սեփական էլեկտրակայան ունենալու մտքից։

Այսպիսով, քաղաքի լուսավորության հարցի տանելի լուծումը մեզ հետաքրքրող շրջանում մնում է առկախ։ Վրա հասնող պատերազմի հետևանքով աստիճանաբար մարում է այդ բնագավառում եղած նախապատերազմյան տարիների աշխույժ հետաքրքրությունը։ Քաղաքը մնում է կիսախավարում, իսկ կապալառուն իր թերացումները պատճառաբանում է հազար ու մեկ պատրվակներով։ Քաղաքն իր բյուջեի մոտ մեկ իններորդ մասը ծախսում է լուսավորության վրա, բայց անարդյունք։

Երևանի ներքին կյանքի գլխավոր խնդիրը խմելու ջրի ապահովումն էր, մի հարց, որը, ինչպես տեսանք սույն աշխատության նախորդ գրքում, ուներ դարավոր պատմություն։

Խմելու ջրի պրոբլեմը քաղաքային դումայում դրվում է 1870 թ. Կանոնադրությունը Երևանում կիրառվելուց անմիջապես հետո։ Սկզբից ևեթ քաղաքի համար իրրև խմելու ջրի հուսալի բազա համարվում են Քառասուն աղբյուրները (Կըրխբուլաղը), որոնք գտնվում էին Երևանից մոտ 18 վերստ (մոտ 19 կմ) հեռավորության վրա, Գետառ գետի ակունքի շրջանում։ Այդ աղբյուրների ջուրը մաքուր ու փափուկ է, չեմաստիճանը՝ ցածր, գտնվում է ոչ հեռու, քաղաքից մոտ 1000—1100 մետր բարձր վայրում և ինքնահոսի եղանակով դրանց ջուրը կարող էր հասնել քաղաքի ամենաբարձր մասերը։ Աղբյուրները հորդառատ էին և կարող էին լիովին բավա-

1 «Эриванские объявления», 1911, № 72, 1912, № 39։
2 Նույն տեղը, 1912, № 6։
3 Նույն տեղը։

բարել քաղաքի բնակչության պահանջները, մանավանդ, որ դրանց ուժգինը շատ հաստատուն է և տարբեր տարիների դեպքում՝ գրեթե իրար հավասար։ «Բոլոր այդ ավյալները քաղաքացիներին վաղուց բերել էին այն համոզման,— գրում է իր զեկուցագրի մեջ քաղաքագլուխ Ի. Ղ. Մելիք-Ադամալյանը,— որ ջրմուղը պետք է հենց կառուցվի նշված աղբյուրներից» [1]։ Այդ է պատճառը, նշում է նա, որ քաղաքային Կանոնադրությունը կիրառելուց հետո անմիջապես քաղաքացիները սկսեցին ջրմուղի կառուցման հարցով քաղաքային դումային անհանգստացնել անընդմեջ, այդ է հիմնական պատճառներից մեկը, որ Քառասուն աղբյուրներից բերվելիք ջրի հարցը դառնում է քաղաքի բնակչության լայն զանգվածների կենսական հարցը [2], մի հարց, որով հետաքրքրվել են հասարակության ամենատարբեր խավերին պատկանող մարդիկ, պետական ամենատարբեր հիմնարկներ, անհատ ձեռնարկուներ, ընկերություններ։

Մեզ հետաքրքրող շրջանում այդ հարցը հիմնավորապես առաջ է քաշում քաղաքային առաջին դումայի ձայնավոր Ղևոնդ Ղազարյանը և նշում այն ուղիները, որոնց միջոցով հնարավոր կլիներ լուծել պրոբլեմը։ Նա իր սեփական նախաձեռնությամբ նախ և առաջ մի ամբողջական հանձնաժողով է հրավիրում և «ուղարկում աղբյուրները նայելու ու իր մտածած ջրմուղի ամենահարմար ուղղությունը որոշելու համար» [3]։ Հանձնաժողովը բաղկացած էր օկրուգային դատարանի սահմանաչափման նախկին անդամ Երվանդյանից, գավառապետ Թումանյանից, հողաչափ Մորեշևից և ազդեցիկ այլ մարդկանցից [4]։ Հանձնաժողովը կարճ ժամանակում կատարում է իր վրա դրված համեստ պարտականությունը և այդ մասին 1880 թ. սեպտեմբերի 29-ին քաղաքային դումա է ներկայացնում մի մանրամասն արձանագրություն։ Այստեղ Քառասուն աղբյուրների ջրի բնութագրումից և ջրմուղի ուղղության մասին արված դատողություններից բացի նշվում էր նաև ջրմուղի կառուցման համար անհրաժեշտ դումարի հավաքման կարգը։ Արձանագրության մեջ նշվում էր, որ ջրմուղի կառուցման համար Ղ. Ղազարյանը նվիրաբերում է 10.000 ռուբլի, պայմանով, որ «մնացած գումարը քաղաքային միջոցների պակասության պատճառով» պետք է բաժնեգրման կարգով հավաքվի քաղաքացիներից։ Հանձնաժողովը առաջարկում է ջրմուղը բերել մուլքադարական Աղաձոր, պետական Արամուս և Շահապ, էջմիածնի վանքին պատկանող Գետարգել և պետական Ավան գյուղերով [1]։

Հանձնաժողովի կազմած այդ արձանագրությունը Ղազարյանը դուման է ներկայացնում 1881 թ. փետրվարի 4-ին, հայտարարելով, որ ինքը պատրաստ է ժամանակին դումայի իրավասության տակ դնել իր խոստացած 10.000 ռուբլին [2]։ Գործին հետագա ընթացք տալու համար դուման նույն թվականի փետրվարի 27-ին կազմում է մի նոր հանձնաժողով, որին հանձնարարում է՝ ա) որոշել կըրխբուլաղի ջրից քաղաքի իրավասությանը ենթակա բաժնի չափը, բ) մասնագետների միջոցով կազմել պլանավորված ջրմուղի հարթաչափական հատակագիծը ու ծախսերի նախահաշիվը և գ) ստորագրությամբ հավաքել ծախսերի համար անհրաժեշտ գումարը։

Քաղաքային վարչության զեկուցագրից երևում է, որ այդ հանձնաժողովը միայն հաջողությամբ որոշել է Քառասուն աղբյուրներից քաղաքին բաժին ընկնող ջրի քանակը (10 բահ) [3], որը լիովին կբավարարեր նրա կարիքները։ Հանձնաժողովի կատարած մյուս գործերի մասին որևէ տեղեկություն չի պահպանվել, ինչպես իրավացիորեն նշված է քաղաքային վարչության նշված զեկուցագրում։ Սակայն «Պատկ» թերթում 1882 թ. զետեղված մի հոդվածից երևում է, որ հանձնաժողովը դրամ հավաքելու հարցում որևէ հաջողության չէր հասել։ «Պատկի» թղթակիցը իր այդ հոդվածում գրում է, թե քանի որ հնարավոր չէ ջրմուղի համար անհրաժեշտ 40—50 հազ. ռուբլին ստորագրությամբ հավաքել, ապա լավ կլիներ, որ ջրմուղի ակունքը վերցնել ավելի մոտ տարածությունից և այդ եղանակով դրա վրա կատարվելիք ծախսը իջեցնել 20 հազարի։ Թերթը կոչ է անում Ղազարյանին ջրմուղը կառուցել վերջին վարիանտով և, նրա ամբողջ հոգսը վերցնելով իր վրա, դառնալ քաղաքի իսկական բարերարը։ Հոդվածում ասված է. «Հրավիրում ենք պ. Ղազարյանի ուշադրությունը մեր առաջարկության վրա։ Փոխանակ դիմելու զանազան տոհմ, նախանձոտ, չարակամ մարդկանց, խնդրելով նրանց մասնակցությունը, լավ կլիներ այդ մեծ գործի անմահ անունը պահել իր համար՝ չբաժանելով անարժան

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 187։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, ինչպես նաև՝ ֆ. 117, գ. 163, թ. 55։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 163, թ. 55։
2 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 187, ֆ. 117, գ. 163, թ. 55։
3 Նույն տեղը, ֆ. 117, գ. 163, թ. 55։

մարդկանց հետ։ Հասկանալի է դիմել այդ մարդկանց օգնությանը առաջին դեպքում, երբ Բաշգյուղից բերելու համար մեծ գումար էր հարկավոր, բայց այս դեպքում, երբ 20 հազար է հարկավոր, իզուր է...։ Հույս ունենք, որ պ. Ղազարյանը չի զլանա Երևանի բարերարը լինելուց»[1]։

Հասկանալի է, որ հանձնաժողովին չէր հաջողվել բնակչությունից հավաքել շատ թե քիչ գումար։ Սակայն գործը դրանով չի փակվում։ 1885 թ. նոյեմբերի 12-ին քաղաքագլուխը վարչությանն է ներկայացնում արդեն հանգուցյալ՝ Ղազարյանի նույն թվականի նոյեմբերի 9-ի գրած պարտավորագիրը՝ նրա և վկաներ եգոր Բակլաչյանի, եգոր Տեր-Սահակյանի ու Վասիլի Այդինյանի ստորագրությամբ։ Ղազարյանը դրանով անվերադարձ կերպով ջրմուղի համար նվիրաբերում էր նշված 10.000 ռուբլին, միայն պայմանով, որ քաղաքային վարչությունը ոչ ավելի քան 4 տարվա ընթացքում քաղաքի բնակչությունից հավաքի ջրմուղի համար պահանջվող գումարի մյուս մասը և սկսի դրա շինարարությունը։ Նվիրաբերումը կատարվելու էր աստիճանաբար, ջրմուղի աշխատանքներին համընթաց՝ յուրաքանչյուր նվագում 1000 ռուբլի։ Ղազարյանի պարտավորագրի կատարումը պարտադիր էր նաև նրա ժառանգորդների համար, բայց պայմանը խախտելու դեպքում այն անմիջապես կորցնում էր իր ուժը[2]։

Պատկառելի գումարից չզրկվելու համար քաղաքային վարչությունը դումայի համաձայնությամբ ձեռնամուխ է լինում պրոբլեմի լուծման համար պահանջվող գումարի մյուս մասի հայթայթման գործին։ Նրա նախաձեռնությամբ մի քանի խորհրդակցություն է անցկացվում քաղաքի ունևոր բնակիչների մոտ։ Վերջիններս սկզբում պատրաստակամություն են հայտնում այդ գործին տրամադրել մոտ 15.000 ռուբլի, բայց հետագայում, պատրվակ բերելով տարբեր խմբերի միջև եղած որոշ անհամաձայնությունները, հրաժարվում են իրենց խոստումից[3]։ Վարչությունն այս անգամ որոշում է պահանջվող գումարը (30 հազ. ռուբ.) փոխառության կարգով վերցնել անհատ մարդկանցից՝ տարեկան 6 տոկոս շահույթ տալով, իսկ հիմնական կապիտալի մարման համար նախատեսելով 10 տարի։ Միաժամանակ վարչությունը նպատակահարմար էր գտնում դիմել պետությանը այդ գումարի չափով վարկ բաց թողնելու, որպիսին ստանալու դեպքում կարելի կլիներ առանց որոշ-

1 «Պատկ», 1882, № 19։
2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 63, թթ. 55 և 58։
3 Նույն տեղը, թթ. 58—59։

ված ժամկետին սպասելու փակել պարտքը[1]։ Սակայն որևէ արդյունք չի ստացվում։ Հնարավոր չի լինում ոչ փոխառություն վերցնել և ոչ էլ ստանալ վարկ։ Այս անգամ, 1888 թ. վարչությունն ու դուման որոշում են ջրմուղը կառուցել Ղազարյանի, քաղաքային և պետական միացյալ միջոցներով։ Ենթադրվում էր պետությունից որոշ դրամագլուխ ստանալ Քանաքեռում գտնվող կայազորին խմելու ջուր տալու պայմանով։ Սակայն դրա համար ծավալված գրագրությունները ևս մնում են իբրև գրագրություններ։ Գործը տեղից չի շարժվում՝ իսկ Ղազարյանի պայմանագրությունը՝ ժամկետն անցնելու պատճառով կորցնում է իր ուժը։

Մի փոքր ընդհատումից հետո, 90-ական թվականների սկզբից, նորից է հարցը դրվում սեղանի վրա։ 1891 թ. հոկտեմբերի 2-ին ինժեներ Կիրակոսյանը քաղաքային վարչությանն է ներկայացնում ջրմուղի նախագիծը, ըստ որի ջուրը պետք է բերվեր Քառասուն աղբյուրներից կավե խողովակներով և պետք է մատակարարվեր քաղաքի Շահար, Դեմիրբուլաղ և Կոնդ թաղամասերին։ Այդ նախագծի կատարումը պահանջում էր մոտ 130.000ռ.։ Կիրակոսյանի նախագիծը ընդհանուր առմամբ ընդունելի էր և հավանություն էր գտել Կովկասյան ճանապարհային հաղորդակցության օկրուգի համապատասխան բաժնի կողմից՝ պայմանով, որ կավե խողովակները փոխարինվեն թուջե խողովակներով։ Վերջին վարիանտով գլխավոր ջրմուղի ծախսը կազմելու էր 175.000 ռ.[2]։ Իսկ ջրմուղի երկարությունը նախատեսված էր 13 վերստ (=մոտ 13,5 կմ)։

Նույն թվականին լեռնային ինժեներ Աղաբաբյանը քաղաքային վարչությանը դիմում է մի նոր առաջարկով։ Նա՝ քաջատեղյակ լինելով Երևանի շրջակայքի ջրերին և իմանալով, որ քաղաքը չունի համապատասխան միջոցներ Քառասուն աղբյուրների ջուրը բերելու, ներկայացնում է նախագիծ քաղաքից 9 վերստ հեռավորության վրա, Զանգու գետի ափին, Քանաքեռից հյուսիս-արևմուտք գտնվող Սարավ-աղբյուր կոչված ջուրը բերելու համար։ Այդ առաջարկությունը ստանալուց հետո, քաղաքային վարչությունը Քառասուն աղբյուրների և Սարավ-աղբյուրի ջրերը ստուգման է ուղարկում Նովորոսիյսկի համալսարանի պրոֆեսոր Վերիգոյին։ Վերջինս վերլուծելով ստուգման ուղարկված ջրի նմուշները, գալիս է այն եզրակացության, որ խմելու համար երկուսն էլ պիտանի են և բավարարում են պայմաններին։ Ընդ որում, պրոֆեսորի կատարած ստուգումը ցույց է տալիս, որ Քառասուն աղբյուրների

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 63, թ. 59։
2 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 187։

ջուրը Նարավ- աղբյուրի համեմատությամբ ավելի փափուկ և մաքուր է [1]։

Ստացված նյութերի հիման վրա քաղաքային վարչությունը 1892 թ. հոկտեմբերի 26-ին կազմում է հատուկ զեկուցագիր և այն դումայի քննարկմանն է ներկայացնում նույն թվականի դեկտեմբերի սկզբներին։ Քաղաքային վարչության զեկուցագրի հիման վրա դուման 1892 թ. դեկտեմբերի 7-ին միաձայն որոշում է. 1) քաղաքի խմելու ջուրը բերել Քառասուն աղբյուրներից, հենց Սարդար-բուլաղից և 2) այդ նպատակի համար ստուգել ինժեներ Կիրակոսյանի ներկայացրած նախագիծն ու նախահաշիվը։ Վերջինս պետք է կատարեր Ճանապարհային հաղորդակցության Կովկասյան օկրուգը [2]։

Ինչպես արդեն ասվեց, Կիրակոսյանի նախագիծը ստուգման է ենթարկվում և անհրաժեշտ է համարվում գլխավոր ջրմուղի համար նախատեսված կավե խողովակները փոխարինել թուջե խողովակներով։ Այնուհետև անհրաժեշտ է համարվում ջուրը բերել մոտ 16 վերստ հեռավորությունից, քաղաքային գծի ներսում թուջի փոխարեն օգտագործել տեղական արտադրության կավե խողովակներ, ջուրը բերել միայն խմելու համար՝ յուրաքանչյուր շնչին օրական վեց դույլի չափով, քաղաքի բնակչությունը հաշվելով 30 հազար (այսինքն՝ ջրմուղի օրվա ծախսը պետք է կազմեր 180 հազար դույլ)։ Այդ պայմաններով և մասշտաբով ջրմուղի կառուցումը պահանջում էր 175.052 ռուբլի [3]։

1895 թ. փետրվարի 3-ին տեղի ունեցած մասնավոր խորհրդակցությունում մասնացույց աննելով Քառասուն աղբյուրներից ջուր բերելու համար պահանջվող մեծ ծախսերը, առաջարկվում է խմելու ջուրը բերել Նարավ-աղբյուրից։ Սակայն խորհրդակցությանը մասնակցող տեխնիկները գտնում են, որ Նարավ-աղբյուրի ջրմուղը քաղաքի վրա կնստի 60 հազ. ռուբլուց ոչ պակաս, հետևապես վարչությունն անիմաստ է համարում այդպիսի ջրմուղի կառուցումը։ Նարավ-աղբյուրից ջուր բերելու մտադրությունը դրանով ընդմիշտ դուրս է գալիս օրակարգից, ուժի մեջ է մնում դումայի 1892 թ. դեկտեմբերի 7-ի որոշումը, միայն այն տարբերությամբ, որ առաջարկվում է մետաղյա խողովակները փոխարինել փայտե և քարապատ առվով [4]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 187։
2 Նույն տեղը, նաև ֆ. 117, գ. 352, թ. 4։
3 Նույն տեղը, ֆ. 117, գ. 352, թ. 4։
4 Նույն տեղը։

Վերջինիս օգտակարությունն ու կառուցման եղանակները պարզաբանելու համար դուման հատուկ հանձնարարություններ է տալիս քաղաքային վարչությանն ու այդ նպատակի համար կազմված հանձնաժողովին, որի կազմումն էին դումայի ձայնավորներ Եգոր Տեր-Սահակյանը, Համբարձում Եղիազարյանը, Մաշադի Ջաֆար Հաջի Ռաջաբ-օղլին, և Գրիգոր Ամիրյանը։ Առօրյա աշխատանքները կազմակերպելու համար քաղաքային վարչության տրամադրության տակ է դրվում նույնիսկ որոշ գումար։ Դումայի ինչպես առաջին՝ 1892 թ. դեկտեմբերի 7-ի որոշումը, այնպես էլ այս, մնում է անկատար [1]։

Սակայն դուման և քաղաքային վարչությունը ամեն կերպ ձգտում էին գործը տեղից շարժել։ Նշված հանձնաժողովի փոխարեն 1896 թ. մայիսի 28-ին կազմվում է մի նոր հանձնաժողով՝ ավելի մեծ կազմով և օժտված ավելի լայն ֆունկցիաներով։ Վերջինս բաղկացած էր վեց հոգուց՝ Եգոր Տեր-Սահակյանից, Գրիգոր Ամիրյանից, Մաշադի Ջաֆար Հաջի Ռաջաբ-օղուց, Միր Աբաս Միր Բաբաևից, Դասպար Դասպարյանից և հանձնաժողովի նախագահ բժ. Լ. Տիգրանյանից [2]։ Դումայի և քաղաքային վարչության ցուցումներով հանձնաժողովը սկսում է գործել։ Նա զբաղվում էր ապագա ջրմուղի հետ կապված զանազան հարցերով, հատկապես ջրի քանակության որոշման, ջրմուղի կառուցման եղանակի և շահավետության հարցով։ Հանձնաժողովն իր զրույցներով և զեկուցագրերով կատարված ու կատարվելիք աշխատանքների մասին տեղյակ էր պահում քաղաքային օրգաններին [3]։ 1897 թ. մարտի 7-ին իր նոր որոշումով դուման հանձնաժողովին հանձնարարում է խորամուխ լինել ջրմուղի կառուցման բոլոր եղանակների մեջ, առանց նեղվելու փակ ու քարապատ ջրանցքի մասին իր նախորդ որոշումից [4]։

1897 թ. օգոստոսի 8-ին լեռնային ինժեներ Ա. Դ. Միխայլովը քաղաքային վարչությանը ներկայացնում է գրավոր առաջարկություն՝ Խորոմ-բուլաղի աղբյուրներից քաղաքի համար ջրմուղ կառուցելու մասին։ Նրա առաջարկի քննարկման ղուգրնթաց՝ նշված հանձնաժողովը բժ. Տիգրանյանի գլխավորությամբ բանակցությունների մեջ էր մտել մի այլ ինժեների՝ Սաֆրոնակու հետ՝ Քա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 187։
2 Նույն տեղը, ֆ. 117, գ. 352, թթ. 8 և 68։
3 Տե՛ս նույն տեղը, թթ. 21, 40 և այլուր։ Համմ. ֆ. 92, գ. 145, թ. 187-ի հետ։
4 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 187։

ռասուն աղբյուրներից ջրմուղ կառուցելու նախագիծը կազմելու հարցով։ Սակայն շուտով հանձնաժողովը դադարեցնում է բանակցությունները և՛ Միխայլովի, և՛ Սաֆրոնսկու հետ։ Քաղաքային վարչությունը հանձնաժողովի նախագահի հասցեով 1897 թ. սեպտեմբերի 2-ին և հոկտեմբերի 4-ին տված հեռագրում նրան առաջարկում է դադարեցնել բանակցությունները, որովհետև վարչությունը ծրագրում է ջրմուղ կառուցել Նորքի (Զոլմաքշի) աղբյուրներից [1]։ Նույն թվականի սեպտեմբերի վերջերից քաղաքային վարչությունը զբաղվում է Նորքի աղբյուրների ջուրը համապատասխան լաբորատորիաներում ստուգել տալով և դումայի այդ թվականի սեպտեմբերի որոշմամբ, մինչև արդյունքների ստացումը առաջարկ է լինում դրանց ջուրը բաց առվով բերել մինչև Աստաֆյան փողոցի սկիզբն ու այնուհետև բաց թողնել այդ փողոցի ուղղությամբ ձգվող փակ առուն։ Այդ նախագծումը կատարվում է միայն մասնակիորեն։ Թիֆլիսի քաղաքային լաբորատորիան 1897 թ. վերջերին ստուգելով Նորքի աղբյուրների ջուրը, գալիս է այն եզրակացության, որ դա փափուկ է և խմելու համար միանգամայն պիտանի [2]։

Որոշ դադարներ տալուց հետո քաղաքային դուման 1899 թ. նորից է առաջ քաշում, իբրև ժամանակավոր միջոցառում, Նորքի աղբյուրների ջուրը քաղաք բերելու հարցը։ Հարցի մշակման ու նախապատրաստման համար կազմվում է հատուկ հանձնաժողով, որի զեկուցագրի հիման վրա դուման 1899 թ. մարտի 15—16-ին որոշում է նշված աղբյուրների ջուրը քաղաք բերել կավե խողովակներով, և այդ գործը ֆինանսավորելու համար հանձնաժողովի տրամադրության տակ դնել 4125 ռ. 33 կ.։ Սակայն դումայի որոշումը նույն թվականի ապրիլի 3-ին բեկանում է քաղաքային գործերի նահանգական ատյանը [3]։ Դուման և քաղաքային վարչությունը շուտով հարկադրված են լինում դադարեցնել բոլոր կարգի աշխատանքները, ոչ միայն այն պատճառով, որ քաղաքային գործերի նահանգական ատյանը մերժել էր դումայի որոշումը, այլ, որովհետև պարզվել էր, որ նշված աղբյուրների դեբիտը խիստ կերպով իջել է. դրանցից օրվա մեջ հաղիվ հնարավոր լիներ վերցնել 20 հազար դույլ [4], ջրի չնչին մի քանակություն, որը չէր կարող

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 187։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թթ. 187—188։
4 Նույն տեղը, թ. 188, տե՛ս նաև ֆ. 117, գ. 352, թ. 162։

որևէ չափով հագեցնել ավելի քան 30 հազար բնակիչ ունեցող քաղաքի ծարավը։

Վարչությունը նորից իր ամբողջ ուշադրությունը սևեռում է Քառասուն աղբյուրների վրա։ Քաղաքագլխի միջոցով 1900 թ. մայիսին գրագրություններ են սկսվում ինժեներ Կիրակոսյանի հետ՝ կոնցեսիոն սկզբունքներով ջրմուղը կառուցելու համար։ Դրան զուգահեռ քաղաքագլուխը բանակցություններ է վարում Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու ինժեներ Վուրցելի հետ։ Քաղաքագլուխը համոզում էր վերջինիս, որ քաղաքի ու «Երևան» կայարանի համար ընդհանուր ջրմուղի կառուցումը ձեռնտու է նաև երկաթուղային վարչությանը [1]։ Սակայն այդ բանակցությունները ևս ցանկալի արդյունքներ չեն տալիս։ Ինժեներ Կիրակոսյանը նույն թվականի մայիսի 25-ին հատուկ նամակով հաղորդում է, որ կոնցեսիոներ գտնելը շատ դժվար է, որովհետև քաղաքում ոռոգող ջուրը ոռատ է և նոր բերված ջրի հաջող վաճառքի վրա շատերը հույս չեն դնում [2]։ Իսկ ինժեներ Վուրցելի առաջարկած պայմանները քաղաքի համար գտնում են ոչ շահավետ. դուման նրա առաջարկը (որ քաղաքագլխին էր հանձնված հոկտեմբերի 31-ին) նույն թվականի նոյեմբերի 11-ին մերժում է։ Ըստ նրա հաշիվների, ջրմուղը օրական պետք է տար 210 հազար դույլ ջուր, որից 160 հազարը քաղաքին, իսկ 50 հազարը կայարանի կարիքների համար։ Առանց քաղաքային ցանցի ջրմուղը նստելու էր 228 հազար ռուբլի, որից ըստ նրա նախագծի, 88 հազարը պետք է տար երկաթուղին, իսկ մնացած 140 հազարը՝ քաղաքը։ Բացի դրանից, ջրմուղը կարգին վիճակում պահելը և վերանորոգելն ու հոգսը ամբողջովին դրվում էր քաղաքի վրա [3]։ Քաղաքի հաշվին էր կատարվելու նաև ջրմուղի զբաղեցրած հողերի յուրացումը։

Վուրցելին մերժելուց հետո, գործը գլուխ բերելու համար քաղաքային վարչությունը դիմում է ճանապարհների հաղորդակցության մինիստրությանը իր առաջադրած պայմաններով ջրմուղը անցկացնելու համար, բայց նախազգալով, որ մինիստրությունը կմերժի քաղաքի առաջարկը, քաղաքագլխի միջոցով Թիֆլիսում ինժեներներ Պասեկի և Միխայլովի հետ բանակցություններ են սկսվում, որոնց ընթացքում մշակվում են համապատասխան պայմաններ։ Շուտով իրոք որ ստացվում է ճանապարհների հաղորդակցության մինիստրության մերժումը։ Քաղաքագլուխը ան-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 188։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։

միջապես նորից է մեկնում Թիֆլիս, որպեսզի նշված ինժեներների հետ վերջնականապես լուծի ջրմուղի կառուցման պայմանների հարցը [1]։ Նրան հաջողվում է Պասեկի և Միխայլովի հետ առանձին-առանձին համաձայնության հասնել։

Պասեկը 1901 թ. ապրիլի 3-ին թվագրված իր դիմումում նշում է, որ ինքը պատրաստ է վերցնել քաղաքի ջրմուղի, տրամվայի և էլեկտրական լուսավորության գործը։ Այդ երեք կառուցումները կատարելու համար Պասեկը նախատեսում էր 300.000 ռուբլի, որը քաղաքն իրեն պետք է տար 10 տարվա ընթացքում՝ տվյալ տարվա չմուծված գումարի վրա ավելացնելով 7 տոկոսի չափով։ Պրոբլեմի՝ տրամվայի և էլեկտրական լուսավորության վերաբերող մասը նշվել է նաև համապատասխան տեղերում։ Ըստ նրա նախագծի, կառուցվելիք ջրմուղը օրական տալու էր 210 հազար դույլ ջուր, նրա մի մասը՝ 15 վերստ երկարությամբ հատվածը պետք է կառուցվեր բետոնե, իսկ քաղաքում ընկած վերջին երեք վերստը՝ թուջի խողովակներով։ Քաղաքային ցանցի կառուցումը և հողերի յուրացումը (և՛ տրամվայի, և՛ ջրմուղի համար) կատարվելու էր քաղաքի միջոցներով։ Նա պարտավորվում էր դումայի և նահանգապետի կողմից իր դիմումը ընդունվելուց հետո մուծել իր խոստացած 15 հազար ռուբլի դրամականից 5000 ռուբլին, իսկ մնացած 10.000 ռուբլին տալ վերջնական պայմանագիրը կնքելուց հետո [2]։ Պասեկի հաշիվներով վերը նշված 300.000 ռ. ընդհանուր գումարը նշված աշխատանքների վրա ծախսվելու էին հետևյալ հարաբերությամբ. ջրմուղի վրա 130.000 ռ., էլեկտրակայանի և էլեկտրական լուսավորության վրա՝ 80.000 ռ., իսկ տրամվայի վրա՝ 90.000 ռ. [3]։

Ա. Միխայլովը իր պայմանները նախագծային երկու տարբերակներով քաղաքային վարչությանն է ներկայացնում Պասեկի հետ միաժամանակ, 1901 թ. ապրիլի 13-ին։ Քաղաքային վարչությունը թե՛ Պասեկի և թե՛ Միխայլովի առաջարկած պայմանների մասին ինֆորմացիա է տալիս դումայի նույն թվականի ապրիլի 17-ին ու 20-ին, մայիսի 2-ին, 11-ին և հունիսի 6-ին կայացած խորհրդակցություններում։ Դուման հարցի քննությունից գալիս է այն եզրակացության, որ Պասեկի պայմանները քաղաքի համար անշահավետ են ու անընդունելի։ Դրա անընդունելի լինելը դուման

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 188։
2 Նույն տեղը, ինչպես նաև ֆ. 117, գ. 488, թ. 6—7։
3 Նույն տեղը, ֆ. 117, գ. 488, թ. 6—7։

համարում է այն, որ Պասեկը ջրմուղը, տրամվայը և էլեկտրական լուսավորությունը կապում էր իրար հետ, պայմանավորում իրարով և քաղաքից պահանջում տասը տարվա ընթացքում մարել դրանց վրա ծախսվելիք հսկայական գումարներն իրենց տոկոսների հետ միասին։ Բացի դրանից, Պասեկի կառուցելիք ջրմուղը տեխնիկական տեսակետից ունենալու էր արատավոր կողմ, այն, որ 15 վերստ երկարությամբ այն ձգվելու էր բետոնե խողովակներով [1]։ Դումայի ձայնավորները գալիս են այն եզրակացության, որ տրամվայի ու էլեկտրական լուսավորության պրոբլեմները պետք է առանձնացնել ջրմուղի հարցից, առաջինները առայժմ թողնել առկախ, իսկ վերջինի կառուցման համար ընդունելի համարել ինժեներ Ա. Դ. Միխայլովի առաջարկած պայմանները, դրանց մեջ կատարելով մասնակի փոփոխություններ։

Միխայլովի առաջարկած հիմնական պայմանները հետևյալներն էին։ Նա պարտավորվում էր կոնցեսիայով կառուցել քաղաքի ջրմուղը 18 վերստ երկարությամբ և այն շահագործման հանձնել իր հաշվին, իսկ քաղաքային վարչությունը Քառասուն աղբյուրներից իրեն բաժին հասնող ջրից ամբողջ պայմանագրային ժամկետում օրական 210 հազար դույլ, այսինքն՝ ջրմուղի օրական դեբիտի չափով ձրիաբար պետք է զիջեր կոնցեսիոներին։ Ըստ պայմանի, ջրմուղի ուղղությունը որոշելու էր ինքը՝ կոնցեսիոները, խողովակները լինելու էին թուջից, քաղաքում Միխայլովը կառուցելու էր ջրամբար այնպիսի դիրքով ու մեծությամբ, որպեսզի ապահովեր քաղաքի բոլոր մասերի ջրամատակարարումը։ Քաղաքում ջրատար խողովակների ընդհանուր երկարությունը կազմելու էր 8 վերստ։ Նա պարտավորվում էր ջրմուղը շահագործման հանձնել վերջնական պայմանագրի կնքումից հետո երկու տարվա ընթացքում, քաղաքի ցանցի շինարարության վրա հսկողության իրավունք վերապահելով քաղաքային վարչությանը [2]։ Նախատեսվում էր, որ ջուրը քաղաքին պետք է բաց թողնվեր երկու կարգի սակագնով՝ լրիվ և արատնված։ Արատնված գնով՝ 100 դույլին 10 կոպեկ վճարելով ջուր էին սառանալու քաղաքում եղած բոլոր զորամասերը, բանտը, հիվանդանոցները, բաղնիքները, իսկ մյուս բոլոր դեպքերում կոնցեսիոներն իրավունք ուներ վերցնել լրիվ սակագնով, այն է յուրաքանչյուր 100 դույլի համար մինչև 30 կոպեկ։ Քաղաքի փողոցները, հրապարակները, զբոսայգիներն ու

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 188։
2 Նույն տեղը, ֆ. 117, գ. 488, թ. 14—17։

պարկերը ջրելու ջուրը տրվելու էր անվճար, օրվա ընթացքում 30 հազար դույլից ոչ ավելի։ Պայմանագիրն իրավունք ուներ վճար վերցնելու նաև անասուններին ջուր տալու համար, խոշոր անասունների յուրաքանչյուր գլխից մեկ օրվա համար 1 կոպեկ., իսկ մանր եղջերավորների յուրաքանչյուր գլխից՝ կես կոպեկ։ Տարվա ընթացքում միջին հաշվով լրիվ սակագնով օրական 40 հազար դույլից ավելի վաճառված ջրի վաճառքի գնից պայմանագիրը պարտավոր էր բաժին հանել քաղաքային ինքնավարության դրամարկղին հետևյալ չափով. 40—50 հազար դույլի դեպքում 40 հազարից ավելի յուրաքանչյուր 100 դույլից 1 կոպեկ, 50 հազար դույլից ավելի յուրաքանչյուր 100 դույլից 2 կոպ., 60 հազ. ավելի յուրաքանչյուր 100 դույլից 4 կոպ., 80 հազ. ավելի յուրաքանչյուր 100 դույլից 5 կոպ. և այլն [1]։ Ըստ պայմանագրի նախագծի կոնցեսիայի ժամկետը սահմանվում էր 40 տարի՝ հաշված ջրմուղի շահագործման օրից։ Այդ 40 տարվա ընթացքում քաղաքն իրավունք չուներ որևէ այլ անձնավորության կամ ընկերության թույլատրել քաղաքում խողովակներ գցելու և կամ ջրմուղային որևէ շինարարություն կատարելու։ Պայմանագրային ժամկետը վերջանալուց հետո ամբողջ ջրմուղն իր լրիվ կազմով առանց հատուցման անցնում էր քաղաքին իբրև սեփականություն [2]։ Դրանք էին այն հիմնական պայմանները, որոնք նախատեսվում էին կնքվելիք պայմանագրի համար։ Այդ պայմանները էապես քիչ էին տարբերվում մի քանի ամիս անց Արշակ Բաբայանի ներկայացրած պահանջներից, ուստի հարկ համարեցինք դրանք ներկայացնել համեմատաբար հանգամանորեն։

Քաղաքային դուման 1901 թ. հունիսի 7-ին, 8-ին և 9-ին տեղի ունեցած նիստերում, քննարկելով Պասեկի և Միխայլովի պայմանները՝ առաջինին միաձայն մերժում է, իսկ երկրորդին տալիս է իր հավանությունը, նրան հնարավորություն տալով իր խընդրանքի համաձայն նախատեսվող գրավականը ներկայացնել մինչև նույն ամսվա 25-ը։ Սակայն որոշված ժամկետում Միխայլովը գրավականը չի ներկայացնում և հրաժարվում է պայմանագրի կատարումից։ Հունիսի 25-ին որոշվում է հայտարարել կոնցեսիայով կամ կապալով ջրմուղի կառուցման մասին և դիմումների ու առաջարկների ստացման համար ժամկետ սահմանել մինչև նույն թվականի սեպտեմբերի 1-ը [3]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 488, թ. 17—19։
2 Նույն տեղը, թ. 19—22։
3 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 187։

Հայտարարության հիման վրա 1901 թ. ամռանը պաշտոնական գրություններով Երևանի քաղաքային վարչությանն են դիմում Կ. Զեմբը [1], Մոսկվայի ինժեներ Ն. Լ. Զիմինի և Կ. Պ. Կարալսկի «Նեպտուն» կոչված տեխնիկական գրասենյակը (1901 թ. հուլիսի 27) [2], լեռնային ինժեներ Ադամ Բոգուշևսկին (Բալախանից, 1901 թ. հուլիսի 27-ին) [3], Ն. Պ. Պաստուխովը (Հարավ-արևվելյան երկաթգիծ, Սուլին կայարանից, հուլիսի 26-ին) [4] և Վ. Ֆ. Դեգլինգը՝ Բեռլինի էրիխ Մերտեն և Կնաուֆ ֆիրմայի ներկայացուցիչը (Պետերբուրգից, 1901 թ. օգոստոսի 1) [5]։

Դրանցից յուրաքանչյուրը հարցում է կատարում նախատեսվող ջրմուղի կառուցման պայմանների մասին, համառոտ կերպով ռեկլամի ենթարկելով իր հնարավորություններն ու ունեցած համբավը։ Ուշադրության արժանի են միայն «Նեպտունի» և Վ. Ֆ. Դեգլինգի առաջարկությունները։ Դրանցից առաջինի առաջարկը, որը քաղաքային վարչության կողմից չի արժանացել որևէ ուշադրության և թողնվել է անհետևանք, նորություն էր այն առումով, որ նրանում Զանգուն (Հրազդան) դիտվում է իբրև խմելու ջրի լավագույն աղբյուրներից մեկը և ֆիրման իր առաջարկի մեջ պատրաստակամություն է հայտնում գետի ջուրը խմելու համար պիտանի դարձնել ֆիլտրելու միջոցով, ինչպես այդ, նրա ասելով, ինքը արել է Տամբովում, Սամարայում, Ցարիցինում, Տուլայում, Ռյազանում, Նիժնի Նովգորոդում և այլ քաղաքներում։ Պետերբուրգյան այդ տեխնիկական գրասենյակը հույս էր հայտնում, որ Երևանի քաղաքային վարչությունն իր հնարավորությունները հաշվի առնելով-Քառասուն աղբյուրների նկատմամբ Զանգվին կատար առավելություն, անմիջապես քաղաքի մոտ գտնվելու և ծախսեր քիչ պահանջելու շնորհիվ [6]։ Անընդունելի էին մանավանդ Դեգլինգի պայմանները։ Նա քաղաքային վարչությանը հայտնում էր, որ էրիխ Մերտեն և Կնաուֆ ֆիրման պատրաստ է Երևանի ջրմուղի կառուցումը իր վրա վերցնել, եթե վարչությունը երաշխավորի օրվա մեջ ջրի որոշակի ծախք [7]։ Քաղաքային վարչության զեկուցագրում (4-ը հոկտեմբերի, 1901 թ.) ասված է, որ քաղաքում ոռոգ-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 488, թ. 67։
2 Նույն տեղը, թ. 89։
3 Նույն տեղը, թ. 87։
4 Նույն տեղը, թ. 88։
5 Նույն տեղը, թ. 123։
6 Նույն տեղը, թ. 89։
7 Նույն տեղը, թ. 123, ֆ. 92, գ. 145, թ. 188։

ման ջրի առատության պայմաններում խմելու ջրի որոշակի քանակի երաշխավորումը միայն կարող է քայքայել քաղաքային բյուջին, որ այդպիսի երաշխավորումը կվերացներ ձեռնարկատիրոջ շահագրգռվածությունը՝ ապահովելու ջրմուղի անխափան աշխատանքը և հոգալու հետագա բարելավման մասին։ Ձեկուցագրում նշվում է նաև, որ եթե ջրմուղի եկամտաբերության մասին քաղաքային վարչությունն ինքը չկասկածի այն աստիճան, որ պատրաստ լինի դրա համար տալ լուրջ երաշխավորություն, ապա նա «կգերադասեր երաշխավորված եկամտաբերությունը թողնել իր տրամադրության տակ, այսինքն՝ ձեռնարկումը կատարել տնտեսական եղանակով» և ոչ կոնցեսիայով [1]։

Մյուս առաջարկությունները նախագիծ կազմելու ցանկությունից այն կողմ չէին անցնում, իսկ քաղաքային վարչությունը սոսկ նախագծումների կարիք չուներ։

Այսպիսով հրապարակային հայտարարությունները գործը տեղից չշարժեցին։

Սակայն քաղաքային վարչությունը չբավականացավ միայն հայտարարություններով։ Նա այդ հայտարարությունների հետ միասին քաղաքագլխի միջոցով բանակցություններ մեջ է մտնում Թիֆլիսի ձեռնարկուների հետ։ Շուտով Երևանի ջրմուղն ու ձիաքարշը կառուցելու առաջարկով հանդես է գալիս Ա. Ս. Բաբայանը (Բաբով)։ Նա, ինչպես տեսանք, 1901 թ. հոկտեմբերի 4-ին Երևանի քաղաքային վարչության քննարկմանն էր ներկայացրել պայմանագրի երկու նախագիծ, որոնցից մեկը վերաբերում էր ձիաքարշին, իսկ մյուսը՝ ջրմուղին։ Այդ երկու պրոբլեմները ըստ նրա առաջարկած պայմանների չէին կարող իրականացվել իրարից անկախ, դրանք պայմանավորում էին իրար և մեկի մերժումը արդեն իրավունք էր տալիս պայմանավորվող կողմին չկատարել իր պարտականությունները նաև մյուսի նկատմամբ։ Ինչպես ասվեց, այնուամենայնիվ, իրրև տարբեր աշխատանքների վերաբերող պայմանագրեր, Բաբայանի նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին։

Ա. Բաբայանի պայմանագրի նախագիծը Միխայլովի ներկայացրածից շատ քիչ բանով էր տարբերվում։ Ջրմուղի երկարության, ջրի ծախքի, խողովակների տեսակների, ջրմուղի կառուցվածքի տեխնիկական կողմով, նորմալ սակագնով ջրի բացթողման և այլ կարևոր պայմաններով դրանք իրարից ոչնչով չէին

1 ՀՆՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 188։

տարբերվում։ Էական տարբերությունները միայն երկուսն էին՝ ա) Միխայլովի ներկայացրած պայմանագրում արտոնված սակագնով նախատեսվում էր քաղաքին ջուր բաց թողնել 100 նորմալ դույլը 10 կոպեկով, իսկ Բաբայանի պայմանագրի նախագծով նույնքան ջրի համար պահանջվում էր 20 կոպեկ. բ) Միխայլովի նախագծով, ինչպես տեսանք, քաղաքը ջրմուղի եկամուտներից օգտվելու էր միայն տարվա ընթացքում ջրի օրական միջին ծախքը 40 հազար նորմալ դույլից բարձր լինելու դեպքում, այն էլ օրական մինչև 60—80 հազար նորմալ դույլ լինելու դեպքում ստանալու էր միայն չնչին կոպեկներ։ Մինչդեռ Բաբայանի նախագծով քաղաքը համարվում էր ձեռնարկության մեկ հինգերորդ մասի տերը և ստանալու էր նրա շահույթի 20 տոկոսը, առանց իր վրա կրելու նրա վնասները։ Բացի դրանից, քաղաքը ջրմուղը գնելու դեպքում վճարելու էր նրա $^4/_5$ մասի գինը, $^1/_5$-ն արդեն համարելով իր սեփականությունը։ Բաբայանի նախագծով ջրմուղի ղեկավարմանն ու նրա վրա հսկելու գործում քաղաքին տրվում էին ավելի մեծ արտոնություններ, քան դրանք նախատեսված էին Միխայլովի պայմանագրի նախագծում։ Ըստ Բաբայանի ներկայացրած նախագծի, մեծ դեր էր հատկացվում քաղաքային ինքնավարության կողմից ընտրված կատարողական հանձնաժողովին, ինչպես նաև դումային իրավունք էր տրվում նշանակել դիրեկտորներից և վերստուգիչ հանձնաժողովի անդամներից մեկը [1]։ Այսպիսով ջրմուղի գործում քաղաքի մասնակցության բարձրացման տարբերակը Միխայլովյանի նկատմամբ քաղաքի համար ուներ մեծ առավելություններ։ Ինչ վերաբերում է արտոնված սակագնին, ըստ որի Միխայլովը խոստանում էր քաղաքին ջուր տալ 100 դույլը 10 կոպեկով, իսկ Բաբայանը նույնքան քանակության համար սահմանում էր 20 կոպեկ, ապա պետք է նկատի ունենալ, որ առաջինի՝ իր սեփական պայմանագրի նախագծից հրաժարվելու պատճառներից մեկը, ինչպես նշվում է քաղաքային վարչության զեկուցագրում, հենց այդ արտոնված սակագինն էր, որը նա համարում էր անշահավետ [2]։

Քաղաքային վարչության 1901 թ. հոկտեմբերի 4-ին վերաբերող նշված զեկուցագրի մեջ, որը ամփոփում էր մոտ 20 տարվա ընթացքում ջրմուղի շուրջը ծավալված բազմաթիվ հատորներ

1 Ա. Բաբայանի հետ կնքվելիք պայմանագրի նախագծի տեքստը տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 489, թ. 28—34։

2 Նույն տեղը, ֆ. 92, գ. 145, թ. 188—189։

կազմող գրագրությունները, ասվում է նաև այն մասին, որ եթե ջրմուղի ընդհանուր երկարությունը և նրա տեխնիկական կառուցվածքը հաշվվի հավասար պայմաններով, ապա Վուրցելի և Կիրակոսյանի կազմած նախագծերը իրարից էապես չեն տարբերվի, իսկ դրանց իրականացումը, եթե ընդգրկեն ջրմուղի բոլոր աշխատանքները՝ և՛ մայրուղին, և՛ քաղաքային ցանցը, և՛ քաղաքի ջրթամբարները, պահանջում է միևնույն քանակի դրամագլուխ, մոտավորապես 250.000 ռուբլի [1], մի գումար, որ քաղաքը երբեք հնարավորություն չունի տրամադրել, իսկ տրամադրելու դեպքում նա կկանգնի ֆինանսական կրախի առաջ։ Ինչ վերաբերում է պայմանագրային ժամկետներին, ապա դրանք իրարից քիչ էին տարբերվում (Միխայլովի ներկայացրած նախագծով 40 տարի էր սահմանվում, իսկ Բաբայանի նախագծով՝ 36 տարի) և գործի համար էական նշանակություն չունեին։

Նշված, ինչպես և մի քանի այլ հանգամանքներ մատնացույց անելով՝ քաղաքային վարչությունը քաղաքի ջրմուղի կառուցման ու դրա շահագործման համար Արշակ Սերգեի Բաբայանի ներկայացրած կոնցեսիոն պայմանագրի նախագիծը համարում էր շահավետ և դումային կոչ էր անում հավանություն տալ ու հաստատել [2]։

Ա. Բաբայանի նախագիծը առանց էական փոփոխությունների որոշ ժամանակից հետո ենթարկվում է վերջնական խմբագրման [3], հաստատվում է դումայում և հավանություն գտնում բարձրագույն իշխանությունների կողմից։ Պայմանագիրը վերջնականապես կընքվում է 1903 թ. մայիսի 2-ին, իսկ իշխանությունների կողմից կառուցման իրավունքը տրվում է միայն 1904 թ. հոկտեմբերին [4], Ջեռնարկուն քաղաքային վարչությանը ուղղված 1904 դեկտեմբերի 16-ի իր դիմումով, բերելով մի քանի պատճառաբանություններ, խնդրում է՝ ջրմուղի ու ձիաքարշի կառուցման սկիզբը համարել ոչ թե պայմանագրի կնքման օրից, այլ 1904 թ. հոկտեմբերի 25-ից [5], քանի որ իշխանությունները շինարարության թույլտվությունը տվել էին 1904 թ. հոկտեմբերի 4-ին [6]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 92, գ. 145, թ. 189։

2 Նույն տեղը։

3 Վերջնական խմբագրված տեքստերը տե՛ս նույն տեղը, ֆ. 117, գ. 489, թ. 108—111, կամ ֆ. 189/506, գ. 176, թ. 5—8։

4 Նույն տեղը, ֆ. 117, գ. 532, թ. 65։

5 Նույն տեղը, թ. 65—66։

6 Նույն տեղը, թ. 96։

Դրանով, սակայն, սկսվում է ոչ թե շինարարությունը, այլ մի նոր, ավելի երկարատև քաշքշուկ։ Ինժեներ Բաբայանը ինչ-ինչ պատճառներով, հավանաբար կոնցեսիայի դժվարություններն ու երկրում սկսված սոցիալական շարժումները հաշվի առնելով՝ հրաժարվում է այդ գործից։ Նա իր ամբողջ իրավունքներն ու պարտականությունները հանձնում է իր համաքաղաքացի տիկին Մարիա Միրզոյանին (Միրզոևա)։ Այդ արարողության ժամանակ, որը տեղի է ունեցել 1905 թ. աշնանը, նույնությամբ պահպանվել են Բաբայանի հետ կնքված պայմանագրի բոլոր կետերը և նույնիսկ հարկ չի համարվել տ. Միրզոյանի անունով փոխված պայմանագիրը բարձրագույր իշխանությունների հաստատմանը ուղարկելու [1], Երևանի դուման և քաղաքային վարչությունը ձիաքարշին և ջրմուղին վերաբերող բոլոր հարցերում գործ պիտի ունենային տ. Միրզոյանի հավատարմատար ճարտարապետ ինժեներ Վ. Զ. Միրզոյանի (Միրզոև) հետ, որը գործում էր նրա անունով։

Պայմանավորվող կողմերից մեկի փոփոխմամբ չի վերանում քաշքշուկը։ Ժամանակից ու իր հնարավորություններից ելնելով՝ ինժեներ Միրզոյանի միջոցով տ. Միրզոյանը 1906 թ. փետրվարի 12-ին քաղաքային վարչությանը ներկայացնում է մի դիմում, որի մեջ խոստանալով պայմանագրի համաձայն ժամանակին սկսել ու ավարտել ձիաքարշը, միաժամանակ նշում է, որ ինքը խառը ժամանակների, կոնցեսիայի դժվարությունների ու միջոցների պակասության պատճառով հնարավոր չի համարում ձիաքարշի հետ միասին կատարել նաև ավելի մեծ միջոցներ ու աշխատանք պահանջող ջրմուղի կառուցումը։ Նա խնդրում է, որ չեղյալ հայտարարվեն պայմանագրի 42 և 52-րդ հոդվածները, որոնցով այդ երկու ձեռնարկումները դիտվում էին իբրև իրար հետ անխզելիորեն կապված պրոբլեմներ և նախատեսվում դրանց կառուցումը կատարել միաժամանակ։ Ճարտարապետ-ինժեները տիկնոջ անունից հայտնում է, որ ձիաքարշի գիծն անցկացնելու համար պատրաստվել են բոլոր անհրաժեշտ նյութերն ու մյուս պարագաները և որ այն կարելի է արագ կերպով շահագործման հանձնել։ Իսկ ջրմուղի աշխատանքներն սկսելու համար ինքը ոչ միայն այժմ չունի հնարավորություններ, այլև այդպիսին չի տեսնում նաև մոտ ապագայում։ Միրզոյանի կարծիքով այդ երկու պրոբլեմները իրարից անջատելը և դրանց առանձին-առանձին լուծելը հարմար կլիներ նաև քաղաքի համար, որովհետև, ինչպես նա է դատում, արագությամբ

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 532, թ. 96։

շարք մտած ձիաքարշը լրացուցիչ միջոցներ կտար ջրմուղի շինարարությանը, որը ինքը կարող էր սկսել միայն հարմար պայմաններ լինելու դեպքում [1]։

Քննարկելով ինժ. Միրզոյանի դիմումը՝ քաղաքային վարչությունը ընդունելի է համարում առաջ քաշված պահանջները, գտնելով միայն, որ ձիաքարշի և ջրմուղի կառուցման կապի մասին եղած պայմանագրի 42-րդ և 52-րդ հոդվածները կարելի է վերացնել, եթե կոնցեսիոները ձիաքարշը անցկացնելուց հետո ջրմուղի կառուցման համար իրեն երաշխիք քաղաքային ինքնավարությանը ներկայացնի 50.000 ռուբլի գրավական [2]։

Ստանալով քաղաքային վարչության այդ եզրակացությունը՝ դուման նույն թվականի մարտի 8-ի նիստում միաձայն ընտրում է մի հանձնաժողով, որին հանձնարարում է մանրամասն ծանոթանալ ինժեներ Միրզոյանի դիմումին ու վարչության եզրակացությանը, և այդ հարցի առթիվ տալ իր կարծիքը։ Հանձնաժողովը ծանոթանալով գործին, մարտի 15-ի իր արձանագրության մեջ նշում է, որ ձիաքարշի ու ջրմուղի պայմանագրերից 42 և 52-րդ հոդվածների հանումը քաղաքի համար ձեռնտու չէ, իսկ ջրմուղի կառուցման սկսելը կարելի է հետաձգել մինչև հարմար պայմանների առկայությունը, առանց պայմանագրում նոր փոփոխություններ մտցնելու [3]։ Հանձնաժողովի անդամներից մեկը՝ Ա. Հասան-Ջալալյանը չի ընդունում հանձնաժողովի որոշման այն կետը, որով քաղաքի համար անշահավետ էր համարվում ձիաքարշի ու ջրմուղի շինարարությունները իրարից բաժանելը։ Նա՝ նկատի ունենալով ձիաքարշի անցկացումից հետո ջրմուղի կառուցման համար 50 հազար ռուբլի գրավական ներկայացնելու փաստը, որը երաշխավորելու էր ջրմուղի կառուցումը կամ հակառակ դեպքում ընդմիշտ անցնելու էր քաղաքին և մի քանի այլ հանգամանքներ, գտնում է, որ Միրզոյանի ներկայացրած դիմումի բոլոր պայմանները, այդ թվում և ձիաքարշը ջրմուղից անջատելու պահանջը ընդունելի և շահավետ է քաղաքի համար [4]։ Դումայում անցնում է Հասան-Ջալալյանի առաջարկը։ Դուման 1906 թ. մարտի 22—27-ի նիստում որոշում է. ա) նշված հարցի առթիվ վարչության տված եզրակացությունը մերժել և բ) ջրմուղի շինարարությունը հետաձգել երեք տարով, այդ ժամկետի սկիզբ համարե-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 532, թ. 114։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թ. 115։
4 Նույն տեղը, թ. 115—116։

լով դումայի սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից։ Քաղաքային գործերի նահանգական ատյանը դումայի այդ որոշումը 1906 թ. ապրիլի 22-ի նիստում համարում է օրինական և չի առարկում այն գործի վերածելու [1]։

Այսպիսով ջրմուղի շինարարությունը անմիջապես սկսելու և 1908 թ. հոկտեմբերի 11-ին ավարտելու փոխարեն պետք է սկսվեր 1909 թ. գարնանը և ավարտվեր 1911 թ. հոկտեմբերին։

Դրանով սկսվում է քաշքշուկի մի նոր շրջան։ Մոտենում էր շինարարությունը սկսելու ժամկետը, բայց տիկին և պարոն Միրզոյանները գրագրություններից ու սին խոստումներից բացի կոնկրետ որևէ քայլ չեն ձեռնարկում։ Երևանում հրատարակվող «Հրազդան» և «Երևանի հայտարարություններ» թերթերը իրենց էջերում, մի կողմից, քննադատում են դումային ու վարչությանը իրենց կնքած պայմանագրին տեր չկանգնելու համար, իսկ, մյուս կողմից՝ խթրազանում Միրզոյանի «անբանությունը»։ Կոնցեսիոները պատճառաբանում է, որ բավական միջոցներ չունի միանգամից այդպիսի մեծ կառուցում կատարելու։

Այդպիսի պայմաններում քաղաքային դումայի ձայնավորների և քաղաքացիների մեջ առաջանում է այն միտքը, որ մինչև Քառասուն աղբյուրների մեծ ջրմուղի կառուցումը անհրաժեշտ է նորքի աղբյուրների ջուրը ժամանակավոր ջրմուղով բերել քաղաք։ Ժամանակավոր ջրմուղի կառուցումը նախատեսվում էր հանձնարարել Միրզոյանին, որը պատրաստ էր ընդունել այդ առաջարկը։ Լինում են նաև կարծիքներ ժամանակավոր ջրմուղը քաղաքի միջոցներով կառուցելու մասին։ Նորքի ջրմուղի օգտին մեծ պրոպագանդա է անում հատկապես էմ. Տեր-Գրիգորյանը, որն իր թերթիկի էջերում հատուկ հոդվածաշարերով ջերմորեն պաշտպանում է այդ նոր ջրմուղի գաղափարը։ Նա միաժամանակ հարձակումներ է գործում քաղաքային վարչության և քաղաքագլուխ Ի. Ղ. Մելիք-Ադամալյանի վրա, վերջինիս մեղադրելով չափից ավելի «միրզոյանասիրության» մեջ և ջրմուղի կառուցմանը մեծ խոչընդոտ հարուցողի։ Երկուստեք տրվող մեղադրանքներն այնքան լուրջ ընթացք են ստանում, որ գործը հասնում է դատարան։

Նորքի աղբյուրներից ջրմուղ կառուցելուն կողմ էին և՛ քաղաքային դուման, որն իր 1909 թ. ապրիլի 8-ի որոշմամբ այդ գործը հանձնարարում էր Միրզոյանին և բարձրագույն իշխանություններից խնդրում հաստատել իր որոշումը, և՛ քաղաքային հասարակության

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 532, թ. 116։

մեծ մասը, չնայած կային նաև դումայի ձայնավորներ, որոնք դեմ էին ժամանակավոր ջրմուղին և գտնում էին, որ անհրաժեշտ է ամբողջ ուշադրությունն ու միջոցները ուղղել մեծ ջրմուղի՝ Քառասուն աղբյուրներից բերվելիք ջրի վրա [1]։

Անկախ Նորքից ժամանակավոր ջրմուղ կառուցելու մասին քաղաքում եղած տրամադրություններից, տ. Միրզոյանը 1909 թ. գարնան կեսերին որոշ նախապատրաստական աշխատանքներ է կատարում, մտադրություն ունենալով պայմանների առկայության դեպքում սկսել մեծ ջրմուղի շինարարությունը։ Արխիվային նյութերից երևում է, որ նա 1909 թ. ապրիլին իր հավատարմատար ինժեներ Միրզոյանի միջոցով իրավունք է ստանում Աստաֆյան փողոցով գցել ապագա մեծ ջրմուղի խողովակները։ Ըստ երևույթին մինչև այդ նա իրավունք չուներ Աստաֆյանով խողովակներ գցելու, որովհետև փողոցը սալահատակված էր պետության միջոցներով և դեռևս չէր անցել քաղաքային ինքնավարության տնօրինությանը, իսկ ճանապարհների հաղորդակցության Կովկասյան օկրուգի Երևանի բաժանմունքը փողոցը մինչև քաղաքին հանձնելը արգելում էր քանդել և խողովակներ անցկացնել [2]։ Քաղաքային վարչությունը նրան իրավունք է տալիս աշխատանքներն սկսել ապրիլի 14-ին։ Բայց միաժամանակ նկատի ունենալով այդ աշխատանքի վրա հրապկողություն սահմանելու բարդությունը, խնդրում է դումային ստեղծել հատուկ հանձնաժողով, որը պիտի հսկեր ջրմուղի շինարարության աշխատանքները, որպեսզի դրանք կատարվեին պայմանագրի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կատարվող աշխատանքների մասին պիտի տեղյակ պահեր քաղաքային վարչությանն ու դումային [3]։ Դուման ապրիլի 22-ի նիստում հավանություն է տալիս քաղաքային վարչության այդ առաջարկին և նշված նպատակի համար ընտրում է երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որը վարչության հետ միասին պետք է հսկեր ջրմուղի աշխատանքները։ Հանձնաժողովի մեջ մտնում էին՝ Գ. Խ. Տեր-Խաչատրյանը, Վ. Դ. Եղիազարյանը և Գ. Պ. Կամսարականը [4]։ Հենց այդ ժամանակներում էր, որ հարց առաջացավ մինչև մեծ ջրմուղի

1 Տե՛ս ՀՍՍՌՊԿ ՊԱ, ֆ. 92, ց. 351, թթ. 16, 96, ց. 352, թ. 114—115, ֆ. 117, ց. 645, թթ. 2—3, 41, 59, «Эриванские объявления», 1908, №№ 58, 59, 1909, № 1, 5, 14, 21, 35, 58, 1910, №№ 3, 7, 12, 89, 1911, № 44, 1914, № 20, «Հրազդան», 1908, №№ 1, 5 և այլն։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ց. 641։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

կառուցումը Նորքի աղբյուրներից ժամանակավոր ջրմուղ անցկացնել։ Միրզոյանին էլ մի այդպիսի պատրվակ էր հարկավոր։ Նրա համար ժամանակավոր ջրմուղի հարցի ծագումը մեծ գյուտ էր և մեծ ջրմուղի կառուցումից խուսափելու համար հաճույքով ընդունեց Նորքի աղբյուրները քաղաք բերելու առաջարկը, միաժամանակ ձևականորեն հույս ներշնչելով, որ ինքը կառուցելու է նաև Քառասուն աղբյուրներից սկսվելիք ջրմուղը։ Նա նույնիսկ հավատացնում էր, որ Աստաֆյան փողոցում ստեղծվող ցանցը փաստորեն հեշտացնելու է ապագա մեծ ջրմուղի գործը, որովհետև այն կազմելու է վերջինիս մի մասը։ Սակայն այդ բոլորը, մեղմ ասած, միայն բարի ցանկություններ էին։ Տ. Միրզոյանը ըստ երևույթին ոչ մի հնարավորություն չուներ կամ չէր ցանկանում ջրմուղը կառուցել։ Դատարկ խոստումներից բացի նա ոչ մի գործնական քայլ չէր կատարում։ Դրությունը ավելի պարզվեց, երբ Նորքի աղբյուրներից ժամանակավոր ջրմուղ կառուցելու հարցը վերացավ ասպարեզից։ Այժմ հարցն ավելի պարզ էր դրված։ Կառուցել մեծ ջրմուղը կամ ընդհանրապես դրանից հրաժարվել։ Հրաժարվել անկարելի էր, ջրմուղի կառուցումը մեծ ժողովրդայնություն էր վայելում, քաղաքային ինքնավարությունը ի վիճակի չէր այդ գործը նորից քննելու։ Սակայն տ. Միրզոյանն էլ գործը թողել էր մեռյալ կետում։ Այլևս ակնհայտորեն անիմաստ էր ջրմուղի կառուցումը նրա հետ կապելը։

Հակառակ տ. Միրզոյանի, նրա հավատարմատար ինժեներ Միրզոյանը պատրաստ էր միանալ որևէ այլ ընկերության հետ և կառուցել ջրմուղը։ Եվ իրոք, ժամանակի այդ հույժ կարևոր հարցը պատճառ եղավ քաղաքի տեղական հարուստներից մի փայատիրական ընկերության առաջացմանը։ Այդ ընկերությունը կազմավորվում է 1910 թ. առաջին կեսին։ Սկզբնական շրջանում նրա անդամների կամ փայատերերի թիվը 14 էր (10-ը հայեր, իսկ 4-ը ադրբեջանցիներ), բայց շուտով ադրբեջանցիներից երկուսը հրաժարվում են [1] և ընկերության կազմում մնում են ընդամենը 12 հոգի՝ Տիգրան Աֆրիկյանը, Առաքել Աֆրիկյանը, Կարապետ Աֆրիկյանը, Ալեքսանդր Աղիլյանը, Գաբրիել Աբրահամյանը, Գևորգ Ամիրյանը, Բարսեղ Եղիազարյանը, Գևորգ Խանզադյանը, Վասիլ Միրզոյանը, Երվանդ Տեր-Ավետիքյանը, Աբաս Կուլի Խան Երևանսկին և Աքպար Աղա Իսմայլովը [2]։

Քաղաքային դուման քննարկելով ստեղծված դրությունը, որո-

1 «Эриванские объявления», 1910, № 48։

2 Նույն տեղը, 1912, №№ 1 և 2։

շում է ձիաքարշը բաժանել ջրմուղից և վերջինիս կառուցումը հանձնել այդ փայատիրական ընկերությանը, որը պաշտոնապես կոչվեց «Երևանի ջրմուղի ընկերություն»։ Ըստ այդ որոշման քաղաքը ջրմուղի ընկերության հետ կապվեց նույն պայմաններով, ինչ պայմաններով որ նա նախկինում կապված էր ս. Միրզոյանի հետ։ Իբրև պրոբլեմի լուծման երաշխիք ընկերությունից պահանջվեց քաղաքային գանձարկղ մուծել 30.000 ռ. գրավական [1]։ Քաղաքային վարչության որոշումը առանց ձգձգելու 1910 թ. հունիսին հաստատվում է քաղաքային գործերի նահանգական ատյանի կողմից և քանի որ ս. Միրզոյանի հետ կնքելու ժամանակ պայմանագիրն արդեն հավանություն էր գտել բարձրագիր օրգանների կողմից, ապա հարկ չեղավ այն նորից վերջիններիս հաստատությանը ուղարկելու։

Ընկերության կազմակերպման նախաձեռնողները եղել են Կ. Աֆրիկյանը և Ա. Թամամշյանը։ Նրանում ակտիվ գործունեություն էին ծավալել Բ. Նիլոպարյանն ու Ալ. Ազիդյանը [2]։ Ընկերությունն ուներ իր խորհուրդը, որի անդամներից մեկը հենց ինժ. Միրզոյանն էր։ Ընկերության բոլոր փաստաթղթերը գտնվում էին Վ. Միրզոյանի ձեռքում։ Նա էր փաստորեն անմիջապես ղեկավարում շինարարությունը։


Պետք է նշել, որ ընդհանրապես փայատիրական այդ ընկերության անդամները առանց բացառության եռանդուն էին և գործի մեջ համառ։ Ջրմուղից սպասվող օգուտները, ինչպես և մասամբ հայրենի քաղաքը լավորակ ջրով ապահովելու գործի պատվաբերությունը հաշվի առնելով, ընկերությունը սկզբից ևեթ գործում է եռանդուն և համարձակորեն։ Բավական է ասել, որ մինչև քաղաքի հետ կնքվելիք պայմանագրի վերջնական հաստատումը, ընկերությունն արդեն կատարել էր գործի մեծ մասը և ծախսել ամբողջ գործի համար նախատեսված գումարների մոտ $^2/_3$-ը [3]։

1911 թ. աշնանը արդեն ջրմուղի ամբողջ տարածության վրա գցված էին խողովակները և ավարտվելու վրա էին քաղաքի ցանցն ու ջրամբարը։

1911 թ. դեկտեմբերի 23-ին Քառասուն աղբյուրների ջուրը նորակառույց ջրմուղով հասնում է Երևան։ Այդ օրվանից քաղաքում սարքված 9 ծորակներից բավական մեծ ճնշման տակ բխում է Վերոպայում երկրորդ տեղը գրավող Քառասուն աղբյուրների սառնո-

1 «Эриванские объявления», 1910, № 53։
2 Նույն տեղը, 1912, №№ 1 և 2։
3 Նույն տեղը։

ջրակ ու վճիտ ջուրը։ Այդ օրը տոնական էր Երևանի համար։ Սակայն ջրմուղի ընկերությունը ցանկանում է ավելի մեծ շուք տալ ջրմուղի շինարարությանը՝ վճռելով մի քանի շաբաթից հետո կատարել ջրմուղի հանդիսավոր բացումը, իսկ մինչ այդ ջուրը քաղաքացիներին տալ ձրիաբար։ Այդ մասին ջրմուղի ընկերությունը ի լուր քաղաքի բնակիչներին աղդարարում է. «Երևանի «Ջրանցքի



Ծամելու ջրի ծորակների տեղաբաշխումը 1911 թ. վերջին (Երևանի պատմության թանգարան)։

ընկերությունը» սրանով հայտարարում է ընդհանրության, որ դեկտեմբերի 23-ից մինչև ջրանցքի հանդիսավոր բացման օրը (որը

կլինի հունվարի կեսին) բոլոր ջրատու տնակներից ձրի ջուր է տրվում բոլորևքյանց» [1]։

Իրոք որ 1912 թ. հունվարի կեսերին կատարվում է ջրմուղի բացման հանդիսավոր արարողությունը։

Ջրմուղը կառուցված էր տեխնիկական բարձր վարպետությամբ։ Այն կառուցելիս հաշվի էին առնվել ճնշումը, ջրմուղի անցկացման վայրերի երկրաբանական կառուցվածքը և ապառատեսակները։ Ջուրը բերվել էր այնպիսի խորությամբ, որ ակունքից մինչև ընդհուպ քաղաքի ծորակները ջերմությունը բարձրանում էր հազիվ 1—1,5 աստիճանով։ Ջրմուղի շինարարությունը ամենուրեք հսկում էր քաղաքային վարչության և դումայի կողմից ընտրված հանձնաժողովը։ Մասամբ հենց դրանով պետք է բացատրել աշխատանքի բարձրորակությունը։

Ջրմուղի հանդիսավոր բացումը կատարելուց հետո ջրմուղի ընկերությունը արդեն ջուրը բաց է թողնում սահմանված սակագնով։ Յուրաքանչյուր ծորակի վրա ընկերությունը պատրաստել էր փոքրիկ տնակ, որի վրա հսկում և ջուր էր բաց թողնում ընկերության նշանակած աշխատողը։ Քաղաքը փռված էր մեծ տարածության վրա, իսկ ծորակների թիվը ընդամենը 9 էր։ Այդ պատճառով էլ բնակիչները, հատկապես ամռանը, միշտ խռնված էին լինում ծորակների մոտ։ Խմելու ջուր վերցնելու համար հաճախ անհրաժեշտ էր լինում կտրել մեկ կամ ճանապարհ։ Իբրև «մեծ բարօրություն» ընկերությունը քաղաքի կենտրոնում բաց էր արել մի ծորակ, որից բաժակով ձրիաբար կարող էին ջուր խմել բոլորը, սակայն շուկայի վաճառականների անկարգության պատճառով ընկերությունը նախ հատուկ պահապան է նշանակում ծորակի վրա և ապա այն ընդմիշտ փակում [2]։

Սկզբնական շրջանում ջուր էր մատակարարվում միայն քաղաքին և այն էլ ոչ բավարար չափով։ Քաղաքի ծայրաթաղերից շատերը զրկված էին նորակառույց ջրմուղից օգտվելու հնարավորությունից։ Սակայն ժամանակի ընթացքում քաղաքի ցանցը բավական ընդարձակվում է։ 1914 թ. ապրիլին քաղաքի շրջակայքի գյուղերը՝ Թաղագյուղը, Վերին Շենգավիթը, Ներքին Շենգավիթը և Նորագավիթը դիմում են քաղաքային վարչությանը ջրմուղից օգտվելու թույլատվություն ստանալու համար։ Վարչությունը ընտրում է իրավասուներից բաղկացած մի հանձնաժողով, որը մշակում է այդ գյուղերին խմելու ջուր տալու պայմանները և ներկայացնում

1 «Эриванские объявления», *1912, №№ 1 և 2։*

2 *Նույն տեղը, 1913, № 35։*

հաստատման։ Քաղաքային վարչությունը ընդունելի է համարում ներկայացված պայմանները և որոշում է բավարարել նշված գյուղերի խնդիրքը [1]։

Մասամբ սահմանափակ քանակի և մասամբ էլ վրա հասնող առաջին համաշխարհային պատերազմի պատճառով Քառասուն աղբյուրների ջուրը նախասովետական երևանցու կոմունալ պայմանները փոփոխության չենթարկեց։ Այն գրեթե բացառապես օգտագործվում էր միայն խմելու համար։

Սակայն սրանք որևէ չափով չեն կարող նսեմացնել ջրմուղի կառուցման նշանակությունը նախասովետական Երևանի համար։ Խմելու ջրի պրոբլեմը Երևանում ուներ դարավոր պատմություն։ Ջրմուղի կառուցմամբ արմատապես լուծվեց այդ պրոբլեմը։ Ջրմուղի կառուցումը կարելի է վստահորեն համարել նախկին Երևանի ներքին կյանքի ամենախոշոր իրադարձությունը։ Նա այդպիսին էր ոչ միայն նշանակությամբ, այլև իր մասշտաբներով։ Ջրմուղի վրա ծախսվել էր 285 000 ռուբլի [2]։ Քաղաքում նախասովետական շրջանում այդ կարգի այդպիսի մեծությամբ այլ կառուցում չի կատարվել։

Քաղաքի համար կարևոր նշանակություն ուներ նաև այդ ժամանակների շատ քաղաքներում հաստատուն կերպով կենցաղի մեջ մտած հեռախոսը։ Մինչև քաղաքի հեռախոսային ցանցի ստեղծումը Երևանում արդեն գոյություն ուներ փոստ-հեռագրական գրասենյակ, որը պետական օրգան էր և որևէ չափով չէր առնչվում քաղաքի ներսում հեռախոսային ցանց ստեղծելու հետ [3]։

Երևանում ներքին հեռախոսային ցանց ստեղծելու հարցը առաջին անգամ առաջ է քաշվում տակավին 1896 թվականին [4]։ Սակայն մինչև 1902 թվականը այդ հարցի մասին այլևս ոչ ոք հոգ չի տանում և 5—6 տարի այն մատնվում է մոռացության։ 1902 թ. հունվարի սկզբներից քաղաքային վարչությունը Թիֆլիսի փոստ-հեռագրական օկրուգի առաջ հարց է հարուցում քաղաքում հեռախոսային ցանց ստեղծելու մասին։ Օկրուգի պետը Երևան քաղաքի փոստ-հեռագրական գրասենյակի հաղորդած տվյալների հիման

1 *«Նոր օր», 1914, № 14։*

2 «Эриванские объявления», 1912, №№ *1 և 2։*

3 *1894 թ. Երևանի նահանգում կար ճանապարհային-փոստային 13 կայան, որոնք բոլորը միասին ունեին 579 ձի։ Այդ նույն թվականին նահանգի փոստերի թիվը 18 էր, իսկ հեռագծերի երկարությունը հասնում էր 536 վերստի (տե՛ս* «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, *էջ 188)։*

4 «Эриванские объявления», *1913, № 39։*

վրա պատասխանում է, որ քաղաքում դեռևս չի պարզված կառավարական աբոնենտների թիվը։ Նա Երևանի քաղաքագլխին հասցեագրված 1902 թ. հունվարի 24-ի իր պաշտոնական գրության մեջ հիշեցնում է, որ կենտրոնական կայանից մինչև երկու վերստ հեռավորություն ունեցող յուրաքանչյուր հեռախոսային կետի տարեկան անդամավճարը սահմանված է 75 ռուբլի, իսկ դրանից ավելի հեռավորության դեպքում յուրաքանչյուր վերստի համար անդամավճարի քանակը ավելանում է 15 ռուբլով[1]։ Փոստ-հեռագրական օկրուգի պետը միաժամանակ նշում է, որ ըստ գոյություն ունեցող օրենքների, քաղաքային հեռախոսային ցանցը կարող էին սարքել նաև մասնավոր ձեռնարկուներն ու ընկերությունները[2]։

Դրանից հետո, ընդհուպ մինչև 1907 թվականը, այդ հարցի առթիվ գրագրությունները գրեթե ամբողջովին ընդհատվում են, թեպետև քաղաքը, ինչպես ասվեց, իրավունք ուներ կոնցեսիոն եղանակով հեռախոսային ցանցի սարքումը հանձնարարել մասնավոր ընկերությունների ու անհատ մարդկանց։ 1907 թ. գարնանը քաղաքի բնակիչ Անդրեաս Տեր-Աստվածատրյանը դիմում է քաղաքային վարչությանը՝ հեռախոսային ցանցի ստեղծումը կոնցեսիոն եղանակով իրեն հանձնելու համար։ Նա իր դիմումի մեջ նշում է մի քանի նախապայմաններ, որոնք պետք է դրվեին քաղաքային վարչության ու դումայի քննարկմանը։ Քաղաքային վարչությունը հանգում է դրական եզրակացության[3], սակայն հետագայում այդ գործը ընթացքի մեջ չի դրվում։

1909 թ. հեռախոսային ցանցի ստեղծման շուրջը բավական աշխույժ գրագրություններ են սկսվում Բաքվում դանիական դեսպան է. Բիերինգի հետ, որն իր կոնցեսիոն ծառայությունն էր առաջարկում Երևանում և Ալեքսանդրոպոլում հեռախոսային ցանցերը ստեղծելու համար։ Բիերինգի այդ դիմումը Երևանի նահանգապետին էր ուղարկված Կովկասի փոխարքայի միջոցով 1909 թ. մայիսի 16-ին[4]։ Դումայի միջոցով պարզելով հանգամանքները, նահանգական վարչությունը նույն թվականի դեկտեմբերի 3-ին ուղարկում է դրա պաշտոնական պատասխանը, որի մեջ մի շարք այլ պայմանների հետ միասին վարչությունը պահանջում էր, որ ա) կոնցեսիայի ժամկետը չպետք է գերազանցի 30 տարուց և բ) քաղաքը իրավունք պետք է ունենա զանազան կառուցումներ ու այլ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 498, թ. 3։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թ. 54։
4 Նույն տեղը, թ. 65—66։

աշխատանքներ կատարելիս (որոնց թվում և ընդգետնյա) ազատորեն օգտվել փողոցներից և հրապարակներից[1]։ Քաղաքային վարչությունն ու դուման է. Բիերինգի առաջարկը համարում են ընդունելի, որովհետև քաղաքը համապատասխան միջոցներ չուներ իր հաշվին այդ գործը գլուխ բերելու[2]։

Շուտով հրապարակ է գալիս ևս մեկ մասնավոր ձեռնարկու՝ ինժեներ-էլեկտրիկ Ն. Վ. Ֆալաղան, որը ևս ցանկություն է հայտնում Երևանի հեռախոսացանցի ստեղծումը կոնցեսիայով վերցնելու։ Քաղաքային վարչությունը օգտվելով այդ առիթից՝ դումայի միջոցով միջնորդում է նահանգապետին, որպեսզի վերջինս Կովկասի փոխարքայից թույլտվություն ստանա հայցվորների միջև պայմանների շուրջը մրցություն հարուցելու և է. Բիերինգի կողմից յուրաքանչյուր հեռախոսային կետի համար սահմանված 70 ռ. անդամավճարը հնարավորին չափով իջեցնելու համար[3]։

1912 թվականի հունվարին կառավարությունը թույլատրում և հաստատում է Երևանում հեռախոսային ցանցի ստեղծումը[4]։ Նույն թվականի նոյեմբերի սկզբներին Երևանում հեռախոսներ անցկացնելու համար Թիֆլիսից Երևան է գալիս փոստ-հեռագրական օկրուգի մեխանիկ Կուկուլինսկին[5]։

Հեռախոսի հարցը սկզբունքորեն լուծելու համար պահանջվում էր միայն 30—40 աբոնենտի առկայություն, իսկ Երևանում 1912 թ. աշնանը աբոնենտների թիվը հասնում էր մինչև 80-ի։ Նոյեմբերի 7-ին Կուկուլինսկին արդեն Երևանում էր, իսկ դրանից մի քանի օր անց իր հետ բերած վարպետների ու բանվորների հետ միասին սկսում է հեռախոսագծերի անցկացման աշխատանքները։ Առաջին հերթին սարքավորվելու էին նավաղնացության և առևտրի ռուսական ընկերության, Շուստովի գործարանի, քաղաքային հիվանդանոցի, Շահնազարյանի դեղատան, Կովկասյան հրաձգային 7-րդ գնդի գրասենյակի, Սարաջյանի գործարանի, «Երևանի ջրմուղի ընկերության», «Օրիանտ» հյուրանոցի, պետական բանկի Երևանի բաժանմունքի, նահանգական վարչության, ժողովրդական ուսումնարանների դիրեկցիայի, քաղաքային վարչության, օկրուգային դատարանի և այլ հիմնարկ-ձեռնարկությունների ու «նշանավոր»

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 498, թ. 58 և 65—66։
2 Նույն տեղը, թ. 59։
3 Նույն տեղը, թ. 79։
4 «Эриванские объявления», 1912, № 10։
5 Նույն տեղը, № 82։

մարդկանց բնակարանային հեռախոսները՝ թվով 80 հատ [1]։ Հեռախոսային ցանցի ստեղծումը երկար չի տևում։ Այն սարքավորվում է մոտ վեց ամսվա ընթացքում։ «1913 թ. մայիսի 12-ին հեռախոսային կայանը արդեն հանդիսավոր կերպով լուսավորված էր» [2] և արդեն սկսված էր նրա մշտական աշխատանքը։ Հենց այդ օրն էլ պետք է համարել Երևանի հեռախոսային ցանցի հիմնադրման օր։

Երևանի համար հույժ կարևոր նշանակություն ունեցող կոմունալ պրոբլեմներից մեկը կոյուղու հարցն էր։ Առանց կոյուղու քաղաքի բակերում ցրված հարյուրավոր արտաքնոցները դարձել էին համաճարակ հիվանդությունների օջախներ, հակասանիտարական բներ։ Կոյուղի ունենալու հարցը առաջ է քաշվում XX դարի սկզբներին, էլեկտրակայանի և մի քանի այլ պրոբլեմների հետ միասին։ Սակայն ի տարբերություն էլեկտրակայանի, տրամվայի (ձիաքարշի) և ջրմուղի, կոյուղին հնգամատրեր չէր և այն հնարավոր չէր կոնցեսիայի միջոցով կառուցել։ Կոյուղին պետք է կառուցեր ինքը՝ քաղաքային ինքնավարությունն իր միջոցներով։ Սկզբից ասենք, որ հենց այդ պատճառով էլ նախասովետական Երևանում հնարավոր չեղավ կոյուղի կառուցել։

Կոյուղի կառուցելու հարցը Երևանում առաջին անգամ քաղաքային վարչության ու դումայի քննարկման օբյեկտ է դառնում 1904 թ. աշնանը։ Քաղաքային վարչությունն այդ թվականի սեպտեմբերի 29-ին դումայի քննարկմանն է մատնում կոյուղու հարցը, իսկ դուման սեպտեմբերի 29-ին ու 30-ին և հոկտեմբերի 2-ին, 6-ին, 8-ին, 9-ին և 11-ին տեղի ունեցած նիստերում որոշում է հարցի հետագա քննարկումը հետաձգել մինչև Տիգրանյանի միջոցով ինժեներ Հովհաննիսյանի հետ կոյուղու նախագծի ու նախահաշվի կազմման համար համաձայնության գալը [3]։ Տիգրանյանի բանակցությունների հետևանքով պարզվում է, որ Հովհաննիսյանը քաղաքի կոյուղու լրիվ նախագծի, նախահաշվի, մանրամասն գծագրի և նախահաշվի ընդարձակ բացատրական տեքստի կազմման համար պահանջում է 700 ռ.։ Ըստ նրա նախագծի, կոյուղին ընդգրկելու էր քաղաքի մի մասը։ Նրա առաջարկած պայմանները Տիգրանյանի միջոցով 1904 թ. հոկտեմբերի 18-ին ներկայացվում են [4] քաղաքային դումային [5]։

1 «Эриванские объявления», 1912, № 84։
2 Նույն տեղը։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 572, թ. 49։
4 Նույն տեղը, թ. 45։
5 Նույն տեղը, թ. 49։

Հենց նույն ժամանակներում, 1904 թ. հոկտեմբերի 17-ին քաղաքի կոյուղու նախագիծն ու նախահաշիվը ձրիաբար կազմելու առաջարկով քաղաքային վարչությանն է դիմում ինժեներ-տեխնոլոգ Հ. Ն. Տիգրանյանցը։ Նա իր դիմումի մեջ նշում է, որ ինքը երևանցի է, բայց իրերի բերումով ապրում և աշխատում է Մայկոպում, որ ինքը ցանկանում է առանց որևէ վարձատրության կազմել իր հայրենի քաղաքի կոյուղու լրիվ նախագիծն ու նախահաշիվը [1]։

Քաղաքային վարչությունը դումայի ձայնավոր բժ. Տիգրանյանին հանձնարարում է ծանոթանալ Հ. Տիգրանյանցի դիմումին և տալ իր եզրակացությունը։ Բժ. Տիգրանյանն առանց հապաղելու կատարում է այդ հանձնարարությունը։ Նա իր եզրակացության մեջ նշում է, որ Հ. Տիգրանյանցը մասնագետ չէ և նրա առաջարկը չի կարելի ընդունել։

Այդպիսի եզրակացություններով դուման քննելով Հովհաննիսյանի և Հ. Տիգրանյանցի առաջարկած պայմանները՝ ընդունում է առաջինի առաջարկը և նրան պարտավորեցնում խոստացած աշխատանքը պատրաստի վիճակում ներկայացնել վեց ամսվա ընթացքում, իսկ Հ. Տիգրանյանցի առաջարկը մերժվում է՝ բժ. Տիգրանյանի եզրակացության հիման վրա [2]։

Նախահաշիվների ու նախագծերի հետ միասին քաղաքային վարչությունն ու դուման միաժամանակ հետաքրքրվում էին կոյուղու կառուցման համար անհրաժեշտ միջոցների աղբյուրներով։ Դեռևս 1904 թ. մայիսի 26-ին դուման՝ լսելով բժ. Տիգրանյանի ներկայացրած կոյուղու նախագծի մասին, որոշում է նրա նախագահությամբ կազմել հինգ հոգուց բաղկացած հանձնաժողով, որի պարտականությունն էր հանձնարարելով կոյուղու կառուցման համար անհրաժեշտ միջոցների հայտնաբերման և համապատասխան մասնագետների միջոցով նախագծեր ու նախահաշիվներ կազմելու գործը [3]։

Դումայի ձայնավոր բժ. Տիգրանյանը կոյուղու հարցը նորից է բարձրացնում 1905 թ. մարտին, գտնելով, որ առայժմ, քաղաքի ֆինանսական դրությունից ելնելով, անհրաժեշտ է քաղաքի կենտրոնով անցկացնել միայն մի մայրուղի, որը կդառնա հետագա կոյուղու ցանցի ստեղծման հիմքը։ Սակայն Տիգրանյանի այդ համեմատ առաջարկը ևս մերժվում է, պատճառ բերվելով միջոցների բացակայությունը [4]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 572, թ. 47։
2 Նույն տեղը, թ. 48—49։
3 Նույն տեղը, թ. 42։
4 Նույն տեղը, թ. 57։

Կոյուղու հարցը արծարծվում է նաև 1907, 1908, 1909 և 1914 թվականներին[1]։ Բայց նախկինի նման բարի ցանկությունից և զատարկ դրագրություններից ու թերթային հոդվածներից բացի այդ ուղղությամբ գործնական որևէ քայլ չի կատարվում։ Վրա հասնող համաշխարհային պատերազմի հետևանքով ընդհատվում են նաև գրագրությունները։ Երևանը մնում է առանց կոյուղու։

Նախորդ գրքում մենք տեսանք, որ XIX դ. առաջին կեսին Երևանում ժամանակակից հյուրանոցներ չկային։ Նրա ամբողջ հյուրանոցային տնտեսությունը, եթե կարելի է այդպես կոչել, բաղկացած էր պարսկական տիրապետությունից ժառանգություն մնացած կարավանատներից, որոնք իրենց ողորմելի դրությամբ ծառայում էին և՛ իբրև «հյուրանոցներ», և՛ առևտրի կետեր ու պահեստներ, իրենց կից սովորաբար ունենալով ախոռներ՝ քաղաք եկող վաճառականների ու այցելուների գրասանների համար։ Կարավանատների մեջ ամենախոշորն ու հայտնին Գյուրջի կոչվածն էր, իսկ դա նույնիսկ 80-ական թվականների սկզբներին, ինչպես նկարագրում է առաջին անգամ Երևան եկած մի անցորդ, իրենից ներկայացնում էր ոչ թե հյուրանոց, այլ գարշահոտության և վարակի բույն։ Անծանոթ անցորդը գրում է. «Այս տարի բախտի բերմամբ ընկա Երևան...։ Ես՝ որպես օտարական և անգետ վեր գալու տեղերին, վեր եկա Գյուրջու քարվանսարայում կամ լավ է ասել կատարյալ գժոխքում։ Այս քարվանսարայի անտեսանելի աներևակայելի կեղտոտությանց մասին, մոլորված եմ, բառեր չեմ գտնում, չգիտեմ ի՞նչ ասեմ, այդ ամենազզվելի կեղտոտությունները ի՞նչպես նկարագրեմ։ Ի՞նչ տեսակ գարշելի բուրմունք ասես որ չէր գալիս ամեն կողմից։ Ես կաղաչեի երևանցիներին, իմ խոսքերը ստուգելու համար անձամբ գնան և տեսնեն և հավատան, որ ամբողջ քաղաքում խոլերա տարածելու համար այդ կեղտոտությանց գժոխայինը բավական է»[2]։

Մյուս կարավանատները ավելի վատ վիճակում էին։ Գյուրջի կարավանատունը այդ տարիներին դեռևս շարունակում էր համարվել Երևանի «լյուքսը»։

1902 թ. Երևանում կային 21 կարավանատներ[3]։

XIX դարի 90-ական թվականներից դրությունը աստիճանաբար փոխվում է։ Արդյունաբերական և առևտրական ու ֆինանսական ձեռնարկությունների առաջացման, քաղաքի բնակչության թվի ավելացման, երկաթուղու կառուցման, կուլտուրայի ընդհանուր մակարդակի բարձրացման և մի շարք այլ ազդակների շնորհիվ Երևանում կառուցվում են ժամանակակից հյուրանոցներ, կամ ավելի ճիշտ է ասել, նորակառույց մի քանի շենքերի որոշ սենյակներ կամ ամբողջական հարկեր որոշ հարմարություններով վեր են ածվում հյուրանոցների։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Երևանում գոյություն ունեին մի քանի այդպիսի հյուրանոցներ՝ «Գրանտ Հոթել», «Օրիանտ», «Վիոն», «Ֆրանսիա», «Մարսել»։ «Գրանտ Հոթելը» գտնվում էր Աստաֆյան փողոցի՝ այն ժամանակվա համարակալմամբ՝ № 7 տանը, վերջինիս երկրորդ հարկում, իսկ առաջին հարկում Ամիրյան-Եղիազարյանի ունիվերսալ խանութն էր[1]։ «Գրանտ Հոթելը» համարվում էր քաղաքի երկրորդ հյուրանոցը, իսկ առաջինը՝ ամենահայտնին «Օրիանտն» էր։ «Օրիանտը» պատկանում էր Գևորգ Խաչատրյանին[2], նա գտնվում էր երկրորդ քաղաքամասում («Գրանտ Հոթելը» առաջին քաղաքամասում էր), այժմյան «Սևան» հյուրանոցի բակում։ «Վիոն» հյուրանոցը գտնվում էր Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի) փողոցի վրա (այն ժամանակվա համարակալմամբ № 28 տանը)[3]։ Երևանի մյուս երեք հյուրանոցներից երկուսը վերջինիս նման ունեին ֆրանսիական անուններ՝ «Ֆրանսիա» և «Մարսել», իսկ մեկը կոչվում էր «Վիեննա»[4]։ «Ֆրանսիան» գտնվում էր Շեյխ-ուլ-իսլամ կոչված կարավանատան երկրորդ հարկում, իսկ «Մարսելը»՝ Աստաֆյան փողոցի վրա մի մասնավոր տան մեջ։ Նշված հյուրանոցները չունեին իրենց ամպագորգոռ անուններին համապատասխան հարմարություններ։ Սակայն այդ չէր խանգարում, որպեսզի դրանցից մի քանիսը այցելուներ գրավելու համար մամուլում լայն ռեկլամի ենթարկեին իրենց «հրաշալի» հարմարությունները։

1902 թ. Երևանի հյուրանոցների ընդհանուր թիվը 11 էր։ Նշվածներից բացի Երևանի հյուրանոցներից էին նաև՝ «Կովկասը»,

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 572, թթ. 65, 66, «Эриванские объявления», 1909, №№ 42 և 43, «Հասք», 1914, № 15 և այլ տեղերում։

2 «Պատկ», 1880, № 33։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 508, թ. 15—16։

1 «Эриванские объявления», 1912, № 6, 1915, № 7։

2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 498, թ. 52, ֆ. 135, գ. 309, թ. 9, ֆ. 133, գ. 939, թ. 3։

3 Նույն տեղը, ֆ. 133, ցուցակ 1, գ. 1210, թ. 3։

4 Տե՛ս ЦГИА СССР в Москве, ф. 102, Д-4-п.-во, д. 87, ч. 10, թթ. 4, 5, 8, 9, 22—23, 76, 27, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 282, թ. 27, ֆ. 133, ցուցակ 1, գ. 952, թ. 4։

«Կարսա-չայը», «Սովիտ-Սովիտը», «Երկաթուղին», «Ծաղկեփունջը»։ Սրանք նույնպես բոլորն էլ մասնավոր էին և գտնվում էին մասնավոր տներում [1], առանց հյուրանոցային հատուկ հարմարությունների ու շուքի։

Նույնպիսի պատմություն ունեին նաև քաղաքի բաղնիքները։ Երևանում դեռևս պահպանվում էին պարսկական տիրապետության շրջանից մնացած «համամներից» մի քանիսը, որոնք էական որևէ փոփոխություն չէին կրել։ 90-ական թվականներից որոշ «համամներ» բարեփոխման են ենթարկվում, կառուցվում են և մի քանի նոր բաղնիքներ։ Բաղնիքների մեջ ամենահայտնին «Եվրոպական» կոչվածն էր, որը պատկանում էր ինժեներ Կ. Ե. Հովհաննիսյանին (նոր եկեղեցու՝ այժմ Սովետների փողոցի վրա) [2]։ «Եվրոպական» կոչված այդ բաղնիքը, որը արմատական բարեփոխումից հետո գոյություն ունի և մեր օրերում, խոտացված դույներով է ռեկլամել իր հարմարությունները։ Ինժ. Հովհաննիսյանը «Երևանի հայտարարություններ» թերթիկի միջոցով ի լուր քաղաքի բնակչության հայտնում էր, որ իր բաղնիքն «ունի տղամարդկանց ու կանանց ընդհանուր լողարաններ և համարներ, լոգնոցներ, ցնցուղներ, շոգու բաժին» և այլ հարմարություններ [3]։ Նույնպիսի բնույթ ուներ «Ռուսական» բաղնիքի տիրոջ՝ ս. Սամանովայի արած ռեկլամը։ Նույն թերթի մի շարք համարներում բաղնիքի տիրուհին քաղաքի բնակչությանն ազդարարում է, որ իր բաղնիքի սակագինը մատչելի է, որ նա ունի եվրոպական ձևի մարմարյա լոգարաններ, համարներ, ընդհանուր բաժիններ, շոգու ընդհանուր բաժին, որ իր բաղնիքը տաք է, մաքուր և այլն [4]։ Սամանովայի «Ռուսական» բաղնիքը գտնվում էր Մոլոկանի (այժմ Կարմիր Բանակի) փողոցի վրա [5]։

Երրորդ շատ քիչ հարմարավետ բաղնիքը Համբարձում Եղիազարյանին պատկանող բաղնիքն էր, որը նույնպես ուներ ընդհանուր բաժիններ և համարներ։

Պարսկական «համամները» XX դարի սկզբներից արդեն գրեթե գոյություն չունեին, մնացել էին միայն դրանց «համամչին» խղճուկ մնացորդները։

1 ՀՆՄՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 508, թ. 9։
2 «Эриванские объявления», 1914, № 20։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, 1909, № 68, 1912, № 10։
5 Նույն տեղը, 1912, № 10։

Քաղաքի բնակչության հանգստի կազմակերպման և կենցաղային սպասարկման համար, ինչպես հայտնի է, կարևոր դեր են խաղում զբոսայգիները։ Նախորդ գրքում նշեցինք, որ Երևանում մինչև քաղաքի առաջին հեռանկարային-գործող հատակագծով նախատեսված վերափոխությունները, զբոսայգու դեր էին խաղում գրեթե բացառապես եկեղեցիների ու մզկիթների սուվերախիտ, բայց փոքրիկ բակերը։ 50—60-ական թվականներից արդեն, երբ աստիճանաբար սկսում են իրականացնել քաղաքի առաջին հեռանկարային-գործող հատակագիծը, որոշ հոգ են տանում նաև ըստ այդ հատակագծի զբոսայգիներ ստեղծելու հարցի մասին։ XX դարի սկզբներին քաղաքում արդեն կային երեք զբոսայգիներ՝ դեկորատիվ ծառերով զարդարված։ Դրանցում վաուլում էին մի քանի նավթային (մինչև 1907 թ.) խղճուկ լապտերներ և կային նստարաններ։ Զբոսայգիները, բացառությամբ Անգլիականի, դեռևս ձևավորման չէին ենթարկվել, չունեին կանոնավոր ծառուղիներ, շատ տեղերում միանգամայն անմշակ էին։ Բոլոր զբոսայգիները քաղաքապատկան էին և քաղաքային վարչության ու դումայի կողմից տարբեր ժամանակներում տարբեր պայմաններով կապալով տրվում էին անհատ մարդկանց [1]։ Հայտնի էին հատկապես քաղաքի նոր այգին՝ այժմյան Լենինի և Շահումյանի արձանների միջև և Անգլիական այգին։

Քաղաքի զբոսայգիների «զարդը» կազմում էր Անգլիական այգին (այժմ 26 կոմիսարների այգի)։ Դա նախասովետական շրջանի Երևանի միակ ձևավորված ու ամենամեծ զբոսայգին էր։ Սակայն դրա ձևավորումն ու բարեկարգումը տևել է մոտ կես դար՝ XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի սկզբները՝ մինչև առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիները։ Մեզ հետաքրքրող շրջանում Անգլիական այգու բարեփոխման վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել քաղաքային բժ. Լևոն Տիգրանյանը։ Վերջինս 1881 թ. սկզբներին քաղաքային դումային մի դիմում է ներկայացնում, որով խնդրում է Անգլիական այգու մի մասը տնկարան դարձնելու նպատակով հանձնել իր տնօրինությանը։ Այդ տնկարանը գիտակ և եռանդուռ բժիշկը օգտագործելու էր այգուն և քաղաքի փողոցներին տնկիներ մատակարարելու համար։ Տիգրանյանը ենթադրում էր, որ փողոցներում տնկվելիք տընկիները քաղաքացիներին կվաճառվեն համապատասխան գներով և այդ եղանակով կապահովվեր այգու ու դրա տնկարանի ծախսերի

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1073, 1307 և այլուր։

մեծ մասը։ Տիգրանյանի դիմումը 1881 թ. հունվարին քննության է ենթարկվում դումայում, որի նիստում Վ. Եղիազարյանը իր հակատիգրանյանական բունտա ճառում անտեղի ու ավելորդ է համարում բժշկի խնդրանքը, նրան «խորհուրդ» տալով «իբրև առողջապահական հանձնաժողովի նախագահ» առաջին հերթին զբաղվել «քաղաքն ապականությունից ազատելու միջոցներ» գտնելու գործով[1]։ Եղիազարյանը մոռանում էր, որ քաղաքի ծառապատումն ու ջրանցքերի բարեկարգումը նույնպես առողջապահական միջոցառումներ էին, այն էլ այդ տիպի առաջին կարգի միջոցառումներ։ Այնուամենայնիվ, դուման գնում է Վ. Եղիազարյանի հետևից։ Նա Լ. Տիգրանյանի դիմումը թողնում է անհետևանք[2], իսկ Անգլիական այգին՝ անխնամ։ Դրանից տաս տարի անց, 1891 թ. սկզբներին, առաջին քաղաքամասի ոստիկանական կառավարծուի կազմած ակտում ասվում է այն մասին, որ Անգլիական այգին գտնվում է անբարեկարգ և սոսկալի կեղտոտ վիճակում[3]։ Չնայած այգին ջաքելու մասին քաղաքագլխի արած կարգադրություններին, հետագա մի քանի տարիներում ևս այգին մնում է աննախանձելի ու անմխիթար վիճակում։

1894 թ. Անգլիական այգու ձևավորման և բարեկարգման հարցը նորից է բարձրանում։ Բնակչության աճը և հեռանկարային-գործող նախագծի հիման վրա քաղաքի աստիճանական վերակառուցումը հարկադրում է քաղաքային վարչությանը դրական ընթացք տալ նաև Անգլիական այգին կանոնավորելու մասին արած առաջարկներին։ Կազմվում է այգու՝ բավական ճաշակով հատակագիծը, ըստ որի նա ունենալու էր մի շարք ծառուղիներ, կրպակներ, անջրդրիացման առուների միջոցով չորացվելու էր նրա ճահճապատ մասը, տնկվելու էին հարյուրավոր նոր ծառեր ու թփեր։

Այդպիսի աշխատանքները սովորաբար տրվում էին կապալով։ Քաղաքային վարչությունը ընդունում է Երևանցի Հևոն Բագլաչյանի 1894 թ. արած առաջարկը և 1895 թ. հուլիսի 1-ին, 12 տարի ժամանակով կապալով է տալիս Անգլիական այգին՝ նրան հանձնարարելով նաև նախագծվող բոլոր աշխատանքների կատարումը[4]։ Ըստ այդ պայմանագրի, Բակլաչյանը պարտավորվում էր անմիջապես սկսել և, 1894 թ. հունիսի 4-ին քաղաքային վարչու-

1 «Պատկ», 1881, № 4։
2 Նույն տեղը։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 260, թ. 30։
4 Նույն տեղը, գ. 1307, թ. 18—19։

թյանը ներկայացրած հատակագծին համապատասխան, երեք տարվա ընթացքում ավարտել այգու վերակառուցումն ու ձևավորումը, այնտեղ դնելով ծառուղիներ, ծաղկանոցներ, պատրաստելով տաղավարներ և չորացնելով ճահիճները։ Նա պարտավորվում էր այգին մշտապես պահել կարգին վիճակում, իբրև կապալագին քաղաքային գանձարանը երկու նվագով տարեկան մուծելով 115 ռուբլի գումար։ Պայմանագրային ժամկետն ավարտվելուց հետո նա պարտավոր էր այգին իր բոլոր ունեցվածքներով և միանգամայն կարգին վիճակում, առանց դրամական ու այլ կարգի որևէ պահանջի, հանձնել քաղաքային վարչությանը։ Պայմանագրով քաղաքային վարչությունը նրան իրավունք էր տալիս պայմանագրային ժամկետում այգում եղած առևտրի կետերն (կրպակներ, բուֆետ և այլն) ու զբոսարանները օգտագործել իր հայեցողությամբ՝ պահպանելով գոյություն ունեցող ընդհանուր օրենքները։ Քաղաքային վարչությունը իրավունք ուներ ցանկացած ժամանակ այգին իր տնօրինության տակ վերցնելու՝ Լ. Հ. Բագլաչյանին հատուցելով նրա կատարած աշխատանքների համար[1]։


Գրագրությունների հետագա ընթացքից երևում է, որ Բագլաչյանը ինչ-ինչ պատճառներով կամ չի կատարել իր պարտավորությունները և կամ դրանք կատարել է մեծ թերացումներով ու պակասություններով։

Սակայն, եռանդուն քաղաքագլխի՝ Իս. Մելիք-Աղամալյանի (1898—1903 թթ.) անմիջական նախաձեռնությամբ այգին, այնուամենայնիվ, ենթարկվում է հիմնական վերակառուցման։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1910 թ. համարներից մեկում մի անստորագիր ամրողջական հոդված է նվիրված Անգլիական այգու վերակառուցման պատմությանը։ Հոդվածում ասված է, որ մինչև Իս. Մելիք-Աղամալյանի քաղաքագլուխ դառնալը Անգլիական այգին իրենից ներկայացնում էր «մի ահագին լայնատարած ճահճային տարածություն հին ու փտած ծառերով, որին անվանում էին մի ժամանակ նաև «собачий сад»։ Կեղտ, ապականություն, ջնջման և մալարիայի բույն»[2]։ Այնուհետև հոդվածում նշվում է, որ Մելիք-Աղամալյանի ջանքերով, ընդամենը 3000 ռ. ծախսումով (որից 2000 ռ. միայն անջրդիացման համար) հնարավոր է դարձել կոտրել բոլոր հին ու «փտած ծառերը», այգում «զանազան ուղղությամբ անջրդիացման խոր առուներ (дренаж) փորել» տալ, «ճահճային

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1307, թ. 18—19։
2 «Эриванские объявления», 1910, № 73։

ջրերն ի մի» հավաքել և չորացնել «ամբողջ այգին», «վեհաստանից ու Կրեմենչուգից 4000-ի չափ նորատունկ ծառեր բերել» տալ ու տնկել այգում, բաց անել նոր ծառուղիներ, այգուն հարյուրավոր ծառեր տրամադրել իր սեփական կալվածքներից, տեղծել տնկարան և այլն [1]։

Այգու բարեկարգման աշխատանքները շարունակվում են հաջորդ եղբոր՝ Իվ. Ղ. Մելիք-Ադամալյանի քաղաքագլխության տարիներին (1904—1910 ԹԹ.) [2]։



Անգլիական (26 կոմիսարների) այգու հատակագիծը (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

Այգու վերափոխմանն ու բարեկարգմանը իր անձնական աշխատանքով ակտիվ մասնակցություն է ունեցել քաղաքային այգեգործ

1 «Эриванские объявления», 1910, № 73։
2 Նույն տեղը։

Քյալյանը, որը այդտեղ աշխատել է սկսած 90-ական թվականներից ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները ներառյալ։

Վերակառուցման աշխատանքների պատճառով այգին ավելի քան 10 տարի փակ է եղել քաղաքի հասարակության համար։ Այն բացվել է միայն 1910 թ. հոկտեմբերի 3-ից [1]։ Թղթակցի ասածներից պարզ երևում է, որ այգին դեռևս հեռու էր կատարյալ լինելուց, որ այն կարող էր քաղաքի համար «հրաշալիք» դառնալ միայն «10—15 տարուց հետո», միաժամանակ նշելով, որ «այսպես թե այնպես... քաղաքն ունի մի ահագին հասարակական այգի, զերծ թողից և քաղաքային աղմուկից» [2]։

Իզուր էր կանխագուշակություններ անում բարյացակամ թղթակիցը։ Առաջին համաշխարհային պատերազմի և դաշնակների տիրապետության տարիներին Անգլիական այգին նորից վերածվեց նախապատերազմյան շրջանի ճահճուտների ու վարակի բույնի։

1879—1914 ԹԹ. զգալի տեղաշարժեր են կատարվում քաղաքի սանիտարական պայմանների և առողջապահության գործի մեջ։ Քաղաքի սանիտարական պայմանների ու առողջապահական գործի պատասխանատուն առաջին հերթին քաղաքային բժիշկն էր [3] ու սանիտարական-առողջապահական հանձնաժողովը, որը հիմնականում աշխույժ գործունեություն էր ծավալել XIX դարի 80—90-ական թվականներին։ Քաղաքային բժշկի պարտականությունների մեջ էին մտնում. ա) հսկել սանմասի հրապարակած պարտադիր որոշումների կատարման վրա, բ) հետևել, որպեսզի ժամանակին միջոցառումներ ձեռնարկվեն քաղաքում տարածվող սուր-վարակիչ հիվանդությունները վերացնելու համար, գ) տեղեկություններ հավաքել քաղաքում տարածված սովորական և հատկապես սուր-վարակիչ հիվանդությունների մասին, դ) սանիտարական առումով նյութեր հավաքելու համար կատարել անհրաժեշտ դիտումներ, ե) հսկել սուր-վարակիչ հիվանդություններից հետո մասնավոր տներում ճշգրիտ կանոններով ախտահանում անցկացնելու վրա և զ) կազմել բժշկական մասին վերաբերող փաստաթղթերն ու զեկուցագրերը։ Քաղաքային բժիշկն ուներ իր ընդունարանը։ Նրա տրամադրության տակ էր գտնվում քաղաքային բուժակը [4]։

1 «Эриванские объявления», 1910, № 73։
2 Նույն տեղը։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 637, թ. 5—6։
4 Նույն տեղը, թ. 6։

Երևանի՝ մեզ հետաքրքրող շրջանի քաղաքային բժիշկների մեջ ամենանշանավորը Լևոն Տիգրանյանն էր, որը, ինչպես տեսանք, մի ժամանակ եղել է նաև քաղաքագլուխ և ակտիվ մասնակցություն է ցույց տվել քաղաքի հասարակական, կոմունալ, կուլտուրական գործերին։ Նա ոչ միայն սովորական բժիշկ էր, այլև բժշկական մի շարք աշխատությունների հեղինակ, որոնց մասին խոսք կլինի մշակույթի բաժնին անդրադառնալիս։ Լևոն Տիգրանյանը իր քաղաքում ունեցել է երկարամյա գործունեություն, որը սկսվում է 70-ական թվականների վերջերից և, մի քանի տարվա ընդմիջումը չհաշված, շարունակվում է ընդհուպ մինչև նրա մահը։ Լ. Տիգրանյանի մահը (մահացել է 1906 թ. փետրվարի 16-ին)[1] մեծ սուգ է պատճառել համաքաղաքացիներին։

Լևոն Տիգրանյանը քաղաքի սանիտարական պայմանների բարելավման համար տարիներ շարունակ մտահոգվում էր ոչ միայն որպես քաղաքային բժիշկ, այլև իբրև իր առաջարկով կազմված՝ քաղաքային առողջապահական մշտական հանձնաժողովի նախագահ։ Նախորդ գրքում մենք արդեն ասացինք, որ այդ հանձնաժողովը կազմվել էր 1880 թ. սեպտեմբերին, իսկ դրա գործունեությունը սկսվել էր 1881 թ. հունվարից։ Հանձնաժողովի հիմնական պարտականությունը քաղաքի սանիտարական պայմանների բարելավումն էր։ Հինգ հոգուց բաղկացած այդ հանձնաժողովը՝ բժ Լ. Տիգրանյանի նախագահությամբ և հանձնաժողովին օգնող անձնավորությունների օգնությամբ, ծավալում է աշխույժ սանիտարական աշխատանք[2]։ Հանձնաժողովի անդամներից յուրաքանչյուրը հրսկում էր քաղաքի որոշ մասի սանիտարական գործի վրա։ Այսպես, Եգոր Հովակիմյանը հսկում էր շուկայի, Կոնդի և Զորագեղի վրա, Կարապետ Դադումյանը՝ Շահարի ձախ մասի վրա, Աղա-Մահմեդ-Հաջի-Ալի-օղլին՝ Շահարի աջ մասի և Նորքի վրա, Հաջի-Ալի-բեգը՝ Դեմիրբուլաղի վրա[3]։ Քաղաքի սանիտարական այդ չորս մասերից յուրաքանչյուրն ուներ իր սանիտար-բժիշկը, որը ձախ ձեռքի վրա կրում էր կարմիր խաչի նշանը և ենթարկվում էր քաղաքային սանիտարական հանձնաժողովի՝ տվյալ քաղաքամասի ձայնավոր-հսկիչին[4]։ Դումային կից ստեղծված այդ հանձնաժողովի 80—90-ական թվականների գործունեությունը տալիս է շոշափելի արդյունք-

1 «Эриванские объявления», 1906, № 9։
2 Տե՛ս «Երևանի պատմությունը (1801—1879 թթ.)», էջ 576։
3 «Պատկ», 1881, № 5։
4 Նույն տեղը, տե՛ս նաև ՀՆՄՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 201, թ. 9 և այլուր։

ներ։ Քաղաքի սանիտարական չորս տեղամասերում հանձնաժողովի հսկիչ-անդամների հսկողությամբ և սանիտար-բժիշկների ջանքերով սանիտարական դրությունը նախորդ ժամանակների համեմատությամբ կրում է զգալի փոփոխություններ[1]։

Ըստ հրապարակված պարտադիր որոշման, քաղաքի աղբը տեղափոխում էին քաղաքից դուրս՝ Խոսրովաբադից այն կողմ[2]։ Սանիտարական հանձնաժողովը իր նեղ կազմով ու սուղ միջոցներով չէր կարող արմատական փոփոխություններ մտցնել քաղաքի սանիտարական կյանքում։ Բավական է ասել, որ 80-ական թվականների սկզբներին քաղաքի շուկայի ու բոլոր հրապարակների աղբը քաղաքից դուրս տանելու համար քաղաքային վարչությունը սանիտարական հանձնաժողովին տրամադրել էր ընդամենը երկու սայլ[3], որոնք օրերով չէին երևում։

Քաղաքի սանիտարական պայմանները զգալի չափով բարելավվում են 90-ական թվականների վերջերից և XX դարի սկզբներից։ Դրան նպաստում են քաղաքի մի շարք փողոցների վերակառուցումը, որոշ ձեռնարկություններում մասնակի կոյուղիների անցկացումը, զբոսայգիների, հատկապես Անգլիական այգու բարեկարգումը, փողոցներում և զբոսայգիներում կատարվող ծառատունկը, ջրմուղի կառուցումը, ճանապարհների մասնակի բարեկարգումն ու սալահատակումը և այլն։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երևանի սանիտարական պայմանները որոշ իմաստով արդեն տանելի էին։ Սակայն պատերազմի տարիներին և դաշնակցականների տիրապետության կարճատև շրջանում ողորմելի դրության են հասնում նաև քաղաքի սանիտարական պայմանները։

Էլ ավելի վատթար դրության մեջ էր քաղաքի բնակչության առողջապահության գործը։ Քաղաքում բուժհիմնարկներն ու առողջապահական բնագավառի աշխատողները կազմում էին չնչին թիվ, առողջապահության վրա կատարված ծախսերն աննշան էին։ Մինչև 1888 թ. Երևանում, չհաշված միակ զինվորական հոսպիտալն ու մի երկու-երեք փոքրիկ դեղատները, ոչ մի բուժհիմնարկ գոյություն չուներ։ Առաջին բուժարանը քաղաքում բացվում է 1888 թվականին՝ մի քանի տարի այդ մասին տեղի ունեցած դրագրություններից ու զանազան վարիանտներ առաջ քաշելուց հետո։ Բուժարանը

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 201։
2 «Պատկ», 1881, № 5։
3 Նույն տեղը, № 8։

գտնվում էր մասնավոր տան մեջ, այժմյան Սվերդլովի փողոցի 48 համարում։ Բուժարանը սպասարկում էին ընդամենը երեք բուժաշխատողներ՝ մեկ բժիշկ, որը միաժամանակ բուժարանի վարիչն էր, մեկ բուժակ և մեկ մանկաբարձուհի [1]։ Բուժարանը բացվել էր քաղաքային վարչության ու դումայի ջանքերով և ուներ իր հատուկ կանոնադրությունը։ Ըստ կանոնադրության բուժարանը բուժօգնություն էր ցույց տալիս բացառապես ոտքի վրա գտնվող հիվանդներին։ Բուժումը վարձով էր, բժշկական յուրաքանչյուր խորհրդի համար հիվանդը մուծում էր 40 կոպեկ, բայց բացարձակ չքավորներին բուժօգնություն էր ցույց տրվում անվարձ [2]։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քաղաքում գոյություն ունեին մի քանի բուժարաններ՝ քաղաքային հիվանդանոցը, ակնաբուժարանը, հոգեբուժարանը, բանտին կից բացված հիվանդանոցը և երկու մասնավոր մշտական բուժարաններ, որոնցից մեկը պատկանում էր վիրաբույժ Հ. Գ. Հովհաննիսյանին, իսկ մյուսը՝ բժ. Ա. Տեր-Ավետիքյանին [3]։

Դրանց մեջ ամենից խոշորը, մշտական գործողը և նշանավորը քաղաքային հիվանդանոցն էր, որը կազմակերպվել է ոչ միանգամից։ 1893 թ. փետրվարի 4-ին [4] (ըստ Լ. Հովհաննիսյանի՝ փետրվարի 1-ին) նշված բուժարանին կից բացվում է 12 մահճակալանոց մի փոքրիկ հիվանդանոց։ Ըստ հիվանդանոցի համար հաստատված կանոնադրության, քաղաքային հիվանդանոցում իրավունք ունեին բուժվելու երկսեռ բոլոր քաղաքացիները, անկախ ազգից և տարիքից։ Հիվանդները պետք է վճարեին բուժման և սննդի համար սահմանված գումարը։ Հիվանդանոցը վարկավորվում էր քաղաքային դումայի կողմից։ Դրա 12 մահճակալներից 7-ը գտնվում էր տղամարդկանց բաժնում, իսկ 5-ը՝ կանանց։ Հիվանդանոցն ընդունում էր միայն ծանր և խրոնիկական հիվանդներին։ Նա ուներ ամբուլատորային բաժանմունք և սեփական դեղատուն։ Յուրաքանչյուր հիվանդ բուժման և սննդի համար պարտավոր էր ամսական վճարել 15 ռուբլի (այն էլ տվյալ ամսվա սկզբին)։ Վճարից կարող էին ազատվել միայն քաղաքային վարչության հատուկ որոշմամբ, իսկ քաղաքային վարչությունն այդպիսի որոշում կայացնում էր միայն հաղվադեպ պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ

1 *Տե՛ս Լ. Ա. Օգանեսյան,* История медицины в Армении, ч. 4, Ереван. *1957, էջ 35։ Համմ. «Երևան» (լրագիր), Երևան, 1959, № 215։*

2 *Նույն տեղը։*

3 *Լ. Ա. Օգանեսյան,* История медицины в Армении, ч. 4, *էջ 35։*

4 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1284, опись 223, д. 86, *թ. 87։*

վճարից ազատված հիվանդների թիվը միշտ մեծ լինի ազատվածների թվից [1]։

Ժամանակի ընթացքում պայմանները քաղաքային դումային հարկադրում են հոգ տանելու հիվանդանոցի մահճակալների թվի ավելացման և այն համապատասխան շենքով ապահովելու մասին։ Նրա մահճակալների թիվը 1899 թ. հասնում է 15-ի, 1903 թ.՝ 26-ի, 1905 թ.՝ 29-ի, իսկ 1908 թ.՝ 35—40-ի [2]։ Ավելի մեծ չափերով է մեծանում դրանում ստացիոնար և ամբուլատորական եղանակով բուժվողների թիվը։ Այսպես, եթե 1894 թ. հիվանդանոցը ունեցել է 142 ստացիոնար, 2654 ամբուլատոր բուժվողներ, ապա 1896 թ. դրանց համապատասխան թվերն են՝ 151 և 4709 [3]։

Քաղաքային հիվանդանոցը վարում էր աստանդական կյանք։ Չունենալով ֆինանսական միջոցներ՝ քաղաքային դուման հարկադրված էր հիվանդանոցը տեղադրել վարձու մասնավոր տներում, որոնք աճող պահանջների հետևանքով շատ շուտով դադարում էին հիվանդանոցին բավարարելուց։ 1902 թ. հիվանդանոցը ամբուլատոր բուժարանի հետ միասին տեղափոխվում է այժմյան Ամիրյանի փողոց (այն ժամանակվա համարակալմամբ 22—24 համարների տակ գտնվող տունը), 1908 թ.՝ այժմյան Կնունյանցի փողոց, իսկ 1918 թ.՝ Աստաֆյան փողոցում այդ նպատակի համար կառուցված հատուկ շենքը՝ այժմյան առաջին հիվանդանոցի շենքը, որի շինարարությունը մինչև սովետական կարգերի հաստատումը դեռևս լրիվ ավարտված չէր [4]։

Հիվանդանոցի վատ պայմանները և նրա բժշկական ու օժանդակ աշխատողների կազմի շատ սահմանափակ լինելը հնարավորություն չէին տալիս գեթ նվազագույն չափով ապահովել հիվանդների բուժման գործը։ «Կռանո» թերթի թղթակիցներից մեկի վկայությամբ նախասովետական շրջանի Երևանի քաղաքային այդ ամենանշանավոր հիվանդանոցն իր ամենաբարվոք շրջանում՝ 1912 թվականին շատ փոքր էր քաղաքի ու շրջակայքի բնակիչների թվի համեմատությամբ, մահճակալների թիվը սահմանափակ, սենյակները՝ քիչ, սանիտարական պայմանները՝ անտանելի։ Թղթակիցը գրում է, որ «այդ հիվանդանոցում հիվանդների խնամատարությու-

1 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, դ. 282, թ. 41։*

2 *Տե՛ս Լ. Ա. Օգանեսյան,* История медицины в Армении, ч. 4, *էջ 35,* «Обзор Эриванской губернии за 1900 г.», *էջ 22։*

3 «Кавказский календарь на 1894 г.», отд. 5, *էջ 191,* «Обзор Эриванской губернии за 1896 г.», *էջ 25։*

4 *Լ. Ա. Օգանեսյան,* История медицины в Армении, ч. 4, *էջ 36—38։*

նը հիշեցնում է բանտային կյանքը, որ ցավերի մեջ տքնող, գալարվող հիվանդը մատնված է միևնույն մոռացման, ինչ որ բանտում»։

«Հաճախ նոր ընդունված հիվանդները կարիք են զգում փոխնորդի, բայց սպիտակեղեն չունենալու պատճառով սրանք այնքան պետք է սպասեն, մինչև որ մեկը մեռնի կամ դուրս գրվի...։

Ամեն մի հիվանդ ըստ հնարավորին աշխատում է տանից ստանալ ճաշը և չմնալ հիվանդանոցի կերակուրների հույսին։ Սա, իհարկե, հնարավոր է միայն ունևորներին...։

Հիվանդանոցը վաննա չունի և պահանջում են հիվանդից, որ բաղնիք գնա՝ հետո գա հիվանդանոց։ Զարմանալի չի էլ, որ ասեն թե գնա առողջացիր՝ հետո արի։

Հիվանդանոցը զուրկ է ամենաատարրական հարմարություններից...։ Այս ամենից հետո շատ պարզ է, թե ինչու մեղանում սոսկում են հիվանդանոցից և տարածված է այնպիսի կարծիք, որ «այնտեղ ընկնողն էլ դուրս չի գա»» [1]։

Մյուս հիվանդանոցները ավելի վատ պայմաններում էին գտնվում։ Սոսկալի վիճակում էր գտնվում մանավանդ բանտին կից հիվանդանոցը, որի պայմանները արդեն իբրև ծաղր, լիովին բանտային էին։

Ինչպես ասվեց, մեզ հետաքրքրող շրջանի Երևանում գոյություն ուներ նաև երկու մասնավոր հիվանդանոց։ Դրանցից համեմատաբար ավելի հայտնին վիրաբույժ Հ. Գ. Հովհաննիսյանի վիրաբուժական հիվանդանոցն էր, իր մի քանի մահճակալներով։ Հովհաննիսյանի հիվանդանոցը գտնվում էր Աստաֆյան փողոցի վրա, Ամիրյանի տանը։ Ըստ ռեկլամի, հիվանդանոցն ընդունում էր վիրաբուժության կարիք ունեցող բոլոր քաղաքացիներին, վարձի մասին նախօրոք համաձայնության գալուց հետո։ Հիվանդանոցն ունեցել է ընդհանուր և առանձին սենյակներ [2]։ Մյուս մասնավոր հիվանդանոցը, ինչպես ասվեց, բժ. Մելիքյանինն էր, որը նույնպես տեղադրված էր մասնավոր տան մեջ և բուժում կատարում էր ըստ հիվանդության տեսակի և բուժման դժվարության սահմանված վարձով։

Մի փոքր ավելի բարվոք էր զինվորական հոսպիտալի դրությունը։ Երևանի բուժհիմնարկների այդ առաջնակը համարվում էր

1 «Կռան» (լրագիր), Երևան, 1912, № 12։

2 «Эриванские объявления», 1911, № 70։

առաջին կարգի [1] հոսպիտալ [2]։ Հոսպիտալում բուժվում էին զինվորականները։ Դրան կից կար նաև դեղատուն, որը մի ժամանակ, ինչպես նշվել է սույն աշխատության նախորդ գրքում, դեղեր էր բաց թողնում նաև քաղաքացիներին՝ մանավանդ համաճարակների ժամանակ։

XIX դարի 90-ական թվականներին և XX դարի սկզբներին Երևանում կար քաղաքացիական, այսպես կոչված, նորմալ երկու դեղատուն [3], չհաշված զինվորական հոսպիտալին կից եղած դեղատունը։ Հետագայում, 1905—1906 թթ. հետո քաղաքում բացվում է նաև մի նոր դեղատուն, որը պատկանում էր Ֆ. Լ. Ռուդնիցկուն [4]։ Դեղատների թիվն, այսպիսով, հաշված և զինվորականը, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հասնում էր 4-ի։ Դա այն ժամանակվա Երևանի համար քիչ չէր, սակայն բանը միայն թվի մեջ չէ։ Դեղատներում հաճախ չէին գտնվում նույնիսկ ամենատարածված դեղերը։

Առողջապահական վիճակի մասին, բուժհիմնարկներից բացի, որոշակի գաղափար է տալիս նաև բժշկական աշխատողների թիվը։ Ամբողջ Երևանյան նահանգում 1881 թ. տվյալներով կար 10 բժիշկ, 5 մանկաբարձուհի և 22 բուժակ [5], 1891 թ.՝ 16 բժիշկ, 9 մանկաբարձուհի, 22 բուժակ, 17 ծաղիկ պատվաստողներ, 14 դեղագործներ, 5 պրակտիկանտներ [6], 1896 թ.՝ 19 բժիշկ, 12 մանկաբարձուհի, 29 բուժակ, 17 ծաղիկ պատվաստողներ [7]։ Ինչպես տեսնում ենք, բժշկական աշխատողների թիվը Երևանի նահանգում աննշան էր, աննշան էր և դրա մեծացումը ժամանակի ընթացքում։ XX դարի սկզբներից, այնուամենայնիվ, և՛ Երևանի նահանգում, և՛ նրա կենտրոնում բժշկական աշխատողների թիվը մոտավորապես կրկնապատկվում է։ Մամուլի տվյալներից երևում է, որ Երևան քաղաքում XX դարի երկրորդ տասնամյակի սկզբներին բժիշկների թիվը հասնում էր 20—25-ի։

Հիվանդանոցներում և այլ կարգի բուժհիմնարկներում աշխատող բժիշկներից բացի այդ տարիներին հիշատակվում են նաև

1 Ամենաբարձր կարգի հոսպիտալը համարվում էր երրորդ կարգը, որից Թիֆլիսում 80-ական թվականներին կար 2-ը, ապա դալիս էր երկրորդ կարգը։

2 «Кавказский календарь на 1883 г.», отд. 2, էջ 122—123։

3 Նույն տեղը, на 1893 г., էջ 60, на 1896 г., отд. 5, էջ 190։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 19, թ. 39։

5 «Кавказский календарь на 1883 г.», отд. 1, էջ 226։

6 Նույն տեղը, на 1893 г., էջ 60։

7 «Обзор Эриванской губернии за 1896 год», էջ 24։

մասնավոր մի շարք բժիշկներ՝ Մ. Մ. Մարգարյան, Ա. Նիկոլաևնա, Նավասարդյան, Խ. Ն. Հարությունյան, Վ. Վ. Դալ, Վ. Յա. Խորասանյան (Բեռլինի համալսարանի դոկտոր) և ուրիշներ[1]։ Ըստ երևույթին, այդ և չնշված բժիշկների մի մասը հատկապես ակնաբուժներից, ատամնաբուժներից և մասամբ վիրաբուժներից ոմանք Երևանում աշխատում էին ժամանակավորապես։ Նրանք գալով այլ և այլ տեղերից, որոշ ամիսներ քաղաքում աշխատելուց հետո նորից վերադառնում էին։ Առանց բացառության նրանք բուժումը կատարում էին մասնավոր կարգով և դրա համար վերցնում էին բարձր վարձ։ Մամուլում հաղորդված է, որ մասնավոր բուժումն իր բարձր վարձով մատչելի էր միայն քաղաքի ամենաունևոր շերտի համար։

Քաղաքի բնակչության առողջապահության գործին իր մասնակցությունն էր ցույց տալիս նաև Կովկասյան բժշկական ընկերության Երևանի բաժանմունքը, որը կազմակերպված էր նախորդ շրջանում։ Նրա հիմնական նպատակը թոքախտի դեմ պայքարելն էր, իսկ այդ հիվանդությունը բավական լայն տարածում էր գտել։ Բաժանմունքին հաջողվում է թոքախտավորներին բուժելու համար 1913 թ. հունիսի 5-ից Դիլիջանում բաց անել ամառային առողջարան՝ 10 հիվանդի համար։ Բաժանմունքի կողմից այդ գործի հրսկիչ և ղեկավար էր նշանակված բժիշկ Ի. Բ. Տեր-Մելիքյանը[2]։

Իրրև ամփոփում, պաշտոնական տվյալների հիման վրա, 1960 թ. դրությամբ կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակը.[3]

Աղյուսակ 48

Հիվանդացողների թիվը համաճարակի տեղի ունեցած	Բուժհիմնարկները	Դեղատները և դեղատնային խանութները		Բուժանձնակազմի թիվը			Հիվանդացողների համաճարակի ընթացքի տևողությունը օրերով	Մեկ դեղատուն ընկնող բնակիչների թիվը	Մեկ բժշկին ընկնող բնակիչների թիվը
		դեղատներ	դեղատնային խանութներ	բժիշկներ	միջին բժշկական հիվանդներ	բուժքույրեր			
1	5	2	3	18	6	8	826	14455	1606

1 Տե՛ս «Эриванские объявления», *1912, № 74*։

2 Նույն տեղը, *1913, № 43*։

3 «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.», отд. 4, *էջ 10—11*։

Աղյուսակի և նախորդ էջերում մեր բերած թվերի միջև կա մի փոքր տարբերություն, որը արդյունք է սոսկ հաշվառման սկզբունքի տարբերության։ Այդ տարբերությունը միայն վերաբերում է դեղատների թվին։ Աղյուսակում դեղատների տակ հաշվի չի առնված ռազմական հոսպիտալի դեղատունը, ինչպես նաև դեղատնային խանութների մեջ է մտցված Ֆ. Լ. Ռուդնիցկու դեղատունը։ Բացի դրանից, աղյուսակում բժիշկների մեջ չեն հաշվել քաղաքի 4 ատամնաբույժներին։ Անկախ այդ տարբերություններից, աղյուսակը պերճախոս կերպով ցույց է տալիս, որ քաղաքում աննշան է եղել հիվանդանոցային մահճակալների և բուժաշխատողների թիվը։ Այդ նույն թվականին քաղաքի ռազմական հոսպիտալում 120 մահճակալներ կային[1]։

Եվ բնական է, որ նշված սանիտարական վատ պայմանների ու առողջապահական գործի վատ դրվածքի պատճառով մահացությունը քաղաքում պետք է հասներ և իրոք հասնում էր մեծ չափերի։ Մահացությունը առանձնապես բարձր էր լինում համաճարակ հիվանդությունների տարածման տարիներին։ Մեզ հետաքրքրող շրջանում Երևանի նահանգում և Երևան քաղաքում համաճարակ հիվանդություններ են եղել 1891 թվականին և 1892 թ. ամռանը։ 1891 թ. նահանգում նկատվել էին ծաղիկ, դիֆտերիտ, լուծ, տարբեր տեսակի տիֆեր, խոլերա, քութեշ և այլն։ Սակայն դրանք մեծ չափերի չեն հասել և մեծ զոհեր չեն տարել[2]։ Ավելի աստիճակ էր 1892 թ. ամռանը ամբողջ Անդրկովկասում (բացառությամբ նրա որոշ շրջանների ու բնակավայրերի) տարածված խոլերան։ Պաշտոնական, իրական դրությունը միայն մոտավոր արտահայտող տվյալների համաձայն այդ տարվա հունիս և հուլիս ամիսների ընթացքում ամբողջ Կովկասում (Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը միասին վերցրած) խոլերայով հիվանդացել են 60 956 մարդ, որից 31 788-ը (52 տոկոսը) մահացել են։ Ընդ որում, զորամասերից միայն Թիֆլիսի, Բաքվի և Դաղստանի կայազորներում էին հաշվի առել խոլերայով հիվանդացածներին ու մահացածներին[3]։ Այդ նույն տարում 25 օրվա ընթացքում (հուլիսի 7-ից սկսած) Երևանի նահանգում խոլերայով հիվանդացել էր 2644 մարդ, որից մահացել են 1431 հոգի[4]։ Դրանց մի մասը Երևանից էր։

1 «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.», отд. 4, *էջ 10—11*.

2 «Кавказский календарь на 1893 г.», *էջ 61*։

3 «Մուրճ» (ամսագիր), *1892, № 7—8, էջ 1170—1171*։

4 Նույն տեղը։

Երևանում բավական մեծ թվով զոհերի պատճառ է դարձել 1910 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տարածված խոլերան։ «Երևանի հայտարարություններ» թերթիկում հաղորդվում է, որ օգոստոսից սկսած խոլերան քաղաքում սաստիկ տարածում է գտել, մահացության տոկոսը հասել է չլսված չափերի՝ 88-ի։ Խոլերայի դեմ պայքարում էին ընդամենը 3—4 բժիշկ, որոնք նույնիսկ ի վիճակի չէին այցելել բոլոր հիվանդներին [1]։ Ըստ նույն թերթի տվյալների, 1910 թ. Երևան քաղաքում խոլերայից հիվանդացել էին 310 հոգի, որոնցից մահացել են 197 հոգի [2]։

Համաճարակներից բացի բնակչությանը վնասներ են հասցրել նաև բնական աղետներն ու հրդեհները։ Մեզ հետաքրքրող շրջանում երկու անգամ հեղեղ է տեղի ունեցել՝ 1903 և 1908 թվականներին։ Երկու անգամ էլ խիստ բարձրացել է Գետառը և քաղաքին պատճառել զգալի վնասներ։ Առանձնապես ուժեղ է եղել 1908 թ. հեղեղը, որը տեղի է ունեցել մարտի առաջին կեսին՝ անձրևներից առաջացած ձնհալքի պատճառով։ Հեղեղներից առաջացած ավերումները հարկադրել են քաղաքային վարչությանը հոգ տանել Գետառի հունը քաղաքի սահմաններում ամրացնելու մասին։ Այդ գործը ենթարկելու համար կազմվել է հատուկ հանձնաժողով, որի տրամադրության տակ քաղաքի միջոցներից բաց է թողնվել 1000 ռուբլի [3]։ Սակայն հանձնաժողովի գործունեությունը ավելի շատ արտահայտվել է գրագրություններ վարելու, քան թե քաղաքի անդորրությանը միշտ սպառնացող Գետառի հունը կանոնավորելու մեջ [4]։

Քաղաքում տեղի են ունեցել նաև մի քանի երկրաշարժներ, որոնք, սակայն, եղել են թույլ և զգալի որևէ վնաս չեն հասցրել բնակչությանը։ Արձանագրված երկրաշարժներից համեմատաբար ուժեղ է եղել 1910 թ. հունվարի 12-ի առավոտյան ժամը 5-ին և 5 րոպե կեսին տեղի ունեցածը, որը, սակայն, թերթի ասելով, զրժբախտ դեպքերի պատճառ չի դարձել [5]։

Կատարյալ ողորմելի դրության մեջ էր քաղաքի հակահրդեհային գործը։ Ըստ պաշտոնական տվյալների, 80-ական թվականներին քաղաքը չի ունեցել հակահրդեհային որևէ գործիք [6]։ 1896 թ.

1 «Эриванские объявления», 1910, № 60։
2 Նույն տեղը։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 657, թ. 6։
4 Նույն տեղը, գ. 657։
5 «Эриванские объявления», 1910, № 4։
6 «Кавказский календарь на 1883 г.», отд. 1, էջ 226։

նրա հակահրդեհային ամբողջ գույքը բաղկացած էր միայն ձեռքի մեկ պոմպից [1], իսկ 1906 թ.՝ 1 հրշեջ պոմպից, 1 հրշեջ մեքենայից և երկու տակառից [2]։ Այդ պատճառով էլ քաղաքում բռնկված նույնիսկ ամենափոքր հրդեհը հնարավոր չէր լինում ժամանակին հանգցնել և պատճառ էր դառնում զգալի վնասների ու դժբախտ դեպքերի։ Իսկ հրդեհները քաղաքում հազվադեպ չէին։ Մեծ վնաս հասցրած հրդեհներից մեկը, որը տեղի է ունեցել շուկայում 1913 թ. հոկտեմբերի 4-ին և որին զոհ են գնացել շուկայի փայտակերտ կրպակներից շատերը, բավական մանրամասնությամբ նկարագրված է «Երևանի հայտարարություններ» թերթիկում։ Թերթի հաղորդման համաձայն, սկզբում հրդեհը ընդգրկում էր միայն մի փոքր տարածություն, բայց հրդեհաշեջ միջոցների բացակայության պատճառով հրդեհը տարածվում է ավելի ու ավելի մեծ մակերեսով և տևում է մոտ 12 ժամ։ Հրդեհի հետևանքով վառվում է 30 կրպակ, իսկ պատճառած վնասը հասնում է 100 հազար ռուբլու [3]։

Բնակչության բաժնում մենք արդեն մասնակիորեն կանգ առանք քաղաքի ներքին կարգերի և բնակչության սովորությունների վրա։ Անհրաժեշտ է սակայն դրանք լրացնել քաղաքի ներքին «կարգ ու կանոնի» մասին եղած նյութերով, որոնք այնքան մեծ քանակ են կազմում արխիվներում և պարբերական մամուլում։ Մեզ հետաքրքրող շրջանի քաղաքի ներքին կարգ ու կանոնին վերաբերող նյութերը ցույց են տալիս, որ քաղաքում սոսկալի լայն չափերի էին հասնում գողությունները ու թալանը, բռնութիւնները, սպանությունները, շանտաժը։ Երևանի համար այդ հանցագործությունները դարձել էին սովորական, քաղաքի ներքին «կարգ ու կանոնը» բնութագրող կողմերից մեկը։ Քաղաքի բնակչության անդորրը խանգարող և նրան ահ ու սարսափի մեջ պահող քրեական հանցագործների և հասարակության տականքների այդպիսի արարքները հատուկ էին նաև նախորդ շրջանում, դրանք շարունակվել են 80—90-ական թվականներին և առավելագույն չափի են հասել XX դարի սկզբներին՝ մանավանդ ստոլիպինյան ռեակցիայի տարիներին։

Քրեական տարրերի՝ գողերի ու ավազակների ամենափորձված մեթոդը ահաբեկման, շանտաժի և սպանությունների մեթոդն

1 «Эриванские объявления», на 1896 г., отд. 5, էջ 189։
2 «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.», отд. 4, էջ 7։
3 «Эриванские объявления», 1913, № 72։

էր։ Ոստիկանական վարչության պաշտոնական զեկուցագրերում և մամուլում հրապարակված հոդվածներում նշվում է, որ գողերն ու ավազակները Երևանում գործում էին ոչ թե անջատ-անջատ, այլ ամբողջական շայկաներ կազմած։ Երևանում XX դարի սկզբներին տարիներ շարունակ բնակչությանը ահաբեկման մեջ էին պահում «սև ագռավներին», «անարխիստ-ուտոպիստներին» և նույնանման պիտակներ ունեցող այլ մարդասպան-թալանչիների խմբերը։ Դրանց վերջ տալու մասին քաղաքի բնակչության բազմաթիվ բողոքները ոչ մի տեղ չէին անցնում։ Քաղաքի ոստիկանական վարչության և պահնորդական բաժնի, որը նույնպես «անհանգստացած էր» քաղաքի դրությամբ, գործողությունները հիմնականում սահմանափակվում էին սոսկ գրագրություններով, սին խոստումներով և բարձրադիր օրգաններին ուղարկվող զեկուցագրերով [1]։ Չպետք է կարծել, որ ցարական ոստիկանական ու պահնորդական օրգանների սակավամարդության կամ թուլության պատճառով էր, որ վերջ չէին տրվում այդ թալանին, բռնություններին, սպանություններին ու շանտաժին։ Ընդհակառակը, ցարական օրգանները գաղտնի կապեր ունեին մարդասպան-թալանչիների հետ և հովանավորում էին նրանց։ Ռևոլյուցիոն շարժումներից հասարակությանը հեռու պահելու ցարական կառավարության ամենափորձված մեթոդներից մեկը հենց քրեական տարրերի միջոցով ժողովրդին ահ ու սարսափի մեջ պահելն էր։ Եվ պատահական չէր, որ մարդասպան-ավազակների խմբերը իրենց գործունեությունն առանձնապես ակտիվացնում են 1905—1907 թթ. ռևոլյուցիայի պարտությունից հետո՝ ստոլիպինյան ռեակցիայի և դրան հաջորդած առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին։ Ավազակախմբերի և առանձին խուլիգանական տարրերի առաջ գալու և դրանց կատարած հանցագործությունների մասին եղած հոդվածներից մեկում, որը լույս է տեսել «Օրեր» թերթում, հետևյալ կերպ են բնութագրված հասարակության այդ տականքները.

1 Այդ բոլորի մասին մանրամասը տե՛ս ЦГИА СССР в Москве, ф. ДП (департамент полиции) 4д.-во, 1907, д. 87, ч. 6, лл. 1, 2, 13, 34, 36, 37, 38, ф. 102, Д-4-п-во, оп. 101, д-87, ч. 10. лл. 4, 5. 8, 9, 13, 22—23, 26, 37, 46, 75, 91, 117, 127, 140, 154, ф. 102, Д 4, д. 87, ч. 10, 1910, лл. 2, 3. 4, 15, 27, 28, 31, 50, 70, 73, 1914, д. 12, ч. 92, л. 13—15, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 101 գ. 11, բբ. 8, 11, գ. 26, բբ. 12, 13—14, 16, 17, ֆ. 117 գ. 726, «Պսակ», 1880—1883 թթ. համարները, «Օրեր» (լրագիր), Բաքու, 1907, № 7, «Նոր մամուլ» (լրագիր), Երևան 1913, № 32, «Кавказский календарь на 1883 г.», отд. 1, էջ 226 և այլուր։

«Երևանը, որ Ռուսաստանի համար տալիս է բավական թվով խուլիգանական տարրեր և էքսպրոպրիատորներ, անկարելի է, որ ինքն էլ անվտանգ մնար յուր ավազակ և խուլիգանական այդ տարրերի ձեռքում։ Ներկա Ռուսաստանի խառնակ ժամանակներում, որտեղ բարոյական և մտավոր այլասերման ռեժիմի տակ ժողովրդի ավելի ստվար մասը դեպի բարքերի ապականություն ու վայրենություն է գնում, անկարող էր, որ հեղափոխական այս շարժման ժամանակ, երկրի ազատագրական երկունքի այս օրերում, գլուխ չբարձրացներ և ամեն մի կատեգորիա չսկսեր յուր կատարելագործած պրոֆեսիան։ Ամբողջ Ռուսաստանը կեղեքվում է, գալարվում յուր ներսում անված, զարգացած այդ թունավոր տարրերի ձեռքում...։ Ոչ մի քաղաք և ոչ մի անկյուն չմնաց ազատ ավազակային այդ շարժումներից և այսօր Երևանի նման մի ետ ընկած և խուլ անկյուն դարձյալ վիճակակից է դառնում ուրիշ բազմամարդ և խառն քաղաքներում կատարվող էքսպրոպրիացիաներին...։ Այսօր կատարվող էքսպրոպրիացիաները մտնում են մի ուրիշ ֆազիսի մեջ, այն է, առաջ են գալիս որպես մի կազմակերպված ուժ և սկսում իրենց կանոնավոր գործունեությունը սարսափի տակ դնելով ժողովրդին» [1]։

Իրոք որ Երևանում տեղի ունեցող խուլիգանական գործողությունները արձագանք էին Ռուսաստանի մյուս քաղաքներում և շրջաններում ստոլիպինյան ռեակցիայի տարիներին կատարվող սպանությունների, թալանի, բռնությունների և շանտաժի։ Ավազակախմբերն այդ տարիներին վխտում էին ամենուրեք, երկրի կենտրոններից սկսած մինչև նրա խուլ անկյունները ներառյալ։ Դրանք ըստ էության ստոլիպինյան սև հարյուրակային մարդասպանների տարատեսակներն էին, յուրատեսակ ջարդարարներ։

Նախորդ ժամանակների նման Երևանը բաժանված էր երկու ոստիկանական շրջանի կամ տեղամասի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ոստիկանական կատարածուն [2]։ Կատարածուները ենթարկվում էին քաղաքային ոստիկանական վարչության պետին, որը պատասխանատու էր քաղաքի ամբողջ ներքին կարգ ու կանոնի համար։ Ոստիկանական շրջաններից յուրաքանչյուրը բաժանված էր երկու թաղամասի։ Թաղամասերն ունեին իրենց ոստիկան-հսկիչը կամ լիազորը, որը և պատասխանատու էր իր հրսկողության տակ գտնվող թաղամասի կարգ ու կանոնի համար։

1 «Օրեր» (լրագիր), Բաքու, 1907, № 7։

2 «Кавказский календарь на 1908 г.», отд. 4, էջ 7։

Անկախ դրանցից, գոյություն ունեին արդեն տրադիցիոն դարձած քաղաքամասերն ու թաղերը՝ Շահարը, Դեմիրբուլաղը, Կոնդը, Նորքը, Զորագեղը, Շիլաչին և այլն, և այլն, որոնք վարչական առումով այլևս որևէ նշանակություն չունեին։

Քաղաքի կենտրոնական մասերի և ծայրամասերի բարեկարգման աստիճանի միջև գնալով տարբերությունը մեծանում է։ Քաղաքի կենտրոնը աստիճանաբար վերափոխվում է, ենթարկվում է պլանավորման, ստանում է խմելու առաջնակարգ ջուր, էլեկտրական լուսավորություն, ձիաքարշ, գրոսայգիներ։ Այդտեղ են կենտրոնացել հասարակական, կուլտուրական, տնտեսական ու վարչական հիմնարկ-ձեռնարկությունները՝ ակումբները, թատրոնը, կինոն, գիմնազիաներն ու պրոգիմնազիաները, առևտրական ընկերությունները, ունիվերսալ խանութները, նահանգական, գավառային ու քաղաքային օրգանները, ինչպես նաև հարուստների շքեղ տները։ Քաղաքի միջոցների մեծ մասը ծախսվում էր կենտրոնի վրա, քաղաքային օրգանների ուշադրությունը մեծ մասամբ դրավում էր կենտրոնը։ XIX դարի վերջերի և XX դարի սկզբների ընթացքում արդեն ձևավորվել էր բուրժուական կենտրոնը, որը իր համեմատական շքեղությամբ հետամնաց արվարձանների ու ծայրամասային թաղերի նկատմամբ կազմում էր բավական սուր հակադրություն։ Քաղաքի կենտրոնական մասի վերաբերյալ մենք բավական մանրամասնությամբ արդեն ասել ենք դրա հատակագծման և վերափոխության առնչությամբ։ Այժմ միայն մի քանի խոսք նրա ծայրամասերի վերաբերյալ։

Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, Երևանի 7 ծայրաթաղերում և արվարձաններում բնակչությունը բաշխված էր հետևյալ կերպ [1] (տե՛ս աղյուսակ 49)։

Այսպիսով, քաղաքի բնակչության (29.006 հոգի) 8,3 տոկոսը (2.408 հոգի) ապրում էր նշված արվարձաններում ու ծայրաթաղամասերում, սակայն ոչ ոք լուրջ ուշադրություն չէր դարձնում դրանց վրա։ Այդ տեսակետից բավական տիպիկ էր Նորքի դրությունը։ «Կոչան» թերթի թղթակիցներից մեկը, արձագանքելով նույն թերթի 1812 թ. 10-րդ համարում զետեղված մի այլ թղթակցի «Մոռացված անկյուն» վերնագիրը կրող հոդվածին, գրում է. «Ահա վաթսուն տարի է Նորքը քաղաքամաս է հաշվվում։ Այդ վաթսուն տարվա ընթացքում քաղ. վարչությունը Նորքի հողերից տարեկան ստացել է մոտ 10 հազար ռուբլի եկամուտ և եթե հաշվենք այդ գումարը, հասնում է մինչև 600 հազար ռուբլու։ Իսկ դրա փոխարեն Նորքը ստացել է 8 հատ մոռացված ֆանար, որոնց յուղերն էլ չեն երևում և տարեկան 200—300 ռ.՝ ուսումնարանին նպաստ։

Այո՛, Նորքը մոռացված մի անկյուն է. մոռացված նույնիսկ ավելի, քան գյուղը, որովհետև դեռ գյուղում տանուտեր կա, գոլր կա, իսկ Նորքում այդ էլ չկա» [1]։ Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ Նորքը զուրկ է նոր բերված խմելու ջրից, բժշկական օգնությունից, որ Նորքը լի է տարափոխիկ հիվանդություններով, որ 1881—1910 թթ. ընթացքում 17 տարի եղել են տարափոխիկ հիվանդություններ, որոնք պատճառել են մեծ զոհեր, որ որոշ հիվանդություններ Նորքի համար դարձել են մշտական երևույթներ [2]։

Աղյուսակ 49

№ № կ/կ	Արվարձանի կամ ծայրաթաղի անունը	Բնակչության թիվը: տղամարդ	կին	ընդ.	Ծանոթություն
1	Նորք	604	468	1072	Մեր վկայակոչած աղբյուրում Նորքը բաժանված է երեք մասի, որոնցից առաջինը ունեցել է
2	Մալոկանի թաղ	239	178	417	
3	Հին բերդ	84	2	86	
4	Հին Բայազետի թաղ . .	33	29	62	
5	Շիլաչի	125	100	2 5	540, երկրորդը՝ 490, իսկ
6	Թոխմախան գյոլ	121	114	235	երրորդը՝ 42 բնակիչ։ Երևքըն էլ կոչված են Նորք
7	Էջմիածնի խճուղու վրա բնակած թաղ . . .	200	111	311	և Զոլմաքշի անուններով։
	Ընդամենը	1406	1002	2408	

Նորքին նոր բերված ջրով բավարարելու համար հոդվածներ են զետեղվում նաև «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1912 թ. գարնան ամիսների մի քանի համարներում [3]։ Նորքեցիների բողոքները նոր չէին և ոչ էլ դրանք սահմանափակվում էին մի-

1 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», т. LXXI, Эриванская губ., էջ 1։

1 «Կոչան» (լրագիր), 1912, № 11։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս «Эриванские объявления», 1912, № 38 և այլուր։

այն իրենց թաղամասի կոմունալ նեղ հարցերով։ Նորքի կոմունալ պայմանները տանելի դարձնելու և նորքեցիների վիճակը գեթ նվազագույն չափով թեթևացնելու համար առաջին բողոքողներից մեկը բժ. Լևոն Տիգրանյանն էր, որը «Պսակ» թերթի 1880 թ. համարներից մեկում «Նամակ Երևանից» վերնագիրը կրող իր հոդվածում գրում է. «Կհարցնեն մեզ, եթե նորքեցին տուրք վճարելու ժամանակ Երևանու քաղաքացի է համարվում, ի՞նչ իրավունքով նա զրկված է այն հարմարություններից, որ վայելում են բոլոր երևանցիները։ Երևանի մեծ մասն ունի ուղիղ և լայն փողոցներ, իսկ Նորքի փողոցները ոչնչով չեն զանազանվում մի ետ ընկած գյուղի փողոցներից։ Եթե Երևանի փողոցները լուսավորված են, ի՞նչի Նորքի փողոցներում ոչ մի լապտեր չկա։ Եթե երևանցին ամեն րոպե հարկավոր ժամանակ կարող է բժիշկ հրավիրել յուր տուն, ի՞նչ իրավունքով մենք զրկում ենք նորքեցուն այդ անհրաժեշտ պահանջից և չենք շինում ֆայտոնի ճանապարհ մինչև Նորք։ Ի՞նչ իրավունքով և ի՞նչի համար մենք՝ երևանցիներս փող ենք ստանում նորքեցիներից» [1]։

Նորքի դրությունը ոչնչով չի փոխվում նաև XX դարի սկզբներին։ «Երևանի հայտարարություններ» թերթիկի 1909 թ. համարներից մեկում ասված է, որ Նորքը չունի կանոնավոր փողոցներ, որ նրա լապտերների թիվը ընդամենը երկու զույգ ու մի կենտ է, որ նա լիովին զրկված է բժշկական օգնությունից, իսկ մասնավոր կերպով մեկ անգամ բժիշկ հրավիրելը նստում է 7—9 ռուբլի, որ Նորքը չունի կանոնավոր ճանապարհ՝ քաղաքի հետ կապվելու և այլն։ Թղթակիցն իրենց թաղի դրությունը փոքր ինչ բարվոքելու համար դնում է շատ համեստ պահանջներ։ Նա գրում է, որ դրա համար անհրաժեշտ է բանալ մի քանի փողոցներ, նշանակել սանիտարական հսկողություն, փողոցների խաչմերուկներում գոնե դնել 4 հատ «Գալկինի» տիպի լապտերներ, մի բուժակ նշանակել թաղի հիվանդներին առաջին օգնություն ցույց տալու համար և Նորքից Երևան տանող ճանապարհը խճապատել [2]։ Սակայն դրանք ևս չեն կատարվում, Նորքը մնում է նախնական վիճակում, թեպետև, ինչպես նշվեց վերևում, Նորքեցիներն իրենց թաղի դրությունը բարելավելու համար շարունակում են բողոքել նաև հետագա տարիներում։

1 «Պսակ» 1880, № 11։

2 «Эриванские объявления», 1909, № 68։

Նորքից գրեթե ոչնչով չէին տարբերվում նաև Շիլաչին, Կոնդը և այլ թաղեր։ Շիլաչիի 26 բնակիչներ քաղաքագլխին ուղղված 1889 թ. մարտի 18-ին թվագրված իրենց դիմումում գրում են, որ իրենց թաղը չնայած քաղաքի մյուս մասերի հետ համահավասար չափով տալիս է պետական ու քաղաքային բոլոր հարկերն ու տուրքերը, սակայն զուրկ է ամենատարրական հարմարություններից՝ չունի լուսավորություն և ամենևին պլանավորված չէ։ Նրանք իրենց դիմումում նշում են նաև, որ Գետառի վրա հնում կառուցված միակ կամուրջը, որով իրենք կապ էին պահպանում քաղաքի հետ, հեղեղը տարել է, ուստի և թե՛ իրենք և թե՛ քաղաքից եկող մարդիկ հարկադրված են գետը անցնել վարձովի միակ ձիով, որ պահվում է հատուկ այդ նպատակի համար [1]։ Դիմողները քաղաքագլխից խնդրում են երկու չնչին միջոցառում. առաջին, դնել լապտերներ և երկրորդ, կառուցել կամուրջը։ Վերջինս, որ մեծ դժվարությունների հետ չէր կապված և պահանջում էր փոքրիկ գումար, հենց նույն տարում էլ իրականացվում է, իսկ լապտերների հարցը անլուծելի է մնում տարիներ շարունակ [2]։

Կոնդը նույնպես խիստ անբարեկարգ էր և չուներ նվազագույն լուսավորություն։ Այս թաղի բնակիչներից մեկը «Երևանի հայտարարություններ» թերթիկի խմբագրին ուղղված նամակում բողոքում է, որ Կոնդի Կոզեռնի, Խորոմբուլաղի, Մամրիի, Հին եկեղեցու և մի քանի այլ փողոցներում ամիսներով ոչ մի լապտեր չի վառվում, որ թաղեցիները դրանից հարկադրված դեռ մութը չընկած փակվում են տներում, որպեսզի թաղի խավար փողոցներում որևէ անախորժ դեպքի չհանդիպեն [3]։

Նորքից, Շիլաչիից և Կոնդից ավելի լավ դրության մեջ չէին գտնվում նաև Դեմիրբուլաղի մեծ մասը, բուն քաղաքի հյուսիսային ծայրաշրջանը, Զորագեղը և այլ թաղեր։ Ավելին, դրանցից շատերը Նորքի, Շիլաչիի և Կոնդի համեմատությամբ գտնվում էին ավելի վատթար պայմաններում։ Գնալով քաղաքի կենտրոնի ու ծայրամասերի միջև տարբերությունը մեծանում էր։

Միակ բանը, որով ծայրամասերը կարող էին մրցել կենտրոնի հետ, դա նրանց կանաչ շրերն էր։ Քաղաքի ծայրաթաղերը՝ բացառությամբ Շիլաչիի և մի երկու այլ թաղերի, ունեին բավական

1 ՀԵՍՌ ՊԿՊԱ, ֆ. 53c/117, գ. 260, թ. 99—100։

2 Նույն տեղը։

3 «Эриванские объявления», 1909, № 56։

ընդարձակ մրգաստու ու խաղողի այգիներ և բանջարանոցներ։ Ինչքան էլ որ կենտրոնում տնկում էին դեկորատիվ ծառեր և ստեղծում զբոսայգիներ, այնուամենայնիվ, ծայրամասերի մրգաստու այգիները և բանջարանոցներն իրենց տարածությամբ մեծ էին կենտրոնի բոլոր կարգի կանաչ շերտերից։ Ընդհանրապես Երևանը մնում էր իբրև այգեշատ ու բանջարանոցներով հարուստ քաղաք։ Ամռանը նրա բնակելի և ոչ բնակելի գրեթե բոլոր մասերը վեր էին ածվում ընդհանուր կանաչ դանգվածների, հեռվից դիտողի աչքին թողնելով մի հսկայական այգու տպավորություն։

5. ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քաղաքի մշակութային կյանքի առաջադիմությունը։ Դպրոցական կյանքի զարգացումը։ Պետական ու բաղաքապատական դպրոցներ։ Մասնավոր դպրոցներ։ Եկեղեցական–ծխական և մզկիթներին կից եղած դպրոցներ։ Մանկապարտեզներ։ Գրադարան–ընթերցարան։ Ակումբներ։ Ուսումնական բնկերություններ։ Պարբերական մամուլ։ Տպարաններ։ Հրապարակված գրականություն։ Գրախանութներ։ Գիտության և գրականության գործիչներ։ Հայկական գրերի գյուտի 1500–ամյա և տպագրության 400–ամյա հոբելյանի կատարումը Երևանում։ Արվեստ. բնդհանուր բնույթը, թատերական կյանքը և իմնադրած թատերախմբերի մասնակիցները, հյուրեկային ներկայացումները, թատրոնի ոչ մասսայական բնույթը, կրկեսային ներկայացումները, կինո–թատրոնները, երաժշտական կյանք, նկարչություն և լուսանկարչություն, Ե. Աբովյանի արձանի հարցը։

1879—1914 թթ. Երևան քաղաքի մշակութային կյանքում, կապված քաղաքի տնտեսական ու հասարակական զարգացման հետ, տեղի են ունենում զգալի փոփոխություններ՝ ավելանում է դպրոցների թիվը, նախկին ցածր տիպի դպրոցներից մի քանիսը վեր են ածվում պրոգիմնազիաների ու գիմնազիաների, բաց են արվում տարբեր տիպի մի շարք նոր դպրոցներ, հիմնվում են մի քանի նախակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, երաժշտական կուրսեր, կիրակնօրյա խմբեր, ուսուցչական սեմինարիա, գրադարան-ընթերցարան, ակումբներ, քաղաքում առաջին անգամ կյանք է առնում պարբերական մամուլը, հիմնվում են մի քանի տպարաններ, որոնցում հրատարակում են ինքնուրույն և թարգմա-

նական զանազան գրքեր, աշխուժանում են թատերական ինքնագործ խմբերը, ավելի հաճախակի ու բազմաբովանդակ են դառնում դրսից եկող խմբերի հյուրեկային ներկայացումները, քաղաքում առաջին անգամ ներկայացվում է «Անուշ» օպերան, կառուցվում են համեմատաբար հարմարավետ թատրոններ, հյուրեկային խմբերի մեջ երևանցին թատրոնի հետ միասին տեսնում է և՛ երգչախումբ, և՛ պրոֆեսիոնալ կրկեսային կոլեկտիվ, քաղաքում առաջին անգամ հիմնվում է կինո և այլն, և այլն։ Անշուշտ այդ բոլորը դեռևս քիչ էին Երևանը մշակութային առումով առաջնակարգ քաղաք դարձնելու համար, բայց նրա կուլտուրական կյանքը նախորդ շրջանի համեմատությամբ, այնուամենայնիվ, զգալի չափով առաջադիմել էր։

Կուլտուրական կյանքը բնութագրող ամենակարևոր ցուցանիշներից մեկը, թերևս կարևորագույնը, դպրոցն է, հանրակրթական-մասսայական դպրոցը։

Եթե 1880 թ. Երևանում մշտապես գործող պետական, մասնավոր և հոգևոր դպրոցների թիվը, առանց խալֆայական և մզկիթներին կից եղած «դպրոցների», ընդամենը 11 էր[1], ապա XIX դարի վերջերին դրանց թիվը, ներառյալ մզկիթներին կից եղած չորս դպրոցները, ավելի քան կրկնապատկվում է, հասնելով 23-ի[2], այն դեպքում, երբ նահանգի գավառական մյուս չորս քաղաքների դպրոցների ընդհանուր թիվը հասնում էր միայն 13-ի[3]։ Սակայն դրանցում սովորողների թիվը քաղաքի բնակչության ընդհանուր թվի նկատմամբ, այնուամենայնիվ, չնչին էր։ 1897 թ. Երևանի նըշված բոլոր դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 1670-ի[4], այն դեպքում, երբ քաղաքի բնակչությունն ավելի քան 29 հազար էր։ XX դարի առաջին տասնամյակում ավելանում է և՛ դպրոցների, և՛, մանավանդ, աշակերտների ընդհանուր թիվը։ Ահա համապատասխան պաշտոնական տվյալները (տե՛ս աղյուսակ 50)։

Ինչպես տեսնում ենք, դպրոցների թվի մասնակի ավելացումը XX դարի առաջին տասնամյակի վերջին կատարվել էր այն բանի շնորհիվ, որ 1906 թվականից հետո նորից վերաբացվել էին հայկական-եկեղեցական ծխական դպրոցները, որոնք փակվել էին 1885 թ. հրամանով։ Մեծ տատանումներ է տվել մասնավոր դրպ-

1 Թ. Ե. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1801—1879)*, էջ 611։
2 «Обзор Эриванской губ. за 1897 г.», էջ 32։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։

րոցների թիվը։ Սակայն, անկախ դրանից, անշեղորեն մեծացել է սովորողների ընդհանուր թիվը։ Եթե այն, ինչպես ասվեց, 1897 թ. ընդամենը 1670 էր, ապա 1902 թ. հասնում էր 2 403-ի, իսկ 1908 թ.՝ 3 724-ի, 1897 թ. համեմատությամբ մեծանալով մոտ երկուս և կես անգամ, ընդ որում ժամանակի ընթացքում հատկապես ավելանում են համեմատաբար բարձր տիպի դպրոցներն ու դրանցում սովորողների թիվը։ 1880 թ. Երևանում արական պրոգիմնազիայից ու հայկական թեմական դպրոցից բացի մյուս բոլոր դպրոցները ցածր կարգի էին, մինչդեռ XX դարի սկզբներին պրոգիմնազիաների ու գիմնազիանների թիվը հասնում է չորսի, բացի ուսուցչական սեմինարիայից [1] և հայկական թեմական դպրոցից, որոնք նույնպես համարվում էին միջնակարգ դպրոցներ։

Աղյուսակ 50

№ № ը/կ	Դպրոցի տեսակը	1902 թ. [2] դպրոցների թիվը	1902 թ. [2] սովորողների թվի թիվը	1906 թ. [3] դպրոցների թիվը	1906 թ. [3] սովորողների թվի թիվը	1908 թ. [4] դպրոցների թիվը	1908 թ. [4] սովորողների թվի թիվը
1	Արական կլասիկ գիմնազիա .	1	376	1	538	1	568
2	Ուսուցչական սեմինարիա .	1	78	1	67	1	85
3	Իգական գիմնազիա	1	333	1	451	1	445
4	Քաղաք. ուսումարան (ըստ 1872 թ. կանոնագր.) . .	1	192	1	117	1	88
5	Տարրական դպրոցներ . . .	7	579	6	466	5	491
6	Երրորդ կարգի մասնավոր դպրոցներ	11	280	6	181	9	185
7	Ուղղափառ եկեղեցական ծխական ուսումնարաններ	2	84	1	75	1	87
8	Երևանի հայկական թեմական դպրոց	1	396	1	353	1	395
9	Մոկիթարյան դպրոցներ . . .	4	85	4	125	4	135
10	Երկրորդ կարգի մասնավոր դպրոցներ	—	—	1	98	1	320
11	Հայկական եկեղեցական ծխական դպրոցներ	—	—	—	—	5	761
12	Իգական պրոգիմնազիա . . .	—	—	—	—	1	164
	Ընդամենը	29	2403	23	2471	31	3724

1 Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, թ. 7։

2 «Памятная книжка Эриванск. губернии на 1904 г.», отд. 2, էջ 30։

3 «Обзор Эриванской губернии за 1906 г.», աղյուսակ № 12։

4 «Памятная книжка Эриванской губернии на 1910 г.», Ведомость о числе учеб. заведений и учащихся в Эриванск. губернии за 1908 год.

Նահանգի մյուս քաղաքների համեմատությամբ ուսման գործը Երևանում համեմատաբար ավելի բարվոք վիճակում էր գտնվում։ 1906 թ. վերաբերող պաշտոնական տվյալներով, Երևանի, Ալեքսանդրոպոլի և Նոր Բայազետի դպրոցների, ուսուցիչների, աշակերտների թիվը և մեկ դպրոցին ընկնող աշակերտների թիվն ու սովորողների տոկոսը ամբողջ բնակչության նկատմամբ արտահայտված էին հետևյալ ցուցանիշներով [1]։

Աղյուսակ 51

№ № ը/կ	Քաղաքներ	Ուսումնական հաստատությունների ընդհանուր թիվը	Ուսուցիչների թիվը	Աշակերտների թիվը	Մեկ ուսումնական հաստատությանն ընկնող աշակերտների թիվը	Սովորողների կազմած տոկոսը ամբողջ բնակչության նկատմամբ	Մեկ ուսումնական հաստատությանն ընկնող աշակերտների թիվը
1	Երևան	22	129	2376	1314	8,2	108
2	Ալեքսանդրոպոլ .	11	70	1677	3080	4,9	153
3	Նոր Բայազետ . .	3	8	283	3279	2,9	94

Աղյուսակը ցույց է տալիս, որ բնակչության թվի համեմատությամբ Երևանում դպրոցների թիվը մեծ էր Ալեքսանդրոպոլի դպրոցների թվից ավելի քան 2,3, իսկ Նոր Բայազետի դպրոցների թվից՝ ավելի քան 2,4 անգամ։ Ինչպես տեսնում ենք, հօգուտ երեվանի են խոսում նաև սովորողների կազմած տոկոսները, նշված քաղաքների բնակչության ընդհանուր թվերի նկատմամբ։ Թվերն ավելի ցցուն են դառնում, երբ դրանք համեմատում ենք ամբողջ նահանգի համապատասխան ցուցանիշների հետ [2]։

Սովորողների մեծագույն մասը կազմում էին հայերը։ Ըստ պաշտոնական տվյալների, 1902 թ. քաղաքի 2403 աշակերտներից 1660-ը հայեր էին, 288-ը՝ ռուսներ, 363-ը՝ ադրբեջանցիներ, իսկ մնացածը վրացիներ, հրեաներ և այլք [3]։ Այդ այն դեպքում, երբ ինչպես տեսանք, հայերը դեռևս կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության միայն 40—42 տոկոսը և երբ դեռևս հայկական-եկեղեցական ծխական դպրոցները մնում էին փակված։

Սովորողների թիվը ըստ դասակարգային պատկանելության

1 Կազմված է ըստ «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.»-ի ավյալների (отдел 4, էջ 22—23, աղյուսակ 15)։

2 Տե՛ս «Памятная книжка Эриванск. губ. на 1904 г.», отд. 2, էջ 43, на 1908 г., отдел 3, աղյուսակ 12 և այլուր։

3 Նույն տեղը, на 1904 г., отд. 3, էջ 44։

խիստ տարբեր էր։ Սովորողների մեջ, մանավանդ միջնակարգ դպրոցներում, համեմատաբար բարձր տոկոս էին կազմում բարձր խավին պատկանողները, թեպետև բացարձակ թվով առաջին տեղը անմրցակից կերպով դրավում էին արհեստավորների և առևտրականների որդիներն ու դուստրերը [1]։ Ըստ օրենքի, անշուշտ, բոլորն իրավունք ունեին սովորելու, սակայն այդ, ցարական մյուս շատ օրենքների նման, միայն ձևականություն էր։ Իրականում ցածր խավի ներկայացուցիչներն իրենց տնտեսական վատթար պայմանների և, մանավանդ, բարձրագրույք ուսման վարձի պատճառով զրկված էին սովորելու հնարավորությունից։ Նրանք առանձնապես չնչին տոկոս էին կազմում միջնակարգ դպրոցներում և դիշերօթիկներում, որոնց ուսման վարձը էլ ավելի բարձր էր։ Ուսման վարձը, որի չափերի մասին ըստ առանձին դպրոցների կնշվեն հետագայում, ծանր էր նստում մասամբ այն պատճառով, որ այն ըստ սահմանված օրենքի, մուծվում էր ոչ թե ամիս առ ամիս, այլ տարեկան երկու անգամ, այն էլ տվյալ կես տարվա սկզբում։ Արդեն մուծված ուսման իրավունքի վարձը, ինչպիսի պատճառներ էլ ուզում են լինեն, այլևս չէր վերադարձվում, միայն ուսումնական հաստատությունը փոխելու դեպքում այն կարող էր փոխանցվել այդ նոր դպրոցը՝ տվյալ աշակերտի անունով [2]։

Արդեն շաշխատող պետական դպրոցների նախկին աղքատ ուսուցիչների, որոշ թվով չքավորների և որոշ կարգի պինովորական ծառայողների որդիներն ու դուստրերը ազատվում էին ուսման իրավունքի (իսկ ոմանք նաև դիշերօթիկի) վարձից [3]։ Սակայն արտոնված և ուսման իրավունքի վարձից ազատվող քաղաքացիների զավակները չնչին տոկոս էին կազմում։ Քաղաքի աշխատավոր բնակչության հսկայական զանգվածները ուսման իրավունքի համար պարտավոր էին մուծել սահմանված վարձը։

Երևանի նահանգում գրագիտության աստիճանը անասելի ցածր էր։ Ըստ պաշտոնական տվյալների, 1891 թ. բանակ կանչված դինակոչիկներից գրագետ էին միայն 20,7 տոկոսը, 1892 թ. կանչվածներից՝ 17,1 տոկոսը, 1893 թ.՝ 28,1, 1894 թ.՝ 29 տոկոսը, իսկ 1895 թ.՝ 27,3 [4] տոկոսը, այն դեպքում, երբ զինակոչիկների շրջանում

1 Տե՛ս «Кавказский календарь на 1894 г.», отд. 5, էջ 235—236 և այլ տեղերում։

2 Նույն տեղը, на 1891 г., отд. 1, էջ 192։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը, на 1896 г., отд. 5, էջ 196, «Обзор Эриванск. губернии за 1896 г.», էջ 33։

գրագիտությունը համեմատաբար ավելի լայն տարածում ուներ։

Էլ ավելի են ցցուն նահանգի բոլոր բնակավայրերին ու բնակչությանը վերաբերող թվերը։ Այսպես, 1896 թ. նահանգի 1466 բնակավայրերից այս կամ այն կարգի դպրոց ունեին միայն 45-ը, այսինքն՝ յուրաքանչյուր 33 բնակավայրին ընկնում էր մեկ դպրոց։ Նույն թվականին նահանգի յուրաքանչյուր հազար բնակչին ընկնում էր ընդամենը 7,5 սովորող [1]։

Երևան քաղաքում, իհարկե, գրագիտության տոկոսը նահանգի համեմատությամբ բավական բարձր էր։ Ինչպես նշվեց, Երևանում ուսման գործը Ալեքսանդրոպոլի, Նոր Բայազետի և նահանգի մյուս քաղաքների համեմատությամբ ևս համեմատաբար լավ հիմքերի վրա էր դրված։ Բայց այդ տեսակետից Երևանն էլ չէր գտնվում երևելի պայմաններում։ Ցարական կառավարության և աստիճանավորների վարած մեծապետական շովինիստական քաղաքականության, պետության կողմից դպրոցներին տրվող միջոցների սակավության, կուլտուրական ընդհանուր մակարդակի ցածրության, քաղաքի աղքատության և մի քանի այլ ազդակների պատճառով Ռուսական կայսրության մյուս բազմաթիվ քաղաքների բնակչության նման Երևանի բնակչությունը ևս զանգվածորեն մնում էր անգրագետ, նույնիսկ XX դարի սկզբներին, երբ քաղաքում գործում էին տարբեր կարգի ու տեսակի ավելի քան երեք տասնյակ դպրոցներ։

XIX դարի 80-ական թվականներին ցարական կառավարության հրամանով հայկական-եկեղեցական ծխական դպրոցների փակումը, XX դարի սկզբներին եկեղեցական կալվածքների բռնագրավումը, որը դպրոցները զրկեց նյութական զգալի միջոցներից, մեծ հարվածներ հասցրեցին և՛ Երևանի նահանգի, և՛ նրա կենտրոնի ծխական դպրոցներին։ Դրանք տարիներ շարունակ, ընդհուպ մինչև ռուսական առաջին ռևոլյուցիան, դադարել էին գործելուց։

Դպրոցների և ուսման գործի զարգացումը մեծապես խոչընդոտվում էր մանավանդ անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով։ Պետությունը ինքը նույնիսկ նվազագույն չափով չէր ապահովում դպրոցներին։ Դպրոցների ամենաանհրաժեշտ ծախսերի միայն մի մասն էր ընկնում պետության վրա, իսկ մեծագույն մասը հայթայթվում էր զանազան այլ աղբյուրներից՝ քաղաքային կամ գյուղական համայնական միջոցներից, ուսման և

1 «Обзор Эриванск. губернии за 1896 г.», էջ 33։

դաստիարակման համար սահմանված վարձից, հանգանակություններից, կտակներից և այլն։ Ըստ 1902 թ. պաշտոնական տվյալների, Երևան քաղաքի դպրոցների վրա ընդամենը ծախսվել էր 167 353 ռ.։ Այդ գումարից պետականը կազմում էր 87 508 ռ. 53 կ., քաղաքայինը՝ 4 482 ռ., ուսման և դաստիարակության վարձը՝ 43 757 ռ. 36 կ., իսկ այլ և այլ աղբյուրներից ստացվածը՝ 31 605 ռ. 11 կ. [1]։

Ժողովրդական ուսումնարանների Երևանի նահանգի դիրեկտորի հաշիվներով 1908 թ. Երևանում դպրոցական տարիքի (8—11 տարեկան) երեխաների թիվը հասնում էր 2 665 հոգու։ Որպեսզի նրանք բոլորն ընդգրկվեին դպրոցներում, ըստ դիրեկտորի հաշիվների, անհրաժեշտ էր 54 դասարան-կոմպլեկտ, յուրաքանչյուր կոմպլեկտը հաշվելով 50 սովորող և մեկ ուսուցիչ [2]։ Միևնույն ժամանակ Երևանի տարրական բոլոր դպրոցներում կար ընդամենը 10 կոմպլեկտ՝ 496 աշակերտներով և 10 ուսուցիչներով [3]։ Բերելով այդ տվյալները, ժողովրդական ուսումնարանների նահանգական դիրեկտորը գրում է, որ քաղաքում պարտադիր տարրական ուսուցում անցկացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել ևս 44 դպրոցական կոմպլեկտներ [4]։ Երևանի քաղաքագլխին ուղղված իր այդ պաշտոնական գրության մեջ դիրեկտորը հիշեցնում է, որ Ռուսական կայսրության մեջ ընդհանուր տարրական պարտադիր ուսուցում անցկացնելու օրենքի համաձայն ենթադրվում է պետության կողմից յուրաքանչյուր դպրոցական կոմպլեկտին բաց թողնել 390 ռուբլի։ Այդ գումարը տրվում էր միայն ուսուցչի աշխատավարձի համար։ Խմբի մյուս կարիքները՝ շենքը, ջեռուցումը, լուսավորությունը, սպասարկումը (հավաքարարությունը և այլն), գրասենյակային և տնտեսական ծախսերը ըստ նույն օրենքի պետք է հոգան տեղական աղբյուրներից ստացվող միջոցներով [5]։ Հայտնելով այդ բոլորի մասին՝ դիրեկտորը Երևանի քաղաքագլխից խնդրում է հաղորդել, թե քաղաքում առաջիկա 10 տարվա ընթացքում արդյոք կգտնվե՞ն համապատասխան միջոցներ, որպեսզի պետության կողմից յուրաքանչյուր կոմպլեկտի համար բաց թողնվող 390-ական ռուբլու հետ միասին ապահովվեն քաղաքում պարտադիր ուսուցում

1 «Памятная книжка Эриванск. губернии на 1904 г.», отд. 2, էջ 47։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 644, թ. 1։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը։

անցկացնելու գործը։ Քաղաքային վարչությունն ու դուման քննարկելով դիրեկտորի այդ առաջարկը, գտնում են, որ պարտադիր ուսուցումը շատ ցանկալի և ուրախալի է, սակայն քաղաքն առայժմ չունի անհրաժեշտ միջոցներ այդ գործը գլուխ բերելու համար։ Ուստի որոշվում է պարտադիր ուսուցմանը ձեռնամուխ լինել այն պահից, երբ քաղաքը կունենա բավարար միջոցներ [1]։ Այդպես էլ փակվում է քաղաքում տարրական ընդհանուր ուսուցում անցկացնելու մասին եղած հարցը։

Երևանի դպրոցները բազմատեսակ էին։ Այստեղ կային պետական ու քաղաքային, մասնավոր ու ծխական դպրոցներ։ Պահպանվել էին նաև մզկիթային դպրոցները։ Նախորդ շրջանի համեմատությամբ դպրոցների տիպերը ավելի բազմազան էին։ Քաղաքում առկա էին տարրական դպրոցներից մինչև պետական գիմնազիաներն ու ուսուցչական սեմինարիան։ Ընդհանուր հանրակրթական դպրոցներից բացի կային նաև զանազան կուրսեր՝ դաշնամուրային, նախադպրոցական, կիրակնօրյա և այլն։

Աշակերտների ընդհանուր թվով ու նշանակությամբ դրանցից առաջին տեղը գրավում էին պետական ու քաղաքապատկան դպրոցները։ Դպրոցների այդ խումբը բաղկացած էր մի քանի կարգի ուսումնական հաստատություններից՝ տարբեր տիպի տարրական դպրոցներից, պրոգիմնազիայից ու գիմնազիայից և ուսուցչական սեմինարիայից։ Սակայն չպետք է չափազանցնել պետական դպրոցների նշանակությունը, որովհետև դրանք նահանգի ու քաղաքի բնակչության համեմատությամբ շատ փոքրաթիվ էին և առանց մասնավոր ու ծխական դպրոցների չէին կարող նույնիսկ նվազագույն չափով ապահովել բնակչության կրթության գործը։ Ըստ պաշտոնական տվյալների, 1886 թ. Երևանի նահանգում պետական հսկողությանը ենթակա յուրաքանչյուր դպրոցին ընկնում էր 16 660, իսկ յուրաքանչյուր աշակերտին՝ 268 բնակիչ [2]։ Հետագայում պետական դպրոցների և դրանցում սովորողների թիվը բնակչության թվի համեմատությամբ բավական ավելանում է, իսկ Երևան քաղաքում նահանգի համեմատությամբ այդ թվերն ավելի նպաստավոր էին, այստեղ պետական դպրոցների և նրանց սովորողների թիվը քաղաքի բնակչության թվի նկատմամբ ընդհանրապես ավելի բարձր էր։ Սակայն այդ էլ չէր փրկում դրությունը։ Երևանի դպրոցները, այդ թվում և պետական դպրոցներն ու նրանց սովորողների

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 644, թ. 1—3։
2 «Обзор Эриванской губернии за 1886 год», էջ 37։

թիվը քաղաքի բնակչության թվի նկատմամբ, այնուամենայնիվ, մնում էր շատ փոքր։

Նահանգի և քաղաքի բարձր տիպի դպրոցները՝ Երևանի արական և իգական գիմնազիաները, Ալեքսանդրոպոլի առևտրական ուսումնարանն ու Օլգայի անվան գիմնազիան և Երևանի ուսուցչական սեմինարիան անմիջականորեն ենթակա էին Կովկասի ուսումնական օկրուգին, իսկ պետական մյուս դպրոցները՝ ժողովրդական ուսումնարանների Երևանի նահանգի դիրեկցիային [1]։ Սկզբնական շրջանում դիրեկցիան ուներ միայն մեկ տեսուչ, բայց դպրոցների ավելացման հետևանքով 90-ական թվականների վերջերին հարկ է լինում նշանակել և երկրորդ տեսուչը։ Ըստ այդմ էլ ժողովրդական ուսումնարանների Երևանի նահանգական դիրեկցիան բաժանվում է երկու տեսչության, որոնցից առաջինի մեջ մտնում էին Ալեքսանդրոպոլի, Էջմիածնի ու Սուրմալուի գավառները և Երևանի գավառի մի մասը, որի թվում և Երևան քաղաքը, իսկ երկրորդ տեսչությունը կազմված էր Երևանի գավառի մյուս մասից և Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի ու Նախիջևանի գավառներից [2]։ Տեսուչները ենթարկվում էին դիրեկտորին։

Երևանի դպրոցների մեջ իր հնությամբ և նշանակությամբ առաջին տեղը գրավում էր արական դասական գիմնազիան։ Աշխատության նախորդ գրքում ասվել է, որ Երևանում 1880 թ. դրությամբ գիմնազիաներ դեռևս չկային, միայն գոյություն ուներ արական մի պրոգիմնազիա, որը ուներ չորս դասարան և կազմավորվել էր 1832 թվականից գոյություն ունեցող գավառական դպրոցի բազայի վրա՝ 1868 թ. մարտի 15-ին, 1881 թ. մարտի 3-ին այդ պրոգիմնազիան արդեն վերակառուցվում է դասական գիմնազիայի, որը 1885 թ. տալիս է իր առաջին շրջանավարտները, որոնցից վեց հոգի հաջողությամբ ընդունվում են մաթեմատիկական, բժշկական և իրավաբանական ֆակուլտետներ [3]։

XIX դարի 80—90-ական թվականներին Անդրկովկասում արական գիմնազիա կարող էին ընդունվել՝ նախապատրաստական դասարան՝ 7—10 տարեկան, առաջին դասարան՝ 9—14 տարեկան, իսկ երկրորդ դասարան՝ 10—15 տարեկան երեխաները։ Ընդունվելու համար պահանջվում էին մի քանի փաստաթղթեր։ Ընդունվողը ենթարկվում էր հատուկ քննության։ Նախապատրաստական դասարան ընդունվելու համար երեխան պետք է իմանար նախնական աղոթք անել, ուսաց լեզվով գրել ու կարդալ և հաշվել ու գործողություններ կատարել մինչև 1000-ի սահմաններում։ Առաջին դասարան ընդունվող աշակերտից պահանջվում էր իմանալ առավոտյան և երեկոյան աղոթքները, կրոնի և նրա պատմության հիմունքները, ուսաց լեզվով վարժ կարդալ, թելագրություն գրել ու պատմել, իմանալ համառոտ տեղեկություններ խոսքի մասերի վերաբերյալ, իմանալ հոլովներն ու խոնարհումները, թվաբանական գործողությունները՝ ամբողջական թվերով [1]։

Ավելի մեծ էր պահանջը երկրորդ դասարան ընդունվող երեխաներից։ Նրանք պարտավոր էին գոյություն ունեցող ձեռնարկներից որևէ մեկի ծավալով իմանալ կրոնը, կարողանալ կարդացածը վերարտադրել բանավոր և գրավոր ձևով, թելագրություն գրել առանց ուղղագրական կոպիտ սխալների, ավելի մանրամասն տեղեկություններ իմանալ խոսքի մասերի վերաբերյալ, անգիր իմանալ ոչ պակաս քան 10 բանաստեղծություն, վերլուծել հասարակ նախադասությունը, որոշ գիտելիքներ ունենալ լատիներենից, լավ իմանալ թվաբանական գործողությունները՝ ամբողջական թվերով և կոտորակներով, անգիր իմանալ ռուսական չափերը, գաղափար ունենալ մաթեմատիկական և ֆիզիկական աշխարհագրության, երկրագնդի և Ռուսաստանի աշխարհագրության մասին [2]։ Մյուս դասարաններ կարող էին ընդունվել համապատասխան կրթություն ունեցողները միայն։

Ինչպես տեսնում ենք, ընդունելության պայմանները բավական խիստ էին։ Առանց նախնական ուսուցման գիմնազիա ընդունվելը դրեթե բացառված էր։ Ընդ որում, առաջին և երկրորդ դասարաններ ընդունվողներից պահանջում էին այնպիսի գիտելիքներ, որոնք պետք է ձեռք բերվեին կամ տնային ուսուցիչներ վարձելու կամ մասնավոր դպրոցներ հաճախելու միջոցով։ Իսկ դա քաղաքի աղքատ խավի համար անմատչելի էր։

Դժվարությունը միայն նախնական գիտելիքների ձեռք բերման մեջ չէր։ Աղքատ խավի երեխաների համար շատ ծանր էր ուսման իրավունքի վարձը, որը ժամանակի ընթացքում գնալով բարձրացել էր։ Այսպես, եթե մինչև 1887—1888 ուս. տարին պրոգիմնազիայում սովորելու իրավունքի համար ուսման վարձը տարեկան կազմում

1 «Памятная книжка Эриванск. губ. на 1904 г.», отд. I, էջ 88—96։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 14, գ. 8, թ. 18։
3 Նույն տեղը, ֆ. 1, ցուցակ 1, գ. 311, թ. 1—5, գ. 373, թ. 3, գ. 535, ն. 26։

1 «Кавказский календарь на 1891 год», էջ 179։
2 Նույն տեղը, էջ 179—180։

էր 10—16 ռուբլի [1], այդ ուս. տարվանից բարձրանում է 40 ռուբլու (նախապատրաստական դասարանի յուրաքանչյուր աշակերտի ուսման իրավունքի վարձը 24 ռուբլի էր) [2], XX դարի սկզբներին արդեն հասնում է 62—70, իսկ զուգահեռ բաժիններում՝ 100 ռուբլու [3]։ Դա մի այնպիսի գումար էր, որ գիմնազիան անմատչելի էր դարձնում նույնիսկ միջին խավին պատկանող քաղաքացիների որդիների համար։

Արական գիմնազիան սովորաբար ուներ 9 դասարան, որոնցից մեկը նախապատրաստական էր, իսկ մյուսները՝ 1—8-րդ դասարանները։ Զուգահեռ դասարաններ նա երբեք չի ունեցել [4]։ Գիմնազիայում անցնող առարկաները և դրանց ծրագրերը համեմատաբար կայուն էին։ Ուսումնական պլանների համաձայն, մինչև XIX դարի 90-ական թվականների վերջերը գիմնազիայում անցնում էին՝ կրոն, ռուսաց լեզու, լատիներեն, հունարեն (հենց այդ երկու լեզուների ավանդման պատճառով էլ կոչվում էր դասական՝ կլասիկ գիմնազիա), մաթեմատիկա (թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն և եռանկյունաչափություն), ֆիզիկա, ընդհանուր և ռուսաց պատմություն, աշխարհագրություն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներ (պարտադիր էր միայն մեկը), գեղագրություն, նկարչություն, մարմնամարզություն, ինչպես նաև ոչ պարտադիր մի քանի առարկաներ՝ հայոց լեզու, ազգբնջաներեն, վրացերեն, երաժշտություն, երգեցողություն, պար, սուսերամարզություն [5]։ XX դարի հենց սկզբից գիմնազիայի պլանները կրում էն որոշ փոփոխություններ։ 1901—1902 թթ. ուս. տարվանից գիմնազիայի և պրոգիմնազիայի առաջին երկու դասարաններում վերացվում է լատիներենի, իսկ երրորդ և չորրորդ դասարաններում՝ հունարենի ավանդումը։ Դրանց փոխարեն ուժեղացվում են ռուսաց լեզուն և աշխարհագրությունը։ Բացի դրանից, առաջին դասարանից մտցվում է պատմություն, ինչպես և, կախված տեղի պայմաններից, ավելացվում է մի նոր լեզու [6]։ 1904—1905 ուս. տարվանից գիմնազիայի 6, 7 և 8-րդ դասարաններում ավանդվում էին հետևյալ առարկաները՝ կրոն, ռուսերեն, լատիներեն, հունարեն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, ֆիզիկա, պատմություն, աշխարհագրություն և հայրենագիտություն, ժամանակակից երկու օտար լեզուներ, օրենսդիտություն, բնագիտություն, նկարչություն և ձոգագրություն [1]։ Մյուս դասարաններում դասավանդումը կատարվում էր հին՝ 1901—1902 թթ. ուս. տարվա պլանների համաձայն [2]։

1869 թվականին գավառական դպրոցը պրոգիմնազիայի վերածվելուց հետո բացվեց նաև գիշերօթիկ՝ 20 աշակերտների համար [3]։ Գիմնազիայի գիշերօթիկը շարունակեց գոյություն ունենալ մինչև վերջ, բայց դրա սանների թիվը շատ չնչին չափով էր ավելանում։

Արական դասական գիմնազիան Երևանի ամենախոշոր ուսումնական հաստատությունն էր։ Ժամանակի ընթացքում գիմնազիան իր աշակերտների թվով բավական խոշորացել էր։ Եթե 1883 թ. նրա աշակերտների թիվը միայն 231 էր (որից 19-ը գիշերօթիկներ), ապա 1909 թ. այն հասնում է 568 հոգու [4]։ Գիմնազիայի խոշորացման ընթացքը ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ աղյուսակը [5]։

Աղյուսակ 52

1883 թ.	1889 թ.	1892 թ.	1894 թ.	1897 թ.	1902 թ.	1906 թ.	1909 թ.
231	313	245	265	296	376	538	568

Հետագա տարիներում՝ մինչև առաջին համաշխարհային պատերազմը գիմնազիայի աշակերտների թվի ավելացումը շարունակվում է, բայց համեմատաբար ավելի փոքր չափերով։ Դպրոցը տալիս էր զգալի թվով մաղումներ։ Սովորողների բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը, երկրորդ տեղը միշտ գրավում էին ռուսները, իսկ երրորդը՝ ազգբնջանցիները։ Այսպես, օրինակ՝

1 «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 1, отд. 1, приложение.

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 387, թ. 1—2։

3 «Кавказский календарь на 1909 г.», отд. 5, էջ 928—929 և 938։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 444, թ. 2—13, գ. 535, թ. 26, գ. 547, թ. 21 և այլն։

5 «Кавказский календарь на 1891 год», отд. 1, էջ 179։

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 547, թ. 1—2։

1 ՀԿԿՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 547, թ. 21։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, գ. 311, թ. 1—3։

4 Տե՛ս նույն տեղը, գ. 311, թ. 1—3, «Памятная книжка Эриванской губернии на 1910 г»., Ведомость о числе учебн. завед. и уч. в Эриванск. губернии за 1908 г.:

5 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 311, թ. 1—3, գ. 535, թ. 32, գ. 560, թ. 1, «Кавказский календарь на 1893 г.», էջ 62, на 1896 г., отд. 5, էջ 195, «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 31, за 1906 г., աղյուսակ № 12։



Երևանի արական դասական գիմնազիայի աշակերտների և հոգաբարձական խորհրդի անդամների խմբանկար (Երևանի պատմության թանգարան)։

1892 թ. գիմնազիայի ունեցած 245 աշակերտներից 145-ը հայեր էին, 70-ը՝ ռուսներ, իսկ 18-ը՝ ադրբեջանցիներ, 1894 թվականին 265 աշակերտներից հայերը կազմում էին 150 հոգի, ռուսները՝ 80, իսկ ադրբեջանցիները՝ 22 [1]։ Ազգային կազմի հարաբերությունը գրեթե նույնն է մնում նաև հետագա տարիներում։ Աշակերտներն ըստ դասակարգային պատկանելության նույն թվականներին արտահայտված էին հետևյալ թվերով. 1892 թ. եղած 245 աշակերտներից 151-ը (61,6 տոկոս) պատկանում էր ազնվականության դասին, 10-ը՝ հոգևորականությանը, 5-ը՝ քաղաքային դասին, 16-ը՝ գյուղացիությանը, մնացած 2 հոգին՝ հասարակության այլ խավե-

1 Տե՛ս «Кавказский календарь на 1892 г.», էջ 62, на 1896 г., отд. 5, էջ 195 և այլն։

րին, իսկ 1 հոգին՝ արտասահմանյան քաղաքացու որդի էր։ 1894 թ. 265 աշակերտներից 160-ը ազնվականների, 5-ը հոգևորականների, 84-ը քաղաքացիների որդիներ, իսկ 16-ը՝ գյուղացիներ էին [1]։ Հետագայում սովորողների դասակարգային կազմի հարաբերակցությունը հօդուտ քաղաքացիների՝ արհեստավորների ու առևտրականների որդիների, զգալի փոփոխության է ենթարկվում։ Բայց գիմնազիան, այնուամենայնիվ, իր կազմով հիմնականում մնում է ազնվականական [2]։

Գիմնազիան լրիվ միջնակարգ, հանրակրթական դպրոց էր, իր ուժեղ կարգ ու կանոնով։ Գիմնազիա ավարտողներն ունեին բավական լայն իրավունքներ ու արտոնություններ։ Գիմնազիայի լրիվ կուրսը մեդալով ավարտողները, անկախ իրենց սոցիալական վիճակից, քաղաքացիական ծառայության դեպքում միանգամից ստանում էին տասնչորսերորդ աստիճան։ Պետական համալսարաններում կարող էին ընդունվել միայն գիմնազիա ավարտողները։ Գիմնազիայում սովորածները արտոնություններ ունեին նաև զինվորական ծառայության մեջ։ Գիմնազիայի և պրոգիմնազիայի քննություններ իրավունք ունեին հանձնելու նաև դրանցում չսովորողները, գիմնազիայիներին հավասար պայմաններով, բայց քննություն տալու իրավունքի համար նախօրոք գիմնազիայի գանձարկղը մուծելով 10 ռուբլի։ Գիմնազիայի կամ պրոգիմնազիայի մանկավարժական խորհրդի որոշմամբ էքստեռն կարգով քննություն հանձնողը այդ մուծումից կարող էր և ազատվել [3]։ Գիմնազիայի աշակերտությունն ուներ իր հատուկ սահմանված տարբերանշաններով հագուստը և օրվա որոշակի ռեժիմը։

Գիմնազիայի սովորողների թիվը մեծ չէր։ Հիմնադրման օրից մինչև XX դարի սկզբները գիմնազիան տարեկան միջին թվով տալիս էր 14—20 շրջանավարտ, իսկ դրանից հետո շրջանավարտների թիվը բարձրանում է 20—25-ի։

Գիմնազիայում ուսուցիչ, տեսուչ ու այլ պաշտոնյա նշանակելիս պահանջվում էր նահանգապետի համաձայնությունը։ Վերջինս գրավոր պետք է հայտներ, որ ինքը նախատեսվող թեկնածուին դեմ չէ տվյալ աշխատանքին նշանակելու համար [4]։


1 Տե՛ս «Кавказский календарь на 1892 г.», էջ 62, на 1896 г., отд. 5, էջ 195 և այլն։

2 Տե՛ս նույն տեղը, 1891 г., отд. 1, էջ 256, на 1909 г., отд. 4, էջ 542 և այլուր։

3 Նույն տեղը, на 1891 г., отд. 1, էջ 179—180

4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 571, թ. 26 և այլուր։

Գիմնազիան, ինչպես տեսանք, Երևանի սոցիալական շարժման կարևորագույն օջախներից մեկն էր։ Այդ պատճառով էլ ցարական օրգանները գիմնազիայի դիրեկցիայի և ուսուցչության միջոցով խիստ կերպով հետևում էին աշակերտների առօրյա կյանքին։



АТТЕСТАТЪ ЗРѢЛОСТИ.

Երևանի արական դասական գիմնազիայի հասունության ատեստատ (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

Գիմնազիան բացառապես վարկավորվում էր պետությունից։ Նրան սպասարկող անձնակազմը 90-ական թվականներին կազմում էր մոտ 25 հոգի։ Դպրոցն ուներ իր դիրեկտորը, տեսուչը, բժիշկը, գիշերօթիկի ու նախապատրաստական դասարանի վերա-

կացուները [1]։ Գիմնազիայի կարիքները բավական մեծ էին։ Դրա պահպանման համար տարեկան պահանջվում էր տասնյակ հազարավոր ռուբլի գումար։ Այսպես, օրինակ՝ 1896 թ. գիմնազիայի վրա ծախսվել է 59 182 ռ. [2]։

Գիմնազիան ուներ իր գրադարանն ու ֆիզիկայի կաբինետը։ Նրա գրադարանի գրքերն ու ֆիզիկայի կաբինետի ամբողջ գույքի արժեքը 1896 թ. կազմում էր 30 026 ռուբլի [3]։

Քաղաքի ուսումնական հաստատությունների գրադարանների մեջ ամենից հարուստը արական գիմնազիայի գրադարանն էր։ 80-ական թվականներին նրա գրադարանը հարստացնելու և կարգի բերելու համար մեծ գործ է կատարում գրադարանապետ և գիմնազիայի դասատու Ստ. Զելինսկին։ Ըստ արխիվային փաստաթղթերի, նա մի քանի ուսուցիչների հետ միասին յուրաքանչյուր բաժնի համար կազմել է կատալոգ, ինչպես նաև մի շարժական ընդհանուր կատալոգ, որը հեշտացնում էր գրքի գտնելը։ Թերի կամ հետագա օգտագործման համար անպիտանի գրքերը նրանց ուժերով առանձնացված էին և հանձնված արխիվին [4]։ Գիմնազիայի գրադարանը հիմնադրվել էր դեռևս 1832 թ., երբ բացվել էր գավառական դպրոցը։ Պրոգիմնազիան գիմնազիայի վերափոխելուց մեկ և կես տարի անց, 1882 թ. վերջին դպրոցի հիմնական գրադարանը (գրադարանը մինչև 1888 թ. բաղկացած էր երկու բաժնից՝ հիմնական և աշակերտական) ուներ 4096 կոր (1178 անուն) գիրք՝ 4324 ռուբլու ընդհանուր արժողությամբ։ Բացի դրանից, գրադարանն ուներ մի քանի հարյուր խրատվիլակներ, մոդելներ, քարտեզներ և այլ նյութեր։ Նույն այդ թվականին աշակերտական գրադարանն ուներ երկու հատորանոց 428 անուն գիրք [5]։ Գիմնազիան ստանում էր մի շարք ամսագրեր («Журнал министерства народного просвещения», «Народная школа», «Семья и школа», «Исторический вестник» և այլն) և թերթեր («Московские ведомости» և «Кавказ») [6]։

1881 թ. հոկտեմբերին բացվում է գիմնազիայի գրադարանի երրորդ՝ գիշերօթիկի բաժինը, գիշերօթիկ աշակերտներին սպասարկելու համար։ Այդ բաժինը բացվել է գիմնազիայի մանկա-

1 «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 31։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 311, թ. 1—3։
5 Նույն տեղը։
6 Նույն տեղը։

վարժական խորհրդի որոշմամբ [1]։ Իրականում, սակայն, նշված երեք բաժինները առանձին-առանձին փոքրիկ գրադարաններ էին՝ իրենց տարբեր նպատակներով ու դրքերի կոմպլեկտավորմամբ։

1890 թ. գիմնազիայի երեք գրադարանների հիմնական բոլոր ֆոնդերը կազմված էին հետևյալ քանակի դրքերից [2].

Աղյուսակ 53

Հիմնական գրադարան			Աշակերտական գրադարան			Դիշերօթիկի գրադարան			Ընդամենը		
անուն. քիվը	հատորների քիվը	արժեքը ռ.-ով	անուն. քիվը	հատորների քիվը	արժեքը ռ.-ով	անուն. քիվը	հատորների քիվը	արժեքը ռ.-ով	անուն. քիվը	հատորների քիվը	արժեքը ռ.-ով
5450	9708	19381	1600	1999	2545	431	577	719	7181	12284	22645

Ինչպես տեսնում ենք, իրրև սովորական միջնակարգ դպրոցի գրադարան, գիմնազիայի գրադարանն իր երեք բաժիններով բավական հարուստ էր։ Հետագա 20—25 տարվա ընթացքում նրա դրքի ընդհանուր ֆոնդը գրեթե կրկնապատկվում է՝ հասնելով պատկառելի չափերի։

Գիմնազիան չուներ իր սեփական շենքը։ Նա տեղավորված էր վարձովի մասնավոր շենքում, որը չուներ անհրաժեշտ հարմարություններ։ 1896 թ. սեպտեմբերի 1-ից գիմնազիան վարձակալում է հատուկ դպրոցական նպատակների համար կառուցված մի նոր շենք։ Գիմնազիայի դիրեկցիան այդ շենքը վարձում է 10 տարի ժամանակով՝ յուրաքանչյուր տարին 7150 ռուբլի վարձագնով [3]։ Շենքի վարձակալումը ըստ երևույթին ծանր էր նստում գիմնազիայի վրա, որին տրվող միջոցները խիստ սահմանափակ էին։ Միայն այդ նպատակով տարեկան ծախսվում էր մոտ 8000 ռուբլի։ Սակայն գիմնազիայի ֆինանսական դրությունը թեթևացնելու համար պետության կողմից դրա վարկավորումը բարելավելու կամ սեփական շենք կառուցելու փոխարեն Անդրկովկասի ուսումնական օկրուգը գրավոր խնդրում է Երևանի քաղաքային վարչությանն ու դումային գիմնազիային յուրաքանչյուր տարի 1000 ռ. վարկավորելու մասին [4]։ Քաղաքը ֆինանսների սուր կա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 404, թթ. 1 և 2։
2 Նույն տեղը, գ. 535, թ. 26։
3 «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 31։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 603, թ. 39։


րիքի մեջ էր, վարչությունն ու դուման մերժում են ուսումնական օկրուգի այդ խնդիրքը [1]։

Գիմնազիայի հետագա խոշորացումը, վարձակալման անշահավետությունն ու անհարմարությունները հարկադրում են մտածել սեփական շենք ունենալու մասին։ 1913 թ. նոյեմբերի 10-ին փոխնահանգապետի, քաղաքի բարձրաստիճան անձնավորությունների և մեծ թվով բնակիչների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում, Նաղարդվի (Ամիրյանի) փողոցի վրա գցվում է գիմնազիայի նոր շենքի հիմքը [2]։ Շենքի շինարարությունը տևում է մի քանի տարի, բայց, այնուամենայնիվ, ավարտվում է հաջողությամբ։ Այդ շենքը ժառանգություն էր մնացել Աբովյանի անվան միջնակարգ դպրոցին, որը արդեն 17 տարի է, ինչ այդտեղից փոխադրվել է հատուկ իր համար կառուցած բազմահարկ, ընդարձակ ու հարմարավետ նոր շենք (կինո «Նայիրի»-ի մոտ)։

Քաղաքացիական դպրոցներից քաղաքի ուսումնական բնագավառում խաղացած դերով արական դասական գիմնազիայից հետո գալիս էր ս. Հռիփսիմեի օրիորդաց գիմնազիան։ Դա իբրև տարրական դպրոց հիմնվել էր 1850 թվականի հունվարի 2-ին, իսկ 1884 թ. հուլիսի 9-ին վեր էր ածվել պրոգիմնազիայի, այնուհետև՝ 1898 թ. մայիսի 3-ին՝ յոթդասարանյա գիմնազիայի։ 1904 թ. բացվում է նրա վերջին՝ 8-րդ դասարանը, իսկ 1918 թ. սեպտեմբերի 1-ից վերածվում է ընդհանուր հանրակրթական միջնակարգ դպրոցի [3]։

Դպրոց ընդունվելու և ուսման վարձի պայմանները՝ դպրոցի կարգի բարձրացման և ընդհանուր պայմանների փոփոխման շնորհիվ ժամանակի ընթացքում կրում են զգալի փոփոխություններ։ Փոփոխվում են ընդունելության պայմանները, ավելանում է ուսման իրավունքի վարձը։ 1883 թ. դրությամբ (երբ այն սովորական տարրական դպրոց էր) դպրոցում դասավանդումը կատարվում էր պրոգիմնազիայի համապատասխան դասարանների ծրագրերով և պլաններով։ Դպրոց կարող էին ընդունվել՝ պետության հաշվին 8—12 տարեկան երեխաները, իսկ իրենց անձնական հաշվին՝ նաև դրանից բարձր տարիք ունեցողները։ Ուսման իրավունքի վարձը տարեկան 36 ռուբլի էր։ Դիշերօթիկներից ուսման իրավունքի ու գիշերօթիկի համար պահանջվում էր տարեկան 150 ռուբլի (բայց

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 603, թ. 39։
2 «Эриванские объявления», 1913, № 81։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 197 с/514, գ. 15, թ. 16։



Արական դասական գիմնազիայի շենքը (Երևանի պատմության թանգարան)։

անկողնու, մահճակալի և այլնի համար սկզբից միանվագ վճռվող 30 ռուբլուց), իսկ կես գիշերօթիկներից՝ 75 ռ.[1]։ Պրոգիմնազիայի վերափոխելուց հետո ուսման իրավունքի և գիշերօթիկի վարձի էական փոփոխություններ չեն կատարվում։ Դրանք փոփոխվում են դպրոցը լրիվ գիմնազիայի վերափոխելուց հետո։ XX դարի սկզբին ս. Հռիփսիմեի օրիորդաց գիմնազիայի աշակերտուհիների ուսման իրավունքի համար վարձ էր սահմանված հետևյալ չափերով. 4—7-րդ դասարանների յուրաքանչյուր աշակերտից տարեկան 25 ռ., 1—3-րդ դասարանների աշակերտների և նախապատրաստական ավագ ու կրտսեր դասարանցիներից՝ 20 ռ.[2]։ Բացի դրանից, 1—7-րդ դասարանների աշակերտները ֆրանսերեն լեզվի ուսուցման համար յուրաքանչյուրը տարեկան տալիս էր 7 ռ. 50 կ.։ Լրիվ գիշերօթիկի տարեկան վարձը (ուսման իրավունքի վարձի հետ միասին) կազմում էր 100 ռ., իսկ կես գիշերօթիկինը՝ 45 ռ.[3]։

1 «Кавказский календарь на 1883 г.», отд. 2, էջ 103։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 4, ցուցակ 1, գ. 37, թ. 1—20։
3 Նույն տեղը։


Հետագայում ուսման իրավունքի և ֆրանսերենի վարձը բավական բարձրանում է։ Այսպես, 1909 թ. գիմնազիայի նախապատրաստական կրտսեր դասարանի և մինչև երրորդ դասարանի աշակերտներից յուրաքանչյուրը տարեկան ուսման իրավունքի վարձ էր տալիս 50 ռ. չափով, 4—7-րդ դասարանի յուրաքանչյուր աշակերտ՝ 60 ռ., իսկ 8-րդ դասարանի յուրաքանչյուր աշակերտ՝ 100 ռ.։ Ֆրանսերեն և գերմաներեն սովորելու համար յուրաքանչյուր աշակերտ պետք է տար 20 ռուբլի (յուրաքանչյուր լեզվի համար 10-ական ռուբլի), տեղական լեզուներից յուրաքանչյուրի համար 6-ական ռուբլի, պարի համար՝ 10-ական ռուբլի[1]։ Այստեղից միանգամայն պարզ է, որ օրենքը այն մասին, թե գիմնազիա կարող են ընդունվել հասարակության բոլոր խավերին պատկանող երեխաները, հնչում է օդում։ Իրականում օրիորդաց գիմնազիա կարող էին ընդունվել միայն հասարակության բարձր ու հարուստ խավերին պատկանողները։ Ընդունելությունը կատարվում էր ուսումնական տարին սկսվելուց առաջ՝ օգոստոսին։ Նախապատրաստական դասարան կարող էին ընդունվել 9—12 տարեկան երեխաները, 1-ին դասարան՝ 9—12 տարեկանները, 2-րդ դասարան՝ 10—12 տարեկանները և այլն[2]։ Տվյալ դասարանն ընդունվելու համար հանձնվում էր համապատասխան քննություն։ Նոր ընդունվողից պահանջում էին ծննդյան վկայական և տեղեկանքներ մկրտվելու, առողջության վիճակի ու ծաղկի դեմ պատվաստի մասին[3]։

Ինչպես ասվեց, գիմնազիան ուներ նախապատրաստական դասարան, որը բաժանվում էր երկու խմբի՝ կրտսեր ու ավագ խմբերի և 8 հիմնական դասարաններ։ Ըստ առանձին տարիների, գիմնազիայի (մինչև 1898 թ.՝ պրոգիմնազիա) աշակերտների ընդհանուր թիվը և նրանց ազգային ու դասակարգային կազմը արտահայտված են հետևյալ թվերով[4] (տե՛ս աղյուսակ 54)։

Ինչպես տեսնում ենք, ս. Հռիփսիմեի իգական գիմնազիան արական գիմնազիայի նման հիմնականում ազնվականական էր, իսկ ըստ ազգությունների ճնշող մեծամասնությունը կազմում էին հայուհիները։

Արական գիմնազիայի նկատմամբ ս. Հռիփսիմեի գիմնազիա-

1 «Кавказский календарь на 1909 г.», отд. 5, էջ 928։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Աղյուսակի տվյալները տե՛ս նույն տեղը, на 1891 г., отд. 1, էջ 257, на 1893 г., էջ 62, на 1896 г., отд. 5, էջ 195, на 1909 г., отд. 4, էջ 540։



АТТЕСТАТЪ.

Прохаживающ. сего, ученик VII класса Эриванской мужской гимназии Сергей Виноградов

какое свидѣтельство, есть сущее

Действительно Виноградов, сирота, православнаго исповѣдания, имѣющая отъ роду 19 лѣтъ, поступил въ гимназію 1890 году и пробывъ въ

числѣ учениковъ сей Гимназіи 7 лѣтъ, оказалъ за весь

полный курсъ ученія, во время всего онаго

имѣя отъ себя отсутствія и былъ переводимъ, по испытаніи

въ высшіе классы, а именно: въ 1892 г. въ 2 кл., въ 1894 г.

въ 3 кл., въ 1895 г. въ 4 кл., въ 1896 г. въ 5 кл., въ 1897 г.

въ 6 кл., въ 1899 г. въ 7 кл., а въ 1900 г. въ 8 кл.

Въ настоящемъ году, при выпускѣ окончательномъ испытаніи

ученика VII класса, онъ оказалъ въ обязательныхъ предметахъ

гимназическаго курса нижеслѣдующія познанія:

Законъ Божій	5 (пять)
Русскій языкъ	3 (три)
Математика	3 (три)
Естественная исторія	3 (три)
Исторія	4 (четыре)
Географія	3 (три)
Физика	3 (три)
Русская словесность и логика	4 (четыре)
Психологія	3 (три)
Космографія	3 (три)

Сверхъ того, изъ необязательныхъ предметовъ гимназическаго

Ս. Հոիփսիմեի անվան իգական գիմնազիայի 7-րդ դասարանի ավարտական վկայական (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

յում ավանդվող առարկաների կազմը ուներ որոշ տարբերություններ։ Վերջինում կլասիկ լեզուներ (հունարեն և լատիներեն), մարմնամարզություն, տեսերամարտություն չէին անցնում։ Դրանց փոխարեն իգական գիմնազիայի պլանների մեջ մտնում էին ձեռագործություն, հիգիենա և մի քանի այլ առարկաներ, որոնք արական գիմնազիայում չէին ավանդվում [1]։ Դրանցից բացի, ս. Հռիփսիմեի գիմնազիայի նախապատրաստական դասարանն ուներ երեք խումբ՝ կրտսերների, ավագների և այբբենարանի խմբեր։ 1918 թ-վականից նախապատրաստական դասարանի կրտսեր ու ավագ խմբերն ունեին երկուական ենթախմբեր՝ ռուսական և հայկական [2]։

Աղյուսակ 54

Տարեթվեր	*Աշակերտների ընդհ. թիվը*	*Ազգային կազմը*			*Դասային կազմը*				
		հայեր	*ռուսներ*	*այլք*	*գյուղացիներ*	*քաղաքացիներ և պետական ծառայողներ*	*ազնվականներ և հոգևորականներ*	*վաճառական դասից*	*վերտուն*
1890 թ.	91	55	29	7	56	26	3	—	6
1892 թ.	111	62	43	6	81	23	3	—	3
1894 թ.	133	65	59	9	107	20	1	—	5
1908 թ.	447	26[3]	165	19	239	188	9	2	9

Ըստ արխիվային տվյալների, Հռիփսիմեի իգական գիմնազիան 1903 թ. տվել է 16 շրջանավարտ, 1904 թ.՝ 12, 1905 թ.՝ 11, 1906 թ.՝ 29, 1907 թ.՝ 30, 1908 թ.՝ 28, 1910 թ.՝ 27, 1913 թ.՝ 28 և այլն [3]։ Իգական գիմնազիան ավարտողները ստանում էին տնային ուսուցչի որակավորում, իսկ տնային ուսուցիչ լինելու համար գոյություն ունեին հատուկ կանոններ [4]։

Գիմնազիան ֆինանսավորվում էր պետության և սբ. Նինայի Երևանի բարեգործական ընկերության կողմից [5]։ Նրա միջոցների մի զգալի մասն էլ լրացվում էր ուսման իրավունքի համար և գիշերօթիկ աշակերտներից գանձվող գումարների միջոցով։ Նա ուներ

1 *Տե՛ս* «Памятная книжка Эриванск. губ. на 1904 г.», отд. 1, *էջ 84—85*, на 1910 г., отд. 1, *էջ 67։*

2 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 197 c/514, գ. 15, թ. 16։*

3 *Նույն տեղը, ֆ. 4, ցուցակ 1, գ. 22, թ. 2—37։*

4 *Տե՛ս, օրինակ, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 571, թ. 3—4։*

5 Նույն տեղը, ֆ. 197c/514, *գ. 15, թ. 16*, «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 1, *էջ 84։*

Տարիներ	Աշակերտների թիվը	Ազգային կազմը				Դասային կազմը			
		հայ	ռուս	ազգությունը չնշված	այլ	ազնվականներ և պատվավոր քաղաքացիներ	քաղաքացիներ	գյուղացիներ	հոգևորականներ
1890 թ.	69	40	8	13	8	23	10	30	6
1896 թ.	59	18	13	8	20	8	8	35	8
1907 թ.	71	19	38	13	1	3	11	46	11

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն գիմնազիաների, որոնց աշակերտների ճնշող մասը կազմում էին ազնվականների որդիները, սեմինարիայի սաների մեծ մասը գյուղացիներ էին։ Ազնվականի համար սեմինարիան մի տեսակ «անպատվաբեր» էր, որովհետև այն պատրաստում էր գյուղական «հասարակ» ուսուցիչներ։ Մյուս տարբերությունն այն էր, որ գիմնազիայի աշակերտության համեմատությամբ սեմինարիայում ռուս սաների տոկոսային հարաբերությունը բավական բարձր էր։ Ընդ որում, գնալով ռուս սաների թիվը սեմինարիայում ավելի էր մեծանում։ Այդ մասամբ բացատրվում է նրանով, որ Երևանի սեմինարիան ուսուցչական կադրեր էր տալիս ո՛չ միայն Երևանի նահանգին, այլև ուրիշ շատ տեղերի համար։

Սեմինարիայում անցնում էին բազմաթիվ առարկաներ և մի քանի արհեստների ու զբաղմունքների հիմունքները։ Նրա ծրագիրն ու պլաններն ամբողջությամբ հարմարեցված էին սաների հետագա զբաղմունքների շահերին։ Կովկասի ուսուցչական բոլոր սեմինարիաներում ավանդվում էին հետևյալ առարկաները՝ կրոն, մանկավարժության հիմունքներ, ռուսաց լեզու, թվաբանություն, երկրաչափություն և հողաչափության հիմունքներ, գծագրություն, ռուսաց պատմություն և համառոտ տեղեկություններ ընդհանուր պատմությունից, Ռուսաստանի աշխարհագրություն և համառոտ տեղեկություններ ընդհանուր աշխարհագրությունից, կարևոր գիտելիքներ բնական երևույթները հասկանալու համար, գեղագրություն, երգեցողություն, մարմնամարզություն։ Բացի դրանցից, տեղի պայմաններից ելնելով, յուրաքանչյուր սեմինարիայում անցնում էին ոչ պարտադիր ևս մի շարք առարկաներ[1]։ Երևանի սեմինարիայում իբրև ոչ պարտադիր առարկաներ, անցնում էին հայոց

1 «Кавказский календарь на 1891 г.», отд. 1, *էջ 182*, «Памятная книжка Эриванской губернии на 1910 г.», отд. 1, *էջ 65*։

և ազրբեջաներեն լեզուներ, երաժշտություն, խառատա-ատաղձագործական և կազմարարական գործ, բանջարաբուծություն և մեղվաբուծություն[1]։

Մեծ չէր ուսուցչական սեմինարիայի շրջանավարտների թիվը։ Այսպես, օրինակ, իր բացման օրից մինչև 1890 թ. նա ընդամենը ավել էր 69 շրջանավարտ, իսկ մինչև 1895 թ., երբ դպրոցը 12-րդ տարեշրջանն էր փակում, սեմինարիան ավարտողների ընդհանուր թիվը հասնում էր 123-ի[2]։ *Ավարտողները ստանում էին գյուղական ուսուցչի կոչում և աշխատանքի էին ուղարկվում Կովկասի տարբեր նահանգներն ու գավառները*[3]։ *Բայց սրանց մեծ մասը աշխատանքի էր անցնում ուսումնարանների երևանի դիրեկցիայում, որի մեջ մտնում էր նաև Ելիզավետապոլի նահանգը։ Սեմինարիա ավարտողներից ոմանք, հետագայում փորձ ձեռք բերելով, դառնում են ճանաչված ուսուցիչներ։*

Սեմինարիան ուներ երկու գրադարան՝ հիմնական և աշակերտական։ Հիմնական գրադարանը 1890 թ. ուներ 1 576 անուն (2 837 հատոր) գիրք, որը գնահատվում էր 4 434 ռուբլի, իսկ այդ նույն ժամանակ աշակերտական գրադարանն ուներ 1 705 անուն (3 954 հատոր) գիրք՝ 2 482 ռուբլու արժողությամբ[4]։ *Հետագա տարիներում սեմինարիայի գրադարաններն ավելի են հարստանում։ Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին նրա երկու գրադարանների գրքային ֆոնդը արդեն կազմված էր ավելի քան 10 000 հատորից։*

Գրադարաններից բացի սեմինարիան ուներ ֆիզիկայի կաբինետ՝ 318 տարբեր տեսակի սարքերով՝ (3 579 ռ. ընդհանուր արժողությամբ), գրադարանների ու ֆիզիկայի կաբինետի ֆոնդի մեջ չմտնող 3 470 ռ. ընդհանուր արժողությամբ այլևայլ ձեռնարկներ ու իրեր, ինչպես և օդերևութաբանական կայան, խառատա-ատաղձագործական արհեստանոց, լուսանկարչական ապարատներ ու հարմարանքներ[5]։ *1890 թ. վերջում սեմինարիայի գրադարանների գրքային ֆոնդը, ֆիզիկայի կաբինետի սարքավորումների հետ միասին գնահատված էր 13 965 ռուբլի։ Նրա հիմնական գրադարանում պահվող գրքերի մի մասը մեծ արժեք էր ներկայացնում*[6]։

1 «Кавказский календарь на 1891 г.», отд. 1, *էջ 182*։

2 ՀՍՀՊ ՊԿՊԱ, ֆ. 3, ցուցակ 1, գ. 151, թ. 2, գ. 209, թ. 2։

3 Նույն տեղերում։

4 Նույն տեղը, թ. 2—4։

5 Նույն տեղը։

6 Նույն տեղը։

Ուսուցչական սեմինարիայի օժանդակ ձեռնարկություններից առանձին ուշադրության կարող է արժանանալ հատկապես օդերևութաբանական կայանը, որն այդ տիպի առաջին կայանն էր Երևանում, եթե չհաշվենք նախկին գավառական դպրոցի ոչ կանոնավոր գործող կայանը, որի գործունեությունը վաղուց արդեն դադարել էր։ Սեմինարիային կից օդերևութաբանական կայան ստեղծելու հարցը առաջ է քաշվում ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի կողմից՝ 1883 թ. վերջերին։ Այդ նույն ընկերության անդամ, Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Կ. Յանովսկին Երևանի ուսուցչական սեմինարիայի դիրեկտորին հասցեագրած 1883 թ. դեկտեմբերի 15-ի պաշտոնական գրության մեջ նշում է Երևանում օդերևութաբանական դիտումներ կատարելու անհրաժեշտությունը և վերջինիս առաջարկում, որպեսզի արական գիմնազիայի հետ միասին ուսուցիչների և, մանավանդ, սեմինարիայի սանների ուժերով կազմակերպվի այդ գործը։ Հոգաբարձուն գրում էր, որ այդ գործի համար անհրաժեշտ ծախսերը կկատարվեն գիմնազիայի հատուկ միջոցների հաշվին [1]։ Կ. Յանովսկու գրավոր առաջարկի պատճենի կցումով սեմինարիայի դիրեկտորը նույն թվականի դեկտեմբերի 26-ին գիմնազիայի դիրեկտորին է ուղղում մի գրություն, որով վերջինիս խնդրում է գիմնազիայի ուսուցիչ Գ. Իվանովին հայտնի դարձնել հոգաբարձուի պաշտոնական գրության բովանդակությունը, որպեսզի վերջինս սեմինարիայի ուսուցիչ Կարամոսկոյի հետ միասին կազմի օդերևութաբանական կայանի դիտումների կանոնները և կայանի համար անհրաժեշտ ապարատների ցուցակը։ Այնուհետև, սեմինարիայի դիրեկտորը գիմնազիայի դիրեկտորից խնդրում է տալ իր կարծիքը կայանի համար նախատեսվող ծախսերը գիմնազիայի հատուկ միջոցների հաշվին կատարելու՝ հոգաբարձուի արած առաջարկի մասին [2]։ Գրագրությունների հետագա ընթացքը ցույց է տալիս, որ կայանը կազմակերպվում է մի քանի ամսվա ընթացքում։ Նորաստեղծ այդ կայանը, 1884 թ. սկզբներին Թիֆլիսի ֆիզիկական օբսերվատորիայից ստանալով անհրաժեշտ գործիքներ ու սարքեր, սկսում է իր դիտումները [3]։ Ուսուցչական սեմինարիայի կայանը երկրորդ կարգի էր։ Դիտումներ կատարում էին սեմինարիայի սանները՝ ուսուցիչների ղեկավարությամբ։ Սակայն սիս-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 355, թ. 1։
2 Նույն տեղը, թ. 3։
3 Նույն տեղը, թ. 5—7։

տեմատիկ և կայանի կարգին համապատասխանող բոլոր ձևի դիտումները սկսում են կատարել միայն 1886 թվականից։ Կայանն իր հիմնադրման օրից մինչև 90-ական թվականների վերջերը ղեկավարում էր սեմինարիայի ուսուցիչ, վերը նշված, Ա. Ա. Կարամոսկոն։ Աշխարհագրա-կլիմայաբան-օդերևութաբանի համար մեծ հետաքրքրություն կարող էր ներկայացնել կայանի՝ 1886—1889 թթ. դիտումների տվյալները, որոնք ամփոփված են «Эриванский сборник»-ի մեջ։ Դրանք տրված են աղյուսակներով՝ «Метеорологический календарь г. Эривани» վերնագրի տակ։ Աղյուսակները անհրաժեշտ տեղեկություններ են պարունակում մթնոլորտի ծանրաչափական ճնշման, օդի բացարձակ ջերմության, բացարձակ ու հարաբերական խոնավության, միջին ամպամածության, տեղումների, եղանակի այլ հատկանիշների և տիրապետող քամիների մասին [1]։ Ժողովածուն կազմել է Երևանի նահանգական վիճակագրական մասի աստիճանավոր Դ. Դ. Պագրիևը, որը աշխարհագրության մեջ բավական գիտակ էր։

Սեմինարիայի վարչա-ուսուցչական անձնակազմը բաղկացած էր դիրեկտորից, մանկավարժական պրակտիկայի ղեկավարներից և ուսուցիչներից։ Սեմինարիային կից կար տարրական օրինակելի ուսումնարան։

Քաղաքի մյուս դպրոցների նման ուսուցչական սեմինարիան էլ սկզբում չուներ իր սեփական շենքը։ Հետագայում, սակայն, այդ պրոբլեմը լուծվում է։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը 1905 թ. հունվարին դրական կարծիք է տալիս սեմինարիայի մանկավարժական խորհրդի այն որոշմանը, որով սեմինարիային կից բուժկետ, բաղնիք ու լվացքատուն կառուցելու համար խնդրվում էր 30 000 ռուբլու վարկավորում (20 տարի ժամանակով)։ Փոխարքայի միջնորդությունը ընդունվում է, սեմինարիան վարկավորվում է [2]։ Սեմինարիայի ուսումնական և օժանդակ շենքերը կառուցվում էին այժմյան Երևանի պետական համալսարանի կենտրոնական շենքի տեղում, Աստաֆյան (Արովյանի) փողոցի վրա։ Նրա ուսումնական կորպուսը կազմում էր այժմյան համալսարանի կենտրոնական կորպուսի Արովյանին զուգահեռ ձգվող թևի առաջին և երկրորդ հարկերը, որոնց վրա մեր օրերում կառուցվեց երրորդ հարկը։

Նշված ուսումնական հաստատություններից պակաս նշանա-

1 Տե՛ս «Эриванский сборник», вып. 1, Эривань, 1892, էջ 21—31։
2 ЦГИА СССР в Ленинграде, ф. 1276, опись 19, д. 89, л. 1—2։

կություն չի ունեցել Ալեքսանդր Առաջին թագավորի անվան օրիորդաց առաջին գիմնազիան։ Այս դպրոցը, իբրև չորս դասարանից բաղկացած պրոգիմնազիա, բացվել էր օր. Եվգենիա Տեր-Սարգսյանի նախաձեռնությամբ։ Դպրոցի բացման իրավունքը տրվում է 1906 թ. ապրիլին։ Կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուն օր. Տեր-Սարգսյանին հասցեագրած իր պաշտոնական գրության մեջ նշում է, որ նրան թույլատրվում է Երևանում օրիորդաց գիմնազիա բացելու՝ ճշդրիտ պահպանելով ժողովրդական լուսավորության մինիստրության կողմից 1870 թ. հաստատված կանոնները[1]։ Փաստերը ցույց են տալիս, որ այդ, եթե կարելի է ասել, կիսամանավոր-կիսապետական օրիորդաց պրոգիմնազիան իր գործերի ընդհանուր դրվածքով ուսման բնագավառում կարճ ժամանակամիջոցում մեծապես առաջադիմում է։ Օր. Ե. Տեր-Սարգսյանի և հոգաբարձուական խորհրդի ջանքերով պրոգիմնազիան կարճ ժամանակամիջոցում հաղթահարում է ֆինանսական դժվարությունները (պետությունը գիմնազիային տալիս էր միայն չնչին գումարներ՝ տարին 1500 ռուբլուց ոչ ավելի) և գնալով խոշորանում։ Միայն վեց տարվա ընթացքում՝ 1906—1912 թթ. պրոգիմնազիան ունեցել է 1003 աշակերտուհիներ, որոնցից 66-ը՝ ռուսներ, 906-ը՝ հայեր, 31-ը՝ վրացիներ, 8-ը՝ ազրբեջանցիներ և 5-ը՝ այլք[2]։ Եթե 1906 թ. դպրոցը ուներ ընդամենը 83 աշակերտուհիներ, ապա 1912 թ. նրա աշակերտուհիների թիվը հասնում էր 260-ի, որոնցից 40-ը կրթություն էին ստանում առանց կրթության իրավունքի համար վարձ տալու[3]։ Այդ նույն ժամանակամիջոցում ավելանում է և դասարանների թիվը՝ չորսից հասնելով վեց դասարանի, որից հետո մի քայլ էր մնում գիմնազիայի վերափոխվելու համար։ Պրոգիմնազիայի ուսումնական գործը և ներքին կարգ ու կանոնը օրինակելի ձևով կազմակերպելու մեջ օր. Տեր-Սարգսյանից բացի կարևոր դեր էին խաղում նաև մանկավարժական խորհրդի նախագահներ Ստեպանիցկին, Դոբրոտինը և հոգաբարձական խորհրդի նախագահ Միրզոյանը։ Մամուլի հաղորդումից երևում է, որ դպրոցի կարիքները նկատի ունենալով, Կովկասյան ուսումնական օկրուգը 1912 թ. գումար է հատկացրել քաղաքի կենտրոնական մասում ուսումնական նոր շենք կառուցելու համար։ Նախատեսված էր այդ շենքի կառուցումն ավարտել երկու տարվա ընթացքում[1]։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 5, թ. 1։
2 «Կռանս», 1912, № 8։
3 Նույն տեղը։

Պրոգիմնազիայի տեսչուհի օր. Ե. Տեր-Սարգսյանը և հոգաբարձական խորհրդի նախագահ Միրզոյանն իրենց այդ ջանքերի ու աշխատանքի համար բարձրագույն հատուկ հրամանագրով արժանանում են պարգևատրման[2]։

1912 թ. գարնանը՝ արդեն 6 դասարանից բաղկացած պրոգիմնազիայի հոգաբարձական խորհուրդը Կովկասյան ուսումնական օկրուգի առաջ հարց է հարուցում պրոգիմնազիան լրիվ գիմնազիայի վերափոխելու մասին։ Օկրուգի հոգաբարձական խորհուրդը այդ խնդիրքը համարելով հիմնավորված, իր 1912 թ. մարտի 31-ի նիստում որոշում է Երևանի օրիորդաց պրոգիմնազիան վերակազմավորել 7 դասարանի լրիվ գիմնազիայի՝ այն կոչելով «Կայսր Ալեքսանդր Առաջինի անվան Երևանի իգական գիմնազիա»[3]։ Այդ անվանափոխությունը կատարվում է 1912 թ. գարնան վերջերին և ամառվա ընթացքում[4]։ 1912—1913 ուս. տարվա պարապմունքները դպրոցն սկսում է արդեն իբրև լրիվ գիմնազիա[5]։ Դա Երևանի օրիորդաց երկրորդ գիմնազիան էր։ 1913—1914 ուս. տարում բացվում է նրա 8-րդ դասարանը։ Բացի 8 դասարանից, գիմնազիան ուներ նաև նախապատրաստական դասարան՝ բաղկացած երեք խմբից՝ այբբենի, կրտսեր և ավագ[6]։

Աղյուսակ 56

Պրոգիմնազիայի աշակերտների թիվը						Գիմնազիայի աշակերտների թիվը					
1/I 1907 թ.	1/I 1908 թ.	1/I 1909 թ.	1/I 1910 թ.	1/I 1911 թ.	1/I 1912 թ.	1/I 1913 թ.	1/I 1914 թ.	1/I 1915 թ.	1/I 1916 թ.	1/I 1917 թ.	1/I 1918 թ.
83	123	164	149	224	252	308	314	292	310	340	360

1 «Կռանս», 1912, № 8։
2 Նույն տեղը։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 8, թ. 9։
4 Դաշնակցության տիրապետության շրջանում՝ 1920 թ. փետրվարի 24-ին Ալեքսանդրյան օր. գիմնազիայի մանկավարժական խորհուրդը որոշում է խնդրել հանրային կրթության մինիստրությանը գիմնազիան կոչելու նրա հիմնադրի՝ եվդ. Տեր-Սարգսյանի անունով, բայց դաշնակցական մինիստրը 1920 թ. ապրիլի 14-ին կարուկ կերպով մերժում է մանկավարժական խորհրդի որոշումը (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 197 c/514, գ. 16, թ. 104)։
5 «Эриванские объявления», 1912, № 67։
6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, գ. 72, թթ. 23—33, 45—56։

Բերված աղյուսակը (56) գաղափար է տալիս այդ ուսումնական հաստատության աշակերտների թվի մեծացման մասին։

Ի տարբերություն վերը նշված մյուս աղնվականական դիմնազիաների, օրիորդաց այս դիմնազիայի (պրոգիմնազիայի) աշակերտուհիների ճնշող մասը կազմում էին բուն քաղաքացիների դուստրերը [2]։

Դպրոցն ուներ իր հիմնական ու աշակերտական գրադարանները։ 1912 թ. սկսած դպրոցի գրադարանը տարեկան 100 ռուբլի նպաստ էր ստանում Ս. Ավետիսյանից [3]։ Նրա գրադարանների գրքային ֆոնդի և դրա ընդհանուր արժեքի մասին գաղափար կազմելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ աղյուսակը, որը կազմում ենք արխիվային տվյալների հիման վրա [4]։

Աղյուսակ 57

Թվականներ	Հիմնական գրադարան			Աշակերտական գրադարան			Ընդամենը		
	անուն-ների քիվը	հատոր-ների քիվը	արժեքը ռ.-ով	անուն-ների քիվը	հատոր-ների քիվը	արժեքը ռ.-ով	անուն-ների քիվը	հատոր-ների քիվը	արժեքը ռ.-ով
1908	50	99	102	14	44	53	64	143	155
1911	180	333	529	152	309	328	332	642	857
1916	371	532	796	662	1149	734	1033	1681	1530

Ինչպես տեսնում ենք, Ալեքսանդր Առաջինի անվան օրիորդաց պրոգիմնազիայի (գիմնազիայի) գրադարանը արական դասական գիմնազիայի, ս. Հռիփսիմեի անվան օր. գիմնազիայի և ուսուցչական սեմինարիայի գրադարանների համեմատությամբ աղքատիկ էր։ Պետք է նշել, որ նրա վերջիններիս գրքային ֆոնդի մեծ մասը՝ և՛ անունների, և՛ հատորների թվով կենտրոնացված էին հիմնական գրադարաններում, ապա առաջինի գրադարաններից հարուստը աշակերտականն էր։

Այդ տեսնենք նույն կարգի տարրական ինչպիսի դպրոցներ կային Երևանում։

Քաղաքում գոյություն ունեին տարրական մի շարք դպրոց-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, ց. 22, թ. 1—101։

2 Տե՛ս օրինակ՝ «Кавказский календарь на 1909 г.», отд. 4, էջ 547։

3 «Կոչնակ», 1912, № 8։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 5, ց. 22, թ. 4—104։

ներ [1]։ Ինչպես տեսանք, 1902 թ. դրանց թիվը հասնում էր 7-ի (579 աշակերտներով), 1906 թ.՝ 6-ի (466 աշակերտներով), իսկ 1908 թ.՝ 5-ի (491 աշակերտներով)։ Այդ դպրոցներից համեմատաբար հայանի էին՝ Պուշկինի անվան (այդ անունը նա ստացել է 1899 թ.՝ Պուշկինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ) երեք դասարանյան բարձր տարրական դպրոցը, քաղաքային իգական ուսումնարանը, Ալեքսեևյան քաղաքային ուսումնարանը, Կոնդի տարրական ուսումնարանը, ռուս-ադրբեջանական իգական ուսումնարանը և ռուս-ադրբեջանական արական ուսումնարանը։ Դրանցից երկուսը բացվել էին 1902 թվականին։

Տարրական դպրոցներն ու ուսումնարանները սովորեցնում էին գրագիտություն և կրոնի տարրական հիմունքները։ Մեկ դասարան ունեցող տարրական դպրոցներում ավանդվում էին կրոն, գրավոր և բերանացի ռուսաց լեզվից, գրույց նույն լեզվով՝ խոսակցական լեզվի մեջ վարժվելու համար, բերանացի և գրավոր պարապմունքներ տեղական լեզվով, թվաբանություն (հաշվում և թվաբանության չորս գործողություններ)։ Երկու դասարան ունեցող տարրական դպրոցներում դրանց վրա ավելանում էին նաև կրոնի տարրական պատմությունը, պրակտիկ պարապմունքներ ռուսաց քերականությունից, կոտորակներն ու մտավոր հաշվումները և Ռուսաստանի համառոտ աշխարհագրությունը։ Երեք դասարան ունեցող ուսումնարաններում ավանդվում էին ևս մի քանի այլ առարկաներ, իսկ թվաբանությունը, լեզուներն ու աշխարհագրությունն ավանդվում էին ավելի լայն ծրագրերով։ Երեվանում երեքդասյան էր միայն Պուշկինի անվան դպրոցը։

Տարրական ուսումնարաններ ընդունվում էին յոթից ոչ պակաս տարիք ունեցող երեխաները։ Ուման իրավունքի վարձը Երեվանի տարրական ուսումնարաններում մինչև 1904 թվականը սովորաբար տարեկան կազմում էր 4 ռուբլի, իսկ 1904—1905 ուստարվանից ուման վարձը կրկնապատկվում է։ Տարրական դպրոցներն ավարտողները որոշ արտոնություններ ունեին քաղաքացիական կյանքում և զինվորական ծառայության մեջ։

Տարրական դրեթե բոլոր դպրոցները, բացի հիմնական դա-

1 Քաղաքային առաջին տարրական դպրոցը բացվել էր 1880 թվականին։ Այդ տարում նա ուներ 60 աշակերտ, 1884 թ.՝ 61, իսկ 1888 թ.՝ 44 աշակերտ։ Դպրոցի վրա ծախսվող ֆինանսների մի մասը տալիս էր քաղաքային դուման, իսկ մյուս մասը հավաքվում էր ուման իրավունքի համար պահանջվող գումարներից (ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ց. 1759, թ. 11)։

սարաններից, ունեին իրենց այբբենարանային խումբը։ Նրանք ունեին աշակերտական գրադարաններ, երբեմն նաև արհեստանոցներ։

1913 թ. քաղաքում բացվում է մի նոր տարրական դպրոց, ադրբեջանական իգական ուսումնարանը, որը այդ տիպի դպրոցների մեջ ամենից փոքրն էր։ Նույն թվականին բացված էր նաև քաղաքային տարրական երկրորդ ուսումնարանը։

Պետական (քաղաքային) տարրական դպրոցների հոգսը գրեթե ամբողջությամբ ընկած էր քաղաքային ինքնավարության վրա։ Դրանց նյութա-ֆինանսական բազան շատ թույլ էր, զարգացման հեռանկարները՝ սահմանափակ։

Հանրակրթական առարկաներից բացի որոշ ուսումնարաններում աշակերտներին ծանոթացնում էին նաև գործնական որոշ աշխատանքների հետ։ 1907 թ. Պուշկինի անվան բարձր տարրական դպրոցում բաց է արվում փոստա-հեռագրական հատուկ բաժին։ Ըստ կանոնադրության, այդ նոր բաժնի նպատակն էր՝ տալ հիմնական գիտելիքներ փոստա-հեռագրական գործի մասին և կադրեր պատրաստել փոստա-հեռագրական հիմնարկների համար։ Փոստա-հեռագրական դասարան կարող էին ընդունվել քաղաքային ուսումնարանի 3-րդ կամ գիմնազիայի 4-րդ դասարանները հաջողությամբ ավարտածները։ Փոստա-հեռագրական բաժնում ուսման տևողությունը սահմանված էր երկու տարի։ Այդ երկու տարվա ընթացքում ավանդվում էին՝ ռուսաց լեզու, ֆրանսերեն, գերմաներեն, փոստային կանոններ և հաշվապահություն, հեռագրական կանոններ, պրակտիկ պարապմունքներ հեռագրերի ու հեռախոսների ապարատների կառուցվածքի ու հատկությունների մասին։

Բնակչության անգրագիտությունը հնարավորին չափով վերացնելու համար 1901 թ. աշնանը հարց է հարուցվում Պուշկինի դպրոցին կից՝ մեծահասակների համար կիրակնօրյա դասընթացներ բաց անելու մասին։ Դրանցում պարապմունքները լինելու էին կիրակի և տոն օրերին։ Պարապմունքները տեղի էին ունենալու ինչպես Պուշկինի, այնպես էլ քաղաքի տարրական մյուս դպրոցներում։ Պուշկինի դպրոցի դիրեկտորի ջանքերով և քաղաքային վարչության տրամադրած միջոցներով 1901 թ. դեկտեմբերի 9-ին, իրոք որ, բացվում է այդ, այսպես կոչված, կիրակնօրյա դպրոցը, որի պարապմունքներին իրավունք ունեին մասնակցելու արական սեռի 16—50 տարեկան բոլոր քաղաքացիները՝ անկախ ազգությունից և պաշտամունքից։

1912 թ. հարց է հարուցվում Երևանում տարրական գյուղատնտեսական-տեխնիկական ուսումնարան բաց անելու մասին, որը պիտք է ունենար նաև մեքենաշինական, ջուղակության, բամբակամշակման, պահածոներ պատրաստելու տեխնոլոգիայի և այլ բաժիններ։ Սակայն Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուի այդ պաշտոնական գրությունն ու միջնորդությունը հնարավոր չէր Երևանում իրականացնել։ Քաղաքային վարչությունն ու դուման, նկատի ունենալով քաղաքի ֆինանսական սուղ դրությունը, այդ համարում են անիրագործելի [1]։

Այժմ անցնենք մասնավոր և ծխական ու հոգևոր դպրոցներին։

Մասնավոր դպրոցները տարբեր տիպի էին։ Մեզ հետաքրքրող ժամանակների Երևանում կային տարրական մի շարք երկրորդ և երրորդ կարգի ուսումնարաններ, երաժշտական դասընթացներ, հաշվապահական, պարի, ձեռագործի կուրսեր և մեկ պրոգիմնազիա։ Ինչպես տեսանք, երրորդ կարգի մասնավոր հանրակրթական-տարրական դպրոցների թիվը 1902 թ. 11 էր, 1906 թ.՝ 6, իսկ 1908 թ.՝ 9։ Բացի դրանից, 1906 թ. գոյություն ուներ մասնավոր երկրորդ կարգի մեկ ուսումնարան։ Աշակերտների ընդհանուր թիվն այդ նույն թվականներին կազմում էր 1902 թ. 280, 1906 թ.՝ 181, 1908 թ.՝ 505։ Մասնավոր հանրակրթական դպրոցները իրենց ծրագրերով նույնացված էին պետական տարրական հանրակրթական դպրոցներին, չնայած նախկին ժամանակների նման առաջինների ուսման բնույթն ու ծավալը ավելի շուտ կախված էր մնում մասնավոր ուսուցչի գիտելիքներից ու մեթոդներից։

Մասնավոր դպրոցների թիվը խիստ կերպով ավելացել է երկու անգամ, մեկը՝ 1885—1896-ական թվականներին՝ հայկական եկեղեցական-ծխական դպրոցները փակելու հետևանքով, իսկ մյուսը՝ XX դարի սկզբներին, երբ ցարիզմի կողմից դարձյալ հայկական դպրոցների փակման քաղաքականություն էր վարվում, բայց այս անգամ մի փոքր քողարկված ձևով՝ եկեղեցական կալվածքները խլելու և ծխական դպրոցները նյութական հիմքից զըր-

---

1 Երևանի պետական-քաղաքային տարրական դպրոցների մասին տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 12, ց. 8, թ. 23, գ. 11, թ. 94, ֆ. 14, գ. 5, թթ.1—2, 9, 22, գ. 13, թ. 3, ֆ. 117, գ. 453, թթ. 18, 30, 43, գ. 454, թ. 15, գ. 459, թթ. 124—125, 187, գ. 624, թ. 44, գ. 692, թ. 163, «Кавказский календарь на 1891 г.», отд. 1, էջ 184—185, на 1909 г., отд. 4, էջ 547, «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 28—31, «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.», отд. 1, էջ 55, на 1910 г., отд. 1, էջ 69—71, «Эриванские объявления», 1904, № 37, 1912, № 94, 1913, № 59 և այլ տեղերում։

կելու եղանակով։ Մասնավոր դպրոցներից մի քանիսը՝ Սոֆիա Ստասյուլևիչի գիշերօթիկը և ուրիշներ պահպանվել էին նախորդ շրջանից, իսկ մյուս՝ մեծագույն մասը նոր էր բացված։

1890-ական թվականներին Երևանում նախորդ շրջանից պահպանված Ստասյուլևիչի ուսումնարանից բացի հիշատակվում են նաև Բաբայանի, Պոպովի, տիկ. Սաֆարյանի, Տեր-Զաքարյանի և Տեր-Իսահակյանի երրորդ կարգի մասնավոր ուսումնարանները, որոնք գրագիտություն և նախնական որոշ գիտելիքներ էին տալիս մանուկներին [1]։ Ըստ արխիվային նյութերի և պարբերական մամուլում բացման ու ընդունելությունների մասին արված ռեկլամների, մեզ հետաքրքրող շրջանի Երևանում հիշատակվում են հետևյալ մասնավոր դպրոցներն ու զանազան կուրսերը։ Հետևելով ոչ թե բացման, այլ սկզբնաղբյուրներում հիշատակվելու ժամանակագրությանը, 1902—1914 թթ. համար կարելի է կազմել Երևանի մասնավոր դպրոցների հետևյալ ցուցակը.

1. Մ. Շամխորյանի իգական մեկ դասարանանոց ուսումնարանը։ Հիշատակվում է 1904 թվականից։ Ուսման տևողությունը մեկ տարի էր։ Ուսումնարանը երեխաներին այդ մեկ տարվա ընթացքում գիտելիքներ էր տալիս զանազան ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասարաններն ընդունվելու համար։ Շամխորյանի ուսումնարանը գտնվում էր իր սեփական տանը, Ցարական (Սպանդարյանի) փողոցի վրա [2]։

2. Իշխանուհի Պավլենովայի երրորդ կարգի մասնավոր ուսումնարան։ Բացվել է 1904 թ. սեպտեմբերի 1-ին։ Ուսումնարանը երեխաներին պատրաստում էր զանազան ուսումնական հաստատություններ ընդունվելու համար։ Նրանում ավանդվում էր հայոց լեզու, ցանկության դեպքում նաև ադրբեջաներեն։ Գտնվում էր Թարխանովի փողոցի վրա, ոմն Վահան Պողոսյանի սեփական տանը։ Հետագայում, հավանաբար 1912 թվականին, տեղափոխվում է Աստաֆյան (Աբովյանի) փողոց՝ գործյալ մասնավոր տուն [3]։

3. Տիկ. Ա. Կիրակոսյանի մասնավոր ուսումնարան։ Հիշատակված է 1904 թվականից։ Գտնվում էր Կարավանսարայի (Տեր-Գաբրիելյանի) փողոցի վրա, իր սեփական տանը [4]։

4. Դ. Մ. Պոպովի մասնավոր ուսումնարան։ Ուներ նաև գիշերօթիկներ ու կիսագիշերօթիկներ։ Հավանաբար բացվել էր 1901 կամ 1902 թվականին։ Մյուս մասնավոր դպրոցների նման Պոպովի ուսումնարանը ևս երեխաներին գրագիտություն և նախնական գիտելիքներ էր տալիս ուսումնական հաստատություններ ընդունվելու համար։ Սկզբում գտնվում էր Բեհբութովի փողոցի վրա, իսկ մի քանի տարի հետո տեղափոխվում է Աստաֆյան [1]։

5. Իշխանուհի Ե. Գ. Ռատիևայի նախապատրաստական ուսումնարան։ Ընդունելության հայտարարություններին առաջին անգամ հանդիպում ենք 1912 թվականին, բայց ըստ երևույթին նա գոյություն ուներ տակավին XX դարի սկզբից։ Երեխաներին նախապատրաստում էր զանազան ուսումնական հաստատությունների առաջին դասարան ընդունվելու համար։ Գտնվում էր Բեհբութովի (Սվերդլովի) փողոցի վրա [2]։

6. Իվան Միխայլովիչ Կլոպովի երկրորդ կարգի (մասնավոր մյուս բոլոր ուսումնարանները երրորդ կարգի էին) ուսումնարան։ Բացվել է 1912 թ. հոկտեմբերին և գտնվում էր Բաղարի (Մարքսի) փողոցի վրա, մասնավոր մի տան մեջ։ Ուսումնարանն ուներ նախապատրաստական բաժին և հիմնական մեկ դասարան՝ առաջին դասարան։ Նախապատրաստական բաժինը բաղկացած էր այբբենարանի խմբից և կրտսեր ու ավագ խմբերից։ Այբբենարանի խմբում սովորելու համար ուսման վարձ էր նշանակված 60 ռուբլի, ավագ և կրտսեր խմբերի համար՝ 70-ական ռուբլի, իսկ առաջին՝ հիմնական դասարանի համար՝ 100 ռուբլի [3]։


7. Մ. Գ. Թումանյանի ուսումնարան։ Ընդունելության հայտարարություններին առաջին անգամ հանդիպում ենք 1912 թվականին, բայց մասնավոր մյուս մի շարք դպրոցների նման Թումանյանի ուսումնարանն էլ հավանաբար գոյություն ուներ 1900-ական թվականների սկզբից։ Ուներ գիշերօթիկ, երեխաներին պատրաստում էր զանազան ուսումնական հաստատություններ ընդունվելու համար։ Գտնվում էր Նազարովի (Ամիրյանի) փողոցի վրա [4]։

8. Իշխանուհի Չեգոդաևի պրոֆեսիոնալ դպրոց։ Հիշատակվում է 1914 թ. քաղաքի մի շարք դպրոցների հետ միասին, որոնք Երևանի մանր վարկի բնակերության կողմից ստացել էին տարբեր

1 «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 29։
2 «Эриванские объявления», 1904, № 36։
3 Նույն տեղը, 1904, № 37, 1912, № 66։
4 Նույն տեղը, 1904, № 37։

1 ЦГИА СССР в Ленинграде, ф. 102, 4— Делопроизводство, 1901, д. 87, ч. 10, թ. 1 և 2, ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 453, թ. 43։
2 «Эриванские объявления», 1912, № 69, 1913, № 62։
3 Նույն տեղը, 1912, № 76, 1913, № 59։
4 Նույն տեղը, 1912, № 67, 1913, № 62։

գումարի նպաստ[1]։ Թե երբ է բացվել կամ ինչ բնույթ ուներ այդ ուսումնարանը, մնում է անհայտ։



ՎԻԴԵՏԵԼՍՏՎՈ.

Предъявитель сего свидетельства, ученикъ ... класса частной прогимназіи ... Эриванскомъ ... родившійся ... года, поступилъ въ ... году по ... въ ... классъ частной прогимназіи ... и пробылъ въ этой прогимназіи до окончанія полнаго курса ученія, въ продолженіе всего этого времени былъ поведенія ...

Въ настоящемъ году, на бывшемъ окончательномъ испытаніи, произведенномъ подъ наблюденіемъ депутата отъ Кавказскаго учебнаго округа, онъ обнаружилъ слѣдующія познанія:

Закона Божія	5
Русскаго языка и словесности	3
Латинскаго языка	4
Нѣмецкаго языка и словесности	3
Французскаго языка и словесности	3
Арифметики	4
Алгебры	4
Геометріи	4
Исторіи	4
Географіи и словесности	3
Природовѣдѣнія	4

Въ удостовѣреніе сего выдано ... настоящее свидѣтельство, предоставляющее ему, сообразительно съ ст. 3738 уст. уч. упр. и учеб. зав. т. XI, ч. 1 св. зак., изд. 1893 г. и согласно ст. 1401 того же тома, право на поступленіе безъ испытанія въ соотвѣтствующій классъ правительственныхъ мужскихъ гимназій. ... 191[3] года. Гор. Тифлисъ.

Помощникъ Кавказскаго учебнаго округа ...

Помощникъ Начальника ...

9. Շէրբրանինայի պրոգիմնազիայի 4-րդ դասարանի ավարտական վկայական (ՀՍՍՌ ՊԿՊԱ)։

Դրանցից բացի, հիշատակվում են նաև տիկ. Ս. Ս. Գարագաշի գաշնամուրային, տիկ. Թումանյանի երաժշտական դասընթացները[2] և մի շարք այլ դասընթացներ ու ուսումնարաններ, որոնք,

1 «Խոսք», 1914, № 22։

2 «Эриванские объявления», 1913, № 62։

ըստ երևույթին, մշտապես չէին գործում։ Նշված մասնավոր ուսումնարանները գրագիտություն ու նախնական գիտելիքներ էին տալիս երեխաներին զանազան ուսումնարաններ ընդունվելու համար, բացառությամբ Կոպռովի երկրորդ կարգի ուսումնարանի, որի շրջանավարտները արդեն կարող էին քննությամբ ընդունվել բարձր տարրական դպրոցների, պրոգիմնազիաների ու գիմնազիաների երկրորդ դասարան։

Մասնավոր դպրոցների մեջ ամենաբարձրը Նադեժդա Գեորգիևնա Շէրբրանինայի արական պրոգիմնազիան էր, որը բացվել և գործում էր XX դարի սկզբներից։ Շէրբրանինայի պրոգիմնազիան իր ծրագրերով, պլաններով և իրավունքներով լիովին համապատասխանում էր պետական պրոգիմնազիաներին։ Նրա շրջանավարտները նույնպես օգտվում էին պետական պրոգիմնազիաների շրջանավարտների համար սահմանված արտոնություններից։ Պրոգիմնազիայի ուսման վարձը շատ բարձր էր (1907 թվականից տարեկան 60 ռուբլի էր)։ Պրոգիմնազիայի տերը համապատասխան թվով աշակերտներ ունենալու համար 1907 թ. աշնանը դիմում է քաղաքային վարչությանը և նրանից խնդրում բաղաքի միջոցների հաշվին աղքատ աշակերտներին նպաստ տալ։ Քաղաքային վարչությունն ու դուման մերժում են Շէրբրանինայի դիմումը, պատճառաբանելով, որ քաղաքը հնարավորություն չունի բավական մեծ թիվ կազմող աղքատ աշակերտների պատկառելի գումարների հասնող ուսման վարձը փակելու[1]։ Տիկին Շէրբրանինան մշտապես ռեկլամում էր իր պրոգիմնազիայի մասին[2], բայց ըստ երևույթին նրա աշակերտների թիվը դանդաղ էր ավելանում։ Շէրբրանինայի արական գիմնազիան իր բնույթով նման էր Ե. Ն. Տեր-Սարգսյանի՝ նշված իգական պրոգիմնազիային, միայն այն տարբերությամբ, որ վերջինս հիմնադրվելով իբրև մասնավոր հաստատություն՝ շուտով դառնում է պետական, իսկ առաջինը շարունակում է մնալ մասնավոր, գործելով միայն իր սեփական միջոցների հաշվին։

Երևանում և հայաբնակ շրջաններում պետական ու մասնավոր դպրոցների կողքին գոյություն ունեին հայկական ծխական-եկեղեցական բազմաթիվ դպրոցներ, որոնցից մի քանիսը գոյություն ունեին և նախորդ շրջանում։ Այդ դպրոցները կամ ուսումնարան-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 624, թ. 34—35։

2 Պրոգիմնազիայի բնութագրությունների մասին տե՛ս «Эриванские объявления», 1913, № 57, 1915, № 2 և այլ տեղերում։

ները, որոնք մեզ հետաքրքրող շրջանում իրենց ծրագրերով ու պլաններով մոտ էին աշխարհիկ նույնակարգ ուսումնարաններին, կրոնի ու դրագիտության հետ միասին աշակերտներին տալիս էին նաև զանազան գիտելիքներ։

Ծխական դպրոցները, լինելով հայկական հանրակրթական դպրոցներ՝ անցանկալի էին ցարական օրգանների ու բարձրաստիճան պաշտոնյաների համար։ Ցարական կառավարությունը պատրվակ բռնելով, որ իբրև ծխական-եկեղեցական դպրոցներն իրենց բնույթով հոգևոր դպրոցներ չեն, 1884 թ. փետրվարի 16-ի կանոնադրությամբ անճիշտ է համարում դրանց եկեղեցական կոչելը և ներքին գործերի մինիստրության, ժողովրդական կրթության մինիստրի ու Կովկասի բարձր իշխանությունների համաձայնությամբ կարգադրում է հայկական ծխական-եկեղեցական դպրոցները հանել հայկական եկեղեցու իրավասությունից՝ դրանք հանձնելով պետական համապատասխան օրգանների տնօրինությանը, որոնց ենթակա էին տարրական մյուս ուսումնարաններն ու դպրոցները [1]։ Հայկական եկեղեցին ժողովրդի պաշտպանությամբ հրաժարվում է ժողովրդական կրթության մինիստրությանը հանձնել ծխական որևէ դպրոց։ Նա դիմադրում է ցարական կառավարության ռուսականացման քաղաքականությանը։ Չէ՞ որ ծխական դպրոցի հանձնումը պարզապես նշանակում էր այն վերածել ռուսականի։ Ցարական կառավարությունը շարունակում է իր ճնշումը հայկական եկեղեցու վրա, բայց արդյունքի չհասնելով, դեն է նետում ամեն մի շղարշ և 1885 թ. կարգադրում է ծխական դպրոցները փակել [2]։ Որպեսզի պարզ լինի, թե ռուսականացման այդ քաղաքականությունը ինչպիսի ծանր հարված էր հայ ժողովրդի համար, հայկական եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերյալ բերենք միայն մի աղյուսակ, որում 1889/1890 ուս. տարվա դրությամբ տրվում են Թիֆլիսի, Երևանի, Աստրախանի, Արցախի և Շամախու թեմերի եկեղեցական-ծխական դպրոցների ու դրանց ունեցած աշակերտ-աշակերտուհիների թիվը [3] (տե՛ս աղյուսակ 58)։

Ճիշտ է, նշված թեմերի հայ բնակչության նկատմամբ ծխական դպրոցների աշակերտների թիվը մեծ չէր, բայց եթե համեմատելու լինենք պետական ռուսական դպրոցներում սովորողների թվի հետ, դա բավական զգալի աշակերտություն է, որն իր մայրենի լեզվով ճանք էր բերում գրագիտություն և նախնական անհրաժեշտ գիտելիքներ։

1 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 29—30։
2 Նույն տեղը։
3 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 20, թ. 122։

Աղյուսակ 58

№ № էջ	Թեմերի անունները	Ուսումնարանների թիվը			Աշակերտների թիվը		
		տղայական	աղջկական	ընդհանուր	տղաների	աղջիկների	ընդհանուր
1	Թիֆլիս	15	41	56	2128	2009	4137
2	Երևան	18	39	57	3229	1245	4474
3	Աստրախան . . .	10	17	27	510	458	968
4	Արցախ	3	17	20	806	266	1072
5	Շամախի	5	9	14	484	247	731
	Ընդամենը	51	123	174	7157	4225	11382

Ինչպես ասվեց իր տեղում, հայկական դպրոցների փակման մասին արձակված հրամանագիրը բնակչության լայն խավերի մեջ առաջ է բերում դժգոհություններ։ Անդրկովկասի հայաշատ վայրերում մտավորականության ներկայացուցիչներն ու աշխատավորական լայն զանգվածները ցասումնալից բողոք են հայտնում ցարական կառավարության ռուսականացման քաղաքականության դեմ։ Ծխական դպրոցների փակման հրամանը, ինչպես նշվեց, է՛լ ավելի մեծ ատելություն ու շարժում է առաջ բերում մանավանդ Երևանում։

Ըստ արխիվային նյութերի, ցարական կառավարության նշված հրամանագրով Երևանում փակվում են հետևյալ հինգ դպրոցները՝ Պողոս-Պետրոս եկեղեցու արական ծխական դպրոցը, սբ. Գայանեի անվան իգական ծխական ուսումնարանը, սբ. Հովհաննեսի արական դպրոցը, Սահականուշյան իգական դպրոցը և Նորքի երկսեռ ծխական դպրոցը [1]։ Իսկ այդ դպրոցները 80-ական թվականներին բոլորը միասին ունեին մի քանի հարյուր աշակերտներ [2]։ Շուտով, սակայն, ցարական կառավարությունը հարկադրված է լինում նախ հանդուրժել Նորքի ծխական դպրոցի գոյությունը, իսկ XX դարի սկզբներից, հայկական եկեղեցական կալվածքները բռնագրավելու հրամանը ձախողվելուց հետո, ընդհանրապես հրաժարվել իր այդ վճռից։ Աստիճանաբար նորից են

1 ՀՆՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 127, թ. 7։
2 Նույն տեղը, ֆ. 7, ցուցակ 1, գ. 20, թ. 41—42։

կյանք առնում հայկական ծխական դպրոցները։ 1911—1912 ուսումնական տարում Երևանի թեմի ծխական դպրոցների թիվը հասնում էր 154-ի, որոնցից 10-ը գտնվում էին Երևանի գավառում ու Երևան քաղաքում [1]։ Այդ ուսումնական տարվա սկզբում Երևանում արդեն գործում էին ծխական հինգ դպրոցներ՝ սբ. Գայանեի, սբ. Մարիամյան իգական (Ջորավոր եկեղեցուն կից), Խրիմյան, սբ. Հովհաննեսի և Նորքի (ս. Սիմեոն եկեղեցուն կից) ծխական-եկեղեցական դպրոցները [2]։

Նշված այդ հինգ ծխական դպրոցները 1911 թ. աշնանն ունեին հետևյալ թվով ուսուցիչներ ու աշակերտներ [3]։

Աղյուսակ 39

№ № կ/կ	Դպրոցների անունները	Ուսուցիչների թիվը			Աշակերտների թիվը		
		ուսուցիչներ	ուսուցչուհիներ	ընդամենը	տղաներ	աղջիկներ	ընդամենը
1	սբ. Գայանյան . .	10	5	15	—	185	185
2	սբ. Մարիամյան .	1	6	7	—	195	195
3	Խրիմյան	2	2	4	80	65	145
4	ս. Հովհաննեսի . .	1	2	3	50	14	64
5	ս. Սիմեոնի	2	2	4	50	46	96
	Ընդամենը	16	17	33	180	505	685

Շուտով այդ դպրոցների թիվը ավելանում է ևս մեկով։ 1913 թ. աշնանը ս. Սարգիս եկեղեցու հոգաբարձությունը բացում է ծխական մի նոր դպրոց և դրա ընդունելության մասին տալիս հատուկ հայտարարություն [4]։

Դրանք բոլորը, բացառությամբ Գայանյան օրիորդաց դպրոցի, տարրական դպրոցներ էին։ Գայանյան դպրոցը բարձր տիպի էր։ Նա ուներ նախապատրաստական խումբ և 5 դասարան [5]։ Աշակերտների մի մասը տալիս էր ուսման վարձ, մի մասը սովորում էր առանց վարձ տալու, իսկ մի մասն էլ՝ դպրոցից ստանում էր թոշակ [6]։

1 «Նոր դպրոց» (ամսագիր), Երևան, 1913, № 5, էջ 5—6։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 48, գ. 289, թ. 6, «Эриванск. объявления», 1911, № 52։
3 Նույն տեղը, ֆ. 48, գ. 289, թ. 6։
4 «Эриванские объявления», 1913, № 57։
5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 6, ցուցակ 1, գ. 59, թ. 1—2։
6 Նույն տեղը, գ. 46, թ. 2։

Ծխական դպրոցները կանոնավոր դրադարաններ չունեին, դրանց աշակերտները մեծ մասամբ գրքեր էին ձեռք բերում գրախից։ Ծխական դպրոցները, ինչպես ասվեց, իրենց ծրագրերով ու պլաններով նման էին հանրակրթականներին, բայց և այնպես դրանցում կրոնին և դրա հետ կապված առարկաներին ավելի մեծ տեղ էր տրվում։ Աշակերտների սոցիալական կազմը բազմազան էր։ Այդտեղ սովորում էին հոգևորականների, աստիճանավորների, արհեստավորների ու առևտրականների և գյուղացիների որդիներ ու դուստրեր։

Ցարական կառավարությունը չհանդգնեց արգելական որևէ վճիռ կայացնել Երևանի հոգևոր թեմական դպրոցի նկատմամբ։ Դա քաղաքի ամենահին դպրոցներից մեկն էր և պատրաստում էր հիմնականում հոգևորականներ։ Թեմական դպրոցի դասարանների թիվը՝ բացի նախապատրաստականից, հասնում էր 6—7-ի։ Նրա ծրագրում հիմնականը կրոնն էր, բայց կրոնի հետ միասին ավանդվում էին նաև գիմնազիական գրեթե բոլոր առարկաները։ Աշակերտների թիվը բավական կայուն էր։ Այսպես, 1888 թ. աշնանը դպրոցն ունեցել է 300 աշակերտ, 1902 թ.՝ 396, 1906 թ.՝ 353, 1908 թ.՝ 395 [1] և այլն։ Դպրոցը սովորաբար նախապատրաստական երկու խմբերում ունենում էր երկուական զուգահեռ դասարաններ։ Նյութապես ամենաապահովված դպրոցներից մեկն էր ամբողջ քաղաքում։ Նրա նյութական բազայի կարևորագույն աղբյուրներից մեկը նվիրատվություններն էին։ Դպրոցին մի մեծ գումար էր կտակել (140 000 ռ.) Ներսես Թայիրյանը։ Այդ գումարից դպրոցի հոգաբարձությունը 85 000 ռ. քաղաքի կենտրոնում գնել էր Ա. Բունիաթյանի պատաժը, որը տարեկան բերում էր 10 000 ռ. եկամուտ։ Հոգաբարձությունն այդ պատաժը աճուրդով տալիս էր կապալով [2]։ Թեմական հոգևոր դպրոցն ուներ և իր գրադարանը։ Ըստ գրադարանի վարիչի պաշտոնական հաշվետվության, 1907—1908 ուս. տարում դպրոցն ունեցել է հետևյալ քանակի ու արժողությամբ գրքեր [3]։

1. Հայերեն աշխարհաբար գրքեր 1921 կտոր՝ 951 ռ. 1 կ. ընդ. արժողությամբ։

2. Գրաբար գրքեր 400 կտոր՝ 394 ռ. 75 կ. ընդ. արժողությամբ։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 44, թ. 5, «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 2, էջ 30, на 1910 г., Ведомость о числе учеб. заведений и учащихся в Эриванск. губ. за 1908 г., «Обзор Эриванской губернии за 1906 г.», աղյուսակ № 12։
2 «Эриванские объявления», 1910, № 77։
3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 8, գ. 65, թ. 15։

3. Ռուսերեն գրքեր 1420 կտոր՝ 888 ռ. 29 կ. ընդ. արժողությամբ։

4. Բառարաններ և օտար լեզուներով գրքեր 184 կտոր՝ 371 ռ. ընդ. արժողությամբ։

Ընդամենը 3925 կտոր՝ 2609 ռ. 05 կ. ընդ. արժողությամբ։

Մեզ հետաքրքրող շրջանում շարունակում էին գոյություն ունենալ նաև մզկիթներին կից եղած դպրոցները՝ մեդրեսեները, որոնց թիվը Երևանում 1896 թ. հասնում էր 10-ի [1]։ Նախորդ ժամանակների համեմատությամբ դրանք ավանդվող առարկաների կազմի և ծրագրերի բնույթի տեսակետից զգալի առաջադիմություն չէին կատարել։ Մեդրեսեները մնում էին իրրև հոգևոր տարրական ուսումնարաններ, որոնց նպատակը Ղուռանի դոգմաների քարոզն էր և գրաճանաչություն տալը։ XX դարի սկզբներից աշխարհիկ նոր դպրոցների բացմամբ (ռուս-ադրբեջանական արական և իգական դպրոցներ, ադրբեջանական ուսումնարան) մեդրեսեները աստիճանաբար կորցնում են իրենց նախկին նշանակությունը։ 1902 թ. սկսած Երևանում արդեն հիշատակվում է ընդամենը չորս մեդրեսե, որոնցում այդ նույն թվականին սովորում էր 85 երեխա, 1906 թ.՝ 125, իսկ 1908 թ.՝ 135 [2]։

Քաղաքի մանուկների ուսումնա-դաստիարակչական բնագավառի նորություններից մեկը մանկապարտեզների կազմակերպումն էր։ Նախորդ շրջանում Երևանում ոչ մի մանկապարտեզ չի եղել։ Մանկապարտեզներ չկային նաև մինչև XX դարի առաջին տասնամյակի վերջերը։ Առաջին մանկապարտեզը Երևանում բացվում է 1909 թ. տիկ. Վարդուհի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ։ Մանկապարտեզը մասնավոր էր, այն բացվել էր սեպտեմբերի 25-ից, Երևանի թեմակալ փոխանորդի թույլտվությամբ և Մարիամյան օր. ծխական դպրոցի հոգաբարձության համաձայնությամբ (Բեհբության փողոցի վրա)։ Տարեկան վարձը կազմում էր 10 ռուբլի։ Ըստ հայտարարության, մանկապարտեզը սկզբում ունեցել է միայն այբբենարանի խումբ, իսկ 1912 թ. բացվում է նաև երկրորդ խումբ, որի սանիկները համապատասխան ծրագիրն ավարտելուց հետո կարող էին քննություն տալ և ընդունվել հանրակրթական դպրոցներ՝ գիմնազիա, պրոգիմնազիա և այլն [3]։ Մանկապարտեզը երկսեռ էր։ Ըստ ծրագրի անցնում էին մարմնամարզություն, երգեցողություն, կար և այլն։ Ավանդումը կատարվում էր ռուսաց լեզվով [1]։

Իրենց ծրագրերով ու նպատակներով վ. Հովհաննիսյանի մանկապարտեզից ոչնչով չէին տարբերվում քաղաքի նաև մյուս երկու մանկապարտեզները, որոնցից մեկը պատկանում էր տիկ. Շ. Տեր-Սահակյանին և բացվել էր 1912 թվականին (Կարավանսարայի փողոցի վրա, ս. Լուսավորիչ եկեղեցու դիմաց), իսկ մյուսը մասնավոր դպրոցատեր իշխանուհի Պավլենովային։ Վերջինս բացվել էր իշխանուհու դպրոցին կից, 1914 թ. հունվարի 10-ին, Կովկասյան ուսումնական օկրուգի հատուկ թույլտվությամբ [2]։

Բնակչության կրթական մակարդակի բարձրացման գործում գրադարանների դերը հանրահայտնի է։ Մենք տեսանք, թե յուրաքանչյուր դպրոց իր բնույթին ու հնարավորություններին համապատասխան ինչպես էր ստեղծել իր գրադարանը և թե գրքային ինչպիսի ֆոնդեր ունեին դպրոցական գրադարանները։ Բայց դպրոցական գրադարանների կրթիչ ազդեցության ոլորտը միայն դպրոցն էր իր աշակերտների սահմանափակ թվով։ Բնակչության լայն խավերը թերթերի, ամսագրերի և գրականության հետ կապելու, ընթերցանությունը մասսայական դարձնելու համար անհրաժեշտ էր և մասսայական գրադարան։ Արդեն իր տեղում ասված է, որ քաղաքում ընթերցարան էր կազմակերպվել դեռևս XIX դարի 60-ական թվականներին, սակայն այն գտնվում էր խղճուկ վիճակում և օրերով ու ամիսներով մատնված էր անգործության [3]։ Ընթերցարանը, որն ուներ գրքային և պարբերական մամուլի իր ֆոնդը, նույնպիսի ողորմելի դրությամբ շարունակում էր իր գոյությունը նաև 80-ական թվականների և 90-ական թվականների առաջին կեսերին։ Երևանի այդ ընթերցարանը այն աստիճանի խղճուկ էր, որ նույնիսկ պաշտոնական՝ շափազանցություններ սիրող, ցարական հրատարակություններում հաճախ չէր հիշատակվում։

90-ական թվականներին քաղաքային հասարակության, հատկապես մտավորականության մեջ, մեծ ձգտում է առաջանում իսկական գրադարան-ընթերցարան կազմակերպելու։ Նախորդ ժամանակների համեմատությամբ 90-ական թվականներին գրա-

1 «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 30։

2 Նույն տեղը, за 1906 г., тетрадь № 12, «Памятная книжка Эриванск. губ. на 1904 г.», отд. 2, էջ 30, на 1910 г., Ведомость о числе учеб. завед. и учащихся в Эриванск. губ. за 1910 г.

3 Տե՛ս «Эриванские объявления», 1909, № 53, 1912, № 65, 1913, № 61։

1 «Эриванские объявления», 1913, № 67։

2 Նույն տեղը և 1914, № 3։

3 Թ. Ե. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 617—619։

գարան-ընթերցարան կազմակերպելու համար պայմաններն ավելի բարենպաստ էին. համեմատաբար դժվար չէր և միջոցների հայթայթման գործը (քաղաքային ինքնավարությունը հնարավորություն ուներ գեթ նվազագույն չափով այն ապահովել) և տեղի հարցը, իսկ մտավորականությունն ուներ բուռն ցանկություն։

Առաջավոր մտավորականների առաջարկով ու գործուն մասնակցությամբ քաղաքային դուման ձեռնարկում է այդ գործը։ 1902 թ. հոկտեմբերի 13-ին կատարվում է նորակազմ գրադարան-ընթերցարանի (կամ հասարակական գրադարան) հանդիսավոր բացումը։ Քաղաքագլուխ Մելիք-Ազամալյանը այդ առթիվ Կովկասի փոխարքայության քաղաքացիական մասի պետին ուղարկած իր հեռագրում գրում է, որ «նահանգի զինվորական ու քաղաքացիական իշխանությունների և քաղաքային դումայի ներկայությամբ կայացել է Երևանի քաղաքային հասարակական գրադարանի հանդիսավոր բացումը... ներկայացնելով այդ մասին, քաղաքային դուման Ձերդ պայծառափայլությանը հայտնում է իր խորին շնորհակալությունը... Երևան քաղաքի համար այդ ուրախալի անցքը իրականացնելու մեջ Ձեր ցույց տված աջակցության համար»[1]։

Գրադարան-ընթերցարանը կառավարվում էր հատուկ կոմիտեի կողմից, որն ուղղակի կոչվում էր գրադարանի կոմիտե և ընտրված էր մասնակիցների ու դումայի կողմից։ Գրադարանը գտնվում էր Աստաֆյան փողոցի վրա, տիկ. Ի. Զ. Ղորղանյանի տանը։ Նա ուներ հատուկ կանոնադրություն, ըստ որի օրական բաց պետք է լիներ 4—5 ժամ՝ առավոտյան և երեկոյան ժամերին։ Կիրակի ու տոն օրերին գրադարանը չէր աշխատում։ Անդամագրվելու համար սահմանված էր չորս կարգ. առաջին կարգի համար պահանջվում էր ամսական 25 կոպեկ, երկրորդ կարգի համար՝ 40 կ., երրորդի համար՝ 50 կոպեկ, իսկ չորրորդի համար՝ 60 կոպեկ։ Բոլոր անդամագրվողները պարտավոր էին տալ նաև գրավական։ Առաջին կարգի անդամագրվողից պահանջվում էր 1 ռ. գրավական, երկրորդ կարգից՝ 2 ռ., երրորդից՝ 3 ռ., իսկ չորրորդից՝ 4 ռ.[2]։ Սակայն անդամավճարները շնչին դումարներ էին կազմում։ Գրադարանի ծախսերը, որ նույնպես մեծ չէին, հիմնականում ընկնում էին քաղաքային վարչության վրա։ Տարեկան

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 517, թ. 32։

2 «Նոր մամուլ» (լրագիր), Երևան, 1913, № 19։

ծախսերը կազմում էին 700—800 ռուբլի[1]։ Գրադարանն ուներ գրքի և մամուլի բաժիններ։ Ստանում էր հայերեն, ռուսերեն և աղրբեջաներեն մի շարք թերթեր։ Ուներ ընթերցանության սենյակ, բայց սովորաբար գրքերն ու թերթերը ընթերցողներին էին տրվում դուրս տանելու համար[2]։ Ըստ ժամանակակից մամուլի հաղորդումների, գրադարան-ընթերցարանը բացվելուց մի երկու տարի անց արդեն բարձիթողի էր արված։ Նա չուներ կատալոգ, գրքի ու մամուլի հաշվառման կանոնավոր մատյաններ, գրքերի համապատասխան քանկություն (մանավանդ նորագույն գրքերի), աշխատանքի կայուն ժամեր։ Շենքն անհարմար էր, օրերով ընթերցարանը զուրկ էր լինում ընթերցողներից[3]։ Այնուամենայնիվ, գրադարան-ընթերցարանի սոսկ գոյությունն իսկ նշանակալի ազդեցություն ուներ հասարակության կրթական մակարդակի բարձրացման վրա։

Բնակչության հանգստի կազմակերպման և կուլտ-կենցաղային պայմանների բարելավման համար մեծ է ակումբների դերը։ Երևանում մինչև XX դարի սկզբները գոյություն չի ունեցել ոչ մի ակումբ։ Քաղաքի ցեխոտ ու փոշոտ փողոցներից և նկեղեցիների ու մզկիթների զբոսավայր-բակերից և քաղաքապատկան մի քանի փոքրիկ ու անբարեկարգ այգիներից բացի, Երևանցին չուներ մի վայր, որտեղ անցկացներ իր հանգստի ժամերը, եթե չհաշվենք տների առաջ կամ դրանց ստվերախիտ բակերում երեկոները հարևանների միջև հաճախ տեղի ունեցող նարդու և տամայի «համառ մրցություններըե», որոնք սովորաբար ուղեկցվում էին խաղացող «վարպետների» սպառնալից մեծախոսություններով։

XX դարի սկզբներից նախ՝ բացվում է քաղաքային ակումբը, ապա՝ 1911 թ. աստիճանավորների ակումբը, որը սկզբում գտնվում էր Բունիաթյանի տանը, իսկ 1913 թ. տեղափոխվում է Աֆրիկյանի տունը, այստեղ զբաղեցնելով մի շարք սենյակներ։ Աստիճանավորների ակումբը Աֆրիկյանի տունը տեղափոխվելուց հետո Բունիաթյանի տան ամբողջ վերին հարկը, որը բաղկացած էր մի ամբողջ շարք ընդարձակ սենյակներից, վարձվում է քաղաքային ակումբի համար։ Հենց նույն 1913 թ. հիմնական վերանորոգման է ենթարկվում քաղաքային ակումբի զբաղեցրած հարկը։ Վերանորոգում են բոլոր սենյակները, սարքավորում են թատրոնի բեմն ու դահլիճը, նորոգում ու ընդարձակում են էլեկտրական

1 «Նոր մամուլ» (լրագիր), Երևան, 1913, № 21։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, ինչպես նաև «Խոսք» 1914, № 18։

լուսավորության գանգը և նույնիսկ առաջարկ է լինում ապակյա սրահը վերածել ձմեռային այգու [1]։



Քաղաքային ակումբի շենքը (ներկայումս Երաժշտական կոմեդիայի թատրոն)
(ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Քաղաքային ակումբի գործերը վարում էր ավագների խորհուրդը, իսկ ակումբը իր գոյությունը պահպանում էր ակումբի անդամներից հավաքվող անդամավճարների շնորհիվ։ Անդամավճար չմուծող անդամն անհապաղ հեռացվում էր ակումբի անդամությունից [2]։ Ավագների խորհուրդը սովորաբար ընտրվում էր տարին մեկ անգամ և բաղկացած էր լինում հինգ հոգուց։ Ակումբն ուներ իր կանոնադրությունը [3]։ Նույնպիսի կարգ ու կանոն, կանոնադրություն և ղեկավարման սիստեմ ուներ նաև աստիճանավորների ակումբը, որը նույնպես գրավում էր մի շարք սենյակներ [4]։ Ակումբները կազմակերպում էին զանազան երեկույթներ, զեկուցումներ, համերգներ, խաղեր։ Մեծ թվով քաղաքացիներ իրենց երեկոն անց էին կացնում ակումբներում։

Գործում էին մի քանի կամավորական ընկերություններ, որոնք

1 «Эриванские объявления», 1913, № 70։
2 Նույն տեղը, 1906, № 10։
3 Նույն տեղը, 1911, № 6, 1913, № 89։
4 Նույն տեղը, 1913, №№ 70 և 89։

նպաստում էին քաղաքի սանիտարական դրության բարելավմանը, դպրոցական և ընդհանրապես լուսավորական գործին, զբաղվում էին հանրօգուտ գիտելիքների տարածմամբ և այլն։ Այդ ընկերություններից էին բժշկական ընկերությունը, օգտակար գիտելիքների տարածման ընկերությունը, Կովկասի հայկական բարեգործական ընկերության Երևանի բաժանմունքը [1]։

Մեզ հետաքրքրող շրջանի Երևանի պատմության առանձնահատուկ կողմերից մեկը կայանում է հենց նրանում, որ այդ ժամանակ քաղաքում առաջին անգամ երևան է գալիս պարբերական մամուլը, որի դերը բնակչության մտավոր ու քաղաքական զարգացման բնագավառում կասկածից վեր է։

Երևանի առաջին թերթը «Պսակն» է, որ սկսել է լույս տեսնել 1880 թ. մարտի 15-ից։ Թերթի հրատարակումը, որոշ ընդմիջումներով, շարունակվել է մինչև 1884 թ. ապրիլի 7-ը, մինչև այդ տարվա առաջին և ընդհանրապես վերջին համարը։

«Պսակի» հրատարակությունը նշանակալից իրադարձություն էր Երևանի կուլտուրական և քաղաքական կյանքի բնագավառում։ Բայց այդ միայն երևանյան երևույթ չէր։ «Պսակն» իր դեմոկրատական ուղղությամբ ու նպատակներով դարձել էր համահայկական հետաքրքրության առարկա։ Դրա առաջին համարը լույս տեսնելուց հետո մի շարք տեղերից ստացվում են ողջույնի նամակներ, որոնց հեղինակները սրտանց ուրախանալով Երևանում առաջին թերթի հիմնադրմամբ, իրենց նամակներով խմբագրությանը բարեմաղթում են հաջողություններ։ Այդ նամակներից մեկում կարդում ենք.

«Երևանն է նահանգական քաղաքը հին Արարատյան նահանգի, ինչպես հնումն, նույնպես և այժմ Արարատյան կամ Երևանյան նահանգը սիրան է բոլոր հայերի...։

«Պսակը», որ հրատարակվում է Երևանում իբրև նահանգական քաղաքի թերթ, բարոյական պարտք է ստանձնում ճշմարիտ և հավատարիմ թարգման լինել յուր շուրջը պատող հասարակության։ Մեր ցանկությունն է, որ «Պսակը» լինի բերան ժողովրդի, խոսի հասարակության հոգով. առանց կրքի պատմի շինականի և քաղաքացու ցավերը։ Նախանձախնդրությամբ հարվածի շահամոլներին, որոնք հասարակությանը կեղեքում են հարստահարելով...։

Կովկասի հայերի մեջ երեսուն տարուց ավել է, որ լրագրությու-

1 Տե՛ս ЦГИА СССР в Ленинграде, ф. 102, 4-Д-во, 1908, д. 87, ч. 9, лл.1—3, «Նոսոք», 1914, № 22 և այլուր։

նը սկսվել է, թե Թիֆլիսի մեջ առաջին լրագիրը «Կովկաս», հետո «Մեղու» և այլն, իրենց սկզբնավորության տարիներում այն չէին, ինչ որ են այժմ «Մեղուն» և «Մշակը»։ Ամեն բան սկզբում խամ է լինում, բայց ժամանակը ուղղում է նրան։ «Պսակը» սկզբում գուցե խամ լինի, կարող է լավանալ, լավ և հմուտ աշխատակիցների ջանքով, խոհեմ և ճշմարտասեր բղթակիցների շնորհիվ և խմբագրի փորձառությամբ» [1]։


ՊՍԱԿ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱՎԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԼՐԱԳԻՐ.

«Պսակ» լրագրի տիտղոսաթերթը։

Ընթերցողը պարզ տեսնում է, թե նամակագիրն ինչպիսի հմայքով է արձագանքում «Պսակի» լույս ընծայումը, ինչքան մեծ արժեք է տալիս այդ երևույթին և ինչպիսի դեմոկրատական ուղղություն ու բովանդակություն է ցանկանում թերթին։ Ըստ երևույթին նամակագիրը հենց առաջին համարից արդեն կռահել էր թերթի անցնելիք դեմոկրատական ուղին։ Նա փաստորեն իր նամակում արտահայտել էր այն, ինչ թերթի հրատարակիչ-խմբագիրն արդեն արտահայտել էր առաջին համարով։

Ողջույնի մի այլ նամակում, որն ստացվել էր Թավրիզից, ասվում է. «Ուրախ, շատ ուրախ ենք Երևանում, Պարսկաստանի հայրևան նահանգաքաղաքում, լրագիր հրատարակվելու վրա։ Ուրախ ենք, որ մեզ ավելի մոտիկ լինելով ավելի շատ միջոց կունենա ռուսահայ ազգայինների հետ պարսկահայերի բարոյական հարաբերությունները մարմնացնելու—կապելու...։

Նվիրելով յուր խորին ակնածությունը նորակազմ խմբագրությանը կատարյալ հաջողություն է խնդրում և ցանկանում ձեռք առած սրբազան գործիդ Ձեզանից տեղաբնակությամբ հեռու—բայց սրտով շատ մոտ ձեր ազգակից պարսկաբնակ «Նժդեհը»» [2]։

1 «Պսակ», 1880, № 2։

2 Նույն տեղը։

Երևանի անդրանիկ թերթը իր բնույթով ուներ գրական, պատմական և մանկավարժական ուղղություն։ Նրա էջերում տեղ էին գտնում Երևանի նահանգի և մանավանդ Երևան քաղաքի ներքին կյանքի բազմաթիվ բնագավառներին վերաբերող մեծ ու փոքր հոդվածներ, զանազան տեղեկություններ։ Թերթի հրատարակիչ-խմբագիրը վասակ Պապաջանյանն էր, որին, ինչպես տեսանք, 80-ական թվականների սկզբներին մեղադրում էին հակացարական տրամադրությունների և ազգային-ազատագրական շարժմանն ակտիվ մասնակցելու մեջ։ Պապաջանյանի խմբագրած թերթը իրոք որ պրոպագանդում էր հակացարական տրամադրություններ, ազգային արժանապատվություն, Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելը համարելով յուրաքանչյուր հայի սրբազան գործը։

Ցարական գրաքննությանը «Պսակի» ինչ լինելը, նրա դեմոկրատական բնույթը, նրա հակասուլթանական և հակացարական տրամադրությունները հայտնի էին սկզբից ևեթ։ Թերթի յուրաքանչյուր համարը հնթարկվում էր ամենախիստ գրաքննության։ Սակայն «Պսակն» իր գոյության ավելի քան չորս տարիների ընթացքում, այնուամենայնիվ, ամենազանազան հնարանքներով կարողանում էր բթացնել ցարական գրաքննության չափից ավելի «բծախնդրությունը» և պատվով ծառայել ժողովրդին։ «Պսակի» էջերում մենք հանդիպում ենք քաղաքի կոմունալ և կուլտուրական կյանքի վատթար պայմանների նկարագրություններին, «քաղաքի հայրերիս» դումայի ձայնավորների, քաղաքագլխի, դումայի ու քաղաքային վարչության անճարակությունն ու անբանությունը մերկացնող հոդվածների։ «Պսակի» էջերում մենք միաժամանակ հանդիպում ենք բնակչության գրական-գեղարվեստական ճաշակը բարձրացնող գրվածքների, պատմա-բանասիրական հոդվածների, գիտական զանազան տեղեկությունների։

«Առողջապահական թերթ» ամսագրում իրեն ռեկլամ «Պսակի» խմբագրությունը հաղորդում է, որ թերթի բովանդակությունը կազմելու են առաջնորդող հոդվածները, բանասիրականները, ֆելիետոնները, տեղական լուրերը, խառը լուրերը, հայտարարությունները և այլն։ Այդ և ուրիշ հայտարարությունների մեջ «Պսակը» կոչված է ազգային, քաղաքական և բանասիրական մամուլ [1]։

«Պսակը» որպես նաև գրական թերթ իր ուշադրության կենտրոնում էր պահում տեղում հրատարակվող գրքերը, տալով նրանց արժանի գնահատականը և քննադատության ենթարկելով թերու-

1 «Առողջապահական թերթ» (ամսագիր), Երևան, 1882, №№ 1 և 2։

թյուններն ու սխալները։ Նրա թղթակիցներից մեկը միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե «Պսակը» «իբրև տեղական լրագիր նրա ուղղակի պարտքն է քննադատության տակ ձգել յուր սահմանում լույս տեսնող ամենափոքր գրություններն անգամ, և հրապարակ հանել յուր ժողովրդի առաջ նոցա բոլոր արժանավորություններն ու կատարելություններ։ Եթե քննադատություն է այն բովը, որի միջով պետք է անցնեն բարոյական ու մտավոր հանքերը՝ սրբվելով իրենց կեղտից... ապա ուրեմն «Պսակը» ինչպես նաև գրական լրագիր, պետք է հավատարիմ մնա այդ պաշտոնին»[1]։ «Պսակը» ծանրաշափական զգայնությամբ կատարում էր այդ պարտականությունները։

Ցարական օրգանների կողմից 1884 թ. ապրիլի 7-ին՝ այդ տարվա առաջին համարը լույս տեսնելուց անմիջապես հետո, ընդմիշտ դադարեցվում է «Պսակի» հրատարակությունը, իսկ նրա խմբագիր-հրատարակիչ Վ. Պապաջանյանը ազատագրական շարժումներին անձամբ և իր թերթով մասնակցելու համար ենթարկվում է պատժի։ «Պսակի» արգելումը ցարական ռեակցիոն և ձուլողական քաղաքականության արտահայտումներից միայն մեկն էր, մի քաղաքականություն, որը 80-ական թվականներին հայկական դպրոցների փակման ու վանազան այլ բռնությունների միջոցով ձգտում էր վերացնել այն ամենը, ինչ ազգային էր և ինչ կապված էր ազգային-ազատագրական շարժումների հետ։

«Պսակի» փակումից հետո Երևանում երկար ժամանակով, ընդհուպ մինչև XX դարի առաջին տասնամյակի վերջերը, մամուլային կյանքն ընդհատվում է, եթե նկատի չունենանք «Առողջապահական թերթ» միամսյա հանդեսը, որը հրատարակվում էր «Պսակի» հետ միաժամանակ, և «Երևանի հայտարարություններ» թերթիկը, որը մինչև 1908 թ. սոսկ հայտարարություններից բացի որևէ այլ նյութ չէր պարունակում։

«Պսակը» լույս է տեսել շաբաթը մեկ կամ երկու անգամ։ Սկզբում նա տպագրվել է «Զ. Գևորգյան և ընկ.» տպարանում, իսկ հետո իր սեփական տպարանում, որը գտնվել է Դոկտորական (այժմ Թումանյանի պողոտա) փողոցի վրա, Պողոս-Պետրոս եկեղեցու (այժմյան կինո-թատրոն «Մոսկվա»-ի տեղում) դիմաց, Նահապետ Հովակիմյանի տանը[2]։

1 «Պսակ», 1880, № 38։


2 Տե՛ս նույն տեղը, №№ 1—12 և № 35, «Առողջապահական թերթ», 1882, №№ 1 և 2, էջ 89։

Երևանի առաջին թերթի առաջին համարի լույս ընծայումից մեկ տարի հինգ ամիս անց՝ 1881 թ. հուլիսին լույս է տեսնում և նրա առաջին ամսագրի՝ «Առողջապահական թերթի» առաջին համարը։ Միամսյա այդ հանդեսի կյանքը տևում է մոտ երեք և կես տարի՝ 1881 թ. հուլիսից մինչև 1884 թ. դեկտեմբերը ներառյալ։ Տպագրվում էր ամիսը մեկ անգամ, յուրաքանչյուր համարը 1—2 տպագրական մամուլ ծավալով։ Ամսագրի բովանդակության ու բնույթի մասին մի քանի մանրամասն հայտարարություններ են տպագրվել հենց իր էջերում։ Ըստ այդ հայտարարությունների, նրա բովանդակությունը կազմում էր ժողովրդի առողջության մասին պետական-պաշտոնական կարգադրություններն ու որոշումները, առողջապահական բժշկական հոդվածներ՝ ժողովրդի առողջապահական պայմանների, բժշկական գիտության տարբեր բնագավառների, բժշկության ժողովրդական նշանակության մասին, բժշկական աշխատություններ, զանազան լուրեր ու հայտարարություններ[1]։ Ամսագիրը հրատարակվում էր բժիշկներ Ա. Ի. Հովհաննիսյանի, Ա. Բ. Բաբայանի, Գ. Տեր-Գրիգորյանի, Մ. Քալանթարյանի, Ա. Շահազիզյանի, Գ. Քոչարյանի և Բ. Նավասարդյանի ակտիվ աշխատակցությամբ[2]։ Խմբագիր-հրատարակիչը քաղաքային բժիշկն էր՝ Լևոն Տիգրանյանը, որի զրույցները, առողջապահությանն ու քաղաքի սանիտարական պայմաններին վերաբերող հոդվածները, բժշկագիտական աշխատությունները, որոնք կքվարկվեն իրենց տեղում, ամսագիրը դարձնում էին ավելի բովանդակալից և նպատակասլաց։ Ճիշտ է, ամսագիրը բժշկագիտական-մասսայական բնույթի էր, բայց դրանում տպագրված հոդվածները վերաբերում էին նաև հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներին։ «Առողջապահական թերթում» կարելի է հանդիպել քաղաքի բնակարանային պայմաններից մինչև համաճարակի առաջացման սոցիալ-տնտեսական դրդապատճառները լուսաբանող հոդվածների, ամուսնության ու երեխայի հիգիենայի վերաբերյալ եղած հոդվածներից մինչև բժշկագիտական լուրջ աշխատություններ։ Արտաքինից ամսագիրը «անշահ» բժշկագիտական էր, բայց ըստ էության «Պսակ» թերթի նման «Առողջապահական թերթն» էլ յուրօրինակ ձևով մերկացնում էր ցարական ինքնակալության նեխված կարգերը։ «Պսակի» հրատարակչության փակումից մի քանի ամիս անց դադարում է նաև «Առողջապահական թերթի» հրատարակումը։ Դա 1884 թ. վերջին

1 Տե՛ս «Առողջապահական թերթ», 1882, № 4։

2 Նույն տեղը։

էր, երբ ամսագրի խմբագիր Լևոն Տիգրանյանին «Պսակի» խմբագրի ու մի շարք առաջավոր այլ մտավորականների հետ միասին շուտով աքսորելու էին հարազատ քաղաքից։


ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԹԵՐԹ

«Առողջապահական թերթ» ամսագրի շապիկը։

«Առողջապահական թերթը» տպագրվում էր Էմին Տեր-Գրիգորյանի տպարանում [1], որը գտնվում էր վերջինիս սեփական տան բակում, Կարավանսարայի (Տեր-Գաբրիելյանի) փողոցի վրա։ Ամսագրի առաջին էջի վրա տպագրվում էր հետևյալ նշանաբանը. «Բժշկականությունը գործադրվում է նաև վայրենի ազգերի մեջ, իսկ առողջապահորեն ապրում են միայն լուսավորյալ ազգերը»։

Երևանի պարբերական մամուլի պատմության մեջ կարևոր դեր է խաղացել «Երևանի հայտարարություններ» թերթիկը, որը մեզ հետաքրքրող շրջանի Երևանի ամենաերկարատև կյանք ունեցած լրագիրն է։ «Երևանի հայտարարությունները» առաջին անգամ բկսել է լույս տեսնել 1883 թվականից։ Նրա հրատարակիչ-խմբագիրը Էմին Տեր-Գրիգորյանն էր։ Որոշ ընդմիջումներով թերթիկը՝ սովորաբար շաբաթը երեք անգամ, հայերեն լեզվով լույս է տեսել

[1] Տե՛ս «Առողջապահական թերթ», 1882, № 4, «Պսակ» 1883, № 4։

մինչև 1886 թ. հունվար ամիսը։ Թերթիկում տպագրվում էին քաղաքային և գավառական լուրեր, անեկդոտներ, հարցեր, տեղեկություններ տեղական շուկայի և ապրանքների գների մասին, հայերեն և ադրբեջաներեն հայտարարություններ [1]։ Թերթիկը փոքր ծավալով էր, կես թերթի չափով։ Դրանում զանազան կարգի նշված հայտարարություններից ու տեղեկություններից զատ հոդվածներ չէին զետեղվում։ Հրատարակիչ-խմբագիրը հայերեն լեզվով թերթիկ հրատարակելու համար պարտավորվել էր դրա պարունակած նյութերը սահմանափակել նշվածներով։ Էմին Տեր-Գրիգորյանը ինքը այդ ժամանակ կոլեգիական գրանցիչ էր (коллежский регистратор) և իբրև ցարական աստիճանավոր ցարական օրգանների կողմից շատ էլ անվստահելի անձնավորություն չէր համարվում։ Սակայն ո՛չ թերթիկի «անշառ» բովանդակությունը, ո՛չ նրա հրատարակիչ-խմբագրի ցարական պաշտոնյա լինելը և ո՛չ էլ նրա հրատարակած թերթիկի փոքր տիրաժն ու ծավալը չիրկեցին այն ցարական օրգանների հետապնդումներից։ Թերթիկի հայերեն հրատարակվելու փաստը միայն բավական էր, որ այն էլ արժանանար նույն բախտին, որին ենթարկվեցին «Պսակ» թերթն ու «Առողջապահական թերթ» միամսյա հանդեսը։ Ցարական գրաքննչական օրգանների զեկուցագրերի հիման վրա մամուլի գլխավոր վարչությունը 1885 թ. դեկտեմբերի 20-ին հրաման է արձակում Էմին Տեր-Գրիգորյանի «Երևանի հայտարարություններ» թերթիկը փակելու մասին [2]։ Երևանի նահանգապետի պարտականություններ կատարողը այդ հրամանի հիման վրա քաղաքի ոստիկանության միջոցով, հատուկ գրությամբ Էմին Տեր-Գրիգորյանից պահանջում է դադարեցնել թերթիկի հրատարակումը, այդ առթիվ նրանից վերցնելով հատուկ ստորագրություն։ Տեր-Գրիգորյանն իր գրավոր ստորագրության մեջ հետևյալն է ասում. «Ես՝ ներքոստորագրող կոլեգիական գրանցիչ Էմին Տեր-Գրիգորյանցս սույն ստորագրությունը տալիս եմ Երևանի քաղաքային ոստիկանական վարչությանն այն մասին, որ նորին գերազանցության (նահանգապետի պարտականություններ կատարողի— Թ. Հ.) 1885 թ. դեկտեմբերի 20-ի № 4320 գրությունն ինձ հայտարարված է, որի համար ստորագրում եմ։

Կոլեգիական գրանցիչ Էմին Տեր-Գրիգորյանց» [3]։

Թերթիկի հրատարակությունը ընդհատվում է ավելի քան 15

[1] ЦГИА СССР в Ленинграде. ф. 776, оп. 12, 1883, д. 79, л. 2։
[2] Նույն տեղը, թ. 4։
[3] Նույն տեղը, թ. 5։

տարի։ Էմին Տեր-Գրիգորյանն այդ տարիների ընթացքում պետական պաշտոնավարության հետ միասին շարունակում է զբաղվել քաղաքի ներքին կյանքով, հատկապես թատրոնով, որի մասին խոսք կլինի հետո։ Սակայն իրերի ընթացքը ցույց է տալիս, որ Տեր-Գրիգորյանը չէր հրաժարվել թերթ հրատարակելու մտադրությունից։ Այդ գործը նորից վերսկսելու համար նրան միայն անհրաժեշտ էին նպաստավոր պայմաններ։ Տեր-Գրիգորյանն այն մարդկացից չէր, որ երկնքից մանանա սպասեր։ Նա միջոցներ է որոնում իր թերթի հրատարակությունը վերսկսելու համար։ XIX դարի վերջերին Տեր-Գրիգորյանը կոնկրետ քայլեր է կատարում այդ ուղղությամբ։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ նրան չպետք է թույլատրեին նախկինի նման թերթը հայերեն հրատարակել։ Ուստի նա այս անգամ արդեն առաջ է քաշում թերթը ռուսաց լեզվով հրատարակելու հարցը և հրապարակորեն հայտարարում, որ իր թերթիկը հայտարարություններից բացի այլ բնույթի հոդվածներ չի պարունակելու։ Այդպիսի դիջման գնով Տեր-Գրիգորյանին հաջողվում 1900 թ. դեկտեմբերի 8-ին վերսկսել թերթիկի հրատարակությունը ռուսերեն՝ «Эриванские объявления» անունով։ Մինչև 1917 թվականը թերթիկը լույս է տեսնում որոշ ընդհատումներով, որոնցից ամենամեծը 1907—1908 թվականների ընդհատումն էր։ Սկզբում՝ 1900-ից մինչև 1908 թվականի վերջն ու 1909 թ. սկիզբը թերթիկը լույս էր տեսնում միայն ռուսերեն լեզվով և նրա բովանդակած նյութերը բաղկացած էին միայն տարբեր բնույթի ու ծավալի հայտարարություններից։ Նրանում տպվում էին քաղաքային դումայի ու վարչության, նահանգական վարչության (որի հայտարարությունները իրեն կանոն տպվում էին «Эриванские губернские ведомости» պաշտոնական թերթիկում), զանազան ընկերությունների, թատրոնների, մասնավոր մարդկանց տված հայտարարությունները, ապրանքների գնացուցակները, քաղաքային դումայի ընտրություններին մասնակցողների ցուցակները, մահազդներ, ցավակցություններ, երբեմն նաև հայտարարություններ ու կարճ հաղորդումներ հայերեն լեզվով։ Պատահում էին նաև հայտարարություններ ադրբեջաներեն։ Տիրաժը 1000—3000 էր։ Յուրաքանչյուր հայտարարություն տպագրվում էր 10 կոպեկով, իսկ թերթիկը քաղաքացիներին տրվում էր ձրիաբար[2]։ 1909 թ. երկրորդ քառորդից թերթիկը արդեն

[1] «Эриванские объявления», 1900, № 1։
[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 307, թ. 17։

մշտապես դառնում է երկլեզվյան՝ հայերեն-ռուսերեն, և հայտարարություններից բացի սկսում են տպագրել նաև զանազան նյութեր քաղաքի կյանքից՝ ջրմուղի, էլեկտրական լուսավորության, ձիաքարշի, քաղաքային դումայի ու վարչության գործունեության, ոռոգման ցանցի և այլ հարցերի վերաբերյալ։ Այդ փոփոխության մասին թերթիկի հրատարակիչ-խմբագիրը հետևյալն է գրում. «Արդեն ութ տարի է ինչ մենք շարունակում ենք պահպանել «Эриванские объявления» թերթիկի հրատարակությունը, տպագրելով միայն հայտարարություններ։ Իսկ այսուհետև տեղը պ. նահանգապետի թույլտվությամբ երբեմնապես կտպագրենք նաև փոքրիկ հոդվածներ, ռեցենզիաներ, անեկդոտներ, արտաքսություններ և այլն։


910 года. № 15. X-ый годъ. Суббота 20 Февраля.

ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ

Выходятъ отъ 1—3-хъ разъ въ недѣлю.

«Эриванские объявления» հայերեն-ռուսերեն թերթիկի տիտղոսաթերթը։

Մենք մեզ միանգամայն հետու ենք պահելու ժամանակակից արտաքին և ներքին հովերից, քաղաքական այլ և այլ կուսակցական միտումներից.— մեր գործը պետք է լինի միայն մեր քաղաքային ներքին կյանքը։

Հոդվածները կտպագրվեն կամ ռուսերեն լեզվով, կամ հայերեն, նայելով թե այս կամ այն տեղեկությունը, նկատողությունը, ռեցենզիան, անեկդոտը և այլն որ լեզվով է գրված—ռուսերեն թե հայերեն—նույն լեզվով էլ կտպագրվի։

Մեր թերթիկը կլինի ուրեմն ռուսերեն-հայերեն հրատարակություն, որպեսզի տեղիս երկու ազգությանց համար էլ հավասարապես մատչելի լինի և կհրատարակվի, ինչպես և մինչև այժմ, ձրի»[1]։

Դժվար չէ տեսնել «Երևանի հայտարարություններ» թերթիկի գոյության համար նրա հրատարակիչ-խմբագրի ցուցաբերած ե-

[1] «Эриванские объявления», 1908, № 49։

ռանդը և, ցարական օրգանների գործադրած խստությունների պայմաններում՝ «լեզու գտնելու» նրա մեծ հմտությունը։ Էմին Տեր-Գրիգորյանի թերթիկը խուսափում էր համապետական, քաղաքական ու համահասարակական գործերից։ Թերթիկի համար կարծես գոյություն չունեին 1905—1907 թթ. հեղափոխական շարժումները, Երևան քաղաքում կազմակերպված գործադուլները։ Սակայն թերթիկը հասարակությունից դուրս չէր գտնվում։ Քաղաքային դումայի ու վարչության, քաղաքի «հայրերի» գործունեության դեմ ուղղված թերթիկի հոդվածներն ու ֆելիետոնները նույնպես պայքարի ձև էին, որոնք, վերջ ի վերջո, ուղղված էին ցարական վարչական ապարատի «հինգերորդ անիվի»՝ քաղաքային բուրժուական «ինքնավարական» օրգանների դեմ։

Հայտնի են «Երևանի հայտարարություններ» թերթիկի խմբագիր-հրատարակչի և քաղաքային ինքնավարության օրգանների ու դրանց ներկայացուցիչների միջև գոյություն ունեցող տարաձայնություններն ու պայքարը, որոնք արտաքնապես լոկ կոմունալ հարցերին վերաբերող վեճեր էին, բայց ըստ էության թերթիկի կողմից պրոպագանդա էր՝ ուղղված քաղաքային բուրժուական դումայի և նրա վարչության դեմ։ Այդ պայքարի ընթացքում էմին Տեր-Գրիգորյանը [1], ինչպես նշվել է իր տեղում, նույնիսկ կանգնել է դատի առաջ։

«Эриванские объявления»-ն ուներ ընդգծված երգիծաբանական ուղղություն։ Նրա էջերում տպագրվում էին բազմաթիվ ֆելիետոններ, այլաբանական բառարաններ, նոր տարվա առթիվ՝ «բարի ցանկություններ»։ Թերթիկի համար ավանդույթ էր դարձել երգիծանքի և ընկերական շարժի միջոցով նոր տարվա առթիվ սուր ծաղրի և քննադատության ենթարկել քաղաքային օրգանները, քաղագլխին, քաղաքի հարուստներին և այլոց։ Այսպես, օրինակ, թերթիկի բաժանորդներից մեկը (իբրև բարեմաղթություններ ու դիտողություններ) 1910 թ. նոր տարվա առթիվ գրում է.

«Ոստրավային—«Քուն եղիր բալաս» երգը գլխից մինչև վերջ։

Դումային— մեկ դյուժին փաստաբաններ, որպեսզի պատասխանատվության ենթարկեն քաղաքի գործերը վերաքննողներին։

Քաղաքի ձայնավորներին—խնամիներ, ամագներդ Երուսաղեմ։

Մեր քաղաքագլխին—ոսկե մեդալ՝ իր «խորին համոզմունքն-

1 Էմին Տեր-Գրիգորյանը քաղաքի ամենահայտնի անձնավորություններից մեկն էր։ Նրան հասցեագրած նամակների վրա ուղղակի գրում էին՝ Երևան, Էմին Տեր-Գրիգորյանին, առանց հասցեն ցույց տալու։

րի» համար և առողջություն՝ իր ծառայությունը գոնե մի տարի առանց արձակուրդների կատարելու համար։

Ինժ. Միրզոևին— Թե դու ջուր կարող ես բերել՝ հավատում եմ, իսկ Թե երևանցիք քո բերած ջուրը չեն տեսնելու՝ չեմ կասկածում։

«Ամպեր» ընկերությանը— ամեն բան ունեք, իսկ լույսի կողմից գլուխներդ ողջ։ Մի քիչ հույս, մի քիչ լույս։

Մեր հարուստներին—պուլիկներ և մենծ մենծ պուլիկներ։ Արծաթ ու ոսկի, մի փոքր էլ՝ հոգի։

Աղքատներին— հող էիր, հող էլ դարձիր։

Հայ երիտասարդությանը— անունը կա ինքը չկա։

Հայ օրիորդներին — կրթված ծնողներ։

Բ. Մեհրաբյանին — մի նոր գերեզմանատուն [1]։

«Эриванские объявления»-ի խմբագրին — տուրուդմփոց և բերդ» [2]։

«Эриванские объявления»-ն չհաշված, XX դարի Երևանի առաջին թերթը «Հրաշղանն» էր, որ լույս է տեսել 1908—1909 թթ.։ Այն ըստ իր բնույթի գրական, հասարակական, տնտեսական լրագիր էր և սովորաբար լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ [3]։ Չափսը լրիվ թերթի չափ էր, բաղկացած 4 էջից։ Խմբագիր-հրատարակիչը Պողոս Կանդուրալյանն էր, որը միաժամանակ թերթի ամենաակտիվ թղթակիցն էր։ Թերթի տպագրված հոդվածների մի զգալի մասը վերաբերում էր քաղաքի ներքին հասարակական ու տնտեսական կյանքին։ «Հրաշղանը» ամենաչափավոր թերթերից մեկն էր։ Տպագրվում էր «Լույս» տպարանում։ 1909 թ. վերջերից թերթի հրատարակումը ընդմիշտ դադարում է։

«Հրաշղան» լրագրի հետ միաժամանակ Երևանում լույս էր տեսնում «Эриванские губернские ведомости» պաշտոնական թերթիկը, որը, ի տարբերություն առաջինի, գոյություն ուներ տարիներ շարունակ։ Նրանում տրվում էին պետական-պաշտոնական որոշումներն ու կարգադրությունները և այլևայլ հայտարարություններ։ Կային նաև զանազան՝ գլխավորապես վիճակագրական նյութեր տնտեսական կյանքից։ Այնպես որ, ըստ էության «Эриванские губернские ведомости»-ն լրագիր չէր, այլ պաշտոնական ազդա-

1 Ըստ հաղորդումների, «Մլեր» կոչված գերեզմանոցի տեղերը տրամադրելիս քաղաքային տեխնիկ Մեհրաբյանը իր մեծ գումար էր յուրացրել։ Հոդվածագրի ակնարկը վերաբերում է դրան։

2 «Эриванские объявления», 1910, № 1։

3 Նույն տեղը. 1909, № 1։

բարությունների թերթիկ, թեպետև պաշտոնական աղբյուրներում այն մշտապես կոչված է թերթ [1]։ Նույն կարգի թերթիկ էր նաև այդ նույն ժամանակներում հրատարակվող «Городские объявления»-ն [2], բայց ոչ թե նահանգի, այլ քաղաքի մասշտաբով։

Քաղաքի բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը նպաստում էր նաև մի այլ թերթ՝ «Эриванский вестник»-ը, որն օրաթերթ էր և լույս էր տեսնում 1911 թվականից։ Թերթը հրապարակում էր օգտակար գիտելիքների տարածման երևանի բնակերության։ «Эриванский вестник»-ը փաստորեն եռալեզու թերթ էր, նրանում տպագրվում էին ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն հոդվածներ [3]։ Թերթը, կարելի է ասել, բազմաբովանդակ էր։ Նրա էջերում մենք հանդիպում ենք գիտության ու տեխնիկայի նորություններին և բնագիտության տարբեր հարցերին նվիրված հոդվածների ու հաղորդումների, բնակչության մեջ օգտակար գիտելիքները տարածելու մասին ընդարձակ հոդվածների ու դիտողությունների։ Թերթն ուներ նաև վերջին լուրերի բաժին։

1911—1912 թթ. Երևանում լույս էր տեսնում նաև «Նոր ձայն» գրական-հասարակական շաբաթաթերթը, որը տպագրվում էր «Լույս» տպարանում։ Թերթի առաջին համարը լույս է տեսել 1911 թ. սեպտեմբերի 17-ին։ «Эриванский объявления»-ի թերթիկի խմբագրությունը, ողջունելով «Նոր ձայնի» լույս ընծայումը, գրում է. «Ամսույս 17-ին լույս տեսավ Երևանում «Նոր ձայն» շաբաթաթերթի 1-ին համարը խմբագրությամբ և հրատարակչությամբ Տեր-Աբրահամյանի։

Շաբաթաթերթը իր արտաքինով, մինչև իսկ ներքինով, գրավիչ տպավորություն է թողնում...

Ցանկալի է, որ տեղույս այն դասակարգը, որն իրեն ինտելիգենտ է համարում և գրականության ու լրագրության խոսքի նախձախինդիր՝ միանան պ. Տեր-Աբրահամյանի հետ և մեջք-մեջքի տված առաջ տանեն այս «Նոր ձայնը» հարատև և անհրաժեշտ գաղափարական ձայն դարձնելու համար։

Սրտանց ողջունում ենք» [4]։

Վահան Տեր-Աբրահամյանի շաբաթաթերթը, սակայն, երևանի

---

1 Տե՛ս, օրինակ՝ «Памятная книжка Эриванск. губернии на 1908 г.». отд. 4, էջ 19։

2 «Кавказский календарь на 1914 г.», отд. статистический, էջ 232։

3 «Эриванские объявления», 1911, № 6։

4 Նույն տեղը, № 66։

մյուս թերթերի նման նույնպես երկար կյանք չի ունենում. 1912 թ. ընդմիշտ դադարում է։

Նշվածներից բացի, մեզ հետաքրքրող շրջանի երևանում, տարբեր տարիներում լույս են տեսել դեմոկրատական ուղղություն ունեցող մի քանի թերթեր։ Երևան քաղաքի և Երևանի նահանգի սոցիալ-դեմոկրատական առաջին թերթը լույս է տեսել ռուսերեն լեզվով 1907 թ. փետրվարին և կոչվել է «Факты»։ Սա ամենակարճ կյանք ունեցող թերթերից մեկն է. գոյություն է ունեցել միայն 1907 թ. փետրվար և մարտ ամիսներին, հրապարակվել է ընդամենը երեք համար։ Թերթի խմբագիրը քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ակտիվ անդամ և նուանդուն գործիչ իրավաբան Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին էր, որը 1899—1904 թթ. ուսանել էր Մոսկվայի համալսարանում։ Թերթն ամբողջապես գտնվում էր ՌՍԴԲԿ-ի Երևանի կազմակերպության տրամադրության տակ։ Թերթի հոդվածները վերաբերում էին Պետական դումայի բնույթին ու ընտրություններին, անդրկովկասյան մասշտաբով զեմստվոյական համագումար հրավիրելուն, Պետական դումայում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի աշխատանքներին, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առօրյա աշխատանքներին, ձեռնարկատերերի կողմից գործադրված ճնշումներին ու բռնություններին և այլն։ Թերթում տպագրվել են նաև ընդհանուր քննախոսական հոդվածներ, ֆելիետոններ, նամակներ։

«Факты»-ի հրատարակության դադարումից չորս տարի անց Երևանում սկսում է լույս տեսնել «Կռան» հասարակական, տնտեսական և գրական թերթը, որն ուներ դեմոկրատական ուղղություն։ Թերթը տպագրվում էր «Լույս» տպարանում։ Նրա խմբագիրը Մուշեղ Բագրատունին էր, որը 1893—1905 թթ. հնչակյան կուսակցության անդամ էր, իսկ դրանից հետո մի շարք այլ հնչակյանների հետ միասին, հեռանալով այդ կուսակցությունից, մտել էր ՌՍԴԲԿ մեջ։ Նա մամուլի նուանդուն գործիչ էր և բեղմնավոր ժուռնալիստ։ Հանդես գալով «Խ. Նար», «Խ. Նարիմյան», «Փալանդուզ Մկո» ծածկանուններով՝ Մ. Բագրատունին դեմոկրատական ու բոլշևիկյան մի շարք թերթերում զետեղում էր իր մարտական հոդվածներն ու ֆելիետոնները, որտեղ մերկացնում էր հակահեղափոխական կուսակցությունների՝ հատկապես դաշնակցության էությունը։ Նրա հոդվածների մի զգալի մասը նվիրված է Երևան քաղաքի ներքին կյանքին, շինարարությանը, աշխատավորների վատթար պայմաններին, քաղաքային վարչության ու դումայի անշնորհք աշխատանքին, արդյունաբերական ու առևտրական հիմնարկներում տիրող դրությա-

նը։ Քաղաքում մեծ մասսայականություն էին վայելում մանավանդ նրա ֆելիետոնները, որոնք իրենց դիպուկությամբ ու անմիջականությամբ գրավում էին շատ ընթերցողներ։


«Կռանը» հիմնականում երգիծաբանական բնույթ ուներ և, իբրև այդպիսին, երևանի առաջին թերթն էր։ Սակայն նրա բովանդակությունը չէր սահմանափակվում միայն երգիծաբանությամբ։ Նրա էջերում տեղ են գտել նաև գրականագիտական, ուղեգրական հոդվածներ, չափածո երկեր, տարբեր բովանդակությամբ՝ թարգմանված նյութեր։ 1913 թ. հունվարից «Կռանը» հրատարակվում է «Նոր մամուլ» անունով, որն առաջինից ոչնչով չէր տարբերվում։ Այդ մասին «Эриванские объявления» թերթիկում տրված է հետևյալ հայտարարությունը, որը բերում ենք համառոտագրումներով։ «Երրորդ տարի։ Բացված է բաժանորդագրություն 1913 թ. «Կռան» հասարակական, տնտեսական և գրական թերթի, որը հունվարից կհրատարակվի «Նոր մամուլ» անունով և լույս կտեսնի շաբաթական երկու անգամ...

«Կռանը» («Նոր մամուլը») հրատարակվելու է նույն ծրագրով ու ուղղությամբ որպիսին նա ընդգծել է իր հրատարակության առաջին օրից ու անշեղ ընթացել...» [1]։

«Նոր մամուլը» նույնպես հոօրյա երգիծաբանական թերթ էր։ Նրա խմբագիրը դարձյալ Մ. Բագրատունին էր։ Տպագրվում էր սկզբում «Կուլտուրա», ապա «Լույս» տպարանում։ 1914 թվականից դադարում է։

Դեմոկրատական ուղղություն ունեցող «Կռանը» և նրա շարունակությունը կազմող «Նոր մամուլը» չհաշված՝ սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկյան երկրորդ թերթը Երևանում «Խոսքն» է, որը լույս է տեսել 1913—1914 թթ., ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության անդամ Ա. Մելիքյանի խմբագրությամբ և հրատարակչությամբ [2]։ «Խոսքը» շաբաթաթերթ էր, նրա առաջին համարը լույս է տեսել 1913 թ. դեկտեմբերի 30-ին, իսկ վերջին, 25-րդ համարը՝ 1914 թ. հունիսի 20-ին։ Բնույթով հասարակական, տնտեսական և գրական թերթ էր։ Թերթի ուղղության, նպատակների և գաղափարախոսության մասին հակիրճ կերպով ասված է հենց նրա առաջին համարի առաջնորդող հոդվածում, որտեղ կարդում ենք.

«Հիրավի մեր կյանքն այնքան բարդանում է, միատարր և միաձույլ ժողովուրդը այնպիսի խոր շերտավորումների է ենթարկվում, տնտեսական հարաբերությունները այնքան բարդ և բազմատեսակ են դառնում, մտավոր պահանջները այնքան լայնանում են, որ ընթերցող հասարակությունը չի կարող այլևս բավականանալ միայն մի քանի թերթերով։ Գավառի կարիքների և պահանջների թիվը այնքան է մեծանում, նրանց հետ կապ ունեցող հարցերը այնպիսի կարևորություն են ստացել, որ հարկադրական անհրաժեշտություն է դառնում՝ բուն գավառում ունենալ մամուլ՝ այդ կարիքներին ու պահանջներին արձագանք տալու համար...


«Խոսք» լրագրի տիտղոսաթերթը։

...Մենք հաճախ ստիպված ենք լինելու կանգ առնել համապետական բնույթ կրող տնտեսական ու քաղաքական հարցերի վրա։ Կենսական խնդիրներին մոտենալու, շոշափելու և նրանց հասարակական արժեքը որոշելու համար պետք է ունենալ հայտնի սոցիոլոգիական և գիտական տեսակետ, մի կայուն և հարատև չափանիշ...

Մեր համոզմունքով՝ այդ հայեցակետը կարող է լինել միայն պատմական մատերիալիզմը, դասակարգային պայքարի թեորիան, այդ արժեքաչափը կարող է լինել միայն՝ նյութական բարիքներ ստեղծող աշխատանքը։ Աշխատավոր տարրն է, որ ստեղծում է

1 «Эриванские объявления», 1912, № 91։
2 Նույն տեղը, 1914, № 2։

մարդկային կուլտուրան, նա է, որ մեզ տանում է դեպի քաղաքակրթություն և լավագույն ապագան...

...Կարծում ենք, որ գավառական մտավորականության որոշ մասը՝ տոգորված ժամանակակից լավագույն գաղափարներով՝ հրապարակ կգա կյանքի հասունացած և հասունացող կարիքներին և պահանջներին արձագանք տալու» [1]։

Թերթի նպատակը միանգամայն պարզ է։ Նա իր առաջ խնդիր էր դնում մատերիալիստական և դասակարգային պայքարի դիրքերից ելնելով պրոպագանդել պատմության մեջ նյութական բարիքներ ստեղծող աշխատավորների խաղացած դերը, մերկացնել ժամանակակից հասարակական հարաբերությունների բուրժուական էությունը, հեղափոխական գաղափարներ տարածել բնակչության լայն զանգվածների մեջ, շոշափել տնտեսական ու քաղաքական կարևորագույն հարցեր։ «Խոսքի» դերն առանձնապես պատասխանատու և մեծ էր մանավանդ այն պատճառով, որ այդ թվականներին Երևանում ՌՍԴԲԿ-ի միասնական մի կազմակերպություն չկար։ Կուսակցական աշխատանքի, պրոլետարական հեղափոխության գաղափարների տարածման, դասակարգային պայքարի խնդիրների, ժամանակակից հասարկության արատները մերկացնելու և աշխատավորությանը գալիք մարտերին նախապատրաստելու համար «Խոսքը» առանձնել էր մեծ պարտականություն և պատվով էր կատարում այն։

Ինչպես տեսանք, մեզ հետաքրքրող շրջանի տարբեր տարիներում Երևանում հրատարակվել են 11 անուն թերթեր, թերթիկներ և մեկ ամսագիր։

Բացի նշվածներից, Երևանն ուներ նաև երկու այլ պարբերական. «Обзор Эриванской губернии»-ն, որը հրատարակվում էր տարին մեկ անգամ, և «Памятная книжка Эриванской губернии»-ն, որը սովորաբար հրատարակվում էր յուրաքանչյուր զույգ տարին մեկ անգամ։ Դրանք երկուսն էլ պաշտոնական նյութերի և մասամբ առանձին անհատների գրչին պատկանող փոքր աշխատությունների ժողովածուներ էին։ Բովանդակությամբ այս երկու պարբերականները իրարից քիչ էին տարբերվում։ Դրանց էջերում պարբերաբար տրվում էին բնակավայրերի ու նրանց բնակիչների, դպրոցների, նահանգի, նրա գավառների ու բնակավայրերի տնտեսական ցուցանիշների, կուլտուրայի տարբեր բնագավառների, բնակչության աղգագրության և երկրի աշխարհագրության, պատմության ու վարչական

1 «Խոսք», Երևան, 1913, № 1։

վիճակի մասին ամենամանրամասն տեղեկություններ։ Իրրև պաշտոնական և պարբերական հրատարակություններ, դրանք առաջնակարգ սկզբնաղբյուրներ են Երևանի նահանգի և նրա կենտրոն Երևան քաղաքի ընդհանուր պատմության և դրա առանձին ճյուղերի՝ տնտեսական կյանքի, կուլտուրայի, վարչական կարգի, քաղաքական կյանքի պատմության համար, քանի որ ցարական պաշտոնական այդ տվյալները ունեն արատավոր, հակասական շատ կողմեր, որոնք անքննադատ օգտագործելու դեպքում կարող են հանգեցնել ոչ ճիշտ եզրակացությունների։ Պետք է նշել, որ «Обзор»-ների ու «Памятная книжка»-ների վիճակագրական նյութերն ամբողջապես տրամադրում էր Երևանի նահանգական վիճակագրական վարչությունը, որի տեղեկությունների մեծագույն մասը տեղ էր գտնում նաև Թիֆլիսում յուրաքանչյուր տարին մեկ գրքով հրատարակվող «Кавказский календарь»-ի մեջ։

Մամուլի զարգացումը և գրքի տպագրության գործի կազմակերպումն անմիջապես կապված էին տպագրական համապատասխան բազա ստեղծելու հետ։ Երևանում առաջին տպարանը հիմնել է Զաքարիա Գևորգյանը 1874 թվականին [1], որը սկզբում առանձին էր տիրապետում այդ տպարանին, իսկ հետո, մեկ-երկու տարի անց՝ իր կառավարիչ էմին Տեր-Գրիգորյանի հետ միասին։ Վերջինս գրում է, որ ինքն, իրրև Գևորգյանի տպարանի կառավարիչ, ամսական ստանում էր 45 ռ. աշխատավարձ, որի մի մասը՝ 20 ռուբլին, ըստ 1876 թ. հունվարին կնքած պայմանի թողնում էր Գևորգյանի մոտ, որպեսզի հինգ տարվա ընթացքում կուտակված այդ գումարով գնի և մենակ իր սեփականությունը դարձնի այդ տպարանը։ Իրոք որ, 1880 թ. էմին Տեր-Գրիգորյանը իր աշխատավարձից խնայած միջոցներով գնում է Զ. Գևորգյանի տպարանը [2]։ Դա Երևանի առաջին տպարանն է և իր գոյությունը պահպանել է մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։

Քանի դեռ քաղաքում Զ. Գևորգյանի տպարանը միակն էր, այն ուներ մեծ օգուտներ։ Նրա վրա էին ծանրացած քաղաքի պաշտոնական և ոչ պաշտոնական կազադրությունների, հայտարարությունների, ցավակցությունների ու մահագդների, արատակարգ լուրերի ամբողջ տպագրությունը։ Տպարանի ծանրաբեռնվածությունը ա-

1 «Պատկ», 1880, № 38։

2 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերական-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ թ. 11—12, «Պատկ», 1880, № 38։

ռանձնապես մեծ էր 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։ Այդ տարիներին տպարանի օգուտներն արտակարգ մեծ էին։ Հենց այդ օգուտներն էլ, ինչպես ասված է «Պսակ» թերթում, «գրգռեցին մի քանի պարոնների ախորժակը նոր տպարան բանալու» [1]։ 1879 թ. արդեն շարք է մտնում Երևանի երկրորդ՝ Աբգար Գուլամիրյանցի տպարանը [2], որը նույնպես սկսում է տպագրել զանազան անկետաներ, հայտարարություններ և կարգադրություններ։

Ինչպես ասվեց, 1880 թ. լույս է տեսնում «Պսակ» շաբաթաթերթը։ Նրա առաջին համարները տպագրվում են Զ. Գևորգյանի և Էմին Տեր-Գրիգորյանի տպարանում, բայց շատ շուտով ակնհայտ է դառնում, որ փոքր տիրաժ ունեցող «Պսակի» տպագրությունը ուրիշի տպարանում միանգամայն անշահավետ է և կապված մեծ անհարմարությունների հետ։ «Պսակի» հրատարակիչ-խմբագիրը թերթի լույս աշխարհ գալուց մի քանի շաբաթ անց արդեն ստեղծում է իր սեփական տպարանը, որը հայտնի է դառնում «Պսակի» անունով [3]։ Վերջինս արդեն քաղաքի երրորդ տպարանն էր։

Մինչև XX դարի սկզբները Երևանում այլևս նոր տպարաններ չեն հիմնվում։ Դրանց կարիքը չէր էլ զգացվում։ «Պսակի» թղթակիցը նշում է, որ նշված փոքրիկ տպարանների մեջ մշտապես գործելու հնարավորություն ուներ միայն «Պսակի» տպարանը, որն ուներ իր մշտական աշխատանքը՝ թերթի տպագրությունը, իսկ մյուս երկու տպարանների աշխատանքը կախված էր պատահական հանգամանքներից։ Ահա թե նա ինչ է գրում Երևանում մի քանի տարվա ընթացքում մեկը մյուսի հետևից հիմնադրված երեք տպարանների մասին. «Եվ այսպես՝ ամենակարճ միջոցում՝ մի տպարան անգամ չունեցող Երևանը մեկ անգամից երեք տպարանի տեր դարձավ։

Շատ հասկանալի է, որ այդ տպարանները, հիմնված լինելով առանց որոշ նպատակի և անհրաժեշտ պահանջի, որպիսին է լուսավորության և առաջադիմության պահանջը, չէին կարող առանց վնասի գոյություն ու հարատևություն ունենալ։ Ինչպես ասացինք, նոցանցից միայն «Պսակ» լրագրի տպարանը ունի յուր մշտական նյութը, ապա ուրեմն և մշտական գոյության երաշխավորությունը։

1 «Պսակ», 1880, № 38։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։

Իսկ մնացածները զբաղվելով լոկ հայտարարությունների և գործերի տպագրությամբ՝ կախված էին բախտի և հանգամանքների բերմունքից։ Գործերի համար մեկ տպարանն էլ բավական է, իսկ երեքը շռայլություն է արդեն, մանավանդ երբ նոցանից երկու քայլ հեռու կանգնած է էջմիածնի հսկա տպարանը» [1]։

Տպարանները ավելի ողորմելի վիճակի մեջ են ընկնում մանավանդ 1884—1885 թթ. հետո, երբ արգելված էր «Պսակի», «Առողջապահական թերթի» և «Երևանի հայտարարությունների» հրատարակությունը։ Այժմ արդեն անկետաներից ու պաշտոնական թերթերից բացի, Երևանի տպարանները այլևս մշտական աշխատանք չունեին, եթե չհաշվենք դրանցում երբեմն տպագրվող մանր-մունր գրքերը, որոնք մեծ ու մշտական աշխատանքի օբյեկտ չէին կարող լինել։

Այնուամենայնիվ, նշված տպարանները շարունակում էին իրենց գոյությունը մի կերպ քարշ տալ։ Քաղաքի բնակչության թվի աճման, կուլտուրական մակարդակի զգալի բարձրացման, գրքերի ու թերթերի հրատարակման շնորհիվ XIX դարի վերջերից տպարանների գերը մեծանում է։ 1897 թ. մասնավոր տպարանների կողքին հիմնադրվում է և նահանգական վարչության տպարանը [2], որը զբաղվում է պաշտոնական գրությունների, թերթիկների և կարգագրությունների տպագրությամբ։ XX դարի երկրորդ տասնամյակի սկզբներից Երևանում արդեն հիշատակվում է հինգ տպարան [3], որոնցից հատկապես հայտնի էին «Լույսը» և «Կուլտուրան», իսկ 90-ական թվականներին ավելի հայտնի էր Ռ. Կ. Էդելսոնի տպարանը։

Հայտարարություններից, անկետաներից ու պաշտոնական թղթերից բացի Երևանում հրատարակվել են բժ. Լևոն Տիգրանյանի ու Ստ. Զելինսկու մի քանի փոքրիկ գործերը, Էմին Տեր-Գրիգորյանի մի քանի պիեսները, ուրիշ լեզուներից թարգմանված գրքույկներ, Դ. Դ. Պագիրևի կազմած ժողովածուն («Эриваский сборник», вып. 1, 1892), որի մասին նշվեց մի այլ առիթով և այլն։ Մեզ հետաքրքրող շրջանի Երևանում ծավալուն և մնայուն գրքեր չեն հրատարակվել։ Այդպիսիները նահանգում հրատարակվում էին միայն Էջմիածնում, որի տպարանը իր մեծությամբ ու հարմարություններով այն ժամանակվա ամենահայտնի տպարաններից մեկն էր։

1 «Պսակ», 1880, № 38։
2 «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», отд. 4, էջ 20։
3 ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 113, թ. 7։

Աղքատիկ է նախասովետական Երևանում հրատարակված գրականությունը։ Բայց և այնպես այդ է մեր մայրաքաղաքի անցյալից բերած ժառանգությունը և հետևապես արժանի առանձին ուշադրության։ Միանգամայն ընդունելի և ժամանակակից պահանջներին համապատասխան կարելի է համարել «Պսակիկ» թղթակիցներից մեկի այն կարծիքը, թե Երևանում հրապարակված գրքերը «ինչքան էլ մանր լինեն..., ինչքան էլ պակասավոր մինչև անգամ քննադատությունից ստոր լինեն նոքա, ինչքան էլ աննշան ու անարժան լինեն գրականության շարքը մտնելու, այնուամենայնիվ... դարձյալ պետք է փոքր ի շատե ուշադրության տակ առնել նոցա։

Մեր աղքատ գրականության մեջ, ուր տարեկան հազիվ մի քանի գրքեր լույս աշխարհ են գալիս և որի համար մեծ նշանակություն ու ազդեցություն կարող է ունենալ աննշան գրականությունն անգամ, մի այդպիսի գրականության մեջ ամեն բան արժանի է ուշադրության, բայց ուշադրության միայն՝ և ոչ քաջալերի»[1]։

XX դարի սկզբներից զանազան գրքերի հրատարակման գործում Երևանում զգալի առաջադիմություն է կատարվում։ Սակայն այնուամենայնիվ այդ բնագավառում նահանգի առաջնության դափնին շարունակում էր գտնվել էջմիածնի ձեռքին։

Տեղում հրատարակված և այլ վայրերից ստացվող գրականությունը սկզբնական շրջանում վաճառվում էր ընդհանուր խանութներում այլ ապրանքների հետ միասին։ 80-ական թվականներից սկսած Երևանում արդեն բացվում են հատուկ գրախանութներ և գրենական պիտույքների կրպակներ։ Այդ կարգի խանութների թիվը Երևանում 3 էր։ Երկու այդպիսի խանութներ էլ գտնվում էին Ալեքսանդրոպոլում, իսկ նահանգի մյուս բնակավայրերում գրախանութներ չկային[2]։ Երևանի գրախանութների մեջ 80—90-ական թվականներին հայտնի Ներսես Սիմոնյանի գրախանութն էր՝ լայն ռեկլամվող, «Մանուկների բարեկամ» («Друг детей») կոչված խանութը։

80-ական թվականներին Երևանում հրատարակված գործերի մեծագույն մասը բաժին էր ընկնում «Պսակիկ» և էմին Տեր-Գրիգորյանի տպարաններին։ Ըստ «Առողջապահական թերթ» ամսագրի հաղորդումների, «Պսակիկ» տպարանում նրա գոյության սկզբից մինչև 1882 թ. ապրիլի վերջերը հրապարակվել էին հետևյալ գրքերը.

1 «Պսակ», 1880, № 38։

2 «Кавказский календарь на 1896 г.», отд. 5, էջ 198, «Обзор Эриванской губернии за 1896 г.», էջ 34։

1. Վ. Մադաթյան, Կրոթ-կրոթ, ոդևիլ մեկ գործողությամբ, հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով։

2. Սիմոնյան—Մելյան, Տրագիր և ժամանակագրական աղյուսակ ընդհանուր և ազգային պատմության՝ հին դար։

3. Հ. Աթանասյան, Երևանի նահանգի բուսականությունը։

4. Բժ. Լևոն Տիգրանյան, Մարդակազմություն հայ դպրոցների համար։

5. «Վարսենիկ», մանկական վեպ, թարգմանություն Հարությունյան—Տեր-Աստվածատրյանի։

6. «Միծեռնակի բունը», թարգմանություն Ալիխանյան—Արծրունու։

7. «Ի՞նչ է խոսում սենյակը», թարգմ. Հարությունյան—Տեր-Աստվածատրյանի։

8. «Անմահական խնձոր», ժողովրդ. հեքիաթ, թարգմ. Հարությունյան—Տեր-Աստվածատրյանի[1]։

Նույն ժամանակներում էմին Տեր-Գրիգորյանի տպարանում տպագրվել են նրա իսկ պիեսները։ Դրանք էին.

1. «Էլ Ջարես ինչ կամ երկու սիրահար», կատակերգություն մեկ արարվածով։

2. «Մոդա», կոմեդիա մեկ արարվածով։

3. «Կովապատճառը ես էի», կոմեդիա-ոդևիլ մեկ արարվածով։

4. «Ուսուցիչներ», կատակերգություն մեկ արարվածով։

5. «Ջրկանքի զոհ», դրամա 5 գործողութ. և 6 տեսարաններով (պատկերներ կովկասյան հայերի կյանքից)։

6. «Փեսացուներ», կոմեդիա-վոդևիլ մեկ արարվածով, քաղված «Ջրկանքի զոհ» դրամայի 2-րդ և 5-րդ գործողություններից[2]։

Ինչպես տեսնում ենք, Երևանում հրապարակված առաջին գրքերը մեծ մասամբ տարբեր բնույթի ու բովանդակության պիեսներ էին։ Դրանց մի մասը ինքնուրույն էր, իսկ մյուս մասը՝ թարգմանական։ Պիեսների մեծ մասը պատկանում էր էմին Տեր-Գրիգորյանի գրչին, մի անձնավորություն, որի գործունեությունը սերտորեն առնչված էր Երևանի ինքնագործ թատրոնի հետ։ Մյուս հեղինակներից էին՝ բժ. Լևոն Տիգրանյանը, Ստ. Զելինսկին, Սիմոնյան-Մելյանը, Հ. Աթանասյանը և ուրիշներ։ Թարգմանիչներից հայտնի էր՝ վերը նշված Հարությունյան—Տեր-Աստվածատրյանը։

1 «Առողջապահական թերթ», 1881, № 6, 1882, № 4։

2 Նույն տեղը, 1882, № 1։

80—90-ական թվականների գործիչների մեջ առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանա Ստ. Զելինսկին, որ չնայած ռուսական ազգանվանը ազգով հայ էր, և Լևոն Տիգրանյանը, որոնց մասին արդեն հարկ է եղել մի քանի անգամ նշել։

Ս. Պ. Զելինսկին 80—90-ական թվականներին Երևանի արական պրոգիմնազիայի դասատու էր։ Նա մասնագիտությամբ բնագետ էր և իրրև հետաքրքրասեր ու հաճախակի ճանապարհորդություններ կատարող, լավ ծանոթ էր Անդրկովկասի ժողովուրդների ազգագրական սովորություններին ու սովորույթներին, պատմությանը, տնտեսական վիճակին, քաղաքներին, բնական պայմաններին։ Նրա գրչին են պատկանում մի քանի աշխատություններ։ Դրանցից են՝ «Материалы по народной медицины у армян некоторых местностей Закавказья» գրքույկը, «Բույսերի գործածությունը Երևանի նահանգում» հայերեն գրքույկը և «Город Эривань» ոչ մեծ աշխատությունը։ Վերջինս զետեղված է «Сборник материалов для описания местностей и племён Кавказа»-ի առաջին պրակի մեջ և կարևոր տեղեկություններ է պարունակում քաղաքի բնակչության թվի, նրա արտաքին տեսքի, դպրոցների, տնտեսության ճյուղերի և շատ այլ հարցերի վերաբերյալ։ Իրրև ականատես ու գիտակ հեղինակի աշխատություն «Город Эривань»-ը Երևանի պատմության հույժ կարևոր աղբյուրներից մեկն է։

Զելինսկին զբաղվել է նաև Երևանի նահանգի հայրենագիտությամբ ու հանքային ջրերի ուսումնասիրությամբ։ XIX դարի 90-ական թվականներին նրա անմիջական նախաձեռնությամբ Երևան քաղաքում կազմակերպվում է Երևանի նահանգի հանքային ջրերի ցուցահանդես[1]։ Զելինսկին Անդրկովկասում կատարել է մի շարք ճանապարհորդություններ, որոնց նպատակն է եղել մոտիկից ծանոթանալ այդ բազմազգ երկրի բնակիչներին, զանազանակերպ բնական պայմաններ ունեցող երկրին։ Նա առաջադեմ անձնավորություն էր և համակրանքով էր տոգորված դեպի Անդրկովկասի տեղական ժողովուրդները՝ հայերը, ադրբեջանցիները և ուրիշներ։ Հակառակ գիմնազիայի շատ ուսուցիչների, որոնք երկրպագուներ էին ցարական ռեակցիոն քաղաքականության, Զելինսկին մեծ համակրանք ուներ հայ առաջավոր մտավորականության ազգասիրական ու ազատագրական պայքարի նկատմամբ։ Նրան իրրև «Հայասեր» և «Ազգասեր» կոչված ազատագրական խմբակի մասնակցի, ուրիշ մի քանի մտավորականների հետ միասին, ինչպես ասվեց, ցարական ադմինիստրացիայի կողմից արտաքսել են Երևանից։

[1] Տե՛ս проф. Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 4, Ереван, 1957, էջ 101—102։

Ավելի բեղմնավոր է եղել բժիշկ Լևոն Տիգրանյանը, որի մասին արդեն ասվել է մի քանի առիթներով։ Նրա կյանքի մեծագույն մասը՝ մոտ 30 տարին (70-ական թվականների վերջերից մինչև իր մահը՝ 1906 թվականը), անբաժան կապված էր Երևանի հետ։ Ինչպես ասվել է, նա եղել է քաղաքային բժիշկ, քաղաքագլուխ, քաղաքային դումայի բազմամյա ձայնավոր, քաղաքային վարչության և դումայի կազմակերպած մի քանի հանձնաժողովների անդամ ու նախագահ։ Լևոն Տիգրանյանի կյանքի պատմությունն ամենայն մանրամասնությամբ նկարագրված է նրա հիշատակարանում, որը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան ՀՍՍՌ մատենադարանում։ Տիգրանյանը ծնվել է 1842 թ., 7—8 տարեկան հասակում մտել է գավառական դպրոց, իսկ հայերեն գրել-կարդալը սովորել է մորից։ 1859 թ. Տիգրանյանը գնում է Պետերբուրգ, որտեղ մի քանի տարի հիմնավոր կրթություն է ստանում Կ. Եղյանի մոտ։ 1864 թ. նա Պետերբուրգից գնում է Դորպատ, որտեղ մի գերմանացու ընտանիքում սովորում է գերմաներեն՝ համալսարանի քննություններ տալու համար։ Տիգրանյանը մինչ այդ Եղյանի մոտ լավ տիրապետել էր ֆրանսերենին։ Դորպատում մեկ և կես տարի մնալուց հետո Տիգրանյանը հաջողությամբ քննություն է տալիս և մտնում համալսարանի բնագիտական ֆակուլտետը։



Լ. Տիգրանյան (1842—1906) (Մ. Մաշտոցի անվան մատենադարան)։

1875 թ. հաջողությամբ հանձնելով բոլոր քննությունները՝ Լ. Տիգրանյանը ստանում է բժշկի կոչում և վերադառնում Պետերբուրգ, իսկ այստեղից էլ՝ Թիֆլիս, որտեղ նա մնում է մինչև 1876 թվականը։ Ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմում որպես բժիշկ մասնակցելուց հետո Տիգրանյանը 1879 թ. հունիսին

Թիֆլիսից մշտապես տեղափոխվում է Երևան և այստեղ աշխատանքի անցնում որպես քաղաքային բժիշկ [1]։

Տիգրանյանը ուներ սիստեմատիկ բարձրագույն կրթություն, նա տիրապետում էր ֆրանսերենին, գերմաներենին, ռուսերենին և իր մայրենի լեզվին։ Այդ ժամանակվանից սկսած ընդհուպ մինչև իր մահը՝ 1906 թվականը, Տիգրանյանը ապրել ու գործել է հայրենի Երևանում։ Նրա այդ տարիների եռանդուն գործունեությունը նույնպես ներկայացված է հիշատակարանում [2]։ Լևոն Տիգրանյանը ոչ միայն պրակտիկ բժիշկ էր, եռանդուն գործիչ, այլև բեղմնավոր գրչի տեր հեղինակ։ Նա գրել է բժշկական մի շարք աշխատություններ և բազմաթիվ հոդվածներ։ Տիգրանյանը կատարել է նաև թարգմանություններ։

Ահա նրա աշխատությունների ու թարգմանությունների համառոտ ցանկը [3]։

1. «Անատոմիական բառարան» լատիներենից ու ռուսերենից հայերեն, տպագրվել է Թիֆլիսում, 1879 թ.։

2. «Անատոմիա», հայկական դպրոցների համար, որը, ինչպես ասվեց, տպագրվել է Երևանում 1881 թ.։

3. «Բժշկական բույսերի լատիներեն-հայերեն բառարան», տպագրված Երևանում 1883 թ.։

4. «Բժշկարան», թարգմանություն գերմաներենից։ Տիգրանյանը այդ աշխատության մեջ կատարել է որոշ լրացումներ, ինչպես և դրան կցել է իր կազմած ռուս-հայերեն բժշկական բառարանը։ Աշխատությունը լույս է տեսել Թիֆլիսում 1892 թ.։

5. Բժշկական և հիգիենական թեմաներով գիտա-մասսայական մի շարք հոդվածներ, տպագրված «Առողջապահական թերթ» ամսագրում 1881—1884 թթ.։

6. Թերթային բազմաթիվ հոդվածներ, գրավոր դասախոսություններ, գրական երկերի թարգմանություններ, և մինչև օրս ձեռագիր վիճակում գտնվող «Սանիտարական բժշկի հիշատակարանները» ու «Իմ հիշատակարանը» աշխատությունները, որոնցից վերջինը, ինչպես նշվեց, նրա ինքնակենսագրությունն է։ Տիգրանյանն է առաջին անգամ գերմաներենից թարգմանել Գյոթեի «Ֆաուստը», իսկ ռուսերենից՝ Գոգոլի «Ռևիզորը», որը հրատարակվել է էջմիածնում [4]։

1 ՀՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, բժ. Լևոն Տիգրանյան, Իմ հիշատակարանը, թ. 6—112։

2 Տե՛ս նույն տեղը, թ. 112—164։

3 Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, ч. 4, էջ 71—72։

4 Նույն տեղը, էջ 72։

Մի քանի տարի Երևանում է ապրել Պերճ Պռոշյանը։ Պռոշյանը ապրել է Կարվանսարայի փողոցի վրա՝ էմին Տեր-Գրիգորյանի տանը։ Հենց այդ տանն է Պռոշյանը սկսել պատմական «Հայտնի առևտուրը», «իր հորաշեն կշեռքով ածուխ առնել ծախելը», որից էմին Տեր-Գրիգորյանը նրան «ըստ ամենայնի» ազատել է «դարձնելով» իր «տպարանի կառավարիչը» [1]։ Պռոշյանը նույնիսկ հարկադրված է լինում հոգևոր աստիճան ստանալ ս. Սարգիս եկեղեցում [2]։



Պերճ Պռոշյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Թատերական-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյանի ֆոնդ, «Ռուսցիկ ակնարկներ իմ անցյալից», էջ 3։

2 Տե՛ս նույն տեղը, Պ. Պռոշյանի ֆոնդ, գ. 318։

Պռոշյանը, սակայն, երկար չի մնում Երևանում։ Ընտանիքի ծանր հոգսը նրան հարկադրում է վարել թափառական կյանք և զբաղվել տարբեր աշխատանքներով՝ «ածխի առևտրից» ու «տպարանի կառավարչից» մինչև մանկավարժությամբ ու լուսանկարչությամբ զբաղվելը ներառյալ։ Է. Տեր-Գրիգորյանը գրում է, որ Պ. Պռոշյանը Երևանում «գլուխ պահել չկարողացավ... և ստիպված եղավ ընդմիշտ հեռանալ Երևանից» [1]։ Նա ընդհանրապես Երևանում քիչ է ապրել [2]։

XX դարի սկզբներին որոշ տարիներ Երևանում է ապրել նաև Վրթանես Փափազյանը, որը նույնպես իրերի բերումով հարկադրված էր վարել թափառաշրջիկ կյանք։ Փափազյանն իր կյանքի վերջին օրերը անց է կացրել Երևանում, հիվանդանոցում, որտեղ և մահացել է տիֆից 1920 թ. ապրիլի 26-ին, մեծ սուգ պատճառելով քաղաքի բնակչությանը [3]։ Փափազյանը հավանաբար առաջին անգամ Երևանում եղել է 1904 թվականին, 1899—1904 թթ. Գյուլազարակ գյուղում մնալուց հետո, որտեղ նա ապրում էր իր փոքրիկ բանջարանոցի և մի քանի փեթակների համեստ եկամուտով [4]։

1908 թ. սեպտեմբերի 1-ից մինչև իր կյանքի վերջը Երևանում է ապրել ու գործել Աբսեն Տերտերյանը։ Նա 1908 թվականից մինչև 20-ական թվականների սկզբները աշխատել է որպես Երևանի հայոց թեմական միջնակարգ դպրոցի դաստատու [5], իսկ դրանից հետո՝ նորաստեղծ համալսարանի դասախոս։

1898—1903 թթ. Երևանում էր ապրում ազգերնչանական ակնառվոր գրող, ռևոլյուցիոն-դեմոկրատ Զալիլ Մամեդկուլիզադեն (1869—1932), որը ծնվել էր Նախիջևանում։ Երևանում եղած ժամանակ նա ակտիվ կերպով մասնակցում էր քաղաքի հասարակական ու մշակութային կյանքին։ Նա առանձնապես շատ էր հետաքրքրվում դպրոցական և թատերական կյանքով։

Երևանի մյուս գործիչների՝ Վ. Պապաջանյանի, Ասք. Մոռավյանի, Ա. Մելիքյանի, Մ. Բագրատունու և ուրիշների մասին արդեն

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, Էմին Տեր-Գրիգորյանի ֆոնդ, «Թուղթիկ ակնարկներ իմ անցյալից», էջ 3։


2 Նույն տեղը, գրականության բաժին, Ե. Շահազիզի ֆոնդ, ցուցակ 1, գ. 45։

3 Տե՛ս «Ժողովուրդ» (լրագիր), Երևան, 1920, №№ 68 և 69։

4 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, գրականության բաժին, Վ. Փափազյանի ֆոնդ, գ. 57։

5 ՀՆՍՌ ՊԿՊԱ, ֆ. 197 c/514, գ. 53, թ. 7։

ասվել է համապատասխան տեղերում և հարկ չկա նորից անդրադառնալ։



Աբսեն Տերտերյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Երևանը ակտիվորեն արձագանքում էր համահայկական դեպքերին, տոներին ու հոբելյաններին։ 1899 թ.՝ Պ. Պռոշյանի գրական գործունեության 40-ամյակը տոնելու ժամանակ, Երևանի մի շարք դպրոցներում կազմակերպվում են հանդիսավոր նիստեր ու ժողովներ, Երևանից գրողի հասցեով ուղարկվում են բազմաթիվ հեռագրեր։ Սակայն առանձնապես շքեղ է տոնվում հայկական գրերի գյուտի 1500-ամյակն ու տպագրության 400-ամյա հոբելյանը։ Համազգային այդ խոշորագույն տոնը Երևանում կատարվել է 1913 թ. հոկտեմբերի 12-ին և 13-ին։ Տոնի կատարման համար մեծ եռանդ ու ջանք էին գործադրել փոխ-թեմակալ Խորեն եպիսկոպոսը և թե-

մական հոգևոր դպրոցի հոգաբարձությունը։ «Эриванские объявления» թերթիկի կարճ հաղորդումից երևում է, որ այդ տոնը կատարվել է մեծ շուքով։ Թերթը հաղորդում է, որ «ամսույս 12-ին և 13-ին քաղաքումս կատարվեց մեծ շքեղությամբ և հանդիսավորությամբ հայության պարծանքի տոնը—1500-ամյա հայ տառերի գյուտի և 400-ամյա հայ տպագրության հոբելյանը [1]»։

Թեմական դպրոցը միայնակ չէր տոնում։ Նրա հետ միասին հայկական գրերի ու տպագրության նշանավոր տոնը նշում էին նաև մյուս դպրոցները, թերթերն ու մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ։ Այդ համաժողովրդական տոնը անկախ որևէ կազմակերպությունից տոնում էր և ինքը՝ ժողովուրդը։

Աղքատիկ էր մեզ հետաքրքրող շրջանի Երևանի արվեստը։ Նրա թատերական կյանքը սահմանափակվում էր ինքնագործ խմբերի ցածրարվեստ ներկայացումներով և տարբեր տեղերից պարբերաբար հյուրեկային ներկայացումների նկող կոլեկտիվների բեմադրություններով։ Երաժշտական կյանքը, չհաշված դրսի ուժերով երբեմնապես տրվող համերգները, նախկինի նման սահմանափակվում էր տեղական ուժերով՝ դուդուկ, թառ և քյամանչա նվագողներով, ղուռնաչիներով և աշուղներով։ Կրկեսային ներկայացումները բացառապես տալիս էին դրսի ուժերը։ Կինոն դեռևս ամուր կերպով չէր մտել հին Երևանցու կենցաղի մեջ։ Երևանը զուրկ էր արվեստի կոթողներից։ Սակայն նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ 1879—1914 թթ. Երևանում, այնուամենայնիվ, արվեստի բոլոր բնագավառներում ձեռք էին բերվել որոշ հաջողություններ։

Քաղաքում տարվա որոշ ամիսների ընթացքում մեծ ընդհատումներով գործում էին թատերական մի քանի խմբակներ։ Դրանցից մի քանիսը դպրոցական էին, իսկ երեքը՝ ուղղակի թատերասերների խմբեր էին. մեկը հայկական, մեկը՝ ռուսական, իսկ երրորդը՝ ադրբեջանական։ Վերջիններիս աշխատանքի համար կարևորագույն նշանակություն ուներ շենքը։ Հայկական թատերական խմբակի առաջին շենքը, ինչպես տեսանք աշխատության նախորդ գլուխում, կառուցվել է 1879 թ.՝ Պողոս-Պետրոս եկեղեցուն կից, Գայանյան օրիորդաց ուսումնարանի մոտ։ Այդ շենքի հիմքը գցել են ուսումնարանի տեսուչ Տեր-Հովսեփ Մելյանը և էմին Տեր-Գրիգորյանը։ Շենքը կառուցվել է մի քանի ամսվա ընթացքում [1]։ Այս շենքում 1879/1880 և 1880/1881 թթ. ընթացքում հայկական թատերասերների խումբը տալիս է մի շարք ներկայացումներ, որոնց բերած եկամուտներով ամբողջապես վճարվում են շենքի, բեմի, դեկորացիաների, հագուստների և արդուզարդի համար վերցված պարտքերը։ Դրանից հետո ինքնագործ խումբը Գայանյան ուսումնարանին տարեկան տալիս էր 400—900 ռուբլի օգուտ [2]։

Ժամանակի ընթացքում խմբի կազմը ենթարկվում է փոփոխությունների։ Էմին Տեր-Գրիգորյանի հիշատակության համաձայն, թատրոնի հիմնադրման օրից ի վեր ինքնագործ խմբին մասնակցում էին Արամ և Արմենակ Մելյանները, Միքայել Աթանասյանը, Արամ Մինասյանը, Ալեքսանդր Փարսադանյանը, Գ. Սարգսյանը, Արտաշես Հակոբյանը։ Իսկ հետո դրանց վրա ավելանում են Հ. Խոջամիրյանը, Մ. Դատյանը, Մ. Պանհուլաղյանը, Վ. Մկրտչյանը, Ռ. Խուդաբաշյանը, Հ. Աթանասյանը, օր. օր. Վ. Խուդաբաշյանը, Մ. Դադամյանը, Մ. Քյալյանը, Փ. և Զ. Մելյանները և շատ ուրիշներ [3]։ Նույն շենքում այդ նույն տարիներին մի քանի ներկայացումներ է տալիս և մի այլ խումբ, որին մասնակցում էին նաև բժ. Նավասարդյանը և Կ. Ջալալյանը։ Վերջին խմբի ռեպերտուարը կազմված էր Գ. Սունդուկյանի պիեսներից, բայց խումբը մշտական չէր և շատ շուտով դադարել է գործելուց [4]։ Մինչդեռ Տեր-Գրիգորյանի և այլոց խումբը մշտական էր և հին պիեսների կրկնություններից բացի տարեկան տալիս էր 3—4 նոր բեմադրություն։ Այդ պատճառով էլ ժամանակի ընթացքում նրա ռեպերտուարը հարբուսատանում է նորանոր բեմադրություններով։ Կեղծ ու դրամատիկական արվեստից զուրկ՝ ողբերգություններից ու ոդևիլներից բացի ինքնագործ խմբակի ծրագրում աստիճանաբար իրենց մշտական ու պատվավոր տեղն են գրավում «Պետրո», «Խաթաբալան», «Էլի մեկ գոհր», «Քանդած օջախը», «Ոսկան Պետրովիչը էն կենքումը...» և կլասիկ այլ գործեր, բարգմանական պիեսներ՝ «Կողոպտված փոստը», «Թուղթ խաղացողի կյանքը», «Մեհրին», «Ոճրագործի ընտանիքը», «Ճակատագիրը», «Տարտյուֆը» և այլն, էմին Տեր-Գրիգորյանի գործերը՝ «Խեչոյի թուղը», որը ներկայացվում էր դեռևս

1 «Эриванские объявления», 1913, № 73։

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 14—22։

2 Նույն տեղը, թ. 30—35։

3 Նույն տեղը, թ. 30—36։

4 Նույն տեղը, թ. 36։

1873 թ. սկսած, «Էլ չարես ինչ»-ը, «Ջրկանքի գոհ»-ը, «Ջարքա»-ը և այլ պիեսներ [1]։



Թատերասեր Մակար Տեր-Մարգսյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Հայկական ինքնագործ խմբի սեղոնային ներկայացումները նույն կարգով շարունակվում են մինչև 1892 թվականը։ Այդ ժամանակաընթացքում տեղափոխման, մահանալու և այլ պատճառներով խմբից հեռանում են մի քանի անդամներ, բայց խումբը համալրվում է և նոր, չանսահեր մարդկանցով, որոնց թվում էին նաև Ս. Տեր-Մարտիրոսյանը և 1887 կամ 1888 թ. Ալեքսանդրոպոլից Երևան տեղափոխված Մակար Սարգսյանն ու նրա կինը՝ տիկին Աշխենը, որոնցից առաջինը ուսուցիչ էր նշանակված թեմական դպրոցում, իսկ երկրորդը՝ Գայանյան ուսումնարանում [1]։ Փորձերն անում էին կամ էմին Տեր-Գրիգորյանի տանը, կամ Սարգսյանների բնակարանում։ Թատրոնի դեկավարն ու ուժիսյորը փաստորեն միայն էմին Տեր-Գրիգորյանն էր [2]։

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 36—37։



Թատերասեր Աշխեն Տեր-Մարգսյան (Մակար Տեր-Մարգսյանի կինը) (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմ. Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 37—40։

2 Նույն տեղը, թ. 41—44։

Գայանյան ուսումնարանին կից կառուցված թատրոնում իր ներկայացումներն էր տալիս նաև թատերասերների ռուսական խումբը, որի խաղացանկում այլ պիեսների հետ միասին հիշատակվում են նաև Գոգոլի մի քանի կատակերգությունները։



Թատերասեր և հասարակական գործիչ Սիրական Տեր-Մարտիրոսյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

1889 թ. քաղաքի ակումբում պատրաստում են մի փոքր շարժական բեմ և այդ խումբը Գայանյան ուսումնարանի թատրոնից տեղափոխվում է այստեղ և իր ներկայացումները տալիս այդ համեմատաբար ավելի հարմարավոր, ընդարձակ ու լուսավոր դահլիճում։ Գայանյան թատրոնի շենքն այդ տեսակետից շատ անհարմար էր, նրա դահլիճում նույնիսկ 100 մարդու ներկայությունը ճնշիչ էր։ Ուստի ակումբ է տեղափոխվում նաև էմին Տեր-Գրիգորյանի

և ուրիշների հայկական թատերախումբը։ Շատ շուտով Գայանյան թատրոնի շենքը միանգամից դուրս է գալիս շարքից։ Այդտեղի հայկական ծխական ուսումնարանը փակելու և այն լուսավորության մինիստրության տնօրինության տակ անցնելու պատճառով նրա բեմը, թատերական մյուս հարմարությունները վերացվում են, շինությունն ամբողջապես վերածելով դասարանների [1]։

1892—1893 թվականներին թատերասերների խումբը նոր փոփոխություններ է ենթարկվում։ Նրա կազմի մեջ են մտնում զինվորական բժիշկ Արտեմյանը և նրա կինը՝ Սաթենիկը, որոնք իրենց սիրալիրությամբ թատերախմբի անդամների միջև ստեղծում են ընկերական ավելի ամուր կապեր։ 1893 թ. առաջին անգամ բեմ է դուրս գալիս օր. Աստվածատրյանը, Դրաստամատ Սիմոնյանի մայրը։ Շուտով թատերասերների խումբը ավելի է մեծանում։ 90-ական թվականներին դրա անդամների թիվը հասնում էր 25 հոգու։ Դրանցից էին՝ տ. տ. Ս. Արտեմյանը, Ա. Տեր-Սարգսյանը, Հ. Տեր-Մկրտչյանը, օր. օր. Ա. Տեր-Նիկողոսյանը, Ա. և Մ. Օհանյանները, Մ. Տեր-Մուրադյանը, պ. պ. Արտեմյանը, Հովհաննիսյանը, Լ. Ամիրխանյանը, Մ. Մուսինյանը, Հ. Խուդաբաշյանը և ուրիշներ [2]։

Խմբի ներկայացումները շարունակվում են։ 90-ական թվականների առաջին տարիներին յուրաքանչյուր սեզոնում խումբը տալիս էր 3—5 ներկայացում։ Բեմադրում էին «Սեր և նախապաշարմունք»-ը, «Արդյունավոր պաշտոն»-ը, «Ոճրագործի ընտանիքը», Զուդերմանի «Պատիվ» պիեսը (Ս. Բարխանյանի թարգմանությամբ) և այլն [3]։

Էմին Տեր-Գրիգորյանը վկայում է, որ 1894 թ., Արտեմյան ամուսինները Բաքու տեղափոխվելուց հետո, խմբի ներկայացումները առժամանակ ընդհատվում են։ Թատերասերների մեջ առաջանում են տարաձայնություններ, խումբն աստիճանաբար քայքայվում է։ Դրանից միայն երկու-երեք տարի անց տիկին Ն. Տիգրանյանը ստեղծելով մի փոքրիկ խումբ՝ նորից է կյանք տալիս ընդհատված ներկայացումներին և ընդհուպ մինչև 1900 թվականը տարեկան տալիս է մի քանի ներկայացում։

Էմին Տեր-Գրիգորյանն այդ թվականներին գրում է «Վայրենի», «Բարեգործական դիմակի տակ» և «Դամոկլյան սուր» պիեսները։


---

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողություններ Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 45—47։

2 Նույն տեղը, 47—49։

3 Նույն տեղը, թ. 45—56։

Նա թեև այլևս ղեկավար դեր չէր խաղում ինքնագործ խմբում, բայց շարունակում էր իր ակտիվ մասնակցությունը ցույց տալ նրա աշխատանքներին։ 1900 թվականից Տեր-Գրիգորյանը արդեն հետզհետե նահանջում է թատերական գործից, ընտանիքի նյութական ծանր դրությունը նրան այլևս թույլ չի տալիս թատրոնով զբաղվելու։ XX դարի սկզբներին նախ օր. օր. Եվգինե Տեր-Սարգսյանի ու էլիանորա Հասան-Ջալալյանի խումբը, ապա Աննա Նավասարդյանի փոքրիկ կոլեկտիվը շարունակում են տարեկան մի քանի ներկայացումներ տալ բարեգործական նպատակներով [1]։



Քաղաքի հայկական ինքնագործ թատերական խմբի 1883 թ. աֆիշներից մեկը (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 56—74։

Իրերի բերումով էմ. Տեր-Գրիգորյանը չի կարողանում երկար ժամանակ զերծ մնալ թատերասերների խմբի աշխատանքներից։ 1905 թ. նա գրում է իր վերջին պիեսը՝ «Սուր և հուրը», իսկ 1906—1907 թթ. իբրև ակումբի ավագների խորհրդի անդամ, անմիջականորեն ղեկավարում է քաղաքային ակումբի թատրոնի դահլիճի ներքին հարմարանքների ու բեմի կառուցման աշխատանքները։ 1907 թ. այդ նույն դահլիճում «ցնծագին օվացիաների տակ» բարձրանում են «առաջին ներկայացման վարագույրները» [1]։ Էմին Տեր-Գրիգորյանը պատմում է, որ այդ ակումբ-թատրոնը ուներ դերասան-դերասանուհիների 2—3 անձյակ, Թիֆլիսի թատրոնի օրինակով սարք ու կարգ, բեմի շարժական ու փոփոխման ենթակա սրահներ։ Ակումբ-թատրոնը քաղաքի երկրորդ թատրոնն էր։ Այստեղ ներկայացումներ էին տալիս և՛ ինքնագործ խմբերը, և՛ հյուրեկային ներկայացումների եկածները։ Առաջին թատրոնը Ջանիփոլադյանինն էր (այժմյան Սպայի տունը)։ Այս թատրոնը գրեթե բացառապես սպասարկում էր այլ քաղաքներից հյուրեկային ներկայացումների համար Երևան եկած տարբեր խմբերին։ Սակայն նախքան այդ կարգի ներկայացումներին անցնելը երկու խոսք Երևանի ինքնագործ թատրոնի հիմնադիրներից մեկի, նրա ամենաերկարատև մասնակցի՝ էմին Տեր-Գրիգորյանի մասին։

Էմին Տեր-Գրիգորյանը ծնվել է 1855 թ.։ Նա բուն երևանցի էր, բայց 5—6 տարեկան հասակից երկար ժամանակով ծնողների հետ ապրել է ռուսական զանազան քաղաքներում և նորից իր հարազատ քաղաքն է վերադարձել 1872 թվականին։ Նրա գործունեությունը Երևանում սկսվում է 1873 թվականից, իսկ դրանից մի տարի անց ամուսնանում է և իր կյանքը ընդմիշտ կապում ծննդավայրի հետ։ Էմինն ունեցել է բազմաբեղուն գործունեություն։ Մենք տեսանք, որ նա Երևանի թատերական ինքնագործ խմբակի երկարամյա ու ակտիվ մասնակիցն էր, բազմաթիվ պիեսների հեղինակ, տպարանատեր, և «Երևանի հայտարարություններ» հայերեն ու «Эриванские объявления» հայերեն-ռուսերեն թերթիկի հրատարակիչ-խմբագիրը, պետական պաշտոնյա, քաղաքային ակումբի ավագների խորհրդի անդամ։ Նա ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել քաղաքի կոմունալ պայմանների բարեփոխման գործին՝ իր հոդվածներով պրոպագանդայի ենթարկելով ջրմուղի, ձիաքարշի,

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 75—91, տե՛ս նաև նույնի «Թուղթի ականարկներ իմ անցյալից» վերնագիրը կրող փաստաթուղթը։

էլեկտրակայանի, հեռախոսային ցանցի ստեղծման անհրաժեշտությունը, կոյուղու անցկացման կարևորությունը և կենսական այլ հարցեր։ Նրա հրատարակած թերթիկը, չնայած իր փոքր ծավալին, այնուամենայնիվ, արտացոլել է քաղաքային կյանքի շատ կողմերը։ Էմինը ինքը չէր պատկանում ոչ մի կուսակցության, սակայն նա բոլոր դեպքերում աշխատավոր ժողովրդի կողմն էր, իր հայրենի քաղաքի բարեփոխման կողմը, ազգերի միջև եղբայրություն հաստատելու կողմը։



Էմին Տեր-Գրիգորյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Էմին Տեր-Գրիգորյանին հատուկ էր մարդուն զարդարող համեստությունը։ 1898 թ. մի խումբ ընկերներ, հակառակ նրա համառումների, ցանկանում են նրա գործունեության 25-ամյա հոբելյանը

կատարել, ստեղծում են հոբելյանական հանձնաժողով, և, հոբելյանը «օրինական ճանապարհով» անցկացնելու համար, թուլլտվություն խնդրում նահանգապետ կոմս Տիզենհաուզենից, սակայն վերջինս մերժում է հանձնաժողովի խնդիրքը, այն ժամանակ համարելով ոչ նպատակահարմար [1]։

1911 թվականին «Նոր ձայն», ապա «Эриванский вестник» ու «Կռանն» թերթերը հարց են հարուցում և հատուկ հանձնաժողով կազմում նրա հասարակական-քաղաքական-գրական գործունեության



Հ. Աբելյան (1865—1936) (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

1 Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, Էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 67—70։

40-ամյա հոբելյանը կատարելու համար։ Սակայն էմին Տեր-Գրիգորյանն իր կատարած ծառայությունները համեստաբար համարելով սովորական և ոչ արժանի հատուկ տոնակատարության, կըտրականապես մերժում է նշված թերթերի խմբագրությունների առաջարկները և հրաժարվում հոբելյար լինելուց [1]։

Էմին Տեր-Գրիգորյանի 80-ամյակը նշվել է 1934—1935 թվականներին, երբ նրա մասին Խորհրդային Հայաստանի մի շարք թերթերում լույս են տեսնում մի քանի հոդվածներ (այդ թվում և Դ. Դեմիրճյանի հոդվածը), որոնցում իրավացիորեն նրան ևս համարում են նոր շրջանի հայ թատրոնի հիմնադիրներից մեկը [2]։

Ադրբեջանական թատերասերների խումբը կազմակերպվել է ավելի ուշ և գործում էր մեծ ընդհատումներով։ Այդ խումբը, որը կազմված էր քաղաքի ադրբեջանցի ուսուցիչներից, իր առաջին ներկայացումը տվել է 1884 թ. դիմնազիայի ուսուցիչ Ֆրիդուն բեկ Քյոչարլիի գլխավորությամբ [3]։ Հետագայում մոտ երկու տարի ընդհատվում է ինքնագործ խմբի գործունեությունը։ Սակայն 1886 թ. սկսած, երբ բեմադրվում է ադրբեջանական դրամատուրգիայի հիմնադիր Մ. Ֆ. Ախունդովի «Մուսյո Ժորդան և դեվրիշ Մասթ ալի-շահ» կատակերգությունը, խումբն արդեն գործում է առանց մեծ ընդհատումների։ Ախունդովի այդ պիեսի երևանյան ներկայացումը դրա առաջին բեմադրությունն էր ընդհանրապես։ Նույն պիեսի 1896 թ. դեկտեմբերի 8-ի բեմադրության մասին էմ. Տեր-Գրիգորյանի գրած գրախոսականից երևում է, որ ներկայացումն անցել է հաջող [4]։ Իր դերը առանձնապես լավ է կատարել Յունուս Նուրին (Շահրաբանու խանում), որը համարվում է Հայաստանում ադրբեջանական թատրոնի հիմնադիրներից մեկը [5]։

Խմբի հետագա տարիների խաղացանկում հաստատուն տեղ են գրավում Ախունդովի նաև «Հաջի ղարա» և «Վեզիրը» պիեսները։

Քաղաքի թատերական կյանքի բնորոշ կողմերից մեկը Թիֆլիսից, Բաքվից և այլ տեղերից պարբերաբար եկող խմբերի հյուրընկալային ներկայացումներն էին, որոնք նպաստում էին բնակչու-

1 «Эриванские объявления», 1911, № 84։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան» (լրագիր), 1934, № 123, «Коммунист» (газета), 1934, № 140 և այլուր։

3 «Երևան» (թերթ), 1962, № 255։

4 «Նոր դար» (լրագիր), Թիֆլիս, 1896, № 223։

5 Յունուս Նուրի թատերական գործունեության մասին մանրամասը տե՛ս Հովակիմյանի «Յունուս Նուրի» գրքույկում (Երևան, 1962 թ.)։

թյան գեղարվեստական ճաշակի բարձրացմանը։ Իր այցելություններով և ներկայացումների թվով առաջին տեղը անմրցակից կերպով պատկանում էր Թիֆլիսի հայկական դրամատիկական խմբին, որն ուներ մի շարք փայլուն դերասան-դերասանուհիներ։ Էմին Տեր-Գրիգորյանի վկայությամբ 1895 թվականից սկսած Թիֆլիսի հայ դերասանների խումբը գրեթե ամեն տարի լինում էր Երևանում և յուրաքանչյուր սեզոնում այստեղ տալիս էր մինչև 10 ներկայացում [1]։ Մեզ հետաքրքրող շրջանում այդ խումբը Երևանում հյուրեկային ներկայացումներ է տալիս Հ. Աբելյանի, Ա. Արմենյանի, Հ. Զարիֆյանի և ականավոր այլ դերասան-ռեժիսյորների գլխավորությամբ։ Ներկայացումներին տարբեր դերերով հանդես են եկել այնպիսի բարձրարվեստ դերասան-դերասանուհիներ, ինչպիսիք են՝ տ. տ. Արուսյակը, Գուլազյանը, Ժամկոչյանը, Մարգարիտը, Մայսուրյանը, դերասաններ Ի. Ալիխանյանը, Ահարոնյանը, Ավետյանը,



Հ. Զարիֆյան (1878—1937) (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Մանվելյանը, Շահխաթունին, տիկին Դուրյան-Արմենյանը, դերասան Բերոյանը և շատ ուրիշներ։ Բեմադրված պիեսների շարքում էին գտնվում Սունդուկյանի հանրահայտ դրամաները, Շիրվանզադեի «Կործանվածը», «Արմենուհին», Շանթի «Հին աստվածները»,

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողությունները Երևանի թատրոնի վերաբերյալ, 57—58։

Նար-Դոսի «Սպանված աղավնին» և հայկական դասական դրամատուրգիայի նշանավոր այլ գործեր։ Խմբի ռեպերտուարում իրենց տեղն էին գրավում նաև արևմտաեվրոպական և ռուսական դասական ողբերգություններն ու կատակերգությունները։ Դրանց թվում էին Հ. Սենկևիչի «Յո երթասը», Բիսոնի «Գվարդիական օֆիցեր» կատակերգությունը և այլ ողբերգություններ ու կատակերգություն-



Արմ. Արմենյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

ներ։ Վերջինս, որ բաղկացած էր երեք գործողություններից և թարգմանել էր Մաժակը, հայկական դրամատիկ խումբն առաջին անգամ բեմադրել է հենց Երևանում։ Երևանի թատերասերների համար նվիրական էին Հ. Աբելյանի, Հ. Զարիֆյանի, Ա. Արմենյանի, Արուսյակի, Ժասմենի, Մայսուրյանի և ուրիշների անունները։

Քաղաքի ժամանակակից պարբերական մամուլը, հատկապես «Կռանն» ու «Նոր մամուլը» մեծ հետաքրքրություն են ցուցաբերել հյուրեկային ներկայացումների նկատմամբ և սիրով արձանագրել դրանց արժանիքներն ու բարձր արվեստը։ Այդ նույն մամուլը միաժամանակ քննադատության է ենթարկել առանձին վրիպումներն ու անվարժ դերասանների՝ հանդիսատեսին չբավարարող խաղը[1]։



Սիրանույշ (1857—1932) (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Թիֆլիսի խումբը Երևան այցելող հայկական դերասանական միակ կոլեկտիվը չէր։ XX դարի սկզբներից հյուրեկային ներ-

1 Տե՛ս «Կռան», 1911, № 6, 1912, №№ 6, 22 և 29, «Նոր մամուլ», 1913, №№ 17, 18 և այլուր։

կայացումներով Բաքվից պարբերաբար Երևան էր գալիս հայ բեմի աստղերից մեկը՝ տիկին Սիրանույշը իր խմբի հետ միասին։ Ակնատեսի վկայությամբ, Սիրանույշը Երևանում շատ անգամ է եղել և միշտ էլ հանդիսականների կողմից ընդունվել է ջերմորեն[1]։ Նրա խաղացանկի պիեսները նույնպես բազմաթիվ էին՝ «Հրաշեկ օղակ», «Թավաճանություն», «Ջավակ», «Տոսկա» և այլն, և այլն։ Սիրանույշից բացի, խմբի անդամներից իրենց դերերը բարձր արվեստով էին կատարում Թաշճյանը, Ալավերդյանը և Բերոյանը։ Նրա խմբի մյուս անդամները երբեմն սկսնակ սիրողներ էին լինում, բայց Սիրանույշի անզուգական խաղը, որ գերում էր նույնիսկ ամենախստապահանջ հանդիսականին, աննկատելի էր դարձնում խմբի առանձին անդամների ցածրարվեստ խաղը։ Սիրանույշի տված ներկայացումները ևս լայն ռեկլամի էին ենթարկվում մամուլի և հասարակության կողմից։ Սիրանույշը հին երևանցու ամենասիրած դերասանուհին էր։

Երևանցի թատերասեր-հանդիսականը փափագում էր տեսնել նաև հանճարեղ Ադամյանի խաղը, որը իրոք մտադրություն ուներ գեթ մեկ անգամ լինել Երևանում։ Բայց ավաղ, չի իրականանում հայ բեմի մեծագույն վարպետի մտադրությունը, երևանցի թատերասերը մնում է ադամյանակարոտ։

Հայկական թատերական խմբերից բացի, Երևան ելույթների էին գալիս նաև ոչ հայկական խմբեր Անդրկովկասի և Ռուսաստանի զանազան քաղաքներից։ Բայց ի տարբերություն առաջինների, որոնք, ինչպես ասացինք, պարբերաբար էին լինում այստեղ, վերջիններիս Երևան գալը կապված էր միայն պատեհ առիթների հետ։

Այդ կարգի գաստրոլային ներկայացումներից ուշադրության արժանի են ուկրաինական և ադրբեջանական դերասանական խմբերի ներկայացումները 1912 թվականին։ Ուկրաինական դերասանական խումբը, որն իր ներկայացումներով Երևանում հանդես է եկել 1911 թ. դեկտեմբերի 26-ից մինչև 1912 թ. հունվարի 10-ը, բաղկացած էր 54 հոգուց։ Խումբն ուներ իր նվագախումբը։ Խմբի ընդհանուր ղեկավարը Վ. Ի. Յավուրսկին էր։ Ժամանակակցի վկայությամբ ուկրաինական թատերական այդ խումբը, որի ներկայացումները տեղի էին ունենում Ջանփոլադյանի թատրոնում, մեծ հետաքրքրություն ու ջերմ ընդունելություն են գտել Երևանի հանդիսականների կողմից։ Դահլիճը միշտ լեփ-լեցուն է եղել։ Նրանց

1 «Նոսք», 1914, № 21։

ներկայացումների մասին «Կոանն» թերթի թղթակիցներից մեկը գրում է. «Եվ իրոք մալոռուսների ներկայացումներով արժե հետաքրքրվել. խորը, հոգեկան ու մտերմական զգացմունքի արտահայտումներ, անկեղծ հումոր, վարակիչ ծիծաղ, պատմական կյանքի կենդանի տեսարաններ երբեմնի հարստահարված ու ճնշված Ուկրայինի—այդ բոլորը համապարփակ, կենդանի կերպով բեմի վրա գալիս անցնում են հանդիսականների առջևից։


Ա Ր Ա Հ Ս

Էջմիածնում 29-ին մարտի 1901 թ.

ԲԱՑՈՒՄԱՆ ՀԱՆ ԴՐԱՄ. ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Տ. ՍԻՐԱՆՈՒՇԻ


Ջ Ա Վ Ա Կ

ԴԵՐԱՍԱՆ

Սիրանույշի թատերական խմբի աֆիշներից մեկը, 1901 թ. (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Եվ ուժեղ կերպով համակված մալոռուս դերասանների խաղով, հանդիսատեսը ապրում է դերասանների ամբողջ ապրումներով.—վշտանում նրանց վշտերով, ուրախանում նրանց ուրախություննե-

թով»[1]։ Թերթում այնուհետև նշվում է, որ, չնայած թատրոնի դահլիճի ու բեմի անհարմարություններին, դերասանական կազմը վարպետորեն էր տալիս ներկայացումները։ Նրանք հնարավորության սահմաններում ամեն ինչ անում էին, «որպեսզի հասարակությանը գեղարվեստական մեծ հաճույք պատճառեն»[2]։ Խումբն ունեցել է աչքի ընկնող շատ դերասաններ, մանավանդ տղամարդկանց կազմում[3]։ Խմբի դեկավար Յավուրսկուց բացի, որի խաղը հիվանդության պատճառով երբեմն հնարավորություն չի ունեցել տեսնել, հայտնի են եղել նաև դերասաններ Սադովսկին, Շլակոկը, Կանուշենկոն, տիկ. Կոշնարևան և ուրիշ դերասան-դերասանուհիներ[4]։



Ջանփոլադյանի թատրոնի շենքը (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Ադրբեջանական խմբի ներկայացումների մասին շատ քիչ է հաղորդված։ «Կռանն» թերթի փոքրիկ հաղորդագրությունից երևում է, որ ադրբեջանական խումբը Բեզտաշևի ղեկավարությամբ Երևանում եղել է մայիսի երկրորդ կեսին և Ջանփոլադյանի թատրոնում նույն ամսվա 20-ին բեմադրել է «Վաթան» (Հայրենիք) դրաման։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հյուրե-

1 «Կռանն», 1912, № 1։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։

կային ներկայացումները դառնում են ավելի բազմաթիվ ու բազմազանվածք։ Այդ մասին խոսք կլինի գրքի հաջորդ բաժնում։ Սակայն չի կարելի չնշել, որ ինչպես 1880—1914 թվականներին, այնպես էլ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Երևանում թատրոնը դեռևս մասսայական բնույթ չէր ստացել։ Այցելուների թիվը սահմանափակվում էր միայն ունևոր դասակարգի ներկայացուցիչներով, մանավանդ հյուրեկային ներկացումների ժամանակ, որոնց մեկ տոմսի արժեքը պատերազմին նախորդած տարիներին տատանվում էր 50 կոպեկից մինչև 3 ո. 10 կոպեկի միջև[1]։ «Կռանն» թերթի թղթակիցներից մեկը, խոսելով Հ. Աբելյանի խմբի 1912 թ. մայիսի հյուրեկային ներկայացումների մասին և դրանց տալով բարձր գնահատական, միաժամանակ նշում է, որ դրանց մասնակից է լինում «միայն քաղաքիս առաջնակարգ հարուստ դասը, իսկ աշխատավոր, աղքատ մասսան ոչ միայն մասնակից չէ, այլ նույնիսկ տեղեկություն էլ չունի այդ ներկայացումներից։

Դերասանական խմբի նշանակած տեղերի խիստ բանկ գները ոչ միայն աշխատավորներին են զուրկ թողնում թատրոնից, այլև նույնիսկ սպառնում են շատ շատերին էլ հետու կանգնեցնել»[2]։

Այդ հավասարապես վերաբերում է նաև հյուրեկային համերգներին և օպերային ու օպերետային ներկայացումներին, որոնք հազվադեպ էին մեզ հետաքրքրող շրջանի Երևանի կյանքում։ Որոշ առումներով աշխատավոր բնակչության մեծագույն մասի համար նույնիսկ անմատչելի էին տեղական թատերական խմբերի ներկայացումները և հյուրեկային կրկեսային ներկայացումները, որոնց տոմսերի արժեքները համեմատաբար ցածր էին։

Դեռևս 80—90-ական թվականներից Երևանի թատերական ինքնագործ խմբերի մասնակիցներն ու թատրոնով զբաղվողները դրժգոհում են, որ ինքնագործ խմբերի ներկայացումներին քիչ մարդիկ են մասնակցում։ Էմին Տեր-Գրիգորյանը հաղորդում է, որ 80-ական թվականներից իր մտահոգության առարկաներից մեկը արդեն եղել է բնակչության լայն զանգվածներին թատերական ներկայացումներին մասնակից դարձնելը։ Այդ նպատակին հասնելու համար նա ջանքեր է գործադրում ժողովրդական ներկայացումներ կազմակերպել։ Ըստ նրա, տոմսերի արժեքը նշանակելով 10—30 կոպեկի սահմաններում, հնարավոր կլիներ բնակչության լայն խավերին

1 «Կռանն», 1912, № 25։
2 Նույն տեղը։

մասնակից դարձնել ներկայացումներին։ Սակայն նրա փորձերը գրեթե ապարդյուն են անցնում. հաջողվում է կազմակերպել այդ տիպի միայն մի ներկայացում (1890 թ.)։ Եկամուտը քիչ էր և խմբի անդամները չէին համաձայնվում խաղալ ժողովրդական կոչված ներկայացումներում [1]։ 1903—1904 թթ. մի քանի այդպիսի ներկայացումներ է տալիս Աննա Նավասարդյանի խումբը [2], որից հետո դրանք ընդմիշտ ընդհատվում են։

Ինչքան մեզ հայտնի է, Երևանում, նշված շրջանում, չհաշված հաճախակի երևացող լարախաղացների, որոնք իրենց ներկայացումները կարող էին տալ յուրաքանչյուր բակում կամ անկյունում, մեկ անգամ բավական երկար ժամանակով՝ 1913 թվականի աշնանը հյուրեկային ներկայացումների է եկել Ջունտինիի իտալական կրկեսը, որի կազմում սկզբում հանդես են եկել 25 դերասաններ, իսկ մի քանի օր անց դրանց թիվը բավական ավելացել է։ Կրկեսն ունեցել է իր նվագախումբը։ Բաժինների մեջ կարևոր տեղ են գրավել կրկեսի դիրեկտոր Ջունտինիի վարժեցրած ձիերի կատարած համարները և լարախաղաց Օրլանդո եղբայրների ճկուն ու գրավիչ համարները։ Ներկայացումները տեղի են ունեցել բացօթյա, Բազարի փողոցի վրա, քաղաքային վարչության շենքից ոչ հեռու։ Ներկայացումները եղել են բազմամարդ և հանդիսականների վրա թողել են հաճելի տպավորություն [3]։

Կինոն դեռևս ամուր չէր մտել երևանցու կենցաղի մեջ։ Այդ ապարեզում, ասենք, մյուս քաղաքներում ևս տակավին շոշափելի հաջողությունների չէին հասել։ Բնակչության հիմնական զանգվածները դեռևս չէին կապված կինոյի՝ լուսարձակի (прожектор) կամ սինեմայի հետ, ինչպես սովորաբար կինոն կոչում էին այն ժամանակներում։

XX դարի սկզբներից Երևանում հիշատակվում են երկու կինոթատրոններ՝ Գևորգյանի «Ապոլլո»-ն, որը նշանավորն ու համեմատաբար շքեղն էր և Ջանիբեկյանի «Գրանդ իլլյուզիոն» էլեկտրաթատրոնը [4]։ Դրանցից առաջինը գտնվում էր քաղաքային այգում, այժմյան Վ. Ի. Լենինի անվան հրապարակի հարավային ծայրում, իսկ երկրորդը՝ նրա դիմաց, Ջանիփոլադյանի թատրոնի շենքում, այժմյան սպայի տանը։ Շուտով, սակայն, կինոյա-

1 ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, էմին Տեր-Գրիգորյան, Իմ հիշողություններ Երևանի թատրոնի վերաբերյալ, թ. 73—74։

2 Նույն տեղը։

3 «Эриванские объявления», 1913, №№ 70 և 75։

4 Նույն տեղը, № 28 և 69։

տերեր Գևորգյանն ու Ջանիբեկյանը սնանկանում են և հարկադրված են լինում հրաժարվել իրենց կինոթատրոններից։ 1910 թվականից հետո այդ կինոթատրոնները արդեն գտնվում էին այլ կապալառուների ձեռքին։ Կինոթատրոնների նոր տերերը վերանորոգում են իրենց դահլիճները, սահմանում են ներքին նոր կարգ ու կանոն, տոմսերի նոր՝ բարձր գներ, վարձում են նոր նվագախմբեր, կանոնավորում են հարմարանքները, «Ապոլլո»-ի նոր տերը Ռոյզելֆելդն էր, որը ըստ երևույթին ձգտում էր մեծ հարստություն կուտակել կինոյի միջոցով։ Նրա կինոյի մեկ հասարակ տոմսը արժեր 50 կոպեկ, չհաշված երաժշտության համար սահմանված հատուկ վճարը, իսկ «Գրանդ իլլյուզիոնում» յուրաքանչյուր տոմսն արժեր 35 կոպեկ [1]։

Նկարների ցուցադրումը ժամեր էր տևում, որովհետև դրանք ցուցադրվում էին ըստ առանձին մասերի, բավական մեծ ընդմիջումներով։ Երևանում ցուցադրված մեզ հայտնի նկարներից են «Տիտանիկի կործանումը» և «1812 թվականը»։ Այդ երկու նկարներն էլ ցուցադրվել են 1912 թվականին «Ապոլլո» կինոթատրոնում [2]։ «Տիտանիկի կործանումը» բաղկացած էր երկու բաժնից, իսկ «1812 թվականը»՝ չորս մասից։ Վերջինս նկարված էր 1812 թ. հայրենական պատերազմի թեմայով, ամբողջ ժապավենի երկարությունը 1500 մետր էր։ Նրանում իրրև առանձին նկարներ հիշատակվում են՝ «Բորոդինոյի դաշտը 1812 թ. օգոստոսի 26-ին», «Կուտուզովը գյուղացիների մեջ», «Նապոլեոնը և Մյուրատը», «Նապոլեոնը Կրեմլում նայում է զորքին», «Կողոպուտն ու բռնաբարությունները» և այլն [3]։

Հիշատակության արժանի նորություններ են նկատվում քաղաքի երաժշտական կյանքում։ Ուսուցչական սեմինարիայում, Գայանյան օրիորդաց ուսումնարանում, ս. Հռիփսիմեի գիմնազիայում կազմակերպվել էին աշակերտական երգչախմբեր, կինոթատրոններում, «այգիներում» կային նվագախմբեր, գիմնազիաներում ու ուսուցչական սեմինարիայում աշակերտական ուժերով պարբերաբար տրվում էին համերգներ, հաճախ կազմակերպում էին պարահանդեսներ, իսկ երբեմն էլ պարահանդես-ներկայացումներ կամ պարահանդես-համերգներ։ Տարածված էր նաև անհատական պարերի ու երգերի կատարումը [4]։ Քաղաքում երաժշտասեր-երգիչներն

1 «Эриванские объявления», 1913, № 70։

2 Նույն տեղը, 1912, № 86 և 92։

3 Նույն տեղը, № 92։

4 Տե՛ս «Պատկ», 1880, № 2, «Կռանն», 1912, № 38, «Նոր մամուլ», 1913, № 7 և այլուր։

այնքան զգալի թիվ էին կազմում, որ, ինչպես կտեսնենք քիչ հետո, նույնիսկ հնարավոր է դառնում այդ ուժերով ներկայացնել «Անուշ» օպերան։



Կոմիտաս (նկարված Երևանում 1901 թ.) (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Երևանի հանդիսականի համար մեծ նորություններ էին օպերետային ու օպերային հյուրեհկային ներկայացումները և համերգները։ Երևան գաստրոլային ներկայացումների նկած օպերետային առաջին կոլեկտիվը գերմանական մի խումբ էր, որը բաղկացած էր 60 հոգուց։ Նրա հյուրեհկային ներկայացումները տեղի են ունեցել 1912 թ. հոկտեմբերին։ Խումբը ներկայացրել է մի քանի օպերետաներ՝ «Ճլորթի» («Качели»), «Հարեմի գաղտնիքները» և այլն։ Ներկայացումները տրվել են Ջանփոլադյանի թատրոնում և դահլիճը միշտ լեփ-լեցուն է եղել։ Թերթը նշում է, որ խմբի ներկայացումները ունեցել են և զգալի թերություններ[1]։ Սակայն այդ չի խանգարել ներկայացումների հաջող ընթացքին։

1 «Эриванские объявления», 1912, № 77։

Երևանի երաժշտական արվեստի այդ շրջանի մեծագույն իրագործությունը Կոմիտասի խմբի համերգը և Ա. Տիգրանյանի կազմակերպած «Անուշ» օպերայի բեմադրությունն էին։



Կոմիտասի երգչախումբն իր ղեկավարի հետ միասին (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան)։

Կոմիտասի երգչախումբը, որը բաղկացած էր Գևորգյան ճեմարանի 85 սաներից, Թիֆլիսում 1905 թ. շշմեցուցիչ հաջողությամբ տված իր համերգից հետո 1906 թ. աշնան սկզբներին ժամանում է Երևան։ Խմբի անդամներից մեկը՝ վ. Հ. Փարսադանյանը, որն այժմ հայկական երաժշտություն է ավանդում էջմիածնի ճեմարանում, հիշում է Երևանի երաժշտական կյանքի այդ մեծ իրադարձությունը։ Երգչախմբի մենակատարներից հայտնի էին վահան Տեր-Առաքելյանը (տենոր), Սամվել Գևորգյանը (բեսպետ տղամարդ, բայց սոպրանո ձայնով) և ուրիշներ։ Համերգը տրվել է Ջանփոլադյանի թատրոնում 1906 թ. սեպտեմբեր ամսին։ Այդ սոսկ համերգ չի եղել, այլ հայկական ժողովրդական երաժշտության մեծ տրիումֆ։ Համերգի բոլոր համարները ընդունվել են բուռն օվացիայով, շատ համարներ հարկադրված են եղել կատարել 2—3 անգամ։ Համերգին նախորդել է Կոմիտասի հակիրճ ու բովանդակալից դասախոսությունը հայկական ժողովրդական երաժշտության հարստության ու առանձնահատկությունների մասին։ Հարգելի վ. Փարսադանյանը նշում է, որ Կոմիտասի այդ, ինչպես և նրա այլ տեղերում կարդացած դա-

սախոսությունները լսում էին չափազանց մեծ հետաքրքրությամբ։ Համերգն ավարտվել է դարձյալ Կոմիտասով։ Այս անգամ արդեն ոչ թե խոսքով, այլ նվագով ու երգով։ Կոմիտասը սովորություն է ունեցել համերգն ավարտել իր նշանավոր «Անտունի»-ով։ Երգի կատարման պահին տիրող քար լռությանը հաջորդել են փոթորկալից ծափերը։ Հուզված ունկնդիրներից շատերի աչքերին երևացել են արցունքներ։ Արցունքներ են երևացել նաև Կոմիտասի և նրա երախտապարտ սանիկների՝ երգչախմբի անդամների աչքերին։ Միայն մեկ համերգ տալուց հետո երգչախումբն իր դեկավարի հետ միասին վերադարձել է էջմիածին՝ երևանում ընդմիշտ թողնելով կոմիտասյան երգի անմար հուշերը։

Մոտիկ գտնվելու շնորհիվ Կոմիտասը հաճախ է եղել Երևանում։ Նրան մի քանի անգամ նկարել են Երևանի լուսանկարիչները։

Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում պահպանվել է Կոմիտասի երգչախմբի կողմից Երևանում տրվելիք մի համերգի ծրագիր, որը վերաբերում է 1908 թ. փետրվարի 22-ին և տպագրված է էջմիածնի տպարանում։ Ծրագրում հիշատակված են «Միրանի ծառ, բար մի տա», «Գարուն ա, ձուն ա արել», «Ջինար ես, կեռասնալ մի», «Լուսինը սարի տակին», «Արազը հեշտացել ա» և այլ շատ երգեր [1]։ Իբրև մենակատար ծրագրում նշվում է դարձյալ Վահան Տեր-Առաքելյանը [2]։ Խումբն ըստ այդ ծրագիր-ռեկլամի բաղկացած էր 80 հոգուց։ Ըստ երևույթին այդ համերգը տեղի է ունեցել նույն ամսվա վերջերին, կամ հաջորդ ամսվա, մարտի սկզբներին, սակայն քանի որ այդ ժամանակ Երևանում չէր հրատարակվում ոչ մի թերթ (ընդհատվել էր նաև «Эриванские объявления»-ի հրատարակումը), դրա պատճառով էլ կոմիտասյան այդ համերգի մասին տեղեկություններ չեն պահպանվել։

Մյուս խոշոր իրադարձությունը մեզ հետաքրքրող շրջանի Երևանի արվեստի բնագավառում, ինչպես նշվեց, «Անուշ» օպերայի բեմադրությունն էր 1913 թվականին։ Ինչպես հայտնի է, դա «Անուշի» առաջին բեմադրությունը չէր ընդհանրապես։ «Անուշը» Ալեքսանդրոպոլում ներկայացվել էր դեռևս 1912 թվականին։ Սակայն դրանով չի նսեմանում երևանյան առաջին ներկայացման նշանակությունը հենց այն պարզ պատճառով, որ այստեղ ևս

1 ՀՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի մատենադարան, ֆ. Ա. երիցյանի արխիվ, թղթապանակ 160, վավերագիր 143։

2 Վ. Հ. Փարսադանյանը երգչախմբի մենակատար Վահան Տեր-Առաքելյանին հիշում է Տեր-Ավագյան ազգանունով։

«Անուշը» բեմադրվել է տեղական ուժերով, ավելի քան 50 հոգուց բաղկացած մի կոլեկտիվով, որը ներկայացման համար ընդամենը մի քանի օրվա ընթացքում նախապատրաստել էր օպերայի հեղինակը ինքը՝ Արմեն Տիգրանյանը։ Խմբի բոլոր անդամները, բացառությամբ տ. Աստղիկի (լիրիկական-դրամ. սոպրանո), բացառապես համալրվել էին աշակերտ-աշակերտուհիներից, բանվորներից և առանձին մարդկանցից։ Պատրաստված էին հատուկ դեկորացիաներ, կար համապատասխան հանդերձանք։ Օպերան ներկայացվել է երկու անգամ՝ 1913 թ. փետրվարի 9-ին և 10-ին, Ջանփոլադյանի թատրոնում։ Ներկայացման մասին մամուլում նախօրոք տրվել են հայտարարություններ, որոնց մեջ նշվում են խմբի կազմի, Անուշի դերակատար տ. Աստղիկի, օպերայի հեղինակի, նրա առանձին դերերգերի ու պարերի մասին [1]։ Ներկայացումը դեկավարել է հեղինակը։

Ժամանակակից մամուլը ակտիվորեն արձագանքել է «Անուշի» երևանյան ներկայացումներին։ «Эриванские объявления» թերթիկում և «Նոր մամուլ» թերթում տպագրվել են բավական ծավալուն գրախոսականներ։ Այդ գրախոսականների հեղինակները (որոնցից մեկը էմին Տեր-Գրիգորյանն է) նշում են խմբի անփորձ լինելը, Սարոյի ու Մոսիի դերակատարների թույլ խաղը, դեկորացիաների պակասությունները և այլ թերություններ։ Սակայն ներկայացումն ընդհանուր առմամբ համարում են հաջողված։ էմին Տեր-Գրիգորյանն իր գրախոսականի ամփոփման մեջ նշում է, որ «Տաս օրվա մեջ պ. Տիգրանյանը կազմակերպել է ավելի քան 50 անձիքներից խմբեր, որոնք շատ լավ տարան իրենց գործը։ Խմբական խաղերը, երգերն ու պարերը միանգամայն գոհացուցիչ էին» [2]։ Նա առանձնապես բարձր է գնահատում տ. Աստղիկի խաղը. «Ողջունում ենք տ. Աստղիկին իբրև առաջին երգիչ-դերասանուհուն։ Ցանկանում ենք նրան լիուլի հաջողություն և ապագայում, բեմական ասպարեզի վրա»,— գրում է Տեր-Գրիգորյանը [3]։ Ներկայացման ընդհանուր ընթացքը, հատկապես խմբական պարերն ու երգերը գովասանքով է նշում և «Նոր մամուլի» գրախոսը։ Վերջինս ևս հիացած էր Աստղիկի խաղով։ Նա գրում է, որ «Հարգելի տիկինը յուր գեղեցիկ խաղով ու գրավիչ սոպրանո ձայնով արտահայտեց այն, ինչ որ ուզեցել է ասել Հ. Թումանյանը և ինչպես որ ձգտել էր արտա-

1 Տե՛ս «Նոր մամուլ», 1913, № 63, «Эриванские объявления», 1913, № 13։

2 «Эриванские объявления», 1913, № 14։

3 Նույն տեղը։

հայտել Անուշի բեռանով, պ. Տիգրանյանը...: Տ. Աստղիկը հանդիսացավ «Անուշ» օպերայի զարդն ու ոգին»[1]:



Արմեն Տիգրանյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան):

Սակայն դրախոսների ամենաբարձր գնահատականները վերաբերում են օպերայի հեղինակին: «Պ. Տիգրանյանին մենք պետք է շնորհավորենք իր վատահ գործով. մի խիստ դժվարին գործ, որ մեր Կովկասի մեջ հայ օպերայի առաջնությունն է կազմում...: Գալով մուղիկային, մենք ձեռնպահ ենք մնում, բայց և այնպես հայտնում ենք մեր գոհունյունը պ. Տիգրանյանին, որն ամեն կերպ աշխատել էր հայկական հոգի տալ իր գործին...»[2]: Է՛լ ավելի բարձր գնահատական է տալիս «Նոր մամուլի» գրախոսողը, որը երաժշտության մեջ ավելի գիտակ է և խոսում է մասնագիտական մանրամասնություններով: Հարկ ենք համարում բերել նրա գնահատականի խոսքերը, որոնք ավելի որոշակի գաղափար են տալիս և՛ օպերայի արվեստի, և՛ դրա բեմադրության հաջողության մասին. «Երկրորդ գործողության մեջ համբարձման երգերը մուղիկայի տակ, խմբական ծիծաղը և մխիթարությունը Անուշին, այնքան ներդաշնակություն կար նրա մեջ, որ դա մի պիես է և որը պատիվ է բերում երիտասարդ երաժշտագետ Տիգրանյանին և նրա ապագա առաջադիմության»[1],— գրում է գրախոսողը, իսկ իրեն իր գրախոսականի ամփոփում նա հետևյալ կերպ է բնութագրում «Անուշ» օպերան և նրա երևանյան բեմադրությունը.

«Վերև հիշված նկատողություններով հանդերձ առանձնապես մեծ գովասանքի և շնորհակալությունների արժանի է պ. Տիգրանյանը, նախ, որ մեծ եռանդով կարողացավ սիրողներով, այն էլ անփորձ սիրողներով, յուր դժվարին ձեռնարկը գլուխ բերել և ժողովրդի էսթետիկական ճաշակին բավարարություն տալ և երկրորդ, որ ամենագլխավորն է, երաժշտությունը կաղապարել էր մի այնպիսի համաությամբ, որ ինչպես մենք ենք ասում, միանգամայն հայության հոտ էր փչում. չկար նրանց մեջ կեղծիք, չկար շինծուություն...:

Տպավորությունը ընդհանրապես շատ լավ էր: Տիկին Աստղիկը բուռն ծափահարությունների տակ մի քանի անգամ բեմ հրավիրվեց: Ներկա եղող հասարակությունը առանց բացառության ծափահարությունների տարափի տակ բեմ հրավիրելով երիտասարդ երաժշտագետ Տիգրանյանին, յուր շնորհակալությունը հայտնեց:

«Անուշ» օպերան հանդիսանում է մի դարագլուխ մեր բեմի պատմության մեջ և վստահությամբ կարելի է ասել, որ նա ժամանակին կդառնա հայ բեմի ամենագեղեցիկ զարդերից մեկը»[2]:

Հանրահայտնի է, որ «Անուշը» հայկական օպերայի հիմնադրման օրից սկսած չի իջնում բեմից, որ նրա շատ երգերը երգում է ամբողջ ժողովուրդը, որ նրա կատարումը սկսվելով սիրողներով և շնորհալի Աստղիկով ու ապագա անզուգական Սաթոյով՝ Շարա Տալյանով, հասել է մինչև համբավավոր Հայկանուշ Դանիելյանն ու մեծահռչակ Գոհար Գասպարյանը: Իրավացի էին գրախոսողները,

1 «Նոր մամուլ», 1913, № 66:

2 «Эриванские объявления», 1913, № 14:

1 «Նոր մամուլ», 1913, № 66:

2 Նույն տեղը:

«Անուշը», նրա հեղինակի տարիների աշխատանքով մեր ազգային օպերայի ամենամեծ գարդը դարձավ։

«Անուշի» բեմադրությունից մոտ երկու շաբաթ անց Ջանփոլադյանի թատրոնում մեծ համերգ են տալիս օպերային դերասան Վ. Ն. Դոլգարը և դերասանուհի Մարտա Մարենը։ Նրանց ծրագիրը կազմված էր ռուսական, հայկական, ֆրանսիական և իտալական կոմպոզիտորների ստեղծագործություններից[1]։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այս տիպի հյուրեկային համերգներն ավելի հաճախակի են դառնում։

Ընդհանուր գծերով արտահայտված այդպիսին էր Երևանի երաժշտական կյանքը 1879—1914 թթ.։

Երևանում հիշատակվում են մի քանի լուսանկարիչներ։ Դրանցից էին Տեր-Արիստակեսյան եղբայրները, Լևոնը և ուրիշներ[2]։ Կոմիտասի լուսանկարներից մեկը, որ պահպանվել է մինչև մեր օրերը և վերաբերում է 1901 թվականին, նկարել են Արիստակեսյան եղբայրները։

Կերպարվեստի մեզ հայտնի միակ նորությունը Հովհաննես Տեր-Թադևոսյանի նկարների ցուցահանդեսի կազմակերպումն էր։ Ըստ ռեկլամի, այդ ցուցահանդեսը քաղաքում բացվել է 1912 թ. ապրիլի 22-ին, քաղաքային ակումբում։ Այն իր մեջ բովանդակել է Մոսկվայի կենդանագրական ուսումնարանի աշակերտ, երիտասարդ ու շնորհալի նկարչի էյուդային նկարներն ու նրա փորագրությունները։ Ցուցահանդեսում ներկայացված էին խոստումնալից նկարչի 92՝ ամենատարբեր բովանդակության և տարբեր բնույթի կատարման նկարներ։ Բացառությամբ երեքի, մյուս բոլոր նկարները եղել են յուղաներկ։ Նկարների մեծագույն մասը պատկերում էր տեղական տեսարանները։ Ժանրային նկարներ գրեթե չկային[3]։ Հովհաննես Տեր-Թադևոսյանի նկարների ցուցահանդեսը առաջինն էր և՛ երիտասարդ նկարչի կյանքում, և՛ Երևան քաղաքում։ Նա արժանի է ուշադրության, սակայն մեր ձեռքի տակ եղած նյութը սահմանափակվում է միայն նշվածով, իսկ այդ, ինչպես և մասնագետ չլինելը թույլ չեն տալիս ավելին ասելու Տեր-Թադևոսյանի անդրանիկ ցուցահանդեսի մասին։

1 «Նոր մամուլ», 1913, № 66։

2 Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, թատերա-երաժշտական բաժին, գգ. 185 և 188, «Эриванские объявления», 1912, № 96 և այլ տեղերում։

3 «Эриванские объявления», 1912, № 35։

Երևան քաղաքը իսպառ զուրկ է եղել հուշարձաններից։ XX դարի սկզբներից Բաքվի կուլտուրական ընկերությունը նախաձեռնում է Խ. Աբովյանի հուշարձանի կառուցման գործը։ Այդ նպատակի համար մի քանի տարի շարունակ նա կատարում է հանգանակություններ։ Արձանի հեղինակը Ա. Տեր-Մարուքյանն էր, որի ներկայացրած նախագիծը կերպարվեստի ակադեմիայի կողմից որոշ փոփոխություններ մտցնելուց հետո՝ 1912 թ. ամառը Կովկասի փոխարքայի կողմից արդեն թույլատրված էր իրականացնել[1]։ Բոլոր կարգի խափանումները դրանով արդեն վերացված էին։ Անհրաժեշտ էր միայն հանգանակության միջոցով լրացնել պահանջվող գումարը և հոգ տանել ժամանակին արձանը կառուցելու մասին։ Մամուլի հաղորդման համաձայն, 1913 թ. վերջերին Երևան է ժամանում արձանի հեղինակ անդրիագործ Տեր-Մարուքյանը։ Նա քաղաքի կենտրոնական զբոսայգու հյուսիսային անկյունում (այժմյան Վ. Ի. Լենինի հուշարձանից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա) պատրաստել է տալիս մի տախտակամած և գցել տալիս ապագա հուշարձանի հիմքը։ Ըստ նախագծման, արձանը պետք է կանգնեցվեր հաջորդ տարում և նա պետք է ունենար 10 արշին բարձրություն։ Ըստ նախագծի, արձանի համար պահանջվում էր 17.000 ռուբլի, որից Տեր-Մարուքյանի այցի ժամանակ հավաքել էին 8000 ռուբլուց մի փոքր ավելի, մնում էր դեռևս հանգանակել 9000 ռուբլի[2]։ Թվում էր, թե ամեն ինչ հարթված է, պակասող գումարը շուտով կհավաքվի և Երևանը կզարդարվի հայ ժողովրդի մեծ զավակի ու լուսավորչի բրոնզե բարձրաճաշակ արձանով։ 1914 թվականին արձանը Փարիզում արդեն պատրաստված էր։ «Գաղութ» թերթի հաղորդման համաձայն, այդ տարվա հենց սկզբներից նախապատրաստում էին հուշարձանի կանգնեցման գործը[3]։ Սակայն մասամբ հանգանակության անհաջողությունների հետևանքով միջոցների պակասությունը, մասամբ իրավասուների դանդաղկոտությունն ու մասամբ էլ քաղաքիս մտավորականության մի մասի անտարբերությունը պատճառ են դառնում գործի ձգձգման[4]։ Շուտով վրա է հասնում առաջին համաշխարհային պատերազմը և Խ. Աբովյանի արդեն պատրաստի հուշարձանը մնում է Փարիզում։

1 «Эриванские объявления», 1912, № 54։

2 Նույն տեղը, 1913, № 87։

3 «Գաղութ» (լրագիր), Ռոստով (Դոնի վրա), 1914, № 1։

4 Տե՛ս «Эриванские объявления», 1913, № 85, 1914, № 25 և այլ տեղերում։

Երևանում 1913 թ. վերջերին նույնիսկ չեն կարողանում հանգանակության միջոցով հավաքել հուշարձանի պատվանդանի համար պահանջվող 3000 ռուբլին [1];

Նախասովետական Երևանն այդպես էլ մնում է առանց որևէ հուշարձանի։

Խ. Աբովյանի բրոնզաձույլ արձանը, որն այնքան բարձր գնահատականի է արժանացել մասնագետների կողմից, Փարիզից բերվել է Հայաստան սովետական կարգերի հաստատումից հետո՝ 1925 թվականին և կանգնեցվել 1933 թվականին [2], այժմյան «Մոսկվա» կինոթատրոնի և «Երևան» հյուրանոցի միջև գտնվող փոքրիկ հրապարակում։ Խ. Աբովյանի նոր արձանը՝ Աբովյան փողոցի հյուսիսային վերջավորությունում գտնվող՝ Աբովյանի պուրակում կանգնեցնելուց հետո Տեր-Մարուքյանի նշված արձանը տեղափոխեցին Հրազդանի գեղատեսիլ ձորը, այն Հրազդանը, որն այնքան պատկերավոր նկարագրված է «Վերք Հայաստանի» մեջ։

---

1 *Տե՛ս* «Эриванские объявления», 1913, № 85։

2 *Տե՛ս «Սովետական Հայաստան» (լրագիր), 1925, № 49, 1933, №№ 155 և 156։*

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1914—1917 ԹԹ.

Նկատի ունենալով, որ նախորդ բաժինը շարադրելիս այս կամ այն հարցի գծով հաճախ խոսել ենք նաև առաջին համաշխարհային պատերազմի տարիների մասին, ուստի այս ընդարձակ թեմայից կանդ ենք առնելու միայն երեք հիմնական հարցերի վրա, դրանք են՝ առաջին՝ համաշխարհային պատերազմը և Երևանը, երկրորդ՝ քաղաքի տնտեսական ու մշակութային կյանքի անկումը պատերազմի հետևանքով և մշխատավորների ապրուստի պայմանների վատթարացումը, երրորդ՝ ներգաղթը Երևան։ Ընդ որում, դրանք քննարկվելու են ոչ թե համակողմանիորեն, ինչպես սովորաբար կատարել ենք նախորդ բաժիններում, այլ գերազանցապես պատերազմի թողած ազդեցության տեսանկյունով։

1. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԸ

Պատերազմի սկիզբը և Հայաստանը որպես պատերազմական թատերաբեմ: 1914 թ. հուլիսի 22-ի ցույցը Երևանում: Երևանյան չոկատի վիրավոր ու հիվանդ զինվորներին ֆաղաքային դումայի կողմից ցույց տրված դրամական օգնությունը: «Հայ կամավորների խմբերին օգնող հայուհյաց» ընկերությունը և դրա գործունեությունը: Վիրավոր զինվորների համար Երևանում հայկական հիվանդանոց ստեղծելու հարցը: Զեմստվոների և ֆաղաքների համառուսական միությունները և դրանց գործունեությունը: Քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն: Համառուսական կարմիր խաչի Երևանի կազմակերպությունը և դրա գործունեությունը պատերազմի տարիներին: Պետական փոխառությունները և դրանց բնույթը: Դրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո. հեղափոխական շարժման աշխուժացումը և բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների կազմակերպումը և դրանց կազմն ու ֆաղաքականությունը, հեղափո-

խական շարժման ուժեղացումը Բաղաֆի ձեռնարկություններում 1917 թ. մայիս–հունիս ամիսներին, մարքսիստական աշակերտական միության կազմակերպումը, հեղափոխական շարժումները Բաղաֆի զորացական հաստատություններում 1917 թ. աշնանը:

1914 թ. օգոստոսի 1-ին սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, որը զավթողական պատերազմ էր իմպերիալիստական խոշոր պետությունների երկու խմբերի՝ գերմանա-ավստրիական բլոկի և Անտանտի միջև: Վերջինս կազմավորվել էր դեռևս 1893—1907 թթ. և բաղկացած էր Անգլիայից, Ֆրանսիայից և Ռուսաստանից: Իմպերիալիստական յուրաքանչյուր պետություն մինչև պատերազմի սկսվելը և, մանավանդ, դրա բռնկումից հետո բոլոր միջոցներով ձգտում էր այն իր ժողովրդին ներկայացնել որպես հայրենական պատերազմ, որպես պաշտպանողական պատերազմ: Իմպերիալիստական բոլոր կառավարություններն էլ իրենց վարած զավթողական պատերազմները խնամքով թաքցնում էին իրենց ժողովրդից:

Հայրենական ու պաշտպանողական ներկայացնելով զավթողական պատերազմը՝ իմպերիալիստական պետությունների կառավարությունները ամեն կերպ ձգտում էին առավելագույն չափով օգտագործել երկրի բոլոր հնարավորությունները: Այդ ձևով էր վարվում և ցարական կառավարությունը: Նա ստեղծում էր պատերազմին օգնող կազմակերպություններ՝ ռազմա-արդյունաբերական կոմիտե, զեմստվոյական և Ռուսաստանի քաղաքների միություններ, կարմիր խաչի կազմակերպություններ, կազմակերպում էր կամավորական ջոկատներ, վիրավորներին ու առանձին ջոկատներին օգնող ընկերություններ, կատարում էր հանգանակություններ, բաց էր թողնում փոխառություններ և այլն, և այլն: Ցարական կառավարության այդ բոլոր միջոցառումները վերաբերում էին նաև Հայաստանի՝ Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող մասին՝ Արևելյան Հայաստանին: Ավելին, Արևելյան Հայաստանը Անդրկովկասի մի մասի հետ միասին անմիջապես մրտնում էր պատերազմական գործողությունների թատերաբեմի մեջ: Նույնպիսի վիճակի մեջ էր և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանը: Հայաստանն ամբողջությամբ պատերազմական գործողությունների օղորտ էր, ավերում բերող պատերազմի թատերաբեմ:

Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ճնշմամբ և նրանց օրինակով 1914 թ. հուլիսի 16-ին (29-ին) Ռուսաստանը սկսել էր

մասնավոր, իսկ հաջորդ օրն իսկ (հուլիսի 17-ին՝ նոր տոմարով 30-ին) ընդհանուր զորահավաքը: Վերահաս պատերազմի վտանգը երկրում հայտնի էր դեռ դրանից էլ առաջ, և ցարական օրգաններն ամենուրեք կազմակերպում էին հակաավստրո-հունգարական ցույցեր: Այդպիսի մի ցույց էլ հուլիսի 22-ին կազմակերպվում է Երևանում: Ըստ հաղորդումների, ցույցը սկսվել է քաղաքի հայ բնակիչների նախաձեռնությամբ առավոտյան ժամը 10-ին, իսկ հետո հայ ցուցարարներին են միացել նաև քաղաքի մյուս բնակիչները: Ցուցարարները ղուռնայի նվագակցությամբ դրոշակներով շարժվել են քաղաքի փողոցներով, քաղաքային զբոսայգու մոտ միտինգ են կազմակերպել և ապա Աստաֆյան փողոցով բարձրացել են դեպի վեր: Ցույցը ղեկավարել է սահմանապահ զորքերի գեներալը: Գրեթե նույն ժամերին քաղաքի հրեաները նույնպես մի փոքրիկ ցույց են կազմակերպել, իսկ երեկոյան աստիճանավորների ակումբի առաջ տեղի է ունեցել այդ օրվա երրորդ ցույցը, որտեղ նվագել է փողային նվագախումբը, արտասանվել են ճառեր: Ցույցին ակտիվորեն մասնակցել են աշակերտները, պահեստայինները, որոնք արդեն պետք է մեկնեին պատերազմ, և մի քանի կամավորներ[1]: Հայերի ավելի ակտիվ լինելը պետք է բացատրել ոչ թե ցարական արտաքին ու ներքին քաղաքականության նկատմամբ տածած «համակրանքով», այլ նրանով, որ նրանք թուրքական լծի տակ հեծող իրենց ազգակիցների ազատագրման գործը մասամբ կապում էին վրա հասնող պատերազմի հետ: Հենց դրանով է պայմանավորված կովկասահայերի անչափ մեծ ակտիվությունն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին առանձնապես կովկասյան ռազմաճակատում: Երևանից պատերազմին մասնակցում էին բազմաթիվ կամավորներ: Պատերազմական գործողությունների ընթացքում Երևանյան ջոկատը ամենաաչքի ընկնող զորամասերից մեկն էր: Երևանի քաղաքային դուման ամեն կերպ օգնում և օժանդակում էր այդ ջոկատի վիրավորներին ու հիվանդներին: Ըստ արխիվային փաստաթղթերի, 1914 թվականի հոկտեմբերին դուման Երևանյան ջոկատի վիրավոր ու հիվանդ դինվորներին ցույց էր տալիս արդեն երկրորդ դրամական օգնությունը՝ 3000 ռուբլի գումարով, իսկ առաջին օգնությունը դարձյալ նույնքան գումարով նա ցույց էր տվել դրանից մեկ ամիս առաջ[2]: Քաղաքագլուխ Մելիք-Աղամալ-

1 «Эриванские объявления», 1914, № 56:
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 709, թ. 6:

յանը 1914 թ. հոկտեմբերի 23-ին դումայի այդ որոշման մասին պաշտոնական դրությամբ հայտնում է Կովկասի փոխարքային, որի համար վերջինիս անունից ստանում է դրավոր շնորհակալություն [1]։

1914 թ. նոյեմբերի 30-ին Երևանում կազմակերպվում է «Հայ կամավորների խմբերին օգնող հայուհյաց» ընկերությունը [2]։ Ընկերության հիմնական նպատակը հայ կամավորներին դրամով և այլ միջոցներով օգնելն էր։ Այդ ընկերությունն իր կազմակերպվելու օրից մեկ շաբաթ անց տեղական թերթում տալիս է հետևյալ հայտարարությունը. «Նոյեմբերի 30-ին Երևանում կազմակերպվեց «Հայ կամավորների խմբերին օգնող հայուհյաց ընկերությունը»։ Այն անձինք, որոնք ցանկանում են իրենց աջակցությամբ օգնել ընկերությանը, շուտափույթ օգնություն հասցնել կամավորներին և հոգալ անհրաժեշտ կարիքները, խնդրում ենք իրենց նվերները հանձնեն վարչության անդամներին, սկսած դեկտեմբերի 3-ից...» [3]։

Ընկերությունը ծավալում է բավական ակտիվ գործունեություն։ Նա իր անդամների միջոցով բնակիչներից հավաքում է դրամական օգնություն։ Գործին ավելի մեծ թափ ու աշխուժություն հաղորդելու համար ընկերությունը օգնություն ցույց տվողների ցուցակները, նրանցից յուրաքանչյուրի տված գումարի նշումով, պարբերաբար հրապարակում է տեղական մամուլում։ Ցուցակներից երևում է, որ օգնությունը հավաքվում էր դրամով՝ մի քանի կոպեկից սկսած մինչև ցանկացած մեծ գումարը։ 1915 թ. հունվարի դրությամբ ամենամեծ գումարը՝ 100 ռ. տվել էր միայն Աֆրիկյանը [4]։

Անկախ հայուհիների այդ ընկերությունից, քաղաքում 1914 թ. նոյեմբերի սկզբներից կազմավորվում է բարեգործական մի այլ ընկերություն, որի նպատակը Երևանում վիրավոր զինվորների համար 30 մահճակալանոց «Հայկական հիվանդանոցի» կազմակերպումն էր։ Հիվանդանոցը պետք է կառավարեին քաղաքի հայ տիկինների կողմից ընտրված 20 հոգուց բաղկացած կոմիտեն և բարեգործական ընկերության վարչությունը։ Ղեկավարման աշխատանքներն անմիջապես անօրինելու համար 20 հոգուց բաղ-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 709, թ. 11։

2 «Эриванские объявления», 1914, № 84։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը

կացած տիկնաց կոմիտեն իր միջից ընտրել էր 5 հոգիանոց հանձնաժողով՝ տ. Անդրեասյանի նախագահությամբ։ Հիվանդանոցը պետք է տեղադրվեր Բ. Եղիազարյանի տան երկրորդ հարկում (Աստաֆյան փողոցի վրա), որը ապագա հիվանդանոցին էր զիջվել անվճար, հիվանդանոցը կառավարելու էր բժ. Հ. Հովհաննիսյանը՝ դարձյալ անվճար [1]։ Տեղական մամուլում հիվանդանոցի կազմակերպչական կողմի մասին անհրաժեշտ տեղեկություններից բացի թվարկվում է քաղաքացիների կողմից հիվանդանոցի օգտին կատարված նվիրաբերությունները՝ նվիրատուների անուն ազգանունների նշումով [2]։ Նվիրաբերությունները շարունակվում են նույն տարվա նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսներին և 1915 թվականին [3]։ Նվիրաբերում էին մահճակալներ, անկողին, սպիտակեղեն, անընդամբերքներ, դրամ և այլն։

Պատերազմը հաղթական ավարտի հասցնելու հարցում ցարական կառավարությանը համահավասար շահագրգռված էին և ցարական պետության հենարան դասակարգերը՝ կալվածատիրությունն ու բուրժուազիան։ Դրանք կադետական կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպում էին համառուսական զեմստվոյական և քաղաքների միություններ, որոնք պետք է ամեն կերպ օգնեին երկրի ռազմունակության բարձրացմանը։ Դրանց նպատակներից մեկն էլ ռևոլյուցիան խափանելն էր։ Այդ ընդհանուր խնդիրներից բացի, որոնցում հավասար չափով շահագրգռված էին և՛ զեմստվոյական, և՛ քաղաքների միությունները, համառուսական քաղաքների միությունը իր գործունեությամբ ձգտելու էր պետության մեջ հնարավորին չափով բուրժուազիայի աղդեցությունն ուժեղացնել։ Զեմստվոյական միությունն իր բնույթով լիբերալ-կալվածատիրական էր, իսկ քաղաքների միությունը՝ բուրժուական։

Համառուսական զեմստվոյական միությունը վերջնականապես կազմակերպվում է 1914 թ. հուլիսի 30-ին, համառուսական զեմստվոյի համագումարում [4]։ Դրա գլխավոր կառավարիչ է ընտրվում կադետական կուսակցությանը մոտ կանգնած՝ Գ. Ե.

1 «Эриванские объявления», 1914, № 78։

2 Նույն տեղը։

3 Տե՛ս նույն տեղը, №№ 82, 84 և 1915 թվականի հունվար, փետրվար և այլ ամիսների համարները։

4 *А. П. Погребинский*, К истории союзов земств и городов в годы империалистической войны («Исторические записки», т. 12, Москва, 1941, էջ 40)։

Լվովը։ Միայն մի քանի օր դրանից անց քաղաքագլուխների համառուսական առաջին համագումարում, որը տեղի է ունենում Մոսկվայում 1914 թ. օգոստոսի 8—9-ը, կազմակերպվում է քաղաքների համառուսական միությունը, որի գլխավոր կառավարիչ է ընտրվում Մոսկվայի քաղաքագլուխ, կադետ Մ. Վ. Չելնոկովը։

Զեմստվոների ու քաղաքների միությունները իրենց կազմով, խնդիրներով և պարտականություններով իրար նման էին։ Այդ պատճառով էլ դրանց կառուցվածքը գրեթե նույնն էր[1]։ Անգրկովկասում զեմստվոներ գոյություն չունեին, հետևապես այստեղ գոյություն չունեին նաև համառուսական զեմստվոների տեղական օրգաններ։

Քաղաքների միության տեղական օրգաններն էին քաղաքային կոմիտեները։

Միության մեջ ընդգրկված քաղաքների թիվը, որ 1914 թ. 140 էր, նույն թվականի հոկտեմբերին հասնում է 250-ի, 1915 թ. հունվարին՝ 410-ի, իսկ այդ տարվա վերջին ամսին՝ 464-ի։ Զեմբստվոների և քաղաքների գլխավոր կոմիտեները ունեին տարբեր բաժիններ։ 1915 թ. վերջերին քաղաքների միության գլխավոր կոմիտեն ուներ բժշկա-սանիտարական, էվակուացիայի, նյութերի ու սպիտակեղենի պատրաստման, սանիտարա-տեխնիկական, կապի և այլ բազմաթիվ բաժիններ։ Փետրվարյան հեղափոխության նախօրյակին նրա բաժինների թիվը արդեն հասնում էր 40-ի[2]։

Պատերազմի սկզբում նշված միությունների պարտականությունները շատ համեստ էին։ Դրանք իրենց պարտքն էին համարում միայն օգնել վիրավոր ու հիվանդ զինվորականներին։ 1914 թ. աշնանից միություններն արդեն անմիջականորեն սպասարկում էին ճակատային թիկունքներին[3]։ Միությունների պրակտիկ գործունեությունը սովորաբար բաժանվում է երկու շրջանի։ Առաջին շրջանում, որն իր մեջ ընդգրկում է կազմակերպվելու օրից մինչև 1915 թ. ամառը, միությունները գլխավորապես զբաղվում էին հիվանդ և վիրավոր զինվորականներով, իսկ 1915 թ. մայիսի վերջերից դրանց պարտականությունները զգալի չափով ավելանում են։ Այդ ժամանակվանից սկսած միությունները ավելի մեծ չափով են զբաղվում բանակի մատակարարմամբ, որի համար նրանք ստեղծում են տնայնագործական բազմաթիվ արհեստանոցներ և

1 Տե՛ս «Исторические записки», т. 12, էջ 41—42։
2 Նույն տեղը, էջ 41։
3 Նույն տեղը։

արդյունաբերական մանր ձեռնարկություններ։ Զեմստվոների և քաղաքների միություններն ունեին հսկայական ֆինանսական միջոցներ։ Դրանց միջոցները կուտակվում էին տեղական կազմակերպությունների հատուկ մուծումներից, նվիրատվություններից և կառավարական նպաստներից։ Միայն կառավարության տված նպաստը 1916 թ. արդեն հասել էր 500 միլիոն ռուբլու[1]։

1915 թվականի հունիսի 5-ին Մոսկվայում միաժամանակ տեղի ունեցած՝ քաղաքների ու նահանգների զեմստվոների լիազորների համագումարները որոշում են բանակին մատակարարելու գծով ստեղծել քաղաքների ու զեմստվոների միությունների միացյալ օրգան՝ գլխավոր կոմիտե, որը հապավմամբ հայտնի է «Земгор» անունով։ Գլխավոր կոմիտեն բաղկացած էր 8 անդամից, որոնցից չորսը զեմստվոների միությունից էր, իսկ մյուս չորսը՝ քաղաքների միությունից։ «Земгор»-ը վերջնականապես ձևավորվել է 1915 թ. հուլիսի 10-ին։ Այն գլխավարում էին Լվովն ու Չելնոկովը։ Զեմստվոների ու քաղաքների համառուսական միություններն իրենց գոյությունը պահպանել են մինչև 1918 թ. հուլիս ամիսը։ Դրանք Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նկատմամբ թշնամաբար էին տրամադրված, հեղափոխությունից հետո կազմակերպում էին սաբոտաժներ։ 1918 թ. Ժողովրդական կոմիսարների խորհուրդը վերացնում է նշված միությունները, դրանց ունեցվածքը հայտարարելով պետական սեփականություն[2]։

Ինչպես ասվել է, Կովկասում, Մերձբալթիկայում և մի քանի ուրիշ տեղերում զեմստվոներ չէին մտցվել։ Հետևապես նշված միություններից միայն համառուսական քաղաքների միությունն է, որ Կովկասի քաղաքներում ուներ իր տեղական կոմիտեները։ Երևանի կոմիտեն հավանաբար կազմվել էր 1915 թ. հունվարին կամ փետրվարին։ Պետության կենտրոնական քաղաքների կոմիտեների համեմատությամբ քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեի գործունեությունն ավելի փոքր մասշտաբներ ուներ և պարտականությունները ավելի համեստ էին։ Այդ հետևանք էր այն բանի, որ քաղաքների միության կորիզը կազմող բուրժուազիան Երևանում թույլ էր։ Նա թույլ էր և իր կապիտալներով և իր խաղացած դերով ու իրավունքներով։ Բայց և այնպես քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն

1 Տե՛ս «Исторические записки», т. 12, էջ 40—42։
2 Տե՛ս նույն տեղը, էջ 41—60։

գործում էր բավական ակտիվորեն։ Նա իդեական դիմնաղեիայի ու ուսումնարանների աշխատակիցների միջոցով տնայնագործական եղանակով գործող բանակի համար պատրաստել էր տալիս տաք հագուստ (գուլպաներ, ֆուֆայկաներ և այլն) և սպիտակեղեն։ Իրրև անմիջականորեն պատերազմական գործողությունների գոտում գտնվող քաղաք, Երևանի կոմիտեն առաջին հերթին զբաղվում էր ճակատայինների համար նվերներ հավաքելով, վիրավոր ու հիվանդ զինվորների օգտին բնակչության մեջ հանգանակություն կազմակերպելով և ռազմաճակատի հետ կապված այլ խնդիրներով։ Ինչպես մյուս տեղերում, այնպես էլ Երևանում միության տեղական կոմիտեն հանդես էր գալիս ժողովրդի ու հայրենիքի անունից, ռուսական զենքի փառքի անունից։ Ահա նրա կոչերից մեկը.

«Քաղաքացիներ! Կովկասյան ճակատի մեր հերոսները հաղթահարելով անմարդկային արգելքները, հաղթական կերպով շարժվում են առաջ և առաջ, հնազանդեցնելով անմատույց ամրություններ։

Այնտեղ, Էրզրումից այն կողմ, ձյունապատ լեռնագագաթներում թափանցելով դեպի Տրապիզոն, կռում են Ռուսաստանի փառքն ու պատիվը։

Մենք հպարտ ենք գիտակցելով, որ այդ հերոսները մեր հայրերն ու եղբայրներն են։

Մոտենում է սրբազան տոնը, որը քրիստոնյայի հոգին լցնում է ուրախությամբ։

Քաղաքացիներ! Մոտեցող սրբազան օրը հիշենք մեր երջանկության այդ դարբինների մասին։

Քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն, տեղական հասարակության սիրալիր մասնակցությամբ, մեր հերոսների զատկական նվերների համար պետք է անցկացնի նվիրատվություն։

Զոհողություն արեք, ով ինչքան կարող է։

Քաղաքացիներ! Հանուն էրզրումի հերոսներին «կարմիր ձու» տալու [1]։

Միանգամայն տրամաբանական է, որ այս և նման կոչերը հայ բնակչության շրջաններում մեծ արձագանք պետք է գտնեին։ Ցարական տեղական օրգաններն օգտվում էին բնակչության դյուրահավատությունից։ Նրանք Թուրքական ճակատում ռուսական զորքերի գործողությունները հայ բնակչությանը ներկայացնում էին նաև իբրև Արևմտյան Հայաստանի ազատագրման համար ծավալված կռիվներ։

Քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն կովկասյան բանակին օգնելու գործը, սակայն, մեծ մասամբ կատարում էր համառուսական կարմիր խաչի տեղական կազմակերպության միջոցով։

Ռուսական կարմիր խաչի ընկերության օգտին կատարվող նվիրաբերությունները Երևանում սկսվում են պատերազմական գործողություններից մի քանի օր անց։ Օգոստոսի սկզբներին այդ մասին քաղաքային դուման հատուկ որոշում է ընդունում և, Երևանի նահանգապետի կողմից այդ որոշումը հաստատվելուց հետո, քաղաքային վարչությունն անմիջապես ձեռնամուխ է լինում նվիրաբերությունները հավաքելու գործին [1]։ Շուտով, սակայն, նվիրատվությունների հավաքումն ամբողջությամբ անցնում է ռուսական կարմիր խաչի ընկերության Երևանի կոմիտեի ձեռքը։ 1914 թվականի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում կարմիր խաչի տեղական կոմիտեն քաղաքի բնակիչներից հավաքում է զանազան նվիրաբերություններ՝ սպիտակեղեն, հագուստ (այդ թվում և տաք հագուստ), աննդամթերքներ և այլն։ Նվիրաբերությունների մասին՝ նվիրաբերողների ազգանունների և նրանցից յուրաքանչյուրի նվիրաբերած դրամի կամ իրի նշումով, լայն կերպով տեղեկանում ենք պարբերաբար հրատարակվում «Эриванские объявления» թերթերի համարներում [2]։ Միայն օգոստոս ամսին հիվանդ և վիրավոր զինվորների օգտին քաղաքում հավաքել էին ավելի քան 2400 ռուբլի դրամ [3]։

Իրերի և դրամի նվիրաբերությունները շարունակվում են նաև 1915 և 1916 թվականներին։ Նվիրաբերությունները տարբեր ամիսների տարբեր քանակի էին հասնում։ Դրանք առանձնապես մեծ չափեր էին ընդունում կրոնական և քաղաքացիական տոներին։ Երևանում 1914 թ. նոյեմբերի 16-ից մինչև 23-ը հայտարարվում է «սպիտակեղենի շաբաթ»։ Կարմիր խաչի տեղական վարչությունը, որի նախագահը հենց ինքը՝ նահանգապետ կոմս Տիզենհաուզենն էր, «սպիտակեղենի շաբաթ» հայտարարելով քաղաքի բնակչությա-

1 «Эриванские объявления», 1916, № 12։

1 «Эриванские объявления», 1914, № 58։
2 Նույն տեղը №№ 61, 62, 66, 69, 76, 78 և այլն։
3 Նույն տեղը, № 69։

նը կոչ է անում վիրավոր զինվորներին և պահեստայինների ընտանիքներին օգնելու համար զոհաբերել ով ինչ և ինչքան կարող է։ Նա կոչ է անում նվիրաբերել սպիտակեղեն, տաք հագուստ, ոտնաման, տղամարդկանց, կանանց կամ երեխայի նոր կամ մաշված շորեր, տաք վերնաշապիկներ, ֆուֆայկաներ, գուլպաներ, ձեռնոցներ, զբլանակներ, լուցկի, ծխախոտ, օճառ, շոր սննդամթերքներ, թեյ, շաքար և այլն։ Նվիրաբերությունների մասին հրապարակում էին ամենօրյա ցուցակներ և գիտություն բոլորի [1]։ Նույն թվականի նոյեմբերի վերջերին վիրավորների ընթերցանության համար քաղաքում սկսում են հավաքել հին թերթեր, ամսագրեր, զանազան գրքեր և այլ նյութեր [2]։

1914 թ. օգոստոս—դեկտեմբեր ամիսներին կարմիր խաչի տեղական կազմակերպության, քաղաքային դումայի ու վարչության, քաղաքի մի շարք դպրոցների և անհատ մարդկանց միջոցով նվիրատվությունների ձևով զգալի օգնություն է ցույց տրվում Կովկասում գործող բանակին, վիրավոր ու հիվանդ զինվորներին, պահեստայինների ընտանիքներին։ Երևանի նահանգապետ Տիղենհաուզենը այդ գործում աչքի ընկած հաստատություններին ու անհատ մարդկանց հայտնում է շնորհակալություն։ Նա շնորհակալություն է հայտնում Հոիփսիմեի գիմնազիայի, Երևանի իգական տարրական ադրբեջանական ուսումնարանի, Գայանյան ուսումնարանի, Մարիամյան ուսումնարանի, Ալեքսանդրյան իգական գիմնազիայի, ռուս-ադրբեջանական իգական ուսումնարանի անձնակազմերին՝ տաք հագուստների պատրաստման գործն իրենց վրա վերցնելու, «Эриванские объявления» թերթիկի խմբագրությանը՝ նվիրատուների ցուցակները և կարմիր խաչի տեղական կազմակերպության ինֆորմացիաներն ու կոչերը ձրիաբար տպագրելու համար և նվիրատվություններին իրենց ուժերը ներածին չափով մասնակցած բոլոր քաղաքացիներին [3]։ Նահանգապետի գրավոր շնորհակալությանը հաջորդում են նվիրատվությունների երկար ցուցակները, որոնք տպագրված են նույն թերթիկի հաջորդ համարներում [4]։

Կարմիր խաչի տեղական կազմակերպության վարչության կազմը բավական մեծ էր։ Դրա անդամների թիվը 1916 թ. օգոստոսի կեսերին հասնում էր 17-ի։ Վարչության անդամների մեջ տղամարդկանց հետ միասին կային նաև կանայք։ Վարչության կազմում էին՝ նահանգապետ կոմս Վ. Ֆ. Տիղենհաուզենը (նախագահ), իշխան Ա. Պ. Չեգոդաև-Սաքսոնսկին, Լ. Ի. Լեսնյակը, Ս. Ֆ. Թրեյդանը, իշխանուհի Ե. Գ. Չեգոդաև-Սաքսոնսկայան, տ. Լ. Մ. Բելինսկայան և ուրիշներ [1]։

Նվիրատվություններից և տնայնագործական եղանակով ձեռնարկությունների համար տաք հագուստ պատրաստելուց բացի կարմիր խաչի տեղական կազմակերպության վարչությունը պատերազմը սկսվելուց անմիջապես հետո ձեռնամուխ է լինում նաև գիրության քույրեր պատրաստելու գործին, որպեսզի հետագայում դրանցից ռազմաճակատի համար կազմակերպվեն սանիտարական ջոկատներ։ Ցանկացողների ցուցակագրությունը կատարվում էր Երևանում ապրող վարչության անդամների մոտ՝ սկսած 1914 թ. օգոստոսի կեսերից [2]։ Գիրության քույրեր պատրաստելու գործը շարունակվում է նաև հետագայում։ 1917 թ. փետրվարի 13-ին Երևանի զինվորական հոսպիտալին կից բացվել էր գիրության քույրերի երկամյա դասընթացներ, որոնք քույրեր էին պատրաստում ռազմական ժամանակների համար։ Այդ դասընթացների նախաձեռնողն ու կազմակերպողը դարձյալ կարմիր խաչի վարչությունն էր [3]։

Կարմիր խաչի տեղական վարչությանը կից կազմակերպված էր կանանց կոմիտե, որը և առաջին հերթին զբաղվում էր վիրավոր ու հիվանդ զինվորականներին անկողիններով ու սպիտակեղենով բավարարելու, ինչպես և ամառային ու ձմեռային հագուստների հայթայթման խնդրով [4]։ Կոմիտեն դրանք ձեռք էր բերում բացառապես զոհողությունների միջոցով։

Պատերազմ վարելու համար ցարական կառավարությանն անհրաժեշտ էին միլիարդներ։ Ջեմստվոների ու քաղաքների միությունների կազմակերպած նվիրատվություններն ու մանր արտադրությունը, կարմիր խաչի և այլ կազմակերպությունների ու անհատ մարդկանց կատարած զոհողությունները չէին կարող նույնիսկ նվազագույն չափով լրացնել պատերազմական ծախսերը։ Պատերազմը հսկայական միջոցներ էր լափում։ Ցարական Ռուսաստանի տնտեսությունը ի վիճակի չէր բավարարելու հափշտակողական պատերազմի մեծ կարիքները։ Պատերազմի հրեշավոր ծախսերի

1 «Эриванские объявления», 1914, № 80։
2 Նույն տեղը, № 82։
3 Նույն տեղը, № 85։
4 Նույն տեղը, №№ 86 և 87։

1 «Эриванские объявления», 1914, № 59։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, 1917, № 4։
4 Նույն տեղը, 1914, №№ 61, 62, 66 և այլն։

համար բնակչությունից միջոցներ հավաքելու լավագույն ձևը համարվում էր փոխառությունը։ Պատերազմի բոլոր տարիներին՝ 1914, 1915, 1916, 1917 ԹԹ. ցարական կառավարությունն ու նրան հաջորդած ժամանակավոր կառավարությունը բաց են թողնում փոխառություններ։ Ցարական կառավարությունն իր բաց թողած 1914 թ. փոխառությունը կոչում է 5 տոկոսանոց ներքին փոխառություն, 1915 թ.՝ ռազմական 5 տոկոսանոց փոխառություն, 1916 թ.՝ 5½ տոկոսանոց ռազմական կարճաժամկետ փոխառություն, իսկ ժամանակավոր կառավարությունը իր փոխառությունը (1917 թ.) կոչում է «ազատության փոխառություն», որը դարձյալ 5 տոկոսանոց էր [1]։ Այդպիսի զանազան պիտակներ կպցնելով՝ կարողանում էին բնակչությունից հափշտակել միլիարդավոր ռուբլիներ։ Այսպես, օրինակ՝ միայն 1916 թ. ռազմական փոխառությունը բաց էր թողնված երկու միլիարդ ռուբլի գումարով [2]։

Ինչպես մյուս տեղերում, այնպես էլ Երևանում պետական փոխառություններ կարող էին գրվել պետական ու մասնավոր բոլոր բանկերում։ Երևանում այդ տիպի գործարքները, սակայն, հիմնականում կատարում էին պետական բանկի ու Ազովո-Դոնյան առևտրական բանկի տեղական բաժանմունքները [3]։

Սակայն իզուր էին ցարիզմի ջանքերը։ Ռուսաստանի աշխատավոր բնակչությունը՝ բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը գնալով ավելի ու ավելի են համոզվում, որ պատերազմը հափշտակողական բնույթ ունի, որ նա միլիոնավոր զոհերից ու ամայացումից բացի ոչինչ չի բերում, որ պատերազմի պատճառը բոլոր երկրների իմպերիալիստներն են, որոնց թվում է և «իրենց» իմպերիալիստ ցարը։ Բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանը մինչև վերջ նվիրված բոլշևիկյան կուսակցությունը պատերազմի հենց առաջին օրերից գործող բանակում և թիկունքում աշխատավորների առաջ բացահայտում է պատերազմի զավթողական բնույթը և կոչ անում նախապատրաստվելու գալիք ազատագրական մարտերին։ Պատերազմին զուգընթաց Ռուսաստանում հասունանում է հեղափոխությունը։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը տապալում է ցարական կարգերը, բայց իշխանությունը ամբողջովին անցնում է բուրժուական կառավարությանը՝ ժամանակավոր կառավարությանը, որը պատերազմի, արտաքին ու ներքին

1 «Эриванские объявления», 1915, №№ 73 և 74, 1916, №№ 10 և 11, 1917, № 16 և այլն։

2 Նույն տեղը, 1916, №№ 10 և 11։

3 Տե՛ս նույն տեղը, 1917, № 16։

քաղաքականության և մյուս հիմնական հարցերում մնաց ցարիզմին հավատարիմ, դառնալով նրա իսկական ժառանգորդը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում քաղաքական կյանքը անցնում է վրացական մենշևիկների, հայ դաշնակցականների և ադրբեջանական մուսավաթիստների ձեռքը։ Դրանք հակահեղափոխական ազգային կուսակցություններ էին, որոնք Անդրկովկասում ի կատար էին ածում ժամանակավոր կառավարության քաղաքականությունն ամբողջությամբ վերցրած։ Սակայն դրանք անզոր էին հեղափոխականորեն տրամադրված ժողովրդական զանգվածներին ժամանակավոր կառավարության քաղաքականության կողմը գրավելու։ Փետրվարյան հեղափոխությունը հեղափոխական հուժկու ալիք էր առաջացրել նաև Անդրկովկասում ու Հայաստանում։ Անդրկովկասի մեծ ու փոքր քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Քութաիսում, Կարսում և այլուր Պետրոգրադի, Մոսկվայի և ռուսական խոշոր այլ քաղաքների օրինակով, բոլշևիկների անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ կազմակերպվում էին բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդներ [1]։

Փետրվարյան հեղափոխությունը արտակարգ ջերմությամբ ու հանդիսավորությամբ է ընդունվում նաև Երևանում։ Երևանի աշխատավորներն ու կայազորը շրջակայքի մի քանի գյուղերի գյուղացիների հետ միասին մարտի սկզբներին կազմակերպում են հուժկու և մարդաշատ ցույց։ Դրանից մի քանի օր անց Երևանի կայազորի կազմի մեջ մտնող 25-րդ հրետանային գունդը դուրս է գալիս հեղափոխական պայքարի։ Շուտով (մարտի 20-ին) կազմակերպվում են բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդներ։ Սակայն փետրվարյան հեղափոխությունից հետո առաջին ամիսներին տեղական իշխանությունը դեռևս գտնվում էր հին ադմինիստրացիայի ձեռքին, դեռևս իրենց տեղերում էին հին, ցարական պաշտոնյաները, դեռևս նույնիսկ քաղաքային դումայի նոր ընտրություններ չէին անցկացվել [2]։ Խորհուրդների մյուս թույլ կողմը կայանում էր նրանում, որ դրանք իրենց կազմով հիմնականում դաշնակցական-մենշևիկյան էին և ամիսներ շարունակ մատնված էին անգործության։ Նրանք երեք ամսվա ընթացքում նույնիսկ չէին ընտրել իրենց գործադիր կոմիտեն [3]։ Իր այդպիսի կազմով Երևանի

1 Տե՛ս Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, էջ 39—40։

2 «Պայքար» (լրագիր), 1917, № 37։

3 Նույն տեղը։

բանվորների և դինվորների պատգամավորների խորհուրդները վարում էին լիբերալ քաղաքականություն։ Նրանք գործադուլների և հեղափոխական այլ ձևի պայքարի ընթացքում սովորաբար հանդես էին գալիս «հաշտարարի» դերում, ձգտելով մանր-մունր դիջումների գնով մասսաներին հեռու պահել մարտական հեղափոխական շարժումներից։ Բայց այդ միշտ չէ, որ հաջողվում էր նրանց։ Զնալով հեղափոխական շարժումը նոր թափ էր առնում, զնալով բոլշևիկների ազդեցությունը աշխատավոր բնակչության լայն շերտերում և նույնիսկ խորհուրդներում մեծանում էր։

Փետրվարյան հեղափոխությունից մի քանի ամիս անց՝ 1917 թ. գարնան վերջերին և ամառվա սկզբներին Երևանի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում անտեսական պայքարի դրոշ են բարձրացնում բանվորները։ Գործադուլ են անում «էկոնոմիա» սպառողական ընկերության, «Լույս» տպարանի, «Ամպեր» ընկերության, ձիաբարշի, «Ջրմուղի ընկերության» և այլ հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները [1]։ Այդ նույն ժամանակներում (մայիս ամսին) գործադուլ են անում նաև կոնսիստորիայի ծառայողները [2]։ Բանվորների և դինվորների պատգամավորների խորհուրդը փոխանակ խրախուսելու և ղեկավարելու այդ պայքարը, ձգտում է ամեն կերպ այն թուլացնել, հանդարտեցնել հիմնարկ-ձեռնարկատերերին ընդունելի պայմաններով։ Մենշևիկա-դաշնակցական կազմ ունեցող խորհուրդներից այլ վարմունք սպասել էլ անիմաստ կլիներ։ Սակայն հեղափոխական շարժումը հարկադրում է քաղաքի բանվորների և դինվորների պատգամավորների խորհրդին որոշում ընդունելու 1917 թ. հունիսի 15-ից քաղաքի ձեռնարկություններում 8-ժամյա բանվորական օրվա անցնելու մասին։ Խորհուրդն այդ որոշումը կայացրել է 1917 թ. մայիսի 29-ի նիստում և, դրա քաղվածքն ուղարկելով Պետրոգրադ, ժամանակավոր կառավարությունից խնդրել էր հատուկ դեկրետ հրատարակել 8-ժամյա բանվորական օրվա մասին, «սակայն առանց պաշտպանության շահերը խախտելու» [3]։

Բանվոր-ծառայողներն իրենց տնտեսական և քաղաքական պայքարի մեջ մենակ չէին։ Նրանց հետ էին և քաղաքի բոլշևիկները, որոնք, մի կողմից, օգնում, ոգեշնչում և պայքարի էին կոչում քաղաքի աշխատավորներին, իսկ, մյուս կողմից, մերկացնում էին դաշնակների ու մենշևիկների քաղաքականությունը։

Երևանի միջնակարգ դպրոցներում սովորող մի խումբ աշակերտներ՝ Աղասի Խանջյանը, Ղուկաս Ղուկասյանը, Ալեքսանդր Խահակյանը և ուրիշներ մտնում են բոլշևիկյան կուսակցության շարքերը։ Նրանք դպրոցներում պայքար են ծավալում դաշնակցության կուսակցության հակահեղափոխական էությունը մերկացնելու համար։ Նրանց ուժերով կազմակերպված մարքսիստական աշակերտական միությունը ակտիվ գործունեություն է ծավալում աշակերտական դասադուլները ղեկավարելու և բոլշևիկյան կուսակցության խնդիրները պրոպագանդելու ուղղությամբ [1]։

1917 թ. հոկտեմբերին տեղի է ունենում արական գիմնազիայի աշակերտների դասադուլը։ Կովկասի ուսումնական օկրուգին ուղղված գիմնազիայի դիրեկտորի զեկուցագրում մանրամասն նկարագրված է այդ հուժկու դասադուլը։ Դիրեկտորի զեկուցագրից երևում է, որ դասադուլավորները մի քանի պահանջներ են ներկայացրել մանկավարժական խորհրդին։ Ամբողջ դասադուլի ընթացքում գործադուլային կոմիտեն նիստեր է ունեցել գիմնազիայի դահլիճում, որի «մուտքը գիշեր ու ցերեկ պաշտպանում էին զինված աշակերտները»։ Շատերը այդ օրերին գիշերում էին գիմնազիայի շենքում [2]։ Մի քանի օր նախապատրաստվելուց հետո դասադուլը սկսում են հոկտեմբերի 13-ին, որը տևում է մոտ մեկ շաբաթ։ Դա փաստորեն ոչ թե սովորական դասադուլ էր, այլ գիմնազիայի գրավում աշակերտների կողմից, ինչպես հարմար է համարել իր զեկուցագրի մեջ դիրեկտորն այն կոչել։ Գիմնազիայի դասադուլն սկսվել էր Թիֆլիսի աշակերտների՝ դասադուլների ազդեցության տակ և իր ազդեցությունն էր թողել Երևանի մյուս միջնակարգ բոլոր դպրոցների աշակերտների վրա։ Զեկուցագրից երևում է, որ գիմնազիայի աշակերտության դասադուլի ժամանակ շարժում էր առաջացել նաև մյուս դպրոցներում՝ Հռիփսիմեի գիմնազիայում [3], ուսուցչական սեմինարիայում և այլուր։

---

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 93, գգ. 8, 9, 10, 11 և 12։ Համմ. Г. Б. Гарибджанян, Коммунистич. организации Арм. в борьбе за победу Советской власти, էջ 59—60։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 93, գ. 1, թ. 50։

3 Նույն տեղը, թ. 17։

1 Տե՛ս Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, էջ 84։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, գ. 2609, թ. 64։ Համմ. ՀԿՊ ԿԿ-ի պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 7, գ. 617, թթ. 3—8։

3 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 82, թ. 1։ Համմ. ՀԿՊ ԿԿ պարտարխիվ, ֆ. 33, ցուցակ 7, գ. 613, թ. 1—6։

Գիմնազիայի աշակերտները առաջադրել էին հետևյալ պահանջները.

1. Վերջին երեք դասարանների ներկայացուցիչներին վճռական ձայնի իրավունքով թույլատրել մասնակցելու մանկավարժական խորհրդի նիստերին։

2. Անհապաղ բաց անել ազգային նախապատրաստական դասարաններ։

3. Տեղական առարկաների ավանդումը ուժեղացնել, ավելացնել դրանց դասերի թիվը։

4. Լատիներեն լեզվի ուսուցումը համարել ոչ պարտադիր, կրճատել այդ առարկայի ժամերի թիվը։

5. Վերջնականապես ճանաչել աշակերտական կազմակերպությունները և դրանք համարել օրինական։

Մանկավարժական խորհուրդը վերջին չորս կետերը ընդունում է նույնությամբ և որոշում է բավարարել այդ պահանջները, իսկ ինչ վերաբերում է առաջին կետին, ապա որոշում է ընդունվում վերջին երեք դասարանների աշակերտների ներկայացուցիչներին թույլատրել մասնակցելու մանկավարժական խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, այն էլ միայն Կովկասի ուսումնական օկրուգը ընդունելի համարի մանկավարժական խորհրդի այդ որոշումը [1]։ Հենց այդ կետի մերժումն էլ բավական է լինում, որպեսզի դասադուլը դառնար ավելի մարտական։

Գիմնազիայի աշակերտության դասադուլի հաջողությունը մեծապես կախված էր մարքսիստական աշակերտական միության աշխատանքներից։ Դրանում կարևոր դեր է խաղում նաև բոլշևիկյան ականավոր գործիչ Գևորգ Ամարբեկյանը, որն այդ ժամանակներում գտնվում էր Երևանում [2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան Քշնամատ ընդունվեց Անդրկովկասի ազգային կուսակցությունների կողմից։ Վրացական մենշևիկները, դաշնակցությունը, մուսավաթականները և էսէռները միացյալ ճակատ են կազմում Սովետական Ռուսաստանի դեմ։ 1917 թ. նոյեմբերի 15-ին նրանք կազմակերպում են, այսպես կոչված, Անդրկովկասի կոմիսարիատը, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին՝ Անդրկովկասի սեյմը, որը ամբողջովին ենթարկված էր օտարերկրյա իմպերիալիստներին։ Հենց նույն իմպերիալիստների կամքով էլ 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասի սեյմը արձակվում է։ Վրացական մենշևիկներն այդ նույն օրը Վրաստանը հայտարարում են «անկախ» ռեսպուբլիկա, իսկ դրանից երկու օր հետո Թիֆլիսի հայկական «ազգային խորհուրդը» «անկախ» ռեսպուբլիկա է հայտարարում Հայաստանը։ Հուլիսի 17-ին Թիֆլիսում կազմակերպված կառավարությունը և հայկական «ազգային խորհուրդը» գալիս են Երևան։ Հայաստանում սկսվում է դաշնակների կարճատև տիրապետության շրջանը։

Առաջին համաշխարհային պատերազմը և դաշնակների տիրապետության երկուս և կես տարին շատ ծանր են նստում հայ ժողովրդի վրա։ Հայաստանի տնտեսությունը լրիվ քայքայվում է, կուլտուրան հասնում անկման դուռը։ Սովն ու համաճարակները դառնում են բնակչության մշտական ուղեկիցները։

1920 թ. նոյեմբերի 29-ին Կարմիր բանակի ջոկատների օգնությամբ հայ ժողովուրդը տապալում է դաշնակներին և երկրում հաստատում սովետական կարգեր։

2. ՔԱՂԱՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԿՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի բացասական ազդեցությունը Երևան քաղաքի ներքին կյանքի վրա ընդհանրապես։ Արդյունաբերության անկման պատճառները։ Գինու-կոնյակի-օղու արտադրության կրճատումը։ Դրությունը մյուս կարգի գործարաններում։ Փոփոխություններ քաղաքի արհեստագործության բնագավառում գաղթականության շնորհիվ։ Առևտրի անկումը։ Ապրանքների գների արագ բարձրացումը։ Աշխատավորների նյութական վատթար դրությունը։ Քաղաքի ներքին դրությունը։ Մշակութային կյանքը. դպրոցներ, թատերական ու երաժշտական կյանք, պարբերական մամուլ, նոր գրադարան-ընթերցարան։

Առաջին համաշխարհային պատերազմը Երևան քաղաքի տնտեսության մեծ հարված է հասցնում. իջնում է արդյունաբերական օբյեկտների արտադրության քանակը, մի շարք ձեռնարկություններում կրճատվում են արտադրության որոշ տեսակներ, չի կազմակերպվում արդյունաբերական նոր որևէ ձեռնարկություն։ Մեծապես ավելանում են ապրանքների գները, քաղաքի շուկայում տիրում են թանկություն, խարբեբայություն և սպեկուլյա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 93, գ. 1, թ. 110։

2 Տե՛ս Г. Б. Гарибджанян, Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, էջ 85։

ցիան։ Առաջընթացի փոխարեն անկում են ապրում քաղաքի գյուղատնտեսական ճյուղերը՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը, երկրագործությունը և անասնապահությունը։ Ճիշտ է, Երևանն անմիջապես ռազմաճակատի գոտում չէր և ավերման չէր ենթարկվում ռազմական գործողությունների հետևանքով, բայց այդ ոչընչով չէր էլ նպաստում նրա կոմունալ պայմանների ու քաղաքային տնտեսության բարելավմանը։ Պատերազմի տարիներին քաղաքում բարեկարգման ու շինարարական որևէ աշխատանք չի կատարվում։ Ընդհակառակը, նախկինում համեմատաբար բարեկարգ վիճակում գտնվող փողոցներն ու ճանապարհները ընկան բացառություններով հասնում են ողորմելի դրության։ Նոր ոչինչ չի արվում նաև մշակույթի բնագավառում։ Առաջվա նման քաղաքի թատերական ու երաժշտական կյանքը սահմանափակվում էր հյուրեկային ու տեղական ինքնագործ խմբերի պատահական ներկայացումներով ու համերգներով, դպրոցական ու քաղաքապատական աղքատիկ գրադարաններով, մոտ երեք տասնյակի հասնող տարրական ու միջնակարգ դպրոցներով, որոնց մեծագույն մասը փաստորեն չէր գործում և վեր էր ածվել որբանոցների։ Ռազմաճակատի առանձին կարիքների բավարարման համար և դաղթականների ներհոսքից առաջացած մանր արհեստավորական ու տնայնագործական արտադրությունները չնչին նշանակություն ունեին և ոչնչով չէին փոխում ընդհանուր դրությունը։

Տղամարդկանց զորահավաքի պատճառով Երևանի արդյունաբերական ձեռնարկություններից շատերը զրկվում են որակյալ բանվորական կադրերից։ Դա արդյունաբերությանը մեծ հարված է հասցնում մանավանդ այն պատճառով, որ քաղաքի արդյունաբերության ամենագլխավոր ճյուղի՝ գինու-կոնյակի ձեռնարկությունների արտադրությունը մեծապես կախված էր ոչ թե դրանց տեխնիկական դինվածությունից, որը այնքան ցածր մակարդակի վրա էր գտնվում, այլ փորձ և հմտություն ունեցող բանվորի աշխատանքից։

Քաղաքի արդյունաբերության կանգառն ու անկումը պայմանավորող մյուս ազդակը պատերազմի հետևանքով նահանգի այգեգործության, բամբակագործության, անասնապահության ու գյուղատնտեսական մյուս ճյուղերի հետադիմությունն էր։ Երևանի արդյունաբերության ճյուղերի մեծագույն մասը զբաղված էր տեղական գյուղատնտեսական հումքի՝ խաղողի, բամբակի, կաշվի ու մորթու, բրնձի վերամշակմամբ։ Գյուղատնտեսության հումքերի արտադրության կրճատումը իր հերթին պայմանավորում էր և արդյունաբերության անկումը։ Երևանի արդյունաբերության կարևորագույն ճյուղը՝ գինու-կոնյակի-օղու արդյունաբերությունն ամենամեծ հարվածը ստացավ հենց պատերազմի առաջին տարում՝ 1914 թվականին։ Ըստ պաշտոնական տվյալների, այդ թվականին ցրտահարության հետևանքով էջմիածնի գավառում խաղողի բերքը ոչնչացել էր 90—95 տոկոսով, Երևան քաղաքում՝ 85—90 տոկոսով, Երևանի և նահանգի մյուս գավառներում (բացառությամբ Սուրմալուի գավառի, որտեղ խաղողի այգիներն ընդհանրապես շատ քիչ տարածություն էին գրավում)՝ 50—80 տոկոսով։ Այդ թվականին ամբողջ նահանգում հավաքված բերքը (4 645 910 փութ) 1913 թվականի բերքից պակաս էր 87,1 տոկոսով[1]։ Հետագա տարիներին 1913 թ. համեմատությամբ խաղողի և մյուս հումքերի բերքը զարձյալ կրճատվում էր մեծ չափերով։

Եթե պատերազմին նախորդած յուրաքանչյուր տարում արտադրվում էր 400—800 հազար դույլ գինի[2], ապա 1914 թ. նահանգի գինու ամբողջ արտադրանքը կազմել է ընդամենը 293 105 դույլ[3]։ Արխիվային նյութերից երևում է, որ Երևանի նահանգի գինու-կոնյակի-օղու արքայի՝ Շուստովի, ինչպես և մյուս գործարանների ընդունման կետերը նախապատերազմյան 1913 թվականի համեմատությամբ 1914—1917 թթ. յուրաքանչյուր տարում մի քանի անգամ ավելի պակաս խաղող են ընդունել[4]։

Գինու-կոնյակի արդյունաբերությունը և «Արարատ» տրեստի 1920—1925 թթ. գործունեության մասին ՀՍՍՌ ժողտնտխորհի հաշվետվության մեջ ասված է.

«Իմպերիալիստական և քաղաքացիական կռիվների ժամանակ այգեգործությունը, ինչպես և գինու-կոնյակի արդյունաբերությունը տուժել էին առավելագույն չափերով։

Այգիները երկար տարիների ընթացքում մնացել էին անտեր, առանց հսկողության և անմշակ։ Քայքայումը լիակատար էր։

Գինեգործական տնտեսությունը, օղու և սպիրտաղտիչ գործարանները ենթարկվում էին ոչնչացման և կողոպուտի, ոչնչացվում էին շենքերը, ամանները, կահույքը, ապարատները և այլն։

Շնորհիվ վարչության... ձեռնարկած միջոցների, իր գույքով ու ունեցվածքով անվնաս է մնացել «Արարատ» գործարանը (նախկին Շուստովների գործ.)։ Չնայած առանց ունեցվածքի, անվնաս է մնա-

---

1 «Обзор Эриванской губернии за 1914 г.», էջ 7։
2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 2—3։
3 «Обзор Эриванской губернии за 1914 г.», էջ 13։
4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 124, գ. 34, թ. 12—13, ֆ. 194, գ. 40, թ. 5։

ցել նաև նախկին Աֆրիկյանի գործարանը և № 1 գործարանը (նախկ. Սարաջյանի գործ.)։ Այսպիսով սովետականացման սկզբում Հայաստանում գրեթե գոյություն չունեին այգիներ, գինեգործարան, օղու, օղեզտիչ և կոնյակի գործարաններ, փոքր բացառություններով դրանք ջարդված և ոչնչացված էին» [1]։

Գինու-կոնյակի-օղու արտադրության այդ անկումը սկսվել էր համաշխարհային պատերազմի բռնկման հետ միասին և իր առավելագույն չափին էր հասել դաշնակների միջամտության շրջանում՝ 1918—1920 թվականներին։

1914 թվականին արդեն նախորդ տարիների, հատկապես 1913 թ. հետ համեմատած Երևանի արդյունաբերության արտադրանքը բավական կրճատվել էր։ Ըստ պաշտոնական տվյալների, 1914 թ. Երևան քաղաքի համեմատաբար խոշոր 86 արդյունաբերական ձեռնարկությունները միասին վերցրած տվել են ընդամենը 842 250 ռ. արտադրանք, ունենալով բոլորը միասին 536 բանվոր [2]։ Ըստ առանձին ճյուղերի, քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, շրջանառության քանակը և բանվորների թիվը հետևյալ պատկերն էին ներկայացնում [3].

Աղյուսակ 60

№ № կ/կ	Գործարանների և ֆաբրիկանների տեսակները	Գործարանների և ֆաբրիկանների թիվը	Շրջանառության քանակը ռուբլով	Բանվորների թիվը	Ծանոթություն
1	Սպիրտագործ գործարաններ	4	600900	140	
2	Օղու	12	85000	65	
3	Կաշվի	22	51000	140	
4	Ալրագործներ	12	24000	14	
5	Գարեջրի	1	36000	18	
6	Բրնձագործ	11	14000	50	
7	Մեխանիկա-փականագործ.	3	12000	40	
8	Արհեստական հանքային ջրերի	3	8500	10	
9	Թաղիքագործական	13	7500	35	
10	Ապրանագործարաններ	3	3000	20	
11	Ներկատներ	2	350	4	
	Ընդամենը	86	842250	536	

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 168, գ. 173, թ. 7։

2 «Обзор Эриванской губернии за 1914 г.», Ведомость № 4։

3 Նույն տեղը։

Այսպիսով, 1914 թ. Երևանի արդյունաբերական մեծ ու փոքր բոլոր գործարանները ավելի քիչ արտադրանք են տվել (842 250 ռ.), քան 1913 թ. տվել էին միայն քաղաքի հինգ խոշոր գործարանները (991 049 ռուբլի) [1], իսկ նրա բոլոր գործարանների արտադրությունը, ինչպես տեսանք, 1913 թ. կազմում էր մոտ 3 միլիոն ռուբլի։ 1915—1917 թվականներին էլ ավելի է պակասում արտադրության քանակը։

Վիճակը ոչնչով լավ չէր նաև արդյունաբերության մյուս ճյուղերում։ Այսպես, 1911 թ. հիմնադրված պահածոների գործարանը մինչև 1913 թ. արտադրել է 213,1 տոննա մրգի պահածոներ, 196,7 տոննա ծիրանի բանդակ (пюре), 10.000 բանկա ԲՔու դրած վարունգ, ապա 1916 թվականին արտադրած մրգի պահածոների քանակը իջնում է 163,9 տոննայի, ծիրանի բանդակինը՝ 163,8 տոննայի, իսկ ԲՔու դրած վարունգինը՝ 5000 հատի։ Այդ նույն ժամանակամիջոցում գործարանի համախառն արտադրանքը 99 հազար ռուբլուց (1913 թ.) իջնում է 75.000 ռուբլու (1916 թ.)։ Հետագայում էլ ավելի է կրճատվում նրա արտադրանքը, 1920 թվականին հասնելով ընդամենը 2475 ռուբլու [2]։ Նույնպիսի պատկեր է ներկայացնում նաև Ավետյանի բրնձի դինգը, որն իր տեսակի մեջ ամենախոշորն էր ամբողջ Երևանում։ 1913 թ. այդ դինգը պատվիրատուների չալթուկից արտադրել էր 1311,5 տոննա բրինձ, 1916 թ.՝ 1147,5 տ., 1918 թ.՝ 819,7 տ., իսկ 1919 թ.՝ 655,7 տոննա։ 1913 թ. նրա արտադրանքը կազմել է 192.000 ռ., 1916 թ.՝ 168.000 ռ., 1918 թ.՝ 120.000 ռ., իսկ 1919 թ.՝ 96.000 ռուբլի [3]։ Մեծապես իջել էին նաև գարեջրի [4], մեխանիկական և մյուս գործարանների արտադրության քանակն ու բանվորների թիվը։

Հայտնի է, որ պատերազմների ընթացքում ռազմաճակատի կարիքների և զորքի մատակարարման համար քաղաքներում և այլ կարգի բնակավայրերում սովորաբար առաջանում են նոր ձեռնարկություններ։ Առաջին հայացքից թվում է, թե պատերազմի ժամանակ Երևանում պետք է ընդարձակվեր գինու և օղու արտադրությունը։ Սակայն իրականում, ինչպես տեսանք, գինու-կոնյակի-օղու արդյունաբերությունը, ինչպես և արդյունաբերության մյուս ճյուղերը քայքայվում են։ Այդ շրջանում Երևանում արդյունաբերական շատ թե քիչ նշանակություն ունեցող որևէ ձեռնարկություն

1 Տե՛ս սույն գիրքը, էջ 85, աղյուսակ 7։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, արդյունաբերության բաժին, գ. 1, թ. 35—36։


3 Նույն տեղը, թ. 23—24։

4 Տե՛ս նույն տեղը, թ. 29—30 և այլուր։

պարտադիր էին և՛ վարչության ղեկավարներին, և՛ փախստական-արհեստավորների համար։

Վանի արհեստավորներն իրենց բարձր վարպետությամբ և աշխատասիրությամբ հայտնի էին ո՛չ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից շատ հեռու։ Այստեղ, Երևանում ևս նրանք զանազան արհեստների բնագավառում ցուցադրում են արվեստի հասնող իրենց վարպետությունը։ «Աշխատանք» թերթի 1916 թ. հունիսի համարներից մեկում «Երևանի արհեստանոցները,» խորագրակառում ասված է. «Ով ուզում է ճշգրիտ գաղափար կազմել Վասպուրականի հայության տոկունության ու ընդունակության մասին, պարտավոր է գնի մի անգամ այցելել Երևանի մեջ ժամանակավորապես պատսպարված հայ փախստականներին ու դիտել նրանց ստեղծագործող աշխատանքի խիստ ուշագրավ արդյունքները...

Ամենից առաջ Երևանը ցույց է տալիս Վասպուրականի հայության այն նախանձելի ոգին, որ չի մեռնում անգամ լքումի ու հուսահատության օրերին և ապա ցուցադրում է մտայնությունը մի ժողովրդի, որ գիտե գերազանցել իր աշխատանքը բոլոր տեսակի բարեգործություններից և ապրել իր արհեստից ու գործիքից անբաժան...



Երևանում պատրաստված կովկասյան պղնձյա իրեր (ՀՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

չի առաջանում։ Միակ ձեռնարկությունը, որը կապված էր քաղաքի բնակչության մատակարարման հետ և արժանի է հիշատակության, քաղաքային փուռն է, որը կառուցվել է 1916 թվականին, Անգլիական այգու մի ազատ անկյունում և օրական կարող էր թխել մինչև 400 փութ հաց։ Փռի կառուցման վրա ծախսվել էր ընդամենը 3300 ռուբլի [1], իսկ դա ցույց է տալիս, թե ինչքան փոքր ու հասարակ է եղել այն։

Նույնը չի կարելի ասել տնայնագործության և արհեստագործության վերաբերյալ։ Գաղթականության և մասամբ գործող բանակին տաք հագուստ մատակարարելու հետ կապված քաղաքում մանանակի զարգացում են ապրում տնայնագործական որոշ զբաղմունքներ և մի քանի արհեստներ։ Մենք արդեն տեսանք, թե ինչպես քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն քաղաքի իգական գպրոցների աշխատանակիցների միջոցով կազմակերպել էր կովկասյան բանակի համար սպիտակեղեն ու տաք հագուստ պատրաստելու գործը։ Հիշատակությունների համաձայն կանայք գործում էին գուլպաներ և ձեռնոցներ, կարում էին սավաններ, շապիկներ ու վարտիկներ, գործում էին ֆուֆայկաներ։

Պատերազմի տարիներին թուրքական յաթաղանից փրկվելու համար Երևան գաղթած Վանի ու այլ վայրերի կանայք կազմել էին «Վասպուրականի կանանց միություն» ընկերությունը, որը Երևանում բացել էր մի շարք արհեստանոցներ։ Վանի կանանց արհեստանոցների մասին բավականաչափ տեղեկություններ են հաղորդված «Աշխատանք» թերթում [2]։ Սակայն քաղաքի արհեստագործության մեջ մեծ թարմություն են մտցնում վանեցի տղամարդ արհեստավորները՝ դերձակները, ոսկերիչները, կոշկակարները, մաշկակարները, ատաղձագործները, հյուսները, երկաթագործները և պղնձագործները։ Նրանք ըստ իրենց արհեստի տեսակների կազմել էին միություններ, որոնք ունեին իրենց վարչությունները [3]։ Դրանցից բացի նրանք ընտրել էին նաև վանեցի բոլոր արհեստավորների համար մի կենտրոնական վարչություն, որը զբաղվում էր փախստական բոլոր արհեստավորների նյութական ու բարոյական շահերով։ Վերջինս ուներ իր գրասենյակը, նախագահը և քարտուղարը [4]։ Նա գործում էր հաստատված որոշ կանոններով, որոնք

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 163, արդյունաբերության բաժին, գ. 1, թ. 33—34, ֆ. 117, գ. 1796, թ. 125—126։

2 Տե՛ս «Աշխատանք» թերթի (Երևան) 1916 թ. համարները։

3 Նույն տեղը, 1916, № 68։

4 Նույն տեղը։

Վանի երբեմնի արհեստավորներն այժմս իրենց գործը շարունակում են Երևանում և մասամբ— Թիֆլիսում։ Մի տեղ մի խումբ կոշկակարներ, մի ուրիշ տեղ մի խումբ դերձակներ ու առաղձագործներ բացել են իրենց արհեստանոցները և, աննշան օժանդակությունն առանալով գաղթականական մարմիններից, ղբաղվում են իրենց արհեստով, չնայած նվազ եկամուտի անբավարար լինելուն»[1]։

Առանձնապես հայտնի էին կահույքագործների արհեստանոցը, որը գտնվում էր Նոր եկեղեցու փողոցի (այժմյան Սովետների փ.) վրա[2], և, մանավանդ, «Վան» կոչված ոսկերիչ-փորագրիչների արհեստանոցը։ Վերջինս հայտնի էր ամբողջ Երևանում։ «Վանի» համբավը շատ է տարածվում մանավանդ նաև այն պատճառով, որ մինչև այդ Երևանում ոսկերչությունը իրրև արհեստ գրեթե բացակայում էր։ Վանեցի ոսկերիչ-փորագրիչների «Վան» արհեստանոցը հիմնադրվել էր 1916 թ. փետրվարին, վարպետներից մեկի նախաձեռնությամբ, որին հաջողվել էր քաղաքի հարուստներից (Գ. Ամիրյանից և ուրիշներից) ձեռք բերել 1500 ռուբլի դրամագլուխ։ Շուտով նա խորեն եպիսկոպոսից ևս ստանում է 1500 ռուբլի, պայմանով, որ նոր բացված արհեստանոցում պետք է տեղավորի դուրս մնացած ոսկերիչներին։ 1916 թ. նոյեմբերին արհեստանոցի կապիտալը արդեն կազմում էր 17.700 ռուբլի, իսկ վարպետների թիվը՝ 27 հոգի։ Վարպետների աշխատավարձը չնչին էր։ Նրանք օրական ստանում էին 1—2,5 ռուբլուց ոչ ավելի[3]։ Հայտնի փորագրիչ վարպետները 10 հոգի էին՝ Պետրոս Շահբանդերյանը, Վահան Արտամետյանը, Մելիքսեթ Էյնաթյանը, Լևոն Շալճյանը և ուրիշներ։ Կային այնպիսի արհեստավորներ, որոնք ըստ վկայության փաստորեն արվեստագետներ էին։ Այդ կարգի վարպետներից էին Փանոս Ժամհարյանը, Գաբրիել Երանյանը, Խաչիկ աղան և ուրիշներ[4]։

Վանեցի ոսկերիչ-փորագրիչների արտադրանքներից հայտնի էին բարձրաճաշակ գլանակի տուփեր, սկահակներ, բաժակակալներ, դանազան տեսակի բաժակներ, դրամապանակներ, ապարանջաններ, շաքարամաններ, գավազանի կոթեր և այլ արտադրանքներ, որոնք պատրաստվում էին ոսկուց ու արծաթից և իրենց

1 Տե՛ս «Աշխատանք» (լրագիր), 1916, № 16։
2 Նույն տեղը, 1916, № 5։
3 Նույն տեղը, № 54։
4 Նույն տեղը։

վրա ունեին զարդանկարներ, փորագրություններ ու տարբեր բովանդակության քանդակներ[1]։ Արհեստանոցն ուներ իր վարչությունը։ Նա իր արտադրանքների նմուշները սովորաբար դնում էր հատուկ ցուցափեղկերում ի տես քաղաքի բնակչության։

Կրկնենք։ Փախստականների արհեստագործության և տնայնագործության ժամանակավոր որոշ աշխուժացումը քաղաքի ընդհանուր տնտեսական դրության վրա էական ազդեցություն չի թողնում։ Քաղաքի տնտեսությունը պատերազմի տարիներին անկում է ապրում։

Դեռևս 1914 թ. սկզբներից բավական փոքրանում են Երևանի առևտրի մասշտաբները։ Զորքը Պարսկաստան տեղափոխվելու հետևանքով քաղաքի առևտրական շրջանառությունը փոքրանում է, իսկ պատերազմի պատճառով հասնում անկման։ «Խոսք» թերթի թղթակիցներից մեկը «Առևտուրը Երևանում» վերնագիրը կրող իր հոդվածի մեջ գրում է. «Վերջին հարվածը քաղաքի առևտրին հասցրեց զորքի Պարսկաստան տեղափոխելը և այսօր քաղաքում նկատելի է առևտրի ընդհանուր անկումն. նախկին եռուն առևտրի և ահագին երթևեկության փոխարեն, այսօր քաղաքի առևտուրը հիմնված է միայն քաղաքի ազգաբնակության և մի քանի շրջակա գյուղերի վրա։ ... Մի կողմից շարունակվում են սնանկությունները, կան առևտրականներ, որոնք հետզհետե վերջացնում են իրենց գործը. լսվում է, որ ոմանք դարձյալ մտադիր են տեղափոխել իրենց գործը քաղաքից դուրս»[2]։

Պատերազմի հետևանքով առանձնապես մեծ հարված է ստանում քաղաքի արտաքին և տարանցիկ առևտուրը։ Չէ՞ որ Երևանը պարսկական և մասամբ թուրքական սահմանագլխի ամենակարևոր տարանցիկ կետն էր, նրա վրայով էին ուղարկվում ու ստանում Պարսկաստանի և մասամբ Թուրքիայի հետ կատարվող ապրանքների մի զգալի մասը։ Պատերազմի պատճառով խափանվում է այդ առևտուրը։ Թերթի թղթակիցը միանգամայն իրավացի է, երբ նշում է, թե որոշ վաճառականներ իրենց գործարքները Երևանից տեղափոխում են այլ վայրեր։ Այդ երևույթը շարունակվում է նաև հետագա տարիներին և մեծ մասամբ վերաբերում է միայն խոշոր վաճառականներին, որոնց առևտուրը մեծածախ բնույթի էր և սերտորեն կապված էր արտաքին ու տարանցիկ առևտրի հետ։ Այսպես, օրինակ՝ քաղաքի հայտնի վաճառական

1 «Աշխատանք» (լրագիր), 1916, № 54։
2 «Խոսք», 1914, № 8։

Դ. Խանզադյանը 1917 թ. գարնանը իբրև անդամավճար միանվագ 5000 ռուբլի է տրամադրում Թիֆլիսում նոր կազմված «Հայկազյան» առևտրական ընկերությանը և մտադրվում է իր գործարքների մի մասը տեղափոխել այնտեղ [1]։

Որոշ բացառությամբ այդ նույնը չի կարելի ասել քաղաքի ներքին, մանրածախ առևտրի վերաբերյալ։ Ինչպես միանգամայն ճիշտ կերպով նկատում է վերը նշված «Առևտուրը Երևանում» հոդվածի հեղինակը, Երևանն ուներ տեղական առևտրի այնպիսի ազդակներ՝ նահանգի կենտրոն լինելը, բնակչության աճը (գլխավորապես գաղթի եղանակով), գյուղատնտեսական շրջանների կենտրոնում լինելը և այլն [2], որոնք ապահովում էին նրա ներքին առևտրի որոշակի մակարդակը։ Եթե միայն արտաքնապես դիտելու լինենք այդ ժամանակվա Երևանի առևտուրը, ապա խանութների առատությունը և առևտրական տների բազմաթիվությունը մեզ պետք է բերեն այն սխալ եզրակացության, թե առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Երևանի առևտուրը չէր կորցրել իր նախկին աշխուժությունն ու զարգացման թափը։

Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ 50-րդ ֆոնդի 1915—1917 թթ. վերաբերող գործերում հիշատակվում են ու ռեկլամի ենթարկվում քաղաքի բազմաթիվ առևտրական տներն ու նրանց տարբեր բնույթի խանութները։ Այդ կարգի առևտրական տներից էին Ա., Դ. և Լ. Նիկողոսյան եղբայրների (որը կատարում է սեփական տան կաթի առևտուր), Գ. Գ. Ամիրյանի (մանուֆակտուրայի մեծածախ առևտուր), Բ. Ե. Եղիազարյան և ընկ. (մանուֆակտուրային տարբեր ապրանքների առևտուր), Ե. Եղիազարյանի (գաղութային և մանր ապրանքների առևտուր), Օ. Ազիզյան և որդիների, Լ. Դ. Ասլանյանի (մանուֆակտուրային տարբեր ապրանքների առևտուր), Մ. Մ. Դավթյանի (որը վաճառքի էր մատակարարում Քանաքեռի, Նախիջևանի, Օրդուբադի և Իգդիրի կայազորներին), Կ. և Պ. Վարդանյան եղբայրների (մանուֆակտուրային ապրանքներ), Պ. Խ. Հովհաննիսյանի (գրքեր և գրենական պիտույքներ), Մ. Տ. Ախասախալյանի (որին պատկանում էր դեղագործական ապրանքների «Հաղթանակ» պահեստը), Ե. Ս. Խանզադյանի (մանուֆակտուրային ապրանքներ), Ա. և Մ. Ջանյան եղբայրների (ունիվերսալ ապրանքներ), Պ. Մ. Ջավադյանի (ծխախոտ, նպարեղեն, գաղութային այլ ապրանքներ), Քոչարյան եղբայրների (բրդե, մետաքսե

1 «Эриванские объявления», 1917, № 15։
2 «Հասք», 1914, № 8։

գործվածքներ, կահույք և այլն), Ա. Ս. Գուլամիրյանի (հայելիներ) և առևտրական ուրիշ տների ու անհատ առևտրականների տարբեր բնույթի խանութները [1]։

Հիշատակված առևտրական տներն ու ընկերությունները, որոնց մեծ մասը գոյություն ուներ նաև մինչև պատերազմը, ունեին մեծ չափերի հասնող կապիտալներ, բայց պատերազմի տարիներին նրանց ապրանքաշրջանառությունը դանդաղում է, առևտրի ծավալը՝ կծկվում։ Դրանց օրվա առևտրի ծավալը խանութում եղած ապրանքների քանակի համեմատությամբ չնչին էր։ Այդ տեսակետից, համեմատական կարգով, քաղաքի այդ ամպագորգոռ վաճառականները ոչնչով չէին տարբերվում գյուղական առևտրականներից, որոնցից յուրաքանչյուրը վարկի միջոցով իրենց խանութներում կուտակել էր մինչև 20.000 ռուբլու ապրանքներ, բայց օրական շրջանառությունը հազիվ էր հասնում 5—10 ռուբլու, և նրանց սպառնում էր վերահաս սնանկությունը, ինչպես իրավացիորեն նշում է «Առևտուրը Երևանում» հոդվածի հեղինակը [2]։

Աշխատավորության նյութական դրության վրա խիստ կերպով անդրադառնում է սննդամթերքների և լայն սպառման առարկաների գների արագ բարձրացումը։ Կովկասի քաղաքներում, այդ թվում և Երևանում, այդ ապրանքների գներն սկսում են բարձրանալ պատերազմի առաջին օրերից։ Պատերազմը բռնկվելուց դեռ մի տարի չանցած Կովկասի քաղաքներում ապրանքների գներն այնքան են բարձրանում և ապրուստն այնքան է թանկանում, որ համառուսական քաղաքների միության կազմակերպած Կովկասի քաղաքների հասարակական գործիչների 4-րդ համագումարը, որը տեղի է ունեցել Թիֆլիսում 1914 թ. մայիսի վերջերին, հարկադրված է լինում զբաղվել այդ հարցով։ Համագումարն այդ հարցը հատուկ քննարկման է ենթարկում, որպեսզի պարզաբանի կովկասյան քաղաքներում սննդամթերքների գների բարձրացման պատճառները և միջոցներ մշակի դրանց և լայն սպառման ապրանքների շուկայական գները կանոնավորելու համար։ Համագումարը քաղաքների ներկայացուցիչների առաջ հարց է դնում միացյալ ուժերով պայքարել աճող թանկության դեմ։ Այդ հարցին նվիրված զեկուցումներում բազմաթիվ փաստեր են բերվում Կովկասի քաղաք-

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 19, թթ. 11, 25, 27, 35, 47, 81, 83, 90, 101, գ. 25, թ. 124, գ. 135, թթ. 73, 135, գ. 160, թթ. 37, 77, գ. 164, թթ. 44, 443, 448, 453 և այլուր։
2 «Հասք», 1914, № 8։

ներում գների արագ աճի, կյանքի թանկացման ու անտանելի դարձող պայմանների, շուկայում կատարվող սպեկուլյացիայի վերաբերյալ [1]։

Սակայն քանի դեռ շարունակվում էր պատերազմը՝ թանկության հիմնական պատճառը, ոչ ոք չէր կարող թանկության առաջն առնել՝ ո՛չ ցարական կառավարությունն ու նրա օրգանները և ո՛չ էլ քաղաքների միությունն ու քաղաքային վարչությունները։ Սննդամթերքների ու լայն սպառման ապրանքների գները ավելի արագ և մեծ չափերով բարձրանում են մանավանդ 1916 թվականից։ Ըստ «Պայքար» թերթի տվյալների, Երևանում 1916 թ. սկզբներից սննդամթերքների ու հացի գները բարձրանում էին ոչ թե օրերով, այլ ժամերով։ Միայն մեկ ամսվա ընթացքում քաղաքում սննդամթերքների գները բարձրացել էին երեք անգամ, իսկ վառելիքինը՝ չորս անգամ [2]։

Դրությունը գնալով դառնում է աղետաբեր։ 1916 թ. փետրվարի 24-ին Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի գծով օգնականը հատուկ հեռագիր է տալիս Երևանի նահանգապետին, որպեսզի վերջինս կանխի թանկության հողի վրա առաջացած «անկարգությունները»։ Իսկ իր պատասխան հեռագրի մեջ Երևանի նահանգապետի պաշտոնակատար Ստրելբիցկին գրում է. «Թանկության հողի վրա անկարգությունների առաջացման արգելման մասին փետրվարի 24-ի հեռագրի առնչությամբ զեկուցում եմ Ձերդ պայծառափայլությանը, որ... ալյուրի պաշարը իսպառ սպառվել է, բոլոր տեղերից ստացվում են բողոքներ, համառ պահանջներ։ Վտանգ կա, որ տեղ-տեղ բնակիչները հարկադրված են լինելու սերմացու պահանջել։ Բուն Երևանում ալյուրը կբավականացնի մեկ շաբաթից ոչ ավելի...» [3]։

Իսկ նույն թվականի հուլիսի 8-ին Կովկասի փոխարքայության հատուկ բաժնին հասցեագրված Երևանի նահանգապետի հեռագրում ասված է.

«Այսօր առավոտյան քաղաքի տարբեր մասերում նկատվել են ինչ որ «Ահարեկող կոմիտեի» անունից հայերեն լեզվով փակցրած թռուցիկներ, որոնք սպառնում են ոչնչացնել խանութները, եթե Երևանի վաճառականները չիջեցնեն ապրանքների գները»...» [4]։

1 *Տե՛ս* «Труды IV-го Съезда городских общественных деятелей Кавказского края», Тифлис, 1915, 4-րդ և հետևյալ էջերում։

2 *«Պայքար» (լրագիր), Թիֆլիս, 1916, № 17։*

3 ЦГИА Грузинской ССР, ф. 2с, д. 4331, *թ. 1։*

4 *Նույն տեղը, թ. 3։*

Ի պատասխան նահանգապետի հեռագրի և նամակի, Թիֆլիսից գեներալ-լեյտենանտ իշխան Օրլովը հեռագրում է, որ ձեռնարկվեն ոստիկանական ու գործակալային բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցառումները, որպեսզի կանխվեն քաղաքում թանկության հողի վրա ենթադրվող ավերածությունները։ Նա նահանգապետին կարգադրում է ուժեղացնել ոստիկանական հսկողությունը, ավերածություն առաջացնողներին պատժի ենթարկել առանց հապաղելու, հայտնաբերել թռուցիկ փակցնողներին և միջնորդել նրանց իրկուտսկի նահանգ աքսորելու, արգելել փողոցներում մարդկանց կուտակումները։ Վերադիրը միաժամանակ կարգադրում է անմիջապես կանոնավորել լայն սպառման առարկաների սակագները [1], որը, սակայն, ապրանքների սակավության և հազարավոր փախստականների հոսանքի պատճառով որևէ արդյունքի չէր կարող հասցնել։ Սահմանված սակագները փաստորեն ինքնանպատակություն էին. շուկայի իրական գները բոլորովին այլ էին։

Դրանից դեռ առաջ, 1916 թ. մարտի 28-ին նահանգապետին հասցեագրած իրենց դիմումի մեջ քաղաքի կառավարները գրում էին.

«Անհայտ չէ Ձերդ գերազանցությանը, որ առաջին անհրաժեշտության առարկաների ամեն օր աճող թանկությունը երկրում ընդհանրապես, իսկ Երևան քաղաքում մասնավորապես մեզ միանդամայն ուժասպառ է արել...» [2]։

Ապրանքների թանկության հետևանքով ստեղծված անելանելի դրությունը նույնիսկ արձանագրում է «Աշխատանք» թերթը, որն իր թղթակիցներից մեկի բերանով գրում է.

«Ներկա տնտեսական ծանր օրերին, երբ թանկությունն օրեցօր ավելի մեծ չափերի է հասնում, խեղճ քաղաքացին մնացել է շվարած։ Չի կարող շուկա մտնել և գնել որևէ իր յուր որոշված արժեկշռի համեմատ։

Ամեն կողմ կեղեքում մթերքների կեղծումն...։ ...Փորձեցեք մտնել խանութները ճոթեղեն գնելու և դուք կտեսնեք ինչ առասպելական գների են հասել այդ ապրանքները։ Ճիշտ է, ռուսական շուկայում ճոթեղենը այժմ թանկ է, բայց այնպիսի գների նա ոչ մի տեղ չի հասել, ինչպես մեզանում է...» [3]։

Թանկությունն ավելի մեծ չափերի է հասնում 1917 թ. և հե-

1 ЦГИА Грузинской ССР. ф. 2с, д. 4331, *թ. 4—5։*

2 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1638, թ. 27։*

3 *«Աշխատանք», 1916, № 56։*

տագա տարիներին՝ մինչև սովետական կարգերի հաստատումը։

Այժմ տեսնենք ինչ գներ ունեին կարևոր սննդամթերքներն ու լայն սպառման առարկաները և ինչպիսին էին աշխատավոր բնակչության նյութական պայմանները։

Յուրաքանչյուր ամիս կամ ըստ սեզոնի քաղաքային վարչությունը շարունակում էր նշանակել ու նահանգապետին հաստատել տալ շուկայում վաճառվող ապրանքների սակագները և հսկում էր, որպեսզի իր նշանակած գները գործեն առանց խախտումների։ Սակայն այդ միայն ձևականություն էր։ Շուկայում ապրանքները, մանավանդ պատերազմի տարիներին, վաճառվում էին ըստ վաճառողների հայեցողության։ Եթե հաստատված սակագների ցուցակներով դատենք սննդամթերքների շուկայում ունեցած գների մասին, ապա պետք է ասենք, որ 1915—1916 թթ. ընթացքում դրանք համեմատաբար քիչ էին փոփոխվել։ Որոշ ապրանքների սակագների առավելագույն փոփոխությունը այդ երեք տարիների ընթացքում 50 տոկոսից չէր անցնում, միայն մի քանի ապրանքների սակագներն էին, որ ավելացել են 200—300 տոկոսով [1]։

Սննդամթերքների գների բարձրացման մասին գաղափար կարող է տալ հետևյալ աղյուսակը, որի 1913 թ. վերաբերող տվյալները բերում ենք սույն գրքի առաջին բաժնից։

Աղյուսակ 61

№ № կ/կ	Սննդամթերքի անունը	1913 թ. քանակը		1913 թ. գինը		1916 թ.[2] քանակը		1916 թ.[2] գինը	
		փութ	ֆունտ	ռ.	կ.	փութ	ֆունտ	ռ.	կ.
1	Յորեն	1	—	1	35	1	—	2	74
2	Ալյուր	1	—	1	54	1	—	3	60
3	Յուղ հալած	—	1	—	50	—	1	1	40
4	Հաց	—	1	—	4,5	—	1	—	6,5
5	Ոչխարի միս	—	1	—	14	—	1	—	40
6	Տավարի միս	—	1	—	13	—	1	—	37
7	Օճառ	—	1	—	14	—	1	—	50
8	Կաղամբ	1	—	—	50	1	—	5	—
9	Կարտոֆիլ	1	—	—	70	1	—	1	80
10	Շաքար	—	1	—	17	—	1	—	28

1 Իրար հետ համեմատել «Эриванские объявления» Թերթիկի 1915 թ. (№№ 22 և 43) և 1917 թ. (№ 1) համարների տվյալները։

2 Տվյալները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 894, թ. 25, գ. 1638, թ. 27 և «Эриванские объявления», 1914, № 58։

Ինչպես տեսնում ենք, երեք տարվա ընթացքում գլխավոր սննդամթերքների իրական գներն ավելացել էին միջին հաշվով 250—300 տոկոսով։ Սակայն մեր կազմած այս աղյուսակը ինքն իրեն, այնուամենայնիվ, չի կարող գաղափար տալ աշխատավորների նյութական դրության և կյանքի թանկության մասին։ Կյանքի թանկության վերաբերյալ ճիշտ գաղափար կազմելու համար անհրաժեշտ են նաև աշխատավարձի տվյալները։ Մենք տեսանք, որ վանեցի վարպետները 1916 թ. օրական վաստակում էին $1\frac{1}{2}$—$2\frac{1}{2}$ ռուբլուց ոչ ավելի։

Ըստ քաղաքային վարչության պաշտոնական տվյալների, 1916 թ. սկզբին արհեստավորների ու բանվորների օրական աշխատավարձը կազմում էր՝ սևագործ բանվորինը 1 ռ. 50 կ., դարբինինը 2 ռ. 50 կ., որմնադրինը՝ 3 ռ. և այլն [1]։

Կասկածից վեր է, որ ցարական պաշտոնական տվյալներն ինչպես միշտ, այս դեպքում էլ ունեն արատներ։ Սակայն դրանք, այնուամենայնիվ, ցույց են տալիս, թե ինչքան էր թանկացել կյանքը պատերազմի տարիներին։ 1917—1918 թթ. քաղաքում կյանքի պայմանները էլ ավելի են վատանում, դաշնակների տիրապետության շրջանում հասնելով ամենաանտանելի վիճակի։

Միայն գլխավոր սննդամթերքների գներն ու տարբեր կատեգորիայի աշխատողների աշխատավարձի չափը, այնուամենայնիվ, լրիվ գաղափար չեն կարող տալ կյանքի պայմանների մասին։ Պետք է նկատի ունենալ նաև, որ քաղաքում աշխատանք քիչ կար և տեղացի բնակիչների մի զգալի մասը մնում էր օրվա հացի կարոտ, որ քաղաք էին եկել Արևմտյան Հայաստանից բազմահազար բնակիչներ, որոնք պարզապես մատնված էին սովի։

Այդ ամբողջը կարելի էր դարձյալ մի կերպ տանել, եթե նշված գների համապատասխան առևտուրը կանոնավորված լիներ շուկաներում և, ամենագլխավորը, եթե քաղաքն ունենար կամ նրան տրվեր կարիքներին համապատասխան գոնե նվազագույն քանակությամբ սննդամթերք։ Այսինչները, որոնք առանց այն էլ անարգել կերպով զրպարտվում էին սպեկուլյացիայով, օգտվելով պատերազմական դրությունից, փաստորեն դարձել էին շուկա-հրապարակների տեր ու տնօրենը։ Քաղաքային դումայի ձայնավորներից մեկը վկայում է, որ «այսինչներն իրենց պահում» են «անամոթաբար և բնակչությանը չեն թողնում առաջին անհրաժեշտության մթերքներ գնելու, նրանք գյուղացիներից ուղղակի խլում

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 894, թ. 25, գ. 1641, թ. 3։

պակասը, առևտրի մեջ սպեկուլյացիան և խարդախությունները, աճող անգործությունը և մեծ թվով փախստականների ապաստանումը քաղաքում ստեղծել էին անտանելի պայմաններ։ Սևագործ բանվորների մեկ օրվա աշխատավարձը (1 ռ. 50 կ.) 1916 թ. չէր բավականացնում կառքով մեկ անգամ քաղաքից երկաթուղային կայարան գնալ գալու համար (1 ռ. 60 կ.) [1]։

Դրությունը վատանում էր նաև նրանով, որ քաղաքի բնակչության մեխանիկական հսկայական աճը (փախստականների ներհոսքը) չէր ուղեկցվում նրա գյուղատնտեսական մթերքների բազայի ընդլայնմամբ, գյուղատնտեսական ճյուղերի՝ այգեգործության, բանջարաբուծության, անասնապահության և երկրագործության զարգացմամբ։ Նախորդ տարիների համեմատությամբ Երևանի գյուղատնտեսության ճյուղերը ապրում են անկում [2]։ Այսպես, օրինակ՝ եթե նախկինում Երևանի հայցահատիկային ցանքսերի տարածությունը հասնում էր մի քանի հարյուր դեսյատինի, ապա 1914 թ. ցանվել էր ընդամենը 42 դեսյատին հացահատիկ [3]։ Դրանից էապես չէին տարբերվում գյուղատնտեսական նաև մյուս ճյուղերը։

Պատերազմական դրությունը խիստ անդրադարձում է ունենում քաղաքի ներքին կյանքի նաև մյուս բնագավառների վրա։ Պատերազմը սկսվելուց հետո գրեթե իսպառ դադարում է քաղաքի հետագա պլանավորումը, որը տակավին սկսվել էր անցյալ դարի 60-ական թվականներին և 90-ական թվականներից ստացել էր բավական լայն թափ։ Ոչինչ չի կատարվում քաղաքի բարեկարգման ուղղությամբ, քաղաքը մնում է սանիտարական ամենավատթար պայմանների մեջ, իսկ փողոցների վիճակը նույնիսկ ավելի է վատանում [4]։ Ոչ մի նոր բան չի կատարվում նաև քաղաքի կոմունալ պայմանների լավացման ուղղությամբ։ Այդ տարիներին չի կատարվում շատ թե քիչ նշանավոր որևէ շենք կամ այլ կառույց։ Քաղաքային միջոցներն աղքատիկ էին, պետությունից որևէ վարկ չէր ստացվում։ Ընդհակառակը, իբրև ցարական օրգանների հավելված, քաղաքային ինքնավարությունը՝ վարկավորելով պետական դպրոցներին, միջոցներ տրամադրելով ռազմաճակատին, ինքն

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1638, թ. 27։

2 Համապատասխան տվյալները տե՛ս «Обзор Эриванской губернии за 1914 г.», Ведомость № 1—3, «Кавказский календарь на 1915 г.», отд. статистический, էջ 334 և այլուր։

3 «Обзор Эриванской губернии за 1914 г.», Ведомость № 1։

4 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1465, թ. 88, «Խոսք» 1914, № 6 և այլն։

են աննդամթերքները և քաղաքացիներին վանում են առարկայից...» [1]։ Այնուհետև ձայնավորը պահանջում է, որպեսզի քաղաքային վարչությունը միջոցներ ձեռնարկի այախչիներին քաղաքի շուկա-հրապարակներից հեռացնելու համար։ Սակայն գնալով շուկաներում անկարգությունն ու սպեկուլյացիան ավելի են ծավալվում։

Սպեկուլյացիային գումարվում էին նաև խարդախությունները։ Էմին Տեր-Գրիգորյանը իր հրատարակած թերթիկում 1916 թ. գրել է մի հոդվածաշար՝ «Կեղծված մթերքները» վերնագրով, որտեղ Ռուսաստանից և արտասահմանից ստացվող ապրանքների դների բարձրացման ու անմատչելիության մասին խոսելու հետ միասին ցույց է տվել, թե շուկայում վաճառվող ապրանքներն անորակ են ու խարդախված [2]։ Նույն թերթի մի այլ համարում՝ «Մեր կացությունը» անստորագիր հոդվածում նշվում է, որ Երևանի հացի որակն անտանելի է, «ուտել չի լինում» [3]։ Իսկ քաղաքային դումայի ձայնավորի՝ վերը նշված դիմումի մեջ ուղղակի ասված է, որ «քաղաքում հաց չկա» և որ եղած հացն էլ «ուտելու համար անպիտանի է, որովհետև նրա մեջ 50 տոկոսը առողջության համար վնասակար մթերքներ են», բայց հացթուխների հետ «առայժմ» վարչությունը չի կարող կռվել, «որովհետև ալյուր չի ստացվում, իսկ ավելի առաջ ստացված ալյուրը հացթուխները գնել են և թաքցրել են այնպես, որ հայտնաբերել չեն «կարող» [4]։ Նա այնուհետև գրում է, որ, ըստ նոր օրենքի, շաբաթվա 4 օրը միս չեն վաճառում, որ քաղաքում ձուկը շքեղություն է համարվում և երևան է գալիս միայն սեպտեմբերին, որ երշիկ ընդհանրապես չի լինում, և այլն [5]։ Իսկ «Эриванские объявления» թերթիկի խմբագիրն ուղղակի գրում է. «Մենք ամեն կերպ աշխատում ենք չխոսել մեր քաղաքային գործերից, ամեն կերպ սանձում ենք մեր անհամբերությունը, բայց և այնպես չենք կարողանում լռել...։

Համարյա սով է հացի, սով է շաքարի, սով է նավթի և սև նավթի, սով է փայտի և ածուխի և այլն։ Էլ չենք խոսում կենսական մյուս մթերքների մասին» [6]։

Այսպիսով, գների խիստ բարձրացումը, մթերքների խիստ

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1796, թ. 37։

2 Տե՛ս «Эриванские объявления», 1916, №№ 19, 23, 24 և 26։

3 Տե՛ս նույն տեղը, № 38։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1796, թ. 31։

5 Նույն տեղը։

6 «Эриванские объявления», 1916, № 38։

էր փաստորեն օգնում պետությանը։ Էական ոչինչ չի կատարվում նաև քաղաքային տրանսպորտի զարգացման գծով։ Առաջվա պես քաղաքի տրանսպորտային միջոցները մնում էին ձիաքարշը, կառքերն ու սայլերը և մանավոր մի քանի ավտոմեքենաներ, որոնք դեռևս նորություն էին քաղաքի համար և չէին օգտագործվում իբրև հասարակական մարդատար տրանսպորտի միջոց։ Բայց դրանք, ինչպես և մոտոցիկլետների թիվն այնքան զգալի էր, որ ենթարկված էին հատուկ հարկադրման [1]։

1918 թ. օգոստոսի սկզբից քաղաքի ձիաքարշը դադարում է գործելուց [2]։

Առաջընթաց որևէ քայլ չի կատարվում նաև քաղաքի լուսավորությունը կանոնավորելու համար։ 1917 թ. տվյալներով Երևանն ուներ ընդամենը 217 սովորական և 12 «Գալկինի» սիստեմի լապտերներ [3]։ Քաղաքում էլեկտրաէներգիան դեռևս ամուր կերպով կենցաղի մեջ չէր մտել։ Քաղաքի ամբողջ էլեկտրաէներգիայի հզորությունը 470 ձիու ուժ էր, որից 400-ը տալիս էր «Ամպեր» ընկերության էլեկտրակայանը (ուներ երեք տուրբին), իսկ 70-ը՝ Շուստովի ընկերության էլեկտրակայանը [4], որի էներգիայի մեծ մասը գործադրվում էր վերջինիս գինու-կոնյակի գործարանում։

Քաղաքի դպրոցներից շատերը՝ Գայանյան օրիորդաց ուսումնարանը, Ալեքսանդրյան իգական գիմնազիան, արական գիմնազիան, Հռիփսիմեի գիմնազիան, ուսուցչական սեմինարիան, Մարիամյան ծխական դպրոցը, թեմական դպրոցը տարբեր ժամանակներով՝ մեկից երկու տարի ժամանակով վեր էին ածվել որբանոցների [5] ու փախստականների կացարաններին։ Պարապմունքները կանոնավոր չէին լինում, ուսումնական տարին հաճախ կրճատվում էր մի քանի ամսով։ Բնիկների հետ միասին Երևանի դպրոցներում սկսում են սովորել նաև փախստականների որդիներն ու դուստրերը։ Եկվոր երեխաների հատուկ խմբեր ունեին Մարիամյան ուսումնարանը, քաղաքային երկրորդ դպրոցը, Նորքի դպրոցը, թեմական դպրոցը, Գայանյան ուսումնարանը և այլն [6]։ Չնայած դպրոցական փախուս-

1 Քաղաքային տրանսպորտի մասին տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 1638, քք. 8, 11, 57, գ. 189/506, գ. 165, թ. 13—14, «Эриванские объявления», 1915, №№ 19 և 36, 1916, № 30, 1917, № 14։

2 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189/506, գ. 165, թ. 13—14։

3 Նույն տեղը, ֆ. 117, գ. 1652, թ. 33։

4 «Кавказский календарь на 1916 г.», отд. статистический, էջ 76—77։

5 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189/506, գ. 39, թ. 104։

6 Նույն տեղը, ֆ. 48, գ. 77, թ. 1—43։

տական երեխաներն ու որբերը ավելի քան 3000 հոգի էին, բայց քաղաքում դրանց համար հատուկ դպրոցներ չեն բացվում, նրանք մի կերպ տեղավորվում են արդեն գոյություն ունեցող դպրոցներում, կազմելով առանձին խմբեր ու բաժիններ [1]։ Այդ տարիների դպրոցական կյանքի միակ նորությունը կարելի է համարել այն, որ 1914 թվականից սկսած քաղաքում բացվում է կենդանագրական-լուսատագործական տարրական տիպի մեկ դպրոց [2]։

Երևանի թատերական կյանքի բնույթը պատերազմի տարիներին գրեթե ոչնչով չի փոփոխվում։ Առաջվա պես քաղաքի թատերական կյանքն ամբողջապես կապված էր հյուրեկային և տեղական ինքնագործ խմբերի ներկայացումների հետ։ Հյուրախաղեր տեղի են ունենում և՛ 1914, և՛ 1915, և՛ 1916, և՛ 1917 թվականին։ 1914 թ. հյուրախաղերի մեջ ուշադրության արժանի են Հ. Ոսկանյանի ներկայացումները, որոնք տևել են ավելի քան երկու շաբաթ՝ հունվարի վերջերից մինչև փետրվարի սկզբները։ Ոսկանյանի խումբը, որը կազմվել էր Թիֆլիսում 1914 թվականին, Երևանում բավական հաջող ներկայացնում է Օստրովսկու «Բելուգինի ամուսնությունը», ինչպես նաև «Ազրայելն» ու Շանթի «Հին աստվածները», որի բեմադրությանը մասնակցել է նաև տիկ. Մայսուրյանը [3]։ 1915 թ. հյուրախաղերից կարելի է հիշատակել Թիֆլիսից եկած հայկական օպերետային խմբի ներկայացրած Ուղևոր Հաջիբեկովի «Նա չլինի, սա լինի» ասիական օպերետան, որին «Эриванские объявления» թերթիկում տրված է հետևյալ գնահատականը. «...ներկայացումը տեսնելով՝ եկանք շատ նպաստավոր եզրակացության։ ...Երաժշտությունը զուտ տեղական էր—ասիական։ Խմբի կազմը հաջող էր և ներդաշնակ՝ շնորհիվ նույն օպերետի թարգմանիչ պ. Ս. Կարապետյանի անմիջական ղեկավարության...» [4]։ Իրենց դերերը մեծ հաջողությամբ են կատարել Փիրումյանը, Ղազարյանը, Թորոսյանը և տ. Վարդիթերն ու օր. Աստղիկը [5]։ 1916 թ. նոյեմբերին հյուրախաղային ներկայացումներով քաղաքային ակումբի դահլիճում հանդես է գալիս Թիֆլիսի դրամա-օպերային ընկերության խումբը, որը ներկայացնում է Սունդուկյանի «Պեպո» և «Քանդված օջախ» պիեսները, Բյուսոնի «Անհայտ կինը»։ Առա-

1 Տե՛ս «Ван-Зтоор» (կիսամյա հանդես), Թիֆլիս, 1916, № 51, էջ 6։

2 Տե՛ս «Эриванские объявления», 1914, № 60։

3 Նույն տեղը, №№ 8, 10 և 11։

4 Նույն տեղը, 1915, № 52։

5 Նույն տեղը։

չինների բեմադրությանը մասնակցում են հայտնի դերասաններ Տեր-Դավթյանը (Հազվագյուտ Գիքո), Միրաղյանը (Պապո), Ղազարյանը (Զիմզիմով), տ. Արմենյանը (Էփիմա)[1], իսկ վերջինին՝ Արմենյան ամուսիններն ու Հարությունյանը[2]։ Բոլոր ներկայացումներն էլ անցնում են մեծ հաջողությամբ։ Թիֆլիսից եկողներից բացի նշված բոլոր ներկայացումներին, ինչպես և հետագա տարիներին եղած բոլոր հյուրախաղերին այս կամ այն չափով մասնակցում էին նաև տեղի թատերասերները։



Վահրամ Փափազյան (ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի ինստիտուտ)։

1917 թ. մարտին Երևանում հյուրախաղերով հանդես է գալիս Թիֆլիսի հայկական դրամատիկական ընկերության շրջիկ խումբը, որի կազմում էին՝ Փափազյանը, Սևումյանը, Ավետյանը, Բեբոյանը, տիկ. տիկ. Սիրանույշը, Հասմիկը և ուրիշներ։ Խումբը բեմադրում է «Կայսր», «Դոն-Ժուան», «Դատաստան», «Յո երթաս», «Ավերակների վրա» և այլ պիեսներ։ Ներկայացումներն անցնում են մեծ հաջողությամբ։ Թերթը առանձնապես ուշադրություն է

1 «Эриванские объявления», 1916, № 53։
2 Նույն տեղը, № 56։

դարձնում Սևումյանի, Փափազյանի և Ավետյանի խաղերին, որոնք երիտասարդ էին և առաջին անգամ էին հանդես գալիս երևանի հանդիսականի առաջ։ Թերթի՝ «էլի ես» ծածկանունով թղթակիցը «Հայկական ներկայացումներ» վերնագրի տակ այդ բեմադրություններին տալիս է բարձր գնահատական։ «Մենք առաջին անգամ ենք տեսնում Սևումյանին ու Փափազյանին։ Սրանք շատ շնորհալի դերասաններ են. իրենց մտածած, խելացի խաղերով գրավում են հանդիսականների առանձին ուշադրությունը, ինչպես և Ավետյանը իր իսկական դերերում...։

Շատ լավ էր մեր հանրածանոթ տ. Սիրանույշը «Կայսրի» մեջ, նամանավանդ իր վերջին տեսարանում»[1]։

Նույն թվականի ապրիլի սկզբներին Արմեն Տիգրանյանը քաղաքի երաժշտասեր-թատերասերների մասնակցությամբ երկու անգամ ներկայացնում է իր «Անուշ» օպերան[2]։

Քաղաքի ինքնագործ թատերախմբերը շարունակում էին գոյություն ունենալ։ Ստեղծվել էին նաև ոչ մշտական գործող 2—3 նոր խմբեր։ Նոր կազմակերպված խմբերի մեջ էր նաև «Վասպուրականցի սիրողների խումբը», որը ներկայացումներ էր տալիս սկսած 1916 թ. օգոստոսից[3]։ Սիրողների խմբերի բոլոր ներկայացումները բացառապես տրվում էին բարեգործական նպատակներով, հատկապես փախստական որբերին օգնելու համար։

Պատերազմի տարիներին քաղաքի երաժշտական կյանքում զգալի փոփոխություն տեղի չէր ունեցել։ Նորությունը միայն այն էր, որ կազմակերպվել էր ինքնագործ երկու երգչախումբ, մեկը Գայանյան օրիորդաց ուսումնարանի աշակերտներից, իսկ մյուսը՝ նոր ձևավորված «Հայ գուսան» կոչված երաժշտասերների ընկերության վարչության ջանքերով՝ քաղաքի երաժշտասերներից։ Գայանյան ուսումնարանի երգչախումբը քառաձայն էր և սկսած 1914 թ. աշնանից կիրակի ու տոն օրերին երգում էր Պողոս-Պետրոս եկեղեցում[4]։ «Հայ գուսան» երաժշտասերների երգչախումբը կազմակերպվել էր ժամանակավորապես քաղաքում գտնվող երաժշտագետ Ե. Բաղդասարյանի գլխավորությամբ, քառաձայն էր և ըստ հայտարարության պետք է լիներ մշտական[5]։ Շուտով երգչա-

1 «Эриванские объявления», 1917, № 8։
2 Նույն տեղը, № 11։
3 «Աշխատանք», 1916, № 29։
4 «Эриванские объявления», 1914, № 75։
5 Նույն տեղը, 1917, № 9։

խումբն անցնում է Դ. Ղազարյանի և Սարդարյանի ղեկավարության ներքո։ Վերջիններիս կազմակերպած համերգներից մեզ հայտնի է քաղաքի ակումբում 1917 թ. հունիսի 11-ին տրված համերգը, որին մասնակցում էին «Հայ գուսան» երաժշտասերների ընկերության անդամները, տիկ. Ա. Տ. Մարտիրոսյանը, օր. Ե. Դոշիկյանը, դերասաններ Հ. Սարդարյանը, Հ. Բարայանը, Հ. Գևորգյանը, խառն երգչախումբը։ Համերգին նվագակցել է օր. Մ. Գաբրիելյանը։ Երկու օր դրանից անց նույն ակումբում տրվում են մանկական համերգ և օպերա՝ «Անգործ մանուկը» [1]։

Աղբատիկ էր քաղաքի պարբերական մամուլը։ Պատերազմի տարիներին Երևանում հրատարակվել է միայն դաշնակցական «Աշխատանք» թերթը (1915—1919 թթ.), որը տպագրվում էր «Կուլտուրա» տպարանում, և էմին Տեր-Գրիգորյանի «Эриванские объявления» թերթիկը, որը, ինչպես տեսանք, հրատարակվում էր 1900 թվականից։ Թերթիկի վերջին համարը լույս է տեսել 1917 թ. հուլիսի 22-ին (№ 21), որից հետո նրա հրատարակությունը ընդմիշտ դադարում է։ Էմին Տեր-Գրիգորյանը՝ այդ համարից հետո, դադարեցնելով թերթիկի հետագա հրատարակությունը, իր տպարանը վաճառում է այլ անձնավորության [2]։ Չի կարելի չնշել, որ Տեր-Գրիգորյանի թերթիկը մեզ հետաքրքրող շրջանի Երևանի պարբերականների մեջ ամենից երկար կյանք ունեցողն էր, նա միաժամանակ քաղաքի ներքին կյանքի մասին ամենաշատ նյութեր պարունակող պարբերականն է։

1917 թ. Երևանում կազմակերպվում է Գրասերների ընկերություն, որը նպատակ էր դրել քաղաքի բնակչությանը ծանոթացնել հայ գրականությանը։ Ընկերության կազմակերպած առաջին երեկույթը տեղի է ունեցել 1916 թ. նոյեմբերին։ Ընկերությունն ամրողջապես գտնվում էր դաշնակցության ազդեցության տակ։ «Պայքար» թերթի երևանյան թղթակիցներից մեկը «Նամակ Երևանից» վերնագրով իր հոդվածում այդ ընկերությունը համարում է քաղքենի մտավորականների խղճուկ ընկերություն, իսկ նրա կազմակերպած զեկուցումներն ու գրական երեկույթները՝ անճաշակ ու «չարաճճի մարդանքներ», ոչինչ նոր չբերող միջոցառումներ [4]։

1 «Աշխատանք», 1917, № 12։
2 Տե՛ս «Эриванские объявления», 1917 թ. հուլիսի համարները։
3 «Աշխատանք», 1916, № 59։
4 «Պայքար», 1917, № 5։

Նույն թվականի հունիսի 12-ին բացվում է Մ. Ավետիսյանի մասնավոր գրադարան-ընթերցարանը, որը գտնվում էր նրա սեփական տանը՝ Ցարական փողոցի վրա [1]։ Կողմնակի նյութերից երևում են, որ Ավետիսյանի գրադարանը, որի մուտքը ձրի էր, եղել է խղճուկ, նրա գրքերի թիվը մի քանի հարյուր կտորից չի անցել։

Քաղաքի դպրոցական, ակումբի ու մասնավոր գրադարանների կյանքում էական փոփոխություններ տեղի չեն ունենում։ Նախկին տարիների նման դրանք մնում են իբրև երրորդական-չորրորդական կարգի գրադարաններ, գրքերի ու պարբերական մամուլի աղքատիկ ֆոնդերով։

Ընդհանուր գծերով այդպիսին էր քաղաքի տնտեսական, կոմունալ ու մշակութային կյանքը, աշխատավորների նյութական գրությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

3. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ԵՐԵՎԱՆ

Հայկական կոտորածները և բազմահազար հայերի գաղթը դեպի Կովկաս։ Գաղթականների թիվը Երևանում։ Գաղթականների առաջին ապաստարանները ու վիճակը Երևանում։ Օգնություն փախստականներին և փախստական որբերին։ Քաղաքի բնակչության թիվը պատերազմի տարիներին։

Առաջին համաշխարհային պատերազմը ծանր, շատ ծանր հարված է հասցնում հայ ժողովրդին։ Այդ պատերազմի հիմնական թատերաբեմերից մեկի՝ Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ Ալաշկերտը, Բայազետը, Բասենը, Էրզրումը, Վանը և այլ շրջաններ ավերվում են, իսկ բնակչությունը տեղահան լինելով՝ փախչում է Կովկաս և Ռուսաստանի զանազան վայրեր։ Սակայն արևմտահայության համար մեծագույն չարիքը ոչ թե պատերազմն էր, այլ երիտասարդ թուրքերի հայաջինջ քաղաքականությունը։ Պատերազմի առաջին իսկ ամիսներին երիտասարդ թուրքերի արյունռուշտ կառավարությունը, իր պանիսլամական քաղաքականության շահերից ելնելով, ծրագրում է իսպառ բնաջնջել արևմտահայությանը՝ որպես անհնազանդ և «վնասակար» տարր։ Կառավարության հատուկ հրահանգներով հայկական կոտորածները գաղտնի կերպով

1 «Աշխատանք», 1917, № 12։

սկսվում են տակավին 1914 թ. վերջերին, ավերելով նաև ռուս-թուրքական սահմանամերձ գոտում հայկական բնակչություն ունեցող շրջանները։ Թուրքական կառավարությունը դիմադրող ուժերը գաղտագողի ու աննգորեն ոչնչացնելուց հետո՝ 1915 թ. գարնանը անցնում է ժողովրդի բացարձակ բնաջնջմանը։ Հայկական կոտորածները սկսվելով 1914 թ. վերջերից, շարունակվում են նաև հաջորդ երկու տարիներին։ 1915—1916 թթ. ընթացքում կոտորված հայերի թիվը հասնում է մեկ միլիոնի, իսկ մոտ 600.000 հոգի էլ բռնի կերպով գաղթեցվում են Միջագետք և Ասորիք։ Դրանց զգալի մասը ոչնչանում է թուրքական հրոսակների բռնություններից, քաղցի և հիվանդությունների հետևանքով։



Թուրքական գազանություններից փրկված հայ փախստականները Երևանում (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Պատերազմի տարիներին արևմտահայության մի մասը ռուսական զորքերի և հայ կամավորների օգնությամբ փրկվում է բնաջնջումից և գաղթելով՝ ապաստանում Արևելյան Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և այլ տեղերում։ Դեպի ռուսական տիրապետությունները արևմտահայերի փախուստը սկսվել էր 1914 թվականի վերջերից և շարունակվել հետագա մի քանի տար-

վա ընթացքում։ 1914—1916 թթ. Կովկաս էին գաղթել մոտավորապես 350.000 հոգի[1]։ Միայն առաջին մեծ գաղթի ժամանակ, 1914 թ. վերջին և 1915 թ. սկզբին, Երևան են գաղթել 40 հազարից ոչ պակաս[2]։ Հետագայում հոսանքը շարունակվել է։

Սակայն Երևան եկած բոլոր փախստականները չէին, որ մընում էին այստեղ։ Երևանն էլ էջմիածնի նման գաղթականության առաջին հանգրվաններից և բաշխման կետերից մեկն էր։ Ինչպես էջմիածնում, այնպես էլ Երևանում գաղթականների մեծ մասը մնում էր միայն ժամանակավորապես, դրանց շուտով բաշխում էին այլ քաղաքների ու շրջանների վրա։ Այդ պատճառով էլ եթե 1915 թ. օգոստոսին էջմիածնում կար 50.000 փախստական[3], ապա մի երկու ամիս դրանից անց գաղթականների թիվն այնտեղ իջնում է ընդամենը 25—30 հազարի, չնայած գաղթը շարունակվում էր չթուլացող հոսանքով։ Նույնն էր կատարվում նաև Երևանում։ Այստեղ, ինչպես ասացինք, 1914 թ. վերջին կար ավելի քան 40 հազար, 1917 թ. 17.505 գաղթական[4], իսկ միայն 1918 թ. սեպտեմբերի 3—23-ի ընթացքում քաղաքային ինքնավարության կողմից ցուցակագրվել էին մոտ 45.000 նոր գաղթականներ[5]։

Երևան գաղթող փախստականները հիմնականում գալիս էին Ալաշկերտի և Բայազետի շրջաններից։ Գաղթականների մեծագույն մասը կանայք, երեխաներ և ծերունիներ էին։ Թուրքական կառավարությունը տղամարդ բնակչության մեծագույն մասին զինվորական ծառայության և աշխատանքային ջոկատներ կանչելու ճանապարհով արդեն ոչնչացրել էր 1915—1916 թթ.։ 1917 թ. առաջին եռամսյակում Երևանում եղած 17.505 փախստականներից կանայք կազմում էին 5491 հոգի, երեխաները՝ 8350, անաշխատունակ տղամարդիկ (գլխավորապես ծերունիները)՝ 2881, իսկ աշխատունակ տղամարդիկ՝ ընդամենը 783 հոգի[6]։ Պատկերը նույնն էր նաև գաղթականական մյուս խմբերում։

Նորեկ գաղթականների համար առաջին ապաստարաններ էին ծառայում թեմական ու Կոնդի դպրոցների, Գայանյան ուսումնարանի և այլ դպրոցների ու հիմնարկների շենքերը[7]։

---

1 «Հայ ժողովրդի պատմություն», երկրորդ մաս, 1957, էջ 250—260։
2 «Эриванские объявления», 1914, № 89։
3 Նույն տեղը, 1915, № 40։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 170, թ. 49։
5 «Ժողովուրդ» (լրագիր), Երևան, 1918, № 20։
6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 170, թ. 49։
7 Տե՛ս նույն տեղը, գ. 11, թթ. 10—11, 25 և այլն։



Հայ փախստականների երեխաները Երևանում (ՀՍՍՌ ֆոտո-ֆոնոկինո արխիվ)։

Ողորմելի էր գաղթականների դրությունն իրենց ապաստանած նոր վայրերում՝ Էջմիածնում, Երևանում և այլուր։ Նրանց անելանելի դրության պատկերն առանց չափազանցությունների ու կողմնակալության տրված է «Эриванские объявления»-ի 1915 թ. օգոստոսի համարներից մեկում։ Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այն կրճատումներով։

«Դարձյալ գաղթ և գաղթականություն։ Գաղթականություն ահռելի, ահռելի իր քանակությամբ, իր չափերով, իր հետևանքներով...։

Մոտ 200.000 այդպիսի ողորմելիներ ահաբեկված, սոսկ իրենց կյանքն ազատելու համար, թողել են իրենց հողն ու երկիրը, տուն ու տեղը... փախել են առանց ետ նայելու...։ Շատ տասնյակ հազարներ այդ ողորմելիներից թափված են իրար վրա ս. Էջմիածնի վանքում, նրա անտառում, Վաղարշապատի փողոցներում, Իգդիրի և զանազան գյուղերի փողոցներում ու անդրկովկասյան քաղաքներում։

Թափված են գրեթե մերկ, քաղցած, հիվանդ, համարյա անօգնական։

Անտերություն, քաղց, հիվանդություն, ծննդաբերություն, մահ և մահ...

...Չեն դիմանում հազարավոր գաղթականները ու աներևակայելի տանջանքներից հետո՝ հանգիստ են առնում անագորույն մահճի ճանկերում...

Էջմիածնում 50.000 փախստականներ կան. դեռ շարունակվում են նրանց նորանոր հոսանքները...։ Մարդիկ կոտորվում են իրրև ճանճեր։ Հաց չկա քաղցածներին բաժանելու, չկա ուժ ու միջոց նրանց բժշկական օգնություն հասցնելու, նրանց անթաղ մնացած դիակները հավաքելու։

Նրանք այսօր ոչնչանում են ոչ թե քրտի ու տաճկի սրից, այլ մեր հյուրընկալ պետության մեջ, իրենց եղբայրակիցների մոտ, սովից, հիվանդությունից, անտերությունից...։

Դրանց օգնության համար թեև ստացվում են ամեն կողմից գումարներ, բայց այդ գումարները հազիվ ցամաք հացի են բավականացնում և... թաղումների համար ծախսվում» [1]։

Դրանից ոչնչով չէր տարբերվում Երևանի գաղթականության դրությունը։ Մենք տեսանք, որ քաղաքում օր-օրի վրա սննդամթերքները թանկանում էին և դառնում անմատչելի, քաղաքում ամենաանհրաժեշտ սննդամթերքների՝ հացի, մսի և այլ ապրանքների խիստ կարիք էր զգացվում, որ քաղաքում պատերազմն սկզբվելուց մեկ տարի անց կատարյալ սով էր։ Իսկ գաղթականության դրությունն ավելի սոսկալի էր։ Ահաբեկված բնակչությունը փախել էր հապճեպորեն, նա իր հետ որևէ ունեցվածք չէր բերել, նրա հիմնական զանգվածները անաշխատունակ բնակիչներ էին և չէին կարող մի կերպ իրենց օրվա հացը վաստակել նոր հանգրվանում։

Դրությունն ավելի անտանելի է դառնում մանավանդ դաշնակների տիրապետության շրջանում։ 1918 թ. վերաբերող մի հեռախոսագրում ասված է, որ «Երևան կայարանում գտնվող փախստականների դրությունը սոսկալի է։ Մեկ շաբաթից ավելի է, որ չեն ստացել ոչ հաց ոչ էլ անուշդ...։ Կայարանի շրջակայքում, որտեղ հենց սկսում է կանաչել, մարդիկ արածում են ինչպես անասունները։ Փախստականների կողմից եղել են շների ոսկորների և սատկած ձիերի լեշերի ուտելու դեպքեր։ Այսօր մենք ականատես եղանք Կարսի մարզի փախստականների կողմից նախօրյակին սատկած շան կաշին ուտելու փաստին» [2]։

---

1 «Эриванские объявления», 1915, № 40։

2 *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 73 c/205, գ. 282, թ. 199։*

Դրանից էապես չէր տարբերվում քաղաքի գաղթականական նաև մյուս հանգրվանների՝ դպրոցների ու հիմնարկների շենքերում տեղավորված գաղթականության դրությունը։ Ահա թե ինչ է ասված գաղթականությանն օգնող կոմիտեի ս. Կաթողիկե եկեղեցու ենթակոմիտեի նախագահի եկեղեցու ծխականներին ուղղված կոչի մեջ, որը վերաբերում է 1915 թ. հունվարի սկզբներին։

«Կոչ ս. Կաթողիկե եկեղեցու մեծարգո ծխականներին.

Դաժան ճակատագրի անողոք արհավիրքներին ենթակա զուլումի աշխարհից փախած մեզ ապաստանող մեր տաճկահայ եղբայրների ողբալի դրությունը միանգամայն աննկարագրելի է։

Մեր թեմական դպրանոցի յուրաքանչյուր սենյակը յուր մեջ պարունակում է այժմ մեկ-մեկ դյուղ, այո՛, ամբողջ մի դյուղ այժմ մի սենյակումն է ապրում։ Մի զարմանաք, որովհետև այնտեղ չեք գտնիլ տղամարդիկ, այլ միայն ծերեր, կանայք և մեծ թվով անտեր երեխաներ—կենդանի դիակներ, որոնց հայրերը, որն ասկյար է թուրքական բանակում, որը կամավոր ռուսաց հաղթական բանակում և շատերն էլ անհետ կորած, հետևապես զոհված մեծ ազգին։

Կան մայրեր, որոնք երեխաներին մեջքներին կապած փախչելիս չեն էլ իմացել, որ նրանք արդեն ցրտահար են եղել, իսկ կրծքներին կապածները սննդի պակասությունից նվազած, ոչնչացած են։

Ուզում եք հասկանալ զուլում բառի բուն իմաստը, գնացեք և տեսեք» [1]։

Այդպիսին էր դրությունը նաև Գայանյան ուսումնարանում, Կոնդի դպրոցում և գաղթականական մյուս ապաստարաններում։

Քաղաքը գաղթականներին շոշափելի օգնություն չէր կարող ցույց տալ ոչ միայն նյութապես, այլև առողջապահական առումով, համաճարակ հիվանդությունների դեմն առնելու համար։ 1915 թ. Երևանը, որի հիմնական ու գաղթական բնակչության թիվը հասնում էր մոտ 40.000-ի, ուներ միայն մեկ հիվանդանոց, երեք դեղատուն, 19 բժիշկ, 13 բուժակ, 13 մանկաբարձուհիներ և 14 բժշկական այլ աշխատողներ [2]։ Բնական է, որ բժշկական աշխատողների և բուժհիմնարկների այդպիսի խղճուկ կազմով Երևանը գաղթականներին իրական օգնություն չէր կարող ցույց տալ։ Գաղթականները թողնված էին բախտի քմահաճույքին։

Սակայն մեղանչած կլինենք ճշմարտության առաջ, եթե չա-

1 «Эриванские объявления», 1915, № 1։

2 «Кавказский календарь на 1915 г.», отд. статистическ., էջ 298։

սենք, որ և Երևանի բուն բնակիչները և զանազան բարեգործական ընկերություններ, այնուամենայնիվ, ցույց էին տալիս որոշ օգնություն։ Որոշ ենք ասում ոչ թե այն պատճառով, որ դրանք, մանավանդ տեղի բնակիչներն ու բարեգործական ընկերությունները, չէին ուզում ավելի իրական օգնություն ցույց տալ, այլ պարզապես չունեին համապատասխան հնարավորություններ, դրանց միջոցները շատ սահմանափակ էին և չէին կարող գաղթականների ողբերգական դրությունը էական փոփոխության ենթարկել։

Երևանի գաղթականության օգնության գործը գտնվում էր Երևանի «Եղբայրական օգնության» կոմիտեի, «Ամերիկյան նպաստամատույց» կոմիտեի, Անդրկովկասի հայ որբերին օգնող Թիֆլիսի կանանց խնամածության ընկերության ձեռքին։ Օգնողների թվում կային նաև բավական մեծ գումարներ հանձնող անհատ անձնավորություններ։

Գաղթականներին օգնության առաջին ձեռք մեկնողը հենց Երևանի բնակիչներն էին։ Գաղթականների առաջին մեծ խումբը գալուց դեռ առաջ Երևանում 1914 թ. դեկտեմբերի վերջերին կազմակերպվում է գաղթականներին օգնելու հատուկ կոմիտե՝ Երևանի «Եղբայրական օգնություն» կոչվող կոմիտեն, որի մեջ խցկվելով դաշնակները փորձում էին այն ներկայացնել իբրև իրենց նախաձեռնությամբ կազմակերպված օրգան։ Մինչդեռ «Եղբայրական օգնություն» կոմիտեն կազմակերպվել էր քաղաքի բնակչության անմիջական նախաձեռնությամբ ու մասնակցությամբ։ Կոմիտեի ըստեղծման մեջ կարևոր դեր էր խաղացել և եկեղեցին։ Կոմիտեի նախագահը հենց ինքը Երևանի թեմակալն էր՝ Խորեն եպիսկոպոսը [1]։

Երևանի «Եղբայրական օգնություն» կոմիտեն բաղկացած էր 25 անդամներից։ Նա իր կազմավորման օրից ևեթ ղիմում է հայաբնակ զանազան քաղաքների տարբեր կոմիտեների և, նկարագրելով Երևանում ապաստանած գաղթականների դրությունը, խնդրում է ուժերը ներածին չափով օգնել դրամով և այլ միջոցներով [2]։ Կոմիտեի գործի մյուս մեծ մասը կատարվում էր քաղաքում։ Նա Երևանում գաղթականներին պետք է հնարավորին չափով տրամադրեր բնակարաններ և մասամբ հագուստեղեն։ Կոմիտեն պետք է գաղթականներին օգնություն կազմակերպեր նաև քաղաքացիների անձնական աշխատանքով։ Իր այդ պարտականությունները կատարելու համար կոմիտեն եկեղեցիներին կից կազ-

1 Տե՛ս «Эриванские объявления», 1914, № 89։

2 Նույն տեղը։

մակերպում է ենթակոմիտեներ, յուրաքանչյուրը բաղկացած հինգ հոգուց [1]։ Ենթակոմիտեների պարտականությունների մեջ էին մրցում՝ գաղթականներին տրամադրվելիք ազատ բնակարանների ցուցակագրումը, հագուստեղեն և սննդամթերք հավաքելը։ Նրանք պարտավոր էին նաև ծխական դպրոցների շենքերը հարմարեցնել գաղթականներ ընդունելու համար [2]։ Ծխական դպրոցներից գաղթականության համար իրրև ապաստարաններ առաջին հերթին ծառայել են Գայանյան օրիորդաց ուսումնարանը և Կոնդի ս. Հովհաննես եկեղեցու ծխական դպրոցը։ «Եղբայրական օգնություն» կոմիտեին (կամ հանձնաժողով) ուղղված՝ Գայանյան ուսումնարանի հոգաբարձության նախագահի մի գրության մեջ, որը վերաբերում է 1915 թ. սեպտեմբերի 26-ին, ասված է, որ «Գայանյան օրիորդաց դպրոցը գաղթականության առաջին իսկ օրից ծառայել է փախստականների համար մերթ իբր ապաստարան, մերթ իբր որբանոց, մերթ իբր հիվանդանոց։ Դեռ այժմս էլ դպրոցի վեց սենյակներում ապաստանված կան փախստականներ, մեծ մասամբ հիվանդ և տեղից շարժվելու անկարող» [3]։

Գրեթե նույնպիսի գրության մեջ էր նաև Կոնդի ծխական դպրոցը։ Հոգաբարձության հաղորդման համաձայն, այս դպրոցում առաջին իսկ մեծ գաղթի ժամանակ՝ 1914 թ. դեկտեմբերի վերջին, տեղավորել են 500 գաղթականներ, որոնք որոշ ժամանակ մնալուց հետո գնացել են տարբեր գյուղեր։ Շատ չանցած, 1915 թ. հոկտեմբերի սկզբներից դպրոցի դասարաններում բնակեցնում են 200 փախստական աշակերտներ, որոնցից 150 հոգին իրենց այդ նոր տեղում մնում և դպրոցում շարունակում են իրենց ուսումը մինչև 1916 թվականի գարնան վերջերը [4]։

Ենթակոմիտեները զբաղվում էին ոչ միայն նպաստների հավաքմամբ, այլև դրանց բաշխմամբ։ Բաշխման կետեր էին հիմնականում ծխական դպրոցները։ Այլ վայրերից ստացված օգնությունը ամբողջապես տնօրինում էր «Եղբայրական կոմիտեն» ինքը։

Փախստականներին որոշ օգնություն էր ցույց տալիս նաև ամերիկյան նպաստամատույց ընկերությունը կամ կոմիտեն։ Ամերիկյան կառավարությունը ինքը, ինչպես և մյուս իմպերիալիս-

1 «Эриванские объявления», 1914, № 89։
2 Նույն տեղը։
3 ՀԿՄՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 11, թ. 10։
4 Նույն տեղը, թ. 25։

տական կառավարությունները, առհասարակ հեռու էին որևէ երկրի կամ ժողովրդի անշահախնդիր օգնություն ցույց տալու մտադրությունից։ Հայ ժողովրդին ամերիկյան կառավարությունը ընդհանրապես որևէ օգնություն չի ցույց տվել։ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն անհատ քաղաքացիներից կազմված բարեգործական ընկերություն էր, որն իր անհրաժեշտ միջոցները հավաքում էր հանգանակության կարգով։ Այդ նպաստամատույց կոմիտեն պատերազմի ժամանակ և դաշնակների տիրապետության տարիներին Երևանում բաց էր արել մի քանի որբանոցներ՝ Գայանյան ուսումնարանում, Ալեքսանդրյան իգական գիմնազիայում, ուսուցչական սեմինարիայում, Մարիամյան ծխական դպրոցում և այլ տեղերում [1]։ Ամերիկյան կառավարությունը այդ առիթն օգտագործում էր իր ազդեցությունը Հայաստանում և նրա հարևան երկրներում տարածելու համար։ Այդ ժամանակներից սկսած, մանավանդ հետագա տարիներին՝ դաշնակցության տիրապետության շրջանում, ԱՄՆ-ի կառավարությունը Հայաստանում հետամուտ էր լինում իր քաղաքական շահերին։ Որբերին օգնելու համար հանգանակության միջոցով անհատ մարդկանցից հավաքված դրամական միջոցներն ու դրանցով գնված սննդամթերքները, հին հագուստը և այլն, նույն նպաստամատույց կոմիտեի անդամները և որբանոցների ամերիկյան վերակացուները օգտագործում էին ամերիկյան քաղաքական շահերի համար։

Փախստական որբերին օգնելու գործին մասնակցում է նաև Թիֆլիսի հայ կանանց խնամածության ընկերությունը։ Այդ ընկերությունը կազմված էր դեռևս պատերազմից առաջ, XX դարի սկզբներին։ Նրա կանոնադրությունը հաստատված էր 1906 թվականին, ըստ որի կոմիտեն նպատակ ուներ խնամք տանել Անդրկովկասի որբ և կիսաորբ երկսեռ մանուկների համար, անկախ նրանց դասային պատկանելիությունից։ Ընկերությունը նյութական օգնության հետ միասին զբաղվում էր նաև որբերի դաստիարակության ու կրթության գործով։ Օգնության հիմնական ձևը որբանոցների կազմակերպումն էր, որտեղ ընդունվում էին 5—10 տարեկան մանուկներ։ Որբանոցը ևս, ըստ կանոնադրության, ուներ իր պարտադիր ներքին կարգ ու կանոնը։ Ընկերության միջոցները կուտակվում էին անդամավճարներից, նվիրատվություններից, ընկերության կապիտալներից ու ունեցվածքից ստացված եկամուտնե-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 189ց/506, գ. 39, թ. 104, «Эриванские объявления», 1917, № 16։

Ից, ընկերության օգտին բարեգործական նպատակներով տրված ներկայացումներից ու երեկույթներից [1]։

Սակայն համապատասխան աղբյուրների բացակայության պատճառով զրկված ենք Երևանի փախստական որբերին այդ ընկերության ցույց տված օգնության ձևի ու չափի մասին որոշակի գաղափար տալուց։

Երևան քաղաքի հայ որբերին օգնելու համար Հարություն Շամիլյանը դեռևս 1907 թ. տրամադրել էր 14.000 ռուբլի։ Այդ գումարը բացառապես պետք է ծախսվեր որբանոց կառուցելու վրա։ Քաղաքային վարչությունը տարիներ շարունակ Շամիլյանի տրամադրած գումարը պահում էր պետական բանկի Երևանի բաժանմունքում, առանց այն իր նպատակին ծառայեցնելու։ 1915 թ. հունվարի մեկին այդ գումարն իր բերած տոկոսների հետ միասին կազմում էր 23 449 ռ. 50 կ., իսկ 1917 թ. հունվարի մեկին՝ արդեն 25 395 ռ. 44 կոպեկ [2]։

Զարմանալի է, թե ինչու քաղաքային վարչությունն այդպիսի դժվար տարիներին փախստական որբերին օգնելու համար չի օգտագործել այդ գումարը։

Հակառակ իմպերիալիստ-խնամակալների, որոնք օգտվելով մեր ժողովրդի ծանր կացությունից, ձգտում էին երկիրը ընդմիշտ ենթարկել իրենց ազդեցության և հակառակ բոլոր տեսակի նացիոնալիստների, որոնք այդ նեղ օրերին հրահրում էին ազգային ատելություն և թշնամանք, հարևան ժողովուրդների աշխատավորական խավերը այդ ծանր օրերին հայ ժողովրդին ցույց էին տալիս բարոյական օգնություն։ Դրա վառ օրինակը կարող է լինել Սուխումիի մի խումբ բանվորների ու գործակատարների փոքրիկ, բայց բարոյական առումով անչափ մեծ նվիրատվությունը։ Այդ նվիրատվությունը նրանք կազմակերպել էին 1916 թ. սկզբին և ընդամենը կազմում էր 27 ռուբլի։ Սակայն հարցը գումարի մեծության մեջ չէր։ «Պայքար» թերթին ուղարկած այդ նվիրատվությունը ուղեկցված էր նվիրատվությանը մասնակցած վրաց բանվորների ու գործակատարների հետևյալ նամակը, որը մեջ ենք բերում բառացիորեն.

«Արհեստականորեն ազգային թշնամանք ստեղծված այս օրերին, երբ հայ և վրացի նացիոնալիստները հարևան ժողովուրդների միջև ցանում են ազգային երկպառակության թունավոր սերմեր, մենք վրացական դեմոկրատիայի իսկական զավակներս, Սուխումի բանվորներս միանգամայն դատապարտում ենք շովինիստների քաղաքականությունը և ձեռք մեկնելով անօթևան հայ ժողովրդին, նրան հայտնում ենք մեր խորին ցավակցությունը և համակրությունը։ Մենք հավատում ենք, որ պատմական դառն փորձությունների ենթարկված հայ ժողովուրդը վերջ ի վերջո երես կդարձնի ինքնակոչ խնամակալներից և սեփական ուժերով... հանդես կգա իր դեմոկրատական ձգտումներն իրականացնելու համար» [1]։

Պատերազմի տարիներին ներգաղթի պատճառով քաղաքում միշտ առկա էին հաղարավոր ժամանակավոր բնակիչներ, որոնց թիվը գնալով մեծանում էր։ Քաղաքի այդ տարիների հիմնական և ժամանակավոր բնակչության շարժումը կարելի է արտահայտել պաշտոնական տվյալների հիման վրա կազմված հետևյալ աղյուսակով [2].

Աղյուսակ 62

1913 թ.	1914 թ. 1/I			1916 թ. 1/I			Տարբերությունը
բնակչության ընդհանուր թիվը	հիմնական և ժամանակավոր հայ բնակչությունը	ներգաղթած հայ բնակչությունը	ընդամենը	հիմնական և ժամանակավոր հայ բնակչությունը	ներգաղթած հայ բնակչությունը	ընդամենը	
36836	20204	9162	29366	22001	29285	51286	

Բնակչության մեծագույն մասը կազմում էին հայերը, երկրորդ տեղում էին ադրբեջանցիները, իսկ երրորդը՝ ռուսները։ Այսպես, 1916 թ. քաղաքի հիմնական ու ժամանակավոր 51 286 բնակիչներից 37 204-ը հայեր էին, 12 257-ը՝ ադրբեջանցիներ, իսկ 1 059-ը՝ ռուսներ [3]։ Նույնպիսի հարաբերությամբ էին արտահայտված նաև մյուս տարիների վերաբերող թվերը։

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 4, թ. 1—6։

2 Տե՛ս «Эриванские объявления», 1915, № 5, 1917, № 5։

1 Տե՛ս «Эриванские объявления», 1916, № 2։

2 Տվյալները տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 415, д. 133, р. 2, «Кавказский календарь на 1915 г.», отд. статистический, էջ 254—256, на 1917 г., отд. статистич., էջ 218—221։

3 «Кавказский календарь на 1917 г.», отд. статистич., էջ 218—221։

ԵՋՐԱՓԱԿՈՒՄ

1861 թ. գյուղացիական ռեֆորմին հաջորդում են մի քանի այլ ռեֆորմներ՝ զեմստվոյական, քաղաքային, դատական և այլն։ 1870 թ. հունիսի 16-ին հաստատվում է քաղաքային նոր Կանոնադրությունը, որն աստիճանաբար սկսում են կիրառել կայսրության քաղաքներում։ Երևանում այդ Կանոնադրությունը կիրառվում է 1879 թ. հոկտեմբերի մեկին։ Կանոնադրության համաձայն Երևանում ստեղծվում են քաղաքային դուման, վարչություն և բուրժուական քաղաքային ինքնավարության այլ օրգաններ։ Քաղաքային, այսպես կոչված, ինքնավարական օրգանները լիովին կախված էին ցարական պետական-վարչական օրգաններից, նրանց պարտականություններն ու իրավունքները սահմանափակվում էին սոսկ տնտեսական ու վարչա-ֆինանսական բնագավառներով։ Քաղաքային ինքնավարության օրգաններին էին հանձնված քաղաքի տնտեսական, կուլտուրական (այն էլ միայն տնտեսական առումով) կյանքը, վարչա-ֆինանսական մի շարք գործեր։ Ըստ 1870 թվականի Կանոնադրության, քաղաքային դումայի ընտրությունների հիմքում դրված էր ունեցվածքի ցենզը, ընտրություններին մասնակցում էին միայն համեմատաբար մեծ ունեցվածքատերերը՝ քաղաքի 100—150 շնչից միջին հաշվով ընտրություններին մասնակցում էր միայն մեկ հոգի։ Քաղաքային դումայի ձայնավորների ընտրությունները կատարվում էին ամբողջ ընտրողներին բաժանելով երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը տալիս էր քաղաքային հարկերի մեկ երրորդական մասը։ Քաղաքային դուման իր հերթին ընտրում էր քաղաքային վարչություն, որը Երևանում միշտ բաղկացած էր լինում երեք հոգուց՝ քաղաքագլխից և երկու անդամներից։ Քաղաքային դումայի և քաղաքային վարչության վճիռները պետք է հաստատեին պետական օրգանները։ Քաղաքային

դումայի ձայնավորները գրեթե առանց բացառության պատկանում էին ունևոր շերտերին։ Դումայում հարցերը լուծվում էին մեծ քաշքըշուկով, հասարակության զանազան խմբերին պատկանող ձայնավորների միջև տեղի էր ունենում հարատև պայքար։ Դումայից և վարչությունից բացի զանազան հարցեր նախապատրաստելու և լուծելու համար ստեղծվում էին ժամանակավոր գործադիր հանձնաժողովներ։

1870 թ. քաղաքային Կանոնադրությունը ուժի մեջ է մնում մինչև 1892 թվականը, երբ Ալեքսանդր 3-րդի գահակալությամբ սկսված ռեակցիան իր արտացոլումն է գտնում երկրի ներքին կյանքի շատ բնագավառներում, այդ թվում և քաղաքային ինքնավարության Կանոնադրության մեջ։ 1892 թվականին հրապարակվում և կիրառվում է քաղաքային նոր Կանոնադրություն, որով էլ ավելի են նեղացնում և կրճատում քաղաքային ինքնավարության օրգանների ընտրությունները և դրանց իրավունքներն ու պարտականությունները։ Նոր Կանոնադրությամբ ընտրական իրավունք է տրվում փաստորեն միայն խոշոր բուրժուազիային։ Օրինակ՝ Երևանում այդ Կանոնադրության համաձայն 1902 թ. դումայական ընտրություններին մասնակցել է բնակչության միայն մեկ տոկոսը։

Փետրվարյան revolyուցիայից հետո ժամանակավոր կառավարությունը ժողովրդական զանգվածների ճնշման տակ հարկադրված է լինում ընդունել 1892 թ. Կանոնադրության փոփոխման անհրաժեշտությունը, բայց մյուս շատ խոստումների նման ժամանակավոր կառավարության այդ խոստումները ևս մնում են թղթի վրա։

1879—1914 թթ. Երևան քաղաքի տնտեսական կյանքում տեղի են ունենում էական փոփոխություններ։ Քաղաքի տնտեսության ճյուղերը՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսական ճյուղերն ու առևտուրը բավական առաջադիմում են։ Առաջանում են կապիտալիստական խոշոր արդյունաբերության մի քանի օբյեկտներ, ռուսական և արտասահմանյան գործարանային էժան ապրանքների մրցակցությանը չդիմանալով՝ քաղաքում անկում են ապրում կամ իսպառ վերանում մի շարք արհեստներ, ռուսական կապիտալը ներ է հոսում քաղաքի արդյունաբերության մեջ, ավելանում է գյուղատնտեսական որոշ հումքերի՝ հատկապես խաղողի արտադրությունը, կապված դրա գործարանային վերամշակման ու գինեկոնյակի արտադրության ավելացման հետ՝ բավական բարձրանում է բերքատվությունը, ավելանում է քաղաքի այգետերերի շահագրգռվածությունը՝ մրգի ավելի մեծ բերք ստանալու համար։

Կապիտալիստական խոշոր արդյունաբերության հետ միասին ձևավորվում է և բանվոր դասակարգը, որը ռուսական պրոլետարիատի օրինակով իր պայքարի դրոշն է բարձրացնում ցարական-կապիտալիստական ստրկությունից ազատագրվելու համար։

Միանգամայն էական փոփոխություն է կրում քաղաքի ներքին և արտաքին առևտուրը։ Երկաթուղու կառուցման շնորհիվ մեծանում է ապրանքաշրջանառությունը, զգալի փոփոխություն է կրում առևտրի ապրանքների կազմը, արմատավորվում են առևտրի կազմակերպման եվրոպական ու ռուսական ձևեր՝ շուկայից դուրս, փողոցներում բացվում են մեծ և, այն ժամանակվա համար օրինակելի խանութներ, մասնագիտացված և ունիվերսալ բնույթի։ Քաղաքում առաջանում են ֆինանսական հիմնարկներ և արտադրական-կոոպերատիվ ընկերություններ, փորձեր են կատարվում արտադրական ուսուցում կազմակերպելու։

Քաղաքի տնտեսական կյանքը նախասովետական շրջանում իր զարգացման բարձրագույն կետին է հասնում 1913 թ.՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։ Այդ ժամանակ Երևանը ուներ կապիտալիստական մի քանի համեմատաբար խոշոր ձեռնարկություններ (գինու-կոնյակի գործարաններ, մեխանիկական գործարան, էլեկտրակայաններ, պահածոների գործարաններ), մանufակտուրական տիպի մի քանի տասնյակ արտադրական օբյեկտներ, բավական ծավալուն արտաքին ու ներքին առևտուր և գյուղատնտեսություն։ Երևանի արդյունաբերությունը գրեթե ամբողջովին կապված էր տեղական գյուղատնտեսական հումքի (խաղող, միրգ) վերամշակման հետ, իսկ առևտրի բնորոշ կողմերից մեկը՝ արտաքին և տարանցիկ առևտրի մեծ տեսակարար կշիռն էր։ Գյուղատնտեսության ճյուղերի զարգացումը արդյունաբերության և առևտրի համեմատությամբ ուներ ավելի սահմանափակ նշանակություն։ Նախորդ շրջանի համեմատությամբ էական փոփոխություններ չէին կրել ոչ հողային ընդհանուր ֆոնդերը և ոչ էլ հողատիրության ձևերն ու հողային հարաբերությունները։ Երևանը գյուղատնտեսական առումով զարգացել հիմնականում մնում էր այդեգործական ու բանջարաբուծական։

1880—1912 թթ. քաղաքի բնակչության թիվը գրեթե հոգապատկվում է՝ 12 449-ից հասնելով 36 836-ի, այն դեպքում, երբ նախորդ 50-ամյակի ընթացքում նրա բնակչության ընդհանուր թիվը գրեթե նույնն էր մնացել։ 80—90-ական թվականներին Երևանի բնակչության աճը Բաքվի բնակչության աճից, այնուամենայնիվ, զգալի չափով ետ էր մնում։ Սակայն 1914—1926 թթ. մեխանիկական մեծ աճի շնորհիվ նրա բնակչության թվի մեծացման թափը անցնում է նաև Բաքվից։ Բնակչության թվով Երևանը Երևանի նահանգում մինչև XX դարի սկզբները գտնվում էր երկրորդ տեղում, առաջին տեղը զիջելով Ալեքսանդրոպոլին։ Հետագայում, սակայն, Երևանը իր բնակչության թվով Ալեքսանդրոպոլին մղում է երկրորդ տեղը։ Երևանի բնակչության բնական աճը չընչին էր, մահացությունը՝ բարձր, կյանքի տևողությունը՝ կարճ։ Երևանի ընտանիքները մեծ մասամբ եղել են բազմաշունչ (մեկ ընտանիքին միջին հաշվով ընկել է 6 շունչ), բայց 90-ական թվականներից, երբ ծխահարկը փոխարինվում է ունեցվածքային հարկով, քաղաքի ընտանիքների բազմանդամությունը սկսում է աստիճանաբար պակասել։ Գրագիտության տոկոսը շատ ցածր էր, գրագետ համարված բնակիչների մեծ մասն էլ հազիվ էր գրաճանաչ։ Պետական լեզուն ռուսերենն էր, որին շատ քչերն էին տիրապետում։ Քաղաքի բնակչության մեջ հայերի տեսակարար կշիռը գնալով մեծացել և դարձել էր բացարձակ տիրապետող։

Էական փոփոխության էր ենթարկվում քաղաքի բնակչության դասակարգային կազմը։ Կապիտալիզմի զարգացման հետևանքով քայքայված գյուղացիների և արհեստավորների հաշվին կազմավորվում է նոր դասակարգ, բանվոր դասակարգը, որը բազմաթիվ չէր, բայց իբրև նոր ու առաջավոր դասակարգ քաղաքի կյանքում խաղում էր առաջնակարգ դեր։ Քաղաքի հասարակության մյուս խմբերն էին՝ տարբեր կարգի պաշտոնյաները (անձնական, ժառանգական և բեկեր), հոգևորականները, բուրժուազիան, արհեստավորները և այլն։

Երևանում կիրառվող հարկային սիստեմը լիովին համապատասխանում էր պետության մյուս քաղաքներում գործող հարկային սիստեմին և այն ըստ էության նախորդ ժամանակաշրջանի հարկասիստեմից ոչնչով չէր տարբերվում։ Առաջվա պես հարկերը բազմապիսի էին և բաժանվում էին երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի հարկերի։ Գոյություն ունեին պետական հարկեր, երկրային կամ գավառական հարկեր, հարկերը հավաքելու համար սահմանված՝ տուրքեր, քաղաքային հարկեր, զանազան տուրքեր, բնակարանային հարկ, ռազմական հարկ, հարկադիր դարձած համայնական աշխատանքներ և անուղղակի բազմապիսի գանձումներ՝ արհեստով, առևտրով, արդյունաբերությամբ զբաղվելու համար։ Մեզ հետաքրքրող շրջանում հրապարակված հարկային երկու օրենքներն էլ (1893 թ. և 1910 թ.) ելնում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացման փաստից, նրանց հիմքում

ընկած էին գույքն ու անհատականությունը։ 1910 թ. հարկային օրենքն իր խստությամբ ու ծանրությամբ տեղիք էր տալիս դժգոհությունների։ Կովկասի մի քանի քաղաքային վարչություններ փոխարքայության օրգանների առաջ հարց էին հարուցել 1910 թ. օրենքով սահմանված անշարժ գույքի պետական հարկը իջեցնելու մասին։ Սակայն օրենքը մնում էր անփոփոխ։ Ծանր էին նաև մյուս հարկերը։

XIX դարի երկրորդ կեսին հայ պարբերական մամուլը («Հյուսիսափայլ», «Մշակ», «Արծվի Վասպուրական», «Մեղու» և այլն), առանձին գործիչներ ու գրողներ (Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Հ. Սվաճյան, Մ. Մամուրյան, Գ. Արծրունի, Րաֆֆի և ուրիշներ) իրենց կոչերով, հոդվածներով ու ստեղծագործություններով լայն կերպով պրոպագանդում են սուլթանական բռնապետությունից Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարը։ Ռուսաստանի զանազան քաղաքների հայ ուսանողությունը և մտավորականության մյուս ներկայացուցիչները մտահոգվում են այդ հարցով և իրենց մասնակցությունը ցույց տալիս նրան։

Այդ ընդհանուր շարժմանը մասնակցում է նաև Արևելյան Հայաստանի հիմնական կենտրոնը՝ Երևանը։ Այստեղ ազատագրական շարժման դրոշակակիրը քաղաքի անդրանիկ թերթն էր՝ «Պսակը», որը հրատարակվում էր 80-ական թվականների սկզբներին։ Գիմնազիայում, ուսուցչական սեմինարիայում, Գայանյան օրիորդաց ուսումնարանում և քաղաքի այլ դպրոցներում եղած հայ առաջավոր մտավորականության շրջանում 80-ական թվականների սկզբներին առաջանում է հակասուլթանական և հակացարական շարժում։ Շարժման մասնակիցների թիվը մեծ չէր, ընդամենը մոտ 40 հոգի, սակայն դրանց գործունեությունն էլ բավական էր, որ ցարական պահնորդական բաժինը և դատախազական ու վարչական օրգանները երկար ժամանակ կատարեն նենգություններով լի հետաքննություններ ու շարժման մասնակիցներին վարչական կարգով աքսորեն իրենց հայրենի քաղաքից։ Շարժմանը ակտիվ մասնակցություն են ունեցել «Պսակ» թերթն ու նրա հրատարակիչ-խմբագիր Վասակ Պապաջանյանը, քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանը, Հ. Տեր-Զաքարյանը, Ռ. Զալալյանը, օր. Գ. Հովհաննիսյանը, Ստ. Զելինսկին և ուրիշներ։ Շարժման մասնակիցները մեղադրվել են հակացարական «Ազգասեր» և «Հայասեր» խմբակ կազմելու մեջ ու նրանց վարչական կարգով տարբեր ժամկետներով արտաքսել են քաղաքից։

Հակացարական տրամադրություններն ու շարժումները Անդրկովկասի հայաբնակ շրջաններում էլ ավելի են ծավալվում մանավանդ հայկական ծխական դպրոցները փակելու մասին բարձրագույն հրամանը ստանալուց հետո։ Հայկական դպրոցների փակման հրամանը հակացարական տրամադրությունների բազմաթիվ պատճառներից միայն մեկն էր, բայց կարևորագույններից մեկը։ Դպրոցների փակման հարցը փաստորեն հայոց լեզվի գոյության հարցն էր, հայ ազգի գոյության հարցը։ Եվ զարմանալի չէ, որ 80-ական թվականների կեսերին Անդրկովկասի հայաբնակ բոլոր շրջանների ու բնակավայրերի հայության հակացարական տրամադրություններն ամբողջապես երանգավորված էին հայոց լեզվի ու հայկական կուլտուրայի պահպանման համար մղվող պայքարով։

XIX դարի վերջերից ազգային-ազատագրական շարժումը թևակոխում է նոր փուլ և ստանում ավելի մեծ բովանդակություն։ Ռուսական հզոր պրոլետարիատը մարտական պայքարի դրոշ է բարձրացնում ցարական կարգերի տապալման և, ընդհանրապես, շահագործման վերացման համար։ Ազգային-ազատագրական շարժումն էլ նոր պայմաններում սերտորեն կապվում է այդ ընդհանուր սոցիալական պայքարի հետ և դառնում նրա բաղկացուցիչ մասը։ Ընդհանուր թշնամիների՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ մղվող պայքարը հնարավորություն է ընձեռնում այդ պայքարը գլխավորող կոմունիստական կուսակցությանը միավորելու Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության ուժերը, ինտերնացիոնալ հիմունքներով դրանց համախմբելու ռուսական առաջավոր պրոլետարիատի շուրջը և երկարատև ու համառ պայքարի գնով հասնելու վերջնական հաղթանակի։

Այդ գործում իրենց համեստ լուման են մտցրել նաև Երևան քաղաքի աշխատավոր բնակչությունը, բանվոր դասակարգն ու նրա մարտական ջոկատը՝ կոմունիստական-բոլշևիկյան կազմակերպությունը։

Երևանում ռևոլյուցիոն շարժումները սկզբնավորվում են դեռևս 90-ական թվականներից, բայց դրանք բացահայտ են դառնում XX դարի առաջին տարիներից։ Առաջին անրավականություններն ու հուզումները, որոնք վերածվեցին հակացարական փայլուն ելույթների ու բազմամարդ միտինգի, առաջանում են 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակման առթիվ, մի օրենք, որով պետք է պետականացվեին հայկական եկեղեցու գույքն ու ունեցվածքները։ Հայերի հակացարական շարժումներից հարկադրված ցարական կառավարությունը 1905 թ. ամռանը չեղյալ է հայտարարում այդ օրենքը։

Ռուսական առաջին ռևոլյուցիայից առաջ արդեն Երևանում ստեղծվել էր բոլշևիկյան կազմակերպություն, որը չնայած իր փոքրաթվությանն ու նորակազմ լինելուն, սկզբից ևեթ ձգտում էր ամբողջապես իր ձեռքը վերցնել գործադուլային շարժման ղեկավարությունը։ 1905—1906 ԹԹ. Երևանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպության մեջ կարևոր դեր են խաղացել Ա. Մալխասյանը, Ա. Մռավյանը, Գ. Սոկոլովսկին և ուրիշներ։

1905—1907 ԹԹ. ռևոլյուցիայի ընթացքում Երևանում տեղի են ունենում բազմաթիվ գործադուլներ ու դասադուլներ, որոնք շատ դեպքերում ներկայացնում էին զրավոր պահանջներ։ Հայտնի է 1905 թ. մարտ ամսին Կովկասի փոխարքային ուղղված Երևան քաղաքի բնակչության պահանջագիրը՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ու գաղտնի քվեարկության հիմունքներով սահմանադիր ժողով հրավիրելու, ոչ դասային զեմստվոյական հիմնարկներ ստեղծելու, լրիվ ինքնավարական հիմունքներով քաղաքային կառավարությունը փոխելու, մահապատիժն ու զինվորական դատարանները վերացնելու, հողը ազգայնացնելու, Կովկասի ժողովուրդներին իրենց մայրենի լեզուներով պարտադիր տարրական և անվճար ուսման իրավունք տալու, ժողովների, պրոֆմիությունների ազատության, 8-ժամյա բանվորական օր սահմանելու և այլ շատ հարցերի մասին։

Դրանից հետո Երևանում մեկը մյուսի հետևից գործադուլ են անում ջինու-կոնյակի գործարանի բանվորները, հյուրանոցների, ճաշարանների ու ակումբների աշխատողները, ուսումնարանների աշակերտները, փոստ-հեռագրատան աշխատողներն ու ասիճանավորները, ձիաքարշի բանվոր-ծառայողները, արհեստավորները, վարսևտացուներն ու աշակերտները, բաղնիքների աշխատողները, տպարանների բանվորները և ուրիշներ։ Կարելի է ասել, որ 1905—1907 ԹԹ. Երևանի հասարակության սոցիալական կյանքում գործադուլային շարժման մի փայլուն ժամանակաշրջան է, երբ ռուսական հեղափոխության ալիքներից արթնացած բանվորներն ու մյուս աշխատավորները կազմակերպված ձևով հանդես են գալիս իրենց պահանջներով, պայքարի հիմնական ձև ընդունելով գործադուլը։ Գործադուլային պայքարը ավելի է ուժեղանում մանավանդ 1906 թվականից։ Այդ պայքարը հիմնականում ղեկավարվում էր քաղաքի բոլշևիկյան կազմակերպության կողմից։ Հեղափոխական շարժումները չեն դադարում նույնիսկ ստոլիպինյան ռեակցիայի տարիներին։

Հեղափոխական շարժումները ճնշելու համար ցարական կա-

ռավարությունը այլ կարգի նենգությունների հետ միասին Անդրկովկասի հայ-ադրբեջանական ազգային խառը բնակչություն ունեցող վայրերում, այդ թվում և Երևանում կազմակերպում է հայ-ադրբեջանական ընդհարումներ և կոտորած։ Այն ժամանակ, երբ ցարական օրգաններն ու պաշտոնյաները զբաղված էին ամենաստոր միջոցներով պրովոկացիաներ կազմակերպելով, քաղաքի հայ և ադրբեջանցի բնակչության գիտակից մասը ամեն կերպ ձգտում էր վերականգնել անդորրը և խափանել պրովոկացիաները։

1879—1914 ԹԹ. քաղաքի կոմունալ պայմանների, արտաքին տեսքի ու ներքին կյանքի բնագավառներում տեղի են ունենում զգալի փոփոխություններ։ Այդ ժամանակաընթացքում գլխավոր հեռանկարային հատակագծի հիման վրա բացվում են մի շարք նոր փողոցներ, բավական ծավալվում է պետական ու մասնավոր շինարարությունը, նշանակալից փոփոխություններ է կրում քաղաքի ճարտարապետությունը, կառուցվում են գործարանային, վարչական, դպրոցական և բնակելի նոր հարմարավետ շենքեր, որոնք մեծ մասամբ երկհարկանի էին, համեմատական չափով անհրաժեշտ ուշադրություն է դարձվում բարեկարգման վրա, որոշ չափով ձևավորվում է քաղաքի կենտրոնական մասը, իրրև արդյունք կապիտալիստական հարաբերությունների զարգացման, քաղաքը ստանում է էլեկտրական լուսավորություն, մի փոքրիկ տարածության վրա անց է կացվում ձիաքարշ (Աստաֆյան փողոցով և շուկայից մինչև երկաթուղային կայարան), կառուցվում է քաղաքի ջրմուղը (1912 թ.), որը քաղաքի բնակչությունը երազում էր դարերով, ստեղծվում է ներքին հեռախոսային ցանց և այլն, որոնք իրենց հերթին բավականաչափ վերափոխում են քաղաքացիների կոմունալ ու կենցաղային պայմանները։ Այդ բարեփոխությունները, սակայն, արմատական փոփոխություններ չեն մտցնում քաղաքի ներքին կյանքում։ Երևանը առաջվա պես մնում էր փոշու, ցեխի, ծուռ ու մուռ փողոցների, տրանսպորտազուրկ, հազարավոր հյուղերի, սակավալուսյ և ընդհանուր առմամբ անբարեկարգ քաղաք։ Առանձնապես անբարեկարգ վիճակում էին գտնվում նրա ծայրամասերն ու արվարձանները, որոնք սովորական գյուղերից շատ քիչ էին տարբերվում։

Չնայած զգալի փոփոխություններին, քաղաքի սանիտարական դրությունը մնում էր անմխիթար վիճակում։ Միակ հիվանդանոցը և մի երկու դեղատները նույնիսկ նվազագույն չափով չէին կարողանում բավարարել բնակչության կարիքները։

Շատ փոքր թիվ էին կազմում բժշկական աշխատողները, ա-

ողջապահության վրա ծախսվող միջոցները չնչին էին։ Քաղաքում մի քանի անգամ բռնկվել են համաճարակ հիվանդություններ, որոնք դարձել են զգալի թվով զոհերի պատճառ։ Քաղաքին բավական վնասներ են հասցրել նաև 1903 թ. և 1908 թ. հեղեղները։

Վատ էր քաղաքի ներքին կարգ ու կանոնը։ Քաղաքում մշտապես ահ ու սարսափ էին տարածում խուլիգանական խմբերը, որոնք զբաղվում էին գողություններով, կողոպուտով, բռնություններով, «լոթիություններով»։ Դրանք առանձնապես աշխույժ էին ծայրամասերում ու արվարձաններում, որտեղ բնակչությունն ավելի նոսր էր և կային հարմար թաքստոցներ։

1879—1914 թթ. Երևանի մշակութային կյանքում, քաղաքի տնտեսական ու հասարակական ընդհանուր զարգացման հետ կապված, կատարվում է զգալի առաջընթաց՝ ավելանում է դպրոցների թիվը, նախկին դպրոցներից մի քանիսը վեր են ածվում պրոգիմնազիաների ու գիմնազիաների, բացվում են մի շարք նոր դպրոցներ, հիմնվում են նախակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, երաժշտական կուրսեր, կիրակնօրյա խմբեր, ուսուցչական սեմինարիա, գրադարան-ընթերցարան, ակումբներ, քաղաքում առաջին անգամ կյանք է առնում պարբերական մամուլը, հիմնվում են մի քանի տպարաններ, հրապարակվում են ինքնուրույն ու թարգմանական գրքեր, աշխուժանում են ինքնագործ թատերական խմբակները, ավելի հաճախակի ու բազմազանվանդակ են դառնում դրսից եկող խմբերի հյուրախաղային ներկայացումները, առաջին անգամ Երևանում ներկայացվում է (1913 թ.) «Անուշ» օպերան, կառուցվում են համեմատաբար հարմարավետ թատրոններ, հյուրախաղային խմբերի մեջ թատերականի հետ միասին երևում են նաև երգչախմբեր ու կրկեսային պրոֆեսիոնալ կոլեկտիվներ, քաղաքում առաջին անգամ հիմնվում են կինոթատրոններ։ Այդ բոլորը դեռևս մշակութային առումով Երևանը առաջնակարգ քաղաք չէին դարձնում, բայց, այնուամենայնիվ, զգալի չափով փոխում էին նրա կուլտուրական կյանքը։

Իմպերալիստական մյուս կառավարությունների նման առաջին համաշխարհային պատերազմը իր ժողովրդին որպես «պաշտպանողական», «հայրենական» պատերազմ ներկայացնելով՝ ցարական կառավարությունը ջանում էր իր զավթողական պլանները իրականացնելու համար առավելագույն չափով օգտագործել երկրի հնարավորությունները։ Այդ նպատակով նա ստեղծում է պատերազմին օգնող կազմակերպություններ՝ ռազմա-արդյունաբերա-

կան կոմիտե, զեմստվոյական և Ռուսաստանի քաղաքների միությունները, կարմիր խաչի համառուսական և տեղական կազմակերպություններ, կազմակերպում է կամավորական ջոկատներ, վիրավորներին ու առանձին զորամասերին օգնող ընկերություններ, կատարում է հանգանակություններ, բաց է թողնում փոխառություններ և այլն, և այլն։ Ցարական կառավարության այդ բոլոր միջոցառումները հավասար չափով վերաբերում էին նաև Երևանի նահանգին և նրա կենտրոն Երևան քաղաքին։ Հայաստանն ամբողջությամբ գտնվում էր պատերազմական գործողությունների ոլորտում, նա դարձել էր ավերում բերող պատերազմի թատերաբեմ։ Պատերազմի նախօրյակին՝ 1914 թ. հուլիսի 22-ին ցարական տեղական օրգանները Երևանում կազմակերպում են ցույց, ցուցակագրում են կամավորներ, պատերազմին մասնակցելու համար կազմակերպվում է Երևանի ջոկատը, որին ամեն կերպ օգնում ու օժանդակում էր քաղաքային դուման։ 1914 թ. նոյեմբերին Երևանում կազմակերպվում է «Հայ կամավորական խմբերին օգնող հայուհյաց» ընկերությունը, որը ծավալում է բավական ակտիվ գործունեություն։ Անկախ դրանից, քաղաքում 1914 թ. նոյեմբերի սկզբներից կազմակերպվում է բարեգործական մի այլ ընկերություն, որի նպատակը վիրավոր զինվորների համար մի հիվանդանոց ստեղծելն էր։ Ռուսաստանի քաղաքների միության Երևանի կոմիտեն, որ մյուս բոլոր քաղաքների կոմիտեների նման բաղկացած էր հիմնականում կապիտալիստներից, առանդուն գործունեություն է ծավալում՝ պատերազմը հաղթական ավարտին հասցնելու համար։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում քաղաքական կյանքն անցնում է վրացական մենշևիկների, հայ դաշնակցականների և ադրբեջանական մուսավաթականների ձեռքը, որոնք Անդրկովկասում ի կատար էին ածում ժամանակավոր կառավարության քաղաքականությունն ամբողջությամբ վերցրած։

Փետրվարյան revolյուցիան արտակարգ ջերմությամբ ու հանդիսավորությամբ է ընդունվում պատերազմի դրեթե բոլոր քաղաքներում, որոնց թվում նաև Երևանում։ Այստեղ կազմակերպվում է մարդաշատ և հուժկու ցույց։ Երևանում ստեղծվում են բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդներ, որոնք սակայն, իրենց կազմով դաշնակցական-մենշևիկյան էին և հեղափոխական շարժումը ղեկավորելու փոխարեն աշխատում էին այն տանել հաշտվողականության, ձեռնարկատերերի հետ լեզու գտնելու ուղղությամբ։ Երևանում փետրվարյան հեղափոխությունից հետո

գործադուլային պայքար են մղում «էկոնոմիա» սպառողական ընկերության, «Լույս» տպարանի, «Ամպեր» ընկերության, հանրակառքի, «Ջրմուղի ընկերության», արական գիմնազիայի և այլ հիմնարկ-ձեռնարկությունների բանվոր-ծառայողները։ Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում և այն ղեկավարում էին քաղաքի բոլշևիկները։

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Երևանի տնտեսությունը ստանում է մեծ հարված։ Զգալի չափով կրճատվում է արդյունաբերության արտադրանքը, մեծապես ավելանում են ապրանքների գները, շուկայում տիրում են թանկությունը, խարեբայությունը և սպեկուլյացիան։ Առաջընթացի փոխարեն անկում են ապրում քաղաքի գյուղատնտեսական ճյուղերը՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը, երկրագործությունը և անասնապահությունը։

Քաղաքում բարեկարգման ու շինարարական որևէ աշխատանք չի կատարվում։

Նոր ոչինչ չի արվում նաև մշակույթի բնագավառում։ Առաջվա նման քաղաքի թատերական ու երաժշտական կյանքը սահմանափակվում է հյուրեկային և տեղական ինքնագործ խմբերի պատահական ներկայացումներով ու համերգներով, դպրոցական ու քաղաքապատական մի քանի խղճուկ գրադարաններով, մոտ երեք տասնյակի հասնող տարրական ու միջնակարգ դպրոցներով, որոնց մեծ մասը փաստորեն վեր է ածվում որբանոցների։ Փախստականների ներգաղթի շնորհիվ քաղաքում մի փոքր աշխուժանում են որոշ արհեստներ՝ ոսկերչությունը, ատաղձագործությունը և այլն, բայց դրանք ոչնչով չէին փոխում ընդհանուր դրությունը։ Պատերազմի հետևանքով առանձնապես մեծ հարված է ստանում քաղաքի արտաքին և տարանցիկ առևտուրը։ Խիստ վատանում են աշխատավորների նյութական պայմանները։ Քաղաքին չեն բավականացնում սննդամթերքը, լայն սպառման առարկաները։ Ապրանքների գները ավելանում են ժամերով, կյանքը դառնում է անտանելի բանկ։

Պատերազմի հետևանքով ավերվում են Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններ։ Երիտասարդ Թուրքերը պատերազմը օգտագործելով որպես նպաստավոր նախապայման՝ սկսում են սիստեմատիկորեն ոչնչացնել արևմտահայությանը։ Թուրքական յաթաղանից մի կերպ փրկված արևմտահայերի մի հատվածը ապաստան է գտնում Կովկասում։ Ապաստարաններից մեկն էլ Երևանն էր, որը էջմիածնի նման դարձել էր մի տեսակ բաշխիչ

կետ փախստական ներգաղթողների համար։ Եկվորների մի ղգալի մասը անտանելի պայմանների պատճառով ոչնչանում է, բայց մյուս մասը ընդմիշտ փրկվում է թուրքական ջարդարարներից։ Փախստականներին նյութապես օգնում էին նպաստամատույց դանազան ընկերություններ և անհատ մարդիկ։

Փախստականների ներհոսքի պատճառով 1915—1916 թթ. խիստ մեծանում է քաղաքի ժամանակավոր բնակչության թիվը։ 1916 թվականի հունվարի 1-ի դրությամբ քաղաքի 51 286 բնակիչներից 29 285 հոգին կազմում էին ժամանակավոր բնակիչները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասում իրենց դիկտատուրան են հաստատում նացիոնալիստական-բուրժուական կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, դաշնակցականները և մուսավաթականները։ Սակայն դրանց օրերը հաշված էին։ Հոկտեմբերյան հեղափոխության ալիքը տարածվում է ամբողջ երկրով մեկ։ Կարճատև տիրապետությունից հետո տեղի աշխատավորների և նրանց օգնող ռուսական պրոլետարիատի ջանքերով տապալվում է մուսավաթականների, դաշնակցականների և մենշևիկների լուծը, Անդրկովկասում հաստատվում են սովետական կարգեր։

Т. Х. АКОПЯН

ИСТОРИЯ ЕРЕВАНА (1879—1917 г.г.)

Резюме

За реформой 1861 года следует ряд реформ: земская, городская, судебная и др. Городское новое положение 16 июня 1870 года постепенно начинает применяться в городах империи. В Ереване это положение применяется с 1 октября 1879 года. Согласно этому положению, в Ереване создаются городская дума, управление и другие органы буржуазного самоуправления. Так называемые городские органы самоуправления были полностью зависимы от царских государственно-административных органов; их обязанности и права ограничивались сугубо-экономическими и административно-финансовыми областями. Городским органам самоуправления была передана экономическая, культурная (и то только в экономическом смысле) жизнь города, некоторые административно-финансовые дела.

Согласно положению 1870 года, в основу выборов городской думы был поставлен имущественный ценз. В выборах участвовали только сравнительно богатые: от 100—150 душ в выборах участвовал только один. Выборы гласных в городскую думу производились делением всех избирателей на три группы: каждый из которых давал $^1/_3$ городских налогов.

Городская дума в свою очередь избирала городское управление, которое в Ереване всегда состояло из трех человек: городской головы и 2-х членов. Решения городской думы и го-

родского управления должны были утверждаться со стороны государственных органов.

Решение почти всех вопросов в думе сопровождалось большой волокитой. Между гласными, принадлежащими к различным слоям общества, шла вечная борьба.

Кроме думы и управления для подготовки и решения вопросов, создавались временные исполнительные комиссии.

Городское положение 1870 года остается в силе до 1892 года, когда реакция, начавшаяся в период господства Александра III, нашла свое отражение во многих отраслях внутренней жизни страны, в том числе и в городском самоуправлении.

В 1892 году издается городское новое положение, которым еще более суживались и сокращались права горожан в выборных органах городских самоуправлений.

По новому положению право принимать участие в выборах получает фактически только крупная буржуазия. В Ереване, например, согласно этому положению, в выборах в думу 1902 года участвовал только 1% населения.

После февральской революции временное правительство под нажимом народных масс было вынуждено принять изменение положения 1892 года. Но подобно многим другим обещаниям временного правительства эти обещания также остались только на бумаге.

В 1879—1914 годах в экономической жизни г. Еревана происходит ряд существенных изменений. Значительно прогрессируют отдельные отрасли экономики города: промышленность, сельское хозяйство и торговля. Создается несколько объектов капиталистической крупной промышленности; ряд ремесел в городе, не выдержав конкуренции русских и заграничных дешевых заводских товаров, терпят падение или вовсе ликвидируются; русский капитал втекает в промышленность города, увеличивается производство некоторого сельскохозяйственного сырья, особенно производство винограда, связанное с увеличением его заводской переработки и производство винно-коньячных изделий; достаточно повышается урожайность, увеличивается заинтересованность садовладельцев города в получении еще более высоких урожаев фруктов. Наряду с крупной капиталистической промышленностью формируется и

рабочий класс, который по примеру русского пролетариата поднимает знамя своей борьбы для освобождения от царского и капиталистического рабства. Существенным изменениям подвергается внутренняя и внешняя торговля города.

Благодаря строительству железной дороги увеличивается товарооборот; достаточно изменяется ассортимент торговых товаров,укореняются европейские и русские формы организации торговли; вне рынков, на улицах открываются большие для того времени, примерные магазины специализированного и универсального типа. В городе возникают финансовые учреждения и производственно-кооперативные общества, делаются попытки создания производственного обучения.

Экономическая жизнь города в дореволюционный период достигает своей кульминационной точки развития в 1913 году, накануне первой мировой войны. В то время Ереван имел несколько сравнительно крупных капиталистических предприятий (винно-коньячные заводы, механический завод, электростанции, консервный завод), несколько десятков производственных объектов кустарного типа, довольно расширенную внутреннюю и внешнюю торговлю и сельское хозяйство.

Промышленность Еревана почти полностью была связана с переработкой местного сельскохозяйственного сырья (винограда, фруктов), а одной из характерных черт торговли был большой удельный вес внешней и транзитной торговли. Развитие отраслей сельского хозяйства по сравнению с промышленностью и торговлей имело более ограниченное значение. По сравнению с предыдущим периодом значительных изменений не претерпели ни общие земельные фонды, ни землевладельческие формы и земельные отношения. Ереван, с точки зрения сельского хозяйства, в основном оставался садоводческим и овощеводческим городом.

В 1880—1912 годах число населения города увеличилось почти в три раза, дойдя с 12449 до 36936, в то время как в период предыдущего пятидесятилетия общее число населения оставалось почти без изменения.

В 80—90 годах рост населения Еревана все же отставал от роста населения г. Баку. Но в 1914—1926 гг., благодаря большому механическому росту число населения Еревана увеличивается более быстрыми темпами. По числу населения

Ереван в Ереванской губернии до начала XX века находился на втором месте, уступая первое место Александрополю (ныне Ленинакан). Но в дальнейшем по числу населения Ереван оттесняет Александрополь на второе место. Естественный рост населения Еревана был незначительным, смертность высокая, продолжительность жизни — короткая. Семьи в Ереване в большинстве были многочленными (на одну семью в среднем приходилось шесть душ), но с 90-х годов, когда дымовой налог заменяется имущественным налогом многочленность семейств города начинает постепенно исчезать.

Процент грамотности был очень низким; большинство грамотных еле разбиралось в азбуке. Государственный язык был русский, которым мало кто владел. В населении города удельный вес армян все увеличивался и становился абсолютно господствующим.

Существенному изменению подвергается классовый состав городского населения. Вследствие развития капитализма, за счет разложившихся крестьян и ремесленников организуется новый класс—класс рабочих, бывший еще немногочисленным, но как новый и передовой класс, именно он сыграл в жизни города большую роль. Остальное население города составляло дворянство (личные, наследственные дворяне и беки), духовенство, буржуазия, ремесленники и т. д.

Применяющаяся в Ереване налоговая система полностью соответствовала налоговой системе, действующей в других городах государства, и это по существу ничем не отличалось от налоговой системы предыдущего периода. Налоги по-прежнему были разнородными и делились на две группы (прямые и косвенные налоги). Существовали государственные налоги, земские налоги, дани для сбора налогов, городские налоги, разная дань, квартирный налог, военный налог и т. д.

В интересующий нас период изданные два налоговых закона (1893 и 1910 гг.) исходили из факта развития капиталистических отношений; в их основе лежали имущество и индивидуальность. Вся строгость и тяжесть налогового закона 1910 г. стала причиной ряда недовольствий. Некоторые городские управления Кавказа возбуждают вопрос о снижении государственного налога, принятого по закону 1910 года. Но

закон остается неизменным. Тяжело обременялось население и другими налогами.

Во второй половине XIX века армянская периодика, отдельные деятели и писатели (Ст. Назарян, М. Налбандян, Гр. Арцруни, Раффи и др.) своими призывами, статьями и литературными произведениями широко пропагандируют идею освобождения Западной Армении от ига султанского самодержавия. Армянское студенчество и другие представители интеллигенции разных городов России также принимают участие в этом движении. В общем движении принимал участие и основной центр Восточной Армении — Ереван. Здесь знаменосцем освободительного движения являлась первая газета города «Պաշկ» («Псак»), издававшаяся в начале 80-х годов.

В гимназии, в учительской семинарии, в девичьем училище Гаяне и других школах, в среде передовой армянской интеллигенции в начале 80-х годов возникает антисултанское и антицарское движение.

Количество участников движения было небольшое, всего 40 человек; но и их деятельность вызвала беспокойство царской жандармерии, органов прокуратуры, администрации, которые начали следствие по делу участников движения, окончившееся высылкой их в административном порядке из родного города. В движени принимали активное участие редактор и издатель газеты «Псак»—Васак Пападжанян, врач Левон Тигранян, Г. Тер-Закарян, Р. Джалалян, Г. Оганесян, Ст. Зелинский и другие. Участники движения обвинялись в организации антицарского кружка «Հայասեր» и «Ազգասեր» («Айасер» и «Азгасер») и их в административном порядке высылали на разные сроки из города.

Антицарские настроения и движения в районах Закавказья, населенных армянами еще более усугублялись, особенно после получения высочайшего приказа о закрытии армянских церковно-приходских школ. Приказ о закрытии армянских школ был одним из важнейших причин антицарских настроений. Фактически вопрос о закрытии школ был вопросом существования армянского языка, вопросом существования армянского народа, и не удивительно, что в половине 80-х годов антицарские настроения армян всех районов и населенных пунктов Закавказья, заселенных армянами, были проник-

нуты борьбой за сохранение армянского языка и армянской культуры.

С конца XIX века национально-освободительное движение в Восточной Армении переходит в новую фазу, получает еще большее содержание. Могучий русский пролетариат поднимает боевое знамя борьбы за ликвидацию царского строя и вообще за ликвидацию эксплуатации. Национально-освободительное движение в новых условиях тесно связывается с общей социальной борьбой и становится ее составной частью. Борьба, проводимая против общих врагов—царизма и капитализма дает возможность коммунистической партии, возглавляющей эту борьбу, соединить силы многонационального пролетариата России, крестьянства на интернациональной основе, сплотить их вокруг русского передового пролетариата и довести до окончательной победы, благодаря длительной и упорной борьбе.

В это дело внесло свою скромную долю и трудящееся население г. Еревана, рабочий класс и его боевой отряд.

В Ереване революционное движение начинается еще с 90-х годов. Первые открытые недовольства и волнения, переросшие в блестящие выступления и многолюдные митинги против царизма, были связаны с изданием закона 12 июня 1903 года, по которому имущество армянской церкви должно было перейти государству.

Царское самодержавие вынуждено было в результате выступления армян против правительства летом 1905 года аннулировать этот закон.

Перед первой русской революцией в Ереване уже была создана большевистская организация, которая, несмотря на свою малочисленность и сравнительно недолгое существование, с самого начала уже стремилась полностью взять в свои руки руководство забастовочным движением. В 1905—1906 годах в социал-демократической большевистской организации Еревана важную роль сыграли А. Малхасян, А. Мравян, Г. Соколовский и др.

В период революции 1905—1907 годов в Ереване происходят многочисленные забастовки рабочих и учащихся, которые во многих случаях выставляли уже письменные требования.

Известно (март 1905 года) требование населения гор. Еревана, адресованное наместнику Кавказа для созыва учредительного собрания, для создания несословных земских учреждений, для изменения городского положения, составленного на основе полного самоуправления, для аннулирования смертной казни и военных судов, для национализации земель. Население города Еревана также требовало дать народам Кавказа право на получение обязательного, начального бесплатного образования на родном языке. Они боролись за свободу профсоюзов и собраний, за установление 8-часового рабочего дня и т. д.

После этого в Ереване друг за другом проводят забастовки рабочие винно-коньячных заводов, работники гостиниц, столовых и клубов, учащиеся училищ, работники и чиновники почтово-телеграфной конторы, рабочие и служащие городской конки, ремесленники, подмастерья и ученики, работники больниц, рабочие типографий и др. Можно сказать, что в социальной жизни общества Еревана 1905—1907 годы являются блестящим периодом забастовочного движения, когда рабочие и служащие, пробудившиеся от волны русской революции, организованно выступают со своими требованиями, принимая забастовку за основную форму борьбы. Забастовочная борьба еще более усиливается с 1906 года. Этой борьбой, в основном, руководила большевистская организация города. Революционное движение не прекращается даже в годы столыпинской реакции. С целью подавления революционного движения царское правительство, наряду с другими жестокостями, организует в местностях Закавказья, заселенных смешанным армяно-азербайджанским населением, в том числе и в Ереване, армяно-азербайджанскую резню. В то время, когда царские органы и чиновники были заняты организацией провокаций самыми низкими методами, сознательная часть армяно-азербайджанского городского населения всеми мерами старалось восстановить спокойствие и обезвредить провокации.

Значительные изменения происходят в 1897—1914 годах в коммунальных условиях и внутренней жизни города. За этот период на основе главного перспективного плана открываются новые улицы, достаточно расширяется государственное и частное строительство.

Значительно изменяется архитектурный облик города, строятся новые заводы, административные здания, школы, новые жилые удобные дома, которые в основном были 2-этажными. Стали обращать внимание также на благоустройство города, частично оформляется его центральная часть, как результат развития капиталистических отношений, город получает электричество, на небольшом участке проводится конка (по улице Асгафьева и от базара до железнодорожной станции), строится городской водопровод, создается внутренняя телефонная сеть и т. д. Но эти благоустройства не внесли коренных изменений во внутреннюю жизнь города. Ереван попрежнему оставался пыльным, неблагоустроенным городом с узкими, темными улицами, лишенными транспорта, с тысячами глинобитных хижин. Особенно неблагоустроенными были его периферия и пригороды, которые мало чем отличались от деревни. Несмотря на значительные изменения, санитарные условия города оставались в плачевном состоянии. Единственная больница города и две аптеки не могли даже минимально удовлетворять потребности населения. Мало было и медицинских работников. Выделенные на здравоохранение средства были незначительны.

В городе несколько раз вспыхивали эпидемии, причинявшие большие жертвы. Большой вред нанесли городу также сели 1903 и 1908 гг.

Неудовлетворительным был и внутренний порядок города. Вечный страх распространяли хулиганские шайки, занимавшиеся воровством и грабежом мирного населения. Они особенно активно действовали на окраинах и в пригородах, где заселение было редким и имелись удобные пристанища.

В культурной жизни Еревана в период с 1879 по 1914 годы, в связи с экономическим и общественным развитием города происходил значительный прогресс: увеличилось число школ, некоторые из бывших школ превратились в прогимназии и гимназии. Открылся ряд школ, были основаны начальные школы, детские сады, музыкальные курсы, воскресные курсы, учительская семинария, библиотека-читальня, клубы; в городе впервые родилась периодика, открыто несколько типографий, изданы оригинальные и переводные книги, оживились самодеятельные театральные кружки, более частыми и многосодержательными стали гастроли приезжих трупп, впервые в Ереване была поставлена опера «Ануш» (1913 г.), начали строиться сравнительно удобные театры. В гастрольных труппах были и театральные, и хоровые, и профессиональные цирковые коллективы, в городе впервые открылся кинотеатр. Но все это еще не сделало Ереван первоклассным городом в культурном отношении, хотя значительно изменило его культурный облик.

Подобно другим империалистическим государствам царское правительство предоставляло своему народу первую мировую войну как оборонительную и отечественную, старалось с большей интенсивностью использовать для осуществления своих захватнических планов возможности страны. С этой целью царское правительство создавало организации, помогающие войне: Военно-промышленный комитет, Земские союзы и Союзы городов России, местные и общероссийские организации Красного креста; организовало добровольные отряды, товарищества, содействующие раненым и отдельным воинским частям, произвело жертвоприношения, отпустило займы и т. д. и т. п. Все эти мероприятия царского правительства ровным счетом относились и к Ереванской губернии и к ее центру — Еревану. Армения полностью находилась на арене военных действий. До начала войны 22 июля 1914 года местные царские органы организовали в Ереване демонстрацию. Записывались добровольцы, для участия в войне организуется Ереванский отряд, которому повсеместно помогает городская дума. В ноябре 1914 года в Ереване создается общество армянок, содействующих добровольным армянским отрядам. Общество проявляло довольно активную деятельность. Независимо от этого, с начала ноября 1914 года в Ереване организуется другое благотворительное общество, целью которого было создание больницы для раненых. Ереванский комитет Союза городов России подобно другим комитетам городов России состоял в основном из капиталистов, активно действующих с целью победоносного окончания войны.

После февральской революции политическая жизнь в Закавказье переходит в руки грузинских меньшевиков, армянских дашнаков и азербайджанских мусаватистов, проводивших в Закавказье политику Временного правительства.

Февральская революция чрезвычайно тепло и торжест-

венно принимается во всех городах государства, в том числе и в Ереване. Здесь организуется многолюдная мощная демонстрация, создаются Советы депутатов рабочих и солдат, которые, однако, своим составом оказались дашнакско-меньшевистскими и вместо того, чтобы руководить революционным движением, старались вести ее по пути соглашательства с предпринимателями. В Ереване после февральской революции, забастовочную борьбу ведут рабочие, служащие потребительского общества «Экономия», типографии «Луйс», общества «Ампер», конки, общества водопровода, мужской гимназии и других учреждений и предприятий. В этой борьбе активно участвовали и руководители большевистской организации города.

В результате I Мировой войны экономика Еревана потерпела большой удар. Значительно сократилось производство промышленности. Повысились цены на товары, на рынке была дороговизна, обман и спекуляция. Отрасли сельского хозяйства города: садоводство, овощеводство, земледелие и животноводство потерпели регресс.

Полностью прекратились работы по благоустройству и строительству города.

Ничего нового не делалось и в области культуры. Театральная и музыкальная жизнь города по-прежнему ограничивалась концертами и случайными спектаклями гастрольных и местных самодеятельных кружков, несколькими бедными школьными и городскими библиотеками, тремя десятками начальных и средних школ, большинство из которых фактически становилось приютами. Благодаря репатриации беженцев в городе несколько оживились некоторые ремесла: ювелирное, столярное ремесло и т. д. Но это ничуть не изменило общего положения. Вследствие войны особенно большой удар претерпела внешняя и транзитная торговля. Резко ухудшились материальные условия трудящихся. В городе ощущалась нехватка продовольствия, предметов широкого потребления. Цены на товары повышались ежечасно.

Вследствие войны были разорены многочисленные районы Западной Армении. Младотурки, используя войну как благоприятное условие, систематически уничтожали западных армян. Часть армян Западной Армении, кое-как освободившаяся от турецкого ятагана, нашла пристанище на Кавказе.

Одним из таких пристанищ и стал Ереван, который подобно Эчмиадзину явился распределительным пунктом для репатриированных беженцев. Значительная часть беженцев погибла, но другая часть спаслась от турецкой резни. Беженцам материально помогали частные люди и отдельные благотворительные общества.

Поток беженцев 1915—1916 годов резко увеличил число временного населения города. По положению 1 января 1916 года из 51289 жителей города 29285 человек составляло временное население.

После Великой Октябрьской Социалистической революции в Закавказье устанавливают свою диктатуру буржуазные партии. Но их дни были сочтены. Волна Октябрьской революции распространилась по всей стране. После короткого господства силами местных трудящихся и помогающего им русского пролетариата один за другим пали мусаватисты, дашнаки и меньшевики. В Закавказье утвердилась Советская власть.

T. K. HAKOPIAN

A HISTORV OF YEREVAN (1879—1917)

Summary

To the peasant reform of 1861, there followed several other reforms such as the zemstvo, the city juridical reforms, etc. On January 16, 1870, a new Civil Code was formally accepted and thereon gradually put into practice in the cities and towns of the Empire. In Yerevan the Code became valid on October 1, 1879. As suggested by the code, Yerevan formed its own Duma, its own administration and other bodies of bourgeois city autonomy. The so-called city autonomous organs depended entirely upon the tsarist state administrative bodies. Their duties and rights were limited merely to the fields of economy, administration and finance. The city self-governing bodies were given the charge of the city economy, cultural life (only from the economic point of view), and a number of administrative and financial duties. According to the 1870 Code, only big proprietors were granted the right to vote in the city Duma elections, that is an average of one per 100 or 150 of the city population.

The 1870 City Code remained valid till 1892 when the reaction that started with the reign of Alexandre III found its reflection in many fields of the country's internal life, and the city autonomy was no exception. The year 1892 saw the publication and putting into force of a new City Code which restricted and curtailed further still the elections of the city self-governing bodies, their rights and duties.

In 1879—1914 radical changes took place in the economic life of Yerevan. Significant progress was made in the city economy, in industry as well as in different branches of agriculture and trade. A few large industrial objectives came into being; unable to withstand the competition of cheap Russian and foreign manufactured goods, a number of crafts either underwent a sharp decline, or disappeared completely; Russian investments began to flow into the city industry; there was an increase in the production of agricultural products, viniculture in particular, in relation to the increase in the factory culture of grapes and in the production of wine and cognac; a significant increase was also realized in the yield of crops.

Together with big industry, the working class took shape and following the example of the Russian proletariat, it began to struggle against the tsarist capitalist rule.

The city's home and foreign trade underwent essential changes. With the building of railway lines, goods circulation was increased, the variety of trading goods was greatly improved and trade was mostly organized in the European and Russian manner.

On the eve of World War I the city's industry reached its highest peak in 1913. At that time Yerevan had a few relatively big capitalist industrial organizations (the wine and cognac distilleries, a machine-building plant, power stations, preserve factories), a rather developed home and foreign trade and agriculture. Industry in Yerevan was almost entirely related to the industrial culture of local agricultural raw products (grapes, fruit), whereas the external and transitional trade represented one of the main branches of trade. Agricultural development had a more limited import as compared with industry and trade.

Between 1880 and 1912 the city population increased almost three fold (from 12,449 to 36,836). With the number of its population Yerevan came only second after Alexandropol in the Yerevan state till the beginning of the XX century. Later Yerevan's population surpassed that of Alexandropol. The birth rate in Yerevan was insignificant,

whereas the death rate was great and lives were short. Families in Yerevan were large (an average of 6 members to each family), but beginning from the 1890's the family taxes (ծխահարկ) being replaced by property taxes this average decreased considerably. Illiteracy was widespread, and those among the population who were considered to be educated could hardly read.

With the ruin of peasantry and craftsmanship as a result of the birth of capitalism, a new class was born: the proletariat. Though small in number, it played an important part in the life of the city as a new and progressive class. Other groupings in the population were those of the nobility (individual, hereditary, and the beks), the clergy, the bourgeoisie, the artisans, etc.

The taxation system in Yerevan corresponded entirely to that which was put into practice in the other cities of the state. As previously the taxes were varied and consisted of direct and indirect taxes. There existed state taxes and territorial or regional taxes. To collect the taxes they created various assessments: city taxes, various duties, the dwelling tax, the military tax, various kinds of communal work that had become compulsory, and a variety of inderect assessments on crafts, trade and industry. During the period under study both published taxation laws (1893 and 1910) proceeded from the fact of the development of capitalist relations, at the basis of which lay private property.

During the second half of the XIX century, the Armenian periodical press, individual public workers and writers widely propagated in their articles and literary works the idea of the emancipation of Western Armenia from the dictatorship of the Sultan. Armenian students from various Russian cities and intellectuals expressed their willingness to take part in any such movement.

The East Armenian main centre, Yerevan, also joined the general movement. Here the flag-bearer of this movement of emancipation was „Psak", the most important newspaper of the city. At the beginning of the 1880's a movement against the rule of the Sultan and the tsar started at the Gymnasium, the teachers' seminary, the Gayaneh School

and other circles of progressive intellectuals at several other schools of the city. „Psak" and its publisher and editor Vasak Papadjanian, the town's physician Levon Tigranian, H. Ter-Zakarian, R. Jalalian, Miss G. Hovhannissian, S. Zelinski and others played an active part in this movement. The partakers of the movement were accused of organizing anti-tsarist groupings, and were expelled from the city for different periods of time.

Anti-tsarist movements in the Armenian settlements of Trans-Caucasia intensified espesially after the reception of an order to close down Armenian parish schools.

At the end of the XIX century the national liberation movement began a new stage and acquired a greater significance. The powerful proletariat of Russia raised its banner of struggle against the tsarist rule and against exploitation in general.

The national liberation movement in its turn and under the new circumstances was closely related to the great struggle of socialism and became its constituent part.

The working class of the city of Yerevan brought its contribution, modest though it was, to the general struggle.

Revolutionary movements were at their initial stage in Yerevan in the 1890's, but they came out into the open from the very first years of the XX century. With the publication of the law of June 12, 1903, discontentment and worry were expressed at popular meetings. According to this law all Armenian church property and estate were to be taken under the disposition of the state. But owing to Armenian anti-tsarist movements, the tsarist government annulled the law in the summer of 1905.

Even before the first Russian revolution, a bolshevik organization had already been formed in Yerevan, in which A. Malkhassian, A. Mravian, G. Sokolowski and others played an important role.

During the revolution of 1905—1907, numerous workers' and students' strikes took place in Yerevan, and on many occasions written demands were handed in.

In order to suppress these revolutionary movements,

the tsarist government instigated, among other things, clashes between Azerbaidjanians and Armenians in regions cohabited by a mixed population of both nationalities.

While tsarist bodies and officials saved no effort to foment provocations, the leading part of the Armenian and Azerbaidjanian population did its utmost to re-establish the city's quietude and do away with the provocations.

Between 1879 and 1914 considerable changes were brought about into the city's communal conditions, its outward appearance and internal life. This was the period when, according to the general prospective city plan, a number of new streets were opened, state and private construction work was developed, the city's architecture underwent considerable changes, factories, administrative buildings, schools and comfortable two-storeyed dwelling-houses were erected. Particular attention was paid to the planning of the city, its central part took shape; the city was provided with electricity, the drainage system was created, the city's telephone service was organized, etc. These improvements, however, did not bring about fundamental changes in the internal life of the city. Yerevan rémained a city of dust and mud, with crooked streets and without transport facilities, an agglomeration of thousands of shabby huts that had no electricity.

Between 1879 and 1914, together with the general rise in the city's economy and social life, an important development was observed in the city's cultural life: there was an increase in the number of schools, former schools were turned into pro-gymnasiums and gymnasiums, a number of new schools were opened together with grammar schools, kindergartens, music courses, Sunday groups, a teachers' seminary, a library-reading hall and clubs. For the first time in the city's history a periodical press came into being, a few printing-houses were founded, original works and translations were published, amateur theatrical groups intensified their activities, more and more theatrical troupes toured the city with a greater variety of plays, the opera „Anush" was staged in Yerevan for the first time (1913),

better theatre houses were built, professional circus troupes and choirs toured the country, and the city saw the appearance of cinema houses for the first time.

Though all this did not turn Yerevan into a first rate cultural city, the city's cultural life, however, was remarkably changed. During the first World War the territory of Armenia was involved in military operations. It had become the stage of a ruinous war. On the eve of the war, on June 22, 1914, the local tsarist authorities organized a demonstration in Yerevan, recruited volunteers, formed the Yerevan detachment for active service. In this they were fully supported by the city Duma. November 1914 saw the creation of the „Armenian Women's Association", the aim of which was to help Armenian volunteers. At the beginning of November 1914 another philantropic organization was created, quite independent from the first. The aim of this organization was to found a hospital for the wounded soldiers. The Yerevan committee of the union of Russian cities, the members of which were mainly capitalists (and in this it was similar to the committees of all the other cities) saved no effort to bring the war to a „victorious end".

The February revolution was met with particular enthusiasm and solemnity in almost all the cities of the state. Yerevan organized a great demonstration involving big crowds of people. Councils of workers' and soldiers' deputies were formed in the city. They were mostly of Dashnak and Menshevik tendencies, and instead of leading the revolutionary movement, they strived to lead a conciliatory policy, a policy of compromise with the monopolists. After the February revolution, discontentment resulted in general strikes, involving the workers and employees of a number of enterprises and institutions such as the „Economia Company", the „Amber" association of the „Luis" printing-house, the „Dzermough" company tramways, and the „Boys' Gymnasium". The city bolsheviks were actively involved in this struggle and directed it.

The effect of World War I on the Yerevan industry was disastrous. Industrial output was greatly affected, prices

rose exorbitantly, markets were ruled by high costs, cheating and black-marketeering. Agriculture also underwent a steep decline in all its aspects, viniculture, vegetable growing, farming and cattle breeding.

Construction and planning work came to a stop in the city.

The city's cultural life was also in a state of stagnation.

The material standards of the workers saw a great worsening. There was a shortage of foodstuffs and consumer goods, prices rose by the hour and the costliness of life became unendurable.

During the war a great number of regions in West Armenia were reduced to ruins. Looking upon the war as a timely opportunity, young Turks began the systematic massacre of Western Armenians. Part of those who survived found shelter in the Caucasus. Yerevan, like Echmiadzin, had become a refugee centre. A great number of the immigrants did not survive the local conditions, but the remainder was saved from Turkish annihilation.

After the Great October Socialist Revolution, bourgeois political parties imposed their dictatorship in Trans-Caucasia. The October Revolution spread all over the country. After a short reign, the Musafatists, Dashnaks and Mensheviks were overthrown one after another by the local workers who had the full support of the Russian proletariat.

ՎԿԱՅԱԿՈՂՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԱՐՔՍԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐ

Մարքս Կ., Կապիտալ, հ. 1, Երևան, 1954։

Маркс К. и *Энгельс Ф.*, Письма о «Капитале», Москва, 1948.

Маркс К. и *Энгельс Ф.*, Сочинения, т. 27, Москва, 1934, т. 34, Москва, 1936.

Լենին Վ. Ի., Երկեր, Երևան, հ. 1, 1950, հ. 3, 1947, հ. 5, 1948, հ. 10, 1949, հ. 15, 1950, հ. 20, 1956, հ. 34, 1952։

2. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայկական ՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, գրականության բաժին, ֆֆ. Ե. Շահազիզի, Պ. Պռոշյանի և Վ. Փափազյանի։

Հայկական ՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Թատրոն-երաժշտական բաժին, ֆ. Էմին Տեր-Գրիգորյանի և գգ. 185 ու 188։

Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան, ֆֆ. Ա. Երիցյանի արխիվ, կաթողիկոսական դիվան և Լևոն Տիգրանյանի հիշատակարանը։

Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ. ֆֆ. 1, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 12, 14, 47, 48, 50, 51/115, 53c/117, 57, 67/199, 73c/205, 77, 90, 92, 93, 94, 101, 113, 114, 115c, 117, 124, 125, 126, 133, 134, 135, 163, 168, 177, 189c/506, 191c/508, 194, 195c/512, 197c/514։

ՀԿՊ ԿԿ պատմարխիվ, ֆֆ. 10 և 33։

Центральный государственный военно-исторический архив (ЦГВИА), фф. ВУА, 476 и 482.

Центральный государственный исторический архив (ЦГИА) Грузинской ССР, фф. Ic, 2c, 11, 12, 16, 40, 365, 370, 415, 1137.

Центральный государственный исторический архив СССР в Ленинграде (ЦГИАЛ), фф. 102, 776, 1276, 1284, 1288.

Центральный государственный исторический архив СССР в Москве (ЦГИАМ), фф. ДП, Ш, I эксп. 102.

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Աշխատանք» (լրագիր), Երևան, 1916—1917 թթ.։

«Ազդարարապահական բերք» (միամսյա հանդես), Երևան, 1881—1882 թթ.։

«Արարատ» (ամսագիր), Էջմիածին, 1869 թ.։

«Արծուի Վասպուրական» (ամսագիր), Վարագ, 1861 թ.։

«Ազդարար» (շաբաթաթերթ), Թիֆլիս, 1889 և 1892 թթ.։
«Գաղութ» (լրագիր), Ռոստով, 1914 թ.։
«Գրական թերթ» (լրագիր), Երևան, 1945 թ.։
«Դպրաց» (ամսագիր), Վաղարշապատ, 1875 թ.։
«Երևան» (թերթ), 1958—1959 և 1962 թթ.։
«Ժողովուրդ» (լրագիր), Երևան, 1918 և 1920 թթ.։
«Խոսք» (լրագիր), Երևան, 1913—1914 թթ.։
«Կայծ» (լրագիր), Թիֆլիս, 1906 թ.։
«Կոչ» (լրագիր), Երևան, 1911—1912 թթ.։
«Կոմունիստ Հայոց աշխատեցին» (ամսագիր), Թիֆլիս, 1862 թ.։
«Հայրենասեր» (թերթ), Զմյուռնիա, 1843 թ.։
«Հարզդան» (լրագիր), Երևան, 1908 թ.։
«Հուշարար» (երկշաբաթաթերթ), Թիֆլիս, 1907 թ.։
«Մասյաց Աղավնի» (երկշաբաթաթերթ), Թեոդոսիա, 1863 թ.։
«Մեղու» (կիսամսյա հանդես), Կ. Պոլիս, 1857—1862 թթ.։
«Մեղու Հայաստանի» (լրագիր), Թիֆլիս, 1866 և 1885 թթ.։
«Մշակ» (լրագիր), Թիֆլիս, 1888, 1889, 1890, 1891 և 1902 թթ.։
«Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1889, 1892, 1895, 1896, 1899, 1902 և 1907 թթ.։
«Նոր դար» (լրագիր), Թիֆլիս, 1896 թ.
«Նոր դպրոց» (ամսագիր), Երևան, 1913 թ.։
«Նոր խոսք» (լրագիր), Թիֆլիս, 1906 թ.։
«Նոր մամուլ» (լրագիր), Երևան, 1913 թ.։
«Պայքար» (լրագիր), Թիֆլիս, 1916—1917 թթ.։
«Պսակ» (լրագիր), Երևան, 1880—1883 թթ.։
«Սովետական արվեստ» (ամսագիր), Երևան, 1958 թ.։
«Սովետական գրականություն» (հանդես), Երևան, 1941 թ.։
«Սովետական Հայաստան» (օրաթերթ), Երևան, 1925, 1928, 1933, 1934, 1935, 1960 թթ.։
«Սովետական մանկավարժ» (ամսագիր), Երևան, 1941 թ.։
«Վաճառական» (լրագիր), Թիֆլիս, 1866 թ.։
«Վան-Տոսպ» (կիսամսյա հանդես), Թիֆլիս, 1916 թ.։
«Վերելք» (ամսագիր), Երևան, 1933 թ.։
«Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, Երևան, 1953 թ.։
«Փորձ» (միամսյա հանդես), Թիֆլիս, 1881 թ.։
«Օրեր» (լրագիր), Բաքու, 1907 թ.։
«Большевик» (журнал), 1952 г.
«Вестник Европы» (журнал), 1875 г.
«Записки» Кавказского отдела Императорского русского географического общества, Тифлис, 1852 г.
«Записки» Кавказского отделения русского технического общества, Тифлис, 1871—1872 гг.
«Искра» (газета), 1903 г.
«Кавказ» (газета), Тифлис, 1860, 1869, 1892, 1894—1895, 1899, 1912 гг.
«Кавказский вестник» (газета), Тифлис, 1854 г.
«Коммунист» (газета), Ереван, 1934 г.
«Северная пчела» (газета), С.-Петербург, 1828 г.

«Тифлисские ведомости» (газета), Тифлис, 1832 г.
«Эриванские губернские ведомости» (листок), Эривань, 1907 г.
«Эриванские объявления» (листок), Эривань, 1900, 1903—1904, 1906, 1908—1917 гг.

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԿԱՐԳԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 3, Երևան, 1948, հ. 5, Երևան, 1950։
Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում, Երևան, 1956։
Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890։
Աղայան Մ. Պ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955։
Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896։
Ասատրյան Ա., Ղ. Աղայան։ Կյանքն ու գործունեությունը։ Երևան, 1940։
Ասլանյան Ավ. Ախալցխայի համբարությունը («Մշակ» թերթում)։
Արզումանյան Մ. Վ., Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Երևան, 1959։
Գասպարյան Մ., Երևանի գավառական դպրոցը XIX դարի Ա կեսում («Սովետական մանկավարժ», Երևան, 1941, № 3)։
«Գիտական աշխատություններ» Երևանի պետական համալսարանի, հ. 30, Երևան, 1950, հ. 43, Երևան, 1954։
Գոյան Գևորգ, Հայկական կրկեսի ազգային տրադիցիաները («Սովետական արվեստ», ամսագիր, Երևան, 1958)։
Գրիգորյան Զ. Տ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, Երևան, 1957։
Դավիդով Դենիս, Ռազմական հուշեր, Երևան, 1942։
«Դիվան Խ. Աբովյանի», Երևան, 1940։
Երիցյանց Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա և Բ, Թիֆլիս, 1894։
Եփրիկյան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903—1905։
Թաղիադյանց Մ. Դ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847։
Թորամանյան Թորոս, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության։ Աշխատությունների ժողովածու, Երևան, 1942։
Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948։
Թումանյան Հովհ., Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը («Սովետական գրականություն», Հանդես, 1941, №№ 9—10)։
Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հ. 1, Վենետիկ, 1802։
Լեո, Հայոց պատմություն, հ. երրորդ, Երևան, 1946։
Լեո, Հայոց պատմություն։ Նորագույն շրջան, մաս I (Ձեռագրի իրավունքով, ապակետիպ), Երևան, 1926։
Լեո, Պատմություն Հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837—1912, Թիֆլիս, 1914։
Լևոնյան Գ., Արամյան ընկերության թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին («Վերելք», ամսագիր, Երևան, 1933, № 4)։

Հյաշչենկո Պ. Ի., *ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. 1, Երևան, 1949, հ. 2, Երևան, 1950։*
«Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», *կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1957։*
Կարինյան Ա., *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956։*
Կարկոտյան Զ., *Երևան քաղաքի ժողովրդագրությունը, Երևան, 1931։*
Հակոբյան Թ. Խ., *Երևանի պատմություն (1801—1879 թթ.), Երևան, 1959։*
Հակոբյան Թ. Խ., *Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ երրորդ, Երևան, 1953։*
Հակոբյան Հովհ., *Ազբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության։ Ուղեգրություններ, հ. 9, Երևան, 1934։*
Հակստհաուզեն, *Ճանապարհորդություն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս, Վաղարշապատ, 1872։*
«Հայ ժողովրդի պատմություն», *երկրորդ մաս, Երևան, 1957։*
«Հին բոլշևիկների հիշողություններ», *հ. 1, Երևան, 1958։*
Հովհաննիսյան Աշոտ, *Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. առաջին, Երևան, 1955, գ. երկրորդ, 1956։*
Մառանկոզյան Խ., *Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը («Մշակ» թերթում)։*
Մկրյան Հ. Ք., *Կենագրություն Մեսրոպ Դավթյան Թաղիադեանի, Թիֆլիս, 1863։*
Մոավյան, *Հոդվածների, հիշողությունների ժողովածու, Երևան, 1930։*
Մուրադյան Հր., *Ղազարոս Աղայան, Երևան, 1941։*
Մուրադյան Հր., *Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, Երևան, 1941։*
«1837—1887. Յիսնամեակ հայոց նոգեւոր թեմական դպրեվանցի Երեւանայ», *Թիֆխիս, 1888։*
Նանումյան Ռ., *Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1947։*
Ներսիսյան Մ. Գ., *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955։*
Ներսիսյան Մ. Գ., *Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան։*
Ներսիսյան Մ., *Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։*
Նահապետ Երվանդ, *Հին Երևանը, Երևան, 1931։*
Նահխարարյանց Հովհ., *Ստորագրություն կարուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ և Գ, էջմիածին, 1842։*
Նավարշյան Ա., Աստվածատրյան Վ., Ասատրյան Ա., Ղ. *Աղայանը—մանկավարժ, Երևան, 1941։*
Պարսամյան Վ. Ա., *Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947։*
Պարսամյան Վ., *Ռուսլուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955։*
Պարսամյան Վ., *Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, Երևան, 1940։*
Պարսամյան Վ. Ա., *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958։*
Պետրոսյան Հովհ., *Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794—1900), Երևան, 1956։*

Պողոսյան Պետր, *Գալանյան օրիորդաց ուսումնարան Երևանումը («Մեղու Հայաստանի», լրագիր, 1886)։*
Ջիլոևի Վ., *Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956։*
Սաֆրոնյան Մ., *Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը, Երևան, 1953։*
Սրվանձտյանց Հ. Գ., *Երևան քաղաք («Արծվի Վասպուրական», ամսագիր, Վաղարշ, 1861, հ. 4)։*
Վագներ Մ., *Ճանապարհորդություն ի Հայաստան, Վիեննա, 1851։*
Տեր-Սերյան Արսեն, *Հայոց նոր գրականության պատմություն, XIX—XX դդ., պրակ 3, Երևան, 1930։*
Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հ. 3. Երևան, 1955։*
Օճանյան Ա., *Երկաթուղային տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 30, Երևան, 1950)։*
Օճանյան Ա., *Անուկս տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 43, Երևան, 1954)։*
Абов Г. А., Хачатур Абовян. Жизнь и творчество, Ереван, 1948.
Агасов Г., Пламенное сердце (Хачатур Абовян), Ереван, 1941.
Адонц М. А., Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957.
«*Акты*, собранные Кавказскою Археографическою комиссиею», Тифлис, тт. I—XII.
Алахвердян Г., Состояние промышленности в дореволюционной Армении (*ДУСУ ГИ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, Երևան, 1953, № 8).*
Андроников И. З., Культура риса на Кавказе, Тифлис, 1900.
Андроников И. З., Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии («Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. 6, Эриванская губерния, Тифлис, 1894).
Ахвердов Ю. Ф., Тифлисские амкары, Тифлис, 1883.
Бакулин Ф. А., Очерки торговли с Персией, СПБ, 1875.
Банников А. Г., Первые русские путешествия в Монголию и Северный Китай, Москва, 1954.
«*Военно-статистическое обозрение Российской империи*», т. XVI, ч. 6, Эриванская губерния, составил капитан Услар, СПБ, 1853.
«*Воспоминания Б. Н. Чичерина*», Земство и московская дума, Москва, 1935.
«*2-е полное собрание законов*», тт. IV, VIII, XV, XXI и XLIX.
Всесоюзная торговая палата. «Поземельная политика стран Востока». Москва.
Гакстгаузен, Закавказский край, ч. I, СПБ, 1857.
Гарибджанян Г. Б., Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван, 1957.
Гарсеванов М., Сеть Закавказских дорог, утвержденная Великим князем наместником 1 июля 1871 года («Кавказский календарь на 1872 г.»).

Глинка С., Описание переселения армян аддербайджанских в пределы России, Москва, 1831.
Гольмсен Н. А., Приараксинская долина и тифлисско-эриванская торговая дорога («Сборник сведений о Кавказе», т. IX, Тифлис, 1885).
«Городовое положение», высочайше утвержденное 16 июня 1870 года, Тула, 1871.
«Городовое положение 1892 года», СПБ, 1893.
Градовский А. Д., История местного управления в России, СПБ, 1868.
Грибоедов А. С., Полное собрание сочинений, т. I, С.-Петербург, 1889.
Григорян З., Военные походы русской армии по присоединению Восточной Армении к России («Известия» АН Арм. ССР, общ. науки, Ереван, 1951, № 2).
Гуланян Х., Очерки истории армянской экономической мысли XIX века, Москва, 1955.
Гулишамбаров Ст., Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1884.
Дитятин И., Устройство и управление городов России, т. I, СПБ, 1875, т. II, Ярославль, 1877.
«Договоры России с Востоком, политические и торговые», собрал и издал Т. Юзефович, СПБ, 1869.
Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, СПБ, т. III, 1885, т. IV, 1886, т. V, 1887.
Евецкий Орест, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835.
Егиазаров С. А., Административно-экономич. стр. сельск. общ. в Эриванской губернии («Свод мат. по изуч. экономич. быта гос. крестьян Кавказского края», Тифлис, 1887).
Егиазаров С. А., Исследование по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891.
Егиазаров С. А., О водовладении в Закавказском крае, Киев, 1896.
Ениколопов И., Грибоедов и Восток, Ереван, 1954.
Ерицов А. Д., История холерных эпидемий в Закавказье, Тифлис, 1892.
Заварэв С., Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899.
Загурский Л., Поездка в Ахалцихский уезд в 1872 г., Тифлис, 1873.
«Закавказье», статико-экономический сборник, Тифлис, 1925.
«Записки декабриста Е. Лачинова» (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956, Документы).
Зелинский С., Город Эривань («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, Тифлис, 1881).
Зелинский С., Дарачичаг («Сборник мат. для опис. местн. и пл. Кав.», вып. 1, Тифлис, 1881).
Иваненко В. Н., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901.
Иоаннисян А. Р., Борьба Англии и Франции против присоединения Армении к России («Известия» АН Арм. ССР, общ. науки, Ереван, 1953, № 7).

Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958.
«Исторические записки», т. 12, Москва, 1941.
«История СССР», т. II, под ред. чл. корр. АН СССР М. В. Нечкиной, Москва, 1954.
«Кавказский календарь», Тифлис на 1851—1852, 1855, 1859, 1866, 1868, 1870, 1874—1877, 1880, 1883—1887, 1891, 1893—1894, 1896, 1901, 1908—1909, 1913—1917 гг.
Кишмишев С. О., ген. майор, Война в Турецкой Армении 1877—1878 гг., С.-Петербург, 1884.
Линч, Армения, т. I, Тифлис, 1910.
Лихутин М., ген.-майор, Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. Из записок о военных действиях Эриванского отряда, С.-Петербург, 1863.
Максимов Л., О журнале «Вопросы истории» («Большевик», журнал, 1952, № 13).
Марков Е. С., Озеро Гокча, 1911.
«Материалы для статистики Эриванской губернии», Тифлис, 1869.
Нерсисян М., Из истории русско-армянских отношений, кн. первая, Ереван, 1956.
Нерсисян М., Присоединение Армении к России и его историческое значение («Известия» АН Арм. ССР, общ. науки, Ереван, 1953, № 7).
Нечкина М., Движение декабристов, т. II, Москва, 1955.
«Обзор отраслей промышленности в Закавказском крае», Тифлис, 1907, 1912.
«Обзор производительных сил Кавказского наместничества за 1880 год», («Кавказский календарь» на 1881).
«Обзор Эриванской губернии», Эривань, за 1886—1887, 1893, 1896—1901, 1904, 1906, 1908, 1911—1912 гг.
«Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях», т. IV. СПБ, 1836.
Оганесян Л. А., профессор, История медицины в Армении, ч. 4, Ереван, 1957.
Озаровский Ив., Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. 1, Тифлис, 1890.
Орловский К., Эривань (Кавказский календарь на 1852 г.», Тифлис, 1851).
«О состоянии ирригации в Закавказском крае», по сообщению К. Н. Фролова («Записки Кавк. отделения русск. технич. общества», т. IV, 1871—1872, Тифлис, 1872).
Нажитнов К. А., Городское и земское самоуправление, СПБ.
«Памятная книжка Эриванской губернии» на 1892, 1903, 1904, 1908, 1910 и 1912 гг.
«Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года», т. LXXI, Эриванская губерния.

Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949.
Погребинский А. П., К истории союзов земств и городов в годы империалистической войны («Исторические записки», т. 12, Москва, 1941).
«Полное собрание законов 1828 года».
«Положение о Кавказском учебном округе и учебных заведениях оному подведомственных», СПБ, 1853.
Патто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах, и биографиях, т. II, вып. IV, т. III, вып. II, III и IV, С.-Петербург, 1888.
«Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», Тифлис, 1897.
Ршгуни В., Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947.
Сагателов М., Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча, Тифлис, 1879.
«Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифлис, вып. I, 1881, вып. IV, 1884.
«Сборник сведений о Кавказе», Тифлис, тт. II, III, VI и IX, 1872—1885 гг.
«Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. вып. 6 и 7, Тифлис, 1894—1896 гг.
«Сборник статистических сведений о Кавказе» под ред. Н. И. Воронова, т. I, Тифлис, 1869.
«Свод законов по изучению экономического быта государственных крестьговле с Персией в 1862--1881 гг., Киев, 1883.
«Свод законов Российской империи», Москва, кн. кн. I, II и III.
Семенов Дм. Дм., Городское самоуправление, СПБ, 1901.
Скрутковский С., Лейб-гвардии сводный полк на Кавказе в персидскую войну с 1826 по 1828 года, СПБ, 1896.
Спасский Н., Сельскохозяйственно-статистические сведения об Эриванской губернии за 1870 год («Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872).
Тихоцкий Е. А., Закавказский транзит и наша с ним конкуренция по торговле с Персией в 1862—1881 гг., Киев, 1883.
«Труды IV-го Съезда городских общественных деятелей Кавказского края», Тифлис, 1915.
Туманян О. Е., Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954.
Уварова, Кавказ. Путевые заметки, Москва, 1887.
Халпахчьян О. Х., Армяно-русские культурные отношения и их отражение на архитектуре, Ереван, 1957.
«Хрестоматия по истории СССР», т. III, Москва, 1952.
Хубов Е., Описание достопамятных происшествий в Армении с 1779—1809 гг., СПБ, 1881.
Черноярский, Городские поселения Эриванской губернии («Кавказский календарь на 1866 г.»).

Шаншиев П., Два слова об амкаре, Тифлис, 1857.
Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С.-Петербург, 1852.
Щербатов, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, СПБ, 1888.
«Экономический вестник Армении», 1923, № 2, 1925, № 4 (12).
«Эриванский сборник», вып. I, Эривань, 1892.
Эсадзе С., Историческая записка об управлении Кавказом, тт. 1 и 2, Тифлис, 1907.
Яралов Ю., Ереван, Москва, 1948.

ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՑՈՒՑԱԿՆԵՐ

1. ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ (1801—1917 ԹԹ.)

1801 Վրաստանի միացումը Ռուսաստանին։

1804 Մայիս, ռուսական զորքերի առաջին արշավանքը դեպի Երևան։

Հուլիս (2), Ցիցիանովի կողմից Երևանի բերդի պաշարումը։

Սեպտեմբեր (3), Ցիցիանովի կողմից Երևանի բերդի պաշարման վերացումը։

1804—1813 Ռուս-պարսկական առաջին պատերազմը։

1806—1812 Ռուս-թուրքական առաջին պատերազմը։

1808 Սեպտեմբեր (25), Գուդովիչի արշավանքը դեպի Երևան։

Հոկտեմբեր (7—9), Գոդովիչի կողմից Երևանի բերդի պաշարումը և քաղաքի մի մասի գրավումը։

Նոյեմբեր (17), Գուդովիչի զորքերի գրոհը Երևանի բերդի վրա։

Նոյեմբեր (30), Երևանի բերդի պաշարման վերացումը Գուդովիչի կողմից։

1812 Բուխարեստի հաշտության կնքումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։

1813 Հոկտեմբեր (12), Գյուլիստանի հաշտության կնքումը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև։

1826 Հուլիս (16), Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի սկիզբը։

1826—1828 Ռուս-պարսկական երկրորդ պատերազմը։

1827 Մայիս, հայկական կամավորական հեծյալ գոկատի կազմակերպումը Թիֆլիսում։

Օգոստոս (17), Օշականի ճակատամարտը։

Սեպտեմբեր (25), Երևանի բերդի պաշարումը Պասկևիչի զորքերի կողմից։

Հոկտեմբեր (1), Երևանի բերդի գրավումը ռուսական զորքերի կողմից։

Հոկտեմբեր (6), Երևանի գրավմանը նվիրված պաշտոնական տոնակատարություն։

Նոյեմբեր (12), հաշտության բանակցությունների սկիզբը Դեհկարխան վայրում։

Նոյեմբեր (կամ դեկտեմբեր), Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմադրությունը Երևանում։

1828 Փետրվար (10), Թուրքմենչայի հաշտության կնքումը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև։

Երևանի Նոր Բաղի բնակեցման սկիզբը։

Մարտ (21), Հայկական մարդի կազմակերպումը։

1828—1829 Հայերի ներգաղթը Պարսկահայաստանից։

Ռուս-թուրքական երկրորդ պատերազմը։

1829 Սեպտեմբեր (2), Ադրիանապոլսի հաշտության կնքումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև։

1829—1830 Հայերի գաղթը Արևմտյան Հայաստանից։

1829—1832 Հայկական մարզի առաջին ռևիզիան։

1830 Խոլերա Երևանում։

1832 Հունվար (14), Երևանի առաջին պետական դպրոցի՝ գավառական դպրոցի բացումը։

1832 Երևանի դպրոցական առաջին գրադարանի հիմնումը գավառական դպրոցին առընթեր։

1837 Սեպտեմբեր (2), Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի բացումը։

Հոկտեմբեր, Նիկոլայ Առաջինի այցը Երևան։

Նորք գյուղի միացումը Երևան քաղաքին։

1840 Ապրիլ (10), Հայկական մարզի վերացումը և Երևանի ու Նախիջևանի գավառների ստեղծումը։

1842 Հունիս (20), երկրաշարժ Երևանում։

1843 Խոլերայի տարածում Երևանում։

1844 Հունվար (26), օրենք Անդրկովկասում բնամթերքային տուրքը ծխահարկով փոխարինելու մասին։

1845 Կովկասի փոխարքայության ստեղծումը։

1846 Խոլերայի տարածումը Երևանում։

1849 Հոկտեմբեր (19), երկրաշարժ Երևանում։

Հունիս (9), բարձրագույն հրաման Երևանի նահանգ կազմելու մասին։

1850 Հունվար (1), Երևանի նահանգական հիմնարկությունների բացումը ըստ 1849 թ. հունիսի 9-ի բարձրագույն հրամանի։

Հունվար (2), Երևանի իգական առաջին ուսումնարանի՝ ս. Հռիփսիմեի դպրոցի բացումը։

Մարտ (6), Անդրկովկասի բնական հումքերի և ֆաբրիկային ու արհեստավորական արտադրանքների նմուշների ցուցահանդեսի բացումը Թիֆլիսում։

Առաջին հայերեն ներկայացումը (Արամյան ընկերության հյուրախաղերին ներկայացումները) Երևանում։

1855 Խոլերայի տարածում Երևանում։

1856 Դեկտեմբեր (23), Երևանի առաջին հեռանկարային գործող հատակագծի հաստատումը։

1860 Հունիս (19), հեղեղ Երևանում։

Նորքի ծխական դպրոցի բացումը։

1864 Երևանի բերդի վերացումը։

1865 Երևանի առաջին ընթերցարան-գրադարանի հիմնումը։

Երևան—Թիֆլիս խճուղու կառուցման աշխատանքների սկիզբը։

Խոլերայի տարածում Երևանում։

Հոկտեմբեր (28), օրենք բեկերի, աղալարների և մելիքների ոստիկանական ու դատական իրավունքների վերացման մասին։

1866 Հայկական առաջին թատերական ինքնագործ խմբի կազմակերպումը Երևանում։

Ապրիլ (10), Գայանյան օրիորդաց ծխական հոգևոր ուսումնարանի բացումը։

1870 Մայիս (14), գյուղացիական ռեֆորմի կիրառումը Հայաստանում։

Հունիս (16), քաղաքային կանոնադրության հրապարակումը։

1873 Օգոստոս (14), հեղեղ Երևանում։

1874 Ջաքարիա Գևորգյանը Երևանում հիմնում է առաջին տպարանը։

1875 Առևտրից, արհեստագործությունից և արդյունաբերությունից վերցվող հարկերի մասին 1865 թ. փետրվարի 25-ին հաստատված կանոնադրության կիրառումը Կովկասի փոխարքայությունում։

1877—1878 Ռուս-թուրքական պատերազմը և Կարսի մարզի միացումը Ռուսաստանին։

1879 Պողոս-Պետրոս եկեղեցուն կից կառուցվում է Երևանի առաջին թատրոնի շենքը։

Հոկտեմբեր (1), 1870 թվականի հունիսի 16-ի քաղաքային կանոնադրության կիրառումը Երևանում։

1880 Մարտ (15), լույս է տեսնում Երևանի առաջին թերթի՝ «Պատկեր» առաջին համարը։

1881 Երևանի առաջին գաբնչրի գործարանի գործարկումը։

Մարտ (31), արական պրոգիմնազիան վերափոխվում է դասական գիմնազիայի։

Հուլիս, լույս է տեսնում Երևանի առաջին ամսագրի՝ «Առողջապահական թերթի» առաջին համարը։

Նոյեմբեր (8), Երևանի ուսուցչական սեմինարիայի բացումը։

1883 Թիֆլիս—Բաքու երկաթուղու շինարարության ավարտումը։

1885 Ցարական կառավարության կարգադրությունը հայկական եկեղեցական-ծխական դպրոցները փակելու մասին։

Օղու, սպիրտի և գինու կառուցելագործված առաջին գործարանի հիմնումը Ն. Թալիրյանի կողմից։

1887 Թալիրյանի օղու, սպիրտի և գինու կառուցելագործված գործարանի գործարկումը։

1890 Առաջին անգամ Երևանում Թալիրյանի գործարանը սկսում է արտադրել կոնյակ։

1891 Երվանդ Տեր-Ավետիքյանի մեխանիկական արհեստանոցի հիմնումը։

1892 Երևանի հանքային ջրերի և օշարակի առաջին գործարանի գործարկումը։

Քաղաքային երկրորդ կանոնադրության հրապարակումը և դրա կիրառումը Երևանում։

Անդրկովկասի բազմաթիվ բնակավայրերում, որոնց թվում և Երևանում, տարածվում է խոլերան։

1893 Փետրվար (4), քաղաքային բուժարանին կից բացվում է քաղաքային առաջին հիվանդանոցը։

Այգիների խիստ ցրտահարություն Երևանում։

Աֆրիկյանի և Գյոզալյանի գինու-կոնյակի գործարանների հիմնումը։

1894 Սարաջյանի գինու-կոնյակի գործարանի հիմնումը։

1897 Համառուսաստանյան առաջին մարդահամարը։

1898 Ս. Հռիփսիմեի պրոգիմնազիան վերափոխվում է գիմնազիայի։

1899 Դեկտեմբեր (1), շահագործման է հանձնվում Թիֆլիս—Կարս երկաթուղին։

Թալիրյանի գինու-կոնյակի գործարանի գնումը Շուստովի կողմից։

1902 Հոկտեմբեր (13), Երևանի հասարակական առաջին դրադարան-ընթերցարանի հանդիսավոր բացումը։

Դեկտեմբեր (5), Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթուղու հանդիսավոր բացումը և կանոնավոր երթևեկության հաստատումը։

1902—1903 Սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան առաջին կազմակերպությունների ձևավորումը Երևանում։

1903 Հեղեղ Երևանում։

1905 Աշուն, սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան բջիջների միավորմամբ հիմնվում է Երևանի քաղաքային սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունը։

Աշուն, Ե. Տեր-Ավետիքյանի մեխանիկական արհեստանոցը վերափոխվում է Բուլղակադասարման-մեխանիկական գործարանի։

1906 Երևան—Ջուլֆա երկաթուղու շինարարության ավարտումը։

Գարուն, Երևանի առաջին պրոֆմիութենական կազմակերպության հիմնումը գործակատարների մոտ։

Մայիս, Ստ. Շահումյանի այցը Երևան։

Սեպտեմբեր, Կոմիտասի երգչախմբի առաջին համերգը Երևանում։

Սեպտեմբեր (17), ձիաքարշի (конка) Աստաֆյանի գծի շահագործման հանձնելը։

Դեկտեմբեր (11), ձիաքարշի կայարան տանող գծի շահագործման հանձնելը։

1907 Փետրվար, Երևանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպության առաջին թերթի՝ «Факты»-ի առաջին համարի լույս ընծայումը։

Մայիս, Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի գործարկումը «Շուստով և որդիներ» ընկերության հիդրոէլեկտրակայանի գործարկումը։

«Շուստով և որդիներ» ընկերության նոր, խոշոր գործարանի շահագործման հանձնելը։

1908 Մարտ, հեղեղ Երևանում։

1910 Օգոստոս-սեպտեմբեր, խոլերայի տարածում Երևանում։

1911 Հունվար (1), Ս. Ֆ. Ալվազյանի և Ց. Ն. Սարգսյանի ձիթհան գործարանի գործարկումը։

Երևանի մրդի պահածոների առաջին գործարանի գործարկումը։

Դեկտեմբեր (23), ջրմուղի կառուցման ավարտումը։

1912 Հունվար, նորակառույց ջրմուղի հանդիսավոր բացումը։

1913 Փետրվար (9), «Անուշ» օպերայի առաջին բեմադրությունը Երևանում։

Մայիս (12), քաղաքային հեռախոսային ցանցի հանդիսավոր բացումը։

Հունիս (5), Կովկասյան բժշկական ընկերության Երևանի բաժանմունքի ջանքերով Դիլիջանում հիմնվում է Ծոքախտավորների առաջին առողջարանը՝ 10 հիվանդների համար։

Հոկտեմբեր (4), մեծ հրդեհ քաղաքի շուկայում։

1914 Խիստ ցրտահարություն Երևանում։

Օգոստոս (1), սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը։

1917 Փետրվար, փետրվարյան ռևոլյուցիայի Ռուսաստանում։

1917 Հոկտեմբեր (25), Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան։

2. ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆԵՐԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՊԵՏԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐԸ (1801—1917 ԹԹ.)

ա) Երևանի խաներ

1. Մեհոի-Ղուլի խան *1801—1803 թթ.*
2. Ամմադ-խան Մաոաղացի *1803—1807 թթ.*
3. Հուսեյն-խան Ղաջար *1807—1827 թթ.*

բ) Հայկական մարզի պետեր

1.	Գեներալ-մայոր, իշխան Ճավճավաձե	*15/X—1828—25/V—1829 թ.*
2.	Փոխգնդապետ, իշխան Աոդուրիենսկի-Տոլգոռուկով	*25/V—1829—6/I—1830 թ.*
3.	Գեներալ-մայոր, իշխան Բեհբութով	*6/I—1830—30/V—1838 թ.*
4.	Գեներալ-մայոր Պացովսկի	*30/V—1838—մարտ 1839 թ.*
5.	Գնդապետ Սմբատով	*մարտ 1839—հունիս 1840 թ.*

գ) Երևանի նահանգի նահանգապետներ

1.	Գեներալ-լեյտենանտ Ալբեռնա	*21/VI—1849—13/XII—1849 թ.*
2.	Գեներալ-մայոր Նազարով	*15/II—1850—17/IV—1858 թ.*
3.	Գեներալ-լեյտենանտ Կալյուբակին	*17/IV—1858—6/IV—1861 թ.*
4.	Գեներալ-մայոր Շչերով-Նեֆեդովիչ	*1/XII—1861—7/I—1864 թ.*
5.	Գեներալ-մայոր Աստաֆև	*25/III—1864—1869 թ.*
6.	Գեներալ-լեյտենանտ Կարմալին	*8/V—1869—26/VI—1873 թ.*[1]
7.	Գեներալ-լեյտենանտ Ռոսլավլև	*30/VI—1873—11/III—1880 թ.*
8.	Գեներալ-լեյտենանտ Շալիկով	*22/III—1880—22/XII—1890 թ.*
9.	Գեներալ-լեյտենանտ Ֆրեզե	*2/II—1891—16/XI—1895 թ.*
10.	Կոմս Տիզենհաուզեն	*20/II—1896—8/II—1916 թ.*
11.	Սարելբիցկի	*8/II—1916—1/VI—1917 թ.*

3. ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽՆԵՐԸ (1879—1917 ԹԹ.)

1.	Ղաոոանյան Ի. Զ.	*1879—1884 թթ.*
2.	Գեղամյան Վ. Ս.	*1884—1894 թթ.*
3.	Տիգոանյան Լ.	*1894—1895 թթ.*
4.	Բունիաթյան Մ. Մ.	*1895—1896 թթ.*
5.	Տեր-Սաոգսյան Վ.	*1896—1898 թթ.*
6.	Մելիք-Ադամալյան Իս.	*1898—1903 թթ.*
7.	Մելիք-Ազամալյան Իվ.	*1904—1910 և 1912—1915 թթ.*
8.	Տիգոանյան Ի. Ֆ.	*1911 թ.*
9.	Խաչատոյան Ս.	*1916—1917 թթ.*

1. *Մինչև 1873 թվականի վարչական փոփոխությունները նահանգապետները կոչվում էին զինվորական նահանգապետներ, իսկ դրանից հետո՝ ուղղակի նահանգապետներ։*

Փողոցների անուանները հայերեն	Փողոցների անուանները ռուսերեն	Փողոցների անուանները 1921 թ. դրությամբ	Ծանոթություն
Այգեստանի փ.	Садовая	—	—
Անանուն փ.	Безымянная	—	«Օրիանտ» հյուրանոցի մոտակայքում
Անանուն Առաջին փ.	Безымянная I	Աղայանի փ.	—
Անանուն Երկրորդ փ.	Безымянная II	Ադամյանի փ.	Զգիտեն այժմյան Մ. Ադամյանի փողոցի հետ
Անանուն Երրորդ փ.	Безымянная III	Վարդգես Սուրենյանի փ.	—
Անանուն Հինգերորդ փ.	Безымянная V	—	—
Անանուն Չորրորդ փ.	Безымянная IV	Ֆիոլետովի	—
Աստաֆյան փ.	Астафьевская	Աբովյանի	—
Աստվածածնի փ.	Аствацадзинская	—	—
Բազարի փ.	Базарная	Կ. Մարքսի փ.	—
Բաղնիքի փ.	Банная	—	—
Բեգի փ.	Бекская	—	—
Բեհբուդովի փ.	Бебудовская	Ալ. Ռուբենի փ.	Այժմ՝ Սվերդլովի
Բերդի փ.	Крепостная	Շահումյանի փ.	—
Բժշկական փ.	Докторская	Ալահվերդյանի փ.	Հետագայում Լենինի պող., իսկ այժմ՝ Թումանյանի
Գաղթականի փ.	Гахтаканская	—	—
Գերեզմանոցի փ.	Кабристан-кучаси	—	—
Դայիրմա-քուչա փ.	Дайирманлы-кучаси	Պարոնյանի փ.	—
Դատարանի փ.	Судебная	—	—
Դաշլի-քուչա փ.	Дашли-куча	—	—
Դեղատան փ.	Аптечная	Էնգելսի փ.	—
Դուքանլի-քուչա փ.	Дуканли-куча	—	—
Եկեղեցու փ.	Церковная	Զուբուրյանի փ.	—
Թարխանովի փ.	Тархановская	Կնունիի փ.	—
Թափաբաշի փ.	Тапабашинская	Ռուսթավելու փ.	—
Թիֆլիսի փ.	Тифлисская	Սայաթ-Նովայի	—

Ճանապարհային փ.	Шоссейная [1]	—	—
Խոջենց-մեյդան փ.	Ходженц-мейдан [2]	—	—
Խորունի-բուլաղի փ.	Хорунбулагская	—	—
Խուլ փակուղի	Глухой тупик	—	—
Կայարանի ճանապարհ	Вокзальная дорога	—	—
Կատասնովի նրբանցք	Катасновский пер.	—	—
Կարավանատան փ.	Карвансарайская	—	1913 թվականից՝ Մելիք-Աղամալյանի փ., հետագայում Թումանյանի, իսկ այժմ՝ Ս. Տեր-Գաբրիելյանի փ.
Կոզեռնի փ.	Козерская	—	—
Կոր նրբանցք	Кривой пер.	—	—
Հայելային փ.	Зеркальная	—	—
Հայկական փ.	Армянская	Սունդուկյանի	Այժմ՝ Լենինի պողոտա
Հին եկեղեցու փ.	Староцерковная	—	գտնվում էր Կոնդում
Հին կազարմայի փ.	Староказарменная	—	—
Ղարիբանոց փ.	Гарибноц	—	—
Ղարիբլար-օջախի փ.	Гариблар-очахи	—	տե՛ս Ղարիբանոց փ.
Ճարտարապետի փ.	Архитекторская	Պլեխանովի փ.	—
Ճարտարապետության փ.	Архитектурная	—	տե՛ս Ճարտարապետի փ.
Մարուքովի փ.	Маруковская	—	—
Մամրինի փ.	Мамринская	—	գտնվում էր Կոնդում
Մելիք-Աղամալյանի փ.	Мелик-Агамаловская	—	մինչև 1913 թ. կոչվում էր Կարավանատան փ.
Մզկիթի նրբանցք	Мечетский пер.	—	—

[1] Դաշնակների տիրապետության շրջանում քաղաքի մի շարք փողոցներ վերանվանվում են «Ազատության», «Հանրապետության», «Պառլամենտի», «Ազատի», «Կարմիկյան» և այլն, սակայն դրանք բնակչության առօրյա կյանքում գործածության մեջ չեն մտնում։ Բնակչությունը շարունակում է փողոցները կոչել իրենց նախկին անուններով։ Ճարտարան շրջանի անուննները փոխվում են սովետական կարգերի հաստատումից հետո։ Քաղաքի 32 փողոցների հին անուննները նոր անուններով են փոխարինվում ՀԱՍՀ ժողկոմխորհի 1921 թ. օգոստոսի 30-ի որոշումով (տե՛ս «Որոշումներ և հայտարարություններ (լրագիր), 1921, № 77)։

[2] Փողոցների մի գծի, իսկ նրբանցքների ու փակուղիների մեծագույն մասը անուններ չունեին։ Այդ պատճառով էլ մեր կազմած ցուցակը հետու է լիակատար լինելուց։

Փողոցների անունները հայերեն	Փողոցների անունները ռուսերեն	Փողոցների անունները 1921 թ. դրությամբ	Նանրություն
Միլիոնի փ.	Миллионная	Ռ. Լուքսեմբուրգի փ.	—
Միր-Ջաֆար-քուչայի փ.	Мир-Джафар-кучаси	—	—
Մոլոկանի փ.	Молоканская	Կարմիր Բանակի	—
Նագիբ-քուչայի փ.	Нагиб-кучаси	—	—
Նազարովի փ.	Назаровская	Ամիրյանի փ.	—
Նախիջևանի փ.	Нахичеванская	—	—
Նահանգական փ.	Губернская	Լենինի փ.	այժմ՝ Ալահվերդյանի փ.
Նիկոլաևսկրյան փ.	Малярная	Տերյանի փ.	—
Նոր Ալեքսանդրյան փ.	Ново-Александровская	—	—
Նոր եկեղեցու փ.	Ново-Церковная	Կարմուրդների	—
Շարիաթի փ.	Шариятская	—	—
Չոլմաքչիի փ.	Чолмакчинская	—	—
Պրոեկտային փ.	Проектная	—	—
Ջրաղացի փ.	Мельничная	—	—
Ռուստամխանի փ.	Рустамханская	—	—
Սալահլար փ.	Салахлар	—	—
Սեմինարիայի փ.	Семинарийская	—	—
Սուլթանովի փ.	Султановская	—	—
Սուրբ Մարտի փ.	Сурбсаркисская	Եկեղեցական նրբանցք	այժմ՝ 1-ին եկեղեցական փողոց
Վեքիլովի փ.	Векиловская	—	—
Վրացական փ.	Грузинская	—	—
Տեր-Ղուկասովի փ.	Тер-Гукасовская	—	—
Թագավոր փ.	Царская	Նադարանների փ.	—
Ուսումնարանի փ.	Училищная	Սպանգարյանի փ.	Դաշնակցության շրջանում «Ազատության» փ.
Փանահյանի փ.	Панаханская	Լիբկնեխտի փ.	—
Փոստի փ.	Почтовая	Ազիզբեկովի փ.	—
Քաթանի նրբանցք	Катанский пер.	26-ի փողոց	—
Քարվան-սարայի փ.	Файла-базар	—	—

Ա

Աբաս-Կուլի խան *349*։
Աբելյան Հովճաննես *465, 467, 468, 483*։
Աբյանց Գ. Ն., *վաճառական, 126*։
Աբովյան Խ. *382, 483, 484*։
Աբրահամյան Գաբրիել *349*։
Աղամյան Պ. *470*։
Աղոնց Մ. Ա. *59*։
Ազարյան, *գործարանատեր, 72*։
Ազիզյան Ալեքսանդր *349, 350*։
Ազիզյան Օ. *510*։
Աթարեգյան Հ. Ն., *գործարանատեր, 74, 75*։
Աթաճանյան Հ. *449, 457*։
Աթաճանյան Միքայել *457*։
Աթաբեկյան Գ. *500*։
Ալավերդյան Գ. *46*։
Ալավերդյան, *դերասան, 470*։
Ալեքսանդր I *410—412*։
Ալեքսանդր III *29, 206, 211, 535*։
Ալեքսեև, *վաճառական, 116, 117, 118*։
Ալիբեկյան *312, 314*։
Ալիխանյան, *դերասան, 449, 467*։
Ալին *143*։
Ախսախալյան Մ. Մ. *510*։
Ախունդով Մ. Ֆ. *466*։
Անառոնյան Գ., *գործարանատեր, 78, 79*։
Անառոնյան, *դերասան, 467*։
Աղաբաբյան, *ինժեներ, 333*։
Աղամալյան Տիգրան, *պրոցեսի մեսուլ, 258, 259*։
Աղա-Մանմեդ-Հաջի-Ալի-օղլի *366*։
Աղայան Ս. *225, 229, 235, 236, 245, 251, 252, 257*։
Ամիրխանյան Լ. *461*։
Ամիրյան Գ. Գ., *վաճառական, 24, 47, 95, 122, 335, 349, 359, 370, 508, 510*։
Այդինյան Հ., *առևտրական, 166*։
Այդինյան Վ. *332*։
Այվազյան Ա., *առևտրական, 129*։
Այվազյան Խ., *տպարանի տեր, 224, 255*։
Այվազյան Ս. Ֆ., *գործարանատեր, 75*։
Անդրեասյան *489*։
Անդրոնիկով Ի. Զ. *ազգանուն, 169*։
Անտոնյան Գ., *վաճառական, 48*։
Անտոնյան Ս., *վաճառական, 126, 135*։
Անտոնովա Ն. *(Մելիքյան), փոստի աշխատակից, 240*։
Առաբելյան, *արհեստանոցի տեր, 224, 255*։
Ասլամազյան Կ., *փոստի աշխատակից, 240*։
Սպանյան Լ. Գ. *510*։
Աստաֆև, *նահանգապետ, 285*։
Աստղիկ, *թատերասեր, 479, 480, 481, 519*։
Աստվածատրյան *461*։
Ավետիսյան Ս. *412*։
Ավետիսյան Մ., *գրադարանի տեր, 523*։
Ավետյան, *գործարանատեր, 74, 76, 85*։
Ավետյան, *դերասան, 467, 505, 520, 521*։
Առազյան Ս., *առևտրական, 134*։
Առախանյան Ա., *«Մուրճ»-ի խմբագիր, 33*։
Առզումանյան *եղբայրներ, վաճառականներ, 118*։
Առզումանյան Մ. Վ. *225, 257, 260, 261*։
Առծռունի Գ., *«Մշակ»-ի խմբագիր, 206, 215, 449, 538*։

Աբմենյան Ա., դերասան, 467, 468։
Աբմենյան, դերասանուհի, 520։
Աբջակ 233։
Աբոամենյան Վ., ոսկերիչ, 508։
Աբոեմյան, բժիշկ, 461։
Աբոեմյան Ս., 461։
Աբուսյակ, դերասանուհի, 467, 468։
Ախպար Աղա Իսմայլով 349։
Աֆրիկյան Ա. 349։
Աֆրիկյան Կ., գործարանատեր, 58, 59, 62, 63, 165, 349, 350։
Աֆրիկյան Ս. 74։
Աֆրիկյան S. 74, 349։
Աֆրիկյան 47, 48, 56, 67, 118, 427, 488, 504։
Աֆրիկյաններ 122, 126, 277, 284։

Բ

Բաբայան Ա., ինժեներ մեխանիկ, 313—316, 326, 340, 342, 343։
Բաբայան Ա. Բ., բժիշկ, 433։
Բաբայան, ուսումնարանի տեր, 416։
Բաբայան Հ., դերասան, 522։
Բաբայան Վ. 261։
Բաբայան 344, 345։
Բագլաչյան Լ. 362, 363։
Բագրատունի Մ., խմբագիր, 233, 441, 442, 454։
Բալիմասով, քննիչ, 212։
Բակլաչյան Ե., 332։
Բաղդադյան Գ. 251։
Բաղդադյան Հ. 251։
Բազդասարյան Ե., երաժշտագետ, 521։
Բազդասարյան Վ. 266։
Բազրամյան Ա., արհեստանոցի տեր, 96։
Բարխուդարյանց, վաճառական, 118։
Բարսեղյան Խ. 225։
Բեգլարյան Ա., ռեստորանի տեր, 134։
Բեգլարյան, վաճառական, 118։
Բելինսկայա Լ. Մ. 495
Բենզազարյան Ս., ուսուցիչ, 214, 215։
Բեռրուդով, գեներալ, 285։
Բերոյան, դերասան, 467, 470, 520։
Բիւրինգ Է., դեսպան, 354, 355։
Բոգուշևսկի Ա., ինժեներ, 341։
Բոշնագյան Հ. Գ., վաճառական, 125։
Բրաժնիկով, գիմնազիայի դիրեկտոր, 211—215։
Բրյուսով Վ. 404։
Բրյուսոն 519։
Բուդաղյան, բժիշկ, 95։
Բույնովսկայա Վ. Ա., գպրոցի կառավարիչ, 95։
Բունիաթյան Ա. 423։
Բունիաթյան Մ. Մ., քաղաքագլուխ, 24։

Գ

Գաբրիելյան, գործարանատեր, 72։
Գաբրիելյան եղբայրներ 247։
Գաբրիելյան Մ. 522։
Գալստյան Ա., վաճառական, 126, 134։
Գասպարյան Գասպար 335։
Գասպարյան Գոհար 481։
Գարագաշ Ս. 418։
Գեղամյան Վ., քաղաքագլուխ, 13, 147, 289։
Գեղամյաններ 145։
Գիժբերգ, վաճառական, 118։
Գիլանցանց Խ., ձեռնարկատեր, 77։
Գյոզալյան Գ., գործարանատեր, 48, 56, 58, 59, 63։
Գյոզալյաններ 122, 126, 277։
Գյոքե 452։
Գոզոլ 452, 460։
Գրադովսկի Ա. Դ. 8։
Գուլազյան 467։
Գուլամիրյան Ա. Գ., վաճառական, 125։
Գուլամիրյան Ա. Ս. 511։
Գուլանյանց Ա. Ս., խանութի տեր, 128։
Գուլյակ Ա. Ա. ինժեներ տեխնոլոգ, 83։
Գևորգյան Ավետիս (Բաբուշ), երևանի բնակիչ, 161։
Գևորգյան Զ. 432, 445, 446։
Գևորգյան Հ., դերասան, 522։
Գևորգյան Ս. 477։
Գևորգյան, կինոթատրոնի տեր, 474, 475։
Գևորգյան եղբայրներ, վաճառականներ, 118։

Դ

Դադամյան Մ., թատերասեր, 457։
Դադոմյան Կ. 366։
Դալ Վ. Վ., բժիշկ, 372։
Դավթյան Մ. Ս. 510։
Դատյան Մ. 457։
Դեմիրճյան Դ. 466։
Դերլինգ Վ. Ֆ. 341։
Դիմյատին Ի. 8։
Դմիտրիև Ս. Ս. 17։
Դոբրոտին, ուսուցիչ, 410։
Դոլգար Վ. Ն., դերասան, 482։
Դոշիկյան Ե. 522։
Դրեհմանլե Ե. 217։
Դուլգարյանց, վաճառական, 118։
Դուրյան-Աբմենյան, դերասանուհի, 467։

Ե

Եդիգարյան Փ. Հ., վաճառական, 126, 127։
Եգյան Կ. 451։
Ելիզավետա թագուհի 8։
Եկատերինա II 124։
Եղիազարյան Ա. Մ., վաճառական, 24։
Եղիազարյան Բ., վաճառական, 126, 349, 350, 489, 510։
Եղիազարյան Գ. 95։
Եղիազարյան Ե. 510։
Եղիազարյան Հ., բաղնիքի տեր, 95, 224, 253, 254, 257, 260, 335։
Եղիազարյան 359, 362։
Եղիազարյան Վ. 214, 348։
Եղիազարով Ս. Ա. 92, 93։
Եզգիբարյան Մ. 202, 261։
Եսայեմ (Դարեգին Կուզիկյան), սպեցիֆիկ, 234։
Երանյան Գ., ոսկերիչ, 508։
Երզնկյան 330։

Զ

Զավարով Ս. 108, 109, 112։
Զարիֆյան Հ. 467, 468։
Զելինսկի Սա., ուսուցիչ, 75, 80, 178, 215, 397, 447, 449, 450։
Զիմին Ն. Լ., ինժեներ, 341։
Զուդերման 461։

Է

Էյնաբյան Մ., ոսկերիչ, 508։
Էնգելս Ֆ. 107։
Էսայե Ս., 13։
Էսայան, գործարանատեր, 79, 87։
Էֆրիկյան Հ. Ս. 73, 161։

Թ

Թաշեյան, դերասան, 70։
Թամամշյան Ա. 350։
Թայիրյան Ն. 51, 55, 57, 58, 63, 67, 85, 423։
Թարխանյան Ս. 461։
Թորոսյան 519։
Թումանյան, տիկին, 418։
Թումանյան, դավառապետ, 330։
Թումանյան Հ. Ե. 51, 55, 59, 104, 479։
Թումանյան Մ. Գ., ուսումնարանի տեր, 417։

Ժ

Ժամհարյան Փ., ոսկերիչ, 508։
Ժասմեն, դերասանուհի, 467, 468։

Ի

Իբրահիմ Նուր Ալի-օղլի, թատերասեր, 157։
Իսահակյան Ավ. 499։
Իվանով Գ., ուսուցիչ, 408։

Լ

Լենին Վ. Ի. 11, 15, 30, 38, 51, 52, 53, 89, 234, 361, 474, 483։
Լեսնյակ Լ. Ի. 495։
Լյաշչենկո Պ. Ի. 11, 12։
Լվով Գ. Ե. 490։

Խ

Խալփախչյան Օ. Խ. 269, 271, 273—278, 281։
Խանզադյան Գ. 349, 510։
Խանզադյան Ե. Ս. 126, 510։
Խանջյան Ա. 499։
Խաչատրյան Գ., հյուրանոցի տեր, 359։
Խաչատրյան Հ., երևանի բնակիչ, 161։

Խաչատրյան Հ., *խանութի տեր, 129։*
Խաչատրյան եղբայրներ, *վաճառականներ, 126։*
Խաչիկ աղա, *ոսկերիչ, 508։*
Խորասանյան Վ. Յա., *բժիշկ, 372։*
Խոջամիրյան Հ. *457։*
Խորեն Եպիսկոպոս *455, 508։*
Խուդաբաշյան Թ. Է., *վաճառական, 24, 47։*
Խուդաբաշյան Հ., *վաճառական, 48, 49, 461։*
Խուդաբաշյան Ռ. *457։*
Խուդաբաշյաններ *122, 522։*

Կ

Կամսարական Գ. Պ. *217, 348։*
Կանդուրյան Պ. Գ., *ազրոնոմ, 119, 163, 439։*
Կանուչենկո, *դերասան, 472։*
Կասումով Խալիլ բեկ *327։*
Կարալսկի Կ. Պ., *ինժեներ, 341։*
Կարամոսկո, *ուսուցիչ, 408։*
Կարապետյան Ս. *225, 519։*
Կարզինկին, *վաճառական, 116—118։*
Կարինյան Արտ. *261։*
Կիսկին Ս. *273։*
Կիրակոսյան Ա. *416։*
Կիրակոսյան Գ. Ե., *ինժեներ, 321—325, 328, 329, 333, 334, 337, 344։*
Կլոպով Ի. Մ., *ուսումնարանի տեր, 417։*
Կոմիտաս *476—478։*
Կոշնարևա *472։*
Կովալյով *267։*
Կորկոտյան Զ. *182։*
Կուկուլինսկի, *մեխանիկ, 355։*
Կուչան *12։*
Կուրտիկյան Ստ. *14։*

Հ

Հախնազարյան Փ. Հ., *վաճառական, 126։*
Հախումյան Սիմեոն *326։*
Հակոբյան Ա., *տպարանի տեր, 224, 251, 255։*
Հակոբյան Թ. *40, 71, 92, 115, 145, 169, 190, 383, 425։*
Հայրապետյան Ա., *գործադուլի դեկավար, 251։*
Հաջի-Ալի-բեգ *366։*
Հաջիբեկով Ուզեիր *519։*
Հաջի-Իբրահիմ օղլի, *գործարանատեր, 46, 47, 325, 326։*
Հաջի Համիդ Մամեդ-օղլի *284։*
Հասան-Ջալալյան *346։*
Հասան-Ջալալյան էլիսաեոբա *461։*
Հարությունյան, *դերասան, 520։*
Հարությունյան-Տեր-Աստվածատրյան, *քարտմանիչ, 449։*
Հարությունյաններ *122։*
Հարությունյան Ա. Դ., *խանութի տեր, 129։*
Հարությունյան Խ. Ն., *բժիշկ, 372։*
Հովակիմյան Ե. *366։*
Հովակիմյան Ն. *432։*
Հովհաննիսյան Ա. Ի., *բժիշկ, 433։*
Հովհաննիսյան Աշոտ *206։*
Հովհաննիսյան Ա., *երևանի բնակիչ, 161։*
Հովհաննիսյան Գ., *տեսուչ, 214, 216, 538։*
Հովհաննիսյան Գայանե *217, 220։*
Հովհաննիսյան Լ. Ա. *368, 369, 452։*
Հովհաննիսյան Կ. Ե., *հարտարապետ, 95, 356, 357, 360։*
Հովհաննիսյան Հ. Գ., *բժիշկ, 368, 370, 489։*
Հովհաննիսյան Մ., *առևտրական, 135։*
Հովհաննիսյան Պ., *առևտրական, 129, 510։*
Հովհաննիսյան *461։*
Հովհաննիսյան Վ. *424, 425։*
Հովսեփյան Վ., *երևանի բնակիչ, 145։*
Հուսիկ Եպիսկոպոս *238։*

Ձ

Ձերժինսկի Ֆ. *69։*

Ղ

Ղազարյան, *դերասան, 519։*
Ղազարյան Գ. *522։*
Ղազարյան Ղ. *330—333։*
Ղարաջանյան *233։*
Ղարիբջանյան Գ. Բ. *225, 243, 260, 261, 497—500։*
Ղարդանյան Ի. *312, 314, 426։*
Ղուկասյան Ղ. *499։*

Մ

Մադաթյան Վ. *449*
Մաժակ *468։*
Մալխասյան Ա., *ինժեներ, 311, 327, 540։*
Մալխասյան Ալ., *հեղափոխական, 229—231։*
Մամեդկուլիզադե Ջալիլ *454։*
Մամուրյան Մ. *206։*
Մայսուրյան *467, 468, 519։*
Մանասարյան Ս. *46։*
Մանվելյան, *դերասան, 467։*
Մանվելյանց, *վաճառական, 118։*
Մաշադի Ջաֆար Հաջի Ռաջար-օղլի *335։*
Մատակյան Հ. *220։*
Մարգարիտ *467։*
Մարգարյան Մ. Մ., *բժիշկ, 372։*
Մարեն Մարտա, *դերասան, 482։*
Մարկով Ե. Ս. *46։*
Մարտիրոսյան Ա. Տ. *522։*
Մարքս Կ. *53, 106, 107։*
Մելիք-Ադամյան Ի., *քաղաքագլուխ, 263, 330, 347, 363, 364, 426, 487։*
Մելիք-Ադամյան Հովհ., *իրավաբան և քաղաքագլուխ, 27, 240։*
Մելիքյան, *բժիշկ, 370։*
Մելիքյան Ա. *260, 442, 454։*
Մելյան Ա., *ուսուցիչ, 215, 216, 457։*
Մելյան *449։*
Մելյան Փ. *457։*
Մելյան Զ. *457։*
Մելյան Տեր-Հովսեփ *457։*
Մեհերաբյան Բ., *քաղաքային տեխնիկ, 156, 268, 294, 295, 439։*
Մեսրոպ Մաշտոց, *145, 210, 211, 451, 452, 478։*
Մեռանգուլյան, *խանութի տեր, 129։*
Միխայլով Ա., *ինժեներ, 335—340, 342—344։*
Միխայլով Վ., *առևտրական, 96։*
Միհնասյան Ա. *457։*
Միր Աբաս Միր Բաբաև *335։*
Միրազյան, *դերասան, 520։*
Միր-Բաղիրով Մ. Բ. *311։*
Միրզոյան Վ. *(Միրզոև), ինժեներ, 130, 256, 273, 315, 318, 345—350, 410, 411, 439։*
Միրզոյան *(Միրզոևա) 315, 345, 347—350։*
Միքայելյան Կ. *234։*
Միքայելյանց Մ., *վաճառական, 126, 128։*
Մկրտիչ, *հայոց կաթողիկոս, 145։*
Մկրտչյան Ե., *գործարանատեր, 58։*
Մկրտչյան Զ., *երևանի բնակիչ, 161։*
Մկրտչյան Վ. *457։*
Մհերյան Թ., *երևանի բնակիչ, 211, 212, 213, 215, 220։*
Մոռեշև, *հողաչափ, 336։*
Մորոզով Տ. Ս., *ֆաբրիկանտ, 116։*
Մռավյան Ա. *227—236, 238, 239, 244, 247, 248, 259, 454, 540։*
Մուսինյան Մ. *461։*

Յ

Յանովսկի Կ. *408։*
Յավուրսկի Վ. Ի. *470, 472։*

Ն

Նազարյան Ստ. *206, 538։*
Նազարով, *նահանգապետ, 285։*
Նալբանդյան Մ., *վաճառական, 126, 135, 206, 538։*
Նախիջևանցց Պ. Մ., *ձեռնարկատեր, 79։*
Նավասարդյան Ա. *474։*
Նավասարդյան, *բժիշկ, 372, 433, 457։*
Նավասարդյան, *գործարանատեր, 72։*
Նար-Դոս *468։*
Նարիմյան, *տե՛ս Բագրատունի Մ.*
Ներսիսյան Մ. Գ. *206, 207, 215, 220։*
Ներսիսյանց Ա. Ա., *վաճառական, 126։*
Նիկոլաևի Ն. *33։*
Նիկոլայ I *166։*
Նիկոլայ II *239։*
Նիկոլաևևա Ա., *բժշկուհի, 372։*
Նիկողոսյան Ա. *510։*
Նիկողոսյան Գ. *510։*
Նիկողոսյան Լ. *510։*
Նոլկեն *168։*

Շ

Շալիկով Մ. Յա., *նահանգապետ, 67, 116, 165, 212։*
Շալճյան Լ., *ոսկերիչ, 508։*
Շահազիզ Ե. *454։*
Շահազիզյան Ա., *բժիշկ, 433։*
Շահբաղեդյան Պ., *ոսկերիչ, 508։*
Շահխաթունի, *դերասան, 467։*
Շահնազարյան, *դեղատան տեր, 216, 355։*
Շահումյան Ստ. *223, 227, 246, 247, 361։*
Շամիլյան Հ. *532։*
Շամխորյան Մ., *ուսումնարանի տեր, 416։*
Շանթ *(Մարտիրոս Մխրաքյան), ակնարկներ, 233, 234, 241, 519։*
Շատիլով, *գեներալ, 201։*
Շիրվանզադե *467։*
Շլակոկ, *դերասան, 472։*
Շչերբակով, *վաճառական, 116։*
Շչերբաչինա Ն. Գ. *418, 419։*
Շուշանյան Ա. *260։*
Շուստով *46, 51, 59, 56—58, 61, 62, 65—69, 84—87, 100, 223, 236, 273, 321, 323, 325, 328, 355, 503։*

Ո

Ոսկանյան Հ. *519։*

Չ

Չեզոդաև-Սամսոնսկի Ա. Պ., *իշխան, 495։*
Չեզոդաևա-Սամսոնսկայա Ե. Գ., *իշխանուհի, 417, 495։*
Չլենոկով Մ. Վ., *քաղաքագլուխ, 490։*
Չիթախյան, *վաճառական, 116, 118։*
Չիլինգարյան Ա. *238։*
Չիշերին Բ. Ն. *20։*

Պ

Պագրիև Գ. Գ. *409, 447։*
Պաժիտնով Կ. Ա. *8, 9, 10, 12, 19, 20, 30, 31, 33, 34, 36, 37։*
Պաղոսյան Վ. *416։*
Պանեուլագյան Մ., *թատերասեր, 457։*
Պապաջանյան Վ., *«Պահակ»-ի խմբագիր, 207, 210, 214, 431, 432, 454, 533։*
Պասեկ, *ինժեներ, 312, 326, 337—340։*
Պաստուխով Ն. Պ. *341։*
Պավլենովա, *ուսումնարանի տեր, 416, 425։*
Պատկանյան Ռ. *206։*
Պարոնյան *75։*
Պարսամյան Վ. *206, 225, 226։*
Պետրոս I *8, 124։*
Պոգրեբենսկի Ա. Պ. *489։*
Պոզնանսկի, *վաճառական, 116—118։*
Պոպով Դ. Մ., *ուսումնարանի տեր, 416, 417։*
Պռոշյան Պ. *453—455։*

Ջ

Ջալալյան Կ. *457։*
Ջալալյան Ռ., *իրավաբան, 214—217, 220, 538։*
Ջանիբեկյան, *կինոթատրոնի տեր, 474, 475։*
Ջանիբեկյանց, *վաճառական, 118։*
Ջանյան Ա. *510։*
Ջանյան Մ. *510։*
Ջանփոլադյան Ի. Բ., *վաճառական, 126, 127, 277, 311—314, 463, 470, 472, 474, 476, 477, 479, 482։*
Ջուղայեցի, *կրկեսի դերասան, 474։*

Ր

Ռատիևա Ե. Գ., *իշխանուհի, 417։*
Ռշտունի Վ. *11։*
Ռոդովիչ Մ. *240։*
Ռոյզելֆելդ, *կինոթատրոնի տեր, 475։*
Ռուդնիցկի Ֆ. Լ. *371, 373։*

Ս

Սադովսկի, *դերասան, 472։*
Սակվարելիձե Ա., *փոստի աստիճանավոր, 240։*
Սամանովա, *բաղնիքի տեր, 360։*
Սարգսյան Ա., *վաճառական, 128։*
Սարգսյան Գ., *առևտրական, 129, 457*
Սարգսյան, *գործարանատեր, 72, 75։*
Սարդարյան Հ. *522։*
Սարաջյան *(Սարաջև), գործարանատեր, 56, 58, 59, 62, 63, 66, 223, 224, 236, 245, 252, 272, 355, 504։*
Սաֆարյան, *ուսումնարանի տեր, 416*
Սաֆրոնսկի, *ինժեներ, 335, 336։*
Սելիվանով Ն. Մ., *կապալառու, 312։*
Սեմենով Դմ. Դմ. *8, 21, 32, 33։*
Սեյրան-օղլի, *վաճառական, 73։*
Սիլչենկո Կ. Գ., *ալրաղացի տեր, 75։*
Սիմոնյան Դ. *461։*
Սիմոնյանց Ն., *վաճառական, 126, 129։*
Սիմոնսոն Վ. Օ., *հարտարապետ, 270։*
Սիրանույշ *470, 471, 520, 521։*
Սոկոլովսկի Գ. Ն. *232, 233, 243, 441, 540,*
Սողոմոնյան Հ., *գործարանատեր, 59, 62, 63։*
Սվանյան Հ. *206։*
Ստասյուլևիչ Ս., *ուսումնարանի տեր, 416։*
Սարելբիցկի, *նահանգապետի պաշտոնակատար, 512։*
Սարելիցկի, *ուսուցիչ, 410։*
Սուկավիոիցիան Վ. *311, 312, 314։*
Սունդուկյան Գ. *457, 519։*
Սուխիասյան Գ., *հոդաբարձու, 215։*
Սևումյան, *դերասան, 520, 521։*

Վ

Վարդանյան Կ. *510։*
Վարդանյան Մ. *214։*
Վարդանյան Պ. *510։*
Վարթիթեր, *թատերասեր, 519։*
Վերիգո, *պրոֆեսոր, 333։*
Վերմիշյան Ե. *165։*
Վոտիկո, *քաղաքային տեխնիկ, 150։*
Վորոնցով-Դաշկով, *փոխարքա, 409։*
Վուրցել, *ինժեներ, 337, 344։*

Տ

Տալյան Շ. *481։*
Տարանտինով, *ագրոնոմ, 119։*
Տեր-Աբրահամյան Վ., *խմբագիր, 440։*
Տեր-Առաքելյան Վ. *477, 478։*
Տեր-Ասատուրյան Ա., *երևանի բնակիչ, 326, 354, 449։*
Տեր-Ավետիքյան Ա., *բժիշկ, 368։*
Տեր-Ավետիքյաններ, *գործարանատերեր, 42, 69, 70, 71, 85, 96, 224, 251, 277, 349։*
Տեր-Արիստակեսյան եղբայրներ *482։*
Տեր-Գրիգորյան, *ուսանող, 215։*
Տեր-Գրիգորյան Գ., *բժիշկ, 433։*
Տեր-Գրիգորյան Էմին *280, 281, 308, 322, 327, 328, 347, 434, 435, 436, 438, 445, 447, 448, 449, 453, 454, 457, 458, 460—464, 466, 467, 473, 474, 479, 516, 522։*
Տեր-Դավթյան, *դերասան, 520։*
Տեր-Զաքարյան Ա. Գ., *վաճառական, 126։*
Տեր-Զաքարյան Հ., *դատարանի քարտուղար, 214—216, 220, 538։*
Տեր-Զաքարյան, *ուսումնարանի տեր, 416։*
Տեր-Թադևոսյան Հ., *նկարիչ, 482։*
Տեր-Իսահակյան Իս., *վաճառական, 48։*
Տեր-Իսահակյան, *ուսումնարանի տեր, 416։*
Տեր-Խաչատրյան Գ. Խ., *348։*
Տեր-Հովսեփյան Լ., *հնդպրոխական, 260։*
Տեր-Ղազարյան Աբր. *260։*
Տեր-Մարտիրոսյան Ա., *վաճառական, 126։*
Տեր-Մարտիրոսյան Ս., *վաճառական, 48, 77։*
Տեր-Մարտիրոսյան Ս., *թատերասեր, 459, 460։*
Տեր-Մարուխյան Ա. *483, 484։*
Տեր-Մելիքյան Ի. Բ., *բժիշկ, 372։*
Տեր-Մկրտչյան Հ. *461։*
Տեր-Նիկողոսյան, *արհեստանոցի տեր, 224, 255, 256, 461։*
Տեր-Սարգսյան Ա., *թատերասեր, 459, 461։*
Տեր-Սարգսյան Եվ. *410, 411, 419, 462։*
Տեր-Սարգսյան Մ., *թատերասեր, 458, 459։*
Տեր-Սահակյան Ե. *332, 335։*
Տեր-Սահակյան Շ. *445։*
Տեր-Տեր-Ոհանյան Ա. Գ., *խանութի տեր, 128։*
Տիգրանյան Ա. *477, 479—481, 521։*
Տիգրանյան Ն. *461։*

Տիգրանյան Լ., *քաղաքային բժիշկ և քաղաքագլուխ, 27, 186, 210—218, 220, 335, 356, 357, 361, 362, 365, 380, 433, 434, 447, 449—452, 538։*
Տիգրանյանց Հ. Ն., *ինժեներ-տեխնոլոգ, 357։*
Տիզենհաուզեն Վ. Ֆ., *գիներալ-նահանգապետ, 263, 465, 493—495։*
Տոլստոյ Դ. Ա. *30։*
Տրեպյակով Վ. *311, 312, 314։*

Ր

Րաֆֆի (Մելիք-Հակոբյան) *206, 216 217, 538։*

Փ

Փալանդուզ Մկո, *տե՛ս Նարիմյան։*
Փարսադանյան Ա. *457։*
Փարսադանյան Վ. Հ. *477, 478։*
Փափազյան Վահրամ *520, 521։*
Փափազյան Վրթանես *454։*
Փիրումյան *519։*

Ք

Քալանթարյան Մ., *բժիշկ, 433։*
Քոչարյան եղբայրներ *510։*
Քոչարյան, *խանութի տեր, 128։*
Քոչարյան Գ., *բժիշկ, 433։*
Քյալյան, *այգեգործ, 365, 457։*

Օ

Օհանյան Ա. *104, 105, 109։*
Օհանյան Ա. Ի., *վաճառական, 126, 127։*
Օհանյան Ա., *թատերասեր, 461։*
Օհանյան Մ., *թատերասեր 461։*
Օզարովսկի Իվ. *14։*
Օստրովսկի *519։*
Օրլանդո եղբայրներ, *գնրասաններ, 474։*
Օրլով, *իշխան, 513։*

Ֆ

Ֆալազա Ն. Վ., *ինժեներ-էլեկտրիկ, 355։*
Ֆրեյգան Ս. Ֆ. *495։*
Ֆրեյգանգ Լ. Մ., *դատախազ, 212, 213։*
Ֆրիդուն բեկ Քյոշարլի *466։*

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Արովյան փողոց *271, 484։*
Արուճայարի առուներ *152, 159, 161։*
Աղբիւրյան *11, 12, 66, 524։*
Ալաշկերտ *523, 525։*
Ալավերդի *227։*
Ալավերդյան փողոց *271։*
Ալեքսանդրոպոլ *39, 86, 87, 97, 98, 99, 101—105, 107, 110—113, 175, 179, 182—184, 186, 193, 195, 196, 204, 205, 227, 240, 278, 291, 296, 298, 337, 354, 385, 387, 390, 447, 459, 478, 537։*
Ալեքսանդրոպոլի գավառ *112, 174։*
Ալեքսանդրոպոլի մաճալ *158։*
Ալիջաշայի մաճալ *157։*
Ախալցխա *14։*
Ախթամար *218։*
Աղածոր, *գյուղ, 331։*
Աղստաֆա, *կայարան, 53, 108—111, 117, 120։*
Ամիրյան փողոց *369, 271, 273։*
ԱՄՆ *531։*
Անգլիա *43, 47, 206, 486։*
Անգլիական այգի *(այժմ՝ 26 կոմիսարների այգի) 361, 363, 364, 365, 367։*
Անդրկարպատյան մարզ *117։*
Անդրկովկաս *12—14, 40, 50, 51, 57, 64—66, 68, 88, 92, 93, 100, 101, 107, 111, 121, 140, 158, 180, 182, 197, 199, 216, 219, 220, 222, 226, 227, 254, 261, 266, 305, 307, 373, 390, 398, 421, 450, 470, 490—497, 500, 501, 529, 538, 539, 541—544։*
Աշտարակ *45, 58, 60, 61։*
Ապարանի մաճալ *157։*
Ասորիք *524։*
Աստաֆյան փողոց *(այժմ՝ Արովյանի) 149, 281, 284, 299, 310, 311, 312, 315, 317, 320, 336, 348, 349, 359, 369, 370, 409, 416, 417, 420, 421, 426, 487, 489, 541։*
Աստրախանի նահանգ *11։*
Ավան, *գյուղ, 331։*
Ավստրիական կայսրություն *206։*
Արաբկիր, *թաղամաս, 150։*
Արամուս, *գյուղ, 331։*
Արարատյան դաշտ *44, 46, 102, 105, 167։*
Արարատյան նահանգ *429։*
Արաքս *157։*
Արցախ *420, 421։*
Արխանգելսկի նահանգ *11։*
Արևելյան Հայաստան *59, 102, 207, 222, 224, 486, 524, 538։*
Արևմտյան Հայաստան *183, 185, 206, 208, 209, 219, 431, 486, 493, 515, 523, 538, 545։*

Բ

Բազարի փողոց *(այժմ՝ Մարքսի) 270, 286, 417, 474։*
Բաթումի *39, 182, 203, 234։*
Բալախան *341։*
Բաղդատ 105:
Բայազետ *523, 525։*
Բաշգյուղ *332։*
Բասեն *523։*
Բաքու *14, 39, 47, 50, 53, 54, 87, 101, 118, 182, 183, 201, 203, 232, 235.*

243, 265, 305, 307, 354, 373, 376, 377, 461, 466, 470, 483, 497, 536, 537։
Բարվի նահանգ 39։
Բելոռուսիա 11։
Բելոստոկ 33։
Բենբութովի փողոց (այժմ՝ Սվերդլովի) 296, 417, 424։
Բեռլին 219, 341։
Բուժոմի 101։
Բուշլու 102։

Գ

Գանձակ (Գյանջա) 231, 232։
Գառնիբասարի մանող 157։
Գետառ 47, 160, 161, 162, 321, 329, 374, 381։
Գետարգել, գյուղ, 331։
Գերմանիա 163։
Գյոզալ առու 162։
Գյուլգարակ 454։
Գյուրջի Ղարավանսարա 358։
Գոկչա լիճ 46, տե՛ս Սևանա լիճ։
Գորի 14, 305։

Դ

Դալմա, թաղամաս, 168, 169։
Դալմայի առու 159, 161։
Դաղստան 373։
Դաստայի մանող 157։
Դեբեդ 102։
Դեմիրբուլաղ, քաղաքամաս, 150, 156, 282, 295, 299, 333, 366, 378, 381։
Դիլիջան 372։
Դոկտորական փողոց (այժմ Թումանյանի) 284, 296։
Դորպատ 206, 220, 451։

Ե

Ելիզավետոպոլ 182, 203, 265։
Ելիզավետոպոլի նահանգ 407։
Եղվարդ 153։
Ենգիջա, գյուղ, 117։
Եվրոպա 105։
Երևան 5—8, 10—16, 18—20, 22—29, 34, 35, 37—55, 57—69, 71—80, 82, 83, 85—89, 91—99, 101—122, 124—126, 128, 130—132, 135, 136, 139—146, 149, 154, 157, 159, 160—176, 177—191, 193—197, 199—207, 210—217, 219—221, 223, 225—236, 238—245, 247—250, 253, 254, 257—260, 264, 266, 268, 270, 272—278, 280, 281, 284, 285, 290, 291, 293, 294, 296, 298—300, 303, 305—309, 311, 314, 318—321, 325, 326, 329, 332, 333, 337, 341, 342, 347, 348, 350, 351, 353—356, 358—361, 366—368, 370—378, 380, 382—385, 387—390, 393, 394, 396, 398, 400, 404, 411, 414—417, 419—422, 424—427, 429—432, 434, 435, 538, 439—442, 444—457, 459, 461, 463, 465—470, 473, 475, 476, 478, 482—488, 491—497, 499—513, 516—520, 522—529, 531, 532, 534—544։
Երևանի զավառ 44, 103, 173, 174, 184, 390, 422։
Երևանի նահանգ 7, 39, 40, 42, 48, 51—55, 58, 60, 64—68, 70, 73, 75, 79—82, 86, 87, 97, 102—104, 107, 108, 110—115, 117, 120, 129, 131, 135, 157, 158, 164, 167, 169—171, 173—176, 178—181, 183—186, 191, 193, 196, 197, 201, 223, 235, 239, 240, 274, 278—281, 296, 298, 300, 304—306, 308, 310, 353, 371, 373, 375, 378, 384, 386—390, 406, 429—431, 441, 445, 449, 450, 503, 537։

Ջ

Ջամաճ-առու 162։
Ջանգեզուրի զավառ 157, 158։
Ջանգիբասարի մանող 157։
Ջանգու (Հրազդան) 46, 58, 72, 117, 150, 160—162, 295, 308, 321, 325, 333, 341։

Է

Էջմիածին 107, 138, 208, 209, 218, 222, 231, 259, 331, 379, 447, 448, 478, 525—527, 545։
Էջմիածնի զավառ 44, 172, 173, 254, 503։
Էջմիածնի գետ (Քասախ) 161։
Էջմիածնի վանք 148, 526։
Էրզրում 215, 492, 523։

Թ

Թազագյուղ 352։
Թավրիզ 107, 109, 430։
Թարխանովի փողոց (այժմ՝ Կնունյանցի և Պուշկինի) 285, 296։
Թելավ 101։
Թիֆլիս 14, 26, 33, 39, 50, 53, 54, 58, 64, 74, 77, 87, 92, 101—103, 105, 108, 109, 111, 113, 116, 117, 140, 147, 165, 166, 169, 182, 197, 203, 206, 209, 215, 216, 217, 220, 221, 224, 227, 232, 233, 235, 236, 239, 240, 243, 244, 249, 250, 251, 252, 258, 289, 294, 307, 312, 336, 337, 338, 342, 353, 355, 371, 373, 408, 420, 421, 430, 445, 451, 452, 463, 466, 467, 469, 477, 497, 499, 501, 508, 510—513, 519, 520, 529։
Թոխմախան գյոլ, լճակ, 150, 379։
Թումանյանի պողոտա 271։
Թուրքեստան 117։
Թուրքիա 53, 112, 113, 184, 486, 509։

Ժ

Ժեև 217։

Ի

Իգդիր 107—110, 510, 526։
Իվանովո 114։

Լ

Լեհաստան 11, 117, 364։
Լենինգրադ 175, 181, 193, 195, 205, 368, 409, 417, 429, 435։
Լիտվա 11։
Լոռի 116, 117։

Խ

Խաշուրի 101։
Խառակոնիս 217։
Խարկով 33։
Խոկի մանող 157։
Խոսրովպարադ 367։
Խորամ-բուլաղ աղբյուրներ 335, տե՛ս Խորամբուլաղ։
Խորվիրապի վանք 148։
Խորամբուլաղ 381։

Ծ

Ծարավ աղբյուրներ 333, 334։

Կ

Կաթողիկե եկեղեցի 148։
Կազան 220։
Կասպից ծով 118։
Կարավանսարայի փողոց (այժմ՝ Տեր Գաբրիելյանի) 270, 296, 434։
Կարս 39, 102—104, 109, 111, 227—305, 527։
Կարսի մարզ 39, 87, 101, 108, 112, 157, 158, 239։
Կարլովի Վարի, Հանքային ջրեր Ջեխոսլովակիայում, 77։
Կարսբաղ, տե՛ս Կարլովի Վարի։
Կրբխբուլաղի աղբյուրներ 330, 331։
Կրբխբուլաղի առու 159։
Կրբխբուլաղի մանող 157։
Կիլիկիա 217։
Կիրզա, թաղամաս, 150։
Կիև 33։
Կնունյանցի փողոց 369։
Կոզեռնի փողոց 381։
Կոնդ 150, 289, 294, 333, 366, 378, 381, 413, 525, 528, 530։
Կոստանդնուպոլիս 216, 217։
Կովկաս 11—16, 39, 52, 58, 61, 66, 68, 75, 77, 80, 101, 102, 108, 120, 146, 158, 163, 169, 170, 178, 200, 201, 203, 213, 216, 223, 225, 235—237, 254, 255, 256, 281, 293, 300, 340, 354, 355, 373, 406—411, 415, 420, 429, 480, 483, 488, 491, 492, 499, 500, 511, 512, 523, 525, 537, 540, 545։

Վրեմեճուգ 200, 364։
Կուր 157։

Հ

Հախճազարի առու 162։
Հաղպատ 227։
Հայաստան 11, 12, 42, 43, 44, 46, 51, 54, 55, 59, 65, 67, 101, 105, 107, 108, 109, 188, 214, 215, 218, 225—229, 232, 233, 236, 243, 252, 257, 260, 261, 273, 368, 369, 445, 452, 466, 485, 496—501, 507, 523, 525, 531, 543, 545։
Հայկական փողոց (այժմ՝ Լենինի պողոտա) 285։
Հին եկեղեցու փողոց 381։
Հյուսիսային Կովկաս 66, 373։
Հռոմ 8։
ՀԱՍՌ 55, 57, 61, 62, 73-78, 80, 85, 88, 90, 94, 95, 96, 100, 102—104, 106, 108, 109, 111, 118, 119, 120, 123, 125—135, 137—139, 141, 142, 144—147, 150—157, 160—162, 166—173, 177, 178, 189, 192, 194, 196—201, 210—222, 230, 232, 239, 240, 248, 251, 259, 262, 263 266, 267, 273, 278, 279, 280, 282, 283, 284, 286—288, 290, 291, 292, 299, 301, 303, 304, 309, 310, 311, 312—315, 317, 318—321, 325, 326, 330—348, 354—367, 369, 371, 374, 381, 388—390, 392, 393, 395, 396, 397, 399, 400, 402, 403—405, 407—409, 411—413, 415, 417—423, 426, 428, 436, 445, 451—455, 457—465, 467, 472, 474, 476, 477, 480, 482, 487, 488, 498—500, 503—507, 510։
Հրազդան 484։

Ձ

Ձիաթուրի 101։

Ղ

Ղազախստան 11։
Ղամարլու (Արտաշատ) 45, 48, 58, 60—62։
Ղափան 227։

Մ

Մազրայի մաճալ (այժմ՝ Բասարգեչար) 157։
Մալյարեների փողոց (այժմ՝ Տերյանի) 296։
Մամրիի առու, 159, 161, 381։
Մայկոպ 357։
Մարթառա 107։
Մարեսի փողոց 271։
Մելիք-Աղամալյանի առու 162։
Մելիքենց առու 162։
Մեծ Վարաժիլիսա 126։
Մերձալթիկա 11, 491։
Մինսկ 33։
Միջագետք 524։
Միջին Ասիա 11։
Մոլոկանի փողոց (այժմ՝ Կարմիր Բանակի) 286, 360, 379։
Մասկվա 10, 11, 17, 20, 23, 32, 33, 34, 40, 107, 114—117, 121, 138, 172, 206, 215, 227, 233, 239 252—256, 312, 341, 359, 376, 489, 490, 491, 497։
Մուղոսի Հովհաննիսյանի առու 162։

Յ

Յարոսլավլ 8, 114,
Յոնջալըղ, թաղամաս, 150, 153, 171։

Ն

Նազարովի փողոց (այժմ՝ Ամիրյանի) 399, 404, 417։
Նալբանդյանի փողոց 271։
Նախիջևան 86, 97, 157, 175, 179, 183, 186, 197, 205, 240, 265, 284, 296, 298, 306, 510։
Նախիջևանի գավառ 65, 68, 174, 390։
Նախիջևանի մաճալ 157։
Ներիին Դեմիրբուլաղի առու 162։
Ներիին Շենգավիթ 352։
Նիժնի Նովգորոդ 341։
Նովոռոսիյսկ 333։
Նորագավիթ 352։
Նորագեղի առու 162։
Նորագեղ, թաղամաս, 168—170։
Նոր Բայազետ 86, 87, 97, 98, 99, 138, 175, 179, 183, 186, 193, 197, 204, 205, 293, 306, 385, 387։
Նոր Բայազետի գավառ 172, 173, 254, 390։
Նոր Բայազետի մաճալ 157։
Նոր եկեղեցու փողոց (այժմ՝ Սովետների) 508։
Նորք, թաղամաս, 26, 150, 168, 176, 281, 299,, 309,, 310, 320, 321, 347, 348, 349, 366, 378—381, 421, 422։
Նորքի աղբյուրներ (Չոլմաքլի) 336։
Նորքի առուներ 152, 153։

Շ

Շահապ, գյուղ, 331։
Շահար, թաղամաս, 150, 282, 295, 333, 366, 378։
Շահումյանի հրապարակ 273։
Շամախի 420, 421։
Շարուր-Դարալագյազի գավառ 44, 68, 117, 173, 390։
Շարուր-Դարալագյազի մաճալ 157։
Շենգավիթ 150, 153։
Շիլաչի, թաղամաս, 378, 379, 381։
Շորապանի, կայարան, 101։
Շուշի 305։

Պ

Պարսկաստան 39, 53, 103, 105—107, 110, 112, 113, 120, 121, 430, 509։
Պետերբուրգ 10, 19, 23, 32, 33, 37, 206, 219, 312, 341, 451։
Պետրոգրադ 232, 497, 498։
Պողոս-Պետրոսի եկեղեցի 148, 285, 421, 455, 521։

Ջ

Ջալալօղլի (Ստեփանավան) 227։
Ջրաղացի առու 162։
Ջրվեժ, գյուղ, 150, 153։
Ջուլֆա, կայարան, 101—106, 109, 110, 195։

Ռ

Ռյազան 341։
Ռոստով (Դոնի վրա) 34, 483։
Ռուսաստան 8, 37, 40, 50—53, 66, 68, 70, 73, 77, 94, 102, 110, 111, 113, 120, 121, 202, 205, 222, 228, 235, 267, 312, 377, 391, 406, 413, 470, 492, 495, 496, 500, 516, 523, 538, 539, 543։

Ս

Սաբունչի, կայարան, 101։
Սադախլու, կայարան, 105,
Սամարա 341։
Սամարղանդ 51։
Սարդարապատ (Հոկտեմբերյան) 102։
Սարդարապատի մաճալ 157։
Սարիղամիշ 227։
Սարոիր առու 162։
Սիբիր 11։
Սպանդարյանի փողոց 271։
Սովետական Հայաստան 72։
Սովետների փողոց 360։
ՍՍՌՄ 138, 172, 175, 181, 193, 195, 227, 239, 252—256, 359, 368, 376, 409, 417, 429, 435։
Սվերդլովի փողոց 368։
Սոլբաքովի փողոց 385։
Սուին, կայարան, 341։
Սուխում 532, 533։
Սուրախանի 101։
Սուրբ Հովհաննեսի եկեղեցի 148, 530։
Սուրմալու 157։
Սուրմալուի գավառ 44, 65, 68, 503։
Սուրմալուի մաճալ 157։

Սևանա լիճ 46։
Սևանի վանք 148։
Սևաստոպոլ 243։

Վ

Վաղարշապատ (էջմիածին) 45, 145, 526։
Վան 217, 506—508, 523։
Վասպուրական 507։
Վարշավա 51։
Վեդիբասարի մանել 157։
Վենետիկ 73։
Վերին Շենգավիթ 352։
Վլադիկավկազ 203։
Վոլգա 118։
Վրաստան 524։
Վրացական ՍՍՌ 39, 40, 50, 53, 60, 64, 70, 76, 79, 81, 137, 138, 157—159, 181, 240, 242, 243, 247, 250, 251, 384, 447, 501, 512, 513, 533։

Տ

Տամբով 341։
Տեր-Գաբրիելյանի փողոց 271
Տեր-Ղուկասովի փողոց (այժմ՝ Նալբանդյանի) 280, 284, 296, 359։
Տերյանի փողոց 271։
Տոմսկ 229, 230։
Տուլա 16, 341։

Ց

Ցարական փողոց (այժմ՝ Սպանդարյանի) 280, 284, 416, 523։

Ու

Ուլուխանլու (Մասիս), կայարան, 102—104, 106, 228, 229։
Ուկրաինա 470։

Փ

Փամբակ 102։
Փարիզ 49, 78, 79, 483, 484։
Փանոսյանի հրապարակ (այժմ՝ Ազիզբեկովի) 270։
Փարշենի մանել 157։
Փեշիֆ առու 162։
Փոքի 101, 117։

Ք

Քանաքեռ 39, 150, 168, 333, 510։
Քառասուն աղբյուրներ 333, 334, 336, 337, 339, 341, 348, 350, 353։
Քասախ, գետ, տե՛ս էջմիածնի գետ։
Քիշինյով 51։
Քուրպիսի 14, 182, 497։
Քուրդ-առու 162։

Օ

Օղեսա 10, 32, 117, 165։
Օրդուբադ 86, 87, 97, 175, 179, 183, 186, 197, 205, 298, 306, 510։

Ֆ

Ֆրանսիա 49, 206, 486։

5. ՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՑԱՆԿ

ա) Նախորդ գրքում վետեղված նկարներն ու հատակագծերը

էջ

Հուսեյն-խան սարդար 16
XIX դարի Երևանի ընդհանուր տեսարանը . . . . . 16 և 17
էջերի միջև
Երևանի սարդարը որսի ժամանակ 20
Ֆալախկա-պատիժը 27
Կաշեգործական արհեստանոց Զանգվի (Հրազդանի) ափին . . . 42
Մոմագործի արհեստանոց 43
Ջրաղացներ Զանգվի (Հրազդանի) վրա 49
(այս նկարը թյուրիմացաբար վերագրված է Ա. Զարիբյանին, այնինչ պատկանում է Գ. Գյուրջյանի վրձնին)
Զանթարի (շուկա) ընդհանուր տեսքը 99
Գյուրջի քարավանատունը՝ լուսանկարված բակի կողմից . . . 100
Ուղտապահ Դարաքենդ թաղամասում 128
Մի տեսարան Կըրխ-բուլաղ (Գետառ) գետի հովտից 153
Մի տեսարան Կըրխ-բուլաղ (Գետառ) գետի հովտից 174
Մառուղի սարդարի այգում . . . . . 220 և 221
Երևանի բերդի և նրա մոտ ընկած քաղաքի գլխավոր հատակագիծը
էջերի միջև
Նարդիլն 221
Արևելյան կենցաղային իրեր 222
Բնակարանային լապտեր 224
Բնակելի շենք Թափաբաշ (Կոնդ) թաղամասում 226
Բնակելի թաղ Շահար թաղամասում 227
Փանահ-խանի որդի Ալի-խանի տունը Շահար թաղամասում . . . 229
Երևանի բերդի ընդհանուր տեսարանը Զանգվի (Հրազդան) կողմից . 234
Սարդարի հայելազարդ պալատը ներսից 241
Մարմարակերտ շատրվան սարդարի հայելապատ դահլիճում . . 242
Սարդարի մզկիթը Երևանի բերդում 243
Պողոս-Պետրոս եկեղեցին 246
Կաթուղիկե եկեղեցին 249
Զորավոր եկեղեցին 259
Ս. Սարգսի եկեղեցին 252
Դամբր-բուլաղի մզկիթի արտաքին տեսքը 253

Գյոլ մզկիթի արտաքին ընդհանուր տեսքը արևմտյան կողմից . . 254
Գյոլ մզկիթը փողոցի կողմից 256
Ջանգվի (Հրազդան) քառակամար «Կարմիր» կամուրջը և նրա շրջակայքը 258
Կբրխ-բուլաղի (Գետառ) կամուրջը Դամիր-բուլաղ թաղամասում . . 259
«Կոզեռն» գերեզմանատունը և մատուռը 261
Գևթեսեմանի մատուռը 261
«Ջահրլաբաղար» մեչետի աղբյուրը 265
Դամիրբուլաղ թաղամասի աղբյուրները 267
Ջրթամ 267
Բաղնիք Գյոլ մզկիթի մոտ 269
Երաժշտահումբ հին Երևանում 278
Երևանի բերդի հատակագիծը, հանված աչքաչափով 1804 թ. պաշարման ժամանակ . . . . . 286 և 287
էջերի միջև
Ռուսական զորքերի տեղադրությունը և գործողությունները Երևանի բերդի շրջակայքում՝ դրա պաշարման և գրոհի ժամանակ՝ 1808 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին 301
Ներսես Աշտարակեցի 316
Գևոներ Ի. Ֆ. Պասկևիչ 327
Երևանի բերդի գրավումը գրոհով 1827 թ. հոկտեմբերի 1-ին . . . 331
Երևանի բերդի և նրա շրջակայքի թաղերի հատակագիծը՝ ռուսական զորքերի կողմից 1827 թ. պաշարման նշումով 332
Ռուսական զորքերի հաղթական մուտքը Երևանի բերդը և պարսկական կայազորի կապիտուլացիան 334
Թնդանոթի արկեր՝ գործածված 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում 336
Զենքեր՝ գործածված 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում 337
Երևանի բերդի բանալիները 337
Պարսկական գրոշակ՝ վերցված Երևանի գրավման ժամանակ 1827 թ. հոկտեմբերի 1-ին 339
Անգլիական գրոշակ՝ վերցված Երևանի գրավման ժամանակ 1827 թ. հոկտեմբերի 1-ին 339
Մեդալներ՝ կտրված Երևանի գրավման առթիվ 341
Ա. Ս. Գրիբոյեդով 342
Պարսկական լծից Երևանի ազատագրմանը մասնակցած հայկական կամավորական չոկատի գրոշակ 344
Հայկական մարզի կառավարիչ գեներալ Բեհբութով 367
Մաշկակարի արհեստանոց 423
Գինու «գործարան» նախկին սարդարի այգում 440
Շուկայի (զանգար) մի մասը Գյոլ մզկիթի մոտ 457
Խանութներ Շահար թաղամասում, այժմյան «Սևան» հյուրանոցի տեղում 469
Երևանի մի հայկական ընտանիք 520
Երևանցի մանկահասակ աղրբեջանուհիներ 521
Երևան քաղաքի հատակագիծը (1843 թ.) 537
Երևան քաղաքի առաջին գործող կամ հեռանկարային հատակագիծը (1856 թ.) 558
Երևան քաղաքի հատակագիծը (1865 թ.) 560

Գնպի Դիլիջան և Թիֆլիս տանող խճուղու սկիզբը Երևանի հյուսիսային ծայրամասում 561
Բնակելի տներ Շահար թաղամասում 562
Ցախի մեչետի ընդհանուր տեսքը 567
«Ֆանտաղիա» բաղնիքի արտաքին տեսքը ս. Սարգիս եկեղեցու մոտ . 569
Բնակելի տներ Շահար թաղամասում, այժմյան Լենինի հրապարակի տեղում 571
Բնակելի տներ Նադարովի (այժմ Ամիրյանի) փողոցի վրա 572
Ջանգու (Հրազդան) գետի շրջակայքը 579
Մի տեսարան Կոնդ թաղամասից 580
Կոնդ թաղամասի ընդհանուր տեսքը 581
Երևանի բերդի գլխավոր հատակագիծը, նախատեսվող նոր կառուցումների վերաբերյալ նշումներով հանդերձ 583
Ջորանոցներ Երևանի բերդում՝ կառուցված քաղաքը պարսկական լծից ազատագրելուց հետո 584
Երևանի բերդի պարիսպների մնացորդներից, բերդը լիկվիդացիայի ենթարկվելուց հետո 585
Սբ. Հռիփսիմեի անվան օրիորդաց ուսումնարանի (պրոգիմնազիայի, գիմնազիայի) շենքը 601
Խաչատուր Աբովյան 614
Ղազարոս Աղայան 616
Պարսկահայերի ներգաղթը 1828 թվականին 622
Գևորգ Ջմշկյան 630

բ) Սույն գրքում վետեղված նկարներն ու հատակագծերը

էջ
«Շուստով և որդիներ» ընկերության գինու-կոնյակի գործարանը . . 56
«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի գինի մղող «Զևյց» տիպի պոմպ 59
«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի խցանակալ ձեռքի մեքենա 60
«Շուստով և որդիներ» ընկերության գործարանի հայտնի զանգը . . 63
Սարաջյանի (Սարաջև) կոնյակի գործարանի արտաքին տեսքը . . 66
Երկաթե սալ արտադրված Տեր-Ավետիքյան եղբայրների թուջակաղապարման—մեխանիկական գործարանում 71
«Եղիազարյան և ընկ.» մրրի պահածոների գործարանը 76
Դիպլոմ տրված Գ. Ահարոնյանի մրրի պահածոների գործարանին 1905 թվականի Փարիզի ցուցահանդեսից 78
Բրուտագործական արհեստանոց 97
Նմուշներ երևանցիների ձեռագործական աշխատանքներից . . . 98
«Երևան» երկաթուղային կայարանը (1905 թ.) 106
Դիմում երկրորդ կարգի (դիլդայի) վաճառականի վկայական ստանալու համար 123
Վկայական առևտրական ձեռնարկությունն պահելու համար . . . 125
Քաղաքի գլխավոր շուկա-հրապարակը 127
Մրգավաճառների շարք շուկայում 131
Գյոլ-չամիի թեյարանի ինքնահոր 135

Գյուղատնտեսությամբ զբաղվող երևանցի մի խումբ կանայք և տղամարդիկ 177
Հարուստ երևանցու բնակարանի ներքին տեսքը (մակետ) . . . 188
Երևանցի հայ ամուսիններ 189
Աղգային տարազով երևանցի հայուհիներ 192
Շքեղ հագուստով երևանցի հայուհի 194
Ա. Մալխասյան 230
Ասքանազ Մուավյան 231
Դ. Սոկոլովսկի 232
Մ. Մխրքյան (Շանթ) 234
Ստեփան Շահումյան 246
Ա. Մելիքյան 260
Նահանգական վարչության շենքը Նահանգական (Ալավերդյանի) փողոցի վրա 270
Ձախ կողմում նահանգական ատենական վարչության և «Ապոլլո» Նիկոլաևյան ռուսական տաճարը 274
Նիկոլաևյան ռուսական տաճարի մատուռը (մակետ) . . . 275
Անգլիական այգու մուտքը. Աջ կողմում «Եղիազարյան և ընկ.» առևտրական տան շենքը, իսկ ձախ կողմում քաղաքային փոստայի շենքը . 277
Մի տեսարան քաղաքի կենտրոնական մասից 279
Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի) փողոցի տեսքը 280
Քաղաքի հատակագծի մի մասը 282
Քաղաքի կենտրոնական մասի ընդհանուր տեսքը 284
Հայկական փողոցի (Լենինի պողոտա) ընդհանուր տեսքը . . . 285
Մի տեսարան Կոնե Քաղամասից 289
Մոլոկանի փողոցի ընդհանուր տեսքը 290
Մի տեսարան քաղաքի կենտրոնական մասից 292
Քաղաքային տնային Մեհրաբյանի կազմած հատակագիծը 294 և 295 էջերի միջև
Սխեմա, կազմված ըստ Մեհրաբյանի հատակագծի 296 և 297 էջերի միջև
Քաղաքային մխակ ժամացույցը 298
Աստաֆյան (Աբովյանի) փողոցի ընդհանուր տեսքը. Ձախ կողմում առաջին պլանի վրա «Ֆրանսիա» հյուրանոցը, իսկ կենտրոնում ձիաքարշի վագոններից մեկը 310
Ամելու ջրի ծորակների տեղաբաշխումը 1911 թ. վերջին . . . 351
Անգլիական (26 կոմիսարների) այգու հատակագիծը 364
Երևանի արական դասական գիմնազիայի աշակերտների և հոգաբարձական խորհրդի անդամների խմբանկար 394
Երևանի արական դասական գիմնազիայի հասունության ատեստատ . 396
Արական դասական գիմնազիայի շենքը 400
Ս. Հռիփսիմեի անվան էգական գիմնազիայի 7-րդ դասարանի ավարտական վկայական 402
Ն. Շչերբանինայի պրոգիմնազիայի 4-րդ դասարանի ավարտական վկայական 418
Քաղաքային ակումբի շենքը (Ներկայումս երաշտ. կոմեդիայի թատրոն) 428
«Պատկ» լրագրի տիտղոսաթերթը 430
«Առողջապահական թերթ» ամսագրի շապիկը 434

«Эриванские Объявления» հայերեն-ռուսերեն թերթիկի տիտղոսաթերթը 437
«Նոսք» լրագրի տիտղոսաթերթը 445
Լ. Տիգրանյան (1842—1906) 451
Պերճ Պռոշյան 453
Արսեն Տերտերյան 455
Թատերասեր Մակար Տեր-Սարգսյան 458
Թատերասեր Աշխեն Տեր-Սարգսյան (Մակար Տեր-Սարգսյանի կինը) . 459
Թատերասեր և հասարակական գործիչ Սիրական Տեր-Մարտիրոսյան . 460
Քաղաքի հայկական ինքնագործ թատերական խմբի 1883 թ. աֆիշներից մեկը 462
Էմին Տեր-Գրիգորյան 464
Հ. Աբելյան (1865—1936) 465
Հ. Զարիֆյան (1879—1937) 467
Արմ. Արմենյան 468
Սիրանույշ (1857—1932) 469
Սիրանույշի թատերական խմբի աֆիշներից մեկը (1901 թ.) . . . 471
Ջանփոլադյանի թատրոնի շենքը 472
Կոմիտաս (նկարված Երևանում 1901 թ.) 476
Կոմիտասի երգչախումբն իր ղեկավարի հետ միասին 477
Արմեն Տիգրանյան 489
Երևանում պատրաստված Կովկասյան պղնձյա իրեր 507
Վահրամ Փափազյան 520
Թուրքական գազանություններից փրկված հայ փախստականները Երևանում 524
Հայ փախստականների երեխաները Երևանում 526

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն 5

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1879—1914 ԹԹ.

1. Վարչական կարգը 7

1863—1874 ԹԹ. ռեֆորմները։ Համառոտ տեղեկություններ քաղաքային ինքնավարության մասին ռուսական իրականության մեջ։ 1870 թ. հունիսի 16-ի քաղաքային Կանոնադրությունը և նրա կիրառումը (1879 թ.) Երևանում։ Քաղաքային գործերի Երևանի նահանգական ատյանը և նրա ֆունկցիաները։ Քաղաքային ինքնավարության գործունեության շրջանակներն ըստ 1870 թ. Կանոնադրության։ Քաղաքային ինքնավարական կամ հասարակական օրգանները։ Ընտրական սիստեմը և քաղաքային ընտրական ժողովները։ Քաղաքային դուման և նրա իրավունքներն ու պարտականությունները։ Քաղաքային վարչությունը, նրա կազմն ու պարտականությունները։ Գործադիր հանձնաժողովները և ոչ ընտրովի հայաշտոնյաները քաղաքային ինքնավարության սիստեմում։ 1892 թ. քաղաքային Կանոնադրության բնույթը։ Ընտրական իրավունքի կրճատումը և քաղաքային դումայի ու վարչության իրավունքների սահմանափակումը։ 1892 թ. Կանոնադրության վերափոխումը 1917 թ. Փետրվարյան ռևոլյուցիայից հետո։ Երևանի մանկակցությունը Պետական դումայի ընտրություններին։ Երևանում եղած պետական հիմնարկները։ Երևանի կայազորը։

2. Տնտեսության զարգացումը 40

ա) *Արդյունաբերությունը և արհեստագործությունը* 41

Քաղաքի արդյունաբերության բնույթը մինչև XIX դարի 80-ական թվականները։ Կապիտալիստական խոշոր արդյունաբերության ծագման նախադրյալները Երևանում. հումքային բազան, էներգիայի աղբյուրները, կապիտալների վիճակը և ֆինանսական ու արտադրական ընկերությունները, պետական-ֆինանսական օրգանները, ռուսական կապիտալի ներհոսքը և նրա նշանակությունը, երկաթուղին, գյուղատնտեսական մթերքների վաճառքի կազմակերպումը։ Պանդոկային ձեռնարկությունները և դրանց բնույթը։ Ապրանքների գները։ Սեզոնային բանվորների ռեալ աշխատավարձի չափը։ Շուկայում կատարվող խարդախությունները։ Չափ ու կշիռների բազմազանությունը։ Գործակատարությունը։

գ) *Հողային հարաբերությունները և գյուղատնտեսական ճյուղերի վիճակը* 143

Հողատիրության ձևերը և դրանց առանձնահատկությունները. մասնավոր հողատիրությունը, եկեղեցապատկան-վանքապատկան հողերը և քաղաքապատկան ու պետական հողային տարածությունները։ Քաղաքապատկան ու պետական հողերից օգտվելու կարգը. դրանց կապալով տալը և վաճառքը։ Քաղաքապատկան հողերի յուրացումը

անհատ քաղաքացիների կողմից։ Քաղաքապատկան հողերից ավազ, քար և կավ ձեռք բերելու իրավունքը։ Ոռոգման ցանցը։ Քաղաքի գյուղատնտեսական ճյուղերի ընդհանուր վիճակը։ Այգեգործությունն ու բանջարաբուծությունը։ Հացահատիկային անտեսությունը։ Անասնապահությունը։

3. Բնակչությունը և ճասարակական կյանքը 180

ա) Բնակչության վիճակը 181

Բնակչության թիվը, աճը, շարժումը, կյանքի միջին տարիքը, ազգագրական ու անառողջ սովորույթյունները, ընտանիքների բազմանդամությունը, գրագիտության աստիճանը, ազգային ու դասակարգային կազմը։ Հարկերը. պետական հարկերի տեսակները, հարկադրման կարգը, հարկերի ծանրությունը, քաղաքային գնահատման տուրքը, բնակարանային հարկը և մյուս հարկերն ու տուրքերը, հարկերի հավաքման կարգը։

բ) Ազատագրական շարժումները 80-ական թվականներին 206

XIX դարի ազատագրական շարժման բնույթը։ «Պսակ» թերթը հայ ազատագրական շարժման պրոպագանդիստ։ «Հայասեր» և «Ազգասեր» անվանված խմբակը և դրա պայքարը ցարական կառավարության ռուսականացման քաղաքականության ու սուլթանական բռնապետության դեմ։ Հայկական դպրոցների մասին Ալեքսանդր Երրորդի արձակած հրամանը և հակացարական տրամադրությունների ուժեղանալը։

գ) Ռևոլյուցիոն շարժումները և քաղաքի բոլշևիկյան կազմակերպության գործունեությունը 223

Կովկասյան ուսումնական օկրուգի հոգաբարձուի գաղտնի նամակը Երևանի արական գիմնազիայի դիրեկտորին։ Հուզումներ հայկական եկեղեցու կալվածքների պետականացման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի հետևանքով։ Հակակառավարական գրքույկների հայտնաբերում Երևանի երկաթուղային կայարանում։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության հիմնումը, նրա գործունեության սկիզբը, նշանավոր անդամներն ու ղեկավարները։ 1905—1907 թթ. հեղափոխության երևելի արձագանքների յուրահատկությունները։ Բնակչության ներկայացրած գրավոր բողոքը 1905 թ. մարտին։ Սարաջյանի և Շուստովի գիներ ու կոնյակի գործարանների բանվորների գործադուլները 1905 թ. ապրիլին։ Հյուրանոցների, ճաշարանների և քաղաքային ակումբի բանվորների ու ծառայողների գործադուլը 1905 թ. ապրիլին։ Արական գիմնազիայի և թեմական դպրոցի աշակերտների ու ուսուցիչների մի մասի դասադուլը 1905 թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսներին։ Հեղափոխական բովանդակությամբ թռուցիկների տարածումը զորքի մեջ 1905 թ.։ Փոստ-հեռագրական աշխատողների գործադուլը հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո։ Ռազմական դրության Երևանի նահանգում։ Քաղաքի բոլշևիկյան կազմակերպության գործունեությունը։ Նրա կոչերը ուղղված բանվորներին և մյուս աշխատավորներին (1906 թ. փետրվար)։ «Կայծ» թերթը հեղափոխական շարժման պրոպագանդիստ։ Պրոֆմիությունական կազմակերպությունները։ Սոցիալ-դեմոկրատական կազմակերպության տակտիկան բուրժուական պարտիաների և առաջին Պետական դումայի նկատմամբ։ Ստ. Շահումյանի ժամանումը Երևան 1906 թ. մայիսին։ Հեղափոխական շարժումները 1906 թվականին. արական և հոխիսմների օրիորդաց գիմնազիաների աշակերտության դասադուլը, մայիսմեկյան տոնակատարությունը, «Российское товарищество» առևտրական ընկերության Երևանի գործակալության բանվորների գործադուլը 1906 թ. մայիսին։ Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի աշխատակիցների գործադուլը 1906 թ. օգոստոս—նոյեմբեր ամիսներին։ Հյուսների և ատաղձագործների վարպետացումների ու աշակերտների գործադուլը 1906 թ. օգոստոսին։ Փականագործների և դարբինների վարպետացումների և Տեր-Ավետիքյանների մեխանիկական գործարանի բանվորների գործադուլը 1906 թ. սեպտեմբերին։ Ա. Հակոբյանի տպարանի բանվորների գործադուլը 1906 թ. հուլիս—սեպտեմբեր ամիսներին։ Սարաջյանի գինու և կոնյակի գործարանների բանվորների գործադուլը 1906 թ. նոյեմբերին։ Կաշվի գործարանի բանվորների, զինագործների և բաղնիքի աշխատողների գործադուլը։ Սարաջյանի գինու և կոնյակի գործարանների բանվորների գործադուլը 1907 թ. հունվար—փետրվար ամիսներին։ Հ. Եղիազարյանի բաղնիքի բանվորների գործադուլը 1907 թ. մարտի սկզբներին։ Այգիների սևագործ բանվորների ցույցը և գործադուլը 1907 թ. մարտին։ Ա. Հակոբյանի և Խ. Այվազյանի տպարանների և Տեր-Նիկողոսյանի ու Առաքելյանի կաղմարարական արհեստանոցների բանվորների գործադուլը 1907 թ. հուլիս—օգոստոս ամիսներին։ Քաղաքային ձիաքարշի բանվորների ու ծառայողների գործադուլը 1907 թ. օգոստոսին։ Հեղափոխական շարժումները ռևակցիայի տարիներին և 1910—1917 թթ.։ Հ. Եղիազարյանի բաղնիքի բանվորների գործադուլը 1907 թ. վերջերին և 1908 թ. սկզբներին, շարժումներ արական գիմնազիայում 1908 թ. սկզբներին, հոգևոր թեմական դպրոցի աշակերտական հուզումներն ու շարժումները 1908 թ. վերջերին և 1909 թ. սկզբներին, հեղափոխական ու ազատագրական բնույթի գրականության տարածումը քաղաքում 1910—1912 թթ., քաղաքի բոլշևիկյան կազմակերպությունը 1907—1917 թթ., «Խոսք» լրագիրը։ Ցարիզմի կազմակերպած հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները 1905—1906 թթ.։

4. Քաղաքի կոմունալ պայմանները և ներքին կյանքը 268

Նորություններ քաղաքի շինարարության և ճարտարապետության մեջ։ Նոր տիպի հիմնարկային շենքերն ու բնակելի տները, դրանց

Ճարտարապետական առանձնահատկությունները և թիվը։ Բնակարանային դժվարությունները։ Քաղաքի գրաված տարածությունը և բնակչության խտությունը։ Քաղաքի հատակագծումը և նոր փողոցների բացումը։ Փողոցների և ճանապարհների անբարեկարգ վիճակը։ Փողոցների և տների դրանցումը։ Նոր կառուցումներ կատարելու կարգը։ Քաղաքի ճարտարապետի, հողաչափի և տեխնիկի պարտականությունները։ Քաղաքի տեխնիկ Բ. Յա. Մեհրաբյանի կազմած քաղաքի հատակագիծը։ Փողոցների, տների, հրապարակների ու զբոսայգիների թիվը, մեծությունը ու բարեկարգման ատիճանը։ Քաղաքի եկամուտներն ու ծախսերը։ Քաղաքային տրանսպորտը մինչև ձիաքարշի կառուցումը։ Ձիաքարշի կառուցումը։ Քաղաքի լուսավորությունը։ Խմելու ջրի պրոբլեմը և դրա լուծումը։ Քաղաքային հեռախոսային ցանցի ստեղծումը։ Կոյուղու պրոբլեմը։ Հյուրանոցները։ Բաղնիքները։ Զբոսայգիները։ Անգլիական այգին։ Քաղաքի սանիտարական պայմաններն ու առողջապահությունը։ Աղեհները։ Քաղաքի ներքին «կարգ ու կանոնը»։ Քաղաքամասերն ու թաղերը։

Ե. Մշակույթը 382

Քաղաքի մշակութային կյանքի առաջադիմությունը։ Դպրոցական կյանքի զարգացումը։ Գիտական ու քաղաքապատկան դպրոցներ։ Մասնավոր դպրոցներ։ Եկեղեցական-ծխական և ազգիներին կից եղած դպրոցներ։ Մանկապարտեզներ։ Գրադարան-ընթերցարան։ Ակումբներ։ Ուսումնական ընկերություններ։ Պարբերական մամուլ։ Տպարաններ։ Հրապարակված գրականություն։ Գրախանութներ։ Գիտության ու գրականության գործիչներ։ Հայկական գրերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հոբելյանի կատարումը Երևանում։ Արվեստ. ընդհանուր բնույթը, թատերական կյանքը և ինքնագործ թատերախմբերի մասնակիցները, հյուրախաղային ներկայացումներ, թատրոնի ոչ մասսայական բնույթը, կրկնասային ներկայացումներ, կինո-թատրոններ, երաժշտական կյանք, նկարչություն և լուսանկարչություն, Ա. Արովյանի արձանի հարցը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1914—1917 ԹԹ.

1. Առաջին համաշխարհային պատերազմը և Երևանը 433

Պատերազմի սկիզբը և Հայաստանը որպես պատերազմական թատերաբեմ։ 1914 թ. հուլիսի 22-ի ցույցը Երևանում։ Երևանյան ջոկատի վիրավոր ու հիվանդ զինվորներին քաղաքային դումայի կողմից ցույց տված դրամական օգնությունը։ «Հայ կամավորների խմբերին օգնող հայուհյաց» ընկերությունը և նրա գործունեությունը։ Վիրավոր զինվորների համար Երևանում հայկական հիվանդանոց ստեղծելու հարցը։ Զեմստվոների և քաղաքների համառուսական միությունները և նրանց գործունեությունը։ Քաղաքների համառուսական միության Երևանի կոմիտեն։ Համառուսական Կարմիր խաչի Երևանի կազմակերպությունը և նրա գործունեությունը պատերազմի տարիներին։ Պետական փոխառությունները և դրանց բնույթը։ Դրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո. հեղափոխական շարժման աշխուժացումը և բանվորների ու զինվորների պատգամավորների խորհուրդների կազմակերպումը և դրանց կազմն ու քաղաքականությունը, հեղափոխական շարժման ուժեղացումը քաղաքի ձեռնարկություններում 1917 թ. մայիս—հունիս ամիսներին, մարքսիստական աշակերտական միության կազմակերպումը, հեղափոխական շարժումները քաղաքի դպրոցական հաստատություններում 1917 թ. աշնանը։

2. Քաղաքի տնտեսական, կոմունալ ու կուլտուրական կյանքի անկումը պատերազմի հետևանքով և աշխատավորների նյութական դրությունը 501

Պատերազմի բացասական ազդեցությունը Երևան քաղաքի ներքին կյանքի վրա ընդհանրապես։ Արդյունաբերության անկման պատճառները։ Գինու-կոնյակի-օղու արտադրության կրճատումը։ Դրությունը մյուս կարգի գործարաններում։ Փոփոխություններ քաղաքի արհեստագործության բնագավառում գաղթականության շնորհիվ։ Առևտրի անկումը։ Ապրանքների գների արագ բարձրացումը։ Աշխատավորների նյութական վատթար դրությունը։ Քաղաքի ներքին դրությունը։ Մշակութային կյանքը. դպրոցներ, թատերական ու երաժշտական կյանք, պարբերական մամուլ, նոր գրադարան-ընթերցարան։

3. Փախստականների ներգաղթը Երևան 523

Հայկական կոտորածները և բազմահազար հայերի գաղթը դեպի Կովկաս։ Գաղթականների թիվը Երևանում։ Գաղթականների առաջին ապաստարանները ու վիճակը Երևանում։ Օգնություն փախստականներին և փախստական որբերին։ Քաղաքի բնակչության թիվը պատերազմի տարիներին։

Եզրափակում 534
Резюме 547
Summary 553
Վկայակոչված գրականության ցանկ 565
Համառոտ ժամանակագրություն և տեղեկատու ցուցակներ . . . 575
Անձնանունների ցանկ 583
Տեղանունների ցանկ 591
Նկարների և հատակագծերի ցանկ 597

ՀՀ ԳԱԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Թադևոս Խաչատուրի Հակոբյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(1879—1917 թթ.)

Հրատարակչության խմբագիր՝ Բ. Լ. Զուգասզյան
Տեխնիկական խմբագիր՝ Հ. Մ. Մարտիրոսյան
Վերատեսուղող սրբագրիչ՝ Հ. Ա. Վարդանյան

Վ.Ֆ 11575 Պատվեր 1 Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 10/I 1963 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 28/VI 1963 թ.։
Թուղթ՝ 60×92 1/16։ Տպագր. 38,0 մամուլ, + 2 ներդիր։
Հրատ. 33,0 մամուլ։
Գինը՝ 2 ռ. 20 կ.։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թամանյանի փողոց № 51, 1963 թ.։

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
68	13 վ.	ցաղյը	քաղյը
102	9 վ.	Ալևքսանդրապոլ	Ալեքսանդրապոլ
168	15 վ.	Թադաքենդ	Թադաքենդ
181	1 վ.	վրա քննարկել	վրա՝
270	8 վ.	Նահանգական (Ալավեր-դյանի)	Նահանգական (Ալավեր-դյան) փողոցի վրա
270	9 վ.	(մահտս, երևանի պատ-մաբյան քանգարան)	(երևանի պատմաբյան քանգարան)
294	4 ն.	ձուլում են	ձգվում էն
299	14 ն.	ֆոնդիկ	ֆոնդիկ
300	16 ն.	Նահանգներբ	Նահանգիկ
322	14 վ.	պայմաններբ	պայմաններբ
597	1 վ.	5. ՆԿԱՐՆԵՐԻ	ՆԿԱՐՆԵՐԻ